

«Վէմ»-ի ղեկավար սկզբունքն  
է լինելու գիտական  
առարկայականութիւնն  
ու ճշմարտութիւնը,  
միայն ճշմարտութիւնը,  
ամբողջ ճշմարտութիւնը՝  
համոզած, որ անգամ ամենադառն  
ճշմարտութիւնը աւելի օգտակար է,  
քան ոսկեզօծ ու շաքարապատ  
սուտը»:

**Միմոն Վրացեան**

Խմբագիր՝ ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

ՀԱՅԱՍՏԱՆ

Աշոտ Մելքոնյան  
Ռուբեն Սաֆրաստյան  
Ալբերտ Ստեփանյան  
Սուրեն Դանիելյան  
Համլետ Պետրոսյան  
Սամվել Մուրադյան  
Ալբերտ Մակարյան  
Արարատ Հակոբյան  
Լևոն Մկրտչյան

ՍՓՅՈՒՌՔ

Երվանդ Փամբուկյան – Լիբանան  
Մկրտիչ Մկրտչյան – Լիբանան  
Հարություն Քյուրքչյան – Հունաստան  
Կարո Արմենյան – ԱՄՆ  
Ռուբինա Փիրումյան – ԱՄՆ  
Վաչե Բրուտյան – ԱՄՆ

հ ա մ ա հ ա յ կ ա կ ան հ ան դ Ե ս  
Ժ (ԺԶ) տարի, 2018,  
թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր

«Վէմ» համահայկական հանդես  
Հրատարակիչ՝ «Վէմ հանդէս» ՍՊԸ

0010 Երևան, Մհեր Մկրտչյան փ. 12/1  
հեռախոս՝ 52 18 76, 093 83 93 24

Էլ. փոստ՝ [khoudinyan@yahoo.com](mailto:khoudinyan@yahoo.com)

Ինտերնետային կայք՝  
[vemjournal.org](http://vemjournal.org)

ISSN 1829 – 1864





Գ Ի Դ Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Յ Ա Ն

Գոհունակությամբ ողջունում ենք Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին նվիրված «Հայաստանի Հանրապետության պատմության դասերը» խորագրով գիտաժողովի զեկույցների հրատարակությունը:

20-րդ դարակիզբը, արդարև, մեր պատմության հանգրվանային ժամանակաշրջաններից է, երբ մեր ժողովուրդը դիմակայեց մեծ ցնցումների ու դժվարին մարտահրավերների և դարավոր ընդմիջումից հետո վերականգնեց իր անկախ պետականությունը: Համաշխարհային պատերազմի պայմաններում աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում հայտնված և ցեղասպանության հետևանքով ծանր դրության մեջ գտնվող մեր ժողովուրդը կարողացավ հերոսական կամք ու ոգի դրսևորել և ուժ գտնել իր մեջ՝ վկայելով հայրենի հողը պաշտպանելու ու իր արդար դատին հետամուտ լինելու իր հանձնառությունը:

Գիտաժողովի զեկույցների հրատարակությունը գալիս է հավելելու բազմաթիվ ուսումնասիրությունների ու հոդվածների շարքը, որոնք նախորդ մեկ դարի ընթացքում լույս են սփռել այս դժվարին ժամանակաշրջանի վրա: Գնահատելի է, որ ներկայացվող զեկույցները լայն շրջանակներին հնարավորություն են ընձեռնում ճանաչել մեր պատմության դասերը, այդ տարիների բացթողումներն ու ձեռքբերումները, որը պիտի նպաստի մեր ժողովրդի առավել պայծառ ապագայի կերտմանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնությունն ենք բերում ժողովածուի հրատարակությունը իրագործողներին, նրանում ներառված նյութերի հեղինակներին և մաղթում Բարձրյալի ամենաթառ օրհնությունն ու շնորհները:

Օրհնությամբ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



## ՀՅ ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԽՈՍՔԸ

ՀՅԴ Բյուրոյի անունից ողջունում եմ Հայաստանի Հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված գիտաժողով-քննարկման զեկույցների հրատարակությունը:

Այս նվիրական առիթով մեզանում կազմակերպվել են բազմաթիվ գիտաժողովներ, սակայն Հայաստանի Ամերիկյան համալսարանում 2018 թ. մայիսի 31-ից հունիսի 1-ին տեղի ունեցած միջոցառումը առանձնահատուկ էր: Առանձնահատուկ, որովհետև գիտաժողովի կազմակերպիչը՝ «ՎԷՄ» համահայկական հանդեսի խմբագրությունը, նպատակ էր դրել ոչ միայն պատշաճ կերպով նշել Հայաստանի Հանրապետության 100-ամյակն ու վեր հանել նրա հիմնադիրների կատարած գործի մեծությունը, այլև բացահայտել հատկապես խորհրդային ժամանակներից պահպանված այն խեղաթյուրումները, որոնք ժամանակի ընթացքում վերածվելով կարծրատիպերի, այսօր էլ շարունակում են պատմական իրականությանը չհամապատասխանող ձևով մատուցվել Հայոց պատմության դասագրքերում: Ուստի գիտաժողով-քննարկումը վեր հանելով խեղաթյուրումները, փորձ է արել հաղթահարել 70 տարի շարունակ պահպանված կարծրատիպերը և մեր հասարակությանը ներկայացնել իրականությունը, ճշմարտությունը:

Կարևոր է նաև Հայոց պետականության վերականգնման փաստն արձանագրել որպես այդպիսին. ոչ միայն Հայաստանի Առաջին Հանրապետության հարյուրամյակն ենք նշել 2018 թվականին, այլև Հայոց պետականության վերականգնման հարյուրամյակը: Կարող են լինել առարկողներ, որ նախկինում երբեմն ունեցել ենք պետականության որոշ հատկանիշներով օժտված այլևայլ կառույցներ, բայց փաստ է, որ Բագրատունյաց հարստության անկումից մոտ հազար տարի եւ Կիլիկիայի Հայոց թագավորության կործանումից մոտ հինգ հարյուր հիսուն տարի անց՝ 1918 թվականին վերականգնված Հայաստանի Առաջին Հանրապետությունն է, որ անցնող հարյուր տարիներին եղել է այն վեմը, որի շուրջ մեր ժողովուրդը, մեր ազգը շարունակում է իր գոյատևումը:

Հայաստանի Հանրապետության պատմությունն ունի բազմաթիվ ուսանելի դասեր. այդ դասերի մի մասն էլ պետականությունը կերտող սերնդի, ճառագայթող դեմքերի օրինակն է, որն ընթերցողին ներկայացվող զեկույցների շնորհիվ պետք է վարակիչ դառնա բոլորիս, ու մանավանդ՝ երիտասարդ սերնդի համար:

ՀՅԴ ԲՅՈՒՐՈՅԻ անդամ՝ ԿԻՐՈ Ա. ՄԱՆՈՅԱՆ

10 դեկտեմբերի 2018 թ.

ՎԷՄ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) քառի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ – Գարեգին Բ

Շայրազույն Պարիսարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց 2

## ՀՅ ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԽՈՍՔԸ – Կիրո Ա. Մանույան 3

## ՄԵՐ ԽՈՍՔԸ – Խմբագրական 5

### ՀԻՄՆԱՔԱՐԵՐ

Գևորգ Ս. Խաղիկյան  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆ ՈՒ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՆՈՐ  
ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ 12

Ռուբինա Բ. Փիրուման (Լու Անջելա)  
1918-ի ԵՒ 1991-ի ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆԸ ԾՆՈՒՆԴ  
ՏՈՒՈՂ ԵՐԿՈՒ ԸՆԿՆԱԿՐԱՅԻՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐ.  
Համեմատական հայեացք 24

Արմեն Ս. Ասրյան  
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-  
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ 47

### ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՇԱՆՈՒՅՄԻՆ

Համո Կ. Սոսիսյան  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ  
(1918 թ. մայիս-օգոստոս) 58

Աշոտ Ն. Հայրունի  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԱ-  
ԹՈՒՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԾԻՐՈՒՄ  
(1918 թ. հունիս-նոյեմբեր) 72

Արարատ Ս. Հակոբյան  
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1918 – 1920 ԹԹ.  
ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 98

Աննա Է. Ասարյան  
ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՆԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱՎԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1918-1920 ԹԹ.  
Վաղարշապատի քաղաքային  
իշխանությունների ընտրության ու  
գործունեության օրինակով 111

### ԱՐՏԱՔԻՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Էդիպոս Գ. Գոդյան  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ  
1918-1920 ԹԹ.  
Ըստ Ազգերի լիգայի ժնկյան արխիվի  
նորահայտ վավերագրերի 122

Աշոտ Ա. Մեղրնյան  
ՋԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ  
(1918 թ. մայիս – 1919 թ. հունվար) 133

Ալեքսանդր Ս. Մանույան  
ԱՐՑԱԽԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ  
1918-1920 ԹԹ. 148

### ՆԵՐՔԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարեն Պ. Հայրապետյան  
ՀԱՏՎԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՊԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 164

Սուրեն Թ. Սարգսյան  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴՊԻՄՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
1918-1920 ԹԹ. 210

Նարեկ Ա. Մկրտչյան  
ԵՐԵՎԱՆԸ 1918-1920 ԹԹ. ՀՀ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ  
Ազգային ինքնության տարածական կազմա-  
կերպման իմաստաբանությունը 226

Դավիթ Ս. Գյուրջիյան  
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
1918-1920 ԹԹ. 247

Հայկազուն Ս. Ավրջյան  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ 265

### ՀՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԱՏԵՐԸ

Վլադիմիր Ա. Հարությունյան  
ԿԱՐՄԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ  
Զինվորական դավադրության վարկածը 278

Հռիփսիմե Վ. Պիկիչյան  
ՄԱՋՄԱՆՈՎԻ ԼԵԳԵՆԴԸ  
Հայ երաժշտական բանահյուսության մեջ 331

Սմբատ Խ. Հովհաննիսյան  
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔՆ ԻՐԻՎ  
«ՄՐՑԱԿՑՈՂ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՏԱՐԱԾՔ  
Հայաստանի Հանրապետության 1918-1920 թթ.  
պատմության շարադրանքի օրինակով 347

Ժենյա Ա. Քալանթարյան  
1918-1921 ԹԹ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ  
Ականատես գրողների  
ստեղծագործություններում 392

Կարէն Հ. Խանլարեան (Թեհրան)  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ  
ԽՈՐՔԱՅԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 416

CONTENT 432

СОДЕРЖАНИЕ 433

ԾԱՆՈՒՅՈՒՄ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ 435

## ՄԵՐ ԽՈՍԿԸ

**Քանալի բառեր** – Հայաստանի Հանրապետություն, պատմություն, գիտաժողով–քննարկում, համակարգել, գիտակցել, հասկանալ, գիտական առաջադրանքներ, գիտական նորույթ:

2018 թվականի ընթացքում Հայաստանում և Սփյուռքի հիմնական գաղթօջախներում կազմակերպված հանդիսավոր միջոցառումների ու գիտաժողովների միջոցով ազգովի նշեցինք Հայաստանի Հանրապետության 100-րդ տարեդարձը:

Համագգային նշանակություն ունեցող այդ նվիրական առիթով մեզանում հնչեցին ոչ միայն բոցաշունչ ճառեր, այլև լրջմիտ գիտական գնահատականներ, բայց երբ անցավ աղմուկը, երբ եկավ լռելու, խորհելու և մեր ներկա իմացական մակարդակից անցյալը վերաիմաստավորելու պահը, պարզվեց, որ ասպարեզում չկա որևէ ամբողջական խոսք, տեքստ, այսինքն՝ **պատմություն:**

Երբ 2018 թվականի մայիսի 31-ին ու հունիսի 1-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում «ՎԷՄ» հանդեսի խմբագրակազմի ջանքերով կազմակերպում էինք «**Հայաստանի Հանրապետության պատմության դասերը 1918–1920 թթ.: Սերունդների հիշողության և արդիականության մարտահրավերների համատեքստում**» ընդարձակ խորագիրը կրող գիտաժողով–քննարկումը, համոզված էինք, որ կարևորը նրա տպագիր վերջնադրույնքն է լինելու: Ուստի փորձեցինք որոշակի նպատակ դնել մեր կազմակերպած գիտաժողով–քննարկման առջև՝ ինչ–որ բանի հասնելու և վերջում ընթերցողին խորհելու նյութ տալու համար: Մեր խնդիրը մյուս գիտաժողովների նման՝ անցյալի հերոսական դրվագները վերապատմելը չէր, այլ 20-րդ դարում ձևավորված Հայաստանի Հանրապետության պատմության քննությունը 21-րդ դարին իմացական տարածք տեղափոխելը: Իսկ դա պահանջում էր ոչ միայն վերհիշել հանրահայտ փաստերը կամ բացահայտել թերի ուսումնասիրված կամ վիճելի թեմաներն ու դրանց շուրջ քննարկում կազմակերպել, այլև արդի պատմագիտության տեսական ու մեթոդաբանական բարձրությունից **համակարգել, գիտակցել** ու **հասկանալ** նոր գիտելիքների տեղն ու դերը մեր իմացության խորացման պրոցեսում:

**Համակարգել** նշանակում է Հայաստանի Հանրապետության պատմությունը քննել և մեր ներսում, և մեր շուրջ ձևավորված հարաբերությունների, այսինքն՝ ոչ միայն Հայոց, այլև համաշխարհային պատմության տիրույթում:

**Գիտակցել** նշանակում է վերականգնել պատմության սուբյեկտի մեր ինքնագնահատականը՝ «Հայաստան» հասկացությունը դիտարկելով իր միջազ-

2018, հոկտեմբեր–դեկտեմբեր, Ժ (64), Գրքի, թիվ 4 (64), Ժ (64) Գրքի, թիվ 4 (64), հոկտեմբեր–դեկտեմբեր, 2018

ՎԷՄ համահայկական հանդես

գային-իրավական կարգավիճակի, իսկ «Հանրապետությունը»՝ ներքին լեզվ-տիրության, այսինքն՝ «ժողովրդական գործի» կամ **rec publikus**-ի տիրույթում:

**Հասկանալ** նշանակում է առանձնացնել պատմության հյուսվածքի տար-րական՝ ատոմային մասնիկ հանդիսացող մարդու կամքի ու բանականությ-յան այն դրսևորումները, որոնց մի մասն այսօր էլ ներկա է մեր կյանքում՝ իբրև անցյալով հարստացած ու ամրացած պատմական փորձառություն:

Պատմությունը **մեկ** գիտություն է, և Հայոց պատմությունը գիտություն է այնքանով, որքանով նրա անբաժանելի մասն է ոչ միայն իբրև համաշ-խարհային ասպարեզում մեր ձևական **առկայության**, այլև գիտակցված **ներկայության** ընկալում: Թեև 1991 թվականին մենք ողջ աշխարհին ազ-դարարել ենք մեր ներկայության վերականգնման մասին, բայց մինչ օրս չենք գիտակցել այդ փաստն ինքներս մեզ համար: Քանզի սեփական ինք-նագնահատականը վերականգնելու համար պարտավոր ենք դառնալ պե-տություն ոչ միայն ֆունկցիոնալ, այլև իմացական առումով: Մինչդեռ շա-րունակելով մնալ սոսկ որպես այսպես կոչված «հետկայսերական լեզվտի-մության» դրսևորում՝ մինչ օրս մենք սպրել ենք՝ հայացքներս մոտակա անցյալին հառած: Ու փորձելով դառնալ նրա պարզ հակաթեզը՝ մոռացել ենք, որ 20-րդ դարում ունեցել ենք համաշխարհային պատմության մեջ մեր ներկայության կարճատև, բայց **հրաշագեղ** մի շրջան:

Եվ այսօր ներկայացնելով «Հայաստանի Հանրապետության պատմու-թյան դասերը 1918-1920 թթ.» խորագիրը կրող գիտաժողով-քննարկման արդյունքում մեր կուտակած գիտելիքները՝ ուրախությամբ նկատում ենք, որ ներկայացված շուրջ 25 գեկուցումների մեծագույն մասը նոր խոսք էր կամ մեկնաբանություն 1918-1920 թվականների պատմության վերաբերյալ: Դա անհրաժեշտ է ձանաչողական բնույթի լուրջ խնդիրների առջև կանգ-նած մեր սերնդին, որը վաղուց արդեն ձանձրացել է անցյալի դրվագները վերապատմող ու նվիրական դեմքերի հիշատակը խնկարկող «հետահայաց թամադաններից»: Հայաստանի Հանրապետության պատմության վերաբեր-յալ մեր գիտելիքները տեղադրելով համաշխարհային պատմության ժա-մանակագրական ու թեմատիկ հյուսվածքում՝ ժամանակն է վերանայելու ոչ միայն 1918-1920 թվականների վերաբերալ խորհրդային-ժխտողական հայեցակարգը, այլև մեր օրերում դրա շրջված արտահայտությունը դարձած այսպես կոչված «երեք հանրապետությունների» կոնցեպտը: Որովհետև եթե խորհրդային շրջանում Հայաստանի Հանրապետությունը դիտվում էր իբրև շեղում կոմունիստական իդեալի միջոցով նոր հասարակարգի հաղթանակն ապահովելու անհրաժեշտությունից, այսինքն՝ ի վերջո պատահականության դրսևորում, ապա Հայաստանի վերանկախացումից հետո անցած քառորդ դարի ընթացքում մեզանում գիտական հայեցակարգ՝ որպես այդպիսին, գոյություն չունի: Նրան փոխարինել է պարզ քաղաքական նպատակահար-մարության արտահայտություն հանդիսացող «երեք հանրապետություննե-րի» կոնցեպտը, որը, **համահարթեցնելով** 20-րդ դարի ընթացքում մեր ու-նեցած 3 հաջորդական պետությունների լրջագույն տարբերությունները, պատմության ժամանակագրական հաջորդականությանը հաղորդել է բո-վանդակային իմաստ: 20-րդ դարում մենք ունեցել ենք ընդամենը 2 հան-րապետություն, որոնցից երկրորդը նոր է միայն «լցվում» իր անվանը հա-

մապատասխանող բովանդակությամբ: Մեր մուտքը համաշխարհային պատմության բեմահարթակ ամենևին էլ ուղղագիծ չի եղել, ուստի այն խնդիրներն ու նպատակները, որոնք դրվել են 1918-1920 թվականներին, կտրականապես մերժվել են «հանրապետություն» հասկացությունն իբրև ցուցանակ օգտագործած խորհրդային ժխտողականության կողմից, բայց կրկին վեր են բարձրացել և իրենց գոյության մասին հիշեցրել 1991-ից հետո:

Ուրեմն և՛ որպես համաշխարհային պատմության սուբյեկտ, և՛ իբրև պատմության գիտական ընկալման օբյեկտ 20-րդ դարում մենք արձանագրել ենք առաջ-հետ-առաջ շարժումները: Երիցս ձիշտ էր Ֆերնան Բրոդելը, երբ պատմության ընթացքը համեմատում էր հետ ու առաջ դարձող իսպանական ջբախմբի հանդիսավոր ընթացքի հետ: Համաշխարհային պատմության մեջ մեր ներկայությունը սկիզբ առնելով 1918-ին, հաջորդ 70 տարիներին շարունակվել է այնքանով, որքանով պայքարել ենք մեզ իբրև Հայաստանի Հանրապետություն վերագտնելու համար, ինչն ամենևին էլ չի սահմանափակվել ցանկացած հանրության համար բնական՝ անկախության ձգտումով: Իսկ 1991-ից հետո մենք հետ ենք ստացել Հայաստանը, բայց Հանրապետությունը՝ որպես նրա ներքին բովանդակություն, նոր ենք միայն վերագտնում: Ուրեմն այսօր եկել է վերջին հարյուրամյակի Հայոց պատմության բարդ կորագիծը վերականգնելով՝ մեր երթի անկասելիությունը գիտականորեն հիմնավորելու և միաժամանակ՝ քաղաքականապես ապահովելու պահը:

Նման հակասական երևույթի գիտական ընկալումը ոչ թե քողարկում, այլ անխուսափելիորեն վերականգնում է գծային պատմությունը՝ ժամանակի միջին տևողության ծիրում: Որովհետև թույլ է տալիս վերաիմաստավորել այն գաղափարներն ու գործերը, որոնք ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում ոչ թե փոխվում են, այլ սոսկ հարստացվում ու բյուրեղանում:

Եվ այդ տեսանկյունից ներկայացնելով «Հայաստանի Հանրապետության պատմության դասերը 1918-1920 թթ.» գիտաժողով-քննարկման նյութերը՝ մենք արձանագրում ենք այն փաստը, որ դրանց միջոցով կյանքի են կոչվել հետևյալ **գիտական առաջադրանքները**.

1. Սկզբում իրականացվել է Հայաստանի Հանրապետության որպես պատմաքաղաքական ուրույն երևույթի տեղի ու դերի հստակեցումը ինչպես Հայոց, այնպես էլ համաշխարհային պատմության համատեքստում, այսինքն՝ մի կողմից՝ հայ ազգի ինքնակազմակերպման նախորդ համակարգերի հետ համեմատության, իսկ մյուս կողմից՝ դրան զուգահեռ ողջ աշխարհում ու տարածաշրջանում ծավալված նույնատիպ գործընթացների քննության միջոցով:

2. Դա թույլ է տվել անցնել մեր առջև դրված երկրորդ հիմնախնդրի՝ հանրապետության հիմնադիրների պատմական առաքելության ընկալմանն ու շարունակվող Աշխարհամարտի դժվարին պայմաններում՝ 1918 թ. մայիսից մինչև նոյեմբեր նորանկախ Հայաստանի գոյատևման անօրինակ ձիգերի բացահայտմանը:

3. Այնուհետև գիտաժողով-քննարկումն անցել է 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության պետական ինստիտուտների բնութագրմանն ու

մեր երկրի կառավարման համակարգում դրանցից յուրաքանչյուրի ունեցած դերակատարությունը հստակեցնելու գործին:

4. Հայաստանի Հանրապետության արտաքին-քաղաքական կացությունը գնահատելու գործընթացում առանձնակի ուշադրություն է դարձվել նրա միջազգային-իրավական կարգավիճակի ուսումնասիրությանը, ինչպես նաև 1918-1920 թթ. մեր նորանկախ երկրի առջև ծառայած այն տարածքային խնդիրների վերհանմանը, որոնք արդիական են նաև մեր օրերում (Արցախ, Ջավախք և այլն):

5. Գիտաժողով-քննարկման առջև ծառայած հաջորդ բարդ առաջադրանքը հանրապետության հասարակական-քաղաքական ու կրթամշակութային կյանքի ներկայացումն էր՝ սկսած մայրաքաղաք Երևանից իբրև ուրույն մշակութային հարացույցից, մինչև պետական լեզվի և պետության խորհրդանիշերի բացահայտումը:

6. Վերջապես, «Հայաստանի Հանրապետության պատմության դասերը 1918-1920 թթ.» գիտաժողով-քննարկման նյութ դարձած հիմնախնդիրների հաջորդ՝ թվով հինգերորդ խումբը կապված էր հանրապետության անկման պատճառների ու հանգամանքների քննության հետ, ինչը նրա մասնակիցների համար ամփոփիչ ու գնահատողական զեկույցների ներկայացման առիթ դարձավ:

2018 թվականի մայիսի 31-ին ու հունիսի 1-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում կազմակերպված գիտաժողով-քննարկման բոլոր զեկույցումները չէ, որ ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը, այլ միայն այն տեքստերը, որոնք համակարգված գիտելիք են տալիս անցյալի վերաբերյալ: Որովհետև հրապարակվող ուսումնասիրությունների բովանդակությունը պարունակում է այն **գիտական նորույթը**, որը դժբախտաբար բացակայում էր 2018 թվականին կազմակերպված բազմաթիվ գիտաժողովներում: Թվարկենք դրանցից մի քանիսը.

ա) Գիտաժողովի նյութերի ներկա հրատարակման միջոցով **առաջին անգամ** հայ ընթերցողին համակարգված գիտելիք է տրվում մեզանում հանրապետության գաղափարի ու հանրապետականության՝ որպես ուրույն պետաքաղաքական երևույթի ու միաժամանակ՝ գաղափարախոսության, անցած ուղու վերաբերյալ, և բացահայտվում է այդ հիմնարար արժեքների սկզբունքային տարբերությունը ինչպես Խորհրդային Հայաստանի կարգավիճակի իրավական բովանդակությունից, այնպես էլ արդի հայ քաղաքական խոսույթում «հանրապետություն» հասկացությանը տրվող խորապես աղավաղված իմաստներից<sup>1</sup>:

բ) Նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա բազմաթիվ ձգբրտումներ ու հավելումներ են կատարվում Հայաստանի Հանրապետության ձևավորման գործընթացի վաղ շրջանի վերաբերյալ ժամանակակիցների հուշերում և անգամ՝ Ռ. Հովհաննիսյանի նման ճանաչված գիտնականի աշխատություններում տեղ գտած ոչ ճիշտ տարեթվերի ու դեպքերի հաջորդականության վերաբերյալ<sup>2</sup>:

1 Ավելի մանրամասն տե՛ս **Գևորգ Ս. Խուդինյան**, Հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը՝ Հայոց նոր և նորագույն պատմության մեջ, էջ 12-23:

2 Ավելի մանրամասն տե՛ս **Հանո Գ. Սուրիսայան**, Հայաստանի անկախացումը և ՀՀ պետական մարմինների ձևավորման առանձնահատկությունները, էջ 58-71:



գ) Ազգերի լիգայի ժնկյան արխիվից նոր հայտնաբերված վավերագրերի հիման վրա ցույց է տրվում, որ 1918-1920 թթ. մեր տարածաշրջանում միակ նորանկախ երկիրը Հայաստանն էր, որի իրավական կարգավիճակը միջազգային հանրությունն առանձնացրել էր Քաղաքացիական պատերազմի մեջ ընկղմված Ռուսաստանի և ընդհանրապես «Ռուսական հարցի» հետ կապված հիմնախնդիրներից և դիտարկում էր անկախությանը լիովին պատրաստ այնպիսի երկրների շարքում, ինչպիսիք էին Լեհաստանն ու Ֆինլանդիան, այսինքն՝ անկախ ապրելու մեր իրավունքը ճանաչված է եղել նախքան ԽՍՀՄ ի փլուզումը, և մեզ դիտարկելով սոսկ որպես վերջինիս հետևանք՝ մենք ինքներս ենք նեղացնում սեփական իրավունքների շրջանակը<sup>3</sup>:

դ) **Առաջին անգամ** գիտականորեն հիմնավորվում է այն թեզը, որ 1918-ին հայկական Արցախի հիմնադրման համար գործադրված ժողովրդավարական ընթացակարգերը շատ ավելի լեգիտիմ էին՝ արդի միջազգային իրավունքի տեսանկյունից, քան Ռուսաստանի Սահմանադիր ժողովի ու տեղական Ազգային խորհուրդների պատգամավորական կազմերի հիման վրա իրականացված՝ տարածաշրջանի երեք հիմնական պետությունների անկախացման գործընթացը, քանի որ Արցախում 1918-1920 թթ. ժողովրդի կողմից անմիջականորեն ընտրված ժողովրդական ներկայացուցիչների համագումարներն էին որոշում երկրի ձևակառուցումը<sup>4</sup>:

զ) Մեծաթիվ արխիվային փաստաթղթերի ու համապատասխան ճարտարապետական լուծումների ներկայացման միջոցով **առաջին անգամ** գիտականորեն հիմնավորվում է այն տեսակետը, որ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի կառուցման ծրագիրը ձևավորվել է ոչ թե խորհրդային շրջանում, այլ 1919-1920 թվականներին մեծ ճարտարապետ Ալ. Թամանյանի ձեռամբ ու վարչապետ Ալ. Խատիսյանի բարձր հովանավորությամբ<sup>5</sup>:

ը) Հայաստանի Հանրապետության 1918-1920 թթ. պատմության շարադրանքի հիման վրա **առաջին անգամ** համակողմանի քննության է ենթարկվում Հայոց պատմության դասագիրքը որպես «մրցակցող հիշողությունների» պայքարի ասպարեզ՝ հիմք ընդունելով «հիշողություն» հղացքի վերաբերյալ համաշխարհային փիլիսոփայական ու պատմագիտական մտքի ձեռքբերումները՝ սկսած Պոլ Ռիկյորից ու Բենեդիկտ Ադերտոնից մինչև Միշել Ֆուկո, Յան Ասսման, Յուրի Լոտման, Պիեռ Նորա, Փոլ Բոններթոն և Մարկ Ֆերրո<sup>6</sup>:

ե) **Առաջին անգամ** 2018 թվականի մայիսի 31-ի ու հունիսի 1-ի գիտա-ժողով-քննարկման ընթացքում են բացահայտվել և ապա վերջին շրջանում բազմաթիվ հրապարակումների նյութ դարձել 1920 թ. հոկտեմբերի 30-ի

3 Ավելի մանրամասն տե՛ս **Էդիտա Գ. Գոյան**, Հայաստանի Հանրապետության միջազգային-իրավական կարգավիճակը՝ ըստ Ազգերի լիգայի ժնկյան արխիվի նորահայտ վավերագրերի, էջ 122-132:

4 Ավելի մանրամասն տե՛ս **Ալեքսանդր Ս.Սանասյան**, Արցախի իրավական կարգավիճակը 1918-1920 թթ., էջ 148-162:

5 Ավելի մանրամասն տե՛ս **Նարեկ Ա. Մկրտչյան**, Երևանը 1918-1920 թթ. ՀՀ մայրաքաղաք: Ազգային ինքնության տարածական կազմակերպման իմաստարանությունը, էջ 226-246:

6 Ավելի մանրամասն տե՛ս **Սմբատ Խ. Հովհաննիսյան**, Հայոց պատմության դասագիրքն իբրև «մրցակցող հիշողությունների» տարածք: Հայաստանի Հանրապետության 1918-1920 թթ. պատմության շարադրանքի օրինակով, էջ 347-391:

Կարսի անկման ժամանակ գործի դրված գինվորական դավադրության մանրամասները, որի արդյունքում մեր ազգային հիշողության մեջ սկսել է առարկայանալ այդ հայրենադավ քայլին գնացած և դրա դիմաց քիչ անց Կարմիր բանակում ղեկավար պաշտոններ ստացած գինվորականների շրջանակը<sup>7</sup>:

Ավարտելով 2018 թվականի մայիսի 31-ին ու հունիսի 1-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում «Վէմ» հանդեսի խմբագրակազմի կազմակերպած «Հայաստանի Հանրապետության պատմության դասերը 1918–1920 թթ.: Սերունդների հիշողության և արդիականության մարտահրավերների համատեքստում» գիտաժողով-քննարկման նյութերի ներկայացումը՝ հույս ենք հայտնում, որ նրանում արդեն ծանրակշիռ խոսքով հանդես եկած երիտասարդ հետազոտողների նոր սերունդը կշարունակի ու կամբողջացնի մեր գործը:

*Խմբ.:*

## OUR WORD

**Key words** – Republic of Armenia, history, conference–discussion, systemize, acknowledge, understand, scientific tasks, scientific novelty

*Edit.*

## НАШЕ СЛОВО

**Ключевые слова** – Республика Армения, история, конференция–обсуждение, систематизировать, сознать, понимать, научные задания, научная новизна.

*Ред.*

---

<sup>7</sup> Ավելի մանրամասն տե՛ս Վլադիմիր Ա. Հարությունյան, Կարսի հանձնումը. գինվորական դավադրության վարկածը, էջ 278–330:

# ՀԻՄՆԱՔԱՐԵՐ

Ժ (ԺԶ) փաթի, թիվ 4 (64), Խոկարներ-դեկորներ, 2018

ՎԼՎ համահայկական հանդես



Գևորգ Ս. Խուրդինյան  
*Պատմ. գիյր. դոկտոր*

## ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆ ՈՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Բանալի բառեր** – հանրապետություն, հանրապետակա-  
նություն, ինտելեկտուալ պատմություն, հանրային գործ,  
սուվերենություն, ՀՅ Դաշնակցություն, ուժերի կենտրոնա-  
ցում, Հայաստանի Հանրապետություն, տիտղոս, ողբերգու-  
թյուն, գավեշտ:

Պատմությունը ճանաչելի է որպես գաղափար, որի հասկացման միջոցով ծավալվում է հաջորդական սերունդների երկխոսությունը մի կողմից՝ նրանց մեծ ու փոքր գործերի, իսկ մյուս կողմից՝ դրանց մասին գաղափարների շուրջ: Նման եղանակով անցյալի մարդու մտքերը ներկա մտա-  
ծողության համատեքստում վերականգնող **ինտելեկտուալ պատմության** ընձեռած նոր հնարավորություններն են միայն, որ հաղթահարում են ամեն ինչ փոշու վերածող ժամանակի թանձր պատնեշը:

Մեր պատմության 1991-ի շրջադարձից հետո 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության հիմնադիր սերնդի հետ վերականգնված հեռակա երկխոսությունը ստեղծել է նրանց գաղափարների ու գործերի գնահատման նոր հարթակ ու միևնույն ժամանակ՝ առաջադրել նոր գաղափարներ, որոնք իրենց հերթին վերածվել են նոր գործերի: Բայց քանի որ անցած հարյուրամյակում մեր գործերի և գաղափարների հաջորդականության շղթան՝ իբրև Հայոց քաղաքակրթական ավանդույթի կերպավորում, բախվել է հայրենի հողի վրա իր 70-ամյա ընդհատման իրողությանը, 1991-ից հետո մեր ինտելեկտուալ միջավայրում փաստորեն ծավալվել են երկու զուգահեռ դիսկուրսներ: Դրանցից **առաջինը** ձգտում է վերականգնել 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության միջոցով խորհրդանշվող Հայոց քաղաքակրթական ավանդույթը, իսկ **երկրորդը** փորձում է օգտվել մեր գաղափարական ուղենիշների ժամանակավոր կորստյան փաստից՝ փայփայելով խորհրդային շրջանի 70-ամյա խզումը կրկնելու ինքնախաբեությունը կամ էլ ազգային արժեքներից դեպի աշխարհաքաղաքացիություն առաջնորդող նորագույն պատրանքները:

Հետարդիականության պայմաններում առավել ցցուն կերպով դրսևորված, ուստիև Ֆ. Բրոդելի, Մ. Ֆուկոյի և այլոց կողմից բազմիցս արձանագրված՝ պատմության անընդհատությունը ընդհատումների և անգամ խզումների վերածող նման զուգահեռ դիսկուրսներն իրականում արտացոլում են անկախ պետականության անոթը ներքին բովանդակությամբ լցնելու մեր համառ փորձերի անավարտության փաստը: 1991-ից հետո անցած ավելի քան քառորդ դարի ընթացքում Հայոց քաղաքակրթական ավանդույթի անընդհատության համար պայքարը, բախվելով օտարների կողմից մեր պատմական ընթացքը կասեցնելու նման փորձերին, աստիճանաբար բացահայտում է Հայաստանի Հանրապետության հիմնադիր սերնդի հետ մեր հեռակա երկխոսության բուն առարկան, նրանց գաղափարների ու գործերի առանցքը՝ **հանրապետության գաղափարը**՝ որպես մեր հավաքական ու անհատական ազատության իրացման պետաքաղաքական բնորոշի ընկալման մեկնակետ: Ամեննին էլ պատահական չէ, որ անցած քառորդ դարի ընթացքում ազատության, անկախության, արդարության և այլ վեհ գաղափարների՝ հետարդիականությանը բնորոշ դիսկրետ ընկալումների քողի տակ մեզանում լռության է մատնվել դրանք միավորող ու համադրող պետաքաղաքական անոթի մասին ամբողջական պատկերացումը՝ հանրապետության գաղափարը: Այդ ընթացքում ինչ ասես չի արվել այն մոռացության տալու համար՝ հանրապետության օրհներգի փոփոխության կամ գինանշանի նենգափոխման փորձերից մինչև նրա հիմնադիրների մասին «գիտական» մեծ ու փոքր սոփեստությունները:

Մինչդեռ ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը (ռեսպուբլիկանիզմը)՝ որպես գաղափարախոսություն իրենց մարմնավորումն են գտել միայն այն պետական կառույցներում, որոնք իրականացրել ու իրականացնում են պետության ինստիտուտների ձևավորման գործը (**res**) հանրության (**publicus**) կողմից ուղղորդելու և վերահսկելու գործառնությունները:

**Հանրապետականությունն** իբրև **հանրային գործի** ամբողջական ընկալում, պետության կառավարման հանրապետական ձևը հիմնավորող գաղափարախոսությունն է՝ ազգի կամքը բյուրեղացնող **պետության սուվերենության սկզբունքի** և քաղաքացիներից յուրաքանչյուրի կողմից **սեփական ձակատագիրը տնօրինելու** անկապտելի իրավունքի հիման վրա:

Հանրապետականությունը մերժում է պետության կառավարման այնպիսի համակարգերը, ինչպիսիք են արիստոկրատիան, միապետությունը, օլիգարխիան և բռնապետությունը: **Այսինքն՝** հանրապետականությունը «երկիրն իբրև հանրապետություն կառավարելու գաղափարախոսությունն է՝ քաղաքացիների կողմից իրագործվող ազատության ու քաղաքացիական արժանապատվության շեշտադրումներով»:

Հանրապետականությունը երբեմն նույնացվել է դեմոկրատիայի (ժողովրդավարության) հետ, մինչդեռ լինելով պետության **կառավարման ձևերից** մեկը հիմնավորող գաղափարախոսություն՝ այն ոչ միշտ է համընկնում նրա **քաղաքական ռեժիմի** տարատեսակներից մեկի՝ ժողովրդավարության հետ: Այսինքն՝ հանրապետականությունը և ժողովրդավարությունը

1 <https://ru.wikipedia.org/wiki/Республиканизм>

իրենցից ներկայացնում են ժողովրդի կողմից սեփական իշխանության իրացման տարբեր հարթությունները. առաջինը՝ որպես պետության կառավարման ձևի, իսկ երկրորդը՝ քաղաքական ռեժիմի արտահայտություններ: Դրանց ընկալումներում երբեմն դրսևորվող խառնաշփոթը ժամանակին նկատվել է նաև հայ իրականության մեջ, ուր դեռևս 18-րդ դարում հեռավոր Հնդկաստանում շարադրված Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառացուն» թեև հիշատակվում էր հանրապետության հնագույն բնորոշներից մեկը՝ Հռոմեական հանրապետությունը, սակայն ապագա Հայաստանի պետական կարգը սահմանող երկրորդ գլխի կամ Նշավակի 52-րդ հոդվածից ակնհայտ էր դառնում, որ իրականում մենք գործ ունենք Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդի գերիշխանության գաղափարի հետ, որը 1215 թվականի **Ազատությունների մեծ խարտիայի** ու մանավանդ Նոր ժամանակների անգլիական լուսավորիչ Ջոն Լոկի գաղափարների շնորհիվ՝ դարձել էր ազատության իդեալի ընկալման ու իրացման անգլո-սաքսոնական ավանդույթի հիմքը: Որովհետև հնդկահայ մտածողը **Սահմանադրական խորհրդարանական հանրապետության** իր իդեալի իրականացման համար հնարավոր էր համարում Հայաստանում Բագրատունյաց տոհմի ժառանգների՝ օրենքով ու Սահմանադրությամբ սահմանափակված իշխանության հաստատման հնարավորությունը:

Ուստի մեզանում հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը ամբողջական տեսք են ստացել ավելի ուշ՝ Ֆրանսիական Մեծ հեղափոխության գաղափարների ու մանավանդ դրանց 1848-ի վերակերպվորման՝ արևմտահայ լուսավորիչների վրա թողած հզոր ազդեցության շնորհիվ: Արդեն 19-րդ դարի կեսից եվրոպական կրթություն ստացած հայ երիտասարդությունը, յուրացնելով հանրապետության գաղափարը՝ այն սկսել է դիտարկել իբրև հայրենիքի ազատության նպատակի իրականացման լավագույն բնորոշ:

Ուստի հանրապետությունն ու հանրապետականությունն՝ իրենց հիմքում լատինական բառարմատները մեզանում հայացվել են ֆրանսերենի լեզվամտածողության խողովակով: 19-րդ դարի երկրորդ կեսից դրանց բազմաթիվ գործածությունների առաջին բացատրություններից մեկին մենք հանդիպում ենք արևմտահայ գրագետ Գր. Չիլինկիրյանի՝ Վ. Հյուգոյի «Թշվառները» վեպի թարգմանության բացատրականներում՝ «գաղղիական յեղափոխութիւն, հանրապետութիւն, հանրիշխանութիւն...»<sup>2</sup>:

Որոշ ժամանակ անց նույնն արձանագրվում է եվրոպական կրթություն ստացած արևելահայ մտածողների, մասնավորապես Գրիգոր Արծրունու կողմից 1872-ին՝ «Մշակ»-ի էջերում որպես հանրապետության ֆեդերատիվ կառուցվածքի բնորոշում օգտագործված «դաշնակցական հանրապետական ձև»<sup>3</sup> հասկացության տեսքով:

Այս հասկացությանին համակարգի ֆրանսիական արմատները պարզաբանվում էին 1903-ին Փարիզում հրատարակված «Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ»<sup>4</sup>-ում: Այստեղ արդեն հանդիպում ենք ֆրանսերեն **ré-**

2 **Չիլինկիրեան Գրիգոր**, Թշուռներ, թարգմ. Վ. Հյուգոյից, Կ. Պոլիս, 1868, հատ. 4, էջ 105:

3 «Մշակ», Թիֆլիս, 1872.07.13, N 27:

4 Ավելի մանրամասն տե՛ս **Լուսինեան Գուիտուն**, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, տպագրութիւն «ՄՈՐԻՍ»-ի հայր և որդի, Փարիզ, 1903:

**public** հասկացության թարգմանությանը որպես հասարակապետություն և հանրապետություն ու դրա տարատեսակների առանձնացմանը, այն է՝ **démocratique, aristocratique, oligarchique, fédérative**: Բնական է, որ այդ բառարանում առաջ էր եկել նաև **républicain**՝ հասարակապետական կամ հանրապետական հասկացության ընկալումն իբրև պետության կառավարման տվյալ ձևի կողմնակից, որի միայն 2-րդ Գ բացատրականում վերապահություն էր արվում այն առումով, որ հասարակապետականը կամ հանրապետականը կարող է լինել նաև կուսակից հասարակապետության՝ հանրապետության: Այսինքն՝ «հանրապետական» հասկացության հիմնական ու առաջնային ըմբռնումը պետության կառավարման տվյալ ձևի կողմնակիցը լինելն է, իսկ որպես օժանդակող գործառույթ՝ տվյալ գաղափարի հետապնդումը նեղ կուսակցական դիտանկյունից:

Այսպիսով, հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը մեզանում հաստատվել է որպես ազգի և անհատ քաղաքացու ազատությունն իրացնող պետության կառավարման որոշակի, այսինքն՝ հանրապետական ձևի հիմնավորում: Հարց է առաջանում՝ համապատասխանում էր արդյոք այս գաղափարը հազարամյակների Հայոց քաղաքակրթական ավանդույթին՝ նկատի ունենալով նրանում արձանագրված պետությունների թագավորական կամ միապետական կառավարման փաստերը: Որպես Անտիկ աշխարհին ու Միջնադարին բնորոշ ընդհանուր օրինաչափության արտահայտություններ՝ դրանք առկա էին նաև Եվրոպայում, սակայն Հայաստանը Արևմուտքի ու Արևելքի խաչմերուկում գտնվող այն եզակի երկիրն էր, որը ժամանակին ավելին էր արել ազատության իդեալը մարմնավորող շարժումների ձևավորման ու դրանց գաղափարները Բյուզանդական կայսրության տարածքում և ապա Արևելյան ու Արևմտյան Եվրոպայում արմատավորելու համար (պավլիկյաններ-բոգոմիլներ-ալբիգոյցիներ շղթայի միջոցով), քան Նոր ժամանակներում այդ քաղաքակրթական ավանդույթի ձեռքբերումներն արդեն որպես պետաքաղաքական ավանդույթ Հայաստանին վերադարձրած Եվրոպական ազգերը: Ուրեմն, Նոր ժամանակների հանրապետության գաղափարի տեսքով Հայաստանը սոսկ հետ էր ստանում այն պտուղները, որոնց սերմերը միջնադարում ինքն էր ցանել Եվրոպական մտահոգևոր դաշտում:

Դրանով հանդերձ՝ ակնհայտ է, որ մեզանում հանրապետականությունը հանրապետական վարչակարգի հաստատման գործնական-քաղաքական նպատակի է վերածվել միայն 19-րդ դարի վերջին քառորդում՝ հայ ազգային կուսակցությունների ծրագրերում: Ընդ որում՝ Հայաստանը որպես դեմոկրատիկ կամ ռամկավար հանրապետություն տեսնելու ձգտումը ի սկզբանե ամրագրվել է արևելահայ իրականության մեջ ձևավորված կուսակցությունների քաղաքական պահանջներում, որովհետև արևմտահայությունն ընդհուպ մինչև Մեծ եղեռնը գոյատևել է սուլթանատի թեկուզև նումինալ գոյության պայմաններում: Բայց եթե 1888 թ. «Հնչակ»-ում հրապարակված համանուն կուսակցության ծրագրում մենք հանդիպում ենք միաժամանակ՝ սահմանադրական միապետության («սահմանադրական-ռամկավարական կարգեր»), ֆեդերացիայի («ընդհանուր անկախ դաշնակցություն»), և «հայ ազգային անկախություն» պահանջների տեսքով հանդես եկող տարիմաստ գաղափարների զուգահեռ գոյակցությունը, ապա ՀՅ Դաշնակցության

Ժ (ԺԶ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԿՎ համահայկական հանդես

հաջորդական փաստաթղթերում «ապագա ազատ Հայաստանի» (1892 թվականի ծրագիր) պետաիրավական կոնկրետ բովանդակությունը «բացվում էր» սուկ այնքանով, որքանով այն տեղավորվում էր իր գործելադաշտերկրի բարեփոխմանն ուղղված համապետական պատկերացումների շրջագծում: Սա Հայոց պետականության վերականգնման խնդիրը կոնկրետ պայմանների, միջավայրի ու ժամանակի մեջ դիտարկելու արդյունք էր: Որովհետև ՀՅԴ-ն առաջինն ու փաստորեն միակն էր ժամանակի հայ իրականության մեջ, որն իր «Կռիւ ազատութեան համար, կռիւ գոյութեան համար»<sup>5</sup> երկմիասնական բանաձևով խորապես ըմբռնեց այն իրողությունը, որ ազգակազմավորման և ազգ-պետությունների ձևավորման դարաշրջանում ազատության ձեռքբերման անհրաժեշտությունը մեր ժողովրդի համար գոյաբանական իմաստ է ստացել: Ուստիև իր քաղաքական ռազմավարության ու մարտավարության միջոցով ՀՅԴ-ն առաջադրեց պատմական հայրենիքի՝ որպես **իդեալի** և նրա աղճատված ժողովրդագրական պատկերի, այսինքն՝ **իրականության** հակաթեզը հաղթահարելու քաղաքական հիմնանպատակը: Դրանով «կենդանի գործի» վերածվեց այն իրողության խորը գիտակցումը, որ հող-հայրենիքի գաղափարն իրականություն դարձնելու ճանապարհին միջնադարին բնորոշ համայնքային-էքստերիտորիալ աշխատակարգերի փոխարեն ազգը պետք է «ոտքի տեղ» գտնի օտար կայսրությունների կողմից վերահսկվող Հայաստանի թեկուզ մեկ հատվածում ու «արյան գին» վճարի՝ այդ հողակտորի վրա իր ազատության իրացման համար: Ուստի 1898-ին ՀՅ Դաշնակցության երկրորդ Ընդհանուր ժողովը գտավ **ուժերի կենտրոնացման** միջոցով հայրենիքի կոնկրետ տարածքում համախմբվելու, նրան տիրացած օտար տարրին հաղթելու և անկախ պետականության հիմքերը դնելու ուղիները, որոնք Սասունում կամ Վասպուրականում գործադրելու համառ, բայց անհաջող փորձերից հետո, ի վերջո 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների շրջանում իր զինվորների 15 հազարանոց ինքնապաշտպանական ուժերով ՀՅԴ-ն կարողացավ նշմարել մեր ներկա հանրապետությանը բաժին ընկած հողակտորի ուրվագիծը: Եվ այնտեղ համաժողովրդական բանակի վերածվելու միջոցով միայն կարողացանք հաղթել մեր «սրտին նստած» օտար զանգվածին, և նրանում մեր համահավաք բնակության փաստը դարձնել ժողովրդագրական հիմնաքար՝ պետականության վերականգնման համար<sup>6</sup>: Առանց այդ հիմնաքարի ձևավորման՝ ՀՅԴ 30-ամյա համառ պայքարի՝ 1918-ին չէր ծնվի Հայաստանի Հանրապետությունը և մենք այսօր էլ կշարունակեինք մնալ սուկ իբրև համայնք՝ ինչպես ասորիները, կամ լավագույն դեպքում՝ պետականության վերականգնման իր ձգտումի համար ամեն անգամ արյան տուրք վճարող ազգ՝ ինչպես քրդերը:

Պատահական չէր, որ հենց Ռուսական առաջին հեղափոխության նախօրեին և ընթացքում ՀՅԴ-ն իր «Կռվկասյան նախագծում» և ապա դրա հիման վրա 1907-ին ընդունված կուսակցության նոր ծրագրում իրականացրեց **«հանրապետություն»** քաղաքական տեսլականի հստակեցումը, առայժմ

<sup>5</sup> «Դրօշակ»-ի թողոցիկ թերթ, 1891, N 2, էջ 1:

<sup>6</sup> Ավելի մանրամասն տես **Խողինյան Գ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր. 2006, էջ 371-377:



սոսկ որպես ազատ Ռուսաստանի հետ ֆեդերատիվ կապերով կապված՝ «Դաշնակցական ռամկավար հանրապետություն Անդրկովկասի համար...»<sup>7</sup>, որի շրջագծում հաջորդ քայլն էր լինելու հայկական առանձին ինքնավար միավորի՝ կանտոնի ձևավորումը:

Հանրապետության գաղափարի հասունացման այս հանգրվանում պետականության վերականգնման պատմական անհրաժեշտության գիտակցումը մեզանում իր անդրանիկ քաղաքական կերպավորումը գտավ 1906 թվականի օգոստոսին՝ Էջմիածնում, երջանկահիշատակ Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի կոնդակով հրավիրված և ՀՅԴ առաջնորդ Սիմոն Զավարյանի նախագահությամբ գործի անցած Արևելահայոց կենտրոնական ժողովի տեսքով: Էջմիածին ներխուժած ցարական ժանդարմների կողմից կասեցված այս ժողովի՝ ողջ արևելահայությանն ընդգրկող ձևաչափը Ռուսաստանյան կայսրության փլուզման վկայությունը դարձած 1917-ի իրադարձությունների բովում՝ 1917 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերյան Համախորհրդակցության ընթացքում կերպավորվեց արդեն Հայոց Կենտրոնական ազգային խորհրդի տեսքով: Հանրապետության գաղափարի ինստիտուցիոնալացման այս հանգրվանում մենք արդեն տեսնում ենք ապագա պետական իշխանության սաղմի գործադիր (ազգային խորհուրդ) և օրենսդիր (համախորհրդակցություն) գործառույթների առկայությունը և անգամ՝ միջկուսակցական տարածայնությունները հաղթահարելու աշխատակարգերի մշակումն ու գործադրումը:

Հայոց Կենտրոնական կամ Թիֆլիսի Ազգային խորհուրդը խաղաց ժողովրդի ընտրյալներից բաղկացած պետականության այն սաղմի դերը, որի հանձնարարությամբ էր, որ Երևան գործուղվեց Արամ Մանուկյանը՝ Արարատյան աշխարհի պաշտպանությունը կազմակերպելու արտակարգ լիազորություններով, իսկ Բաքվի Ազգային խորհուրդն էլ կազմակերպեց 1918 թ. մայիսից հետո թուրքական բանակի հիմնական հարվածն իր վրա վերցրած Բաքվի հերոսամարտը: Նախքան 1918 թվականի հերոսամարտերը ձևավորված նման կառույցների հիմքի վրա ծնվեց Հայաստանի Հանրապետությունը՝ հանրապետության գաղափարի անդրանիկ կերպավորումը հայ իրականության մեջ՝ իր օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությամբ և տեղական ինքնակառավարման մարմիններով:

Հայաստանի Հանրապետությունը միանգամից կարողացավ երկանդամ հասկացության միջոցով միավորել երկրի՝ **Հայաստանի** և նրանում հաստատված վարչակարգի **Հանրապետության** անվանումները՝ ի սկզբանե բացառելով անվանափոխության որևէ այլ տարբերակ: Որովհետև նրա անդրանիկ վարչապետ Հովհ. Քաջազունին Թիֆլիսից Երևան ժամանելուց հետո՝ 1918 թվականի հուլիսի 19-ի առաջին պաշտոնական ընդունելության ժամանակ հայտարարեց՝ «Մեր պետությունը ի միջի այլոց կոչվում է ոչ թե հայկական այլ, Հայաստանի Հանրապետություն: Այդ ցույց է տալիս, որ մեր պետությունը հայրենիք է նրա մեջ ապրող բոլոր ժողովուրդների համար»<sup>8</sup>: Թուրքական սպառնալիքի առկայության պայմաններում արտաքուստ սա հարկադիր զիջումի տպավորություն էր թողնում՝ հանրապետականության

<sup>7</sup> Նախագիծ Կովկասեան գործունեութեան, Ժընև, տպարան Հ.Յ. Դաշնակցութեան, 1906, էջ 13:

<sup>8</sup> **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928, էջ 160:

սկզբունքի ներքին բովանդակության համար առանցքային՝ քաղաքացու ինստիտուտի առաջնությունը սահմանելու միջոցով: Սակայն նման բանաձևն ուներ նաև իր մյուս երեսը՝ վերականգնելով Հայաստանի որպես հազարամյակների պատմություն ունեցող պետության անվանումը՝ նա պարզ երկրանունը վերածում էր **տիտղոսի**՝ ցույց տալով, որ բոլոր այն տարածքները, որոնք մտնում են «Հայաստան» երկրանվան մեջ, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Սա սկզբունքային նշանակություն ունեցող քաղաքական ակտ էր, քանի որ որևէ երկրի տիտղոսն ինքնին ենթադրում է պատմական իրավունք, իսկ պատմականորեն Վանը կամ Մուշը նույնքան Հայաստան են, որքան Երևանը:

«Հայաստանի Հանրապետություն» երկանդամ հասկացությունը միակն է Նոր ժամանակներում Հայաստանի տարածքում հիմնված բոլոր պետական կազմավորումների անվանումների շարքում, որն արտացոլում է նրա անցյալի ու ներկայի անխզելի կապը: Ուստի մեր երկրի խորհրդայնացումից մինչև 1936-ի ստալինյան սահմանադրությունն ընկած ժամանակամիջոցում Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կամ ՀԽՍՀ հասկացումի տեսքով պահպանվեց այդ անվան սկզբնամասը: Բայց նման ձևական ժառանգորդականությունը ամենևին էլ չէր վերաբերվում տվյալ հասկացության երկրորդ բաղադրիչին՝ Հանրապետությանը: Մանավանդ 1920-ական թվականների երկրորդ կեսից, երբ խորհրդային երկրում հաստատվեց միակուսակցական-նոմենկլատուրային կառավարման համակարգը, «Հանրապետություն» հասկացությունը վերածվեց պարզ ցուցանակի, քանի որ նրա հիմքում իրականում ընկած է **ազգի գերիշխանության (սուվերենության)** սկզբունքը՝ իր արտաքին ու ներքին բաղադրիչներով: Խորհրդային շրջանում ղև էր պատկանում այդ սուվերենությունը՝ որպես ազգ հանդես եկող քաղաքացիների ամբողջությամբ, թե՛ մեկ այլ, ավելի գերակա սուբյեկտին՝ խորհրդային Կենտրոնին:

Պատասխանը գտնելու բանալիները վաղուց են տրվել համաշխարհային իրավական մտքի **դասականների** կողմից՝

**Ժան Բոդեն** (Ֆրանսիա) – **ինքնիշխանությունը մշտական է, անբաժան, բացարձակ և ինքնաբավ:**

**Ջոն Լոկ** (Անգլիա) – **ինքնիշխանության աղբյուրը ոչ թե պետությունն է, այլ ժողովուրդը:**

**Գեորգ Ելինեկ** (Գերմանիա) – **միասնական պետության ողջ տարածքում կարող է գոյություն ունենալ միայն մեկ սուվերենություն: Պետությունը, որ մտնում է դաշնության կազմի մեջ կամ միացվում է կայսրությանը, թեև պահպանում է որոշակի ինքնիշխանություն, սակայն լիովին կորցնում է սուվերենությունը:**

Պատճառն ակնհայտ է. գերիշխանությունը (սուվերենությունը) գործառույթային դեր ունի, ուստի «պետություն լինելու համար հարկաւոր է, որ պետական ֆունկցիաները բխեն քո սեփական իրավունքից՝ օտարից ստացած և օտարի հսկողութեան ենթակայ չլինեն»<sup>9</sup>: Հայ ժողովուրդն իր ազատ կամ-

9 Ավելի մանրամասն տե՛ս **Շահխաթունեան Ա.**, Ֆեդերալիզմ և Դեմոկրատիզմ, Թիֆլիս 1907, էջ 17:

քով չէր հրաժարվել իր անկախությունից, իսկ հետագայում էլ Հայաստանի քաղաքացին իր ազատ կամքը չէր գործուղել ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանությանը, ինչպես ենթադրում է ֆեդերացիայի սկզբունքի մեր ավանդական՝ ընկալումը (Ս. Զավարյան, Գ. Խաժակ և այլք): Ուրեմն Հայաստանի Հանրապետությունը չէր փոխարինվել մեկ այլ՝ նույնպես հանրապետական վարչակարգով: Ավելին՝ ԽՍՀՄ-ում բացակայում էր ոչ միայն ժողովրդավարությունն իբրև քաղաքական ռեժիմ, այլև հանրապետականությունը որպես երկիրն իբրև հանրապետություն կառավարելու գաղափարախոսություն ու գործելակերպ: Իսկ կոմկուսի միահեծան իշխանությունը ցեմենտող նոմենկլատուրային համակարգը ոչ մի կապ չունեի Նոր ժամանակների հանրապետականության հետ, քանի որ այն կուսակցական դիկտատուրայի տեսքով վերակերտում էր դեռևս Մոսկովյան ցարերից ընդօրինակված՝ ինքնակալության սկզբունքը և պետական իշխանության ահաբեկչական գործառույթը՝ օպրիչնինան: Այսինքն՝ մենք իրականում գործ ունեինք Միշել Ֆուկոյի մատնանշած պատմության ժամանակավոր ընդհատման կամ խզումի հետ, երբ հանրապետության իդեալը, այսինքն՝ Հայոց քաղաքակրթական ավանդույթի անընդհատության մարմնավորումը՝ 1924-ի չարենցյան հայտնի բնորոշմամբ՝ մեզ էր մատուցվում սուկ իբրև հնավանդ մի ցանկություն, որն **ուրիշ է, տարբեր է ու հակադիր՝** պետության բոլշևիկյան իդեալին՝

**Այնտեղ – Նաիրի երկրում,  
Հնավանդ ցանկությամբ ուրիշ՝  
Արդեն խմբապետ Դրոն  
Պարզել էր եռագույն դրոշ<sup>10</sup>:**

Բայց երբ ջրերը զուլավելու էին, այդ **ուրիշը**՝ հնավանդ ցանկության վերածննդի Հայոց քաղաքակրթական տեսլականը, Չարենցի մոտ արդեն վերածվելու էր Հայաստան երկրի դարավոր պարտությունները հաղթանակների փոխակերպող **նոր դրոշների** ծննդյան սեփական երազանքի՝

**Իմաստուն է միայն քառուղիներ հաղթող  
Վաղվա հաջորդը քո այն երջանիկ,  
Որ պիտի գա՝ գիտեմ և աճյունի հետ քո  
Մեր հաղթության լեզենդը մահվան նաշից հանի<sup>11</sup>:**

Սա ցույց է տալիս, որ մեզանում այսօր էլ շրջանաժող այսպես կոչված՝ «երեք հանրապետությունների» հայեցակարգը գիտության ու առողջ բանականության հետ որևէ կապ չունի: Դա պարզապես քարոզչական հնարք է, որի միջոցով փորձ է արվում ծածկել ու քողարկել պատմաքաղաքական գործընթացի վրա ազդող ու հակազդող ուժերի կողմից խաղարկված 70-ամյա դրաման, որը շարունակվում է նաև մեր օրերում: Հայաստանի Հանրապետության գաղափարը կրող **ՀՅ Դաշնակցության** կողմից հունավորված մեր պատմական զարգացման անընդհատությունը՝ որպես Հայոց քա-

10 **Եղիշե Չարենց**, Չարենց- նամե, «Երկեր», Եր, «Սովետական գրող» հրատ, 1983, էջ 220:  
11 **Եղիշե Չարենց**, Անտիպ և չիավաքված երկեր, Եր., 1983, էջ 136:

ղաքակրթական ավանդույթի նոր կերպավորում, ժամանակին բախվել է օտար բռնապետության նոր կերպավորումի՝ **Բոլշևիզմի** կողմից մարմնավորված պատմության ընդհատության հզոր ազդակին՝ ստեղծելով Ֆ. Բրոդելի պատկերավոր արտահայտությունը հիշեցնող՝ **խապանական թափորի՝** հետ ու առաջ շարժումների բարդ խճանկար, որի պտույտներից ու տեղապտույտներից նոր ենք միայն փորձում դուրս գալ:

Որովհետև 1991 թվականի վերանկախացումից հետո էլ թեև մեր երկրում պայմաններ ստեղծվեցին հանրապետության գաղափարի վերածննդի համար, այսինքն՝ իրականում սկսեց ձևավորվել **Հայաստանի Երկրորդ Հանրապետությունը**, բայց նրանում հանրապետական վարչակարգի հիմնական ատրիբուտները՝ քաղաքացիների կողմից իրագործվող ազատության ու քաղաքացիական արժանապատվության սկզբունքները, գործում էին այնքանով, որքանով դրանք թույլատրված էին իշխանավորների կողմից: Ավելին, վերջիններս շուտով գտան նաև հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը վերահսկելու խիստ օրիգինալ՝ «կուսակցական լուծում»:

Օրերս հրապարակված՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության հիմնադիր Աշոտ Նավասարդյանի մասին հիշողություններից պարզվում է, որ նա պատահաբար է ընտրել իր հիմնած կուսակցության «Հանրապետական» անվանումը՝ հանրապետականությունը սխալմամբ նույնացնելով ժողովրդավարության հետ<sup>12</sup>: Եվ օգտվելով դրանից՝ այդ կուսակցության նոր տերերը՝ «հանրապետական» անունը սկսեցին օգտագործել ճիշտ իր հակապատկերը բնորոշելու իմաստով: Այսինքն, եթե դարեր շարունակ հանրապետության գաղափարն ու հանրապետականությունն իրականացրել են պետության ինստիտուտների ձևավորման գործը (res) հանրության (publicus) կողմից ուղղորդվելու և վերահսկվելու գործառույթը, ապա այդ նույն անունը կրող կառույցը վերածվեց դրանք մեկ անհատի՝ Ջոն Ադամսի մատնանշած՝ «տղամարդու» և նրա հաջորդների կողմից վերահսկելու գործիքի: Որպես **հանձարեղ խարդավանք**՝ այս միտքը պարզապես «փայլուն» էր, այլ բան է, որ միամտաբար իրենք իրենց հանրապետական համարող մեր շուրջ 150 հազար քաղաքացիներից և ո՛չ մեկը ՀՀԿ կառավարման շուրջ 20 տարիների ընթացքում այդպես էլ չհասկացավ սեփական կուսակցության անվան իմաստը: 2017 թ. համապետական ընտրություններում բանը հասավ անգամ՝ «Մենք հանրապետական ենք, որովհետև մեզ մոտ մի հոգի է որոշում կայացնում» զավեշտական կարգախոսի հանրահռչակմանը: Եվ հազարամյակների քաղաքակրթություն ունեցող երկրում ոչ ոք այդպես էլ համապատասխան գիտելիք կամ էլ համարձակություն չունեցավ քաղաքավարի կերպով բացատրելու, որ նման կարգախոսը բնորոշ է **միապետականներին**, իսկ այդ մեկ անձի «շրջապատը» գումարելու պարագայում՝ **օլիգարխիկ** կառավարման կողմնակիցներին:

Հստակեցնենք՝ այս ակնհայտ զավեշտի բացահայտմամբ ինչ-որ մեկին ծաղրելու նպատակ չունենք, քանի լիցի: Բայց որպես գիտնական՝ մենք պարտավոր ենք արձանագրել, որ նման մոտեցումը ճիշտ 180 աստիճանի

12 Տե՛ս **Քեշիշյան Անի**, «Խի, դրանք տարբեր են», ՀՀԿ-ի հիմնադիրը չի իմացել հանրապետականության և ժողովրդավարության տարբերությունը, «168 ժամ» օրաթերթ, Եր., 25 նոյեմբերի, 2016 թ.:

հակադրության մեջ է քաղաքացիների ամբողջության կողմից՝ սեփական երկրի, և անհատ քաղաքացու կողմից՝ սեփական անձի ճակատագիրը տնօրինելու անկապտելի իրավունքը հիմնավորող՝ **հանրապետականության** հետ:

## Եզրակացություններ

Մինչև Հայաստանում տեղի ունեցած վերջին իշխանափոխությունը, որը մեզ համար ընդամենը մեր սեփական քաղաքակրթական ավանդույթի համադրական էության նոր կերպավորումը վերականգնելու հնարավորություն է, հայ իրականության մեջ հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը ունեցել են միայն մեկ ամբողջական կերպավորում ի դեմս 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության:

Խորհրդային Հայաստանում ընդհանրապես բացակայել են հանրապետության ու հանրապետականության հիմնական ատրիբուտները, իսկ խորհրդային ֆեդերալիզմը պարզապես ազգային հարցի լուծման գործիք էր:

1991-ից իր ձևավորման ու զարգացման գործընթացում գտնվող Հայաստանի Երկրորդ Հանրապետությունում հանրապետականությունն իբրև գաղափարախոսություն հետապնդվել է երկրի ժողովրդավարացման համար պայքարող ուժերի կողմից, ինչի հետևանքով արձանագրվել է այդ գաղափարախոսության և «Հանրապետական» անվանումը կրող կուսակցության քաղաքական գործառույթի հակադրության փաստը՝ որպես բովանդակության ու ձևի կատարյալ անհամապատասխանություն:

Հայաստանում հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը (ռեսպուբլիկանիզմը) իրենց վերջնական հաղթանակը կարձանագրեն միայն այն ժամանակ, երբ մենք հպարտությամբ կարտասանենք հանրապետության վեհ գաղափարը և, իսկապես, կդառնանք հանրապետականներ այդ բառի համապետական ընդգրկումով, այսինքն՝ միջազգային ասպարեզում կվերականգնենք մեր երկրի լիարժեք սուվերենությունը, երկրի ներսում կհաստատենք քաղաքացիների կողմից ընտրությունների միջոցով սեփական ճակատագիրը տնօրինելու սկզբունքը ու կհարգենք նրանցից յուրաքանչյուրի ազատությունը, ներառյալ՝ օրենքի գերակայությունը, որպեսզի մեզանում այլևս երբեք չկրկնվի հանրապետության գաղափարի ու հանրապետականության՝ բազում ողբերգություններով սկսված ու զավեշտով ավարտված այս պատմությունը:

**Գևորգ Ս. Խուրդիյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայոց Նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության պատմության ու գաղափարաբանության վերաբերյալ: Զբաղվում է նաև Հայոց պատմության պատմագրության և պատմության տեսության ու մեթո-

դարձանության հիմնախնդիրների հետազոտությանը:

## Summary

### **THE IDEA OF REPUBLIC AND REPUBLICANISM IN THE NEW AND NEWEST HISTORY OF ARMENIA**

Gevorg S. Khoudinyan  
*Doctor of Historical Sciences*

**Key words** – republic, republicanism, intellectual history, public affair, sovereignty, ARF Dashnaktsutyun, centralization of forces, Republic of Armenia, title, tragedy, ridicule.

Until the recent transition of power in Armenia the idea of the republic and republicanism had only one encompassing shape in Armenian reality and that was in the form of Armenian Republic of 1918–1920. In Soviet Armenia the attributes of the republic and republicanism were absolutely absent, while the Soviet federalism was only a tool for solving national issues.

In 1991 in the second Republic of Armenia while being at its function of formation republicanism as an ideology was prosecuted by the forces struggling for the democratization of the country as a result of which in 21<sup>st</sup> century there is recorded a difference between that very ideology and the political functioning of the party entitled “Republican”: they have absolute discrepancy of form and essence. The idea of the republic and republicanism will record their final triumph in Armenia only when all of us will become real republicans with the nationwide coverage of that word, that is, we will restore our sovereignty in international arena, establish for the citizens the principle of choosing their own destiny through elections and respect the freedom of each of them.

## Резюме

### **ИДЕЯ РЕСПУБЛИКИ И РЕСПУБЛИКАНИЗМ В НОВОЙ И НОВЕЙШЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ**

Геворг С. Худинян  
*Доктор ист. наук*

**Ключевые слова** – республика, республиканизм, интеллектуальная история, народное дело, суверенитет, АРФ Дашнакцутюн, концентрация сил, Республика Армения, титул, трагедия, курьез.

До последней смены власти в Армении идея республики и республиканизм имели только одно целостное воплощение в армянской действительности в лице Республики Армения 1918–1920 гг. В Советской Армении вообще

отсутствовали атрибуты республики и республиканизма, а советский федерализм был инструментом решения национального вопроса.

Во второй Республике Армения, вступившей в процесс образования в 1991 г., республиканизм как идеология преследовалась силами, борющимися за демократизацию страны, вследствие чего в 21-ом веке в армянской действительности был констатирован факт глубочайшей коллизии между республиканской идеологией и политической функцией правящей партии под названием «Республиканская», как полное несоответствие содержания и формы.

Идея республики и республиканизм в Армении добьются окончательной победы лишь тогда, когда мы по-настоящему станем республиканцами в общегосударственном охвате этого слова, то есть восстановим полный суверенитет нашей страны на международной арене, установим внутри страны принцип распоряжения гражданами собственной судьбой через выборы и будем уважать свободу каждого из них.

## REFERENCES

1. **Chilinkiryan Grigor**, Tshuarner, targm. V. Hyugoyic, K. Polis, 1868, hat. 4. **(In Armenian)**
2. **Keshishyan Ani**, «Khi drank tarber en». ННК-ի himnadirə chi imacel hanrapetakanutyun zhoghovrdavarutyun tarberutyunə, «168» oratert, Er., 25 noyemberi, 2016. **(In Armenian)**
3. **Khudinyan G.**, HY Dashnakcutyan knnakan patmutyun (akunkneric minchev 1895 tvakani verjerə), Er., 2006. **(In Armenian)**
4. **Lusinean Guiton**, Nor bargirk patkerazard fransahay, Tpagrutium, «MORIS»-i hayr yev vordi, Pariz, 1903. **(In Armenian)**
5. «Mshak», 1872.07.13, N27. **(In Armenian)**
6. Nakhagic Kovkasean gorcuneutyun, Zhənev, tparan H.Y. Dashnakutean, 1906. **(In Armenian)**
7. **Shahkhatuncan A.**, Federalizm yev Demokratizm, Tiflis, 1907. **(In Armenian)**
8. **Vracean S.**, Hayastani Hanrapetutyun, Pariz, 1928. **(In Armenian)**
9. **Yeghishe Charenc**, Charenc-name, «Erker», Er., «Sovetakan grogh» hrat., 1983. **(In Armenian)**
10. **Yeghishe Charenc**, Antip yev chhavakvac erker, Er., 1983. **(In Armenian)**



Դոկտ. Ռուբինա Բ. Փիրումեան  
(Լոս Անջելես)

## 1918-Ի ԵՒ 1991-Ի ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆԸ ԾՆՈՒՆԴ ՏՈՒՈՂ ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԱԳՐԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐ

Համեմատական հայեացք

**Բանալի բառեր** – անկախություն, համեմատական հայեացք, բոլշևիզմ, ՀՀՇ, ապագայի տեսլական, Ղարաբաղ, Սփիոռք, Գերագոյն Խորհուրդ, ՀՅ Դաշնակցություն:

### Մուտք

Հայաստանի 1918-ի եւ 1991-ի երկու անկախություններն էլ արդիւնք էին ամբողջատիրական եւ բռնապետական երկու կայսրությունների՝ Ռուսաստանի Ցարական Կայսրութեան եւ նոյն տարածքի վրայ նրան յաջորդած Խորհրդային Սոցեալիստական Հանրապետությունների Միութեան (ԽՍՀՄ) փլուզման: Իհարկէ, երկու բացայայտ տարբերություններով. նախ՝ առաջինի պարագայում աշխարհը պատերազմական իրավիճակում էր գտնուում, փոքր ու մեծ երկրների սահմաններն էին փոփոխուում կամ նոր գծուում: Երկրորդի պարագային աշխարհը խաղաղ էր, եթէ ճնցում կար Չեռնոբիլի հիվէակայանի պայթիւնն էր եւ Սպիտակի երկրաշարժը, որոնց առաջացրած ալիքները քաղաքական ալեկոծումներ առաջ բերին<sup>1</sup>:

Միւս բացայայտ տարբերութիւնը՝ առաջինի պարագայում դարեր ջնջուած ու աշխարհաքաղաքական իմաստով անգոյ Հայաստանի հողերի վրայ վերածնուում էր հայոց պետականութիւնը, որ պիտի կառուցուէր ո՛չ թէ ոչին-

1 1986 թիւ, Ապրիլ 26-ին, Ուկրաինայի Չեռնոբիլ քաղաքի հիվէակայանում ռէակտորներից մէկի պայթիւն տեղի ունեցաւ, որի հետևանքով, բացի հսկայական աւերից, շողարձակող (ռադիոակտիւ) նիւթերի ահեղի արտանետումը թունաւորեց շրջապատի կենսոլորտը, եղան մեծ թուով մարդկային զոհեր: Աղէտի մահացու հետևանքները շարունակուեցին երկար տարիներ: Իսկ Հայաստանում, 1988 թիւ, Դեկտեմբեր 7-ին, 6.8 ուժգնութեամբ երկրաշարժը, էպիկենտրոն ունենալով Սպիտակ քաղաքը, աւերեց հսկայ տարածութիւն եւ խլեց մեծ թուով կենսներ: Երկու աղէտներն էլ, սոցեալ-տնտեսական ազդեցութիւնից եւ մարդկային կորստից բացի ԽՍՀՄ-ի համար ունեցան քաղաքական նշանակութիւն եւ բացայայտեցին Խորհրդային սիստեմի անձեռնհասութիւնն ու անձարակութիւնը աղէտներ կանխարգիլելու եւ աղէտների հետևանքները փարատելու մէջ: Չափազանցութիւն չի լինի հետևցնել, որ այս երկու իրադարձութիւնները Խ. Միութեան թուլացման եւ ի վերջոյ փլուզման մէջ դեր ունեցան՝ Աֆղանստանում ձեռնարկուած արկածախնդրութեան հետ միասին:



չից այլ խառնակ քառսից ու դառնար անկախ հանրապետություն: Երկրորդի պարագայում արդէն կայացած երկիրն իր ամբողջ ենթակառուցվածքով ու որոշակի սահմաններով պիտի դուրս գար Խորհրդային Միության տիրապետությունից ու դառնար անկախ հանրապետություն:

Այս բացորոշապէս տեսանելի երեւոյթները յիշատակելուց յետոյ այս հրապարակումով պիտի փորձեն համեմատութեան դնել երկու անկախութիւններին ծնունդ տուող երկու ժամանակաշրջանների ոչ այնքան ակներև աշխարհաքաղաքական, տնտեսական եւ ընկերային պայմաններից ու իւրայատկութիւններից մի քանիսը:

## 1. Թուրքիայի եւ միւս հարեւանների գործօնը երկու ժամանակաշրջաններում

Դեռ շարունակուող Աշխարհամարտի պայմաններում, Հայաստանի անկախութեան նախօրէին կարելոր ազդակ էր Թուրքիան՝ կոտորած, տեղահանութիւն, հայ ստաւորականութեան, քաղաքական/կուսակցական գործիչների եւ հոգեւոր ղեկավարութեան բնաջնջում եւ զինուորացու երիտասարդութեան փձացում: Արդիւնքում՝ պարպումը Արեւմտահայաստանի եւ վերապրող գաղթականութեան հոսքը դէպի աշխարհի չորս կողմ բայց կարելորը այս զեկուցման համար՝ դէպի Երեւան ու էջմիածին: Սովալլուկ, հիւանդ ու անօթեւան այդ գաղթականների ներկայութիւնը փոքրիկ Հայաստանում պիտի խորտակէր արդէն իսկ աղքատ տնտեսութիւնը եւ երկիրը անելանելի վիճակի մատնէր, մի երեւոյթ, որ երկրորդ անկախութեանը նախորդող ժամանակաշրջանում գոյութիւն չունէր:

Հակառակ այս ցաւոտ իրականութեան, սակայն, իրականութիւն էր նաեւ ցարական Ռուսաստանի զօրքերի Թուրքիայից գրաւուած հայկական հողերի գոյութիւնը: Այսինքն՝ դեռ շարունակուող տեսլականը անկախ Արեւմտահայաստանի եւ Աւետիք Շահխաթունեանի գծած եւ 1916-ի ՀՅԴ ռայոնական ժողովում վաւերացուած սահմաններով Կովկասի հայկական բաժնի<sup>2</sup> (ընդգծեմ՝ ժամանակի պարտադրած նպատակային փոփոխութիւնը՝ անկախ եւ ոչ ինքնավար Արեւմտահայաստան, ինչպէս նախապէս էր նպատակադրուած): Երկրորդ տեսլականի իրագործումը գործնական դաշտ էր մտել Համառուսական Յեղափոխութիւնից յետոյ (1917, Մարտ 8, հին տոմարով՝ Փետրուար 23): Կովկասեան այդ օրերի իրականութեան մէջ գործող Հ.Յ.Դաշնակցութիւնը, ժամանակի հայ կեանքում ամենից կարելոր կուսակցութիւնը, հաւատում էր Հայկական Հարցի լուծման ճամբին արդէն որոշ նախնական համաձայնութեան հասած լինել իշխան Գիորգի Լվովի եւ ապա Ալեքսանդր Կերենսկու ղեկավարած ժամանակաւոր Կառավարութեան հետ<sup>3</sup>:

2 Ըստ այս նախագծի՝ Արեւելեան Կովկասը բաժանուում էր թաթարական եւ հայկական մասերի: Հայկական մասը ընդգրկում էր Ղազախ, Գանձակ, Ջիւանշիր եւ Շուշի գաւառների լեռնային մասերը, որ հայաբնակ էին, եւ համարեա ամբողջ Զանգեզուրը: Այսպիսով Կովկասի հայկական բաժինը բաղկանում էր 4 նահանգներից՝ Գանձակ, Երևան, Ալեքսանդրապոլ (Շիրակ) եւ Կարս: Մանրամասնութիւնները տես, **Ռուբինա Փիրումեան**, Հայաստանը ՀՅԴ-Բոլշևիկ Ցարաբերութիւնների Ոլորտում (1917-1921), Եր, Երևանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1997, էջ 10: Այսուհետ՝ «Հայաստանը ՀՅԴ-Բոլշևիկ Ցարաբերութիւնների Ոլորտում»:  
3 1917-ի ամռանը Գևորգ Խախիսեանը եւ Աւետիք Շահխաթունեանը Կովկասի սահմանային բաժանումների նախագիծը ներկայացրել էին Պետրոգրադի իշխանութեան: Դա իրականացնելու հող էր պատրաստուում:

Բոլշեիկեան յեղափոխութիւնը (1917, Նոյեմբեր 7, հին տոմարով՝ Հոկտեմբեր 25) եկաւ հիմնովին փոխելու իրավիճակը: Յաջորդեցին ժողովուրդների ազատութեան վերաբերող՝ Լենինի ու Ստալինի հակասութիւններով լի յայտարարութիւնները, ռուս բանակի նահանջը եւ ճակատների պարպումը, որի հետեւանքով Արեւմտահայաստանի ճակատը պաշտպանելու պարտականութիւնը ստանձնում էին փոքրաթիւ հայկական զօրախմբերը (Մուրատի, Սեպուհի, Անդրանիկի, Արամի, Նազարբէկեանի, Դրոյի եւ Ռոստոմի ղեկավարութեամբ):

Ռուսական բանակի հեռացումը նոր առիթ էր թուրքերի համար. սակայն, թուրք բանակը քայքայուած էր եւ ժամանակի պէտք ունէր: Այդ ժամանակը շահելու համար Թուրքիոյ երրորդ բանակի հրամանատար Վեհիբ Բէյը կովկասեան իշխանութեան զինադադար առաջարկեց: Բանակցութիւնները տարուեցին Երզնկայում Դեկտեմբեր 2-5 (15-18): Նիստերին մասնակցում էր նաեւ Արշակ Զամալեանը: Զինադադարը պիտի գործադրուէր Սեւ Ծովից մինչեւ Վանայ Լճի հարաւային ափերը տարածուող ռազմաճակատներում: Ըստ զինադադարի պայմանագրի՝ ռուսական գրաւեալ հողերի մէջ էր մտնում ապագայի Ուիլսընեան Հայաստանը ամբողջութեամբ<sup>4</sup>: Բայց բախտի հեգնանքով այդ պայմանագրի ստորագրման նախորդ օրը Լենինը եւրոպական ռազմաճակատների վրայ զինադադար էր կնքել Քառեակ Զինակցութեան հետ եւ պայմանները լրացնելու համար բանակցութիւնները շարունակուում էին Բրեստ Լիտովսկում:

Բրեստ Լիտովսկի բանակցութիւնների լուրը հասել էր բոլշեիկեան յեղափոխութիւնից յետոյ կիսանկախ Կովկասեան Կոմիսարիատին լրացնող Անդրկովկասեան Խորհրդարան՝ Սէյմ, որ փոխարինում էր ժամանակաւոր Կառավարութեան ստեղծած Կովկասեան Յատուկ Կոմիտէին (ՕԶԱԿՄ): Նոյ Ռամիշվիլին զեկուցում էր, որ ստորագրուելիք համաձայնագրում թուրքերին մեծ զիջումներ են նախատեսուած: Ռամիշվիլիի կարծիքով՝ Ռուսաստանը բոլորովին հետաքրքրուած չէր Կովկասով եւ Սէյմն էր որ պիտի պաշտպանէր իր երկիրը: Ուրեմն Սէյմում որոշում տրուեց Կովկասը անջատել Ռուսաստանից ու բանակցութեան նստել թուրքերի հետ: Պատուիրակութեան նախագահ ընտրուեց Ակակի Իւանովիչ Չխենկելին. մասնակցում էին Յովհաննէս Քաջազնունին եւ Ալեքսանդր Խատիսեանը: Բայց Բրեստ Լիտովսկի հայ ժողովրդի համար չարաքաստիկ համաձայնութիւնը եկաւ կանխելու ամէն քայլերը: Թուրք բանակը վերակազմակերպուած դարձեալ ռազմական գործողութիւնների դիմեց եւ առաջացաւ ցարական զօրքերի գրաւած հողերը յետ գրաւելու եւ Բրեստ Լիտովսկի համաձայնագրով իրեն նուիրուած հողերին տիրանալու:

Բրեստ Լիտովսկի համաձայնութեան կնքումից յետոյ աւելի շեշտուեց Կովկասը ղեկավարող երեք կուսակցութիւնների անհաւասար մրցակցութիւնը, անհանդուրժողականութիւնն ու սահմանային վէճերը: Թաթարներին առաջնորդող Մուսաւաթ կուսակցութեան ներկայացուցիչները Սէյմում պնդում էին Բրեստ Լիտովսկի պայմաններն ընդունել, այլապէս իրենք դուրս կը գան: Իրա-

4 «Հայաստանը ՀՅԴ-Բոլշեիկ Յարաբերութիւնների Ոլորտում», էջ 71-73 (Յղում է կատարուած Կարօ Մասունու «Թրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին», Գաբրիէլ Լազեանի «Հայաստան և Հայ Դատը» և Սիմոն Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» գործերին):

կանությունն այն էր, որ մուսուլմաններն իրենց խառնակչություններով ուղղակի դաւաճանում էին Կովկասի ժողովուրդների միաւորմանը: Թիկունքից օգնում էին թուրք բանակին, թալան ու կոտորած էին կազմակերպում հայկական գիւղերում, եւ եթէ չլինէր Արամ Մանուկեանի շրջահայեաց քաղաքականությունը, Երեւանն էլ կոլ կը գնար նրանց ոտնձգություններին:

Սահմանային վէճերը մեծով մասամբ հայերի եւ թաթարների մէջ էին եւ պատճառը Կովկասի միախառն բնակչությունն էր, որ ապագայում էլ Կովկասեան երեք անկախ հանրապետությունների կեանքում տուն պիտի տար անհամաձայնությունների, խլրտումների, քաղաքական լուրջ հարցերի եւ արհմտո ընդհարումների: Պիտի ասել, որ Հայաստանի անկախութեան շրջանում, Ռուբէնի (Տէր-Մինասեան) շնորհիւ, կարելի եղաւ լուծում տալ այդ հարցին՝ Հայաստանը մաքրել թաթարներից եւ Խորհրդային Հայաստանին ժառանգութիւն թողնել համեմատաբար աւելի միատարր բնակչութիւն: Ի հարկէ, այլ հարց է, որ Խորհրդային տիրապետութեան օրօք Սովետական Ադրբեջանի թաթարները՝ նոր անունով ազերիները, հրաւիրուեցին Հայաստան ու սահմանին մօտիկ գուտ թուրքական գիւղեր առաջացրին:

Եթէ Բոլշեւիկեան յեղափոխությունը տեղի չունենար... պատմությունը այլ ընթացք պիտի ստանար: Մեծ հաւանականութեամբ պիտի ունենայինք Անկախ Արեւմտահայաստան եւ հայկական ինքնավար գաւառ/կանտոն Ռուսաստանում՝ կարելոր չէ թէ ինչ վարչակարգով: Դա Դաշնակցութեան տեսլականն էր, որ հետապնդեց բոլշեւիկեան յեղափոխութիւնից յետոյ էլ երբ դաշնակցականներ Ռուբէն Տէր-Մինասեանը, Աւետիք Շահխաթունեանը եւ ԲԺ. Յակոբ Զարիփեւը բանակցում էին բոլշեւիկներ՝ Ստեփան Շահումեանի, Դանուշ Շահվերդեանի, Հմայեակ Նազարեթեանի եւ Սարգիս Կասեանի հետ:

Այնուամենայնիւ, Լենինի քաղաքականությունը այլ ճամբայ էր բռնել եւ Շահումեանը չէր կարողացել Լենինին համոզել՝ ռուս զօրքերը Կովկասի ճակատներում թողնելու, որպէսզի կարելի լինէր ապահով պահել թուրքերից գրաւուած հայկական հողերը<sup>5</sup>: Զառեակ Զինակցութեան հետ բանակցելիս Արեւմտահայաստանի դատը վերջինն էր Լենինի մտքում եւ առաջինը զոհագործելու: Նրա հետապնդած համաշխարհային յեղափոխութեան ճամբին կարելոր չէր, թէ ժամանակաւորապէս ով կլինէր հայկական հողերի տէրն ու բնակիչը՝ հայր, թէ՛ թուրքը: Բրեստ Լիտովսկի համաձայնագրով չեղարկուեցին Արեւմտահայաստանին կապուող բոլոր ծրագիրները: Իսկ Թուրքիան մնաց անկախ Հայաստանի ծնունդն անգամ պայմանաւորող եւ ապա նրա տեւական վտանգն ու նրա կործանման մեղսակիցը:

Թուրքիայի գործօնը կամ Արեւմտահայաստանի հայապատկան գրաւեալ հողերի վերադարձը աւելի նուազ հնչելություն ունէր երկրորդ անկախութեան ծննդեան նախորդող նախագորբաջովեան ժամանակաշրջանում: Դա, իհարկէ, չի նշանակում, որ ձգտումը չկար: Դա դրսեւորուել էր Հայոց Ցեղասպանութեան 50-ամեակի համաժողովրդային ցոյցերի ընթացքում<sup>6</sup>:

5 Բանակցությունների մանրամասնությունները, Ռուբէնի յուշերից առնուած, տես՝ «Հայաստանը ՀՅԴ-Բոլշեւիկ Յարաբերությունների Ոլորտում», էջ 67-69:

6 Եղեռնի 50-ամեակը պատշաճ միջոցառումներով ու ձեռնարկներով յիշատակելու եակով Զարոբեանի նախաձեռնությունը գործնական դաշտ մտաւ Մոսկուայից թոյլտուութիւն ստանալուց յետոյ և մանաւոր խթանուեց քայլ պահելու համար Սփիւրքում մեծ կարևորութեամբ սկսած 50-ամեակի

Այս ժողովրդային պոռթկումն անկլինադարձ էր Խորհրդային Հայաստանի պատմության մէջ եւ իր տարողութեամբ առաջինը Խ. Միութիւնում:

Պատահականութիւն չէ, որ Խորհրդային տիրապետութեան ամբողջ ընթացքում Թուրքիան իր սահմանների անձեռնմխելիութեան հարցը ԽՍՀՄ-ի հետ ունեցած իր յարաբերութիւններում միշտ կենդանի է պահել եւ բառացիօրէն ընդգրկել 1973-ի Դեկտեմբեր 29-ին ստորագրած պայմանագրի մէջ: Այդպիսով Թուրքիան իր եւ Հայաստանի սահմանների մասին պաշտօնական փաստաթուղթ էր ձեռք բերում, այսինքն՝ որերորդ անգամ թաղում էր Արեւմտահայաստանի հողային հարցը: Մոսկուան բարի գտնուեց այդ համաձայնագիր/փաստաթուղթի պատճէնը Հայաստանի Կոմկուսին յանձնելու: Բայց այն գաղտնի պահուեց եւ հրապարակուեց Սովետի փլուզումից յետոյ միայն, 2008-ին, «**Բանբեր Հայաստանի արխիւների**» հանդէսի թիւ 1 համարում<sup>7</sup>: Անհաւանական չէ, որ Թուրքիային այս նախագգուշական քայլին մղողը 1965-ից Խորհրդային Հայաստանում սկսված վտանգաւոր խմորումներն էին<sup>8</sup>: Նման խմորումները, իհարկէ, սաստկօրէն ճնշուեցին ձերբակալութիւններով ու աքսորով: Այդ մարդիկ «մոլորեալներ» կոչուեցին, բայց դրանց ցանած գաղափարները պիտի ծլարձակէին յետագային: Անուշադրութեան մատնուեց նաեւ եւ միայն արտասահմանի հայութեան համար տեղեկութիւնների աղբիւր ծառայեց Հայաստանի «Հելսինկեան Խումբ»-ի 1977-ից հաւաքած փաստաթղթերը Հայաստանի Խորհրդային իշխանութեան կողմից թոյլ տրուած մարդկային իրաւանց խախտումների մասին<sup>9</sup>:

Նախագորբաշովեան ժամանակաշրջանի այս քաղաքական խմորումները ծփանքներ էին, որ դժգոհութեան եւ գորբաշովեան համեմատաբար աւելի ազատ մթնոլորտում ազգային շարժման ալիք պիտի դառնային յետագայում: Իսկ Թուրքիան մնում էր սահմանակից հարեւան, Խորհրդային Միութեան թշնամի, սահմանի մօտ տեղակայուած իր ամերիկեան եւ ՆԱՏՕ-ի գինուորական խարիսխներով՝ հրթիռները դէպի Հայաստան ուղուած: Հայ-

նախապատրաստական աշխատանքների հետ, վերջին հաշուով Սփիոքը Հայաստանին մօտեցնելու մղումով: Այս մասին տե՛ս, օրինակ՝ **Ջաւէն Գրիգորեանի** յօդուածը «Եակով Ջարրեանի դերը Հայոց Մեծ եղեռնի 50-ամեակը Խորհրդային Հայաստանում նշելու և Հայրենադարձութեան կազմակերպման գործում», էջ 202-205, «**Բանբեր Հայաստանի արխիւների**», թիւ 1 (101), 2003: Չմոռանանք, որ 1964 թ. Յուլիս 16-ին մի խումբ մտաւորականներ ՀԿԿ Կենտրոնական Կոմիտէին նամակ գրելով խնդրել էին եղեռնի 50-ամեակից լուռ չանցնել և պատշաճօրէն նշել այն: Ձեռնարկները ծրագրուեցին, բայց ինչ էլ նախատեսել Ջարրեանը 1965 թ. Ապրիլ 24-ի գանգուածային բնոյթ ստացած ցոյցերն էին, ուր մտաւորականներ, ուսանողներ և պարզ քաղաքացիներ երևանում «Մեր հողերը, մեր հողերը» էին գոչում և պահանջում Թուրքիայի կողմից գրաւած հայկական հողերի վերադարձ և ցեղասպանութեան ճանաչում:

7 Տե՛ս **Աւագ Յարութիւնեան**, «Խորհրդաթուրքական սահմանի վերասահմանագծման պատմութիւնից (1973 թ.)», կամ «Из истории и демаркации советско-турецкой границы (1973 г.)», էջ 175-195, «**Բանբեր Հայաստանի արխիւների**», թիւ 1 (111), 2008:

8 1967-ին արդէն գաղտնի գործող մի քանի խմբեր միացան նախապէս կազմուած Ազգային Միաբանութիւն Կուսակցութեան՝ մասնաբար գործելու ազգային գաղափարախօսութեամբ և ծրագրով: Բայց կուսակցութեան անդամները անողոր իսկաձեռնների ենթարկուեցին: Ըստ Լ. Մկրտչեանի՝ մինչև 1974 թուական «իրենց ազգային-հայրենասիրական գործունէութեան համար, դատուել ու ռուսաստանեան սառցավայրերն են ուղարկուել աւելի քան 80 մարդ»: Տես Լ. **Մկրտչեան** (կազմեց և ծանօթագրեց), «Հայրենական ձայներ, (Վաւերագրական նիւթերի ժողովածու), Միւնխեն, Institut für Armanische Fragen, 1978, էջ 111: Այսուհետ՝ «Հայկական Ձայներ»: Մկրտչեանն այս ժողովածուում հրատարակել է «Ազգային Միացեալ Կուսակցութեան» հիմնադիրներից Պարոյր Հայրիկեանի երևանեան դատավարութեան «Վերջին խօսքը» 1974, Նոյեմբեր 22-ին՝ Հայկական ՍՍՀ Գերագոյն Դատարանում ( էջ 113-121):

9 1977 թ. Ապրիլ 1-ի «Հելսինկեան Համաձայնութեան եզրափակիչ Փաստաթղթի Դրոյթների Կատարման Աջակցող Հայկական Խումբ»-ի Յայտարարգրի առաջին տողերն են՝ «Հայկական Հանրապետութեան մէջ տեղի են ունենում մարդկային իրաւունքների, մարդկային արժանապատուութեան և հիմնական ազատութիւնների՝ մտքի, խղճի, կրօնի, համոզումների կոպիտ ռունահարման դէպքեր», և «Խումբը» ներկայացնում է իր նպատակներն ու առաջարկները («Հայրենական ձայներ», էջ 123-127):

Ադրբեջանական թնջուկը, Հայաստանի շրջափակումը եւ Թուրքիայի պահանջները նորանկախ Հայաստանի կառավարութիւնից դեռ ապագայում էր: Իսկ Վրաստանի ու Ադրբեջանի խորհրդային հանրապետութիւնները «եղբայրական» յարաբերութիւնների մէջ էին Խորհրդային Հայաստանի հետ: Ստալինեան քաղաքականութիւնը կարողացել էր անծայրածիր կայսրութեան հարիւրից աւելի ազգութիւններին իր մուրճի տակ առերեւոյթ համերաշխ պահել:

## 2. Հայկական կուսակցութիւնների կամ քաղաքական հոսանքների գործօնը

**Վերադառնանք հարցի պատմութեանը:** 1917-ին Հայոց Ազգային Խորհուրդը կովկասահայութեան դատի գործնական ուժն էր ներկայացնում: Եթէ այս ճակատագրային իրավիճակում գործի մղիչ ուժը Դաշնակցութիւնն էր, ապա հայ ժողովրդի ղեկավարն ու ճակատագրի տնօրինողը Ազգային Խորհուրդն էր, որի մէջ դարձեալ մեծամասնութիւն էր Դաշնակցութիւնը: Այս բոլորը, իհարկէ, բացի Սէյմում ունեցած հայ ներկայացուցչութիւնից եւ զբաղեցրած պաշտօններից:

Եւ ինչպէ՞ս առաջացաւ Հայոց Ազգային Խորհուրդը: 1917-ի Հոկտեմբեր 11-ին Թիֆլիսում կայացաւ Արեւելահայոց առաջին համագումարը, որին հրաւիրուել էին հայ կեանքում գործող բոլոր հոսանքները, նոյնիսկ հայ բոլշեւիկները, որոնք թիւ չէին կազմում Կովկասում: Բայց բոլշեւիկները բոյկոտեցին հաւաքը, այն՝ «բուրժուազիայի նացիոնալիստական հնարք» պիտակելով<sup>10</sup>: Ահա՛ այս համագումարից առաջացած մարմինը Ազգային Խորհուրդ կոչուեց: Կազմը բազմակուսակցական էր-Դաշնակցութիւն (6), Ժողովրդական (2), Սոցեալ-Դեմոկրատ, Մենշեւիկ (2), Սոցեալ-Յեղափոխական, Էս-Էռ (2) կուսակցութիւնները եւ 3 չէզոքներ: Նախագահն էր Աւետիս Ահարոնեանը: Թիֆլիսի Ազգային Խորհրդի ներքոյ գործում էին տեղական Ազգային Խորհուրդները: Բազմակուսակցական դրութիւնը շարունակուեց նաեւ անկախութեան տարիներին՝ առաջին խորհրդարանը եռապատկուած պատկերն էր Ազգային Խորհրդի՝ Հայաստանում ապրող ազգային փոքրամասնութիւնների՝ թուրքերի, ռուսների եւ եզիդիների ներկայացուցիչների յաւելումով:

**Համեմատութեան համար նշենք**, որ Խորհրդային Հայաստանում գոյութիւն ունէր Մոսկուայի հրամանով գործող կոմունիստ միակուսակցական կառոյց: Երկրի առաջին դէմքը Կոմունիստ կուսակցութեան առաջին քարտուղարն էր՝ Կարէն Դեմիրճեանը (1974-1988), որ ազատութիւնը չունէր բողոքելու Մոսկուայի տէրերին, որ Խորհրդային Միութեան անհաշիւ ճարտարարուեստականացումը թունաւորել է Հայաստանը: Մեծամօրն ու Նալիբիտը Հայաստանի հպարտութիւնն էին ամբողջ Խորհրդային Միութեան մէջ: Հայաստանը երրորդ տեղն էր գրաւում քիմիական ճարտարարուեստի

<sup>10</sup> Սեպտեմբեր 19-ին, ի պատասխան համագումարին մասնակցելու հրաւերի, Ասատուս Միկոյեանի յայտարարութիւնը տես՝ «Հայաստանը ՀՅԴ-Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում», էջ 13: Յայտարարութեան բնագիրը տես՝ «Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ Ռեւոլյուցիան և Սովետական իշխանութեան յաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու» (Եր., Հայկ. ՄՍՌ Ակադեմիայի Հրատարակութիւն, 1960), փաստաթուղթ թիւ 46, էջ 73-74: Այսուհետ՝ «Հոկտեմբերեան»:

ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԿՄ համահայկական հանդես

մէջ: Ինչ հոգ, թէ գործարանները անբաւարար ապահովական միջոցների պատճառով թունաւոր եւ շողարձակող նիւթեր էին արտանետում եւ շրջապատը ապականում<sup>11</sup>: Ինչ հոգ, թէ Մոսկուան դրժել էր իր պայմանը՝ այդ գործարանների թափօնները Սիբիր տեղափոխել ու անմարդաբնակ վայրում թաղել: Չէ՞ որ Ադրբեջանը մերժել էր թափօնները իր հանրապետութեան միջով ձամբայ տալ: Դա կարող էր վնասել իր բնակչութեան առողջութեանը: Ուրեմն, այդ թունաւոր թափօնները մնում էին Հայաստանում՝ Արարատեան դաշտում թաղուած, այն էլ ոչ ապահով խորութեամբ, եւ փձացնում ջուրը, բուսականութիւնը, մահացու հիւանդութիւններ բերում բնակիչներին: Կենսոլորտի ապականման հարց կար Հայաստանում, ուղղակի «Կենսաբանական եղեռն», ու դա լուծելու ոչ մի հեռանկար չկար: Իսկ 1987-ի Մարտին Հայաստանի 350 մտաւորականների բողոք-նամակը Գորբաչովին անարդիւնք էր մնացել՝ միայն զարհուրանք պատճառելով Սփիւռքին, որ չերեւակայած պատկերն էր տեսնում: Հայաստանեան մամուլը օգտուելով Գորբաչովեան «Հրապարակայնութեան» քաղաքականութիւնից՝ սկսել էր դրսևորել հողի, ջրի, օդի թունաւորման հսկայ չափերը եւ ազդեցութիւնը Հայաստանի բնութեան, կենդանական աշխարհի եւ բնակչութեան վրայ:

Խորհրդային Միութիւնը Գորբաչովեան «Վերակառուցման», «Հրապարակայնացման» եւ «Ժողովրդավարացման» ձախաւէր քաղաքականութեան արդիւնքում բացուել էր աշխարհին, երկաթէ վարագոյրը բարձրացրել:

Հայաստանում դժգոհութիւններն ու բողոքները շարունակուում էին խեղդուել հալածանքով ու ազատագրկումով: Դա որակուում էր հակադրութիւն Խորհրդային վարչակարգին: Սպիտակի երկրաշարժը եւ պատճառած աւերը եւ Մոսկուայի ղեկավարութեան անձարակութիւնը անմիջական օգնութիւն հասցնելու աւելի պարզեցին պատկերը աշխարհի եւ մանաւանդ՝ հայկական Սփիւռքի առջեւ: Այս բոլորը յիշատակուում են՝ հիմնաւորելու համար այն միտքս, որ Հայաստանի կոմունիստ ղեկավարութեան անկարողութեան պատճառով Հայաստանում առաջացած ծանր խնդիրներին լուծում տալու համար առաջին անգամ լինելով Խորհրդային Միութեան միակուսակցական դրուածքում՝ կազմուում էին անկախ գործող խմբակցութիւններ, որոնք, ի տարբերութիւն նախագորբաչովեան շրջանի, այլեւս գաղտնութեան մէջ չէին, այլ կազմուում էին բացայայտ, յատուկ նպատակներով եւ աստիճանաբար ժողովրդի մէջ արմատ նետելով՝ պիտի տուն տային Խորհրդային Միութիւնից անջատման շարժումին: Այդ խմբակցութիւնների առաջիններից էր 1987-ին Շահէն Յարութիւնեանի նախագահութեամբ կազմուած «Սովետահայ քաղբանտարկեալների պաշտպանութեան յանձնախումբ»-ը, եթէ չհաշուենք 1984-ից գործող «Զանգակատուն» կազմակերպութիւնը, որ Ղարաբաղի յուշարձանների պահպանման համար էր գործում, բայց ստորագրութիւններ էր հաւաքում Ադրբեջանի իշխանութեան կատարած վայրագութիւնների դէմ բողոք ներկայացնելու համար:

<sup>11</sup> Միջազգային մասնագէտները Հայաստանի հիվէակայանը համարում են աշխարհի ամենից վտանգաւորներից մէկը թէ՛ իր նախագծի և թէ՛ իր տեղանքի (երկրաշարժի գօտի) տեսակէտից: Գոյութիւն ունեն բաւական թուով ուսումնասիրութիւններ այս մասին: Տես օրինակ՝ **Marianne Lavelle** և **Josie Garthwaite**, "Is Armenia's Nuclear Power Plant the World's Most Dangerous?" <http://news.nationalgeographic.com/news/energy/2011/04/110412-most-dangerous-nuclear-plant-armenia>

### 3. Դէպի անկախութիւն առանց նախատեսումի կամ ծրագրուած քայլերով

**Վերադառնանք հարցի պատմութեանը:** Թուրք բանակը առաջանում էր նոր կոտորածներով, հայ զօրականների յուսալքում կար եւ փախուստ: Իսկ Սէյմում ո՛չ վրացի եւ ո՛չ էլ թաթար ղեկավարները մտադրութիւն չունէին հայ ժողովրդի սիրոյն թուրք բանակի դէմ պատերազմելու: Թիֆլիսի Ազգային Խորհրդի անդամներ՝ Աւետիս Ահարոնեան, Ստեփան Մամիկոնեան, Տիգրան Բէկզադեան, Նիկոլ Աղբալեան, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում այցելում էին ժողովրդին եւ զօրքին՝ քաջալերելու, մտահոգութիւնները մեղմելու: Այդ օրերին Սէյմի պատուիրակութիւնը վերջապէս Տրապիզոն հասած՝ սպասում էր ընդունուել թուրքերի կողմից, որ ուշանում էր: Թուրքերը կարիք չունէին այդ բանակցութիւնների: Վերջապէս Մարտ 14-ին սկսում են բանակցութիւնները, երբ արդէն ընկել էր Էրզրումը: Ռիչարդ Յովհաննիսեանի բառերով՝ Էրզրումի ձակատամարտը Արեւմտահայաստանի համար տրուած վերջին կռիւն էր, որով թուրքերը տիրեցին ռուսների գրաւած հայկական վեց վիլայեթներին: Թուրք բանակը Վանի, Խնուսի, Ալաշկերտի պաշտպանութիւնները ձեռքբերով դէպի Կովկաս շարժուեց<sup>12</sup>: Մարտի վերջին վերսկսած բանակցութիւններին թուրքերը ներկայանում են վերջնագրով՝ ընդունել Բրեստ Լիտովսկի համաձայնագիրը եւ Կովկասը անկախ յայտարարել, այլապէս՝ սպառնում էին Բաթում մտնել: Սէյմը նախապէս մերժել էր Բրեստ Լիտովսկը, մերժել էր նաեւ առանց Ղարսի, Արդահանի եւ Բաթումի Կովկասը անկախ յայտարարել:

Այս մասին պատուիրակութիւնը տեղեկացնում է Սէյմին եւ յանձնարարում նոր կոտորածներից խուսափելու համար ընդունել թուրքերի պայմանները: Սակայն Սէյմը իր Ապրիլ 13-ի նիստում որոշում է տեղի չտալ եւ պատերազմը շարունակել: Միայն մուսաւաթականները դէմ են կանգնում այդ որոշման: Մուսուլման թուրքերի դէմ պատերազմը համարում են Կովկասի ամբողջականութեան քայքայման առաջին քայլ: Բոլոր դէպքերում, ընտրուում է պատերազմական յատուկ մարմին, որին մաս էին կազմում Գեգեչկորին, Կարճիկեանը, Ռամիշվիլին: Սէյմի այս որոշման վրայ պատուիրակութիւնը անորոշութեան մատնուած դէպի Թիֆլիս է շարժում:

Արդէն ընկել էր Սարիղամիշը, երբ Ապրիլ 20-21-ին Շ.Յ.Գ. Արեւելեան Բիւրոյի նախաձեռնութեամբ Ալեքսանդրապոլում հրաւիրուեց համահայկական խորհրդածողով՝ քաղաքական, կուսակցական, ռազմական եւ հասարակական ղեկավարութեան մասնակցութեամբ: Մասնակիցներից շատերը կողմնակից էին պատերազմը շարունակելուն: Բայց դէպքերը այլ ընթացք ստացան: Ապրիլ 22-ի Սէյմի ժողովում որոշուեց Կովկասը անկախ յայտարարել՝ «Անդրկովկասի Ռամկավար Դաշնակցային Հանրապետութիւն», սա միայն Թուրքիայի պնդումով, որպէս բանակցութիւնների նախապայման: Ի միջի այլոց, մուսաւաթականների ղեկավար Ռասուլզադէն առաջարկում էր Դաղստանն էլ առնել անկախ Կովկասի սահմանների մէջ՝ մուսուլմանների բոլշեիկների լուծից ազատելու համար: Նպատակը՝ մահմետական հողա-

Թ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԷՎ համահայկական հանդէս

<sup>12</sup> Տե՛ս **Richard Hovannisian**, Armenia on the Road to Independence, 1918, (Berkeley, Los Angeles, London: University of California Press, 1968), էջ 137:

տարածքը ընդլայնելն էր:

Սէյմի այս ժողովում հրաժարում է պատերազմ շարունակելու կողմնակից Գեգեչկորիի կառավարութիւնը: Թուրքամէտ Ակակի Իւանովիչ Չխենկելիին յանձնարարում է կառավարութիւն կազմել, որ վաւերացում է Ապրիլ 26-ին: Իսկ այդ երեք օրերի ընթացքում արդէն Չխենկելին գաղտնի կապի մէջ էր մտել Վեհիպ Բէյի հետ, որից յետոյ կարգադրում է Կարսի ճակատի հրամանատար Նազարբէկեանին կոչւր դադարեցնել, զէնքերը ցած դնել: Հաղորդակցական կապը կտրուած լինելով, անտեղեակ կենտրոնում տիրող իրադրութեան՝ Նազարբէկեանը կատարում է հրամանը: Ապրիլ 25-ին քաղաքը յանձնում է Քեազիմ Կարաբեքիրին եւ, թուրք բանակը Կարս մտնելով սկսում է թալանել ու աւելրել: Հայերը խուճապահար դէպի Երեւան են փախչում<sup>13</sup>: Կարսն ընկնում է նրանով հանդերձ, որ Նազարբէկեանը մի քանի օր առաջ Ալեքսանդրապոլի խորհրդաժողովին յայտարարել էր, թէ Կարսի պաշտպանութիւնը կարող է մէկ ամիս էլ դիմանալ, եթէ Կարսը չընկնէր, եթէ Չխենկելին այդ դաւաճան քայլը չառնէր: Բայց մենք մեզ մեղադրենք: Եթէ ճակատի հրամանատարութիւնը այդքան արագ, առանց իսկ Քաջազնունու եւ Խատիսեանի իմացութեան (հաղորդակցութեան կապը կտրուած է եղել) Չխենկելիի հրամանը չկատարէր: Կարսը կը դիմանար եւ մէկ ամիս անց զարգացող դէպքերի արդիւնքում անկախ Հայաստանի բանազնացները ամուր հիմքերի վրայ, աւելի լայն տարածքով Հայաստանի գոյութիւնը կամրագրէին թուրքերի հետ:

Անկախ Կովկասում գործող Չխենկելիի կառավարութիւնը Մայիս 11-ից թուրքերի հետ Բաթումում բանակցութիւններ սկսեց: Պատուիրակութեան մաս էին կազմում նաեւ Յովհաննէս Քաջազնունին եւ Ալեքսանդր Խատիսեանը: Թուրքերը այս անգամ պահանջում էին Անդրկովկասի անկախութիւնը լուծարել եւ դէպի Ալեքսանդրապոլ ու Էջմիածին առաջանալով՝ սպառնում էին Երեւան հասնել: Բանակցութիւններին մասնակցող թաթարները, Ուզբեկով եւ Խոյսկի, թուրքերի բացարձակ հովանաւորութիւնը վայելելով, պնդում էին, որ Էջմիածինը լինի Հայաստանի մայրաքաղաք, իսկ Երեւանը, որ թաթարական քաղաք էին համարում կցուի Ադրբեջանին: **Միջանկեալ.** եթէ Ալիեւը Երեւանը Ադրբեջանի մաս է յոխորտում, գաղափարն իր մուսաւաթական նախնիներից է գալիս:

Այս ընթացքում վրացիներն էլ գաղտնի համաձայնութեան էին գալիս գերմանացիների հետ նրանց հովանաւորութեամբ անկախութիւն յայտարարելու: Իսկ հայ ղեկավարութիւնը: Որեւէ որոշում ճակատագրային էր լինելու եւ լի անորոշութիւններով: Անկախութիւնը արեւելահայ հողատարածքում, երկու աւելի զօրեղ հարեւանների արանքում առանց բնորոշ սահմանների, անիրագործելի էր. իսկ Արեւմտահայաստանը վտանգուած էր: Եթէ յստակ էր երկու հարեւանների արեւելումը եւ նպատակաւորուած գործունէութիւնը, ապա հայ ղեկավարութիւնը տարուբերում էր՝ որեւէ կողմից հովանաւորութիւն եւ ապահովութիւն չտեսնելով: Յիշենք Ռուբէնի բանա-

13 Այս տագնապալից ժամանակաշրջանում Սէյմի նիստերում և ռազմաճակատում տեղի ունեցած անցուղարձի մանրամասնութիւնների մասին տես «Հայաստանը ՀՅԴ-Բոլշևիկ Յարաբերութիւնների Ոլորտում», էջ 87-90: Սէյմի նիստերի արձանագրութիւնները առնուած են Հ.Հ.Կ.Պ. Պետական Արխիւից. իսկ իրադարձութիւնների նկարագրութեան համար յղում է կատարուած Ալեքսանդր Խատիսեանի և Սիմոն Վրացեանի գործերին:



ձեռումը, որ լիակատար պատկերն է ներկայացնում: Ըստ Ռուբէն Տէր-Մինասեանի, Դաշնակցութիւնը եւ Հայոց Ազգային Խորհուրդը երեք ընտրանք կամ երեք ճամբայ ունէին ընտրելիք:

«Առաջինը, լինել Վրաստանի եւ Ադրբեջանի հետ՝ երես ուղղելով դէպի գերմանացիք եւ Թուրքիան:

Երկրորդը, դէմ լինել թուրքերին եւ հարեւաններին՝ յոյսեր կապելով դաշնակիցների յաղթութեան վրայ:

Երրորդը, դէմ լինել եւ հարեւաններին, եւ դաշնակիցներին, յենուել Մուկուայում հիմնադրուած բոլշեւիկների եւ Կովկասում մնացած նրանց բեկորների վրայ»<sup>14</sup>:

Ընդ իր Ռուբէնի վկայութեամբ, Դաշնակցութիւնը բացարձակ դիրքորոշում չորդեգրեց եւ փորձեց օգտագործել բոլոր կարելիութիւնները, որովհետեւ ո՛չ միայն որեւէ մէկ յենարան այդ օրերին համահայկական շահերի երաշխիքը չէր ընձեռում, այլ նաեւ՝ դաշնակցական ղեկավարների մէջ միատեսակ կողմնորոշում չկար:

Քաղաքական դաշտի անորոշութեանը սատարում էին Դաշնակից պետութիւնների ընկալումը բոլշեւիկեան յեղափոխութեան՝ որպէս ժամանակաւոր երեւոյթ, որ պիտի վերանար Ռուսաստանից, իսկ Սպիտակ Ռուսները դեռ դերակատարութիւն ունէին Ռուսաստանում: Դաշնակիցները անդադար խոստումներ էին տալիս հայերին, եւ այդ խոստումներին հաւատք ընծայեցին շատերը: Միւս կողմից գերմանաթրքական դաշինքը գործնական հովանաւորութիւն էր ցոյց տալիս վրացիներին ու Կովկասի թաթարներին եւ յարաբերութիւններ մշակում Լենինի հետ: Ահա այս քաղաքական անորոշութիւնների եւ համատարած անվստահութեան մէջ պիտի կողմնորոշուէր հայ ղեկավարութիւնը յանձինս ՀՅ Դաշնակցութեան եւ Հայոց Ազգային Խորհրդի:

Մայիս 26-ին վրացիների առաջարկով Սէյմը լուծարուեց: Վերջ գտաւ Անդրկովկասի կարճատեւ անկախութիւնը, եւ մի քանի ժամ յետոյ վրացիները իրենց անկախութիւնը յայտարարեցին: Խատիսեանը վկայում է, որ Բաթումում Նոյ ժորդանիան յայտնել էր իրեն, թէ քանի հայերը դեռ շարունակում են պնդել թուրքերի դէմ պատերազմելու, Վրաստանը պիտի բաժանուի: Իսկ Խատիսեանի բողոքին, թէ «Միթէ ազնիւ բան է այս», ժորդանիան պատասխանել էր. «Ազնիւ բան է այն, ինչ որ օգտակար է ժողովուրդին ...մենք չենք կրնար խեղդուիլ ձեզի հետ միասին»<sup>15</sup>: Սա ամենախօսուն պատկերն էր իրականութեան ու նաեւ վկան դիւանագիտական հնարագիտութեան ու ձեռներեցութեան՝ ի տարբերութիւն զգացական ու ազնիւ գործելակերպի եւ ուրիշներից ունեցած աւելորդ սպասումների:

Շփոթի ու անորոշութեան մէջ նոյն օրը Թիֆլիսում գումարուեց Հայոց Ազգային Խորհուրդի ժողովը: Դժուար էր որոշում կայացնել: Կարծիքները բաժանուած էին: Հետեւել Վրաստանին եւ անկախութիւն յայտարարել, բայց դա կլինէր միայնակ մնալ եւ Ռուսաստանից էլ կտրուել այն ժամանակ, երբ հայկական հողերի մեծ մասը Թուրքիայի գրաւման տակ էր գտնուում:

14 Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները» հատոր 7, (Լոս Անջելըս, Հորիզոն Հրատ., 1952), էջ 138-139:  
15 Ալեքսանդր Խատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» (Պէյրութ, ք. տպագրութիւն, «Համազգային»ի տպարան, 1968), էջ 82:

Նոյնիսկ մտածում էր բողոքել Վրաստանի արած քայլի դեմ եւ փորձել վերականգնել Անդրկովկասի միասնականությունը: Նոյն գիշեր գումարուած ՀՅԴ ներկայացուցչական հանդիպմանը ընդհանուր կարծիքն այն էր, որ Թիֆլիսի Ազգային Խորհուրդը Երեւան երթայ եւ ձեռք առնի հայ ժողովրդի ղեկավարման եւ պաշտպանութեան գործը: Անկախութիւն յայտարարելու հարց չկար: Յաջորդ օրուայ Մուսաւաթի կողմից Ադրբեյջանի անկախութեան յայտարարութիւնը փոխեց ամէն ինչ: Մայիս 28-ին Ազգային Խորհուրդը որոշեց անկախ Հայաստանի անունից պատուիրակութիւն ուղարկել Բաթում թուրքերի հետ գինադադար կնքելու, նրանով հանդերձ որ անկախութեան որոշում չկար դեռ: Այդ որոշումը տրուեց ՀՅԴ Արւելեան եւ Արեւմտեան Բիւրօների, Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտէի եւ Ազգային Խորհրդի ու Սէյմի դաշնակցական անդամների նիստում եւ որոշուեց Ազգային Խորհրդին յանձնարարել Յովհաննէս Քաջազունուն հրաւիրելու որպէս վարչապետի թեկնածու: Ազգային Խորհրդի Մայիս 30-ի նիստին միւս կուսակցութիւնների ներկայացուցիչներն էլ հաստատեցին անկախութիւն յայտարարելու անհրաժեշտութիւնը, եւ կատարուեց պաշտօնական յայտարարութիւն:

Ըստ Հրաչ Տասնապետեանի՝ «Անկախութեան վճռական յայտարարութիւն մը ըլլալէ աւելի, դէպքերու գահավէժ ու անհակակշիռ ընթացքով պարտադրուած իրողական վիճակի մը հաստատումն է ան»<sup>16</sup>: Ռիչարդ Յովհաննիսեանը համեմատում է երեք հռչակագիրները եւ հաստատում, որ հակառակ միւսների, հայկականի մէջ չկայ անկախութիւն, հանրապետութիւն կամ քաղաքացիական իրաւունք բառերը: Միայն յետագայ յաջողութիւններից եւ Բաթումի համաձայնագրի ստորագրութիւնից յետոյ էր, որ Ազգային Խորհուրդը գործածեց Հայաստանի Հանրապետութիւն անունը<sup>17</sup>:

Յունիս 4-ին ստորագրուեց Բաթումի «Խաղաղութեան եւ բարեկամութեան դաշինքը»: Նախորդ օրերին Սարդարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ Ապարանի ռազմական յաջողութիւնները որոշակի դեր էին ունեցել՝ Հայաստանին յատկացուած շուրջ 10.000 քառ. քիլօմետր հողատարածքի վրայ շուրջ 1000 քառ. քիլօմետր էլ աւելացնելու: Միմոն Վրացեանը այսպէս է նկարագրում՝ Հայաստանի հողային «տարածութիւնը մօտաւորապէս 12.000 քառ. քիլօմետր էր, բնակչութիւնը գաղթականներով միասին՝ մօտ մէկ միլիոն...: Եւ մայրաքաղաքից մօտ եօթը քիլօմետր հեռու երեւում էին թրքական թնդանօթները...»<sup>18</sup>:

Իրականութիւն էր Հայաստանի անկախութիւնը, բայց իրականութիւն էր նաեւ Արեւմտահայաստանի անկումը: Ապրիլից սկսած արդէն 150.000 գաղթականներ, առանց վերադառնալու յոյսի, դէպի էջմիածին ու Երեւան էին քաշուում:

**Համեմատութեան համար նշենք**, որ հակառակ Հայաստանի անկախութեանը ծնունդ տուող անորոշ ու քառասային պայմաններին եւ ընթացող ռազմական գործողութիւնների առկայութեանը՝ 1991-ին հռչակուած երկրորդ անկախութիւնը գազաթնակէտն էր դէպի այդ անկախութիւնը տանող աս-

16 Հրաչ Տասնապետեան, «Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդի. Ժողով», (Աթենք, «Դրօշակ»ի տպարան, 1988), էջ 128, ծանօթ. 37:

17 Տէն Armenia on the Road to Independence, էջ 191:

18 Միմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», գ. տպագրութիւն (Թեհրան, տպարան «Ալիք», 1982), էջ 156:

տիճանական զարգացումների՝ հայ ժողովրդի եւ ժողովրդային ղեկավարութեան անմիջական դերակատարութեամբ:

Խորհրդային Միութիւնը տնտեսական տագնապից փրկելու համար Գորբաչովի բարենորոգումները երկիրը փրկելու փոխարէն լուսարձակի տակ էին բերել այլ հարցեր, որոնք մինչ այդ ճնշուած ու թաքուն էին մնացել: Այդ հարցերի կարեւորներից էր ազգութիւնների հարցը, որոնց միջեւ գոյութիւն ունեցող հակամարտութիւնն ու անհանդուրժողականութիւնը առաջ էր քաշուել սաստկութեամբ, նոյնիսկ անջատողական միտումներով: Գորբաչովը խոստացել էր լուծել այդ հարցերը մեղադրելով իր նախորդներին՝ դրանք դիտաւորեալ կերպով անտեսած լինելու համար:

Հայաստանում ազգութիւնների հարցը վաղուց էր արծարծուում: Ղարաբաղի հայերի դատը պաշտպանող միտումներ, բողոք, նամակներ Հայաստանի իշխանութեան, որոնց սակայն ընթացք չէր տրուում: Ընթացք չէր տրուել նաեւ 1963-ին Խրուշչովին ուղուած Արցախի 2500 հայերի բողոքագիր դիմումին, որ ընդարձակ նկարագրութիւնն էր Ադրբեյջանի բռնատիրական ու խտրականութեան մթնոլորտում տառապող Լեռնային Ղարաբաղի հայութեան իրավիճակի՝ պատմական ակնարկով ու խտրականութեան ու ճնշումների փաստերով եւ օրինակներով: Բողոքագիրը ներքին ինաստով չարձագանքուեց այդ օրերին, այլ արտասահմանում հայկական թերթեր, առաջինը Բեյրութի «Սփիւռք» թերթը լոյս ընծայեց այն<sup>19</sup>: Յիշենք նաեւ, այս անգամ արդէն յուսահատութեան հասած, կենտրոնից որբել միջամտութիւն եւ դրութեան բարելաւում չտեսած արցախահայութեան կոչը՝ «Հայաստանի ժողովրդին, Կառավարութեանը, Կուսակցութեան Կենտկոմին, Հասարակական Կազմակերպութիւններին»,<sup>20</sup> որ նոյնպէս անարձագանք մնաց: «Կոչը» լոյս տեսաւ արտասահմանում, առաջին անգամ Փարիզի «Յառաջ» թերթում, Սեպտեմբեր 1, 1967 եւ յետոյ այլ հայկական թերթերում: Ի միջ այլոց, սրանք օրինակներ են Հայաստանում 1960-ականներից ծաւալած ինքնահրատարակչութեան (սամիզդատ)՝ գաղտնի կերպով ձեռքից ձեռք անցնող քաղաքական հարցեր քննող գրութիւններ, բողոքներ, նոյնիսկ չթոյլատրուած գրական գործեր:

Հարցը Հայաստանում ամենայն ուժգնութեամբ երեւան եկաւ նախ որպէս Ղարաբաղի ազատագրական շարժման արձագանք՝ երբ 1988-ի Փետրուար 13-ից Ստեփանակերտում ծայր առած բողոքի ցոյցերին որպէս արդիւնք Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզխորհուրդը (ԼՂԻՄ) Փետրուար 20-ի իր նիստում որոշեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու ուղղութեամբ պաշտօնապէս դիմել Մոսկուային: Երեւանը արձագանքեց եւ Հայաստանի կենտրոնի հարցով կազմակերպուած հանրահաւաքները ղարաբաղեան ցոյցերի վերածուեցին: Մոսկուան նախ փորձեց Ղարաբաղի հարցը դիտել որպէս արդիւնք սոցեալ-տնտեսական չլուծուած հարցերի: 1988-ի Մարտ 2-ին Ստեփանակերտ գործուղուեց յայտնի գիտնականներից կազմուած պատուիրակութիւն, որը տեղում ուսումնասիրութիւն կատարելով իր եզրակացութիւնը ներկայացրեց ԽՄԿԿ Կենտկոմին եւ Հա-

19 «Սովետական Միութեան Մինիստրների Սովետի Նախագահ, Սովետական Միութեան Կոմունիստական Պարտիայի Կենտկոմի Քարտուղար Ընկեր Ն. Ս. Խրուշչովին, Յուշագիր»ը տես, «Հայրենական ձայներ», էջ 26-34:

20 Նոյն տեղում, էջ 92-96:

Ժ (Ժ-Զ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՄ համահայկական հանդէս

յաստանի ու Ադրբեջանի իշխանություններին: Զեկոյցի մէջ ասում էր, որ Ղարաբաղի սոցեալ-տնտեսական եւ ազգամիջեան հարցերը միայն Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելով կարելի է լուծել: Զեկոյցի մէջ, որպէս օրինակ յիշուած էր Նախիջեանի հայաթափումը՝ արդիւնք Ադրբեջանի հակահայ քաղաքականութեան, որ գործադրում էր Ղարաբաղում եւս: Գնահատական էր ներկայացուած նաեւ Սումգայիթի ջարդի մասին (1988, Փետրուար 27-29)<sup>21</sup>: Մոսկուան չկարելորեց զեկոյցը եւ շարունակեց վարել «լռեցնելու» իր քաղաքականութիւնը, իսկ Ադրբեջանը շարունակեց ջարդերով հակադարձել շարժմանը՝ Կիրովաբադ (Գանձակ, 1988, Նոյեմբեր 23), Բաքու (1990, Յունուար 13-19), եւ դեռ Շամխոր, Դաշքեսան եւ այլն, որոնց նկատմամբ դարձեալ անտարբեր մնաց Խորհրդային իշխանութիւնը: Սերօ Խանգատեանի, Մարօ Մարգարեանի, Անահիտ Սահինեանի եւ Հրանտ Մատթէոսեանի ստորագրութեամբ ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի Նախագահի Տեղակալ, Կառավարական Յանձնախմբի Նախագահ՝ Շչերբինային ուղղուած Դեկտեմբեր 20, 1988 թուակիր նամակը նշում է, թէ ինչպէս Ադրբեջանում տեղի ունեցող բռնաճնշումներից ու հալածանքներից փախած հայ փախստականներին արգելուել է Ղարաբաղ մտնել: Դրանք Հայաստան են սպաստանել եւ իրաւունքի են սպասում<sup>22</sup>: Պարզ է, որ գործում էր ադրբեջանական հայաթափման քաղաքականութիւնը: Դարձեալ պարզ է, որ դիմումը անուշադրութեան հանդիպեց:

Շարժման սկզբնական շրջանում Խորհրդային Միութիւնից անջատուելու միտում դեռ չկար, կար հաւատք Գորբաչովի եւ Կոմունիստ կուսակցութեան նկատմամբ: Այդ հաւատքի մէջ սուր սեպ էր 1988-ի Մարտ 23-ի Գերագոյն Խորհրդի նախագահութեան Ադրբեջանամէտ որոշումը՝ մերժել սահմանային որեւէ փոփոխութիւն: Այդ օրերին Երեւանն ու Ստեփանակերտը պարզապէս պաշարուած էին Խորհրդային բանակի կողմից: Թ՛նդանօթները դիրք էին բռնել, իսկ ուղղաթիռները մերթ ընդ մերթ բարձրանում էին ու ցուցարարների գլխին պտտում: Հայաստանի Կոմկուսը դեռ ուժի մէջ էր, իհարկէ Կարէն Դեմիրճեանը համաժողովրդային շարժման ճնշումների տակ 1988-ի, Մայիս 18-ին վար էր բերուել եւ նրան փոխարինել էր Սուրէն Յարութիւնեանը:

Այդ տարի՝ 1988-ի Մայիս 28-ին, առաջին անգամ Խորհրդային Հայաստանի պատմութեան մէջ Երեւանում տօնակատարուեց Հայաստանի անկախութեան տարեդարձը՝ որպէս մէկ դրսեւորում ժողովրդի ազգային ու քաղաքական վերածնունդի, որ ազգային ազատագրման այլ ուղի էր ենթադրում:

Ժողովրդի ճնշման տակ, Յունիս 15-ին Հայաստանի Գերագոյն Խորհրդի արտակարգ նիստ հրաւիրուեց, որը հենց Խորհրդային օրէնքի սահմաններում ընդունեց ԼՂԻՄի՝ Լեռնային Ղարաբաղի Հայաստանին միացնելու որոշումը: Այդ գծով Սուրէն Յարութիւնեանի դիմումը Գորբաչովին սուր քննադատուեց Գորբաչովի կողմից, որ յայտարարեց, թէ այդ ցուցարարները Պեռեստոյկայի թշնամիներ են, որ ցանկանում են ազգային մոլուցքով ժողովրդին թունաւորել:

21 Տե՛ս Էդգար Յովհաննիսեանի «Մի խումբ մտաւորականների պատուիրակութեան այցը Լեռնային Ղարաբաղ 1988 թուականին» յօդուածը և պատուիրակութեան զեկոյցը, էջ 358-372, «Բանբեր Հայաստանի արխիւներ», N 122, 2014:

22 Տե՛ս «Հայրենիք», N 6 (Դեկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր), Եր., 1989, էջ 135:

Միջանկեալ ասենք, որ Սփիւռքը իր կառույցներով այս շարժման մեջ էր ներգրաւուել եւ բոլոր միջոցներով զօրակցում էր շարժմանը. իսկ ԱՄՆ իշխանութիւնը Խորհրդային Միութեանը եւ Թուրքիային դէմ չգնալու համար հակառակ դիրք էր բռնել՝ Ղարաբաղի հարցը համարում էր Ադրբեյջանի ներքին խնդիր, ընդ որում, դրսից միջամտութիւն չպէտք է լինէր:

1988-ի Դեկտեմբեր 7-ի երկրաշարժը սուր քաղաքական բնոյթ ստացաւ: Կողմերի հակամարտութիւնն աւելի բացայայտուեց ու շեշտուեց: Գորբաչովի ապարդիւն այցելութիւնն ու խոստումները աւելի գրգռեցին ժողովրդին: Իսկ Սփիւռքը աւելի մօտեցաւ Հայաստանին:

Ղարաբաղեան ցոյցերը ղեկավարելու համար հենց առաջին օրերից ստեղծուեց «Կազմ-կոմիտէն» որին յաջորդեց «Ղարաբաղ Կոմիտէն» եւ «Հայոց Համագգային Շարժումը» (ՀՀՇ): Լեւոն Տէր-Պետրոսեանի ազգային քաղաքական գործունէութիւնը սկսեց «Կազմ-կոմիտէն»-ին միանալով:

Ամբողջ Խորհրդային Միութեան մէջ շղթայազերծուած ազգային շարժումները հետզհետէ անջատողական բնոյթ էին ստացել: Դրանցից առաջինն էին Բալթեան երկրները, իսկ մեկնակէտը դարձեալ ընդհանուր տնտեսական տագնապն էր: Հանրահաւաքների ու ցոյցերի արդիւնքում ժողովուրդը համարձակութիւն էր ձեռք բերել իր իրաւունքները պաշտպանելու, իր պահանջները դնելու, այսինքն՝ մարտահրաւէր համայնավար մենատիրութեան դէմ: Բանն այն էր, որ եթէ մի 10, 15 տարի դրանից առաջ Մոսկուան կարող էր զօրք իջեցնել եւ որեւէ խլրտում խեղտել այնպէս որ աշխարհը լուր չունենար, այժմ Գորբաչովը հաշուի էր առնում Արեւմուտքի կարծիքը:

1988-ի Հոկտեմբերին կատարուած մասնակի ընտրութիւններին Հայաստանի Գերագոյն Խորհուրդ էին մտել տարրեր, որ նոյնիսկ մերժում էին ընդունել Մոսկուայից եկած հրամաններ ու ուղղութիւններ, եթէ դրանք չէին համապատասխանում Հայաստանի շահերին: Մոսկուայի հակադարձը պարէտային ժամի հաստատումն էր Երեւանում, ինչպէս կատարել էր արդէն Լեւոնային Ղարաբաղում:

Երկրաշարժից երեք օր անց «Ղարաբաղ կոմիտէն»-ի անդամներից մի մասը ձերբակալուեց, յաջորդ ամիս էլ միւսները: Սրանք ամբաստանում էին այն բանում, որ երկրաշարժը օգտագործում են ազգայնական նպատակներ առաջ քաշելու: Սփիւռքի «Հայ Դատ»-ի յանձնախմբերի աշխատանքների շնորհիւ (սրանք դեռ հաւատ էին ընծայում ղեկավարների զուտ ազգային նպատակաւորութեանը) կարելի եղաւ ապահովել աշխարհի մարդկային իրաւունքների կազմակերպութիւնների ու անհատ դիւանագէտների հակադարձը՝ դիմում-բողոք Գորբաչովին՝ ձերբակալուածներին ազատելու եւ Հայաստան ուղարկելու: Ռուսաստանի այլախոհներից Անդրէյ Սախարովն էլ նոյն խնդրանքով դիմել էր Գորբաչովին:

Հայաստանի Կոմկուսը թուլացած էր եւ վարկաբեկուած, եւ փոխարէնը Հայաստանում գործում էին բազմաթիւ փոքր ու մեծ կուսակցութիւններ ու մտքեր պատրաստում: Հայաստանի Համայնավար Կուսակցութիւնը իր դիրքը ամրապնդելու եւ ժողովրդին սիրաշահելու համար, հակառակ Մոսկուայի կամքի, 1989-ի Ապրիլին առաջին անգամ ձանաչեց Հայոց Ցեղասպանութիւնը, նաեւ՝ փակեց Մեծամորի հիւլէակայանը, որի արտանետած թունաւոր նիւթերի ազդեցութիւնը Հայաստանի կենսոլորտի վրայ եւ սպառնացող վտան-

գը մանաւանդ երկրաշարժից յետոյ աւելի իրական ու շօշափելի էր դարձել: 1989-ի Յունիսին Հայաստանի Կոմկուսը պաշտօնապէս ճանաչեց Հայոց Համագգային Շարժումը (ՀՀՇ) եւ հրաւիրեց իբրեւ խորհրդական մասնակցելու կառավարական մարմիններին:

Խորհրդային Հայաստանի պատմութեան մէջ բացառիկ երեւոյթ էր (եւ կարելի է ասել՝ անկիւնադարձ) 1989 թ. Նոյեմբեր 4-5-ին Երեւանում կայացած ՀՀՇ-ի համագումարը, ուր արդէն առաջնային դերակատարութիւն ունէր Լեւոն Տէր-Պետրոսեանը: Ներկայ էր նաեւ Սուրէն Յարութիւնեանը, որի ելոյթը մի քանի անգամ ընդհատուեց ներկաների ծաղրական ու աղմկալի բղաւոցներով: Օրինակ, երբ թուելով իրականացուած բարենորոգումները յայտարարեց, թէ Կոմունիստ Կուսակցութիւնն էր առաջնորդել այդ վերակառուցումը:

Ըստ ՀՀՇ-ի Կանոնագրութեան 2-րդ կէտի՝ ՀՀՇ-ն գործում էր «Խորհրդային Հայաստանի սահմանադրութեան եւ օրէնքների շրջանակներում՝ իր կանոնագրութեան եւ ծրագրին համապատասխան, միաժամանակ պայքարելով այդ օրէնքները կատարելագործելու եւ մարդու իրաւունքների պահպանութեան ուղղուած միջազգային իրաւական փաստաթղթերին համապատասխանեցնելու ուղղութեամբ»<sup>23</sup>: ՀՀՇ-ն, որպէս հասարակական-քաղաքական կազմակերպութիւն, նպատակ էր դնում «ծառայել հայ ժողովրդի ազգային շահերին: Շարժման գաղափարական սկզբունքների հիման վրայ ապահովել Հայաստանի եւ հայ ազգային քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր հզօրացումը»<sup>24</sup>: Կարելի է ասել, որ հաւանաբար միտումնաւոր կերպով տարտամ ու աղօտ էր թողնուած այս կարեւոր հաստատումը:

ՀՀՇ-ի հիմնադիր համագումարը խօսուն պատկերն էր կազմակերպութեան ապագայ գործելակերպի<sup>25</sup>: Գլխաւոր բանախօս Լեւոն Տէր-Պետրոսեանը ներկայացրեց Շարժման «Դեմոկրատական նախաձեռնութիւններ»-ն ու «Ծրագրային նուաճումներ»-ը անցնող ժամանակաշրջանում եւ այդ իրագործումներին իբրեւ Ադրբեջանի հակադարձ անդրադարձաւ շրջափակման, Սումգայիթի եւ Խոջալուի դէպքերի եւ Խորհրդային բանակի կողմից 1988-ի Մարտին փաստօրէն Երեւանի գրաւման մասին:

ՀՀՇ-ի հիմնադիր համագումարին հնչեցին մի շարք քննադատութիւններ եւ առաջարկներ կուսակցութեան գործելակերպի. նպատակների եւ ծրագրի առնչութեամբ: Նշանակալից էր Հայ Ստաւորականութեան Խորհուրդը ներկայացնող պատմաբան, յետագային ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդեանի ակնարկը այն մասին, որ ՀՀՇ-ի ծրագրի մէջ Հայկական Հարց որպէս այդպիսին չի դրուած, հակաթուրք պայքարը չի շեշտուած .... Թուրքիան մեզ ձեռք չի մեկնի, եթէ մենք ձեռք չքաշենք Արեւմտեան Հայաստանի հողերից .... Ինչո՞ւ չկայ պետական ծրագիր դարաբաղեան հարցը լուծելու: ՀՀՇ-ն պէտք է ունենայ ո՛չ թէ մի կէտ, այլ մի ամբողջական ծրագիր...»: Նա նշեց նաեւ, որ «պատմութիւնը 70 տարի կեղծուել է, բայց կարելու է, որ պատմաբաններն այս հարցը մշակեն, ո՛չ թէ ժողովրդական միտինգները

23 ՀՀՇ-ի Կանոնագրութիւնը լոյս է տեսել «Հայք» թերթի 1989 թ. Նոյեմբեր 2-ի համարում (էջ 3):

24 Նոյն տեղում:

25 Որպէս ՀՅԴ կուսակցական գործիչներ արտօնութիւն էինք ստացել հիւրաբար ներկայ լինելու համագումարին: Մանրակրկիտ արձանագրել էի անցուղարձը և այսօր՝ 29 տարի յետոյ, դիմում եմ նորերիս՝ մտքերս ու տպաւորութիւնս շարադրելու համար:

անդրադառնան դրան: Իսկ Ազգային Անկախություն Կուսակցության<sup>26</sup> ներկայացուցիչ Մելխակ Գաբրիելեանը, մի քանի հարցերի շարքին դիտել տուեց նաեւ որ Խորհրդային Հայաստանի Կոմկուսը պէտք է իր դիրքորաշուծումը ճշտի ՀՅ Դաշնակցության վերաբերեալ, չեղեալ համարի 1928-ի յայտարարութիւնը, որ ՀՅԴ-ին համարում էր հայ ժողովրդի թշնամի իմպերիալիստական կուսակցութիւն<sup>27</sup>: Նախախորհրդարան խմբակցութեան ներկայացուցիչ Ֆելիքս Սաֆարեանը դիտել էր տալիս, որ «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի հարցը ՀՀԸ-ի ծրագրի մէջ հպանցիկ է, մշուշապատ եւ մերկապարանոց»:

Համագումարին յաջորդող ժողովրդային դժգոհութիւնների արդիւնքում Նոյեմբեր 16-ին տեղի ունեցաւ հանդիպում Ղարաբաղ Կոմիտէի (որ ՀՀԸ-ի մէջ էր մտել) եւ մի շարք խմբակցութիւնների միջեւ, որ թուելով ՀՀԸ-ի ծրագրի թերի կողմերը եւ տարամերժականութիւնը՝ ՀՀԸ-ն համարում էր մի նոր կուսակցութիւն, մինչդէռ այն պիտի լինէր կազմակերպութիւնների միութիւն<sup>28</sup>:

**Համեմատութեան համար նշենք**, որ քիչ վերը գուգահեռ անցկացուեց 1918-ի իրականութեան մէջ գործող զանազան կուսակցութիւնների եւ Խորհրդային Հայաստանի վերջին օրերի խախտուած միակուսակցութիւն դրուածքների մէջ: Բայց եթէ 1918-ին Դաշնակցութիւնից բացի այլ կուսակցութիւնները չցանկացան մաս կազմել անկախ Հայաստանի կառավարութեանը, Խորհրդային Հայաստանում ցանկութիւնը կար, բայց ուժը վերապահուած էր ՀՀԸ-ին, որ դադարեց իրական համազգային շարժում լինելուց եւ իշխանութեան հասած կուսակցութիւն դարձաւ:

ՀՀԸ-ի ծրագրի մէջ կարեւոր հարցերի շարքին կար նաեւ մի կէտ՝ Հայաստանի ինքնիշխանութեան ընդլայնում ընդհուպ մինչեւ անկախութիւն, եւ սա անակնկալ էր շատերի համար: 1987-ից Պարոյր Հայրիկեանի եւ Մովսէս Գորգիզեանի ղեկավարութեամբ գործող Ազգային Ինքնորոշում Միաւորումը (ԱԻՄ) առաջինն էր, որ բացարձակ եւ անմիջական անկախութիւն էր պահանջում<sup>29</sup>:

ՀՀԸ-ն շուտով սկսեց հեռանալ ազգային քաղաքական ուղղութիւնից եւ զբաղուեց Հայաստանի ներքին հարցերով եւ իր դիրքը ամրապնդելով: Նոյնիսկ երբ մի քանի կուսակցութիւնների («Միացում», ԱԻՄ, ՀԱԱԿ, ՄԻՄ) ճնշման տակ Գերագոյն Խորհուրդը վաերացրեց Ղարաբաղը Հայաստանին միացնելու որոշումը, ՀՀԸ-ն եւ համայնավարները դէմ էին այդ քայլին<sup>30</sup>: Ի

26 Հայաստանի Ազգային Անկախություն (ՀԱԱԿ) Կուսակցութիւնը կեանքի էր կոչուել 1989 թ. Յուլիսին: Պարբերաբար հրատարակել էր «Հայաստան» պաշտօնաթերթը, ուր տեղ էին գտնում քաղաքական վերլուծական յօդուածներ, ինչպէս եւ կուսակցութեան քաղաքական գործունէութեան ուղեծիրը՝ տարածել միացեալ եւ անկախ Հայաստանի գաղափարը, դիմադրել բուլշեիկներին, ընդդիմանալ արտագաղթին, խորհրդարանում ներկայացուցիչներ ունենալ:

27 Որոշման մէջ ասում է. «Դաշնակցութիւնն ամենահակաեղափոխական ուժն է: Խորհրդային իշխանութեան եւ մեր երկրի աշխատանքային առաւելագոյն վտանգատուր թշնամին, որ միջազգային իմպերիալիստների ոսկիներով կաշառուած ու գէնքով սպառազինուած՝ պատրաստ է իր իմպերիալիստական տերէրի առաջին իսկ հրամանով յարձակուել ԽՍՀՄ եւ Խորհրդային Հայաստանի վրայ» (յայտարարութիւնը վերահրատարակուած է ՀՅԴ Հայաստանի պաշտօնաթերթ «Ազատ Հայք»-ի 1990 թ. Յունուար 14-ի համարում): Այս որոշումը պիտի ընկալել որպէս ուղեգիծ խորհրդահայ մտայնութեան եւ սերունդների դաստիարակութեան:

28 Տե՛ս «Հայկական Իրապէս Համազգային Շարժում Յառաջացնելու Փորձեր կը Կատարուին», «Ասպարէզ», 21 Նոյեմբեր, 1989:

29 ԱԻՄ-ի առաջադրանքների մասին կարդում ենք 1987 Հոկտեմբերից հրատարակած «Հրապարակայնութիւն», «Անկախութիւն» եւ «Հայրենիք» պարբերաթերթերում:

30 1989 թ. Դեկտեմբեր 1-ին «Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային

հարկէ, այդ քայլը մնաց որոշում միայն եւ գործնականի չանցաւ: 1990-ի Յուլիսի Գերագոյն Խորհուրդի ընտրութիւնների արդիւնքում ՀՀԸ-ն եւ Համայնավար կուսակցութիւնը հաւասար եւ տիրապետող ուժեր էին Գերագոյն Խորհրդում որ վերակոչուեց Հայաստանի Խորհրդարան: Խորհրդարանի նախագահ ընտրուեց ՀՀԸ-ի վարչութեան նախագահ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը, որով եւ այլեւս խախտուեց Կոմկուսի միապետութիւնը Հայաստանում:

1990-ի Օգոստոս 23-ին Գերագոյն Խորհրդում ընդունուեց «Հռչակագիր Հայաստանի անկախութեան մասին» բանաձեւը<sup>31</sup>: Սկիզբ էր դրում անկախութեան գործընթացի: Հայկական Խորհրդային Սոցեալիստական Հանրապետութիւն անուանումին փոխարինեց Հայաստանի Հանրապետութիւն անունը եւ Ղարաբաղը յայտարարուեց իբրեւ անբաժանելի մասը Հայաստանի: Հայաստանի Կոմկուսը այլեւս ուժը չունէր անկախութեան գործընթացը կասեցնելու, որն հրապարակ իջաւ նոր երիտասարդ ղեկավարութեամբ եւ գործելաձեւով: Նոր ղեկավարութիւնը խօսք էր տալիս ժողովրդին՝ հին բոլշեւիկեան գաղափարախօսութեան չհետեւել, Մոսկուայից անկախ գործել: Բայց Հայաստանի անկախութեան գործընթացի մէջ այլեւս կորցրել էր իր խօսքը, դերն ու կշիռը եւ մնաց որպէս մէկը միւս կուսակցութիւններից, որ յետագայում, երբ անկախ Հայաստանի իշխանութիւնները երկիրը տնտեսական տագնապի հասցրին, ժողովրդի մէջ տարածուելու սկսեց հին կարգերի եւ Կոմունիստ կուսակցութեան նոստալժիա:

Գորբաչովը Խորհրդային Միութիւնը պահելու իր վերջին ճիգերն էր ի գործ դնում: Հակառակորդներին չէզոքացնելու համար կիրառում էր խիստ գրաքննութիւն, նոյնիսկ զէնքի ուժ՝ անջատողական հանրապետութիւններում: Արեւմուտքը օգնում էր նրան նոյնիսկ տնտեսապէս, որովհետեւ եթէ Խորհրդային Միութիւնը փլուզման ենթարկուէր, ինքը գործ պիտի ունենար 15 փոքր ու մեծ հանրապետութիւնների հետ: Յետոյ Խորհրդային հսկայ զէնքը, զինամթերքն ու հիւլէական ուժը դր հանապետութիւնը պիտի ժառանգէր: Բայց Խորհրդային Միութեան փլուզումն արդէն յոյժ հաւանական էր: Այստեղ յիշենք ՀՀԸ-ի հիմնադիր համագումարում Ակադեմիայի Արուեստի բաժնի վարիչ Հենրիկ Յովհաննիսեանի նախագագուժացումը. «Որոշակի է, որ այս կայսրութիւնը փլուում է: Եկէք պատրաստ լինենք, որ մեր գլխին չփլուի...»:

Յամենայն դէպս, Գորբաչովի ջանքերը ձախողեցին: Ադրբեջանին սիրաշահելու եւ իր ազդեցութեան դաշտում պահելու համար, բացարձակապէս օգնում էր նրան հայերի դէմ պատերազմի մէջ<sup>32</sup>: Ռուս զինուորները ազերիների հետ միասին հայկական գիւղերի վրայ էին յարձակում, թալանում ու սպանում: Ստալինի օրերից եկած քաղաքականութիւնը Հայաստանում

Խորհրդի Որոշումը Հայկական ԽՍՀ-ի և Լեւոնային Ղարաբաղի վերամիաւորման մասին» փաստաթուղթը ստորագրել էին Գերագոյն Խորհրդի նախագահութեան նախագահ՝ Հ. Ոսկանեանը, քարտուղար՝ Ն. Ստեփանեանը և Լ.Ղ. Ազգային Խորհրդի նախագահ՝ Վ. Գրիգորեանը (ձեռքիս տակ է Որոշման բնագիրը՝ հրատարակուած «Հայաստան» պարբերաթերթի Դեկտեմբեր 10, 1989-ի համարում):

31 «Ադրբեջանի պետական անկախութեան վերականգնման» հռչակումը կատարուեց 1991-ի Օգոստոս 30-ին:

32 Ծանօթ է 1991-ի Ապրիլ և Մայիս ամիսներին Ադրբեջանի իրականացրած «Օղակ» գործողութիւնը՝ Խորհրդային Միութեան բանակի մասնակցութեամբ բազմաթիւ հայկական գիւղերի բնակչութեան արտաքսումը: Դա Գորբաչովի շնորհակարութիւնն էր Ադրբեջանին՝ 1991-ի Մարտին անցկացուած հանրաքուէի յօգուտ Խորհրդային Միութեան պահպանման արդիւնքի համար:



տանի ու Ադրբեջանի հանդէպ չէր փոխուել: Յիշենք Ստալինի մէկ հեռագիրը Օրջոնիճիձէին՝ «...չի կարելի անվերջ խուսանալ կողմերի միջև, պէտք է սատարել կողմերից մէկին, տուեալ դէպքում, ի հարկէ, Ադրբեջանին Թուրքիայի հետ»: Եւ սա այն ժամանակ էր, որ Հայաստանի Հանրապետութիւնը Ղարաբաղում եւ Ջանգեզուրում անհաւասար պայքար էր տանում Խորհրդայնացած Ադրբեջանի Կարմիր բանակի դէմ:

Հայաստանը անկախութեան ձամբի վրայ էր, որ ամրագրուեց 1991-ի Սեպտեմբեր 21-ին անցկացուած հանրաքուէով: Սեպտեմբեր 23-ին Խորհրդարանը Հայաստանը յայտարարվեց անկախ, խորհրդարանական հանրապետութիւն:

Գորբաչովի դէմ պահպանողական կոմունիստների կատարած պետական հարուածի ձախողանքից յետոյ, Խորհրդային Միութեան փլուզման որպէս առաջին ապացոյց 1991-ի Դեկտեմբեր 8-ի պայմանագիրն էր Ռուսիոյ, Բելառուսիոյ եւ Ուկրաինայի միջև, ուր դադարած էր համարուում Խորհրդային Միութիւնը իբրեւ միաւոր եւ յայտարարուում էր ծնունդը ԱՊՀ-ի (Անկախ Պետութիւնների Հասարակապետութիւն): Գորբաչովին մնում էր հրաժարուել եւ լուծուած յայտարարել Խորհրդային Միութիւնը: Դա կատարուեց 1992-ի Յունուար 1-ին:

Եթէ 1918-ի անկախութիւնը չնախատեսուած ու յանկարծակի իրողութիւն էր, ապա՝ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը 1991-ին քաղաքական ու ընկերային խնորումներով սկսած մինչև Խորհրդային Միութիւնից անջատման որոշում ու մինչև հանրաքուէ երկար հոլովոյթ ապրեց: Ու դեռ ատկին, 12.000 քառ. քիլոմէթր տարածքում անկախացած Հայաստանի բնակչութիւնը այնպիսի իրավիճակի էր մատնուած որ իր վերջին մտահոգութիւնն էր անկախութեան հասնել: Մէկ տարի պիտի անցնէր, որ ժողովրդային մասսան հասկանար, գնահատէր եւ ոգէտորուէր Հայաստանի անկախութիւնով: Իսկ երկրորդ անկախութեան նախորդող բազմահազարանոց ժողովրդային ցոյցերում՝ կենսոլորտի հարցերից սկսած մինչև Ղարաբաղի միացում ու Խորհրդային Միութիւնից անջատում, զանգուածները պատրաստ էին իրենց քուէով անկախութիւնը գրկելու:

#### 4. Ապագայի տեսլականը երկու անկախ հանրապետութիւններում

1988-ից Հայաստանում գաղտնի գործունէութիւն ծաւալած Հ.Յ.Դաշնակցութիւնը 1990-ի Օգոստոսին իր ներկայութիւնը յայտարարեց<sup>33</sup>: Ու երբ Ղարաբաղի բանակը դեռ կազմակերպուած չէր եւ զանազան խմբակցութիւններ էին ստանձնել Ղարաբաղի պաշտպանութեան գործը, կարեւորներից էր Դաշնակցութիւնը իր զօրախմբերով եւ սփիւռքեան ներդրումներով: 1990-ի Դեկտեմբերին Դաշնակցութիւնն իր փլաթֆորմը ներկայացրեց, որի մէջ եւ իր առաջարկը՝ վերահաստատելու Ազգային Պետականութիւնը Հայաստանի մէջ՝ Պետական իշխանութիւն, որ ժողովրդական էր, ո՛չ թէ կուսակցական: Դաշնակցութիւնը կրկնում էր Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի իր տեսլականը, որ փայփայել էր Հայաստանի պետականութեան ծնունդից ի

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԿ համահայկական հանդես

33 1989 թ. Մայիս 24-ից հրատարակուելու էր սկսել ՀՅԴ գաղափարակիր «Ազատ Հայք»ը:

վեր<sup>34</sup>:

Իսկ Հայոց համազգային շարժումը: «ՊԱՏԿԵՐԱԽՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Հայաստան–Թուրքիա: Մեծ Բանավեճը»<sup>35</sup> ուսումնասիրության մեջ կարդում ենք. «1991 թ. Ապրիլին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վոլկան Վուրալը երեքօրեայ պաշտօնական այց է կատարում Երևան: Պաշտօնապես ԽՍՀՄ կազմում գտնուող սակայն արդեն անկախության ճանապարհը բռնած Հայաստան Վուրալի այցը, առաջին բարձրակարգ թուրք պաշտօնեայի այցելությունն էր 70 տարիների ընթացքում: Դեսպան Վուրալի հետ հանդիպման ընթացքում Հայաստանի Գերագույն Խորհրդի նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանը ասաց. «Հայաստանը փոփոխում է եւ այս նոր աշխարհում մենք պետք է նաեւ աշխարհայեացքով հարեան պետություններ լինենք: Մենք ցանկանում ենք բարեկամներ դառնալ: Մենք պատրաստ ենք փոխշահալէտ ցանկացած համագործակցության: Հայաստանը Թուրքիայի նկատմամբ որեւէ տարածքային պահանջներ չունի»<sup>36</sup>: Թուրքիա վերադառնալուց յետոյ Դեսպան Վուրալը թուրքական «Հուրիեթ» թերթին ասաց. «Ես կարող եմ ասել, որ ներկայիս հայկական ղեկավար մարմինների որդեգրած նոր քաղաքականությունը Թուրքիայի հանդէպ ժամանակակից է եւ բխում է երկու ժողովուրդների շահերից»<sup>37</sup>:

ՀՀԸ-ի տարած ռազմավարության ծանօթանալու համար կարդանք նաեւ 1989-ի Նոյեմբեր սկզբին ՀՀԸ համագումարից եկած գեկոյցները.

Արթուր Մկրտչեանի այն առաջարկին, որ Հայաստանի Գերագույն Խորհուրդն ընդունի Լեռնային Ղարաբաղը իբրեւ Հայաստանի անբաժանելի մաս եւ պաշտպանի այդ կապակցութեամբ նրա դիմումը ՄԱԿ-ին, Լեռն Տէր-Պետրոսեանը պատասխանում է, թէ դա դէմ է Խորհրդային Միության Սահմանադրության եւ ՀՀԸ-ի գաղափարներին, եւ ՀՀԸ-ն չի հաւատում ուրիշ հանրապետություններից հողեր գրաւելուն: Եւ իրօք, Լեռն Տէր Պետրոսեանն այդ գիծը տարաւ մինչեւ վերջ: Ինչպէս Յակոբ Եափուճեանն է բնութագրում՝ «արտաքին գետնի վրայ ազգային հիմունքներէ զուրկ, դրացիներուն նկատմամբ զիջողական ու ամէն կերպով համաձայնութեան եզր գտնելու քաղաքական ուղեգիծը, իսկ ներքաղաքական այլամերժ, ոչ համախմբող ու անձնակեդրոն վարկագիծը»<sup>38</sup>:

Նոյն համագումարում, Լենդրուշ Խուրշուդեանի այն մտահոգութեան, որ համաթուրանական ձգտումներն ու գաղափարախօսութիւնը վտանգում են հայ ժողովրդի գոյութիւնը, Վանօ Սիրադեղեանը պատասխանում է, թէ համաթուրանական գաղափարախօսութիւն այլեւս գոյութիւն չունի եւ չի կարող վտանգել հայ ժողովրդին:

Եթէ 1918-ին անկախացած Հայաստանի կառավարութեան ձեւաորման մեջ Դաշնակցութիւնն էր գլխաւոր դեր ստանձնել ու առաջ էր քաշում Ազատ,

34 Դաշնակցութեան փլաթֆորմը բաղկացած էր 8 գլուխներից, 47 էջ, ուր մասնագիտօրէն ներկայացուած էր ապագայ Հայաստանի զարգացման ուղին՝ քաղաքական, տնտեսական, գիւղատնտեսութիւն-երկրագործութիւն, կրթամշակութային, առողջապահական, ազգային պաշտպանութիւն, աղէտի գօտի, Արցախի հարց, բնագաւառներում: Այս փաստաթուղթը մնաց որպէս մեռեալ տառ Հայաստանի իշխանութիւնների համար:

35 “European Stability Initiative”, Berlin, Brussels, Istanbul. Օգոստոս, 2009 (էջ 6):

36 Յղում է կատարում “Nezavisimaya Gazeta”, 14.05.1991 թերթի համարին:

37 Յղում է կատարում “Hurriyet”, 02.05.1991 թերթի համարին:

38 «Ազգակ» օրաթերթ, Մայիս 17, 2017, «Հայաստանի Քաղաքական Բեմը եւ Սահմանադրութեան Հիմքը»:

Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսլականը, ապա՝ 1990-ից արդէն այդ դերը վերապահուած էր ՀՀԾ-ին, որ գալիս էր «Ստրկամտութեան արտայայտութիւն է այն մտայնութիւնը, ըստ որի՝ ազգն ունի մշտական բարեկամ և մշտական թշնամի» կարգախօսով, համաթուրանական մշտական վտանգը անտեսելով եւ հարեաններին հողեր չպահանջելու զգուշաւոր քաղաքականութեամբ, թէկուզ եթէ այդ հողերը հայապատկան էին եղել դարեր ու դարեր:

**Ռուբինա Բ. Փիրումեան** – ամերտաճառը, որ 1993-ին հրատարակուել է որպէս գիրք, համեմատական ուսումնասիրութիւն է հայ և հրեայ ժողովուրդների աղէտի-ցեղասպանութիւն և հօլօքոստ-գրական ազդումների՝ **Literary Responses to Catastrophe: A Comparison of the Armenian and the Jewish Experience (1993)**: Այնուհետև լոյս է տեսել նրա պատմական ուսումնասիրութիւնը՝ «Հայաստանը ՀՅԴ-Բոլշևիկ յարաբերութիւնների ոլորտում, 1917-1921» (1997), որ թարգմանուել և հրատարակուել է ռուսերէնով ևս:

Ապա հրատարակել է Հայոց Ցեղասպանութեան գրականութիւնն ուսումնասիրող երեք այլ հատորներ՝

**And those who Continued Living in Turkey after 1915, The Metamorphoses of the Post-Genocide Armenian Identity as Reflected in Artistic Literature (2008 and 2012);**

**The Armenian Genocide in Literature, Perceptions of Those who Lived through the Years of Calamity (2012, 2014);**

**The Armenian Genocide in Literature, The Second Generation Responds (2015);**

Վերջին աշխատութիւնը նուիրուած է Սիբիրի գուլագները արքունուած հօր կեանքին՝ **My Father, A Man of Courage and Perseverance, A Survivor of Stalin’s Gulag (2017)**:

Summary

## TWO CRITICAL PERIODS OF ARMENIAN HISTORY LEADING TO INDEPENDENCE IN 1918 AND 1991

A comparative view

Doctor Rubina B. Peroomian

**Key words** – independence, comparative view, Bolshevism, ANM, vision of the future, Kharabakh, Diaspora, Supreme Council, ARF Dashnaktsutyun

The independence of Armenia in 1918 and then again in 1991 was an outcome of the collapse of the Tsarist Empire and the Soviet Union respectively, the obvious difference being that in the case of the first, the world was at war, new states were being established and borders were being redrawn. In the case of

the second independence, the world was relatively peaceful, not counting the explosion in the Chernobyl Power Plant and the Spitak earthquake in Armenia, both with immeasurably devastating consequences which brought about political disturbances in the Soviet Union. Moreover, the independence of 1918 marked the rebirth of Armenian statehood after centuries of foreign occupation. Whereas, in 1991, an existing state, with its infrastructures in place and with distinct borders, was to free itself of the Soviet shackles and become an independent republic. This paper points to these differences and goes on to discuss less-pronounced ones within the two critical periods of history.

First, is the factor of Turkey in the pre-1918 independence and the vision and possibility of a free Western Armenia in that context, the realization of which was thwarted by the Bolshevik revolution and the ensuing Brest Litovsk treaty. The Turkish factor was less significant in the case of the second independence, but this is not to say that the aspiration to free the Turkish occupied lands of historic Armenia had died down in any way.

Another difference is the issue of disputable borders and inter-racial conflicts hindering the formation of the first independence. That issue was almost non-existent in the case of the second which was being established on a land with distinct borders and an inherited homogeneous population.

The two political scenes prior to independence are also compared: a multiplicity of political parties and orientations at work in the case of the first, and the single-party rule, the Communist Party working under directives from Moscow, in the case of the second independence. However, mentioned are dissident movements in the latter which gradually took root among the masses and brought about the cessation movement.

The unpredictability of independence due to the pre-1918 complex structure of the Transcaucasian ruling machine, tainted with rivalry and hostility, is contrasted with the independence in 1991 which came about because of a struggle involving the masses and its popular leaders. In fact, whereas the Armenian masses in the Caucasus were mainly indifferent/ignorant, and it took them a year into independence to appreciate and celebrate its existence, in 1991, the mass-demonstrations, beginning with serious environmental issues to demanding Karabagh's union with Armenia and to the issue of cessation from Soviet Union, the masses were ready to cast their votes and embrace independence.

In conclusion, the vision of the first republic, the Free, Independent, and United Armenia, is compared to that of the ruling party, the Armenian National Movement, in the case of the second, tending to ignore the permanent danger of Pan-Turkism and declaring non-intention to demand the return of historic Armenian lands.

## ДВЕ СУДЬБОНОСНЫЕ ЭПОХИ, ПОРОДИВШИЕ НЕЗАВИСИМОСТЬ 1918 И 1991 ГОДОВ:

### Сравнительный анализ

Доктор Рубина Б. Пирумян

**Ключевые слова** – независимость, сравнительный взгляд, большевизм, АОД, идеал будущего, Карабах, диаспора, Верховный совет, АРФ Дашнакцутюн.

Обе независимости 1918 и 1991 годов были результатом развала двух деспотических империй – царской и советской, с той разницей, что в первом случае мир находился в состоянии войны, менялись или только чертились границы малых и больших стран. Во втором случае мир был спокоен, если и были потрясения, то это были взрыв атомной электростанции в Чернобыле и землетрясение в Спитаке, которые приобрели политический характер и вызвали потрясения. Кроме этого, в первом случае на земле Армении, веками стертой и несуществующей в геополитическом смысле, возродилась армянская государственность. Во втором случае уже установившаяся страна со всеми своими инфраструктурами и определенными границами должна была выйти из-под власти Советского Союза и стать независимой республикой.

В настоящей статье делается попытка, отмечая эти различия, провести сравнение и обсудить некоторые менее очевидные своеобразия/различия. Во-первых, анализируется турецкий фактор, сыгравший главную роль в первом случае. Существовала возможность автономии/независимости Западной Армении, предпринятые на пути к которой шаги натолкнулись на большевистскую революцию и последующий за ней Брест-Литовский договор и были сорваны.

Турецкий фактор имел меньшую значимость в преддверии рождения второй независимости. Это, конечно, не означает, что у армян не было стремления вернуть завоеванные армянские земли.

Ярко очерченное различие между двумя независимыми государствами – пограничные вопросы и состав населения. В первом случае – пограничные споры и столкновения и армяно-татарские несогласия, которых не существовало во втором случае: страна унаследовала довольно однородное население и проведенные границы, не считая, конечно, вопрос Арцаха.

В статье обсуждается фактор разных партий или политических течений в создании Первой Республики и проводится сравнение с однопартийным коммунистическим строем, правящим в Советской Армении и действующим по приказанию Москвы, во всяком случае, перечисляются действовавшие независимо группировки, которые создавались открыто, со специальной

целью и должны были, постепенно пуская корни в народе, привести к формированию движения по отделению от Советского Союза.

Освещаются также проблемы, которые были вызваны предшествующей Первой Республике кавказской административной структурой и межнациональной конкуренцией и делали независимость непредвидимой. В отличие от этого, вторая независимость, провозглашенная в 1991 г., охарактеризована как кульминация постепенного развития ведущих к этой независимости процессов, в которых сыграли непосредственную роль армянский народ и народное руководство. Подчеркивается то обстоятельство, что если население Армении, ставшей независимой в 1918 г., было ввергнуто в такое положение, что достижение независимости было последним, что заботило его, и должен был пройти год, чтобы народные массы поняли, оценили и воодушевились независимостью Армении, то на предшествовавших второй независимости многотысячных народных демонстрациях – от вопросов экологии до присоединения Карабаха к Армении и отделения от Советского Союза – массы были готовы раскрыть свои объятия независимости посредством своего голоса.

В заключении проводится сравнение идеалов будущего двух независимых республик. Для первой это осуществление свободной, независимой и единой Армении, для второй – характерное для АОД игнорирование постоянной пантуранской опасности и мысленная установка на отказ от завоевания земли у соседей, если даже эти земли веками принадлежали армянам.

## REFERENCES

1. **Grigorean Zaven**, Yeakov Zarobeani derəHajwc Mets Yeghneri 50-ameakə Khorhrdayin Hayastanwum mshelu yev Hayrenadardzutyany kazmakerpman gortsum, «Banber Hayastani arkhivneri», tiv 1 (111), 2008. **(In Armenian)**
2. **Khatisyan Aleqsandr**, Hayastani Hanrapetutean tsagumn u zargacumə, Peyrut, Hamazgayin tparan, 1988. **(In Armenian)**
3. Hayrenakan dzayner (Vaveragrakan niuteri zhoghovatsu, kazm. yev tsanot. **L. Mktrchyan**), Miunkhen, Institut für Armanische Fragen, 1978. **(In Armenian)**
4. **Peroomian Rubina**, Hayastany HYD – Bolshevik Yaraberutiunneri volortum (1917-1921), Yer., Yerevani hamalsarani hrat., 1997. **(In Armenian)**
5. **Ruben**, Hay Yeghapoxakani mə yishataknerə hator 7, Los Anjeles, Horizon hrat., 1952. **(In Armenian)**
6. **Tanapetyan Hrach**, H.Y. Dashnakcutiunə ir kazmutenen minchev Zh'. əndh. zhoghov, Atenq, «Droshak»-i tparan, 1988. **(In Armenian)**
7. **Vracyan Simon**, Hayastani Hanrapetiun, Tehran, tparan Aliq, 1982. **(In Armenian)**
8. **Yarutyunean Avag**, Khorhrdaturqakan sahmani verasahmanagtsman patmutyunic, 1973. **(In Armenian)**



Արմեն Ս. Ասրյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ- ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ

**Բանալի բառեր** – Արամ Մանուկյան, անհատականություն, ժողովուրդ, իշխանություն, կազմակերպչական ունակություն, հանրապետություն, միասնություն, պատասխանատվություն, պետական գործիչ, ռազմավարական մտածողություն, վճռականություն:

Հայաստանի Հանրապետության 100-ամյակը մեր պետականության պատմության այն կարևոր հանգրվանն է, որը պարտավորեցնում է մեզ բացահայտել անցյալի իրադարձությունների վրա վճռորոշ ազդեցություն ունեցած վառ անհատականությունների գործունեության ուսանելի էջերը ու մերօրյա հասարակական-քաղաքական և պետական կյանքը տնօրինող ուժերին ծանոթացնել նրանց հարուստ փորձին:

Հայ ազատամարտի նվիրյալ, ՀՀ հիմնադիր Արամ Մանուկյանի գործունեության համակողմանի քննությունը հնարավորություն կտա մի կողմից՝ փաստարկված կերպով հիմնավորել նրան Նոր ժամանակների հայոց պետականության հիմնադիր անվանելու անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ ուրվագծել Արամին հատուկ այն քաղաքական որակները, որոնք դարձան ազգային-պետական գործչի հաջողություններն ապահովող ազդակներ:

Արամ Մանուկյանին որպես ազգային պետական գործչի մարմնավորում ներկայացնելիս առաջին հերթին պետք է արձանագրել, որ նա հայ ազատամարտին, հայրենիքին ու ժողովրդին անմնացորդ նվիրված, արդարամիտ ու անշահախնդիր անձեր էր:

Արամի մտահոգության կենտրոնում մշտապես հայ ժողովուրդն էր, նրա ձգտումների իրականացումը, ազգի ազատագրության համար պայքարի ելած նվիրյալների ապահովությունը՝ որքան դա հնարավոր էր, և ազատագրական պայքարի արդյունավետ, սակավ զոհառատ ուղիների որոնումը:

Այն, որ Արամը նպատակապես, ջերմեռանդ, շրջահայաց, հեռատես և հավասարակշիռ գործիչ էր, ակնհայտ էր արդեն Արևմտյան Հայաստան նրա մուտք գործելու ժամանակաշրջանից, երբ ելնելով թե՛ իր անձնական համոզմունքներից և թե՛ ՀՅԴ կողմից որդեգրված նոր մարտավարությունից՝ նա մեղվաջան աշխատանք ծավալեց ազատագրական պայքարի մասնակի գոր-

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

ծողություններից ընդհանուր ապստամբությանն անցնելու ուղղությամբ՝ համոզված լինելով, որ միայն համազգային միասնական, հուժկու պայքարի միջոցով կարելի է հասնել ազգային նպատակների իրականացմանը<sup>1</sup>: Նրա այս որակներն էին, որ հնարավոր դարձրին 1915 թվականին՝ Վանում, և 1918 թվականին՝ Երևանում թշնամու դեմ հաղթանակի թիվ մեկ պայմանի ապահովումը՝ ազգային միասնական ճակատի ստեղծումը և ապա՝ երկրի վերաշինումը:

Այս որակներն էին, որ Արամին հնարավորություն տվեցին 1917 թ. դեկտեմբերին առաջադրելու միակ ընդունելի քաղաքական ուղեգիծը, որը, ինչպես ցույց տվեց պատմությունը, ոչ այլ ինչ էր, եթե ոչ դեպի անկախ պետականության վերականգնում ու հայ ժողովրդին փրկության տանող ծրագիր:

Ռազմավարական մտածողություն, կանխատեսելու ունակություն, իրադարձություններին ընթացք տալու, նույնիսկ նրանցից առաջ անցնելու կարողություն, աշխատասիրություն, նպատակապացություն, վճռականություն. սրանք Արամին հատուկ այն որակներն էին, որոնք այսօր էլ պարտադիր են ցանկացած նպատակ կամ ծրագիր իրագործելու համար: Նա երբեք չհոգնեց և աննշան չափով անգամ չհեռացավ գործից, մշտապես մնաց պայքարի առաջին, ամենածանր, աշխատատար ու վտանգավոր գծերում:

Հեղափոխական գործունեության առաջին իսկ օրերից Արամին հատուկ էր խնդիրների կարգավորման արդյունավետ ուղիներ որոնելը, իրադարձությունների ընթացքը կանխատեսելը և գործող անձանց ուղղորդել-կառավարելը: Նա միշտ փորձում էր ձիշտ ընտրել դեպի նպատակը տանող ուղիները, առավելագույնս անվտանգ դարձնել խոչընդոտների հաղթահարումը: Բայց թերևս ամենակարևորն ու նշանակալիցն այն է, որ դեռևս 1917 թ. վերջին, երբ, կարելի է ասել, հայոց երկնակամարում տիրում էր համընդհանուր անորոշության, և ինչ-որ անտեսանելի ուժերից օժանդակություն, օգնություն ակնկալող մթնոլորտ՝ Արամը հստակորեն բարձրաձայնեց, որ հայ ժողովրդի փրկության, նրան հուզող բոլոր խնդիրների հանգուցալուծման համար պետք է հույսը դնել բացառապես սեփական ուժերի վրա: Նա նշում էր. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա լոկ խօսք է՝ գուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք և պէտք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»<sup>2</sup>:

Իսկ 1918 թ. մարտի 28-ին նա հստակեցրեց նաև հույսը սեփական ուժերի վրա դնելու իր առանցքային գաղափարի վերջնանպատակը, այն է՝ **ազատ և անկախ Հայաստան**<sup>3</sup>:

Նույնիսկ այն դեպքերում, երբ Արամը հանդես էր գալիս արտաքին ուժերի հետ համագործակցելու օգտին, դրանում նա շարունակում էր գլխավոր

1 Տե՛ս Արթյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Եր., 2009, էջ 43-69:

2 Առուսիանյան Ա., Արամ, «Հայրենիք», Պոսթըն, 1964, ապրիլ, N 4, էջ 70:

3 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 9, թ. 1:



տեղը հատկացնել սեփական ուժերի համախմբմանը: Այսպես, երբ 1918 թ. գարնանը Թիֆլիսից պահանջեցին ներկայացուցիչներ ուղարկել Սեյմում ծավալվելիք քննարկումներին մասնակցելու համար, նա նշեց, որ Երևանի գործիչներն ավելի անհրաժեշտ են տեղում աշխատելու համար, և որ ճիշտ կլինի Թիֆլիսի համար մարդկանց ընտրել տեղում:

Դրա արդյունքն էին իրադարձությունների հանգուցալուծումից ամիսներ առաջ երկրին տեր կանգնելու կոմանների՝ կանոնավոր զորքի, իշխանության աշխատող մարմինների ստեղծումը, ապագա սպառնալիքներին լավ նախապատրաստվելու և թիկունքն ապահովելու նպատակով թաթարական հակապետական որջերի ոչնչացումը: Այս որակն ունենալով էր, որ նա նախաձեռնեց հայկական զորքին անհրաժեշտ զենք-զինամթերքի տեղափոխությունը ռազմաձակատի խորքից թիկունք՝ Երևան:

Արամը ազգային-պետական գործչի կատարյալ մարմնավորում էր: Դա հավաստող թերևս ամենագլխավոր որակն իշխանության մասին Արամի պատկերացումն էր, իշխանության իրականացման խորքային իմաստի գիտակցումը: Նրա համար իշխանությունը ոչ թե առավելություն էր, ոչ թե փառքի հասնելու միջոց կամ արտահայտություն, ոչ թե արտոնություն կամ փառամոլության բավարարություն, այլ ժողովրդի վերքերն ամոքելու միջոց, իսկ ինքնանվիրումը՝ սեփական ժողովրդին առավելագույնս ծառայելու եղանակ, ազգային ձգտումների, ժողովրդի ամենօրյա շահերի պաշտպանության և հեռանկարային խնդիրների գործնականացման ուղի: Այսպես, 1918 թ. մարտի 24-ին Երևանի բնակչության, զորքի և Հայոց ազգային խորհրդի կողմից ընտրվելով Երևանի նահանգի «դիկտատոր և օժտվելով անսահմանափակ իշխանությամբ՝ Արամը շարունակեց մնալ ժողովրդի մարդը, ժողովրդի շահերի արտահայտիչը<sup>4</sup>: Պատմության մեջ, թերևս, եզակի դեպքերից է, երբ դիկտատորն իր անսահմանափակ իշխանությունը մինչև վերջ օգտագործեց բացառապես հոգուտ համազգային շահերի, երբեք չփորձեց իրեն վեր դասել ազգային ու զինվորական կառույցներից: Ուստի՝ 1918 թ. ամռանը նշանակվելով նորանկախ ՀՀ ՆԳ նախարար՝ նա դարձյալ մնաց նույն համեստ Արամը:

Արամն իրատես, ազգային-պետական գործերում սամնասիրտ, սթափ դատող գործիչ էր: Ամբողջ կյանքը թուրքական լծի դեմ պայքարած, հայ ժողովրդի ազատագրությանը անվերապահ նվիրված գործիչը, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի կազմակերպիչը, հունիսի սկզբին, երբ հայության մեջ տիրում էր ոգևորության մթնոլորտը, մի կողմ թողեց զգացմունքները, իր անձի դեմ հնարավոր բացասական դրսևորումները, և դարձյալ ու դարձյալ ելնելով միայն հայ ժողովրդի անվտանգության ու հեռահար նպատակների իրականացման շահերից, սթափ կերպով գնահատելով հայկական և թուրքական ուժերի հարաբերակցությունը, համակերպվեց Բաթումի հաշտության պայմանագրի հետ<sup>5</sup>: Նա քաջ գիտակցում էր, որ շատ առումներով անցանկալի և չափազանց ծանր այդ պայմանագիրը տվյալ ժամանակաշրջանում այն առավելագույնն է, որին կարելի է հասնել, հատկապես որ ամենակարևոր խնդիրը՝ հայ ժողովրդի նվազագույն անվտանգությունը և հայոց պետակա-

Ժ (ԺԶ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

4 Տե՛ս Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 178, «Զանգ», Եր., 1918, մարտի 27, N 24:  
5 Տե՛ս «Զանգ», Եր., 1918, 7 հունիսի, N 40:

նության ստեղծումը այլևս կատարված փաստ էր:

Արամի իրատեսության, սթափ մտածելակերպի մասին էր խոսում նաև 1918 թ. ձմռանը Թիֆլիսում՝ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչներին հետ կնքված համագործակցության համաձայնությունը, որով հանուն հայ ժողովրդի ֆիզիկական ապահովության, նա և մի շարք այլ գործիչներ կողմ արտահայտվեցին Խ. Ռուսաստանի հետ միասին ամբողջ Կովկասը խորհրդայնացնելու ծրագրին<sup>6</sup>:

Արամին խիստ բնորոշ էր ժողովրդի, ապա նաև պետության շահի գերակայության սահմանումը՝ ամեն ինչի, այդ թվում և անձնականի նկատմամբ: Նրա յուրաքանչյուր քայլն ուղղված էր հայ ժողովրդի շահերի պաշտպանության և հայոց պետականության կայացման գերնպատակին: Այդ ճանապարհին Արամի համար չկային արտոնյալներ կամ արգելքներ: Նա պահանջկոտ ու խիստ էր բոլորի, հատկապես պատասխանատու դիրք զբաղեցնող պաշտոնյաների, նույնիսկ կուսակիցների նկատմամբ: Այս առումով հետաքրքրական է հետևյալ դեպքը: Վանի 1915 թ. հերոսամարտի հաղթանակից հետո հայ բնակչությունը մի քանի օր զբաղված էր իր վնասների փոխհատուցմամբ՝ ի հաշիվ Վանից հեռացած թուրքերի գույքի յուրացման: Այդ ընթացքում, սակայն, կատարվել էին անցանկալի դեպքեր: Օգտվելով խառնաշփոթից՝ որոշ անձինք կողոպտել էին նաև հայերի ունեցվածքը: Արամի հրամանով ոստիկանությունը կազմակերպել էր հետաքննություն, որից պարզվել էր, որ այդ կողոպուտին մասնակցել են նաև Քաղաքամեջի Զինվորական մարմնի և միաժամանակ ՀՅԴ Վանի կազմակերպության անդամներ՝ Հայկակ Կոտյանը, Սարգիս Շահինյանը, Միհրդատ Միրզախանյանը և ուրիշներ: Ոչ նույն կուսակցությանը պատկանելու, ոչ հերոսամարտին ղեկավար մասնակցություն ունենալու հանգամանքը և ոչ էլ՝ կուսակիցների դիմումները չխանգարեցին Արամին, որպեսզի այդ գործիչները կալանավորվեն<sup>7</sup>: Նույնը մենք տեսնում ենք նաև հանրապետության գոյության ընթացքում, երբ նա ամեն ինչ անում էր, որ բոլորը, այդ թվում և իր կուսակիցները, անգամ հերոսամարտերի ընթացքում հայրենիքին մեծ ծառայություններ մատուցած պաշտոնյաները, գործեն օրենքի շրջանակներում և որևէ կերպ չվնասեն ժողովրդին: Սա կրկին անգամ հաստատում է, որ **Արամը հիրավի պետական այր էր, ազնիվ և անաչառ գործիչ, որի համար անպատժելի արարքներ, անձեռնմխելիներ և արտոնյալներ չկային, երբ խոսքը վերաբերում էր ժողովրդի շահին և բարօրությանը**: Նա պետական պաշտոնյաներին զգուշացնում էր, որ եթե իրենց նկատմամբ լրագրերում հրապարակված մեղադրանքները կարճ ժամանակում չհերքեն, ապա կհեռացվեն աշխատանքից և դատի կտրվեն:

Ժողովրդի շահի գերակայություն ցանկացած պարագայում, այդ թվում և այն ժամանակ, երբ օրենքը կարող էր վնասել ժողովրդի շահերը: Օրինակը՝ Վանի նահանգապետության գոյության ընթացքում ժողովրդի շահերի ամենօրյա պաշտպանությունն էր ամեն տեսակ ապօրինություններից, 1918 թ. մայիսին թաթարական հակապետական խռովությունների անխնա ճնշումը, հայ անիշխանական, հակապետական տարրերի գնդակահարությունը<sup>8</sup> և այլն:

6 Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. 7, Եր., 1990, էջ 142-143:

7 Տե՛ս **Սահակյան Ռ.**, Հայկական ոստիկանության կազմակերպումը, «Քանրեր Հայաստանի արխիվներ», Եր., 2003, N 2, էջ 54:

8 Տե՛ս **Շահխաթունի Ա.**, Սարդարապատի հերոսամարտը և մահափորձը Արամ փաշայի դէմ (Իմ յուշերից),

Անասան կամք, հաստատականություն, վճռականություն ու հետևողականություն: Այս որակներն էին, որոնք ապահովեցին առաջադրված դժվարագույն խնդիրների հաջող իրականացումը, այդ թվում և Մայիսյան հերոսամարտերի կազմակերպումը: Բանն այն է, որ նույնիսկ 1918 թ. մայիսին, երբ թշնամին հրեշային ավտորժակով մոտենում էր Երևանին, հայոց զորքը և ժողովուրդը մի զգալի մասով մատնվել էին տագնապի և հուսալքության: Եվ եթե չլինեին Արամի նման որակները, չլինեք նրա լավատեսությունը, չէր ձևավորվի միասնական, հուժկու, անխորտակելի բռունցքը և թշնամուն չէր հասցվի ջախջախիչ հակահարված և, վերջապես, չէր ստեղծվի Հայաստանի Հանրապետությունը<sup>9</sup>:

Արամը մշտապես գերադասեց պետության և ժողովրդի շահերը և երբեք չփորձեց առաջ մղել իր անձնականը, նույնիսկ դրանք երբեք համեմատության մեջ չդրեց:

Նա կազմակերպչական բացառիկ ձիրքի տեր էր ու միևնույն ժամանակ ազգային միասնության, ներքին ուժի համախմբման համոզված կողմնակից: Դա է պատճառը, որ ժամանակի առաջատար և ամենաազդեցիկ քաղաքական ուժի՝ ՀՅԴ ներկայացուցիչը լինելով հանդերձ՝ նա համաժողովրդական խնդիրների լուծման ժամանակ հանդես է բերել վերկուսակցական, վերանձնական մոտեցում: Այդ հատկանիշները Արամին հնարավորություն էին տալիս մեկ նպատակի շուրջ համախմբել հակոտնյա մոտեցումներ ու գաղափարներ ունեցող, նույնիսկ իր անձի նկատմամբ բացասաբար տրամադրված գործիչներին և ուժերին: Ասվածի ապացույցներն էին՝ Վանի հերոսամարտի և համանուն նահանգապետության կազմակերպման, 1918 թ. հայկական զորքի և իշխանության գործող մարմինների ստեղծման, Մայիսյան հերոսամարտերի կազմակերպման, 1918 թ. նոյեմբերին ՀՀ կռալիցիոն կառավարության ձևավորման ժամանակ նրա կեցվածքները: Ի դեպ, վերջին դեպքում Արամը կողմ էր արտահայտվում կռալիցիային, քաղաքական մի ուժի՝ ՀԺԿ-ի, հետ, որի կողմից ներկայացվող պահանջներից էր Արամի հեռացումը կառավարությունից:

Արամը սակավապետ էր, քչով բավարարվող: Ունենալով ֆինանսական միջոցներից օգտվելու լայն հնարավորություններ՝ նա ապրում էր համեստ կյանքով, հասարակ երևանցու նման<sup>10</sup>: Նա երբեք իր հնարավորությունները չօգտագործեց նույնիսկ տարրական անձնական կարիքները բավարարելու համար, փոխարենը, անտեսելով գործող կարգն ու օրենքը, աջակցեց այն մարդկանց, որոնք տառապում էին նյութական կարիքից, տարատեսակ զրկանքներից, բայց պահպանում էին հոգու կորովը, հայրենիքի նկատմամբ պատվի ու պարտականության զգացումները: Շատ է նշվել, բայց կարծում ենք վնաս չունի մեկ անգամ ևս ասել, որ Արամն այնքան ազնիվ էր, որ նույնիսկ իր թաղման համար անհրաժեշտ չնչին գումարը չունեք<sup>11</sup>:

Ամենափայլուն հաջողությունները, փառահեղ հաղթանակները, բարձրագույն հասարակական դիրքն ու պաշտոնները, անսահմանափակ լիազորություններն ու հնարավորությունները երբեք աննշան չափով իսկ չսասանեցին

<sup>9</sup> «Հայրենիք», 1959, օգոստոս, N 8, էջ 27-30:  
<sup>10</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 10:  
<sup>11</sup> Տե՛ս Աստուածատրեան Ա., Արամ, «Հայրենիք», 1964, ապրիլ, N 4, էջ 75:  
<sup>12</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 16, թ. 14, 15:

Արամի բարոյական վեհ նկարագիրը: Նրան միշտ խորթ մնացին նյութապաշտությունը, փառամոլությունն ու պաշտոնամոլությունը: Նա անզիջում էր անարդարության, ստորության, ընչաքաղցության, դավաճանության հանդեպ և, հակառակը, անհուն էր Արամի սերը, հարգանքն ու նվիրվածությունը իր ժողովրդի և յուրաքանչյուր առաքինի հայ մարդու նկատմամբ: Նրա նվիրվածությունն իր ժողովրդին հասնում էր անձնուրացության ու անձնագոհության, սեփական «ես»-ի անտեսման: Ավելի ստույգ՝ նրանում չկար անձնական «ես», այն միահյուսված էր ժողովրդի մտահոգություններին, ապրումներին ու իղձերին: Որտեղ և ինչ պայմաններում էլ որ գործեց, Արամը եղավ ժողովրդի սիրտը, հոգին ու կամքը:

Անկասկած, այդ ամենը չէր վրիպում ժողովրդի աչքից և, բնականաբար, մեծապես նպաստում էր նրա հեղինակության, ազդեցության, դրանով իսկ նաև՝ պետության հեղինակության բարձրացմանը, հայոց պետականության շուրջը ժողովրդի համախմբմանը:

Արամի վայելած անառարկելի հեղինակության պատճառը նրա ամենօրյա կյանքն էր, անկեղծ խոսքն ու գործը: Պետական միջոցների սղության, լիարժեքորեն ձևավորված կառույցների բացակայության պայմաններում առաջնորդի անառարկելի հեղինակությունը ազգային խնդիրների լուծման, անկախ պետականության ամրապնդման համար խիստ անհրաժեշտ պայման էր և է բոլոր ժամանակներում, նաև՝ մեր օրերում:

**Անկեղծ և անմնացորդ նվիրում հայ ժողովրդին, ազնվություն, անշահախնդրություն, ռազմավարական մտածողություն, իրատեսություն, հետևողականություն, անկոտրում կամք, անդադրում աշխատանք, հաստատականություն, հավատ սեփական ուժերի նկատմամբ, հավասարակշռվածություն, կենսակերպով ժողովրդից չտարբերվելու և նրանից չխորթանալու մեծ կամք:**

Այս որակների կրողն էր Արամ Մանուկյանը, և այս որակների շնորհիվ է, որ նա կարողացավ հայոց համար ծանրագույն ժամանակաշրջանում կազմակերպել Մայիսյան հերոսամարտերը, որոնք էլ կանխեցին հայ ժողովրդի վերջնական ոչնչացումը, Արևելյան Հայաստանը փրկեցին ավերածությունից ու ամբողջական օկուպացումից և, վերջապես, հնարավոր դարձրին դարեր առաջ կորցրած անկախ պետականության վերականգնումը:

Միմիայն **այս որակների** արագ և անվերապահ ընդօրինակումը ներկա հանրապետության պետական իշխանության կրողների, այդպիսի հավակնություններ ունեցող հասարակական-քաղաքական ուժերի, բովանդակ հասարակության կողմից հնարավորություն կտա շատ արագ, արդյունավետ քայլերով համախմբել մեր ժողովրդին Հայաստանում ու Սփյուռքում և հասնել հայոց պետականության հզորացմանը, որը կարող է լինել Միացյալ Հայաստանի ստեղծման, մեր ժողովրդի բարեկեցիկ և անվտանգ կյանքի ապահովման միակ հուսալի գրավականը:

Առանց ազգային-պետական մտածողության, առանց երկրին ու ժողովրդին նվիրվածության, նույնիսկ նյութական ռեսուրսների և գիտելիքների անսպառ պաշարի դեպքում, անհնար կլինի հասնել մեր ժողովրդին հուզող խնդիրների լուծմանը:

Շատ է խոսվում մեր երկրի համար կառավարման այս կամ այն բնորդի

նպատակահարմարության մասին: Յուրաքանչյուրը կարող է առաջադրել կառավարման իր մոդելը և տեսականորեն հիմնավորել այն: Սակայն մեր հանդամամբ էականը ոչ այնքան բնորոշ է, որքան կառավարողների և ամբողջ հասարակության որակը: Հետևաբար, մեզ համար այսօր գլխավոր հրամայականը ազգային-պետական գործչին միա ու արյուն տվող որակներն են և դրանց անվերապահ ընդունումը բոլորիս կողմից:

**Արմեն Ս. Ասրյան**– գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Արամ Մանուկյանի կյանքը և գործունեությունը, հայ ազատագրական շարժման, Հայոց ցեղասպանության և Հայաստանի Հանրապետության պատմության հիմնահարցերը: Հեղինակ է երկու մենագրության, մեկ ուսումնական ձեռնարկի, մեկ ուսումնասօժանդակ գրքույկի և ավելի քան երեք տասնյակ գիտական հոդվածների:

Էլ. փոստ – gtk -11@mail.ru

## Summary

### **ARAM MANUKYAN AS AN EMBODIMENT OF ARMENIAN NATIONAL STATESMAN**

Armen S. Asryan  
*Candidate of Historical Sciences*

**Key words** – Aram Manukyan, personality, people, power, organizational ability, republic, unity, responsibility, political figure, strategic thinking, determination.

History of RA including its creation history is extremely rich today, too, with rigorous up-to-date lessons and sacraments.

The presentation of the national and official image of the devotee of the Armenian liberation struggle, the founder of RA Aram Manukyan (the birth name–Sargis Harutyuni Havhannisyanyan –1879–1919) will give an opportunity to justify, on one hand, the fact of calling him the founder Republic of the Armenian and, on the other hand, to point out those specific qualities of Aram that were the components of ensuring his success.

Aram was an indisputable authority for the people, everywhere at all times of his activity. And the reason for that was his daily life, his frankness, words and actions. Under the conditions of the shortage of state funds and the lack of shaped state-owned institutions the indisputable authority of the leader is a necessary precondition for the solution of national issues and the empowerment of the statehood for all times and also in nowadays.

Sincere and everlasting devotion to the Armenian people, honesty, unselfishness, strategic mind, realism, consistency, persistent will, unceasing industriousness, perseverance, faith in his own skills, equability, the great intention of not to be different from the people and not to alienate from them.

Aram Manukyan was the bearer of these qualities and due to those qualities he managed to organize in the most difficult period for Armenia the heroic battles of May, 1918, which prevented the final elimination of the Armenian people, saved East Armenia from destruction and complete occupation and finally made it possible to restore the independent statehood that was lost centuries ago.

Резюме

## **АРАМ МАНУКЯН КАК ОЛИЦЕТВОРЕНИЕ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНО-ГОСУДАРСТВЕННОГО ДЕЯТЕЛЯ**

Армен С. Асрян  
*Кандидат исторических наук*

**Ключевые слова** – Арам Манукян, индивидуальность, народ, власть, организационная способность, республика, единство, ответственность, государственный деятель, стратегическое мышление, решительность.

История РА, в том числе история ее создания, чрезмерно богата уроками и заветами, весьма актуальными и сегодня.

Настоящее представление политического облика Арама Манукяна (Саргис Арутюнович Ованисян, 1879–1919) даст возможность, с одной стороны, обосновать тезис о том, что он является основателем Республики Армения, а с другой – выделить присущие Араму качества, которые были компонентами, обеспечивающими его успехи.

Арам был безоговорочным авторитетом для народа повсюду и на всех этапах своей деятельности. Причиной тому были его повседневная жизнь, его искренность, слово и дело. В условиях нехватки государственных средств, отсутствия полноценно оформленных государственных структур безоговорочный авторитет лидера во все времена является крайне необходимым условием для разрешения национальных задач, укрепления независимой государственности.

Искреннее и всецелое посвящение всей своей жизни и деятельности армянскому народу, честность, бескорытность, стратегическое мышление, реалистичность, последовательность, негибкая воля, беспрестанная работа, твердость воли, вера в собственные силы, уравновешенность, большое желание не отличаться и не отчуждаться от народа по образу жизни.

Носителем этих качеств был Арам Манукян и благодаря этим качествам он сумел в тяжелейшее для армян время организовать Майские героические сражения 1918 г., которые и предотвратили окончательное истребление армянского народа, спасли Восточную Армению от разрушения и полной оккупации и, наконец, сделали возможным восстановление независимой государственности.

## REFERENCES

1. **Asryan A.**, Aram Manukyan. kyanqə yev gvorcə (azatagrakan sharjman yev ankax petakanutyay verakangnman ughinerum), Er., 2009, eg 43-69. **(in Armenian)**
2. **Astvacatryan A.**, Aram, «Hayreniq», Postən, 1964, april, N4, eg 70. **(in Armenian)**
3. **Ruben**, Hay heghapvoxakani mə yishataknerə, h. 7), Er., 1990, eg 142-143. **(in Armenian)**
4. **Sahakyan R.**, Haykakan vostikanut'yan kazmakerpumə, «Banber Hayastani arxivneri», Er., 2003, N 2, eg 54. **(in Armenian)**
5. **Shahxatuni A.**, Sardarapati herosamartə yevmahapordzə Aram pashayi dem (Im husheric), «Hayreniq», 1959, ogostos, N 8, eg 27-30. **(in Armenian)**





# ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

Ժ (ԺԶ) փաթի, թիվ 4 (64), Խոկարներ-դեկտեմբեր, 2018

ՎԼՎ համահայկական հանդես



Համո Կ. Սուրբիասյան  
*Պատմ. գիյր. թեկնածու*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

(1918 թ. մայիս-օգոստոս)

Մուտք

**Բանալի բառեր** – Հայաստանի Հանրապետություն, Անդրկովկաս, Վրաստան, Երևան, Թիֆլիս, Հովհաննես Քաջազնունի, Արամ Մանուկյան, Հ Յ Դաշնակցություն, Հայոց ազգային խորհուրդ, վարչապետ, պառլամենտ, կառավարություն, պետություն, գործունեություն, անկախություն, պատմություն:

**1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով Ռուսաստանից անջատված Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդները՝ վրացիները, ադրբեջանցիները (կովկասյան թաթարներ, թուրքեր) և հայերը տարբեր կերպ էին պատկերացնում ինչպես երկրամասի, այնպես էլ այստեղ բնակվող ժողովուրդների հետագա ճակատագիրը: Նրանց միջև միասնություն ու փոխվստահություն չկար հատկապես արտաքին կողմնորոշման, չլուծված ներանդրկովկասյան սահմանների, չկարգավորված ազգամիջյան հարաբերությունների, վիճելի տնտեսական խնդիրների պատճառով:**

Եթե 1918 թ. գարնանը իրենց ազգային խնդիրների լուծման գործում վրացիները հույսեր էին կապում Գերմանական կայսրության, իսկ ադրբեջանցիները՝ Օսմանյան կայսրության հետ, ապա հայերը նման հովանավորներ չունեին և կողմ էին Անդրկովկասի միասնության պահպանմանը՝ հույսեր կապելով ռուսների վերադարձի հետ: Ուստի գոյություն ունեցող հակասությունների պատճառով երկար չէր կարող պահպանվել Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետության երևութական միասնությունը:

# 1. Հայաստանի անկախացման ընթացքը

Անդրկովկասի Սեյմի (խորհրդարան) լուծարման գործընթաց սկսելուց առաջ վրացիներն այդ մասին նախապես տեղեկացրին հայ և ադրբեջանցի գործընկերներին: 1918 թ. մայիսի 25-ի առավոտյան (մինչև Բաթում մեկնելը) Վրաստանի ազգային խորհրդի նախագահ Նոյ Ժորդանիան ցանկություն հայտնեց հանդիպել Հայոց ազգային խորհրդի անդամներին՝ խնդիրը քննարկելու համար: Հանդիպմանը մասնակցում էին Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը, խմբակցությունների ներկայացուցիչները, անկուսակցական Ստեփան Մամիկոնյանը: Ա. Ահարոնյանը Հայոց ազգային խորհրդի անունից ողջունեց վրացիներին՝ անկախ պետականությունը վերականգնելու ձգտումը, այդուհանդերձ հնչեցրեց նաև քննադատական խոսքեր<sup>1</sup>: Սա էական հանգամանք է, ինչը հայ պատմագիտության մեջ ուշադրության չի արժանացել: Այնպես չէ, որ մայիսի 26-ին հայ գործիչների համար անակնկալ էր Սեյմի լուծարման վրացական նախաձեռնությունը: Այլ հարց է, որ դա հայության շահերից չբխող և անընդունելի քայլ է համարվել:

1918 թ. մայիսի 26-ին վրաց մենշևիկների նախաձեռնությամբ լուծարվեց Անդրկովկասի Սեյմը: Նույն օրը Վրաստանի ազգային խորհուրդը հայտարարեց Վրացական Հանրապետության անկախությունը, իսկ մայիսի 28-ին Արևելյան Անդրկովկասի մուսուլման բնակչությունը ներկայացնող Մուսուլմանական ազգային խորհուրդը հայտարարեց Ադրբեջանական Հանրապետության անկախության մասին՝ յուրացնելով Պարսկաստանի հյուսիսային նահանգ Ատրպատական-Ադրբեջանի պատմական անվանումը:

Վրաստանի և Ադրբեջանի անկախացումից հետո Թիֆլիսում գտնվող Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը, որը տվյալ պահին արևելահայության հավաքական կամքը արտահայտող գլխավոր քաղաքական մարմինն էր, այլընտրանք չուներ, քան Անդրկովկասի հայկական գավառների քաղաքական ղեկավարությունն իր ձեռքը վերցնելը: Այս խնդրում վճռական նշանակություն ունեցավ նաև թուրքերի մայիսի 26-ի վերջնագիրը, որով պահանջում էին ոչ միայն Արևմտյան Հայաստանն ու 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Օսմանյան կայսրությանն անցնող Արդահանը, Կարսը և Բաթումը, այլև Երևանի նահանգի Սուրմալուի գավառը, գրեթե ամբողջ Նախիջևանի գավառը, Շարուր-Դարալագյազի, Երևանի, Էջմիածնի և Ալեքսանդրապոլի գավառների զգալի մասը, ինչպես նաև Թիֆլիսի նահանգի մեջ մտնող հայկական Ախալքալաքի ու Ախալցխայի գավառները<sup>2</sup>:

Այդ օրերին Հայոց ազգային խորհրդի մաս կազմող կուսակցությունների (Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Հայ Ժողովրդական կուսակցություն, Հայ սոցիալիստ-հեղափոխականներ, Հայ սոցիալ-դեմոկրատներ) ղեկավար կազմի և Խորհրդի անդամների շրջանում Հայաստանի անկախությունը հռչակելու հարցում միասնական դիրքորոշում չկար: Թեև

1 Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող, առաջաբանի և ծանոթագրությ. հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, Երկրորդ հրատ., Եր., 2009, էջ 14-15, Հարությունյան Մ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1919 թվականներին (նամակներ, զեկուցագրեր), Եր., 2017, էջ 135:

2 Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազարյանի, Եր., 2000, էջ 17:

ՎՎԻ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) փայլի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությունը խրախուսում է Անդրկովկասում անկախ հանրապետությունների ի հայտ գալը, սակայն մտավախություն կար, թե անկախության հայտարարումը կարող է թուրքերին նոր կոտորածների ու գրավումների առիթ տալ<sup>3</sup>:

Երկարատև քննարկումներից հետո մայիսի 28-ի երեկոյան կայացած նիստում Հայոց ազգային խորհուրդը որոշեց ընդունել Օսմանյան կայսրության ներկայացրած վերջնագիրը և վերջինիս պատվիրակության հետ բանակցություններ վարելու ու հաշտության պայմանագիր կնքելու նպատակով Ալեքսանդր Խատիսյանի նախագահությամբ (անդամներ՝ Հովհաննես Քաջազնունի, Միքայել Պապաջանյան) պատվիրակություն ուղարկել Բաթում<sup>4</sup>: Ավանդաբար ընդունված է այդ օրը՝ մայիսի 28-ը, Հայաստանի անկախության օր համարել, քանի որ հաշտության բանակցություններ վարելու համար թուրքերի կողմից նախապայման էր հանդիսանում անկախության հայտարարումը: Սակայն հայտնի իրողություն է, որ Հայաստանի անկախության վավերագիրը համարվող Հայոց ազգային խորհրդի հայտարարությունը կատարվել է մայիսի 30-ին: Ըստ այդմ՝ Ազգային խորհուրդն իրեն հայտարարում էր «հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն» և ժամանակավորապես ստանձնում «կառավարության բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»<sup>5</sup>: Այս առնչությամբ հայտնի դաշնակցական գործիչ Ս. Վրացյանը փաստում է. «Հաշտության բանակցություններ վարելու համար նախապայման էր անկախության հայտարարությունը: Ընդունելով թուրքերի այդ պայմանը՝ Ազգ. խորհուրդը դրանով իսկ հաստատած էր լինում անկախության փաստը»<sup>6</sup>: Ըստ այդմ էլ՝ տասնամյակներ շարունակ որպես հայկական անկախ պետականության վերականգնման օր տոնվում է մայիսի 28-ը:

Հայոց ազգային խորհրդի մայիսի 30-ի հայտարարությունում փաստացի հիշատակություն չկար ոչ անկախության, ոչ Հայաստան պետության, ոչ էլ, առավել ևս, նորանկախ հանրապետության սահմանների մասին: Այս հայտարարության դրույթները բխում էին ժամանակի հայ ղեկավար գործիչների գերակշիռ մասի դիրքորոշումից: Դրանով Հայոց ազգային խորհուրդը մի կողմից զգուշանում էր հարևան պետությունների հետ հակասությունների մեջ հայտնվելուց, մյուս կողմից, քողարկված կերպով ակնարկում էր հայկական բոլոր (այդ թվում՝ վիճելի) տարածքների նկատմամբ իր իրավունքների մասին:

Ընդգծենք, որ Հայաստանի անկախության մասին հաջորդ շաբաթներին ևս հատուկ որոշում չի ընդունվել՝ չնայած Հայոց ազգային խորհուրդը Միրական Տիգրանյանի նախագահությամբ ստեղծել էր անկախության հայտարարությունը նախապատրաստող հանձնախումբ, իսկ Բաթումի հաշտության պայմանագրի ներածական մասում խոսվում էր «իրեն անկախ հռչակած Հայաստանի Հանրապետության» մասին: Միայն հունիսի 13-ին Հայոց ազգային խորհրդի և ՀՀ կառավարության անունից Քառյակ դաշին-

3 Տես **Բարսեղյան Ա.**, Հայաստանի անկախության պատմությունէն, «Հայրենիք», Բոստոն, 1923, յունիս, էջ 43:

4 Տես Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 27-30:

5 [http://arfarchives.org/wp-content/uploads/2009/05/arf\\_roa\\_0001\\_001.jpg](http://arfarchives.org/wp-content/uploads/2009/05/arf_roa_0001_001.jpg), Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 18:

6 **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 161:

քի անդամ և չեզոք պետություններին տեղեկացվել է Հայաստանի անկախության մասին<sup>7</sup>:

Պատմական Հայաստանի միայն մի փոքր տարածքում ստեղծված անկախ հայկական պետությունը կենսունակության ազդակներ ստացավ 1918 թ. մայիսի վերջին տասնօրյակում Սարգսրապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի ճակատամարտերում<sup>8</sup> գոյատևման պայքար մղող՝ մի բռունցք դարձած հայության հաղթանակների շնորհիվ: **Առանց այդ հաղթանակների՝ Հայոց ազգային խորհրդի մայիսի 30-ի հայտարարությունը կմնար սոսկ որպես պատմական փաստաթուղթ կամ ցանկությունների հայտարարագիր:**

Այստեղ տեղին է արձանագրել, որ իրադարձությունների անմիջական տպավորությամբ հունիսի 2-ին Երևանի ազգային խորհրդին ուղղված նամակում Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանն ու քարտուղար Նիկոլ Աղբալյանը բառացի գրում էին հետևյալը. «Ձեր կռիվների մասին իմացանք Վեհիբ փաշայի հաղորդածներից: Չգիտենք՝ որքան ճշմարիտ են, համենայն դեպս, թեև փոքրիկ ու աղքատ, բայց անկախ Հայաստանի ստեղծումը պարտական ենք մեր գործի անձնվիրությանը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիներն ու տաճիկները Կովկասը բաժանում էին Վրաստանի և Ադրբեջանի միջև՝ հայերին ապահովելով սոսկ ֆիզիկական գոյություն: Պետք է կարծել, որ մեր գործի դիմադրությունը ստիպեց ճանաչել մի Հայաստան»<sup>9</sup>:

## 2. Կառավարության և խորհրդարանի ձևավորման շուրջ քննարկումները

Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո վրացիները, ադրբեջանցիներն ու հայերը ձեռնամուխ եղան սեփական պետությունների կառուցմանը և մասնավորաբար իշխանության օրենսդիր ու գործադիր մարմինների ձևավորմանը:

Մայիսի 26-ին տեղի ունեցած ՀՅ Դաշնակցության Թիֆլիսի ներկայացուցչական ժողովը, քննության առնելով ստեղծված իրավիճակը, բանաձև ընդունեց իշխանության մարմիններ ձևավորելու մասին<sup>10</sup>: Իսկ մայիսի 29-ին տեղի ունեցած ՀՅԴ Արևելյան և Արևմտյան Բյուրոների, Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի, Սեյմի և Ազգային խորհրդի դաշնակցական ֆրակցիաների միացյալ նիստում որոշվեց Հայաստանն անկախ հայտարարել, կազմել կոալիցիոն կառավարություն, որն Ազգային խորհրդի հետ պետք է տեղափոխվեր մայրաքաղաք Երևան: Վարչապետի թեկնածու առաջադրվեց Հովհաննես Քաջազունին<sup>11</sup>:

Տվյալ պատմական ժամանակաշրջանում հայության շրջանում առաջատար ուժը ՀՅԴ-ն էր, որը հարաբերական մեծամասնություն ուներ նաև Հայոց ազգային խորհրդում: Հետևաբար կուսակցության որոշումներն ուղ-

7 Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 40-41, 76-77:

8 Տե՛ս Հայոց պատմություն, հատ. III, գիրք երկրորդ, Եր., 2015, էջ 636-654:

9 Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 43:

10 Տե՛ս նույն տեղում, էջ 23:

11 Տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 160-161:

դորդիչ դեր ունեին հայության կյանքի առանցքային ոլորտներում:

Ի դեպ, նորաստեղծ հանրապետության անվան ընտրության հարցում սկզբում միասնություն չկար: «Արարատյան Հանրապետություն» տարբերակով Հայաստանի Հանրապետության անվանման և Երևանի՝ նրա մայրաքաղաք հանդիսանալու մասին մեզ հայտնի առաջին հիշատակումը թվագրվում է հունիսի 1-ով: Իսկ արդեն Հայոց ազգային խորհրդի՝ հունիսի 2-ով թվագրվող նամակներից մեկում տեղ է գտել «Հայաստանի Հանրապետություն» ձևակերպումը<sup>12</sup>:

Դեռևս Հայոց ազգային խորհրդի մայիսի 26-ի և 28-ի նիստերում խոսք է եղել կառավարություն կազմելու մասին: Իսկ Ազգային խորհրդի մայիսի 30-ի նիստում մանրամասն քննարկվել է կառավարություն կազմելու նպատակահարմարության, նրա ձևավորման սկզբունքների հարցը, այդ իրավունքը Երևանի գործիչներին փոխանցելու, ստեղծվող կառավարությունը Երևան տեղափոխելու, վարչապետի թեկնածության (դաշնակցական Մարտիրոս Հարությունյանն իր մի քանի ընկերների անունից մատնանշում էր Ա. Խատիսյանին) հարցերը: Բնորոշ է, որ կառավարության կազմակերպման սկզբունքների և այդտեղ գերակշիռ դերակատարություն ունենալու կապակցությամբ մայիսի 30-ի այս նիստում առաջին անգամ սկզբունքային կերպով դրսևորվել է ՀՅ Դաշնակցություն – Հայ ժողովրդական կուսակցություն հակամարտությունը, ինչը հետագա շաբաթներին կոալիցիոն կառավարություն կազմելու խնդրում վճռորոշ խոչընդոտ դարձավ: Սակայն այս նիստում կառավարության կազմակերպման վերաբերյալ որոշում չի կայացվել<sup>13</sup>:

Պատճառն այն է, որ ՀՀ իշխանության կենտրոնական մարմինների ձևավորման խնդրով լրջորեն զբաղվելուց առաջ հայ ղեկավար շրջանակները սպասում էին Բաթումում ընթացող հայ-թուրքական բանակցությունների հաջող ավարտին: Ահա թե ինչու կառավարության և խորհրդարանի կազմակերպման խնդրին ՀՅԴ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովն անդրադարձավ հայ-թուրքական պայմանագրի նախաստորագրումից հետո՝ հունիսի 3-ին: Ներկայացուցչական ժողովը Հայոց ազգային խորհրդին առաջարկեց՝ ստեղծվող ժամանակավոր կառավարությունն ու խորհրդարանը կազմել կուսակցական սկզբունքով<sup>14</sup>:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Հայաստանի Հանրապետության հետ կնքված «հաշտության և բարեկամության» պայմանագրի և դրան կից լրացուցիչ արձանագրությունների համաձայն՝ Օսմանյան կայսրությունը ճանաչեց նրա անկախությունը: Թուրքերը բռնազավթեցին հայության կենսական տարածքների մեծ մասը. փաստացի ՀՀ-ին էր մնում Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառը և տարածքներ Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Երևանի և Շարուր-Դարալագյազի գավառներից<sup>15</sup>: Այս առթիվ ընդգծենք, որ իրականությանը չեն համապատասխանում ՀՀ ղեկավարների հուշագրություններում ու պատմագիտական բազմաթիվ հետազոտություններում տարածված դրույթը, թե Բաթումի պայմանագրի համաձայն՝ Հայաստանի

12 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1 յունիսի 1918, N 104, Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 42:

13 Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 31-34:

14 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 81 և շրջ.:

15 Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 36-40:

Հանրապետության տարածքը կազմում էր 10.000 կամ 12.000 քառ. կմ: Իրականությունն այն է, որ պայմանագրի երկրորդ հոդվածում նկարագրվում էր Օսմանյան կայսրությունը Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններից բաժանող սահմանագիծը, և որևէ խոսք չկար նշյալ երեք հանրապետություններն իրարից անջատող սահմանագծի մասին (ինչի վերաբերյալ հետագայում ևս միջպետական պայմանագրեր չեն ստորագրվել): ՀՀ ամբողջական տարածքը չի որոշվել: Այստեղ կարող է պայմանական կերպով խոսք գնալ այն տարածքների մասին, որոնց վրա փաստացի տարածվում էր Երևանի Հայոց ազգային խորհրդի իշխանությունը:

ՀՀ պատվիրակության՝ Բաթումից Թիֆլիս վերադառնալուց հետո Հայոց ազգային խորհրդի հունիսի 6-ի նիստում Ա. Խատիսյանը մանրամասն գեկուցում ներկայացրեց պատվիրակության գործունեության մասին՝ ընդգծելով. «Թեև երկիրը փոքր է, բայց հավատում է հայերի աշխատասիրությանը: Հայ ժողովուրդը ակնկալում է խաղաղություն և հավիտենական համաձայնություն տաճիկների հետ»<sup>16</sup>: Այնուհետև Ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի և կառավարության ձևավորմանը:

Հայոց ազգային խորհրդի հունիսի 7-ի նիստում երկարատև քննարկումից հետո որոշվեց Ազգային խորհուրդը ժամանակավորապես վերածել ՀՀ օրենսդիր մարմնի (Հայաստանի պետական խորհուրդ անունով) և տեղափոխել Երևան: Որոշվեց նաև «հանձնարարել մեկին կառավարություն կազմել կռալիցիոն սկզբունքով»: ՀՅԴ կողմից Խաչատուր Կարճիկյանն առաջադրեց հայտնի ճարտարապետ, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ Հովհաննես Քաջազնունու թեկնածությունը: Ժողովրդականները դեմ լինելով կառավարության դեկը ՀՅԴ-ին վստահելուն և հրաժարվելով կառավարության մեջ մտնել՝ ձեռնպահ մնացին քվեարկությանը մասնակցելուց: Իսկ սոցիալիստ-հեղափոխականներն ու սոցիալ-դեմոկրատները չեզոքություն պահպանեցին կառավարության կազմավորումը Հ. Քաջազնունուն վստահելու հարցում, ինչի արդյունքում Ազգային խորհուրդը որոշեց. «Հ. Քաջազնունուն հանձնվում է կառավարություն կազմել կռալիցիոն սկզբունքով՝ անձնավորությունների ընտրությունը վերապահելով իրեն»<sup>17</sup>:

Ինչպես տեսնում ենք, Հայոց ազգային խորհուրդը Հ. Քաջազնունուն կռալիցիոն կառավարություն կազմելու հանձնարարություն է տվել հունիսի 7-ին: Այս իրադարձության օրվա վերաբերյալ տեղեկություն չեն պահպանել Առաջին Հանրապետության պատմության հուշագիր-պատմագիրները՝ Ս. Վրացյանն ու Ա. Խատիսյանը<sup>18</sup>: Իսկ ահա հետագայում ստեղծված պատմագիտական գրականության մեջ, որպես այդպիսին, առավելապես նշվում է հունիսի 9-ը<sup>19</sup>:

16 Նույն տեղում, էջ 45:

17 Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 60-61:

18 Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, նույնի՝ Կեանքի ուղիներով, հատ. Ե, Պէյրուք, 1966, Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրուք, 1968:

19 Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հատ. 1, Եր., 2005, էջ 41, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 33: Ա. Հակոբյանը, հիմնվելով «Հորիզոն» և «Աշխատանքի դրոշակ» թերթերի հաղորդումների վրա, այս առթիվ իրավացի կերպով «հունիսի 7» է մատնանշում (Հակոբյան Ա. Մ., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-

Ամենայն հավանականությամբ, շփոթի պատճառը հետևյալն է. տասնամյակներ առաջ գրելով այս մասին՝ ամերիկահայ վաստակաշատ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանն իր ձեռքի տակ ունեցել է սոցիալիստ-հեղափոխական Արշամ Խոնդկարյանի հուշերը, ինչպես նաև «Հորիզոն» թերթը: Ա. Խոնդկարյանը գրում էր, որ Հ. Քաջազունին վարչապետ է նշանակվել հունիսի 9-ին<sup>20</sup>, իսկ «Հորիզոնի» 1918 թ. հունիսի 9-ի համարում տպագրված է տեղեկատվություն ՀՀ կառավարության կազմավորման ընթացքի վերաբերյալ, որտեղ հիշատակվում է Հ. Քաջազունուն վարչապետ նշանակելու մասին<sup>21</sup>: Հավանաբար այս պատճառով Ռ. Հովհաննիսյանը շրջանառության մեջ է դրել հունիսի 9-ը, իսկ հաջորդ ուսումնասիրողների մեծ մասը հետևել է նրան:

Չպետք է մոռանալ, սակայն, որ «Սշակ» թերթի հունիսի 9-ի համարում տպագրված «Հայկական կառավարությունը» խորագրով տեղեկատվության մեջ նշվում էր, որ Հ. Քաջազունին Ազգային խորհրդի կողմից վարչապետ է նշանակվել հունիսի 7-ին<sup>22</sup>:

Կառավարության ղեկավար նշանակվելու հաջորդ օրը՝ հունիսի 8-ին, Հ. Քաջազունին Ազգային խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ իրեն չի հաջողվել ամբողջական կազմով կառավարություն կազմել, ուստի որոշել է առաջմ բավարարվել արտաքին գործերի և զինվորական նախարարներով, իսկ մյուսներին Երևանում նշանակել: Այնուհետև վարչապետը մանրամասն ներկայացրեց ապագա կառավարության կազմի վերաբերյալ իր պատկերացումները: Ըստ նրա՝ կառավարությունը պետք է կազմված լինի 7 նախարարությունից՝ 1. ներքին գործոց, լուսավորության, պարենավորման, 2. արտաքին գործոց, 3. զինվորական, ճանապարհների հաղորդակցության, 4. ֆինանսների, առևտրի և արդյունաբերության, 5. արդարադատության, 6. աշխատանքի, երկրագործության և 7. խնամատարության և հասարակական աշխատանքների: Նշելով, որ ցանկանում է բոլոր կուսակցություններին ներգրավել կառավարության մեջ՝ Հ. Քաջազունին տեղեկացնում էր, որ արտաքին գործերի նախարարի պաշտոնի համար նկատի է ունեցել Ա. Խատիսյանին, իսկ զինվորական նախարարի համար՝ անկուսակցական գեներալ Գաբրիել Ղորղանյանին, սակայն վերջինս հրաժարվել է կառավարության մեջ մտնել<sup>23</sup>: Այս առթիվ տեղի ունեցած մտքերի փոխանակության ժամանակ Խ. Կարճիկյանը ՀՅԴ անունից պաշտոնապես հայտարարեց. «Դաշնակցությունը, ինչ գնով էլ լինի, պետք է կառավարություն կազմի. նա չի կարող անպատասխանատու դեր վերցնել»<sup>24</sup>: Խ. Կարճիկյանի այս հայտարարությունը դարձավ կառավարություն կազմելու գործում ՀՅԴ հետագա քաղաքականության ուղենիշը:

Հայոց ազգային խորհրդի կողմից վարչապետի ընտրությունը չթուլացրեց կառավարություն կազմելու շուրջ ՀՅ Դաշնակցություն – Ժողովրդական կուսակցություն հակամարտությունը, և շուտով այն նոր ուժով բորբոքվեց:

1920 թթ.), Եր., 2005, էջ 46):

20 Տե՛ս Խոնդկարեան Ա., Օպորդիցիան Հանրապետական Հայաստանում, «ՎԷՄ», Փարիզ, 1934, յունուար-փետրուար (9), էջ 92:

21 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 9 յունիսի 1918, N III:

22 Տե՛ս «Սշակ», Թիֆլիս, 9 յունիսի 1918, N 108:

23 Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 65-67:

24 Նույն տեղում, էջ 67:



Հ. Քաջազնունու վարչապետ նշանակվելուց երկու օր անց՝ հունիսի 9-ին, Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած Թիֆլիսի հայ հասարակության ավելի քան հազար ներկայացուցիչների ժողովը դիմեց Հայոց ազգային խորհրդին՝ առաջարկելով կազմել ազգային ժամանակավոր կառավարություն՝ Ժողովրդական կուսակցության առաջնորդ Միքայել Պապաջանյանի գլխավորությամբ<sup>25</sup>: Հաջորդ օրերին տարբեր հրապարակային ժողովներում ու առանձնապես կուսակցության խոսափողը հանդիսացող «Սշակ» թերթում ժողովրդականները լայն քարոզչություն ծավալեցին ՀՅ Դաշնակցության և դաշնակցական վարչապետի կազմելիք կառավարության դեմ: Հ. Քաջազնունուն չհաջողվեց նաև կառավարության մեջ ընդգրկել սոցիալիստ-հեղափոխականներին ու սոցիալ-դեմոկրատներին<sup>26</sup>:

Կառավարության կազմավորման շուրջ ընթացող միջկուսակցական հակամարտությունը Հ. Քաջազնունուն հնարավորություն չտվեց կռալիցիոն կառավարություն կազմելու: Նման պայմաններում Հայոց ազգային խորհրդի անդամները հանգել էին այն դիրքորոշմանը, որ կռալիցիոն կառավարություն կազմելն իրատեսական չէ և, ինչպես Ազգային խորհրդի հունիսի 24-ի նիստում ձևակերպեց անկուսակցական Ս. Մամիկոնյանը, «[Հ.] Քաջազնունու առաջարկը կռալիցիոն մինիստրություն կազմելու նկատմամբ անհաջող անցավ և ձգձգելը դրական արդյունք չտվեց: Այս երկու շաբաթվա ընթացքում տրամադրությունները փոխվել են, լքում է տիրել: Կռալիցիոն սկզբունքը միանգամայն տապալված է»<sup>27</sup>:

Ուստի Հայոց ազգային խորհրդի հունիսի 25-ի նիստում վարչապետ Հ. Քաջազնունին կտրուկ հայտարարեց, որ մտադիր է կառավարություն կազմել ոչ թե կռալիցիոն, այլ անհատական սկզբունքով: «Բայց որովհետև Ազգային խորհրդի դիրեկտիվը կռալիցիոն սկզբունքն էր, ապա կան պետք է փոխվի այդ դիրեկտիվը և կան ընդունվի իմ հրաժարականը: Թող Ազգային խորհուրդը մեկ ուրիշին հանձնի այդ սկզբունքով կառավարություն կազմելը, գուցե նրան կհաջողվի», – նշում էր վարչապետը<sup>28</sup>:

Հայոց ազգային խորհուրդը Հ. Քաջազնունու հայտարարությունը քննարկեց հաջորդ՝ հունիսի 27-ի նիստում: Նիստի ընթացքում ՀՅԴ անունից Խ. Կարճիկյանը հայտարարեց, որ իրենց ֆրակցիան կողմնակից է անհատական սկզբունքով կառավարություն կազմելուն, և որ պետք է ամեն գնով կառավարություն կազմել: Նիստին ներկա սոցիալ-դեմոկրատները և սոցիալիստ-հեղափոխականները ձեռնպահ մնացին: Խ. Կարճիկյանի առաջարկով որոշվեց. «Վերցնել կռալիցիոն սկզբունքը և հանձնել մեկին կառավարություն կազմել պերտոնալ ձևով»<sup>29</sup>: Անհատական սկզբունքով կառավարություն կազմելու պարտականությունը դրվեց Հ. Քաջազնունու վրա<sup>30</sup>: Վերջինս անմիջապես ձեռնամուխ եղավ կառավարության կազմավորմանը:

Հավանաբար «Հորիզոն» թերթի 1918 թ. հունիսի 30-ի համարում տպա-

25 Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 46:

26 Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 156, «Սշակ», Թիֆլիս, 11, 27 յունիսի, 10 յուլիսի 1918, N 109, 122, 132, Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 185, Հակոբյան Ա. Մ., նշվ. աշխ., էջ 47-48:

27 Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 86:

28 Տե՛ս նույն տեղում, էջ 94:

29 Նույն տեղում, էջ 100:

30 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 30 յունիսի 1918, N 128:

գրված հաղորդագրության պատճառով Արշամ Խոնդկարյանը հետագայում գրում էր, թե Հ. Քաջազնունուն անհատական սկզբունքով կառավարություն կազմելու հանձնարարական է տրվել հունիսի 30-ին<sup>31</sup>: Նույն թյուրիմացությունն առկա է նաև Ռ. Հովհաննիսյանի մոտ<sup>32</sup>, որն այս ամսաթիվը, ամենայն հավանականությամբ, վերցրել է Ա. Խոնդկարյանի հուշերից:

«Հորիզոն» թերթի 1918 թ. հուլիսի 6-ի համարում տպագրված ոչ պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ կառավարության նախնական կազմը հետևյալ պատկերն ուներ. վարչապետ՝ Հովհաննես Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ներքին գործերի՝ Արամ Մանուկյան, զինվորական՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան, ֆինանսների՝ Խաչատուր Կարճիկյան: Տեղեկացվում էր նաև, որ մյուս նշանակումները կատարվելու են Երևանում<sup>33</sup>:

### 3. Իշխանության մարմինները Թիֆլիսից Երևան տեղափոխելու հարցը

Ինչպես տեսանք, կառավարություն կազմելու հանձնարարականին զուգահեռ 1918 թ. հունիսի 7-ի նիստում Հայոց ազգային խորհուրդը որոշում կայացրեց ՀՀ իշխանության կենտրոնական մարմինների՝ Երևան տեղափոխվելու վերաբերյալ: Հենց սկզբից ՀՀ կառավարության կազմավորման և Երևան տեղափոխվելու խնդիրները փոխկապակցված էին: Այս պատճառով դեռևս հունիսի 2-ին Երևանի ազգային խորհրդին ուղղված նամակում Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը և քարտուղար Ն. Աղբալյանը տեղեկացնում էին. «Հայտնել ենք Վրաց կառավարությանը, որ Հայոց կառավարությունը կազմելուց «հետո՝ Ազգային խորհուրդը մեկնելու է Երևան»<sup>34</sup>: Իսկ ՀՅԲ օրգան «Աշխատավոր» թերթի հունիսի 6-ի խմբագրականում նշվում էր. «Այժմ, երբ հայկական կառավարութիւն է կազմում, ինչպէս էլ որ դա կազմի և ինչ ընդհանուր քաղաքական պայմաններում էլ որ գործելու լինի, անպապաղ դա պէտք է չիէ հայրենիք, պէտք է ապրէ ու գործէ ժողովրդի մէջ»<sup>35</sup>: «Հորիզոն» թերթում հունիսի 9-ին հրատարակված տեղեկատվության մեջ նշվում էր, որ «կաբինետը կազմելուն պէս, հայկական կառավարութիւնը կտեղափոխի Երևան»<sup>36</sup>:

Կառավարությունը վերջնականապես Երևանում կազմելու հարցում առանձնապես վճռական դիրքորոշում էր որդեգրել վարչապետ Հ. Քաջազնունին: Կառավարության վերջնական ձևավորումը և հայտարարագիր (դեկլարացիա) կատարելը նա կապում էր Երևան տեղափոխվելու հետ: Վարչապետն իր այս տեսակետը չփոխեց նաև հետագայում: Փաստորեն Հ. Քաջազնունին խնդիր էր դրել՝ Երևան ժամանելուց հետո կառավարության անդամության թեկնածուների հետ վերջնականապես որոշել կառավարության կազմը: Կառավարությունը վերջնականապես Երևանում կազմելու և հայտարարագիր կատարելու վերաբերյալ իր տեսակետը Հ. Քաջազնունին

31 Տե՛ս Խոնդկարյան Ա., նշվ. աշխ., էջ 96-97:

32 Տե՛ս Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 42:

33 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 6 յուլիսի 1918, N 132:

34 Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 38:

35 «Աշխատավոր», Թիֆլիս, 6 յունիսի 1918, N 54:

36 «Հորիզոն», Թիֆլիս, 9 յունիսի 1918, N 111:

չփոխեց նաև հետագայում, ինչի վառ վկայությունն է Ազգային խորհրդի ԽՈՒԼԻՍԻ 24-ի և ԽՈՒԼԻՍԻ 6-ի նիստերի ժամանակ այդ մասին բարձրաձայնելը<sup>37</sup>: Ահա այս պատճառով Հայոց ազգային խորհրդի կողմից ՀՀ կառավարության կազմի վերաբերյալ պաշտոնապես տեղեկացվեց միայն ԽՈՒԼԻՍԻ 24-ին՝ Երևան ժամանելուց և տեղի գործիչների հետ վերջնական եզրահանգման գալուց հետո:

Թեև Թիֆլիսում գործող հայ քաղաքական ուժերը սկզբունքային տեսակետից դեմ էին Երևան տեղափոխվելուն, սակայն տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ձգձգվում էր այդ գործը: Երևան տեղափոխվելու ժամկետներն անընդհատ փոփոխվում էին: Սա առաջացնում էր հատկապես Երևանի գործիչների դժգոհությունը և կտրուկ պահանջը՝ անմիջապես տեղափոխվել Երևան: Հունիսի 26-ին Հայոց ազգային խորհրդի անդամներին ուղղված նամակում Արամ Մանուկյանը Երևանի ազգային խորհրդի անունից վերջնագրային պահանջ ներկայացրեց՝ պայման դնելով նամակը ստանալուց հետո երկշաբաթյա ընթացքում ժամանել Երևան՝ սպառնալով հակառակ պարագայում «հայտարարել Թիֆլիսի և ուրիշ տեղերի թերթերում, որ դուք այս երկրի ներկայացուցիչները չեք»<sup>38</sup>:

Արամի նամակը ստանալուց հետո՝ ԽՈՒԼԻՍԻ 6-ին տեղի ունեցած նիստում Հայոց ազգային խորհուրդը որոշեց նախապատրաստական աշխատանքներ կատարել՝ երկշաբաթյա ժամկետում Երևան տեղափոխվելու նպատակով: Սակայն ԽՈՒԼԻՍԻ 7-9-ին թուրքերի կողմից գինադադարի խախտման և էջմիածնի՝ վիճելի համարվող մի քանի գյուղերի ռմբակոծման լուրը Թիֆլիս հասնելուց հետո, Ազգային խորհրդի ԽՈՒԼԻՍԻ 12-ի նիստում ծավալված երկարատև վիճաբանությունների արդյունքում 8 կողմ ձայնով որոշվեց Երևան տեղափոխվելու փոխարեն այնտեղ ուղարկել արտակարգ լիազորություններով օժտված երեք ներկայացուցիչ: Այս որոշումից հետո Հ. Քաջազունին, ով, ինչպես տեսանք, Երևան տեղափոխվելու համոզված կողմնակից էր, հայտարարեց վարչապետի պաշտոնից հրաժարվելու մասին: Այս հանգամանքը վճռորոշ նշանակություն ունեցավ. ԽՈՒԼԻՍԻ 13-ին կայացած Հայոց ազգային խորհրդի նիստում վերջնականապես լուծում ստացավ Ազգային խորհրդի և կազմավորման ընթացքում գտնվող կառավարության տեղափոխության խնդիրը, և 7 կողմ ձայնով որոշվեց տեղափոխվել Երևան՝ «Հայաստանի իշխանությունը (կառավարություն, պառլամենտ) կազմակերպելու համար»: Հայոց ազգային խորհուրդն ու կառավարությունը Թիֆլիսից ճանապարհվելու էին ԽՈՒԼԻՍԻ 16-ին: Սակայն վրացիների հարուցած խոչընդոտների պատճառով ՀՀ ղեկավարները միայն ԽՈՒԼԻՍԻ 17-ի կեսօրին ճանապարհվեցին Թիֆլիսից և 19-ի երեկոյան ժամանեցին Երևան<sup>39</sup>:

37 Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 74-80, 104:  
38 Նույն տեղում, էջ 94-97:  
39 Մանրամասն տե՛ս **Խաչատրյան Ա.**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Եր., 2010, էջ 107-113, **Սուքիասյան Հ.**, Հայաստանի Հանրապետության իշխանության կենտրոնական մարմինների Երևան տեղափոխվելու հարցի շուրջ (1918 թ. մայիս-հուլիս), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 10, Եր., 2009, էջ 228-236:

#### 4. Կառավարության և խորհրդարանի ձևավորումը

ՀՀ իշխանության կենտրոնական մարմինների՝ Երևան ժամանելուց հետո Հայոց ազգային խորհրդի և Երևանի ազգային խորհրդի հուլիսի 20-ի և 22-ի համատեղ նիստերի ընթացքում, ինչպես նաև միջկուսակցական խորհրդակցությունների արդյունքում վերջնականապես որոշվեց Հայոց ազգային խորհրդի 15 հոգանոց կազմը եռապատկելով (բացի 3 անկուսակցական անդամներից) և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ներգրավելով ՀՀ գերագույն օրենսդիր մարմին՝ Հայաստանի խորհուրդ կազմավորելու մասին, ձգբրտվեց նաև ՀՀ կառավարության կազմը<sup>40</sup>:

Հուլիսի 24-ին Հայոց ազգային խորհուրդը պաշտոնապես հայտարարեց կառավարության կազմավորման մասին: ՀՀ անդրանիկ կառավարությունն ուներ հետևյալ կազմը. նախարար-նախագահ՝ Հովհաննես Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարձիկյան: Բացի անկուսակցական Հ. Հախվերդյանից՝ կառավարության մյուս անդամները դաշնակցականներ էին: Արդարադատության նախարարի պաշտոնը թափուր մնաց մինչև հուլիսի 28-ը, երբ նախարար նշանակվեց անկուսակցական, սակայն ժողովրդական կուսակցությանը հարող Գրիգոր Տեր-Պետրոսյանը<sup>41</sup>:

Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը գումարվեց 1918 թ. օգոստոսի 1-ին: Կուսակցական և ազգային տեսակետից այն ուներ հետևյալ պատկերը. 18 դաշնակցականներ, 6-ական ներկայացուցիչներ սոցիալ-դեմոկրատներից, սոցիալիստ-հեղափոխականներից և Հայ ժողովրդական կուսակցությունից, 2 անկուսակցականներ, 6 մահմեդական, 1 ռուս և 1 եզդի<sup>42</sup>: Օգոստոսի 6-ին խորհրդարանը հաստատեց Հ. Քաջազնունու կառավարության ծրագիրը, ինչից հետո ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան նորանկախ հանրապետության առջև ծառայած բազմաթիվ հիմնախնդիրների կարգավորմանը:

#### Եզրակացություններ

Հայաստանի անկախության վերականգնման և պետական կառավարման բարձրագույն մարմինների ձևավորման գործընթացի ներկա ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ **ձգբրտումները**:

**1. 1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմի լուծարման գործընթաց սկսելու վրացի մենշևիկների քայլը հայ գործիչների համար անակնկալ չի եղել: Վրացի գործիչներն այդ մասին նախապես տեղյակ էին պահել հայ և ադրբեջանցի գործընկերներին: Այդուհանդերձ, դա հայության շահերից չբխող, անընդունելի քայլ է ընկալվել:**

**2. Ավանդաբար Հայաստանի անկախության վերականգնման օր է համարվում 1918 թ. մայիսի 28-ը՝ թեև Հայոց ազգային խորհրդի հայտնի հայտարարությունը կատարվել է մայիսի 30-ին: Հայտարարության**

40 Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և ..., էջ 173-180, 182-184:

41 Տե՛ս նույն տեղում, էջ 192:

42 Տե՛ս «Ջանգ», Եր., 4 օգոստոսի 1918, N 42:

մեջ հիշատակություն չկար ո՛չ անկախության, ո՛չ էլ Հայաստան պետության ու նրա սահմանների մասին: Հայաստանի անկախության մասին հաջորդ շաբաթներին ևս հատուկ որոշում չի ընդունվել:

3. Բաթումի պայմանագրով որոշվել է միայն հայ-թուրքական սահմանագիծը, իսկ Վրաստանի և Ադրբեջանի հետ ՀՀ սահմանները չեն հստակեցվել: Ուստի տեղին չէ խոսել նորանկախ Հայաստանի 10 կամ 12 հազար քառ. կմ տարածք զբաղեցնելու մասին:

4. Հովհաննես Քաջազնունին Հայոց ազգային խորհրդի կողմից ՀՀ վարչապետ է ընտրվել հունիսի 7-ին, նրան հանձնարարվել է կոալիցիոն կառավարություն կազմել, ինչը չի հաջողել: Նույն հունիսի 7-ին են դրվել նաև Հայաստանի խորհրդի հիմքերը: Հունիսի 27-ին Հ. Քաջազնունուն հանձնարարվել է կառավարություն կազմել անհատական սկզբունքով:

5. Անկախ Հայաստանի իշխանության մարմինները Թիֆլիսից Երևան տեղափոխելու և կառավարությունը Երևանում վերջնականապես կազմակերպելու հարցում սկզբունքային դիրքորոշում ունեւ վարչապետ Հովհաննես Քաջազնունին: Հուլիսի 12-ին վարչապետի պաշտոնից նրա ներկայացրած հրաժարականը վճռորոշ նշանակություն ունեցավ այս հարցում. հաջորդ օրը գումարված նիստում Հայոց ազգային խորհուրդը որոշեց տեղափոխվել Երևան՝ կառավարություն և պառլամենտ կազմավորելու համար:

6. Հուլիսի 19-ին Հայոց ազգային խորհրդի և ձևավորվող կառավարության անդամների՝ Երևան ժամանելուց հետո վերջնականապես այստեղ ձևավորվեցին ՀՀ անդրանիկ կառավարությունն ու խորհրդարանը: ՀՀ կառավարության կազմավորման մասին Հայոց ազգային խորհուրդը պաշտոնապես հայտարարեց հուլիսի 24-ին, իսկ օգոստոսի 1-ին գումարվեց Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը:

**Համո Կ. Սուքիասյան** – Շուրջ 70 գիտական ուսումնասիրությունների (այդ թվում՝ 6 գրքի) հեղինակ է: Գիտական հետաքրքրությունների շրջանակը Հայաստանի նորագույն շրջանի պատմությունն է: Հիմնական աշխատությունները վերաբերում են Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) և Խորհրդային Հայաստանի (1920-1991 թթ.) դիվանագիտության պատմությանը, տարածքային-սահմանային խնդիրներին, պետական կառավարման մարմինների գործունեությանը, գրատպության, մշակույթի, մամուլի, քաղաքական մտքի, գրաքննության պատմությանը, աղբյուրագիտությանն ու պատմագրությանը:

Էլ-փոստ՝ hamosukiasyan@gmail.com

## Summary

### **THE INDEPENDENCE OF ARMENIA AND THE FORMATION PROCESS OF OFFICIAL GOVERNMENT BODIES**

(May–August, 1918)

Hamo K. Sukiasyan  
*Candidate of Historical Sciences*

**Key words** – Republic of Armenia, Transcaucasia, Georgia, Yerevan, Tiflis, Hovhannes Qajaznuni, Aram Manukyan, ARF Dashnaksutyun, Armenian National Council, prime-minister, parliament, government, state, activity, independence, history.

One of the most important questions of the history of the first Republic of Armenia is the problem of the formation and the activity of the central government bodies (parliament, government). In the article the process of the formation of the parliament and the government after the declaration of independence of Armenia on May 1918 is analyzed. We show that Hovhannes Kajaznuni was appointed to the position of Prime minister by the Armenian National Council on 7 June 1918. The same day the seeds of the Armenian parliament were laid. The parliament and the government were finally organized after the moving to Yerevan from Tbilisi. Prime Minister Hovhannes Kajaznuni had a principled position on moving the authorities of independent Armenia from Tbilisi to Yerevan and finally organizing the government in Yerevan.

## Резюме

### **СТАНОВЛЕНИЕ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ И ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ОРГАНОВ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ**

(май–август 1918 г.)

Амо К. Сукиасян  
*Кандидат исторических наук*

**Ключевые слова** – Республика Армения, Закавказье, Грузия, Ереван, Тифлис, Ованес Каджазнуни, Арам Манукян, АРФ Дашнакцутюн, Армянский национальный совет, премьер-министр, парламент, правительство, государство, деятельность, независимость, история.

Одним из важнейших вопросов истории первой Республики Армения является проблема формирования и деятельности органов государственного

управления (парламента, правительства). В статье анализируется процесс формирования парламента и правительства после восстановления независимости Армении в мае 1918 г. Ованес Каджазнуни Армянским национальным советом был назначен премьер-министром 7-го июня 1918 г. В этот же день были заложены основы парламента. Парламент и правительство Армении были окончательно образованы в Ереване. В вопросе перевода органов власти независимой Армении из Тифлиса в Ереван и окончательной организации правительства в Ереване принципиальную позицию проявил премьер-министр Ованес Каджазнуни.

## REFERENCES

1. “**Ashxatavor**”, Tiflis, 1918, N 54. (In Armenian)
2. **Babalyan A.**, Hayastani ankaxutyanyan patmutenen // “Hayreniq”, Boston, 1923, hunis (8). (In Armenian)
3. **Galoyan G.**, Hayastany yev mec terutyunnery 1917–1923 tt., Yer., 1999.
4. HAA, f. 201, c. 1, g. 36. (In Armenian)
5. **Hakobyan A.**, Hayastani xorhrdarany yev qaghaqakan kusakcutyunnery (1918–1920 tt.), Yer., 2005. (In Armenian)
6. **Harutyunyan M.**, Hay-vracakan haraberutyunnery 1918–1919 tvakannerin (namakner, zekucagrner), Yer., 2017. (In Armenian)
7. Hayastani ankaxutyanyan hrchakumy yev ishyanutyanyan kentronakan marminneri dzevavorumy (1918 t. mayis–hulis). Pastatgfteri yev nyuteri zhoghovacu, kazmogh, arajabani, yev canotagrutyunneri heghinak **H. Sukiasyan**, erkrord hrat., Yer., 2009. (In Armenian)
8. Hayastani Hanrapetutyuny 1918–1920 tt. (qaghaqakan patmutyuyun). Pastatgfteri yev nyuteri zhoghovacu, xmbagrutyanyan **G. Galoyani** yev **V. Ghazakhetsyani**, Yer., 2000. (In Armenian)
9. Hayoc patmutyuyun, hator III, girq 2, Yer., 2015. (In Armenian)
10. “**Horizon**”, Tiflis, 1918, N 104, 111, 128, 132. (In Armenian)
11. **Hovhannisian R.**, Hayastani Hanrapetutyuyun, hator I, Yer., 2005. (In Armenian) [http://arfarchives.org/wp-content/uploads/2009/05/arf\\_roa\\_0001\\_001.jpg](http://arfarchives.org/wp-content/uploads/2009/05/arf_roa_0001_001.jpg)
12. “**Mshak**”, Tiflis, 1918, N 108, 109, 122, 132. (In Armenian)
13. **Sukiasyan H.**, Hayastani Hanrapetutyanyan ishyanutyanyan kentronakan marminneri Yerevan teghapoxvelu harci shurj (1918 t. mayis–hulis) // “Hayoc patmutyanyan harcer (gitakan hodvacneri zhoghovacu)”, N 10, Yer., 2009. (In Armenian)
14. **Vracyan S.**, Hayastani Hanrapetutyuyun, Yer., 1993. (In Armenian)
15. **Vracyan S.**, Kyanqi ughinerov, hator 5, Beyrut, 1966. (In Armenian)
16. **Xachatryan A.**, Arevelahay yev turq divanagitakan haraberutyunnery, Yer., 2010. (In Armenian)
17. **Xatisyan A.**, Hayastani Hanrapetutyanyan cagumn u zargacumy, Beyrut, 1968. (In Armenian)
18. **Xondkaryan A.**, Opozician Hanrapetakan Hayastanum // “Vem”, Pariz, 1934, hunvar–petrvar (3). (In Armenian)
19. “**Zang**”, Yer., 1918, N 42. (In Armenian)



Աշոտ Ն. Հայրունի  
Պատմ. գիտ. դոկտոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԾԻՐՈՒՄ

(1918 թ. հունիս-նոյեմբեր)

**Բանալի բառեր** – Համո Օհանջանյան, Ավետիս Ահարոնյան, Թալեաթ, Օտտո ֆոն Լոսով, Արշակ Զուրաբյան, Յոֆֆե, Բեռլինի պատվիրակություն, Կոստանդնուպոլսի պատվիրակություն, Բրեստի պայմանագիր, Բաթումի պայմանագիր:

Իր գոյության առաջին ամիսներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձում էր ապավինել կայգերական Գերմանիայի աջակցությանը՝ 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրի վերանայման, դրանով ամրագրված՝ սահմանների փոփոխման, ինչպես նաև օրհասական վիճակում գտնվող հարյուր հազարավոր հայ փախստականների դրության բարելավման համար:

Այդ նպատակով Հայոց ազգային խորհրդի կողմից Բեռլին ուղարկվեցին Համո Օհանջանյանը և Արշակ Զուրաբյանը, որոնք լիազորված էին՝ այնտեղ հանդես գալու որպես Հայաստանի կառավարության պատվիրակություն: Պատվիրակությունն իր գործունեության ողջ ժամանակամիջոցում գերմանական կառավարությանը պարբերաբար ներկայացնում էր տեղեկագրեր և խնդրագրեր, որոնց միջոցով ջանում էր ձեռք բերել Գերմանիայի աջակցությունը: Պատվիրակությունը ոչ միայն ներկայացնում էր հայերի շարունակվող բնաջնջման թուրքական քաղաքականության աղետալի պատկերը, այլև փորձում էր ապացուցել ընդլայնված սահմաններով Հայաստանի շահութաբերությունը Գերմանիայի համար, այսինքն՝ գերմանական կառավարությանը շահագրգռել հանրապետության տարածքի տնտեսական գրավչությամբ<sup>1</sup>:

<sup>1</sup> Stü Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. **Wardges Mikaeljan**, Jerewan 2004, S. 520. Հմն. Deutschland und Armenien 1914–1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. **Johannes Lepsius**, Potsdam, 1919, S. 402. Հմն. պատվիրակության մյուս տեղեկագրերը



Պատվիրակության այդօրինակ պարզաբանումները, անկասկած, կշռադատված էին, քանի որ եթե Գերմանիայի կառավարությունը կարող էր այդուհետև ևս հայության ճակատագրի հանդեպ անտարբեր գտնվել, ապա տարածաշրջանում իր տնտեսա-քաղաքական շահերն անտեսել չէր կարող, առավել ևս, որ Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրի խախտումն ու թուրքական շարունակվող ներխուժումն արդեն իսկ լրջորեն մտահոգել էին գերմանական կառավարությանը, որը չէր ընդունում Բաթումի պայմանագրերը և Թուրքիային կոչ էր անում ճանաչել Բրեստի պայմանագիրն ու հետ քաշել իր զորքերը: Այդ պատճառով արդեն 1918 թ. հունիսին գերմանա-թուրքական փոխհարաբերություններում ի հայտ էր եկել զգալի լարվածություն:

Հունիսի 8-ին գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Էրիխ Լուդենդորֆը Էնվերին ուղարկեց մի հեռագիր՝ պահանջելով ճանաչել Բրեստի պայմանագրով հաստատված սահմանները: «Թուրքիան, առանց հաշվի առնելու իր դաշնակիցներին, խախտել է Բրեստում կնքված պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող կետերը,– նշում էր նա հեռագրում: – Գերմանական կառավարությունը դրա դեմ արդեն բողոք է հայտնել և մատնանշել նման վարքագծի հետևանքները: Ես ավելորդ չեմ համարում Ձերդ Գերագանցությանը հավաստիացնել, որ լիովին համամիտ եմ գերմանական կառավարության քայլերի հետ: ...Ձերդ Գերագանցությանը ես կրկին խնդրում եմ հարգել Բրեստի պայմանագրով հաստատված սահմանները, հակառակ դեպքում ես պետք է ինձ այլ որոշումների ազատություն վերապահեմ: Պայմանագրերը, որոնք Թուրքիայի և անդրկովկասյան պետությունների միջև կնքվել են՝ շրջանցելով Գերմանիան, Ավստրիան և Բուլղարիան, ես սկզբից եթե չեմ կարող ճանաչել: Ինչպես Ձերդ Գերագանցությանը հայտնի է, ես միշտ ջերմորեն պաշտպանել եմ Ձեր շահերն ու ցանկությունները: Ես պետք է Ձերդ Գերագանցությանը պարզ կերպով հայտնեմ, որ այսուհետև ոչ միայն չեմ կարող դա անել, այլև, որ Թուրքիայի՝ պայմանագրին հակասող գործելակերպը ինձ համար բացառում է Ձերդ Գերագանցության հետ ցանկացած համագործակցություն»<sup>2</sup>:

Հաջորդ օրը Էնվերին հեռագիր ուղարկեց նաև գերմանական բանակի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը, որտեղ մասնավորապես նշվում էր. «Բանակի գլխավոր հրամանատարության անունից ես Ձերդ Գերագանցությանը խնդրում եմ հրամայել, որ բոլոր թուրքական զորքերը ետ քաշվեն կովկասյան տարածքից՝ բացառությամբ Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների»<sup>3</sup>:

Այն, որ Թուրքիան մտադիր չէր տեղի տալ գերմանական պահանջներին և, սակայն, չէր կամենում նաև բարդացնել իր հարաբերությունները դաշնակցի հետ, կարող է վկայել Էնվերի կողմից հունիսի 10-ին գեներալ Լուդենդորֆին ուղարկված հեռագիրը, որն, ի դեպ, նաև Թուրքիայի պանթուրքական նպատակների նորովի բացահայտման ուշագրավ վկայական է: «Ղրիմի օպերացիայի ժամանակ գերմանական գլխավոր շտաբը մեր

նշված երկու ժողովածուներում:

2 Deutschland und Armenien 1914-1918..., S. 393-394.

3 Ադդ. էջ 394:

գորքերի մասնակցությունը ցանկալի չհամարեց,– նշում էր Էնվերը հեռագրում,– և չնայած մենք նույնպես այդ հարցում շահագրգռված էինք, մեր մասնակցության համար չպնդեցինք ու ընդունեցինք գերմանական գլխավոր շտաբի տեսակետը: Պարզ և հստակ է, սակայն, որ մենք առաջին հերթին կովկասյան հարցում համաշահագրգռություններ ունենք: ...Մեզ, ըստ այդմ, ապշեցնում է, որ մեզ սաստիկ հետաքրքրող մի երկրամասում մի նման կարևոր հարցի վերաբերյալ մեր տեսակետներն ու կարծիքները չեն լսվում: ...Մենք Գուրիեստանում<sup>4</sup> մեծ հետաքրքրություններ չունենք, սակայն հայերը գտնվում են մեր և Արևելքում գտնվող մուսուլմանական զանգվածների միջև: Այդ վիճակը մեզ հարկադրում է սոսկ դիտորդներ չմնալ: Այդ պատճառով ես նորին գերագանցություն գեներալ Լուդենդորֆին թախանձագին խնդրում եմ այդ հարցերի վերաբերյալ իր տեսակետը ժամանակին և ճշգրիտ կերպով տեղեկացնել ինձ»<sup>5</sup>:

Գերմանական կողմի վերոնշյալ պահանջները չիրականացան, ըստ որում՝ ոչ միայն այն պատճառով, որ Թուրքիան մտադիր չէր հեշտությամբ տեղի տալ, այլև, որ Գերմանիան ևս դրանց իրագործմանը հետևողակա՛նորեն հետամուտ լինելու մտադրություն չուներ: Դրանք վերջինիս անհրաժեշտ էին առաջին հերթին թուրքական կառավարությանը սաստելու, նրա գործողությունները վերահսկելի, ուղղորդելի դարձնելու և միաժամանակ նաև իր դիրքերը Կովկասում ամրապնդելու համար: Քանի որ Գերմանիան մտադիր չէր ընդունել Կովկասում Թուրքիայի գերիշխանության հավակնությունները, երկու կողմերն ի վերջո ձեռք բերեցին պայմանավորվածություն, որ Քառյակ դաշինքի բոլոր պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Կոստանդնուպոլսում հրավիրվի մի համաժողով՝ Կովկասին վերաբերող սահմանային և տարածքային խնդիրները համատեղ կերպով վճռելու համար:

Համաժողովին մասնակցելու նպատակով Հայոց ազգային խորհրդի կողմից հունիսի 13-ին Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ Կոստանդնուպոլիս ուղարկվեց ՀՀ կառավարությունը ներկայացնող մի պատվիրակություն, որն այնտեղ ժամանեց հունիսի 19-ին<sup>6</sup>: Գրեթե միաժամանակ Կ. Պոլիս մեկնեցին նաև վրացական պատվիրակները՝ Գեգեչկորու ղեկավարությամբ, որոնց հետևեցին թաթարներն ու Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչները:

Հայ պատվիրակները Կ. Պոլսում հանդիպումներ ունեցան Թալեաթի, Էնվերի, արտգործնախարար Նեսիմի բեյի, ծովային նախարար Ջեմալի, արդարադատության նախարար Հալիլի, երիտթուրքական կոմիտեի ղեկավարներ Բեհաէդդին Շաքիրի, Ռիզա բեյի, ծովակալ Ռաուֆ բեյի և այլ պաշ-

4 Խոսքը թերևս Գուրիայի, իսկ հնարավոր է՝ ողջ Վրաստանի (Գուրջիստան) մասին է, որտեղ նույնպես ներխուժել էին թուրքական զորքերը:

5 Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., s. 527-528.

6 Պատվիրակությանը անդամակցում էին Ա. Խատիյանը, Մ. Պապաջանյանը, Գ. Ղորղանյանը, Հ. Քոչարյանը, Տ. Միրզայանը, Լ. Լիսիցյանը, Ա. Աղաբաբյանը և որպես սպասավոր՝ Ա. Հարությունյանը: Պատվիրակության օրագրությունը տես ՀՀ ԱՄ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 1-2: Հմմտ. **Խատիյան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրուզ, 1968, էջ 95: Պատվիրակությունը Կ. Պոլիս ուղարկվեց Հայոց ազգային խորհրդի հունիսի 12-ի որոշումով, այն բանից հետո, երբ ստացվել էր Թալեաթ փաշայի անունից Հալիլ բեյի ուղարկած հետևյալ հեռագիրը. «Մեր դաշնակիցների ներկայացուցիչները ուզում են բարեկամական դաշն կապել Կովկասի պետությունների հետ և արդեն Պոլսում են: Խնդրում են ժամանել նաև Հայաստանի ներկայացուցիչներին՝ Պոլսում բանակցություններ սկսելու»: Տես անդ, ց. 1, գ. 120, թ. 40:

տոնյաների հետ, որոնց, ներկայացնելով հանրապետության բնակչության ծանր կացությունն ու գաղթականների անհուսալի վիճակը, խնդրում էին այնպիսի սահմաններ հատկացնել, որ այն կարողանար կենսունակ դառնալ<sup>7</sup>:

Թուրքական կառավարությունը մինչև խորհրդաժողովի հրավիրումը ջանում էր ձեռք բերել Գերմանիայի համաձայնությունը Բաթումի պայմանագրով գծված սահմանների պահպանման հարցում՝ այնուհետև մյուս դաշնակիցներին այդ սահմանների ճանաչումը թելադրելու համար: Տեղեկանալով, սակայն, որ Գերմանիան շարունակում է պաշտպանել Բրեստի պայմանագրի պահանջների կատարումը և կողմ է ազգագրական սահմաններ ստեղծելուն, Թուրքիան այլևս չէր շտապում խորհրդաժողովը հրավիրել և որդեգրեց այն շարունակ ձգձգելու մարտավարությունը: Թուրք պաշտոնյաները միաժամանակ, ի պատասխան, Հայաստանի Հանրապետության սահմանները փոքր-ինչ ընդլայնելու և խորհրդաժողովը հնարավորինս շուտ հրավիրելու՝ հայկական պատվիրակության խնդրանքներին, առաջ էին քաշում թուրք-հայկական դաշինքի կամ, այլ կերպ ասած՝ «սրտակից համաձայնության» կնքման և դրա շրջանակներում բոլոր հարցերի շուրջ համաձայնության գալու գաղափարը: Էնվերը մինչև իսկ պարզորոշ հայտարարում էր, որ եթե այդ դաշինքը չկնքվեր, ապա հայերի հետ ոչ մի հարց չէր քննարկվի: Մեղ ադրելով հայերին Ռուսաստանի և Անգլիայի հետ հույսեր կապելու համար՝ նա ՀՀ կառավարությունից պահանջում էր հրաժարվել չեզոքության քաղաքականությունից, Թուրքիայի հետ լինել «ոչ միայն լավ հարևաններ, այլև լավ դաշնակիցներ», նրա հետ մտնել կոնֆերանցիայի մեջ և կնքել «սրտակից համաձայնություն», որի դեպքում կբացառվեր որևէ երրորդ կողմի միջամտության հավանականությունը: Ինչպես Էնվերը, այնպես էլ նշված մյուս թուրք գործիչները, որոնց հետ պատվիրակությունը հանդիպումներ էր ունենում, փորձում էին հայերին հետ պահել այլ պետությունների հետ շփումներից և մինչև իսկ չէին թաքցնում իրենց դժգոհությունը Բեռլինում հայկական պատվիրակության գտնվելու կապակցությամբ՝ պնդելով, որ հայերը պետք է միայն իրենց հետ հարաբերություններ հաստատեին:

Անտան ողջ ընթացքում Բեռլինում և Կ. Պոլսում գտնվող երկու պատվիրակությունները ջանում էին սովախար հայ փախստականությանն իր հայրենի բնակավայրերը վերադարձնելու և Բրեստի պայմանագրի գործադրման համար հայցել Գերմանիայի աջակցությունը: Պետք է նշել, որ, ի տարբերություն Գերմանիայի քաղաքական ղեկավար շրջանների, բանակային հրամանատարությունն անհամեմատ ավելի հստակ դիրքորոշում էր ցուցաբերում Թուրքիային և Կովկասին վերաբերող խնդիրներում և հունիսին թերևս հույս ուներ, ստանալով պաշտոնական Գերմանիայի հավանությունը, Թուրքիային իրոք հետ մղել Կովկասից՝ այդ տարածաշրջանին, նաև Բաքվին ու նրա նավթային հարստություններին միայնակ տիրելու համար: Համենայն դեպս, այդ հարցում Գերմանիայի բարձրագույն զինվորական

7 Տե՛ս Ավետիսյան Հրանտ, Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 264-265: Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև Ավստրո-Հունգարիայի դեսպանի պաշտոնակատար Սցիլասի, ռազմական գլխավոր ներկայացուցիչ Յ. Պոմյանկովսկու, Բուլղարիայի և չեզոք երկրների դեսպանների, ինչպես նաև Հռոմի Պապի ներկայացուցչի հետ: Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 56-70, հմտու. անդ., ց. 2, գ. 34, թ. 1-3:

Ժ (ԺԶ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎՎ համահայկական հանդես

շրջաններում առկա էր միասնական տեսակետ: «Ես համոզված եմ, որ մենք դեռ երկար պետք է պայքարենք թուրքերի ակտիվ և պասիվ դիմադրության դեմ, մինչև նրանք կհրաժարվեն Կովկասից մի քանի միլիարդ Կոստանդնուպոլսի հանցախմբի համար կորզելու պլանից,– նշում էր գեներալ Օտտո ֆոն Լոսովը բարձրագույն հրամանատարությանն ուղղված իր հուլիսի 6-ի տեղեկագրում: –Պանիսլամական և պանթուրանական իմպերիալիստական քաղաքականությունը, որի դրոշի տակ պետք է կատարվի Կովկասի հյուսթաքանումը, հենց իր՝ Էնվերի կողմից է ռազմական միջոցներով գործի դրվել: ...Կովկասում Գերմանիայի բազմաթիվ տնտեսական շահեր վտանգված են, առանձնապես նրանք, որ կապված են մանգանի, նավթի, բրդի և հատկապես բամբակի հետ, որոնց կարիքը մենք կունենանք, եթե հետագա տնտեսական պատերազմում չենք կամենա պարտվել: Այդօրինակ կարևոր տնտեսական շահերը կարող են պաշտպանվել միայն զուգահեռաբար առկա քաղաքական շահերի պաշտպանման դեպքում: Եթե թուրքերը քաղաքականապես վճռորոշ դերակատարում ունենան, ապա մեր տնտեսական շահերը տանուլ կտրվեն: Պետք է թուրքերին կրկին ու կրկին հայտարարվի, որ մենք բնավ չենք ստածում Կովկասում մեր տնտեսական և քաղաքական շահերը զոհաբերել նրանց հեղինակության պահպանման համար: Մանավանդ որ հեղինակության այդ ամբողջ խնդիրը միայն կողոպուտի պատրվակ է»<sup>8</sup>:

Ինչ վերաբերում էր Հայաստանին, ապա Լոսովն այդ հարցի շուրջ ևս Գերմանիայի շահերն ու Թուրքիայի ցանկությունները համատեղելի չէր համարում: «Այն, որ Թուրքիան միայն մի փոքրիկ Հայաստան կկամենա հանդուրժել, հասկանալի է,– նշում էր նա: –Արդյո՞ք, սակայն, Գերմանիան կարող է այն մեղադրանքներից հետո, որոնք մեր հանդեպ թուրքահայերի բնաջնջման պատճառով կատարվում են, հետայսու համաձայնել նաև ռուսահայերի ոչնչացման հետ, պետք է վճռեն քաղաքական շրջանակները»<sup>9</sup>:

Հուլիսի առաջին կեսին գերմանական բանակի գլխավոր շտաբում տեղի ունեցավ կովկասյան պետություններին ու Պարսկաստանին վերաբերող քննարկում, և ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնց կիրառումը կարող էր էապես փոխել Հայաստանի Հանրապետության և Կովկասում կուտակված հայության անելանելի դրությունը: Լուդենդորֆը նույնպես իր համաձայնությունը տվեց այդ որոշումների գործադրմանը՝ ֆոն Լոսովին հանձնարարելով արտգործնախարարության պետքարտուղարին այդ մասին զեկուցել և խնդրել նրան հոգ տանել, որ այդ որոշումների առնչությամբ ռազմական և քաղաքական իշխանությունների փոխհամաձայնությունն ապահովվեր: Այս որոշումներում, որոնք ֆոն Լոսովը հուլիսի 15-ին ուղարկեց արտգործնախարարությանը, Հայաստանի առնչությամբ, մասնավորապես, արտահայտում էր գերմանական բանակի հրամանատարության ձգտումը՝ հասնելու այն բանին, որ ավստրո-հունգարական բանակի գլխավոր հրամանատարությունը Հայաստան ուղարկել գումարտակներ և մարտկոցներ՝ այնտեղ նույն առաքելությամբ հանդես գալու համար, ինչպես գերմանացիները՝ Վրաստանում: Ընդ որում՝ ընդգծվում էր, որ այդ զինված

<sup>8</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., s. 550.

<sup>9</sup> Անդ:

ուժերի առաջնագույն խնդիրներից մեկը պետք է լիներ ապահովել հայերի անվտանգությունը թուրք-թաթարական կոտորածների սպառնալիքից: Բացի այդ՝ ցանկալի էր համարվում, որ դաշնակիցների օգնությամբ հայկական զինված ուժերը կազմակերպվեին ու դարձյալ գործուն դառնային, ճիշտ այնպես, ինչպես գերմանացիները կամենում էին դա անել Վրաստանում<sup>10</sup>:

Այս փաստաթուղթը՝ որպես հայկական խնդրի առնչությամբ գերմանական բանակի գլխավոր հրամանատարության կողմից ցուցաբերված հստակ և միասնական դիրքորոշման աննախադեպ վավերագիր, կարող էր միանգամայն փոխել Հայաստանի Հանրապետության և այնտեղ կուտակված փախստական հայության ծանր դրությունը, եթե միայն համապատասխան ըմբռնում գտներ նաև Գերմանիայի քաղաքական շրջանակներում: Պաշտոնական Գերմանիան, սակայն, հակված չէր ցուցաբերելու համապատասխան հետևողականություն, որից և վարպետորեն կարողացավ օգտվել Թուրքիան՝ իրեն ուղղված պահանջները չկատարելու, զանազան պատրվակներով Կովկասում իր դիրքերն ամրապնդելու և միաժամանակ դեպի Բաքու իր առաջխաղացումը շարունակելու համար:

Ուշագրավ է, որ այդ օրերին ՀՅ Դաշնակցությունը փորձում էր Ռուսաստանից ևս Գերմանիային ազդակներ հաղորդել՝ միջամտելու ի նպաստ հայերի՝ օգտագործելով Բաքվի խաղաքարտը: Մոսկվայում Գերմանիայի հավատարմատար Ռիցլերը 1918 թ. հուլիսի 25-ին ԱԳՆ-ին տեղեկացնում էր, որ հայ պատգամավոր Հ. Զավրիևը նրան ազդու պարզաբանումներ է ներկայացրել հայության «անտանելի դրության» մասին: Տեղահանված և փախստական հայերի օրհասական վիճակը ներկայացնելու հետ մեկտեղ նա հավատարմատարին հայտնել էր, որ Բաքվում փաստացի իշխանությունը հայերի ձեռքում է, իսկ տեղական բոլշևիկյան կառավարությունը կախման մեջ է գտնվում նրանցից, և եթե գերմանական կողմը հայերին օգնելու որևէ քայլ չանի, ապա նրանք հուսահատության մեջ որևէ այլ պետությունից օգնություն կխնդրեն<sup>11</sup>:

Քաջատեղյակ լինելով Բաքվի նավթահանքերին տիրանալու՝ Գերմանիայի շահագրգռություններին՝ Հ. Զավրիևն ակնհայտորեն փորձել էր վերոնշյալն օգտագործել որպես խաղաթուղթ՝ գերմանական կողմին օգնության քայլերի դրդելու համար: Միևնույն ժամանակ նա հավատարմատարին ակնարկել էր, որ հայերի միջոցով կարելի էր հասնել Բաքվի հարցի՝ Գերմանիայի համար ցանկալի կարգավորման, եթե վերջինիս միջամտությամբ և երաշխիքների ներքո փախստական հայերին հնարավորություն տրվեր վերադառնալ նախկինում ռուսական տիրույթում գտնվող իրենց բնակավայրերը: Ռիցլերը նույն հեռագրում հայտնում էր մեկ այլ աղբյուրից ևս իրեն հասած տեղեկությունն այն մասին, որ Բաքվում փաստացի իշխանությունը գտնվում է հայերի ձեռքում, և «կասկածից դուրս» էր համարում այն հանգամանքը, որ Բաքուն նրանց կողմից պարբերաբար ավերածությունների կենթարկվել, եթե Գերմանիան հայերի հետ փոխըմբռնման չհասներ:

Թուրք-թաթարական շրջափակման մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության կառավարությունը Կ. Պոլսում և Բեռլինում գտնվող իր պատ-

10 Stü Deutschland und Armenien 1914-1918..., s. 409-410.

11 Stü Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., s. 559.

վիրակությունների միջոցով գործադրում էր բոլոր ջանքերը Գերմանիայի աջակցությունը ստանալու համար: Բեռլինի պատվիրակությունը, ի հաստատումն իր կողմից նախկինում արտգործնախարարությանը ներկայացված տեղեկատվության, հուլիսի 15-ին Գերմանիայի ԱԳՆ-ին ներկայացրեց նաև քաղվածքներ վերջին օրերին ստացված նամակներից ու տեղեկություններից: Դրանք սկսվում էին Ա. Ահարոնյանի՝ հունիսի 11-ի նամակից բերված քաղվածքներով, որոնցում հաղորդվում էր, որ թուրքական առաջխաղացման հետևանքով հայ բնակչությունը հարյուր հազարներով փախուստի էր դիմել: Այսպիսի շրջանն արդեն ամբողջությամբ դատարկված էր, քաղաքը հրկիզված և փլատակված էր: Շրջանի 80.000-ի հասնող բնակչությունը փախել էր և ապաստանել Բակուրիանիի կիրճերում: Նշվում էր նաև, որ Սուրմալուից, Ալեքսանդրապոլի և Կարսի բոլոր գրավված շրջաններից, Էջմիածնից և մյուս այն տարածքներից, որտեղ ներխուժել են թուրքերը, բնակչությունը զանգվածային փախուստի է դիմել և տասնյակ հազարներով ոչնչացվել: Այն փաստը, որ թուրքերը Ալեքսանդրապոլ քաղաքից և շրջակայքից ողջ հայ երիտասարդությանը հավաքել և Թուրքիայի խորքն էին տարել, այնպիսի սարսափ է հարուցել, գրում էր Ազգային խորհրդի նախագահը, որ ոչ մի փախստական այլևս չէր կամենում վերադառնալ թուրքերի կողմից նվաճված շրջանները: «Այնպես է երևում, որ Գերմանիան Վրաստանի հանդեպ լուրջ և վճռական պարտավորություններ է ստանձնել, որոնք ազնվորեն և արիաբար իրականացնում է, մինչդեռ մեր խնդիրը դեռ կախված է օդում,– նշում էր Ահարոնյանը նամակում: ...Հայ ժողովուրդը փախուստի ձիրաններում կործանվում է, ինչպես կործանվել է Թուրքահայաստանում: Գերմանիան, որը հարկադրված էր Թուրքահայաստանում հայերի հանդեպ իրականացված այդ սոսկալի ոճրագործությունը հանդուրժել, քանի որ նրա ձեռքը չէր հասնում, այժմ միթե կամենում է հանդուրժել, որ նաև այստեղ՝ Կովկասում, հայ ժողովուրդը սովի և փախուստի միջոցով բնաջնջվի, քանի որ այժմ Գերմանիայի ձեռքը հասնում է, և նա կարող է հրաշք գործել, եթե ցանկանա: ...Թուրքերը փաստորեն այսօր տիրում են ողջ Ադրբեջանին: Նրանք տիրում են նույնիսկ այն հայկական շրջաններին, որոնք խաղաղության վերջին պայմանագրից հետո չպետք է թուրքական տիրապետության տակ լինեին: Թուրքական զորքերը նվաճված են պահում Լոռին, Ղազախը, Բորչալուն: Մենք Երևանից տեղեկություններ չունենք: Մենք կտրված ենք: Երկաթուղին և հեռագրատունը չեն գործում, վիճակն անտանելի է: Մենք նույնիսկ խաղաղության հաստատման լուրը չկարողացանք հայտնել գեներալ Նազարբեկովին: Մենք կտրված ենք նաև Բաքվից: Մենք փորձում ենք մեր հայկական հանրապետության կառավարությունը կազմել, բայց Երևան մեկնելու ոչ մի հնարավորություն չկա: Մեր ժողովուրդը անտեր է, մեր փախուստը՝ անվերջ, մահացությունը՝ ահռելի չափերի: Մենք պետք է որոշակիորեն և իսկույն ևեթ իմանանք՝ Գերմանիան կամենո՞ւմ է մեզ պաշտպանել, թե՞ ոչ»<sup>12</sup>:

Գերմանիայից օգնություն խնդրելու համար 1918 թ. հունիսի երկրորդ կեսին իր կյանքը բազմիցս վտանգելով, ձիով հատելով թաթարական հրոսակների կողմից վերահսկվող լեռնաշղթաները՝ Երևանից Թիֆլիս մեկնեց

<sup>12</sup> Deutschland und Armenien 1914-1918..., S. 405-406.

նան Մեսրոպ եպիսկոպոսը, որը նախկինում եղել էր հայոց եկեղեցու՝ Թիֆլիսի թեմակալը և իր կրթությունը ստացած լինելով Դորպատում՝ վարժ տիրապետում էր գերմաներենին: Նա հանդիպում ունեցավ Վրաստանում Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար գեներալ Կրես ֆոն Կրեսենշտայնի<sup>13</sup> հետ՝ նրան նկարագրելով հայության աղետալի դրությունը: Ըստ նրա տեղեկությունների, եթե հայերին չթույլատրվեր վերադառնալ Սարդարաբադ-Իզդիբիլի և Դարվալայի (Դավալուի-Ա. Հ. ) շրջանները և այնտեղ գտնվող բերքը հավաքել, ապա առնվազն կես միլիոնի հասնող փախստականներին սովամահություն էր սպասում: «Հավատարժան և վաստակաշատ եպիսկոպոսի նկարագրությունները ցնցող են, - գրում էր Ֆոն Կրեսը հուլիսի 10-ին արտոգործնախարարությանն ուղարկած իր հեռագրում: -Ողջ հայ ազգը ամբողջական մեկուսացման միջոցով սովամահ անելու՝ թուրքերի դիտավորությունը պարզ և ակնհայտ է: Ըստղը հայ փախստականներին և Հայոց ազգային խորհրդին վերադառնալու թույլտվություն տալու իմ խնդրանքը չնչին պատրվակներով մերժել է: Մարդկայնությունը և քաղաքականությունը շտապ կերպով պահանջում են կենտրոնական տերությունների կողմից ամենաուժեղ ճնշումը գործադրել թուրքերի վրա»<sup>14</sup>:

Հաջորդ օրը՝ հուլիսի 11-ին, ֆոն Կրեսը մի նոր ընդարձակ տեղեկագիր ուղարկեց, այս անգամ ուղղակիորեն կանցլեր ֆոն Հերտլինգին, որում ազդու և սրտառուչ կերպով ներկայացնելով հանրապետության և փախստական հայության համար ստեղծված օրհասական դրությունը՝ նա վերստին ընդգծում էր Թուրքիայի վրա կոշտ ճնշման գործադրման անհրաժեշտությունը: Տեղեկագրում նաև հաղորդվում էր, որ հազարավոր փախստականներ շաբաթներ ի վեր միայն խոտ էին ուտում, սովահար մարդկանց մեջ բռնկվել էին համաճարակներ, որոնք անհաշիվ զոհեր էին խլում, և եթե նրանց չթույլատրվեր վերոնշյալ շրջաններում գյուղատնտեսական բերքը հավաքել, ապա համընդհանուր սովամահությունն անխուսափելի էր: «Եպիսկոպոսը հայ ազգի անունից և, որպես քրիստոնյա եկեղեցու սպասավոր, դիմում է Նորին մեծություն կայսրին և գերմանական կառավարությանը, - նշում էր ֆոն Կրեսն իր տեղեկագրում: -Նա ընդգծում է, որ միայն Գերմանիան է ի վիճակի Թուրքիային ստիպել, որ նա հրաժարվի իր կողմից հանցավոր կերպով իրագործվող՝ հայ ազգի չնչին մնացորդներին սիստեմատիկ կերպով սովամահ անելու քաղաքականությունից: Գերմանիան պարտավոր է գիտակցել, որ պատմության առջև պատասխանատվություն է կրելու, եթե իր իշխանությունը չօգտագործի մի քրիստոնյա ազգի մահմեդականների կողմից բնաջնջվելուց պաշտպանելու համար: Ես որպես իմ անձնական նկատառում կկամենայի Ձերդ Գերագանցությանը հաղորդել, որ այն բոլոր տեղեկություններից և տեղեկագրերից հետո, որոնք ես այստեղ ստացել եմ, չի կարող կասկածի ենթակա լինել, որ թուրքերը սիստեմատիկ կերպով ձեռնամուխ են եղել մի քանի հարյուր հազար հայերին, որոնց նրանք մինչև այժմ դեռ կենդանի են թողել, սիստեմատիկ սովամահության միջոցով բնա-

13 Քանի որ Կրես ֆոն Կրեսենշտայնը իր տեղեկագրերի ներքո ստորագրում էր «ֆոն Կրես», մենք օգտագործել ենք նաև այդ անվանումը:

14 Ադդ, էջ 402-403:

ջնջելուն: Իմ իրավասության մեջ չի մտնում Ձերդ Գերագանցության ուշադրությունը հրավիրել այն պարտավորությունների վրա, որոնք Գերմանիան՝ որպես քրիստոնյա ազգ, պետք է իրագործի քրիստոնյա հայերի հանդեպ, ինչպես և այն տպավորության վրա, որ կատանան մեր հասարակական կարծիքը և ամբողջ քրիստոնյա աշխարհը, եթե մենք հայերին կործանումից չփրկենք: Ես, սակայն, կարող եմ Ձերդ Գերագանցության ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ եթե մեզ չհաջողվի հայերին թուրքերից պաշտպանել, ապա Կովկասում և շրջակա տարածքներում մեր հեղինակությունը մեծ վնասներ կկրի, և էսպես կդժվարանա այն տնտեսական ու քաղաքական ծրագրի իրագործումը, որին մենք այստեղ հետամուտ կլինենք: Մեզ վճռականորեն կմեղադրեն այն բանում, որ բարի կամք չենք ցուցաբերել, կամ կընդունեն, որ մենք թուրքերին մեր կամքը թելադրելու ուժ և իշխանություն չունենք: Մենք բազմաթիվ և իրենց մեծ հարստության հետևանքով խիստ ազդեցիկ՝ հայկական ծագում ունեցող վրացիներին կդարձնենք մեր անհաշտ թշնամիները և մեր դեմ մի առանձնապես ազդու պրոպագանդայի նյութ կտանք մեր հակառակորդներին:

Այդ պատճառով ես Ձերդ Գերագանցությանը որքան հնազանդորեն, նույնքան թախանձագին խնդրում եմ բոլոր հնարավոր միջոցներով և հնարավորինս արագ ազդու ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա, որպեսզի նա անմիջապես իր գորքերը Հայաստանից ետ քաշի, փախստական հայերին թույլատրի վերադառնալ իրենց հայրենիքը և հոգ տանի, որ հայերը անարգել և առանց իրենց կյանքն ու ունեցվածքը վտանգելու կարողանան բերքը հավաքել, նաև, որ հարկադիր աշխատանքի ուղարկված հայերն անմիջապես ազատվեն ու վերադառնան իրենց հայրենիքը»<sup>15</sup>:

Ֆոն Կրետը հուլիսի 30-ին իր շտաբի մի շարք անդամների հետ, որոնց թվում էին Վրաստանում Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ բարոն Ֆրանկենշտայնը և Բուլղարիայի ներկայացուցիչ Կուլաշևը, Թիֆլիսից Ալեքսանդրապոլով մեկնեց Երևան, իսկ այնուհետև Էջմիածին<sup>16</sup>, հանդիպումներ ունենալով ինչպես ՀՀ կառավարության, այնպես էլ կաթողիկոսի հետ<sup>17</sup>: Նա և իր պատվիրակությունը նաև հրավեր ստացան մասնակցելու օգոստոսի 1-ին Երևանում պառլամենտի բացման հանդիսավոր արարողությանը: Ֆոն Կրետը, սակայն, իր մասնակցությունն այդ միջոցառմանը նպատակահար-

15 Անդ, էջ 403-404: «Եթե Հայաստանի կառավարության և ավագագույն հոգևորականության՝ օգնության հուսահատ կանչերը դառնան ձայն բարբառո հանապատի,- նշում էր գեներալ Ֆոն Կրետենշտայնն իր, կառավարությանն ուղղված մեկ այլ հեռագրում,- ապա այդ հին քրիստոնյա ժողովրդի ոչնչացման պատասխանատվությունը հավերժ կծանրանա Գերմանիայի և Ավստրիայի վրա: Պատմությունը գիջում չի կատարելու և չպետք է կատարի այն հարցում, որ Կենտրոնական Եվրոպայի երկու մեծ քրիստոնյա տերություններն ի վիճակի չեղան գոնե այս դեպքում, երբ հարցը վերաբերում է մի ամբողջ ժողովրդի լինել-չլինելուն, իրենց կամքը պարտադրել իրենց սպիացի դաշնակցին»: Անդ, էջ 431:

16 Ֆոն Կրետը, ինչպես հաղորդվում էր նրա՝ օգոստոսի 5-ի տեղեկագրում, Երևան էր մեկնել Հայաստանի կառավարությանը ներկայանալու նպատակով:

17 Էսադ փաշան, իր նախնական հանձնառության համաձայն, հոգ էր տարել, որ նրանք առանց որևէ բարդության անցնեին թուրքերի կողմից գրավված տարածքով: Հուլիսի 30-ի երեկոյան, երբ նրանք հասան Երևան, քաղաքագլխի կողմից հրավիրվեցին ճաշի: Հաջորդ օրն առավոտյան հանդիպումներ ունեցան նախարարների և Ազգային խորհրդի նախագահի հետ, իսկ այնուհետև մեկնեցին Էջմիածին, որտեղ նրանց ընդունեց կաթողիկոսը: Կեսօրից փոքր-ինչ անց վարչապետն ու Ազգային խորհրդի նախագահը նրանց հետ բավական երկարատև առանձնագրույց ունեցան: Այնուհետև ի պատիվ հյուրերի, հանրապետության բարձրաստիճան անձանց մասնակցությամբ կազմակերպվեց բանկետ: Տե՛ս Deutschland und Armenien 1914-1918..., S. 423:



մար չհամարեց, քանի որ, թեև հայերի համար Գերմանիայի օգնությունն ապահովելու՝ նրա գործադրած հետևողական ջանքերին, դրանք դեռ էական արդյունքներ չէին տվել, և նա իրավացիորեն այն մտավախությունն ուներ, որ իր մասնակցությունը հայերի մեջ անիրագործելի հույսեր կարթնացներ Գերմանիայի աջակցության վերաբերյալ: Ուստի նա և իր պատվիրակության անդամները, բացառությամբ բարոն Ֆրանկենշտայնի, որն այդ օրը արարողությանը մասնակցելու համար մնաց Երևանում, հուլիսի 31-ի երեկոյան վերադարձան Թիֆլիս<sup>18</sup>:

Վերադարձից հետո, դեռ նախքան իր հիմնական տեղեկագրի պատրաստումը, գեներալը օգոստոսի 4-ին կանցլերին ուղարկեց մի հեռագիր, որտեղ ընդգծում էր, որ իր այցելությունը, դիտարկումներն ու զրույցները կրկին հաստատում են, որ միայն կենտրոնական տերությունների շուտափույթ օգնության դեպքում Հայաստանը կարող է փրկվել կործանումից: «Ներկայիս փոքրիկ Հայաստանը չի կարող մինչև իսկ իր տեղացի բնակչությանը կերակրել, ուր մնաց՝ այնտեղ գտնվող երեքից հինգ հարյուր հազար փախստականներին...»- գրում էր գեներալը: – Փախստականների ծանր դրությունը, կառավարության կամքին հակառակ, տևականորեն հանգեցնում է բանդաների ձևավորման և այդպիսով թուրքերի հետ նոր խառնակությունների: Հայաստանը թուրքերի կողմից ամբողջովին մեկուսացված է: Նրանք արգելում են ցանկացած առևտուր և երթևեկություն, թաթար և պարսիկ բնակչությանը դրդում են գաղթել, այնպես որ հայկական կառավարությունը երկյուղ է կրում, որ կհարձակվեն Երևանի վրա: Թուրքերը նաև այստեղ չեն պահպանել Բաթումի խաղաղության պայմանագրի պայմանները և գրավված են պահում Բաթումի սահմանից այն կողմ գտնվող կարևոր տարածքներ: Հայաստանը կարող է կենսունակ դառնալ միայն Բրեստ-Լիտովսկի սահմաններով՝ առանց թուրքերի կողմից պահանջվող սահմանային շտկումների, որոնց դեպքում Թուրքիային կհանձնվեն տնտեսապես հենց ամենակարևոր շրջանները»<sup>19</sup>:

Ֆոն Կրեսը միաժամանակ ընդգծում էր, որ ներկայումս արտադրության համար պիտանի շրջանները գրեթե ամբողջովին գրավված են թուրքերի կողմից, որոնք մեծ քանակությամբ բամբակի պաշարներ են արտահանում, ընդ որում՝ բերքի մի մասը հավաքում են թուրքերը, իսկ մյուս մասը ոչնչանում է: Նա հույժ կարևոր էր համարում, որ երկաթուղու՝ մինչև Նախիջևան ձգվող հատվածը «անպայմանորեն» հանձնվեր հայերին, իսկ թուրքերին կարելի էր թույլատրել դրանով զինվորական ուժեր տեղափոխել, ինչպես դա տեղի էր ունենում Վրաստանում: Գեներալը հեռագրում միաժամանակ կանցլերին հիշեցնում էր Հայաստանը ավստրո-հունգարական շահերի ոլորտ դարձնելու և ավստրո-հունգարական պաշտպանությունը երաշխավորող պայմանագրի կնքման նպատակահարմարության մասին՝ հավաստիացնելով, որ հայերը դա կընդունեն<sup>20</sup>:

1918 թ. օգոստոսի 5-ին ֆոն Կրեսն իր պատվիրակության անունից կանցլերին ուղարկեց նաև մի ընդարձակ հեռագրային զեկույց Երևան կա-

18 Անդ, էջ 421-422:

19 Deutschland und Armenien 1914-1918..., s. 420-421.

20 Ֆոն Կրեսն իր հեռագիրը միաժամանակ ուղարկեց նաև Վիեննա՝ ավստրիական արտգործնախարարությանը: Sieu Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., s. 574.

տարած այցի, հանդիպումների և դիտարկումների մասին: Նա այնտեղ մասնավորապես նշում էր, որ իր պատվիրակությանը Հայաստանի կառավարության և բնակչության կողմից ջերմ ու համակրալից ընդունելություն էր ստացել, և որ Թիֆլիսի համեմատ, Երևանում հայ սպաներն ու զինվորները շատ ավելի բարձր կարգապահություն են ցուցաբերում: Դրական տպավորություն էր թողել նաև գլխավոր հրամանատար գեներալ Նազարբեկովը, որը, ինչպես նշում էր ֆոն Կրեսը, ռուսական բանակում մեծ համարում ունեցող գեներալ է եղել:

Ֆոն Կրեսը նաև ընդգծում էր, որ բոլշևիզմը հայ ժողովրդի և հայ զինվորների մեջ շատ քիչ համակիրներ է գտել: Ազգային ծանր դրության, հոգևորականության մեծ ազդեցության և նաև կրթության՝ միջին հաշվով շատ ցածր մակարդակի հետևանքով քաղաքական և տնտեսական բնույթի հակասությունները սղվել են հետին պլան: Կուսակցական տարածայնությունները մշտապես հիմնականում վերաբերել են թուրքերի հանդեպ վարված քաղաքականությանը, ընդ որում, եթե արմատական տարրերն այդ առումով ակտիվ և «ագրեսիվ» քաղաքականության կողմնակից էին, ապա փոքրամասնություն կազմող չափավորները հանդես էին գալիս Թուրքիայի հանդեպ սպասողական, ձգձգումների միտված քաղաքականության օգտին: Ըստ ֆոն Կրեսի՝ այդ վերջին ուղղությանն են պատկանում նաև ներկա կառավարության անդամները: Վարչապետ Քաջագունյին, ՆԳ նախարար Արամ Մանուկյանը, ԱԳ նախարար Ալեքսանդր Խատիսյանը, ռազմական նախարար գեներալ Հախվերդյանը և Ֆինանսների նախարար Խաչատուր Կարճիկյանը գեներալի վրա մեծանշանակ գործիչների տպավորություն չէին թողել, բայց փոխարենը՝ հանդարտ, շրջահայաց և նպատակալաց աշխատողների, որոնք վրացիներից դրականորեն տարբերվում էին այն բանով, որ «իրատեսական քաղաքականություն» էին վարում և ձեռնպահ էին մնում անպագոգոռ խոսքերից:

Գեներալի վրա մեծ տպավորություն էր գործել Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցը, ով, ըստ նրա, մի շատ պատկառելի այր էր՝ «իր բարձր դիրքի արժանավորության և իր վրա ծանրացող պատասխանատվության կշիռն զիտակից, խելացի և նպատակալաց, բանակցությունների ժամանակ գրեթե մերժող զգուշավորությամբ և սառնությամբ, իսկ սեղանի մոտ՝ ամենաուշադիր և ամենասիրալիր տանտերը»<sup>21</sup>:

Հանգամանակից ներկայացնելով կաթողիկոսի հետ իր և բարոն Ֆրանկենշտայնի զրույցն ու դրա դրամատիկ ընթացքը, որ պայմանավորված էր վանքի բակում կուտակված հազարավոր փախստականների ողբալից աղմուկով, ոչնչացման դատապարտված ժողովրդի թշվառ, անմխիթար դրության վերաբերյալ կաթողիկոսի կատարած պարզաբանումներով, ինչպես նաև հայերի հանդեպ թուրքերի կատարած ոճրագործությունների, այդ առնչությամբ Գերմանիայի՝ իբրև Թուրքիայի դաշնակցի ցուցաբերած դիրքորոշման շուրջ մտքերի փոխանակությամբ, գեներալն այնուհետև ներկայացնում էր այն ծանր իրավիճակը, որում գտնվում էր Հայաստանի Հանրապետությունը:

Հայերը, ինչպես շարադրում էր ֆոն Կրեսը, թուրքերի կողմից օղակված

<sup>21</sup> Deutschland und Armenien 1914-1918..., s. 423-424.

են շատ փոքրիկ տարածքում, որը, բացառությամբ Երևանի, մի բարձր լեռնային գոտի է իրենից ներկայացնում և գրեթե ամբողջովին անբերրի է: Թուրքերն ինչպես վրացիների, այնպես էլ հայերի հանդեպ չէին պահպանել իրենց իսկ կողմից թելադրված՝ Բաթումի խաղաղության պայմանագրի որոշումները և իրենց գծած սահմաններից այն կողմ գավթել էին մի շարք տարածքներ, որոնց կորուստը Հայաստանի համար առանձնապես ցավալի էր, քանի որ այդպիսով նրանից խլվել էին արտադրության համար պիտանի վերջին շրջանները: «Ներկայումս թուրքերը,– նշում էր գեներալը,– ըստ երևույթին, Ադրբեջանից շարժվում են 90 տոկոսով հայերով բնակեցված Ղարաբաղի գավառը և ուզում են այնտեղի բնակչությանը գինաթափել այն պատրվակով, թե այնտեղ հայերը վերջերս մուսուլմանների դեմ ագրեսիվ են դարձել: Հայերի հանդեպ թուրքական քաղաքականությունը պարզորոշ գծագրվում է: Թուրքերը դեռ ամենևին չեն հրաժարվել հայերին բնաջնջելու իրենց դիտավորությունից, նրանք փոխել են միայն իրենց մարտավարությունը: Հայերին գրգռում են հնարավոր բոլոր միջոցներով, նրանց հանդեպ պրովոկացիաներ են նյութում՝ հույս ունենալով այդ կերպ հայերի վրա նոր հարձակումների պատրվակ ձեռք բերել: Եթե դա չի հաջողվում, ապա փորձում են նրանց սովամահ անել և տնտեսապես ամբողջովին կործանել: Այդ նպատակով, Բաթումի պայմանագրին հակառակ, չնչին պատրվակներով գրավված տարածքը սիստեմատիկ և պլանավորված կերպով կողոպտվում է, և այն ամենը, ինչ հնարավոր է տանել, տարվում է: Ռազմական ավարը, որը թուրքերն Ալեքսանդրապոլում և նրա մերձակայքում գտել են, արտակարգ մեծ է: Այն մասին, որ նրանք, հակառակ ապրիլյան պայմանագրի որոշումներին, տեղափոխում են նաև այն ամբողջ բամբակը, որ կարողանում են իրենց ձեռքը գցել, ես արդեն տեղեկացրել եմ<sup>22</sup>: Այն դիմադրությունը, որ թուրքերը ցուցաբերում են հանիրավի գրաված տարածքը ազատելու կոչերի հանդեպ, իմ կարծիքով՝ բացառապես պայմանավորված է այն հանգամանքով, որ իրենց դեռ չի հաջողվել այդ շրջաններից ամբողջ ավարը հափշտակել»<sup>23</sup>:

Ֆոն Կրետը միաժամանակ կատարում էր հանգամանակից պարզաբանումներ Հայաստանի Հանրապետության ներքին իրադրության մասին, որի 750.000 տեղացի բնակիչները և 300.000–500.000 փախստականները, ըստ նրա, սովամահության էին դատապարտված և «ձեռքերը կապված վիճակում» դիտում էին, թե թուրքերի կողմից գրավված շրջաններում ինչպես է բերքը տեղափոխվում կամ պարզապես փչանում: Եթե Գերմանիան և Ավստրո-Հունգարիան լրջորեն մտադիր են հայերին բնաջնջումից փրկել, ապա, ըստ գեներալի, նրանց պետք է նաև այնքան տարածք տրամադրեն, որը գոնե բավարարի նրանց սննդի կարիքների մեծ մասը, իսկ ընթացիկ տարում, բոլոր դեպքերում, երկու դաշնակցները հայերին պետք է մատակարարեն բավականաչափ հացահատիկ, որի դեպքում միայն համընդհանուր աղետը կկանխվի:

Գեներալը, նկատի առնելով այն հանգամանքը, որ թուրքերը, չնայած գերմանական կողմի առարկություններին, թողել էին, որ հայկական բերքը

22 Տե՛ս անդ, էջ 425:

23 Անդ:

փչանար, նաև առաջարկում էր հայ ժողովրդի գոյատևման համար անհրաժեշտ հացահատիկը վերցնել այն պաշարներից, որոնք թուրքերը ստանալու էին Ուկրաինայից կամ Ռուսիանիայից: Շուտով կսկսվեն ցրտերը, նշում էր ֆոն Կրեալը, և եթե մինչ այդ փախստականներին ազդեցիկ օգնություն չցուցաբերվի կամ նրանց չթույլատրվի վերադառնալ իրենց հայրենիքը, ապա սովը և սառնամանիքը նրանց կոչնչացնեն<sup>24</sup>:

Տեղեկագիրը ոչ միայն ստեղծված իրադրության համակողմանի և փաստարկված լուսաբանում էր, այլև գերմանական կառավարությանն ուղղված ազդու կոչ: «Էնվերի այն պնդումները,– նշում էր ֆոն Կրեալը,– թե թուրքերը ստիպված էին գրավել Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի և մյուս շրջանները՝ հայերի և վրացիների միջև բախումները կանխելու համար, հորինվածք է, որի նպատակն է այստեղի իրադրությանն անտեղյակներին խաբել և շահել այնքան ժամանակ, մինչև այդ շրջաններից բերքը տեղափոխվի, և այդ տարածքներն ամբողջովին կողոպտվեն: Ես առնվազն չեմ կարող պատկերացնել, որ Գերմանական կայսրությունը կարող է հանգիստ դիտել, թե ինչպես են մահմեդականները մի քրիստոնյա ժողովրդի սովամահության մատնել...: Եթե Կոստանդնուպոլսի համաժողովը դեռ երկար իրեն սպասել տա, բազմահազար մարդիկ կդատապարտվեն մահվան, և ոչ միայն Արևելքի հասարակական կարծիքը, այլև պատմությունը Գերմանիային պատասխանատու կդարձնեն հայ ժողովրդի հետագա բնաջնջման համար: Հավատը Քառյակ միությունում Գերմանիայի ղեկավար դերի վերաբերյալ, ինչպես ես բազմիցս իմ պարտքն եմ համարել տեղեկացնել, արդեն սասանված է: Այն ամբողջովին կվերանա, եթե մենք ի վիճակի չլինենք հայերին բնաջնջումից պաշտպանել: Արևելքում մեր հեղինակությունը և մեր ազդեցությունն այդ դեպքում, ի նպաստ թուրքերի, զգալի վնաս կկրեն: Այն հարցին, թե ինչ պետք է կատարվի Հայաստանը կենսունակ դարձնելու և նրան կենտրոնական տերություններից մեկի օգնությամբ ինքնուրույն գոյության ունակ դարձնելու համար, ես կկամենայի պատասխանել՝ ասելով, որ Հայաստանը պետք է ստանա Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմանները, բայց առանց թուրքերի կողմից ցանկալի համարվող սահմանային շտկումների, քանի որ այդ սահմանային շտկումները Հայաստանից կխլեն հենց իր լավագույն սահմանային շրջանները: Դա միաժամանակ համապատասխանում է մեր սեփական շահերին, քանի որ եթե այդ շրջանները թողնվեն թուրքերին, ապա դրանց արտադրանքը գործարարության մեջ թուրքերի անպիտանիության հետևանքով իսկույն ևեթ անկում կապրի և գերմանական շուկայի համար կորած կլինի: Ոռոգման ցանցի համապատասխան ընդլայնման, անհրաժեշտ մեքենաների ներկրման դեպքում հայերն այդ բերրի տարածքներից մետաքսի, բամբակի, բրնձի, գինու, կոնյակի, սպիրտի և պտղի, հավանաբար նաև հանքագործական արտադրանքի հարուստ բերք կհավաքեն, բայց թուրքերը՝ երբեք»<sup>25</sup>:

Ֆոն Կրեալի տեղեկագրերի հիման վրա Գերմանիայի արտգործնախարարությունը դիմեց թուրքական կողմին՝ Ախալքալաքից փախած հայերին

24 Այս կանխատեսումն իրականություն դարձավ. 1918-1919 թ. ձմռանը սովից ու համաճարակներից մահացան 150 հազարից ավելի ՀՀ քաղաքացիներ:

25 Տեխնիստերնետային ցանցում՝ Revidierte Lepsius-Edition..., [http://www.armenocide.de/armgende.nsf/WebStart-De? OpenFrameset, 1918-08-05-DE-001-V](http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De? OpenFrameset, 1918-08-05-DE-001-V) փաստաթուղթը:

վերադարձի հնարավորություն ընձեռելու համար: Բաթումում գտնվող Էսադ փաշան, սակայն, ինչպես տեղեկացվում էր պետքարտուղարի կողմից բանակի հրամանատարությանն ուղղված՝ հուլիսի 13-ի հեռագրում մի գրությամբ նրան պատասխանել էր, թե փախստականների վերադարձը դեպի Ախալքալաք ներկայումս անհնար էր, քանի որ, իբր այդ շրջանի բնակչությունը դեռ սաստիկ վրդովված է հայերի կողմից այնտեղ կատարված «ոճրագործությունների հետևանքով»<sup>26</sup>:

Թուրք պաշտոնյայի պատասխանի խաբեությունն, իհարկե, պարզաբանման կարիք չունի: Ըստ նրա տեղեկության՝ կարելի էր ենթադրել, որ Ախալքալաքի բնակչության մեծամասնությունը մահմեդականներ էին, որոնց հանդեպ փախստական հայ փոքրամասնությունը հանցավոր արարքներ էր կատարել: Այդ պատասխանը թերևս բավարարում էր պաշտոնական Գերմանիային, քանի որ փախստականների հանդեպ հարուցված արգելքները շարունակում էին պահպանվել:

Թե միաժամանակ հակահայկական տրամադրությունները բորբոքելու համար որպիսի կեղծ տեղեկատվություն էր շրջանառվում թուրքական պաշտոնական շրջաններում, վկայում էր, օրինակ, Նուրի փաշայից Հալիլին և նաև Կ. Պոլիս ուղարկված մի տեղեկագիր, որի բովանդակությունը Հալիլը ներկայացրել էր Ֆոն Կրեսին: Այնտեղ նշված էր, որ հայերը Ղարաբաղում երկու օրում 30 թաթարական գյուղեր են այրել: Չունենալով հավաստի փաստեր կեղծիքը հիմնովին հերքելու համար՝ Ֆոն Կրեսն այնուհանդերձ կանցլերի ուշադրությունը հրավիրում էր այն հանգամանքի վրա, որ Նուրիի տեղեկությունները, որպես կանոն սադրիչ ու կեղծ լինելով, իրականությամբ չէին համապատասխանում: «Նուրին շատ լավ գիտի,– գրում էր այդ առնչությամբ ֆոն Կրեսը,– որ եթե մի թաթար նրան տեղեկացնում է, թե 30 գյուղեր ոչնչացվել են, ապա ավերվել են առավելագույնը 10 գյուղեր: Նա նաև շատ լավ գիտի, որ եթե ինքը տեղեկացնում է թաթարական մի գյուղի մասին, ապա Կոստանդնուպոլսում 4 կամ 5 խղճուկ կավե խրճիթներ չեն պատկերացնում: Սա միայն մեկ օրինակ է այն շատերից, թե ինչպիսի միտումնավոր կերպով են հաղորդագրություններ ուղարկվում Կ. Պոլիս՝ այնտեղ, այսպես կոչված, հայկական վտանգի մասին լիովին չափազանցված և թյուր պատկերացումներ ստեղծելու համար»<sup>27</sup>:

Գեներալ Ֆոն Կրեսի կոչերն ու տեղեկությունները, սակայն, նույնպես որևէ նկատելի տեղաշարժ չարձանագրեցին գերմանական կառավարության քաղաքականության մեջ: Վերջինս շարունակում էր հայերին վերաբերող խնդիրների շուրջ իր թուրք դաշնակցի հետ խոսել հորդորների լեզվով, որոնք թուրքերի կողմից զանազան պատրվակներով շարունակ մերժվում էին:

Ուշագրավ է, որ թուրքական կողմը չէր զլանում մինչև իսկ առասպելներ հորինել՝ այդ նպատակով նաև դաշինքի խզման խաղաքարտն օգտագործելու համար: Օգոստոսի սկզբին, օրինակ, ֆոն Կրեսը Ա. Ջամալյանին մի զրույցի ընթացքում հաղորդել էր, որ Նուրի փաշան իրեն տեղեկացրել էր, իբր թե, Անգլիայի կողմից Թուրքիային մերձենալու փորձերի մասին:

26 Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., s. 555.

27 Deutschland und Armenien 1914–1918..., s. 433.

Ըստ Նուրիի՝ Անգլիան Թուրքիային առաջարկել էր «դուրս գալ գերմանական կոալիցիայից»՝ դրա փոխարեն խոստանալով «գործողությունների ազատություն Անդրկովկասում»<sup>28</sup>:

Ինչևէ, եթե Գերմանիան գարնանը և ամռանը սկզբունքորեն հանդես էր գալիս Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանները ճանաչելու պահանջով, բայց, իրեն հարկադրված համարելով «զապվածություն» հանդես բերել, ոչինչ չէր ձեռնարկում Թուրքիային դեպի այդ սահմանները հետ մղելու համար, ապա սեպտեմբերը նշանավորվեց նոր զարգացումներով, որոնք հաստատեցին, որ Գերմանիան բնավ էլ մտադիր չէր անվերջ հանդուրժել Կովկասում գերիշխանության հասնելու՝ թուրքական նկրտումները:

Քանի որ Կ. Պոլսում նախատեսված համաժողովը շարունակում էր հետաձգվել, վճռվեց այնտեղ ծրագրված բանակցությունները կազմակերպել Բեռլինում: Մինչ դրանց սկսումը, սակայն, Թուրքիան հարկադրված էր հաշվի նստել այն փաստի հետ, որ Գերմանիան Կովկասին վերաբերող խնդիրների լուծման հարցում կողմնակից էր նաև Ռուսաստանի հետ սերտ համագործակցությանը և դեռ օգոստոսին այդ առնչությամբ Ռուսաստանի հետ մի պայմանագիր էր ստորագրել<sup>29</sup>: Ընդ որում՝ դա կնքվել էր որպես «լրացուցիչ պայմանագիր», այսինքն՝ չէր հակասելու Բրեստի պայմանագրին, որը շարունակում էր ուժի մեջ մնալ:

Այդ լրացուցիչ պայմանագիրը, որի պատճենը Բեռլինում Ռուսաստանի դեսպան Յոֆֆեն սեպտեմբերի սկզբին հանձնել էր Հ. Օհանջանյանին, ինչպես Օհանջանյանն էր տեղեկացնում Կ. Պոլսի պատվիրակությանը, պարունակում էր հետևյալ՝ առավել առանցքային դրույթները. երաշխավորվում էր Ռուսաստանի համար Բաքվի «ապահովությունը»: Ռուսաստանը չպետք է բողոքեր Գերմանիայի կողմից Վրաստանի անկախության ճանաչման դեմ, բայց դա չէր նշանակում, թե Ռուսաստանն ընդունում էր Վրաստանի անկախությունը: Գերմանիան չպետք է պահանջեր կամ նպաստեր այն բանին, որ Ռուսաստանի մի որևէ «այլ մաս» անկախանա, բայց դա չէր նշանակում, թե մեկ ուրիշ պետություն կամ հենց Ռուսաստանը չէր կարող ճանաչել «մի նոր մասի» անկախությունը: Երբ ռուսական կողմը միջոցներ ձեռնարկեր թուրքերին Բրեստի սահմաններից այն կողմ քշելու համար, Գերմանիան չպետք է օգներ Թուրքիային և նույնիսկ պետք է դիվանագիտական ճանապարհով օգներ Ռուսաստանին Բրեստի պայմանագիրն իրագործելու հարցում<sup>30</sup>:

Ինչպես տեղեկացնում էր Արշակ Զուրաբյանը Բեռլինից օգոստոսի 8-ին ՀՀ կառավարությանն ուղարկած իր հեռագրում, Թալեաթը, որը վերոնշյալ բանակցություններին մասնակցելու համար օգոստոսին մեկնել էր Բեռլին, տեղեկանալով, առանց Թուրքիայի գիտության, նման պայմանագրի կնքման մասին, այն աստիճան էր «վիրավորվել», որ «քիչ էր մնում՝ նույն բուպեին վերադառնալ Պոլիս»<sup>31</sup>: Թալեաթի «վիրավորվածությունը», անշուշտ, պարզաբանման կարիք չունի, քանի որ Ռուսաստանի մուտքը Կովկաս առաջին հերթին պետք է պարտադրեր Բրեստի պայմանագրի իրագործումը:

28 ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 21, թ. 3:

29 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 15, թ. 1:

30 Տե՛ս անդ, գ. 11, թ. 7-8:

31 Անդ, ց. 2, գ. 15, թ. 3:

Անկասկած, այդ լրացուցիչ պայմանագրի առկայությունն էր պատճառը, որ Թալեաթը Բեռլինում այլևս որևէ առարկություն չարտահայտեց Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանները ճանաչելու հարցում: Այդ օրերին Կ. Պոլսում գտնվող ավստրիական զինվորական կցորդը այնտեղի հայկական պատվիրակությանը տեղեկացրել էր, որ Ավստրիայի արտգործնախարար կոմս Բուրյանը Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներին հրավիրում էր Վիեննա՝ իրենց խնդիրներին ծանոթանալու և այդ մասին բանակցելու համար<sup>32</sup>: Կ. Պոլսի պատվիրակությունն իր հերթին հեռագրում է Բեռլինի պատվիրակությանը՝ հրահանգելով անհապաղ մեկնել Վիեննա: Օհանջանյանը սկզբում դեմ էր դրան՝ գտնելով, որ Թուրքիայի հետ մոտալուտ բանակցությունների սկսման պարագայում իր ներկայությունը Բեռլինում ավելի կարևոր էր, բայց հարկադրված էր տեղի տալ<sup>33</sup>: Ա. Զուրաբյանը մնում է Բեռլինում, իսկ Օհանջանյանը սեպտեմբերի 3-ին Գերմանիայում Հայաստանի շահերը պաշտպանող Զեյմս Գրինֆիլդի հետ մեկնում է Վիեննա: Նրանք այնտեղ մինչև սեպտեմբերի 14-ը զուր սպասեցին արտգործնախարարի հետ տեսակցությանը<sup>34</sup> և այնուհետև, երբ նրանց տեղեկացվեց, որ Բուրյանը մոտ ապագայում չէր կարող նրանց ընդունել, ստիպված եղան ձեռնունայն վերադառնալ<sup>35</sup>: Օհանջանյանը դեռևս սեպտեմբերի 9-ին Կ. Պոլսի հայկական պատվիրակությանը հեռագրում էր, որ իրենց Վիեննա մեկնելը, երբ Բեռլինում սկսվում էին նման կարևոր բանակցություններ, սխալ էր: «Կարծեմ, որ մենք սխալ արինք՝ այս օրերին գալով այստեղ, - գրում էր նա, - քանի որ Բեռլին լինելու էին այդ բանակցությունները: Այդպես էլ մենք ձեզ հեռագրեցինք, բայց դուք մեզ չպատասխանեցիք: Մենք ստիպված շտապեցինք գալ և զուր տեղը մի շաբաթ կորցնել»<sup>36</sup>:

Մինչ բանակցագործընթացին անդրադառնալը հարկ է նշել, որ նույնիսկ այդ պատասխանատու և կարևոր իրադրությունում, երբ Ռուսաստանը դարձյալ մուտք էր գործում տարածաշրջան, հայկական կողմը կամ այն ներկայացնող գործիչները բոլոր հարցերում չէ, որ միասնական դիրքորոշում և գործելակերպ էին որդեգրել: Օհանջանյանը, օրինակ, Ռուսաստանի հետ փոխհարաբերություններում իր պատվիրակության առաջնահերթ խնդիրը համարում էր անկախության երաշխավորումն ու պահպանումը, իսկ Զուրաբյանը, թերևս, առավել իրատեսություն ցուցաբերելով, պնդում էր, որ իրենց առաջնահերթ նպատակը պետք է լիներ Բրեստի պայմանագրով գծված սահմանների վերականգնումը:

Ինչպես նշում էր Օհանջանյանը Կ. Պոլսի պատվիրակությանն ուղղված իր՝ սեպտեմբերի 9-ի հեռագրում, այդ իսկ պատճառով Բեռլինում Ռուսաստանի դեսպան Յոֆֆեն իրենցից տարբեր բաներ էր լսում: Օհանջանյանը ենթադրում էր, որ Մոսկվայում գտնվող Հ. Զավրիևը նույնպես այնտեղ հավանաբար այլ ուղղությամբ է աշխատել, և անհրաժեշտ էր համարում, որ այդ հարցի շուրջ քաղաքականությունը լիներ միատեսակ և ղեկավար-

32 Տե՛ս անդ., թ. 25:

33 Տե՛ս անդ., թ. 46:

34 Տե՛ս անդ., թ. 25:

35 Վերադարձի օրը նրանք Վիեննայում հանդիպեցին Հռոմի Պապի ներկայացուցչին, նրան հանձնեցին իրենց մոտ եղած որոշ նյութեր և խնդրեցին, որ Պապը քայլեր ձեռնարկի հօգուտ հայ ժողովրդի: Անդ., թ. 53:

36 Անդ., թ. 14-15:

վեր ՀՀ արտգործնախարարության միատեսակ ցուցումներով<sup>37</sup>:

Ա. Ահարոնյանն իր հերթին ՀՀ կառավարությանը գրում էր հետևյալը. «Ա. Զուրաբյանը տարբեր տեսակետ ունի այդ (անկախության – Ա. Հ.) խնդրի մասին և որոշ չափով դեմ է, որ մենք առանձնապես պնդենք մեր անկախության վրա: Օգոստոսի 30-ին Բեռլինից ստացել ենք Զուրաբյանի նամակը, որտեղ նա ապացուցում է, որ վերջին ստորագրած ռուս-գերմանական լրացուցիչ պայմանագիրն, որով ընդունվում է միայն Վրաստանի անկախությունը, և Հայաստանը ու Ադրբեյջանը մնում են Ռուսաստանի սահմաններում, և որով սերտ կապեր են հաստատվում Ռուսաստանի և Գերմանիայի միջև, մեզ՝ հայերիս համար էլ նպաստավոր է, որովհետև Թուրքիան դրանով ավելի թուլանում է, Բրեստի սահմանները վերականգնում են, և հայերիս համար ապագայում ավելի լավ պերսպեկտիվներ են բացվում: ...Որոշվեց և հանձնարարվեց Ա. Խատիսյանին գրել Զուրաբյանին մանրամասն նամակ և, իբրև արտաքին գործոց մինիստր, նրան ցույց տալ իր սխալ հայեցակետը և ընթացքը»<sup>38</sup>:

Զուրաբյանի հայեցակետը ստեղծված իրադրությունում, թերևս, բնավ էլ սխալ չէր, այլ ավելի շուտ՝ միանգամայն իրատեսական, քանի որ նա հասու էր այն հանգամանքին, որ Ռուսաստանի աշխարհաքաղաքական ձգտումներում Բրեստի պայմանագրով գծված սահմանների հաստատումը և Հայաստանի անկախությունը, ինչպես վկայում էր նաև լրացուցիչ պայմանագիրը, անհամատեղելի էին, իսկ Թուրքիան կարող էր օգտվել այդ հանգամանքից: «Այստեղ բոլորեքյանը, թե՛ դիպլոմատները և թե՛ քաղաքական կուսակցությունները այն կարծիքին են, – նշում էր Զուրաբյանն իր վերոնշյալ նամակում, – որ Բրեստի պայմանագիրը, անշուշտ, կիրագործվի, որ կարելի է տաճիկներին համոզել: Գուցե դա այդպես լինի, սակայն ենթադրում եմ, որ Տաճկաստանը, կորցնելով Բաքուն, ...պարտություն կրելով իր կովկասյան քաղաքականության մեջ, կպահանջի որոշ կոմպենսացիա, և ես վախենում եմ՝ միգուցե այդ կոմպենսացիան լինի Հայաստանի հաշվով: Այս թույլիս մենք աշխատում ենք այն ուղղությամբ, որ Բրեստի պայմանագիրն անպայման իրագործվի»<sup>39</sup>:

Զուրաբյանը սեպտեմբերի 11-ին ուղարկած մեկ այլ նամակով նույնպես փորձում էր դա ըմբռնելի դարձնել Կ. Պոլսի հայկական պատվիրակությանը, ինչը, սակայն, նրան ակներևաբար չէր հաջողվել: «Սեպտեմբերի 17-ին ստացանք Բեռլինից Ա. Զուրաբյանի նամակը՝ գրված 11-ից, – նշված է Կ. Պոլսի հայկական պատվիրակության մի զեկուցագրում: –Նա մի շարք առարկություններ է բերում այն կուրսի դեմ, որ մենք (և այդ դեպքում, իհարկե, մեր կառավարության հրահանգով) բռնել ենք՝ պնդելով և ամեն կերպ պաշտպանելով Հայաստանի անկախությունը: Այդ գիծը նա գտնում է սխալ, ինչպես և որևէ անտանտի մեջ մտնելը Թուրքիայի հետ: ... Մի շարք առարկություններ բերելուց հետո Զուրաբյանը եզրակացնում է, որ առաջին տեղը մենք պետք է տանք ոչ թե անկախության խնդրին կամ անտանտին, այլ Բրեստի պայմանագրի իրագործմանը: Մյուս խնդիրները պետք է թողնել (այդ թվում

37 Տե՛ս անդ., թ. 14:

38 Անդ., թ. 45-46:

39 Անդ., թ. 3:



և անկախության վրա բոլորովին չպնդել), անտանտ չկապել, այլ մնալ չեզոք և բոլորի հետ էլ հավասար բարեկամ»<sup>40</sup>:

Ցավոք, լիովին բացակայում էր նաև համագործակցությունը ՀՀ կառավարության (բնականաբար նաև նրա պատվիրակությունների) և Մոսկվայում գտնվող Հայկական գործերի կոմիսարիատի միջև, որը, Կովկասում Ռուսաստանի քաղաքականության ակտիվացմանը զուգահեռ, ձգտում էր մեծացնել իր դերակատարումը Հայաստանին և հայերին վերաբերող խնդիրների լուծման գործում<sup>41</sup>:

Յոֆֆեն սովորաբար ըմբռնում էր ցուցաբերում Բեռլինի հայկական պատվիրակության ցանկությունների հանդեպ և սկզբնական շրջանում սերտորեն համագործակցում էր նրա հետ: Օհանջանյանին դեռ նրա՝ Վիեննա մեկնելուց առաջ Յոֆֆեն հայտնել էր, որ իրենք ամեն կերպ պետք է պաշտպանեն վրացիների և հայերի պահանջները<sup>42</sup>: Օհանջանյանը Յոֆֆեի հետ հանդիպում է նաև սեպտեմբերի 17-ին՝ Վիեննայից վերադառնալուց հետո<sup>43</sup>: Ինչպես նա նշում էր սեպտեմբերի 19-ին Կ. Պոլսի հայկական պատվիրակությանն ուղարկած իր զեկուցագրում, Յոֆֆեն այդ հանդիպման ժամանակ նույնպես պաշտպանում էր այն տեսակետը, որ «մինչև Ռուսաստանի ուժեղանալը և ընդհանուր ռուսական կոնֆեդերացիա» կազմելը (որի մեջ կմտնեն բոլոր ազգերը) պետք է Հայաստանին տալ ազատություն, պայմանով, որ նրանք ապագայում մտնեն իրենց «ֆեդերացիայի» մեջ և ներկայումս էլ չկազմեն դաշինք Թուրքիայի հետ Ռուսաստանի դեմ<sup>44</sup>:

Յոֆֆեն նկատի ուներ Բեռլինում Քյամիլ փաշայի՝ իրեն հայտնած այն տեղեկությունը, թե «իրենք հայերի հետ շատ լավ են և նույնիսկ դաշն են կապում»<sup>45</sup>: Ինչպես նշել էր Յոֆֆեն, այդպիսի պայմաններում Ռուսաստանը չէր կարող համաձայնել Հայաստանի անկախության հետ<sup>46</sup>: «Ես, իհարկե, հերքեցի այդ տեղեկությունը, - նշում էր Հ. Օհանջանյանը, - բայց և բացատրեցի նրան, որ մեր դրությունը այնպես է, որ եթե մենք համաձայնության չգանք թուրքերի հետ, հաշտ չլինենք նրանց հետ, բարեկամ չլինենք, նրանք, ունենալով մեզ շրջապատած երեք կողմից, կը կուլ տան մեզ հեշտությամբ, և իրենք՝ ռուսները, ոչ մի հնար չեն ունենա մեզ գալ օգնության: Մենք կարող ենք լինել բարեկամ թուրքերի հետ և միևնույն ժամանակ դաշն ունենալ Ռուսաստանի հետ: ...Վերջը ասաց նույնը, որ ինքը մնում է նույն կարծիքին, որ պետք է մեզ տալ ազատություն, և սպասում է Մոսկվայից պատասխանի»<sup>47</sup>:

Անկախության պահպանման նպատակով Թուրքիայի հետ դաշինքի կնքման հավանականությունը, որի մասին Թուրքիան վաղուց բարձրաձայնում էր, իսկ հայկական կողմը բարձր մակարդակով չէր հերքում, փաստորեն, լրջորեն անհանգստացնում էր ռուսական կողմին, քանի որ այդ դաշինքն ուղղված էր լինելու Ռուսաստանի դեմ, որը սկզբունքորեն դեմ էր իր

40 Անդ., թ. 51-52:  
 41 Տես անդ., թ. 56:  
 42 Տես անդ., թ. 8:  
 43 Տես անդ., թ. 56:  
 44 Տես անդ.:  
 45 Անդ.:  
 46 Տես անդ.:  
 47 Անդ., թ. 57:

կազմում գտնվող ազգություններին անկախություն տրամադրելուն:

Հայաստանի Հանրապետության հետ դաշինքի կնքման՝ թուրքական դիտավորությունը, անկասկած, ուներ հեռուն գնացող նպատակներ. թուրքական քաղաքականությանը դա առաջին հերթին անհրաժեշտ էր պանթուրքիզմի իր գաղափարը կյանքի կոչելու համար: Ինչպես իրավամբ նշում է Հ. Ավետիսյանը, «որպես առաջին փուլ՝ թուրքերը ցանկանում էին կազմել կոնֆեդերացիա՝ «արտակից դաշինք» Հայաստանի հետ, որը Թուրքիայի ղեկավարությամբ արևելյան մեծ ֆեդերացիայի ստեղծման առաջին քայլն էր: Նրա կազմում պետք է լինեին Թուրքիան, Հայաստանը, Ադրբեջանը, Հյուսիսային Կովկասը: Ըստ պանթուրքիզմի տեսաբանների՝ այդ ֆեդերացիան պետք է ձանաչեին ամբողջ Ամերիկան, ամբողջ Եվրոպան և նույնիսկ բոլշևիկները: Կովկասի Լեռնական ժողովուրդները ցանկանում էին միավորել Հյուսիսային և Հարավային Կովկասը՝ որպես հակառուսական պատնեշ: Թուրքիայի հետ «արտակից դաշինք» կնքելու դեպքում Հայաստանը լրիվ կուլ էր գնալու Թուրքիային, կծուվեր նրա հետ: Այդպիսով կվերանար նաև Հյուսիսային և Հարավային Կովկասի միավորման միջև եղած հակահամաթուրանական սեպը»<sup>48</sup>:

Այդ օրերին, երբ ռուսական և գերմանական արտաքին քաղաքականությունը ձգտում էր Թուրքիային պարտադրելու Բրեստի պայմանագրով գծված սահմանների ընդունումը, Բեռլինի պատվիրակությունը թերևս պետք է գիտակցեր թուրքական դիվանագիտության հեռահար նպատակները և առաջնահերթորեն պնդեր Բրեստի պայմանագրի իրագործումը: Մինչդեռ ինչպես Կ. Պոլսի պատվիրակությունը, Հ. Օհանջանյանը նույնպես հակված էր հետևելու Թուրքիայի հետ դաշինքի գաղափարին: Որքան էլ արտառոց կարող է թվալ, նա չէր սահմանափակվում միայն ՀՀ անկախության պահպանման պահանջով և Յոֆֆեի հետ ունեցած վերոնշյալ զրույցի ժամանակ մինչև իսկ առաջ էր քաշում Ռուսաստանի կողմից Ադրբեջանի անկախության ձանաչման խնդիրը՝ փաստորեն բացահայտորեն պաշտպանելով Թուրքիայի շահերը: «Երբ հարց բարձրացրի Ադրբեջանի անկախության մասին, - նշում էր Օհանջանյանն իր վերոնշյալ զեկուցագրում, - (Յոֆֆեն - Ա. Հ.) շատ բուռն կերպով բողոքեց, առարկելով, թե հայերը, վրացիները, իբրև ժողովուրդներ, մոտ են ռուս ժողովրդին և երբեք հակառակ չեն եղել, իսկ թաթարները հակառակ են ռուս ժողովրդին, սրանց չի կարելի վստահել և այլն, ոչ սոցիալիստ են և ոչ բոլշևիկ, հատուկ առարկություններ: ...Կաշխատեմ նրան համոզել համաձայնվել և Ադրբեջանի անկախության»<sup>49</sup>:

Մեկնաբանությունները, թերևս, ավելորդ են: Ավելացնենք միայն, որ Օհանջանյանը, անկասկած, այդպես էր վարվում Կ. Պոլսի հայկական պատվիրակության և ՀՀ կառավարության գիտությամբ ու նաև ցուցումներով: Ավելին, Զուրաբյանի՝ սեպտեմբերի 16-ի զեկուցագրից (որին քիչ հետո կանդրադառնանք) և այլ տեղեկություններից որոշակիորեն պարզ է դառնում, որ այդ գործելակերպը համաձայնեցվել էր նաև թուրքական կառավարության հետ: Վերջինս Բրեստի պայմանագրի իրագործումը ձախողելու

48 Ավետիսյան Հ., Հայկական հարցը..., էջ 298:

49 ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 15, թ. 57:

համար ակնհայտորեն հայկական կողմին խոստացել էր Բեռլինի բանակ-  
ցությունների ժամանակ հանդես գալ ՀՀ անկախության պաշտպանությամբ,  
թերևս կատարել նաև տարածքային որևէ փոքրիկ գիշում<sup>50</sup>, իսկ դրան հա-  
յերի կողմից վճարվող գինը պետք է լիներ Բրեստի պայմանագրից հրա-  
ժարումը:

Այս իրավիճակում, ինքնին հասկանալի է, որ Մոսկվայի հայկական գոր-  
ծերի կոմիսարիատը Ավանետվի ստորագրությամբ այդ օրերին Յոֆֆեին  
ուղարկված մի հեռագրում հայտարարում էր, որ «ոչ մի դաշնակցականի  
հետ հարաբերության մեջ չի մտնի և չի օգնի»՝ միաժամանակ պահանջելով,  
որ «Հայաստանի վերաբերյալ արտաքին խնդիրները ենթարկվեն (իրենց  
– Ա. Լ.) քննությանը»<sup>51</sup>:

Յոֆֆեն այդ հանգամանքներում սկսում է ընդգծված սառը վերաբեր-  
մունք ցուցաբերել Օհանջանյանին, ինչը վերջինս հակված էր բացատրել  
հայկական կոմիսարիատի ճնշմամբ<sup>52</sup>: Օհանջանյանի պատկերացմամբ՝ այդ  
կոմիսարիատը «ստեղծված է եղել միայն ներքին, տեղական հայկական  
խնդիրների համար և մինչև հիմա չէին խառնվում արտաքին գործերում»,  
որոնք, ըստ նրա, վարում էին Չիչերինը և Յոֆֆեն: «Բայց, – շարունակում  
էր գրել Օհանջանյանը, – իմ համոզմունքն է, որ հիմա արդեն ոչինչ չի կա-  
րելի անել, քանի որ հայ բոլշևիկները քիթները խոթել են և արտաքին գոր-  
ծերի մեջ»<sup>53</sup>:

Կ. Պոլսում Ահարոնյանի ղեկավարած պատվիրակությունն իր հերթին  
Գերմանիայի և Թուրքիայի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժա-  
մանակ կարևոր նշանակություն ունեցող հարցերի առնչությամբ բավակա-  
նին թույլ դիրքորոշում էր ցուցաբերում: Ինչպես արդեն նշվել է, անգամ  
ղեկավար Բեռնշտորֆը նրանց «այն աստիճան երկչուտ» էր համարում, որ  
«թուրքերի դիմաց նույնիսկ չեն համարձակվի շարժվել»<sup>54</sup>:

Այդ և վերոնշյալ մյուս իրողությունների համատեքստում պետք է դի-  
տարկել այն հանգամանքը, որ Բեռլինում սկսված բանակցությունների ժա-  
մանակ Թալեաթը մի կողմից՝ նոր իրավիճակի թելադրանքով համաձայն  
և պատրաստակամ էր Բրեստի պայմանագիրն իրագործելու հարցում, իսկ  
մյուս կողմից՝ շարունակում էր պաշտպանել Բաթումի պայմանագիրը՝ հա-  
յերի առնչությամբ իրեն ուղղված առարկություններին և պահանջներին ի  
պատասխան հայտարարելով, որ Թուրքիան հայերի հետ կապված որևէ  
չլուծված խնդիր չունի: «Թողե՛ք հայերին հանգիստ, – հայտարարում էր նա:  
– Մենք նրանց հետ շատ լավ հարաբերությունների մեջ ենք, և մենք ինքներս  
նրանց հետ կկարգավորենք մեր գործերը առանց ձեզ: Եթե դուք՝ գերմա-  
նացիք, չմիջամտե՛իք, մենք հայերի հետ դեռ Բաթումում կվերջացնե՛ինք  
ամեն խնդիրներ»<sup>55</sup>:

Թալեաթի այդ երկդիմի կեցվածքի մասին սեպտեմբերի 17-ին՝ Բեռլին

50 Այդ մասին որոշակի կոառնումի հնարավորություն է տալիս Զուրաբյանի այն հաղորդումը, որ Թալեաթը Բեռլին գալու հենց առաջին օրն ասել էր, որ Ալեքսանդրապոլը վերադարձնելու են հայերին, «քանի որ դա հայկական քաղաք է»: Տե՛ս անդ, թ. 51:

51 Անդ, թ. 56:

52 Տե՛ս անդ, թ. 52:

53 Անդ, թ. 56:

54 Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., s. 552.

55 Սա հաղորդել է Զուրաբյանը՝ ըստ Չիչենկելու տեղեկությունների, տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 51:

վերադառնալուց հետո, տեղեկանում է նաև Օհանջանյանը՝ Չխենկելու միջոցով: «Չխենկելին ասաց,- այդ առթիվ գրում էր Օհանջանյանը Կ. Պոլսի պատվիրակությանն ուղարկած իր զեկուցագրում,- որ Թալեաթ փաշան պնդում է Բրեստի (sic) դաշնագրի վրա և միևնույն ժամանակ ասում է բոլորին, թե հայերը գոհ են իրենց դրությունից, և որ իրենք հայերի հետ համաձայնության եկած են, կարիք չկա հիմա այստեղ այդ խնդիրը բարձրացնել: Բացի դրանից՝ Չխենկելին ասում էր, որ դաշնակիցների վրա շատ է ազդել Թալեաթ փաշայի հայտարարությունը, որ հայերը պահանջներ չունեն, և գտնում էր, որ հարկավոր է նրանց ներկայացուցիչների հետ խոսել»<sup>56</sup>:

Այդ առումով խոսում է նաև Զուրաբյանի՝ սեպտեմբերի 16-ին Կ. Պոլսի հայկական պատվիրակությանն ուղարկած զեկուցագիրը: Նա այստեղ տեղեկացնում էր, որ բանակցությունները դեռ շարունակվում էին, և դրանց ընթացքն ու արդյունքները գաղտնի էին պահվում: Ըստ Զուրաբյանի՝ Բեռնշտորֆը բանակցությունների ընթացքում ջանում էր, որ իրագործվեին Թուրքիայի բոլոր պահանջները: «Տարածայնությունների գլխավոր կետը այս բոլորն այն է,- շարունակում էր գրել Զուրաբյանը,- թե որ պայմանագիրն է վավերացվում՝ Բրեստի, Բաթումի, թե՛ մի այլ պայմանագիր կմշակվի: Բերնստորֆը, աշխատելով ի կատար ածել Տաճկաստանի պահանջները, պահանջում է, որ Բաթումի պայմանագիրը վավերացվի, և, իհարկե, չի գլանում այստեղ հարստահարել ձեր անունը: Իմ կարծիքով՝ անհրաժեշտ է, որ դուք այդտեղից վերջապես կտրուկ կերպով հայտարարեք, որ դուք ձեր պարտքն եք հաշվում պաշտպանել Բրեստի սահմանները: ...Մեզ համար անհրաժեշտ է, իմ կարծիքով, պարզել, որ մենք, մեր դիրքով ձգտելով անկեղծ բարեկամական հարաբերություններ ստեղծել թուրքերի և, առհասարակ, մեր հարևանների հետ, միաժամանակ նետրալ դեր ենք ընդունում այս կոնֆլիկտում, որ զարգանում է Գերմանիայի և Տաճկաստանի միջև: Այդ տեսակետից ձեր պատվիրակության վրա խոշոր պարտականություններ են ընկնում: Իմ ձեռքերը այդ կողմից կապված են այն դիրքով, որը դուք ընդունել եք այդտեղ: Օրինակ, ես անհրաժեշտ էի համարում այս մոմենտին նոր նոտա հրապարակելու՝ պահանջելով Բրեստի սահմանների պահպանումը և Ղարսի նահանգի վերստանալը և թեֆերենդում կազմելը, սակայն այդ բանը անկարելի եղավ, որովհետև Թալեաթը այստեղ հանդիսանում է բերան և ձեր կողմից»<sup>57</sup>:

Փաստորեն Կ. Պոլսի հայկական պատվիրակությունը և, բնականաբար, նաև ՀՀ կառավարությունը, առանց կշռադատելու Թուրքիայի հետ դաշինքի կնքման՝ թուրքական պահանջի հեռահար վտանգները, գերադասում էին հանդես գալ դրա օգտին (դա համարելով միջոց Բաթումի պայմանագրի սահմաններով տրված անկախությունը պահպանելու համար), քան ձեռք բերել Բրեստի պայմանագրով գծված սահմանները և մտնել Ռուսաստանի Դաշնության մեջ: Բրեստի պայմանագիրը ձախողելու նպատակով նրանց այդ դիրքորոշումը փորձում էր օգտագործել նաև Թալեաթը՝ պնդելով, թե հայերի հետ բոլոր հարցերում արդեն համաձայնության են եկել, և

<sup>56</sup> Անդ, թ. 54-55:

<sup>57</sup> Անդ, թ. 36:

որ «նրանք գոհ են իրենց դրությունից»: Հայկական կողմում այդ առումով հակառակ դիրքորոշում ուներ միայն Ջուրաբյանը, որը, Օհանջանյանի, Ահարոնյանի և Խատիսյանի կողմից խստորեն քննադատվելով, դեռ բանակցագործընթացը չավարտված՝ հեռացավ Բեռլինից: Բանակցությունների ընթացքում դրանց մասնակցող գերմանական պատվիրակներից ոմանք, սակայն, նույնպես հայկական կողմին հորդորում էին զգոն լինել և Թուրքիայի հետ երկկողմ դաշինքի մեջ մտնելու՝ Թալեաթի ցանկությանը կույ չգնալ, քանի որ վերջինս, դաշնակիցների ճնշմանը չդիմանալով, ստիպված էր լինելու թուրքական զորքերը հետ քաշել մինչև Բրեստի սահմանը: Կ. Պոլսի հայկական պատվիրակության կողմից Թուրքիայի հետ այդ «սրտակից համաձայնության» կամ դաշինքի կնքումը, բարեբախտաբար, կանխվեց սեպտեմբերի երկրորդ կեսին բեռլինյան պատվիրակներին միացած՝ Ուլրախիսյանը Հայաստանի ներկայացուցիչ Գ. Զամոյանի և Ռուսաստանի Պետական դումայի նախկին անդամ Մ. Աճեմյանի գործուն միջամտությամբ, որը, ի դեպ, Բեռլինում փոխարինում էր Ջուրաբյանին<sup>58</sup>:

Ինչևէ, Բեռլինում կայացած բանակցությունների արդյունքում սեպտեմբերի 23-ին Գերմանիայի և Թուրքիայի միջև ստորագրվեց մի համաձայնագիր, որով Թուրքիան, ի թիվս այլ պարտավորությունների, հանձն էր առնում Կովկասից հետ քաշել իր զորքերը<sup>59</sup>: Դա վերահաստատվեց նաև Բեռլինում Օսմանյան կայսրության դեսպան Ռիֆաթ փաշայի և Յոֆֆեի՝ հոկտեմբերի սկզբին ստորագրած համաձայնագրով<sup>60</sup>, որով Թուրքիան պարտավորվում էր սահմանված սեղմ ժամանակահատվածում իր զորքերը հետ քաշել Բրեստի պայմանագրով գծված սահմանից այն կողմ: Համաձայնագրում մասնավորապես նշվում էր հետևյալը. «1. Թուրքական կանոնավոր և անկանոն զորամասերը՝ ներառյալ հրահանգիչներն ու ծառայողները, անհապաղ հետ են քաշվում Կովկասից՝ բացառությամբ Բրեստի խաղաղության պայմանագրի 3-րդ պարբերության 4-րդ հոդվածում հիշատակված շրջանների: Նրանք կարող են իրենց հետ տանել թուրքական ռազմական ամբողջ ունեցածքը: Ջորամասերի հետքաշումը և թուրքական ռազմական ունեցվածքի փոխադրումը պետք է իրագործվեն սույն արձանագրության ստորագրումից հետո՝ չորս շաբաթվա ընթացքում: 2. Վնասների հատուցման պահանջները, որոնք Ռուսաստանը Կովկասում թուրքական գործողությունների կապակցությամբ հանդես կբերի, պետք է ստուգվեն՝ մի խառը քննիչ հանձնաժողովի միջոցով կայացվելիք համաձայնության համապատասխան: 3. Թուրքական և ռուսական կառավարությունները գերմանական կառավարությանը խնդրելու են ստանձնել 1-ին և 2-րդ որոշումների իրագործման, ինչպես նաև Կասպից ծովից բրիտանական հարձակումների դեմ թուրքական զորքերի անվտանգության երաշխավորումը»<sup>61</sup>:

Հասկանալի է, որ զորքերի հետքաշման և Բրեստի պայմանագրով գծված սահմանների ճանաչման թուրքական կառավարության՝ համաձայ-

58 Տե՛ս Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 327, 404:

59 Համաձայնագրի ամբողջական տեքստին ծանոթանալու համար տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., S. 586-588.

60 Թե՛ն համաձայնագրի վավերացման օրը փաստաթղթի՝ մեզ հայտնի օրինակում նշված չէ, այնուհանդերձ Հ. Օհանջանյանի որոշ տեղեկություններից պարզ է դառնում, որ այն ստորագրվել է հոկտեմբերի 2-ին կամ 3-ին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 15, թ. 73:

61 Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., S. 595-596.

նագրերով վավերացված այդ հանձնառությունը նրան պարզապես պարտադրված էր և ամենևին էլ թուրքական հայաջինջ քաղաքականության փոփոխություն չէր նշանակում: Դրա մասին պարզորոշ վկայում էին նաև բեռլինյան բանակցությունների օրերին Բաքվում տեղի ունեցած հայկական կոտորածները: Բեռլինի և Կ. Պոլսի հայկական պատվիրակությունները, սակայն, մինչև իսկ այդ օրերին, երբ տեղի ունեցան Բաքվի հայկական ջարդերը, երբ Թուրքիան գերմանա-թուրքական համաձայնագրով ստանձնել էր իր զորքերի հետքաշման հանձնառությունը, իսկ ռուս-թուրքական համաձայնագրով պետք է ձանաչեր նաև Բրեստի պայմանագրով հաստատված սահմանները, բավականաչափ իրատեսորեն չէին գնահատում Կովկասում ձևավորվող աշխարհաքաղաքական նոր իրադրությունը, որը, առաջին հերթին, պայմանավորված էր տարածաշրջան Խորհրդային Ռուսաստանի մուտքով<sup>62</sup>: Նրանք շարունակում էին հետևել ՀՀ անկախության առաջնահերթության գաղափարին՝ նույնիսկ այն բացահայտորեն հակադրելով խորհրդային կառավարության աշխարհաքաղաքական նպատակներին:

Հոկտեմբերի 1-ին Յոֆֆեն իրեն այցելած Օհանջանյանին և Զամոյանին տեղեկացրեց, որ Ռուսաստանը Թուրքիային արդեն վերջնագիր է ներկայացրել իր զորքերը հետ քաշելու համար և սպառնացել է պատերազմով, և որ մեկ կամ երկու օր անց ստորագրվելու էր ռուս-թուրքական մի պայմանագիր, որով «Տաճկաստանը մաքրելու է բոլոր երկիրը մինչև Բրեստի սահմանները», իսկ Գերմանիան էլ պետք է դառնար այդ պայմանագրի իրականացման երաշխավորը<sup>63</sup>: Այնուհետև, ինչպես նշում էր Օհանջանյանն իր՝ հոկտեմբերի 1-ին Կ. Պոլսի պատվիրակությանն ուղարկված զեկուցագրում, Յոֆֆեն իրենց ասել էր հետևյալը. «Այսպիսով, ուրեմն, մենք ձեզ՝ հայերիդ, փրկում ենք կոտորածից և ոչնչանալուց և հիմա սպասում ենք, որ դուք խոսք չեք բարձրացնի անկախության մասին...»<sup>64</sup>:

«Երբ ես նրան ասացի,– շարունակում էր գրել Օհանջանյանը,– որ ստացել եմ առաջարկություն արտաքին գործոց նախարարությունից՝ բողոքելու այն բանի դեմ, որ Ռուսաստանը մեր անկախությունը չի ընդունում, ուղղակի կատաղեց և փրփուրը բերանին սկսեց ձառախոսել, որ մենք իրենց օգնելու փոխարեն՝ Հայաստանը փրկել տաճիկների կոտորածից, մտածում ենք անկախության մասին և մտածում ենք մեր դասակարգային մանր բուրժուական շահերը ապահովել հայ բանվորության և աշխատավոր գյուղացիության հանդեպ և այլն և այլն: Սկսվեց երկուսուկես ժամանոց տաք վիճաբանություն, որից կարելի է գալ այն եզրակացության, որ այդ հաստագլուխներին ոչինչ չի կարելի հասկացնել, և նրանք անկախություն ընդունելու մասին, առանց դրսի ազդեցության, չեն էլ մտածի երբեք: Այս ունեցեք աչքի առաջ: Դուրս եկանք՝ ոչինչ չստացած, և նույնիսկ մի բան էլ մենք պարտք մնացինք, որ խանգարում ենք Յոֆֆեներին փրկել Հայաստանը

62 ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինի կողմից արդեն սեպտեմբերի 20-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանն ուղարկվել էր մի նոտա, որով Ռուսաստանը չեղյալ էր համարում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Եր., 1991, էջ 622-624:

63 Տե՛ս ՀՀ ԱԱ, Ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 73: Խոսքը վերաբերում է վերոնշյալ ռուս-թուրքական համաձայնագրին:

64 Անդ:

Տաճկաստանի ճանկերից»<sup>65</sup>:

Հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ մի նոր ուշագրավ հանդիպում Օհանջանյանի և Ռուսաստանի դեսպանի միջև, որի ընթացքում վերջինս գրեթե վերջնագրի լեզվով էր խոսում: Նա Օհանջանյանին հաղորդում էր, որ թեև Թուրքիան համաձայնել է դուրս գալ Կովկասում գրաված տարածքներից, բայց ռուսական կառավարությունը դրանով չէր բավարարվում և պահանջում էր, օրինակ, Բաքուն հանձնել իրեն, պահանջում էր նաև իրականացնել Կարսի և Բաթումի բնակչության ինքնորոշումը և նույնիսկ առաջադրել էր Թուրքահայաստանի ինքնավարության հարցը: «Ռուսաստանը ներկայումս խզել է արդեն յուր խաղաղ ժամանակի հարաբերությունները Տաճկաստանի հետ, – ասել էր Օհանջանյանին Յոֆֆեն, – և իրավաբանորեն երկու կողմից էլ կարող են սկսվել պատերազմական գործողություններ: Այսպիսի պարագաներում, երբ հայ ժողովրդի համար արդեն վերացել է կոտորածի վտանգը, այլևս ոչ մի դեպքում չի կարող կովկասյան Հայաստանի անկախության մասին խոսք անգամ լինել: Մեր պահանջով տաճիկները հեռանում են Կովկասից, և ձեր երկիրը մնում է Ռուսաստանի մի մասը, ինչպես առաջ էր: Ինչ կապերով նա կլինի կապված մեզ հետ, դա այլ խնդիր է, կլինեք ավտոնոմ և այլն, բայց Ռուս. ֆեդերացիայի մեջ: Մենք դեռ Վրաստանի անկախությունն էլ չենք ընդունել, Ադրբեյջանինը երբեք չենք ընդունի և այժմյանից գիտենք, որ նրանց հետ կովելու ենք: Չգիտենք՝ դուք ինչպես եք վերաբերվելու: Ժողովուրդը, իհարկե, մեր կողմն է, դրա մեջ կասկած չկա, իսկ ինչ դիրք կունենա ձեր կառավարությունը, դա չգիտենք: Կարծում ենք, որ դուք, ձեր անձնական խմբային և դասակարգային շահերը պաշտպանելով, միայն պիտի պրնդեք ձեր անկախության վրա և, իհարկե, մենք պետք է և ձեզ հետ կովենք, և ինքը՝ ձեր ժողովուրդը, կկռվի ձեր դեմ: Ձեզ մոտ ևս, շատ մոտ ապագայում, երբ արդեն վերացավ ֆիզիքական կոտորածի վտանգը, կսկսվի քաղաքացիական պատերազմը, և մենք կծալենք, իհարկե: Ցավալին այն է, որ ձեզ մոտ, մենք գիտենք, այդ քաղաքացիական պատերազմը կարող է և ազգային գույն ստանալ: Ամենաբնականն է, որ դուք հիմա մեզ հետ միասին դուրս գաք Տաճկաստանի դեմ, հայտարարեք, որ դուք Ռուսաստանի հետ եք և նրա հետ միասին դնում եք այս և այս պահանջները: Ուրեմն՝ անկախության մասին այլևս խոսք չի կարող լինել»<sup>66</sup>:

Ինչևէ, կարծում ենք՝ լրացուցիչ հետևությունների անհրաժեշտություն չկա: Ավելացնենք միայն, որ այդ ժամանակաշրջանում Խորհրդային Ռուսաստանի աշխարհաքաղաքական ձգտումներն ու քաղաքականությունը գրեթե չէին տարբերվում երկու տարի անց՝ 1920 թ. ռուսական քաղաքականությունից: Յոֆֆեի կողմից Ահարոնյանին ներկայացված իրադարձությունների սցենարը նույնպես ուշագրավ կերպով նույնանում է այն դեպքերի հետ, որ տեղի ունեցան 1920 թ. վերջերին: Եվ եթե Խորհրդային Ռուսաստանի՝ իբրև ՀՀ անկախությանը սպառնացող պետության հետ համագործակցության մերժումը աշխարհամարտի ավարտի և տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի նոր վերաբաշխման համատեքստում հայ-

<sup>65</sup> Անդ:

<sup>66</sup> ՀՀ ԱԱ, Ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 84-85:

կական կողմի համար որոշակի բացասական հետևանքներ չունեցավ, ապա 1920 թ. պատկերը բոլորովին այլ էր, և հայկական կողմի՝ երկու տարիների ընթացքում չփոփոխված դիրքորոշումն ունեցավ ծանր հետևանքներ<sup>67</sup>:

**Աշոտ Ն. Հայրունի** – Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս: Ունի հրատարակված 5 գիտական մենագրություններ և շուրջ 150 գիտական հոդվածներ: Զբաղվում է Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը, Առաջին աշխարհամարտին և հայ-գերմանական հարաբերություններին վերաբերող խնդիրներով:

## Summary

### FOREIGN POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF GERMAN– TURKISH RELATIONS

(June–November, 1918)

Ashot N. Hayruni  
*Doctor of Historical Sciences*

**Key words** – Hamo Ohanjanyan, Avetis Aharonyan, Talaat, Otto von Losov, Arshak Zurabyan, Yofe, Berlin delegation, Constantinople delegation, Treaty of Brest–Litovsk, Treaty of Batum.

The article covers the foreign policy activities carried out through the delegations of Berlin and Constantinople in the period from June to November of 1918, which was mainly aimed at the re-visiting the Treaty of Batum and reviewing the borders established by it, as well as, targeting the normalization of the situation for the population of the Republic of Armenia and the refugees hosted by the country who were in a very difficult situation as a result of the Turkish – Tatar blockade. The issue is addressed by exploring the context of the ruling geopolitics in the region and particularly in the context of the German–Turkish alliance.

At the same the article covers the position of the Armenian government and its delegations towards the new geopolitical developments in the region at the end of the World War II. It is brought into evidence that they did not adequately evaluate the chances and risks emerging in the fall of 1918 for the possible re-entrance of the Soviet Russia into the region. If this underestimation of Rus–

67 Մենք համաձայն չենք հեղինակի այս դիտարկման, ինչպես նաև այն պնդման հետ, որ ՀՀ կառավարությունը 1918-ի ամռան ու աշնան սկզբներին իրատեսորեն չէր գնահատում տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությունը՝ արտաքուստ լոյալություն ցուցաբերելով Հայաստանի հետ կոնֆեդերացիա կամ «սրտակից դաշինք» կազմելու Թալեաթի ծրագրերի հանդեպ: 1918-ի կեսերից ավելի քան ակնհայտ դարձած՝ Անտանտի հաղթանակի անխուսափելիության գիտակցման պայմաններում խուսանավելու, ժամանակ ձգելու և Երևանի մատույցներում կանգնած թուրքերին նոր հարձակման առիթ չտալու ՀՀ քաղաքականությունը սկզբունքորեն ճիշտ էր: **ԽՎԻ:**



sia's role, had no negative consequences for Armenia in 1918, as the world war ended soon, in 1920, when a similar situation was shaped in the Caucasus, the Armenian government's policy, characterized by the same underestimation, had grave consequences for the Armenians.

Резюме

## ВНЕШНЯЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ ГЕРМАНО–ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ

(июнь–ноябрь 1918 г.)

Ашот Н. Айруни  
*Доктор исторических наук*

**Ключевые слова** – Амо Оганджян, Аветис Агаронян, Талеат, Отто фон Лоссов, Аршак Зурабян, Иоффе, делегация Берлина, делегация Константинополя, Брестский договор, Батумский договор.

В статье освещается осуществлённая в промежутке с июня по ноябрь внешняя политика Республики Армения, которая главным образом была направлена на пересмотр Батумского договора и на изменение установленных им границ, а также на нормализацию состояния населения республики и укрывшихся там сотен тысяч западноармянских беженцев, которые оказались в крайне тяжелом положении в результате турецко–татарской блокады. Прояснение вопроса проводится в контексте господствующей в регионе геополитики и, разумеется, в первую очередь германо–турецкого союза. Одновременно освещается позиция правительства Республики Армения относительно новых геополитических сдвигов, произошедших в регионе на последнем этапе мировой войны. Выявляется, что она недостаточно реалистично оценивала шансы и риски, связанные с возвращением Советской России в регион. Если эта позиция, обусловленная недооценкой роли России, не имела негативных последствий для Армении в 1918 году, так как вскоре мировая война закончилась, то в 1920 г., когда на Кавказе возникла аналогичная ситуация, политика Республики Армения, характеризующаяся такой же нереалистичностью, имела тяжелые последствия для армян.

### REFERENCES

1. **Avetisyan H. A.**, Haykakan harsə 1918 tvakanin, Yerevan, 1991. **(In Armenian)**
2. Hayeri Ceghaspanutyunə Osmanyany kaysru tyunum, pastatghteri yev nyu teri zhoghovacu **M. G. Nersisyan**i xmbaryutyamb, Yerevan, 1991. **(In Armenian)**

ՀՀ ԿՈՆՍՏԱՆՆՈՒԼՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, 2018  
Ժ (ՃՁ) ԳՐԱԻՐ, ԹԻՒ 4 (64), հոկտեմբեր–դեկտեմբեր, 2018



Արարատ Մ. Հակոբյան  
*Պատմ. գիտ. դոկտոր*

## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1918 – 1920 ԹԹ. ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մուտք

**Բանալի բառեր** – Մայիս 28, Հայաստանի կառավարություն, Արամ Մանուկյան, պետական ապարատ, ՀՅԴ, Հ. Քաջազնունի, պետականաշինություն, խորհրդարան, ինքնավարություններ, վարչապետ, կոալիցիոն կառավարություն, դիվանագիտական կապեր:

Գերազանցապես 1918 թ. Մայիսյան հաղթական հերոսամարտերի արդյունքում՝ Հայաստանի անկախության հռչակումից հետո, հայ հասարակական-քաղաքական ուժերի առջև ծառայած գլխավոր խնդիրը դարձավ հանրապետության պետական կառուցվածքի ընտրությունը, երկրի կառավարումը, պետականության կայացումը և դինամիկ զարգացումը:

Հայտնի է, որ անկախ պետականությունն է յուրաքանչյուր ազգի ինքնակազմակերպման բարձրագույն աստիճանը, որը ցույց է տալիս ինքն իրեն կառավարելու, սեփական հայրենիքը պաշտպանելու և ստեղծագործելու նրա ներուժ կարողականությունը: Հայաստանի անկախության հռչակումից հետո շատ ավելի դժվար ու տևական էր լինելու պետականության կայացումը և երկրի դինամիկ զարգացումը: Պետականաշինության առաջին քայլը, բնականաբար, սկսվեց կառավարության ձևավորումից: Հայաստանի նորածին հանրապետությունը նախընտրեց Նոր ժամանակների եվրոպական քաղաքակրթական արժեհամակարգին բնորոշ կառավարման ինստիտուտներ (կառուցակարգեր)՝ հաշվի առնելով նաև տեղական պայմաններն ու առանձնահատկությունները:

### 1. ՀՀ կառավարության ընդհանուր բնութագիրը

Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի անկախության վերաբերյալ 1918 թ. մայիսվերջյան պաշտոնական հայտարարությունից հետո հնարավոր չէր

միանգամից կազմել նոր կառավարություն, որովհետև դրա համար պահանջվում էին միջկուսակցական խորհրդակցություններ և փոխադարձ համաձայնություն: Միաժամանակ հարկավոր էր խորհրդակցել և կառավարության մեջ ներգրավել երևանյան այն կարող ուժերը, որոնք պետական կառույցների ձևավորման ուղղությամբ արդեն հսկայական աշխատանք էին կատարել՝ Հայոց Ազգային խորհրդի լիազոր և Երևանի դիկտատոր հռչակված **Արամ Մանուկյանի** գլխավորությամբ:

Անուրանալի է Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության դերակատարությունը Առաջին Հանրապետության ձևավորման գործում: Իրավամբ, նա է եղել հայոց պետական մեքենան առաջ շարժող քաղաքական գլխավոր ուժը, որը տվյալ պատմաշրջանում հիմնականում իր ուսերին է կրել անկախ պետականության կերտման, ժողովրդի ու հայրենիքի անվտանգության ապահովման պատասխանատվությունը:

Ցարական նախկին նահանգային կառավարման համակարգի փոխարեն, այն էլ պատերազմներից խարխլված վարչակարգի ու կիսավեր տնտեսության պայմաններում, պետք է ստեղծվեր եվրոպական արժեհամակարգով հանրապետական-ժողովրդավարական կառավարման ձևն ընդունած **պետական ապարատ**՝ նոր գաղափարախոսությամբ և տնտեսական ու կրթամշակութային նոր համակարգերով:

Իշխանության դեկր ստանձնած Հովի. Քաջագնունու գլխավորած նորաստեղծ կառավարության գլխավոր խնդիրներն էին՝ **պետական գործուն մեքենայի ստեղծումը, պետական իրավակարգի՝ կարգուկանոնի հաստատումը, երկիրը քառսից ու անիշխանությունից դուրս բերելը, պայքարը սովի ու համաճարակների դեմ, գաղթականությանը սնունդ, բնակարան ու աշխատանք տալը, պարենավորման և ֆինանսների կարգավորումը, տնտեսությունը ոտքի կանգնեցնելը, կրթամշակութային գործն առաջ տանելը, կանոնավոր բանակ ստեղծելը, ներքին խռովությունները հնազանդեցնելը, սահմանային վեճերի լուծումը, դիվանագիտական կապերի հաստատումը, Հայաստանի միջազգային ճանաչմանը հասնելը** և այլն: Եվ այդ բազում խնդիրները լուծելու նպատակով կառավարությունը լծվեց գործի ու հանրապետության գոյության 2,5 տարիների ընթացքում պատվով տարավ պետականաշինության իր բեռը:

Խոսելով բարձրագույն գործադիր իշխանության (կառավարության) ձևավորման մասին՝ հարկ է ընդգծել, որ իր գոյության 2,5 տարվա ընթացքում հանրապետությունն ունեցել է չորս վարչապետ, որոնք բոլորն էլ ՀՅԴ նշանավոր գործիչներ էին՝ **Հովհաննես Քաջագնունի** (1918 թ. հունիսի 7-ից մինչև 1919 թ. օգոստոսի 7-ը, իսկ փաստորեն՝ մինչև ապրիլ, երբ Հայաստանի խորհրդի որոշմամբ Քաջագնունին գործուղվեց Եվրոպա և ԱՄՆ՝ օգնություն ստանալու համար), **Ալեքսանդր Խատիսյան** (1919 թ. օգոստոսի 7-ից մինչև 1920 թ. մայիսի 5-ը), **Համո Օհանջանյան** (1920 թ. մայիսի 5-ից մինչև նույն տարվա նոյեմբերի 23-ը) և **Միմոն Վրացյան** (նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 2-ը)<sup>1</sup>: Ընդ որում, ՀՅԴ-ն երկու անգամ՝ 1918 թ. նոյեմբերի 4-ից - 1919 թ. հունիսի սկիզբը (7 ամիս)՝ ՀԺԿ-ի, իսկ 1920 թ. նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 2-ը (10 օր)՝ Էսէնների հետ կազմել է կոալիցիոն

<sup>1</sup> Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետություն (1918-1920 թթ.), Եր., 1992, էջ 6:

(խառը) կառավարություն:

Հարկ է նշել, որ առանձնապես կշռելի է եղել ՀՅԴ-ՀԺԿ կոալիցիոն կառավարությունը:

Հ. Քաջազնունու գլխավորած կառավարության աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՅԴ-ն ընդառաջ գնաց ՀԺԿ-ի ցանկությանը և 1918 թ. նոյեմբերի սկզբին ձևավորվեց կոալիցիոն կառավարություն՝ դարձյալ Հ. Քաջազնունու գլխավորությամբ: Բանն այն է, որ Օսմանյան կայսրության պարտությունը կատարված փաստ էր, իսկ Հայաստանում նշնարվում էին կայունացման որոշ միտումներ, ուստի իշխանատենչության հակումներ ցուցաբերող ժողովրդականները ցանկություն հայտնեցին մտնել կառավարության մեջ և ՀՅԴ-ի հետ միասին կիսել պատասխանատվությունը ժողովրդի, հայրենիքի ու պետության առաջ: Այդ նպատակով Թիֆլիսից Երևան ժամանեցին ՀԺԿ ԿԿ-ի անդամներ Մինաս Բերբերյանը, Գևորգ Մելիք-Ղարազյոզյանը, Սամսոն Հարությունյանը, Լևոն Ղուլյանը և ուրիշներ: Բանակցությունների արդյունքում ձևավորվեց ՀՅԴ-ՀԺԿ կոալիցիոն կառավարություն, որի մեջ մտան 4 դաշնակցական, 4 ժողովրդական և 1 անկուսակցական՝ նախարար-նախագահ (վարչապետ) Հ. Քաջազնունու գլխավորությամբ: Կոալիցիոն համատեղ աշխատանքը դրսևորվեց նաև խորհրդարանում և ձևավորվեց ՀՅԴ-ՀԺԿ խորհրդարանական մեծամասնություն:

Ինչպես վերը նշվեց, կոալիցիոն կառավարության ստեղծման մի փորձ էլ տեղի ունեցավ ՀՀ մայրամուտին: Պատմական փորձի ու գնահատականի առումով հարկ է նշել, որ տակավին Առաջին Հանրապետության ժամանակներից ՀՅԴ-ն պատրաստակամ է եղել կառավարման կոլեկտիվ-կոալիցիոն աշխատանքին: Բերված փաստերը հավաստում են, որ Առաջին Հանրապետության կառավարող կուսակցությունը չի ձգտել միակուսակցական-ամբողջատիրական (տոտալիտար) կառավարման վարչաձևին, ինչն այդքան բնորոշ էր մեզ բոլորիս ծանոթ ԽՍՀՄ ավելի քան 70-ամյա բռնավարչակարգին:

Հանրապետության 2-րդ վարչապետ Ալ. Խատիսյանը, տալով Առաջին Հանրապետության կառավարության տարիների պետականաշինության ամփոփ բնութագիրը, իրավացիորեն այն բաժանել է երեք փուլերի: Առաջին՝ Հ. Քաջազնունու նախագահության շրջանը՝ **պետական-կազմակերպական**, երկրորդ՝ Ալ. Խատիսյանի՝ **քաղաքացիական-ստեղծագործական** և երրորդը՝ Հ. Օհանջանյանի և Ս. Վրացյանի՝ **արտաքին և ներքին թշնամիների դեմ կռվի** շրջան, որը, ինչպես հայտնի է, ավարտվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ խորհրդայնացմամբ<sup>2</sup>:

Պետության կառուցվածքի հստակեցման առումով ծրագրվում էր Հայկական հարցի լուծումից՝ Միացյալ Հայաստանի ստեղծումից հետո հրավիրել Սահմանադիր ժողով, ընդունել Սահմանադրություն, մտցնել ՀՀ նախագահի ինստիտուտ, ինչը, սակայն, ժամանակի սղության և քաղաքական հանգամանքների աննպաստ ընթացքի հետևանքով չկենսագործվեց:

Ինչպես գիտենք, 1918 թ. հունիսի 4-ին Թուրքիայի հետ Բայթումում հաշտություն կնքելուց հետո բոլոր առումներով Հայաստանի Հանրապետ-

<sup>2</sup> Տե՛ս **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումը և զարգացումը, Պէյրոթ, 1968, էջ 133:

տությունը հայտնվել էր չափազանց ծանր դրության մեջ. թուրք-թայթարական շրջափակում, հարյուր հազարավոր գաղթականներ և այլն: Մակայն Աշխարհամարտի ավարտից հետո, երբ պատերազմում պարտված Գերմանիան և Թուրքիան հարկադրված իրենց զորքերը դուրս բերեցին Անդրկովկասից, ՀՀ սահմանները սկսեցին ընդարձակվել՝ ներառելով Լոռի-Փամբակը, Ալեքսանդրապոլի գավառը, Էջմիածնի գավառի մնացած մասը, Սուրմալուն, Շարուրը, Նախիջևանը, Կարսի նահանգը և այլն: 1919 թ. գարնանը հանրապետության գավառների թիվը անցնում էր մեկ տասնյակից, քաղաքների թիվը՝ նույնպես:

**Սոցիալական կազմի** տեսակետից հանրապետության բնակչության 85 տոկոսը կազմում էր գյուղացիությունը: Ավելի ուշ՝ 1920 թ. մայիսին, հանրապետության տարածքը վարչական տեսակետից բաժանվեց չորս նահանգների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունիքի: Այդ ժամանակ ՀՀ առավելագույն տարածքը հասավ 67 հազ. քառ. կմ-ի՝ 2 մլն բնակչությամբ: Գործնականում ՀՀ սահմանները ձգվում էին Արցախից մինչև Օլթիի ածխահանքերը:

Առաջին Հանրապետության կառավարության գործունեության կարևորագույն ոլորտներից էր սեփական ազգային բանակի ստեղծումը և պետության պաշտպանության իրականացումը: Բանակը եղել ու մնում է յուրաքանչյուր պետության կառուցվածքի անբաժանելի մասը: Պատմության փորձը սովորեցնում է, որ այն ազգն է անվտանգ, իսկ պետությունը՝ կենսունակ, որն ունի կարգապահ ու մարտունակ բանակ: Հայկական բանակի դերը առավել ևս կարևորվում էր, եթե նկատի ենք առնում նրա աշխարհաքաղաքական դիրքն ու պայմանները: Դա այդպիսին էր այն ժամանակ և մնում է նույնը 100 տարի անց, այսինքն՝ մեր ժամանակներում:

Կառավարության որոշմամբ՝ կազմալուծվեցին ՀՀ տարածքում գտնվող կամավորական ու հայդուկային խմբերը: Մասնավորապես խոսքը վերաբերում է հայդուկապետ Անդրանիկի գլխավորած հավաքական զորաջոկատին: Գեներալ Անդրանիկը որոշակի տարածայնություններ ուներ կառավարության հետ, ուստի 1919 թ. գարնանը նա իր սուրը և մյուս զենքերը հանձնեց կաթողիկոսին ու մեկընդմիջտ հեռացավ Հայաստանից:

1919 թ. հունվարից, երբ թուրքական զորքն արդեն հեռացել էր Անդրկովկասից, և ավարտվել էր նաև հայ-վրացական պատերազմը, կատարվեց բանակի մասնակի զորացրում: Դրա փոխարեն հայտարարվեց 20-25 տարեկան զինապարտ քաղաքացիների զորակոչ: 1919 թ. սեպտեմբերին ընդունված քաղաքացիների զորակոչի մասին օրենքը տարածվում էր նաև արևմտահայերի վրա: ՀՀ զինված ուժերը աստիճանաբար համալրվում էին թե՛ զորքով, թե՛ սպառազինությամբ և թե՛ նյութատեխնիկական միջոցներով: Հայոց բանակը համարվում էր մարտունակ: Արդեն 1920 թ. հունվարին հանրապետության զորքի թիվը հասնում էր 25 հազարի, իսկ աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի շրջանում, շուրջ 40 հազարի, այդ թվում՝ 33 զեներալ և 2000-ից ավելի սպա, որից ավելի քան 60-ը՝ գնդապետ, չհաշված տաղանդաշատ ու փորձառու հայդուկապետերն ու խմբապետերը<sup>3</sup>:

Կառուցվածքի տեսակետից ռազմական նախարարությունը կազմված

3 Տե՛ս Հակոբյան Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը, Եր., 2004, էջ 17:

էր նախարարից, ռազմական շտաբից՝ իրեն կից մի շարք բաժիններով, մատակարարման, ռազմատեխնիկական և վերահսկողության վարչություններից: ՀՀ անվտանգության ապահովման նպատակով երկրի ռազմաքաղաքական համակարգի կարևոր կառույցներից մեկը դարձավ հատուկ ծառայությունների՝ հետախուզության և հակահետախուզության կազմակերպումը, առանց որոնց անհնարին է պատկերացնել անկախ պետականությունը: Քայլեր արվեցին հատուկ ծառայությունների գործունեության հիմնական ուղղությունները ձևավորելու և համակարգելու համար՝ ռազմական, քաղաքական-դիվանագիտական, տնտեսական, գիտատեխնիկական և այլ ոլորտներում: ՀՀ անվտանգությանը աջակցություն էր ցուցաբերվում նաև կուսակցական խողովակներով:

Հանրապետության օրենսդիր մարմնում՝ պառլամենտում, գործում էր «Զինվորական» հանձնաժողովը, որը նախագահում էր Ռուբենը (Մ. Տեր-Մինասյան): Բնականաբար, հանձնաժողովի իրավօրենսդրական աշխատանքների առանցքը բանակի կայացման ու ամրապնդման հարցերն էին: Հանրապետության իշխանությունները միջոց ու ջանքեր չէին խնայում հայոց բանակը ամրապնդելու ու զորացնելու համար: Դա երևում է կառավարության ու խորհրդարանի կատարած ֆինանսական հատկացումներից: Վարչապետ Ալ. Խատիսյանի վկայությամբ՝ հանրապետության պետրոյուջեի մեծ մասը ծախսվում էր բանակի ու պաշտպանության նպատակների վրա<sup>4</sup>: Երբեմն հանգամանքների թելադրանքով զինվորական նախարարության անունով վարկեր էին բացվում առանց նախահաշիվների: Այսպես, օրինակ, 1919 թ. սեպտեմբերին զինվորական նախարարության անունով նախահաշիվից դուրս բացվել է 11,7 մլն. ռուբլու վարկ՝ ամերիկացիներից զորքի համար կոշիկներ գնելու նպատակով: Անգլիացիներից՝ 600 ջորի, 150 սայլ և զինվորական հանդերձանք գնելու համար հատկացվում է 12 մլն. ռուբլի: 1919 թ. աշնանը բանակի պարենավորման համար հատկացվում է 9,3 մլն. ռուբլի: Արդեն 1920 թ. գարնանը բանակի համաբարակային կարիքների համար բացվեց 85,4 մլն. ռուբլու վարկ, մեկ ամիս անց՝ 35,6 մլն. ռուբլի, արտակարգ ծախսերի համար՝ 40 մլն. ռուբլի և այլն<sup>5</sup>:

Ֆինանսական հատկացումներ էին կատարվում ոչ միայն բանակի կերակրման ու հանդերձավորման, այլև դրսից կախում չունենալու համար ռազմամթերքի սեփական արտադրության կազմակերպման նպատակով: Այսպես՝ 1919 թ. աշնանը մարտական գնդակներ պատրաստելու և փամփուշտներ լցնելու արհեստանոց հիմնելու համար հատկացվեց 6 մլն. ռուբլի: Իսկ մեկ այլ օրենքով Ալեքսանդրապոլի հրանոթային արհեստանոցների կազմակերպման ու կահավորման համար հատկացվեց 2 մլն. 172 հազար ռուբլի և այլն:

Մարտունակ և որակյալ բանակ ունենալու խնդրի լուծումը իշխանությունները տեսնում էին ոչ միայն ուժեղ տնտեսության, այլև զինվորների բարոյական կայունության ու հայրենիքին նվիրվածության մեջ: Շատ կարևոր էր բանակի ապաքաղաքական լինելը: Բանակի ամրապնդման նպատակով

4 Տե՛ս «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 3 հուլիսի 1920 թ., նաև **Արծրունի Վ.**, Հայ-տաճկական պատերազմը, Եր., 2002, էջ 23:

5 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 41 և 72, ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 159-160, ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ., էջ 52-53:

տակով կարևոր էր արդարության և հավասարության սկզբունքով գորակոչի մասին օրենքի գործադրումը: Առաջին Հանրապետությունում երկամյա պարտադիր զինծառայության էին ենթակա զորակոչային տարիքի բոլոր արական սեռի քաղաքացիները՝ առանց սոցիալական, կրթական և դիրքի խտրության, այդ թվում՝ բոլոր պաշտոնատար անձանց զավակները: Իբրև օրինակ՝ տեղին է հիշել, որ Հայաստանի ազատության և անկախության համար մղված կռիվներում որպես հայկական բանակի զինվորներ կռվեցին և զոհվեցին վարչապետներ Հ. Քաջազունու երկու որդիները՝ Աշոտը և Արամը, Հ. Օհանջանյանի միակ որդին, Ալ. Խատիսյանի եղբայրը և այլք:

Բանակում կարևոր խնդիրներից էին նաև կարգապահության ամրապնդումը, մարտական ոգու բարձրացումը, սեփական ուժերին ապավինելու գիտակցության ամրապնդումը, մայրենի լեզվի արմատավորումը և այլն: Այդ ուղղությամբ ևս զգալի աշխատանքներ կատարվեցին: Սակայն ժամանակի պակասը և արտաքին ու ներքին մի շարք աննպաստ հանգամանքներ հնարավորություն չտվեցին ավարտին հասցնել հայկական ազգային բանակի վերջնական ամրակայումը:

Կառավարության առջև ծառայած առաջնահերթ խնդիրներից էր՝ հասնել այլ պետությունների հետ դիվանագիտական կապերի հաստատմանն ու երկրի միջազգային ճանաչմանը: Որքան էլ զարմանալի է՝ ՀՀ առաջին ճանաչողը եղավ Թուրքիան, սակայն կողմերի միջև անմիջական հարաբերություններ չհաստատվեցին: Կարելի է ասել, որ ճանաչումը թելադրված էր Թուրքիայի անկայուն միջազգային վիճակով և կրում էր ձևական բնույթ:

Հայաստանը դիվանագիտական կապեր հաստատեց ու ներկայացուցչություններ հիմնեց ինչպես իր մյուս անմիջական հարևանների՝ Վրաստանի, Պարսկաստանի ու Ադրբեջանի, այնպես էլ Անտանտի և Քառյակ դաշինքի մի շարք երկրների հետ: Ընդհանուր հաշվով՝ մեկ-երկու տարվա ընթացքում Հայաստանը դիվանագիտական կապեր հաստատեց աշխարհի շուրջ 40 պետությունների հետ: Դիվանագիտական ներկայացուցչություններ (դեսպանատներ) բացվեցին Թիֆլիսում, Թեհրանում, Փարիզում, Հռոմում, Վաշինգտոնում, Տոկիոյում, Կիևում, Կրասնոդարում և այլուր: 1920 թ. հունվարին Անտանտի պետությունների Գերագույն խորհուրդը **de facto** ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանը պատրաստվում էր անդամակցելու այն ժամանակվա միջազգային ամենահեղինակավոր կազմակերպությանը՝ **Ազգերի լիգային**: Սակայն 1920 թ. վերջին Հայաստանի անկախության վերացման ու խորհրդայնացման հետևանքով այդ հարցը փակվեց:

Հայաստանի իշխանությունները ձգտում էին հանրապետության միջազգային ճանաչման միջոցով միջազգային նպաստավոր քաղաքական մթնոլորտ ստեղծել ոչ միայն Հայկական հարցի լուծման համար, այլև դրսից ֆինանսատնտեսական օժանդակություն ստանալու նպատակով, որպեսզի դրանով մեղմվեր երկրի սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, նաև կարգավորվեին հարաբերությունները անմիջական հարևանների հետ:

Կառավարությունը մտադիր էր դրսից փոխառություններ ու վարկեր ստանալ: Հենց այդ նպատակով էր, որ 1920 թ. հունիսին նախկին վարչապետ Ալ. Խատիսյանը գործուղվեց արտասահման: Նախատեսվում էր կնքել

Ժ (ԺԶ) փաթի. թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

Վլա համահայկական հանդես

20 մլն. դոլարի «Անկախության փոխառություն»<sup>6</sup>: Դրամահավաքի կազմակերպման գործում ՀՀ այդ ձեռնարկին մեծ աջակցություն ցուցաբերեցին գաղթաշխարհի առանց բացառության բոլոր հասարակական-քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները: Սակայն, ցավոք, հետագայում Հայաստանի խորհրդայնացման հետևանքով դրամահավաքի գործընթացը կասեցվեց:

Այսպիսով, դիվանագիտական կապեր հաստատելով՝ Հայաստանի կառավարությունը նպատակ էր հետապնդում հասնել հանրապետության համընդհանուր միջազգային ճանաչմանը, նպաստ բերել Հայկական հարցի լուծմանը, օտար պետությունների հետ հաստատել առևտրատնտեսական սերտ հարաբերություններ, մի խոսքով՝ հանրապետությունը դարձնել կենսունակ պետություն:

## 2. Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության առանձնահատկությունները

100 տարիների հեռվից արդի իրողությունների լույսի տակ դիտարկելով, քննելով ու արժևորելով հայ ժողովրդի կերտած անկախ պետականությունը, ի մասնավորի՝ նրա կառավարության գործունեությունը՝ կարելի է արձանագրել հետևյալ առանձնահատկությունները:

1. Հայաստանի անկախությունը տրամաբանական արդյունքն էր հայ ժողովրդի նախընթաց դարերի ազատագրական ոգորումների, 20-րդ դարակզբի պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների և առաջին հերթին Սայիսյան 1918 թ. հաղթական հերոսամարտերի: Պատմական այդ իրադարձությունը, անտարակույս, կարելի է համարել 20-րդ դարի հայոց պատմության ամենանշանավոր իրադարձությունը, որով էլ գործնականում սկսվեց Հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանը:

2. Ամենից առաջ պետք է հաշվի առնել, որ դարավոր ընդմիջումից հետո հայոց հողի վրա առաջին անգամ էր հիմնվում ազգային անկախ պետության՝ իր կառույցներով, ինչը նշանակում էր, որ տակավին չկար անհրաժեշտ կադրային պաշար ու կառավարման բավարար փորձ, և դրանք պետք է լրացվեին հընթացս:

3. Կառավարության գործունեության յուրահատկություններից մեկն այն էր, որ նորանկախ հանրապետությունը կառավարելիս պետք է հաշվի առնվեր այն ժամանակների աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը: Մեծ եղեռն տեսած ժողովուրդ, դեռ շարունակվող աշխարհամարտ, մի փոքր հողակտոր, գրեթե չորս կողմից թշնամական օղակում, բնական ու ֆիհանսական ռեսուրսների խիստ պակաս, համաձարակ, սով քայքայում և այլն: Ահա նման արտատվոր (էքստրեմալ) պայմաններում էին դրվում պետականաշինության հիմքերը:

4. Կենսունակ պետականություն կայացնելու ճանապարհին, սեփական տնտեսությունը գործի դնելուց զատ, մեծապես կարևորվում էր հանրապետության պաշտպանունակության ամրապնդումը, սեփական մարտունակ ազգային բանակի ստեղծումը: Դրա համար էլ ՀՀ կառավարությունը հար-

<sup>6</sup> Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 511, թ. 79, ֆ. 199, ց. 1, գ. 176, թ. 3-4:



կադրված էր տարեկան բյուջեի փաստորեն կեսից ավելին հատկացնել ռազմապաշտպանական նպատակներին:

5. Կառավարությունը երկրի տնտեսական համակարգը ձևավորելիս առաջնորդվում էր ինչպես դարերով հայ աշխատավորի մոտ ձևավորված ավանդույթներով, այնպես էլ հաշվի էին առնվում տնտեսվարման արդիական ու արդյունավետ ձևերն ու մեթոդները: Կառավարող ՀՅԴ-ն, լինելով եվրոպական տիպի ընկերվարական կուսակցություն, դեմ չէր, մրցակցային-շուկայական տնտեսությանը: Սակայն սեփականության բազմաձևության առկայության պայմաններում նա որոշակի տեղ էր տալիս տնտեսության կարևորագույն ճյուղերում պետական մասնաբաժնի (սեկտորի) առկայությանը, և տնտեսության մեջ պետության կարգավորիչ դերին, որն արդյունավետ գործիք կարող էր լինել՝ սանձելու սոցիալական սուր շերտավորումը (բևեռացումը), վայրի թալանն ու չարաշահումները:

6. ՀՀ պետական համակարգը ձևավորելիս փորձ էր արվում երկրի կառավարման մեջ ներգրավել ավելի լայն հասարակական-քաղաքական ուժեր, ժողովրդավարական ընտրությունների միջոցով ապահովել հասարակական լայն շերտերի մասնակցությունը գործադիր, օրենսդիր, տեղական և այլ մարմինների կառավարմանը: Թեև հանրապետության հիմնական կառավարող կուսակցությունը ՀՅԴ-ն էր, սակայն նա չէր ձգտում կուսակցական մենիշխանության: ՀՅԴ-ն, ի սկզբանե, հասարակական համերաշխություն հաստատելու և հանրության ջանքերը երկրի վերաշինության մեջ ներգրավելու նպատակով՝ գնաց կոալիցիոն (խառը) կառավարության ձևավորմանը: Այդպիսին էին Հ. Քաջազնունու և Ս. Վրացյանի կաբինետները:

ՀՅԴ-ն, լինելով ընկերվարական կուսակցություն, բնավ չէր խորշում քաղաքական կոալիցիա կազմել ազատական-շուկայական գաղափարներ ու արժեքներ դավանող Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) հետ և նրա հետ կազմել խառը կառավարություն: Նույն կերպ, Հայաստանի օրենսդիր և ՏԻՄ մարմիններում ևս ընդգրկված էին այլ կուսակցությունների ներկայացուցիչներ:

Ինչ վերաբերում է Բյուրո-կառավարության գործունեության շրջանին, ապա դրա ստեղծումը պայմանավորված էր պետության համար վտանգավոր իրավիճակով՝ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Հայաստանում բոլշևիկների 1920 թ. Մայիսյան ապստամբության, և դրա հետ կապված հանրապետության ողջ տարածքում թուրք-թաթարական հակապետական խռովությունների սաստկացման հանգամանքներով: Դրանով հանդերձ, իհարկե, լուրջ բացթողում էր, որ այդ ելույթների ճնշումից հետո Բյուրո-կառավարությունը շարունակեց գործել, ինչը հետագայում քննադատվեց կուսակցական համաժողովների կողմից:

7. ՀՀ-ում գործող 7-8 կուսակցություններից Հայոց անկախ պետականությանը դավող միակ քաղաքական ուժը Հայաստանի բոլշևիկներն էին, որոնք ուղղորդվում էին դրսից՝ Խորհրդային Ռուսաստանից, և իրենց ապակառուցողական ու թշնամական գործողություններով նպատակ էին դրել դրսի օգնությամբ տապալել Հայաստանի անկախությունը և Ռուսաստանի օրինակով այստեղ ևս հաստատել խորհրդային իշխանություն:

8. ՀՀ կառավարության արտաքին գործունեության առանձնահատուկ

կարևորության խնդիրներից էր Հայկական հարցի լուծումը. այն է՝ Հայաստանի երկու հատվածների միավորումով ստեղծել **Միացյալ և Անկախ Հայաստան**, մի խնդիր, որն աշխարհամարտի ավարտից հետո, երբ վերագծվում էր աշխարհի նոր քաղաքական քարտեզը, միանգամայն իրատեսական էր: Այդ նպատակով Եվրոպա մեկնեց ՀՀ կառավարական պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի գլխավորությամբ: Մինչ այդ Եվրոպայում էր գործում նաև Ազգային պատվիրակությունը՝ Պ. Նուպար փաշայի գլխավորությամբ: Փարիզի խաղաղության կոնֆերանսում եղան բազում քննարկումներ, առաջ քաշվեց Միացյալ Հայաստանի խնամակալության (մանդատի) հարցը, անգամ 1920 թ. օգոստոսի 10-ին Թուրքիայի հետ ստորագրվեց Սևրի հաշտության պայմանագիրը և նույնիսկ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճռով գծվեց հայ-թուրքական պետական սահմանը, սակայն տերությունների քաղաքական խարդավանքների, նրանց ներհակությունների ու շահերի թելադրանքով այն կյանքի չկոչվեց:

9. Ավելին, ոչ միայն չլուծվեց Հայկական հարցը, այլև դե ֆակտո և դե յուրե ճանաչված ՀՀ-ը դարձավ մեծ տերությունների խարդավանքների գոհր: Տակավին 1919 թ. ամռանից Թուրքիայում, գեն. Մ. Քեմալի գլխավորությամբ, գլուխ բարձրացրած թուրք-ազգայնական (միլլի) շարժումը խնդիր դրեց, որ ոչ մի տարածքային զիջում չարվի հայերին: Թուրքական այսպես կոչված՝ «Ազգային ուխտով» ծրագրվեց խորտակել ՀՀ-ը և ոչնչացնել Հայաստանի բանակը: Դա քեմալականներին հաջողվեց առաջին հերթին Խորհրդային Ռուսաստանում կառավարող բոլշևիկների հետ մերձենալու ու բարեկամանալու շնորհիվ: Միմյանց շահերի համընկնումով Թուրքիան Ռուսաստանից ստացավ զենք, զինամթերք, ոսկի և 1920 թ. աշնանը հարձակվեց ՀՀ-ի վրա: Հայաստանը չկարողացավ պատշաճ դիմադրություն ցույց տալ, պարտվեց և 1920 թ. դեկտեմբերի 2-ին հարկադրված էր կնքել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որով Թուրքիան ՀՀ-ից խլեց նրա արևելահայ տարածքների զգալի մասը, իսկ այդ նույն օրը՝ դեկտեմբերի 2-ի Երևանի՝ Դրո-Լեգրան համաձայնագրով ՀՀ կառավարությունը կամավոր հեռացավ իշխանությունից: Թուրքական գրավումից զերծ տարածքում հաստատվեց խորհրդային իշխանությունը: Այսպիսով, հայ ժողովուրդը արտաքին բիրտ միջամտության հետևանքով կորցրեց իր անկախ պետականությունը, բայց նա չկորցրեց հավատը Հայաստանի անկախության հանդեպ: Հայ ժողովուրդը՝ որպես իր նվիրական իղձ, շարունակում է պահպանել Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան կերտելու տեսլականը:

10. Հայաստանի Հանրապետության կառավարության կարճատև գործունեության փորձը, անշուշտ, օգտակար և ուսանելի է նաև մեր ժամանակներում, քանզի, 100 տարի անց, ըստ էության, Հայաստանը գտնվում է աշխարհաքաղաքական գրեթե նույն պայմաններում, նույնն են մեր չորս հարևանները իրենց նկրտումներով, դարձյալ կասկածելի ու չակերտավոր են նաև մեր դաշնակիցները, մի պարագա, որը ինքնին թելադրում է, որ Հայաստանի ու հայ ժողովրդի անվտանգության ու հարատևման միակ հուսալի երաշխավորը կարող է լինել մեր հավաքական կամքն ու ուժը մարմնավորող հայոց ազգային բանակը:

11. Երբ 100-ամյա հեռավորությունից դիտարկում ենք Հայաստանի Հան-

րապետության պատմությունը, ապա նկատում ենք, որ ուժերի ու ջանքերի գերմարդկային լարումով, գրեթե ոչնչից, իր ժամանակի պահանջներին ու չափանիշներին համապատասխան կերտված անկախ պետականությունը դարձավ այն հիմքը, որի վրա բարձրացավ Խորհրդային Հայաստանը, իսկ նրա հիմքի վրա էլ՝ մերօրյա Հայաստանի Հանրապետությունը:

12. Ասվածը հիմք է տալիս համոզմունք հայտնելու, որ ինչքան հեռանանք Առաջին Հանրապետության ժամանակներից, այնքան կմեծանա «Մայիս 28-ի» արժեքը: Հայոց վերջին 100 տարիների պատմության տարեգրությունը ցույց է տալիս նաև, որ Հայաստանն ու հայ ժողովուրդն իրենց կերտած պետություններով, ստեղծած նյութական, հոգևոր ու բարոյական արժեքներով անուրանալի ներդրում ունեն համաշխարհային քաղաքակրթության գանձարանում:

13. Ժառանգորդականության և իրավահաջորդության ներքին հոգևոր կապ կա «Մայիս 28-ի» և «Սեպտեմբերի 21-ի» միջև: Հայաստանի Հանրապետության անկումից հետո էլ՝ խորհրդային 70 տարիների ընթացքում, հայրենիքում՝ հարկադրված-լուռ, իսկ գաղթաշխարհում՝ բարձրաձայն, չմարեց անկախության ոգին, վկան՝ Հայաստանի ներկայիս հանրապետությունը: Հենց դրանում է «Մայիս 28-ի» և «Եռագույնի» խորհուրդը:

14. 100 տարիների հեռվից ըստ արժանվույն գնահատելով 20-րդ դարի Հայոց առաջին անկախ պետականությունը՝ այսօր, երրորդ հազարամյակում, տեխնոլոգիական թռիչքներ ապրող, շարունակ փոփոխվող ու նոր մարտահրավերներով հագեցած աշխարհում մեզ համար առաջնայինը պետք է լինի ոչ թե սոսկ ֆիզիկական գոյատևման հիմնահարցը, այլ համաշխարհային գործընթացներից հետ չմնալու, Հայոց պետականության շրջանակներում և նրանից դուրս ժամանակակից չափանիշներով զարգանալու ու բարգավաճելու, ազգային նվիրական բաղձանքների իրագործմանը հասնելու առաջադրանքը:

**Արարատ Մ. Հակոբյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 20-րդ դարի Հայոց պատմության առանցքային հիմնահարցերը: Հրատարակել է մի շարք մենագրություններ Հայաստանի Հանրապետության պատմության մասին: Ուշագրավ են նաև հեղինակի աշխատություններն ու հոդվածները՝ Փետրվարյան ապստամբության և Խորհրդային Հայաստանում մենատիրական վարչակարգի հաստատման նախնական ժամանակաշրջանի՝ 1920-ական թվականների վերաբերյալ:

## Summary

### **The GOVERNMENT OF RA IN 1918 – 1920 AND THE PECULIARITIES OF ITS ACTIVITY**

Ararat M. Hakobyan  
*Doctor of Historical Sciences*

**Key words** – May 28, government of Armenia, Aram Manukyan, state machinery, ARF, H. Kajaznuni, state building, parliament, autonomies, prime-minister, coalition government, diplomatic ties.

In examining and evaluating the independent statehood created by the Armenian people and particularly the activity of its government 100 years later we can come to the following conclusions:

–The proclamation of Armenia’s independence after the centuries–old break was the result of victorious heroic battles of May, 1918.

– The people who had seen and survived genocide were forming statehood at the time of ongoing World War, in hostile surrounding, under the complex conditions of migration, famine and epidemics.

– The chief organizer of the state–creation workings was the government of RA. Only in 2.5 years the governments headed by four prime–ministers of ARF party managed to create an organized and vital state with its central and local bodies of authority, moderate liberal economy, diplomatic ties, national army, and symbols of statehood and so on. In governing the country the national, spiritual– cultural values historically rooted in the industrious Armenian nation, as well as, the advanced democratic, political, legal and economic forms and methods of modern times have been taken into consideration.

– The governing ARF party alongside with creation of social support didn’t disdain to involve other social–political forces through elections and coalition principals into the governing of the state.

– The experience and lessons of the government of the First Republic of Armenia are also instructive nowadays so there is inner link between inheritance and succession of “May 28” and “September 21”.

## ПРАВИТЕЛЬСТВО РА В 1918–1920 ГГ. И ОСОБЕННОСТИ ЕГО ДЕЯТЕЛЬНОСТИ

Арарат М. Акопян  
*Доктор исторических наук*

**Ключевые слова** – 28 мая, правительство Армении, Арам Манукян, государственный аппарат, АРФ Дашнакцутюн, О. Каджазнуни, государственное строительство, парламент, автономии, премьер-министр, коалиционное правительство, дипломатические связи.

Исследуя и оценивая независимую государственность, созданную армянским народом в 1918 году, в частности, деятельность его правительства, можно прийти к следующим заключениям:

– Провозглашение независимости Армении после многовекового перерыва была результатом героических сражений в мае 1918 г.

– Народ, видевший и переживший Геноцид, формировал государственность в сложных условиях Мировой войны, вражеского окружения, беженства, голода и эпидемий.

– Главным организатором работ по государственному строительству являлось правительство РА. Всего за 2,5 года правительства, возглавляемые четырьмя премьер-министрами от партии АРФ Дашнакцутюн, сумели создать организованное и жизнеспособное государство с центральными и местными органами власти, умеренно либеральным хозяйством, дипломатическими связями, национальной армией, символами государственности и т. д. При правлении страной учитывались как национальные духовно-культурные ценности, исторически укоренившиеся в трудолюбивом армянском народе, так и передовые политические, правовые и экономические формы и методы правления.

– Правящая партия АРФ Дашнакцутюн, создав широкую социальную опору, не гнушалась привлекать через выборы и по коалиционному принципу приобщить к правлению государством другие общественно-политические силы.

– Опыт и уроки правления Первой Республики, несомненно, поучительны также в наше время, так что существует внутренняя связь унаследования и правопреимства между 28-ым мая и 21-ым сентября.

### REFERENCES

1. **Hakobyan A.**, Hayastani Hanrapetutyun (1918-1920 tt.) Yer., 1992. **(In Armenian)**
2. **Khatisyan Al.**, Hayastani Hanrapetutean tsagumə yev zargacumə Peyrut, 1968. **(In Armenian)**

ՀՀ-ի հանրապետության հանրապետության 4 (64) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

3. **Hakobyan A.**, 1920 t., turq-haykakan paterazmi patmutyan pordzn u daserə, Yer., 2004. **(In Armenian)**
4. «Chakatamart», **K. Polis**, 3 hulisi 1920 t. **(In Armenian)**
5. **Artsruni V.**, Hay-tachkakan paterazmi pordzn u daserə, Yer., 2004. **(In Armenian)**
6. **Yeghishe Charenc**, Yerkeri zhoghovatsu 4 hatorov, h. 4, Yer., 1987. **(In Armenian)**
7. **Ellen Biuzand**, Karsə yev Akhper Ashon, Tehran, 1962. **(In Armenian)**
8. **Tonkonozhenko A. I.**, Kars?: prolyataya pamyat, Moskva, 2010. **(In Armenian)**
9. **Orhan Pamuk**, Dzjunə, Yer., 2009. **(In Armenian)**
10. **Virabyan V. H.**, Haykakan himnakhndirnerə 1918-1920 tt., «Lraber Hasarakakan Gitutyunneri», N 1, 2006.
11. **Vracyan S.**, Armeniya mezhdou bol'lshevistskim molotom i tureckoj nakoval'nej. Yerevan, 1992. **(In Armenian)**



Աննա Է. Ասատրյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԱԿԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918–1920 ԹԹ.

Վաղարշապատի քաղաքային իշխանությունների  
ընտրության ու գործունեության օրինակով\*

**Բանալի բառեր** – Վաղարշապատ, քաղաքագլուխ, իրավասու, ընտրություն, քվե, վարչություն, քաղաքային խորհուրդ, տնտեսություն, կրթություն, կուսակցություն:

### Մուտք

Վաղարշապատում տեղական ինքնավարության մարմիններ ստեղծելու հարցը հասունացել էր դեռևս ցարական իշխանության ժամանակ: Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդ Ռոմանովի օրոք այստեղ ձևավորվեց ընտրովի մարմին, որը արտաքուստ գրեթե նման էր քաղաքային խորհրդին: Տարին մեկ անգամ ընտրվում էին այսպես կոչված քսանապետեր: Ներկայացուցչական այդ մարմինը, չնայած իր դասային բնույթին, կատարում էր դրական դեր՝ կանոնավորելով համայնքի աշխատանքները<sup>1</sup>:

Սակայն 1917 թ. իրար հաջորդած հեղափոխական ալիքների արդյունքում վերջինս կազմալուծվեց, և միայն ՀՀ գոյության տարիներին՝ ժողովրդավարական սկզբունքների հիման վրա, Վաղարշապատում ձևավորվեցին տեղական ինքնակառավարման մարմիններ:

1918 թ. ամռանը և աշնանը, երբ դեռ նոր էին ձևավորվում ՀՀ կենտրոնական իշխանության մարմինները, որոնք փորձում էին «անձև քառսից ու ավերակներից» փրկել հայ ժողովրդին, ՏԻՄ համակարգի ստեղծումը տակավին քաղաքական օրակարգ չէր բարձրացել: Դեռևս 1918 թ. օգոստոսի

\* Գիտաժողով-քննարկման ժամանակ ներկայացված այս զեկուցման դրույթների մի մասը նախապես իրապարակվել է «ՎԷՄ» հանդեսում (տե՛ս Ասատրյան Ա. Է., Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները 1918–1920 թթ., «ՎԷՄ», Եր. 2018, հունվար–մարտ, N 1(61), էջ 225–245): Ուստի կրկնությունից խուսափելու համար տպագրում ենք միայն Վաղարշապատի քաղաքային ինքնավարության պատմությանը վերաբերվող հատվածը: Խմբ.:  
1 Տե՛ս «Արարատյան աշխատավոր», 6 հունիս, 1919:

ՎԷՄ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) քառի, թիվ 4 (64), հոկտեմբեր–դեկտեմբեր, 2018

1-ին իր աշխատանքները սկսած Հայաստանի խորհրդում կային պատգամավորներ, որոնք, ներկայացնելով հիմնավորված փաստարկներ, անհրաժեշտություն էին համարում առաջինն էջմիածնի գավառում ստեղծել տեղական ինքնավարություն՝ պառլամենտի «Ինքնավարությունների հանձնաժողովից» պահանջելով արագացնել նրա ներդրումը: Ըստ նրանց՝ այդ գավառում առկա են ՏԻՄ-երի կայացման համար անհրաժեշտ մարդկային և տնտեսական գործոնները՝ բնակչության մտավոր ներուժը, գավառին բնորոշ՝ գինու, կոնյակի, օղու, բամբակի արտադրական հզորությունների ու մեծածավալ ցանքատարածությունների առկայությունը<sup>2</sup>:

1919 թ. ՀՀ իշխանությունները, մասնավորապես կառավարությունը առավել մեծ ուշադրություն դարձրին ՏԻՄ-երի ստեղծմանը և այդ ուղղությամբ ձեռնարկեցին մի շարք քայլեր: Այսպես՝ 1919 թ. մայիսի 20-ին կառավարության որոշումով ՀՀ մի քանի ավաններ, գյուղաքաղաքներ ստացան քաղաքի կարգավիճակ, իսկ 1919 թ. մայիսի 23-ին կառավարությունը հաստատեց «ՀՀ մի քանի վայրերում քաղաքային կանոնադրություն մտցնելու մասին» օրենքը<sup>3</sup>: Ըստ այդմ՝ օրենքով նախատեսված քաղաքներում, այդ թվում՝ Վաղարշապատում, պետք է ձևավորվեին ՏԻՄ մարմիններ՝ քաղաքային խորհուրդ և վարչություն:

## 1. Քաղաքային իշխանության մարմինների ընտրությունները

1919 թ. հուլիսի 2-ին ՆԳ նախարարությունն էջմիածնի գավառային կոմիսարին կարգադրեց ձևավորել քաղաքային ընտրական հանձնաժողով, որի նախագահությունը ստանձնեց հաշտարար դատավոր Հովհաննես Զաքարյանը<sup>4</sup>: Ընտրական հանձնաժողովի անդամներն էին Գարեգին Հակոբյանը, Գառնիկ Քալաշյանը, Արամ Մուշեղյանը, Սահակ Չիլինգարյանը<sup>5</sup>: Վերջիններս պարբերաբար հրավիրում էին նիստեր, որտեղ քննարկում էին ընտրական գործընթացների հետ առնչվող խնդիրներ: Հանձնաժողովն ավելորդ տեխնիկական անհարմարություններից խուսափելու համար և հաշվի առնելով քաղաքի փոքր մասշտաբը<sup>6</sup> որոշեց չկատարել բնակչության նոր հաշվառում, հիմնվել պառլամենտական ընտրությունների համար կազմված ցուցակների վրա, որոնք անհրաժեշտության դեպքում կարող էին լրացվել:

Հանձնաժողովի 1919 թ. սեպտեմբերի 13-ի նիստին նախագահը զեկուցեց, որ ստացել է ՀՅ Դաշնակցություն կուսակցության, «Վաղարշապատի հասարակության խումբ»-ի և «Սոցիալիստական խումբ»-ի իրավասուների թեկնածուների ցուցակները: Վերոհիշյալ ցանկերը վավերացվեցին և ըստ ներկայացման տրվեցին հետևյալ համարները՝ ՀՅԴ – թիվ 1, Վաղարշապատի հասարակության խումբ – թիվ 2, Սոցիալիստական խմբակ – թիվ 3: Նիստում հայտարարվեց, որ ՆԳՆ-ն մերժել է 2 օրում ընտրություններ անց-

2 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 2, գ. 44, թ. 8:

3 Տե՛ս **Ասատրյան Ա. Է.**, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները 1918–1920 թթ., «ՎԷՄ», Եր., 2018 հունվար–մարտ, N 1(61), էջ 225–245:

4 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 244, թ. 30–32, 38:

5 Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց.1, գ. 244, թ. 30:

6 Վաղարշապատի բնակչության ընդհանուր թիվը, ներառյալ գաղթականությունը, 12 հազ. էր, սակայն բնիկ վաղարշապատցիները մոտ 3500 հոգի էին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 5, թ. 215):



կացնելու առաջարկը և արգելել է զինվորականների ու կուսակրոնների մասնակցությունն ընտրություններին<sup>7</sup>: Սեպտեմբերի 15-ին որոշվեց հրավիրել ներկայացված կուսակցությունների և խմբակցությունների ներկայացուցիչներին՝ հանձնաժողովի բոլոր աշխատանքներին մասնակցելու համար<sup>8</sup>: ՀՅԴ ներկայացուցիչ նշանակվեց Գրիգոր Գառնյանը, իսկ Սոցիալիստական խմբակիսը՝ տիկին Հ. Աղազադյանը<sup>9</sup>:

Հանձնաժողովի անդամները հաճախ էին բարձրաձայնում ընտրությունների հետ կապված հիմնախնդիրների մասին, մասնավորապես ընտրական ցուցակների հետ կապված թերացումները, որի հետևանքով, ըստ նրանց, շատերը զրկվել էին ընտրական իրավունքից: Ընտրական հանձնաժողովի որոշ անդամներ՝ Գ. Գառնյանը, Ա. Մուշեղյանը նպատակահարմար էին համարում դադարեցնել նախընտրական գործընթացները՝ վկայաբերելով բնակչության մեծամասնության բացասական վերաբերմունքն ընտրությունների նկատմամբ: Ուստի պատահական չէր, որ 1919 թ. սեպտեմբերի 21-ին Վաղարշապատում հաշվառված 6000 ընտրողից քվեատուփին մոտեցավ միայն 382 քաղաքացի, որոնց ձայները բաշխվեցին հետևյալ կերպ. թիվ 1 ցուցակ՝ 163 ձայն (8 իրավասու), թիվ 2 ցուցակ՝ 157 ձայն (8 իրավասու), թիվ 3 ցուցակ՝ 69 ձայն (4 իրավասու): Արխիվային նյութերը վկայում են նախընտրական շրջանում և հատկապես ընտրություններից հետո քաղաքում շիկացած քաղաքական մթնոլորտի մասին: Այսպես՝ «Արարատյան աշխատավոր» թերթը հրաժարվել էր տպագրել թիվ 2 ցուցակի թեկնածուների անվանացանկը<sup>10</sup>: Իսկ Վաղարշապատի հաշտարար դատավորը որոշել էր մի քանի ամսվա բանտարկության ենթարկել «Արարատյան աշխատավոր» և «Հայաստանի աշխատավոր» թերթերի թղթակից Թ. Թադևոսյանին (ՀՅԴ)՝ էսէր Պ. Ստամբուլյանին ապտակելու համար<sup>11</sup>:

Քաղաքական ընդդիմությունը ներկայացնող ՀԺԿ Վաղարշապատի կոմիտեն ընտրական հանձնաժողովի կազմը և նրա ծավալած գործունեությունը որակեց հակաօրինական: Հետընտրական շրջանում որոշ քաղաքացիներ ՆԳ նախարարությունից պահանջեցին բեկանել ընտրությունների արդյունքները՝ ընտրողների մեծամասնության՝ ընտրություններին չմասնակցելու, ընտրական նոր ցուցակների բացակայության, պաշտոնատար անձանց կիրառած ճնշումների և այլ հանգամանքների պատճառով<sup>12</sup>: Ի դեպ, հարկ է նշել, որ թիվ 2 ցանկում (Վաղարշապատի հասարակության խումբ), ըստ էության, ընդգրկված էին ՀԺԿ անդամներ կամ նրանց համակիրներ<sup>13</sup>, իսկ թիվ 3 ցանկում՝ էսէռներ: Դա նշանակում էր, որ ՀՅԴ-ն քաղաքային խորհրդում և վարչությունում չէր ունենալու ձայների մեծամասնություն: Այնուհանդերձ, ՀՀ ՆԳՆ հաստատեց ընտրությունների արդյունքները, ինչը ևս մեկ անգամ հավաստեց, որ Ա. Խատիսյանի վարչապետության շրջանում պետական շահերը վեր էին դասվում կուսակցական շահերից:

1919 թ. հոկտեմբերի 26-ին հաշտարար դատարանի շենքում գումարված

7 Տես ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 244, թ. 22:

8 Տես ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 244, թ. 22:

9 Տես նույն տեղում, ֆ. 201, ց.1, գ. 244, թ.45, 48:

10 Տես նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 244, թ. 12, 19, 23-27:

11 Տես «Ժողովուրդ», Եր., 17 հոկտեմբեր, 1919:

12 Տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 244, թ. 9-10:

13 Տես « Ժողովուրդ», Եր., 26 սեպտեմբեր, 1919, տես նաև՝ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 244, թ. 58:

քաղաքային խորհրդի առաջին նիստում, որին ներկա էին 20 իրավասուից 19-ը, խորհրդի նախագահ ընտրվեց ՀՅԴ խմբակցության անդամ Ս. Կարոյանը (18 կողմ): Սակայն փոքրամասնության մեջ հայտնված ՀՅԴ-ն ստիպված էր համագործակցության ուղիներ փնտրել ՀՀ օրենսդիր մարմնում ներկայացված էսէռների հետ: Վաղարշապատի հասարակությունը քաղաքագլխի թեկնածու առաջադրեց Ռ. Օհանջանյանին, իսկ ՀՅԴ խմբակցությունը՝ Սոցիալիստական խմբի ներկայացուցիչ, անկուսակցական Գարսևան Սլկունուն: Վաղարշապատի հասարակության իրավասուները հասկացան, որ ՀՅԴ-ի և էսէռների միջև կնքվել է քաղաքական գործարք և, իրենց համարելով էսէռների կողմից խաբված, ամբողջ կազմով հեռացան ժողովից, որը, սակայն, չխանգարեց Գարսևան Սլկունուն ընտրվել քաղաքագլխի պաշտոնում: Վերջինս հայտարարեց, որ որպես քաղաքագլուխ, ցանկալի չի համարում հարել որևէ խմբակցության<sup>14</sup>: Փաստորեն դաշնակցականները, քաղաքագլխի պաշտոնը զիջելով էսէռներին, փորձեցին խորհրդում ձեռք բերել համախոհներ, իսկ ցուցակը գլխավորող դաշնակցական Սկրտիչ Ստեփանյանի՝ քաղաքագլուխ դառնալու ձգտումները ի չիք դարձան<sup>15</sup>:

Խորհուրդը բազմակուսակցական սկզբունքով ընտրեց խորհրդի հանձնաժողովներ՝ լիկվիդացիայի, բյուջետաֆինանսական, ջրային, դպրոցական և այլն: Քաղաքային իրավասուներից ձևավորվեց նաև վարչության կազմը: Վարչության ներսում կատարվեց աշխատանքի բաժանում: Ստեղծվեցին սանիտարական, պարենավորման, բռնագրավման, դպրոցական և այլ հանձնաժողովներ, որոնք գործնականում իրականացնում էին քաղաքային խորհրդի որոշումները, մշակում քաղաքի սոցիալ-տնտեսական կյանքի բարեկարգման ծրագրեր:

## 2. Վաղարշապատի խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը

Քաղաքային իշխանությունները ձեռնամուխ եղան իրենց գործառույթների իրականացմանը, որոնցից էին բնակչության սոցիալական պաշտպանությունը, սանիտարահիգիենիկ անվտանգության պահպանումը: Սանիտարահիգիենիկ անվտանգության ապահովման և համաձարակի դեմ պայքարելու համար 1919 թ. դեկտեմբերի 10-ին խորհուրդը հաստատեց վարչության կազմած պարտադիր կանոնները, ըստ որի՝ տնատերերը պարտավոր էին մինչև փողոցը մաքրել բակը, մեկ ուղղության վրա գտնվող խանութատերերը՝ ունենալ ընդհանուր աղբարկղ և այլն<sup>16</sup>, իսկ վարչությունը գլխավոր փողոցներում և հրապարակում նշանակեց հսկիչներ ու մաքրության գործի կառավարիչ: Համաձարակների դեմ պայքարելու համար վարչությանն օժանդակության ձեռք մեկնեց Խնամատարության և վերաշինության նախարարությունը՝ տրամադրելով 2 մլն 307 հազ. ռ.: Ամերիկյան կոմիտեի իրավասությանը հանձնվեց քաղաքային բաղնիքը, որտեղ ունեգուրկները լողանալու էին անվճար, ախտահարվելու էին նրանց հագուստները<sup>17</sup>:

Քաղաքային մարմինների առաջ կանգնած սոցիալական հաջորդ հիմ-

14 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 244, թ. 51, 80:

15 Տե՛ս « Ժողովուրդ », եր., 17 հոկտեմբերի, 1919 թ.:

16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 214, ց. 2, գ. 17, թ. 3:

17 Տե՛ս նույն տեղում, ֆ. 214, ց. 2, գ. 16, թ. 24:

նահարցը քաղաքի պարենավորումն էր, որի արդյունավետ լուծման համար 1920 թ. հունվարի 26-ին վարչության գեկուցման համաձայն՝ խորհուրդը որոշեց վերոնշյալ գործառույթը լիազորել վարչությանը: Ներքին շուկայում ապրանքների փոխանակման, վաճառքի կազմակերպման համար ստեղծվեց հատուկ կոմիտե, որի մեջ ընդգրկվեցին վարչության ամբողջ կազմը, երեք իրավասու, ինչպես նաև Արդարադատության, Խնամատարության նախարարությունների, գյուղատնտեսական ընկերությունների, կոոպերատիվների ներկայացուցիչները: Չարաշահումներից խուսափելու համար խորհուրդը դիմեց ամերիկյան ներկայացուցիչներին՝ խնդրելով հացի բաշխումն իրականացնել կամ վարչության միջոցով, կամ վերջինիս կազմած ցուցակներին համապատասխան<sup>18</sup>, որին ի պատասխան՝ ամերիկացիները հացի բաշխման իրավասությունը հանձնեցին վարչությանը<sup>19</sup>: Հետագայում, երբ ամերիկացիները դադարեցրին քաղաքային իշխանություններին ապահովել այլուրով ու հացով, դրանց գնման, բաշխման գործառույթը դարձավ վարչության անմիջական պարտականությունը: Գնաձի պայմաններում վարչությունը խուսափում էր բարձրացնել հացի գինը, քանի որ դրան հաջորդած «ամբոխային հուզումները» ավելի անելանելի իրավիճակ կստեղծեին: Հարկ է նշել, որ ինքնավարության տվյալներով 1920 թ. մայիսին քաղաքային կտրոններով, ինքնարժեքից ցածր գներով վարչությունը հոգում էր 10 հազ. մարդու հացի կարիքները՝ օրական կրելով 60 հազ. ո. վնաս<sup>20</sup>: Խորհրդի որոշմամբ՝ վարչությանը լիազորվեց կատարել ցորենի մեծածավալ գնումներ՝ 1 մլն ո. սահմաններում, արգելվեց քաղաքից հացահատիկի արտահանումը: ՆԳՆ կարգադրությամբ վարչությունը իրականացրեց նաև ցորենի բռնագրավում<sup>21</sup>:

Եթե կենսամթերքների բռնագրավումը պետության կողմից պատվիրակված գործառույթ էր, ապա քաղաքապատկան հողերը քաղաքային ֆոնդի մեջ ներառումը, բնակարանների բռնագրավումը ինքնավարությունների անմիջական՝ քաղաքային օրենսդրությամբ նախատեսված պարտավորություններից էր: Քաղաքապատկան հողերի սահմանագատման համար հարկավոր էր նախ կատարել հողաչափումներ, և այդ նպատակով, վարչության դիմումի համաձայն, ճարտարապետ Ա. Թամանյանի կողմից Վաղարշապատ գործուղված երկրաչափ-ճարտարագետ Եփրեմ Մամուլյանը կատարեց հողաչափումներ<sup>22</sup>: Քաղաքային խորհրդի որոշմամբ քաղաքապատկան հողերը շահագործվելու էին վարչության հայեցողությամբ՝ բաժանելու դեպքում առավելությունը տալով չունևորներին: Հողային ֆոնդի ընդարձակման համար քաղաքային խորհուրդը նպատակահարմար էր համարում վանքապատկան հողերի մունիցիպալացումը: Բանն այն էր, որ Վաղարշապատի 9 հազ. խալվար հողերից 6 հազ. վանքապատկան էին, որոնք, ի դեպ, եկեղեցին վարձակալության էր տվել մասնավոր անձանց: Երբ 1919 թ. դեկտեմբերի 17-ին խորհրդի հանդիսավոր նիստին ներկա ՆԳ նախարարին առաջարկեցին հողային ֆոնդը համալրել վանքապատկան հողերի հաշվին,

18 Տես նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 139, թ. 29-32:

19 Տես ՀԱԱ, ֆ. 214, ց. 2, գ. 18, թ. 38:

20 Տես նույն տեղում, ֆ. 205, ց. 1, գ. 690, թ. 162:

21 Տես նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 139, թ. 119, 140:

22 Տես նույն տեղում, ֆ. 214, ց. 2, գ. 28, թ. 2, գ. 14, թ. 33:

վերջինս պատասխանեց, որ այդ ուղղությամբ գործում են հանձնաժողովներ, և դեռևս չկան մշակված օրենքներ<sup>23</sup>:

Հարկ է նկատել, որ վանքապատկան հողերի բռնագրավման խնդրում առկա էր երկվություն ու նաև հակասություն կառավարող կուսակցության՝ ՀՅԴ-ի որդեգրած ագրարային ծրագրի և գործնական քաղաքականության միջև: Երբ քաղաքային վարչությանը չթույլատրվեց տիրանալ վանքապատկան հողերին, ելնելով իր իսկ իրավասությունից՝ նա հարկեր սահմանեց քաղաքի վարչական սահմանների մեջ մտնող Սրբ. Հռիփսիմե, Սրբ. Գայանե վանքերի ցանքատարածությունների վրա (բացառությամբ Սրբ. Էջմիածնի)<sup>24</sup>, բռնագրավեց առանձին վանական շինություններ, որի հետևանքով սրվեցին Մայր Աթոռի և քաղաքային ինքնավարության փոխհարաբերությունները: 1920 թ. հոկտեմբերի 25-ին կաթողիկոսն անգամ դիմել է վարչապետ Հ. Օհանջանյանին՝ վանքապատկան շինությունները քաղաքային ինքնավարության կողմից չբռնագրավելու խնդրանքով<sup>25</sup>:

Սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար Վաղարշապատի քաղաքային իշխանությունները կարևորեցին քաղաքային հարկերի ու տուրքերի նոր համակարգի կիրառումը, անմշակ հողերում հացահատիկային և այլ կուլտուրաների ցանքերի կազմակերպումը<sup>26</sup>, ջուլիականոցի բացումը, Զանգվի ջրերի շահագործման վերսկսումը: Քաղաքային խորհրդի որոշմամբ բացված ջուլիականոցը աշխատատեղով ապահովեց 22 մարդու<sup>27</sup>:

Այնուհանդերձ, Վաղարշապատի բնակչության եկամուտի հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն էր՝ հողագործությունը և այգեգործությունը, որոնց զարգացումը պայմանավորված էր ոռոգման համակարգի հետ: ՀՀ-ում բերքատվության նվազման հիմնական պատճառներից էր ջրանցքների, առուների անամխիթար վիճակը, որը հանգեցրեց այգեգործական կուլտուրաների համախառն արտադրանքի կրճատմանը: ՀՀ ջրային ռեսուրսներից Արարատյան դաշտի համար անգնահատելի էին Զանգվի (Հրազդանի) ջրային պաշարները, որոնց տարեկան քանակը, ըստ ինժիներ Գ. Աղաբաբյանի, կազմում էր 1.079.122176 խ/մ, որով կարելի էր 7 ամսվա ընթացքում ոռոգել 118951 դեսյատին հող<sup>28</sup>: Այս ամենը գիտակցելով՝ 1919 թ. նոյեմբերի 22-ին քաղաքային խորհուրդը որոշեց «ոչ մի դեպքում կանգ չառնելով որևէ ծախսի դիմաց» մաքրել Զանգուն՝ Սևանա լճի շահագործման միակ բնական ճանապարհը: Իր հերթին կառավարությունը, ջրային ռեսուրսների օգտագործումը համարելով առաջնահերթ խնդիրներից մեկը, քաղաքային ինքնավարությանը հատկացրեց 8 մլն 242733 ռ. մուրհակ (անտոկոս, 5 տարի ժամկետով)<sup>29</sup>:

Ինքնավարության սոցիալական քաղաքականության ոլորտներից էին նաև որբերի խնամարության, քաղաքային գրադարան-ընթերցարանի բացման, կրթամշակութային հարցերը:

Վաղարշապատում գործում էր երկու տարրական դպրոց, որտեղ սովո-

23 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 201, ց. 1, գ. 139, թ. 4, 16:

24 Տե՛ս նույն տեղում, ֆ. 214, ց. 2, գ. 21, թ. 45:

25 Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 31, թ. 72:

26 Տե՛ս «Յառաջ», եր., 29 փետրվար, 1920:

27 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 214, ց. 2, գ. 20, թ. 59, ֆ. 201, ց. 1, գ. 139, թ. 7:

28 Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», եր., 9 մայիս, 1919:

29 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 214, ց. 2, գ. 18, թ. 258:

րում էին 420 աշակերտներ, մինչդեռ դպրոցական տարիք ունեցողների թիվը հասնում էր 1200-ի: Նոր դպրոցներ ունենալու, մասնավորապես գիմնազիայի հարցը բարձրացվեց 1919 թ. դեկտեմբերի 17-ի հանդիսավոր նիստին<sup>30</sup>: 1920 թ. հունվարին վարչությունը որոշեց նորաստեղծ գիմնազիային ապահովել շենքային պայմաններով: Գիմնազիայի տեսուչ նշանակվեց Վրթանես Փափազյանը<sup>31</sup>: Վերոնշյալ դպրոցը երկսեռ էր, որտեղ ստեղծվեց աշակերտական ինքնավարության համակարգ և այլն<sup>32</sup>: Վարչությունը ցանկանում էր Վաղարշապատում բացել համալսարան, անգամ ստեղծվեց համալսարանի բացման հանձնաժողով: Քաղազույսը գտնում էր, որ էջմիածինը «...բացառիկ դեր է ունեցել Հայաստանի լուսավորության գործում...»<sup>33</sup>:

1920 թ. մարտին Հանրային կրթության նախարարության և վարչության նախաձեռնությամբ բացվեց քաղաքային գրադարան-ընթերցարանը, որը ՀՅԴ խմբակցության իրավասու Սմբատ Կարոյանի առաջարկությամբ անվանակոչվեց Խաչատուր Կարձիկյանի անվամբ<sup>34</sup>:

Չնայած վերոնշյալ քայլերին՝ Վաղարշապատի քաղաքային ինքնավարության գործունեությունը, մասնավորապես քաղաքի բարեկարգման, սակագնային քաղաքականության ոլորտը, դարձավ կենտրոնական իշխանությունների քննադատության թիրախը<sup>35</sup>: Հարկ է նկատել, որ ինքնավարության սոցիալ-տնտեսական գործունեության արդյունավետ իրականացմանը, ըստ քաղաքագլխի, խանգարում էին քաղաքում աճող հանցագործությունները, գավառային կոմիսարի, գավառային ինքնավարության ապօրինությունները: Ելնելով քաղաքի սոցիալ-տնտեսական ծանր դրությունից՝ դեռևս 1919 թ. նոյեմբերի 3-ին քաղաքային խորհուրդը որոշեց 10 միլիցիայից բաղկացած նորաստեղծ քաղաքային միլիցիան հանձնել ՆԳՆ-ին<sup>36</sup>: Սակայն քաղաքում շարունակեցին աճել հանցագործությունները, որոնց մասին զեկուցումներով քաղաքագլուխը պարբերաբար հանդես էր գալիս խորհրդում՝ մեղադրելով միլիցիայի պետին<sup>37</sup>, գավառային կոմիսարին: Վերջինս և նրա գլխավորած կառույցը չէին կատարում նաև հարկերի, տուրքերի գանձման մասին խորհրդի որոշումները<sup>38</sup>: Տեղեկություններ կան նաև այն մասին, որ գավառային կոմիսար Գևորգ Աթունյանը թույլ է տվել զեղծումներ ու շահատակություններ, որի համար ՀՅԴ Գերագույն մարմինը 1919 թ. դեկտեմբերի 27-ին, լսելով նրա անձնական գործը, նրան վտարում է կուսակցության շարքերից և գործը հանձնում շրջանային դատարանի դատախազին<sup>39</sup>:

Այնուամենայնիվ, քաղաքային խորհուրդը չդարձավ կուսակցական հաշվեհարդարների թատերաբեմ, ինչպես նաև հակապետական խմորումների օջախ: Վաղարշապատի քաղաքային ինքնավարությունը ՀՀ քաղաքային ինքնավարությունների պատմության մեջ մտավ իր անկուսակցական քա-

30 ՏՆ նույն տեղում, ֆ. 201, ց.1, գ. 139, թ. 16:  
 31 ՏՆ նույն տեղում, ֆ. 307, ց.1, գ. 105, թ.1:  
 32 ՏՆ նույն տեղում, ֆ. 307, ց.1, գ. 105, թ. 87:  
 33 ՏՆ նույն տեղում, ֆ. 214, ց.2, գ. 4, թ. 12:  
 34 ՏՆ «Յառաջ», Եր., 26 մարտ, 1920:  
 35 ՏՆ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 139, թ. 31:  
 36 ՏՆ նույն տեղում, ֆ. 214, ց. 2, գ. 8, թ. 1, գ. 16, թ. 36:  
 37 ՏՆ նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 139, թ. 53:  
 38 ՏՆ նույն տեղում, ֆ. 214, ց. 2, գ. 16, թ. 35:  
 39 ՏՆ «Յառաջ», Եր. 9 հունվար, 1920:

ղաքագլխով, խորհրդի իրավասուների կազմով: Հարկ է նկատել, որ իշխող ՀՅԴ կուսակցությունը քաղաքային խորհրդում չունեի կայուն մեծամասնություն, որից, սակայն, չտուժեց, առավել ևս չխափանվեց ինքնավարության մարմինների աշխատանքը, որոնք գործեցին ընդհուպ մինչև ՀՀ անկումը:

## Եզրակացություններ

Այսպիսով.

- Մունիցիպալ ընտրությունների կազմակերպման փորձառության պակասի, հասարակության ոչ բարձր իրավագիտակցության պայմաններում Վաղարշապատի քաղաքային խորհրդի իրավասուների ընտրությունները ուղեկցվեցին մի շարք բացթողումներով ու թերություններով: Սակայն ՀՀ կենտրոնական իշխանությունները հաստատեցին իրենց կուսակցության՝ ՀՅԴ-ի համար անցանկալի արդյունքներ գրանցած վերոնշյալ ընտրությունների լեգիտիմությունը:

- Վաղարշապատի քաղաքային ինքնավարությունում ՀՅԴ-ն չի կազմել կայուն մեծամասնություն, բայց և այնպես, հաշվի առնելով քաղաքային բնակչության գերակա շահը՝ կուսակցությունների ու հասարակության, խորհրդի և վարչության միջև հիմնականում գոյություն է ունեցել փոխհասկացողություն ու համագործակցություն՝ քաղաքի բնականոն կյանքը վարելու համար:

- Վաղարշապատի քաղաքային խորհուրդը չդարձավ կուսակցությունների քաղաքական հաշվեհարդարների թատերաբեմ, հակապետական խնդրումների օջախ: Ավելին, Վաղարշապատի քաղաքային ինքնավարությունը ՀՀ կենտրոնական իշխանությունների համար դարձավ հենարան՝ երկրի կայունության ապահովման, իրավակարգի պահպանման գործում:

- Վաղարշապատի քաղաքային իշխանությունները, փորձելով լուծել սոցիալ-տնտեսական, մշակութային և կենսական նշանակության այլ ոլորտներում կուտակված հիմնախնդիրները, այդ ուղղություններով ձեռնարկեցին մի շարք դրական քայլեր:

- Վաղարշապատի քաղաքային իշխանությունների ձևավորման, գործունեության հիմքում ընկած էին ժողովրդավարության սաղմերն ու դրանց առանձին դրսևորումները:

**Աննա Է. Ասատրյան**-գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման և գործունեության պատմությունը: Թեմայի մասին ունի մի շարք հոդվածներ, որոնք տպագրվել են հայաստանյան գիտական հանդեսներում:

Summary

**THE ESSENCE OF LOCAL SELF-GOVERNMENT  
SYSTEM OF REPUBLIC OF ARMENIA IN 1918-1920**

On the example of the election and activity of Vagharshapat's municipal authorities

Anna E. Asatryan  
*Candidate of Historical Sciences*

**Key words** – Vagharshapat, mayor, competent, election, vote, administration, city council, economy, education, party.

A multi-party city council was formed as a result of the elections held in September, 1919 in the local self-government system of Vagharshapat.

In the above mentioned council the ARF party didn't have stable majority so it had to get political consensus with the SRs yielding to them the mayor's office. G. Slkuni, who was involved in SRs' list but was non-partisan, was elected as a mayor. However this didn't impede the effectiveness of the activities of the municipal authorities. The latter struggled for the elimination of epidemics, famine and illiteracy. They undertook steps for improving the economic situation and urban life.

Резюме

**ОСОБЕННОСТИ СИСТЕМЫ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ РА  
В 1918-1920 ГГ.**

На примере выборов и деятельности городских властей  
Вагаршапата

Анна Э. Асатрян  
*Кандидат исторических наук*

**Ключевые слова** – Вагаршапат, мэр, компетентный, выборы, голос, управление, городской совет, экономика, образование, партия.

В результате выборов в органы МСУ, проведенных в 1919 г. в городе Вагаршапате, был сформирован многопартийный городской совет.

В упомянутом совете партия АРФ Дашнакцутюн не имела устойчивого большинства, поэтому была вынуждена идти на политический компромисс с эсерами, уступив им должность мэра. Мэром был избран включенный в список эсеров, но беспартийный Г. Слкунни. Тем не менее, это не воспрепятствовало эффективности деятельности городских властей. Последние боролись против эпидемии, голода, безграмотности. Были

ՀՀ-ի համահայկեակազմի հանրապետական պատմագիտական թանգարանի հրատարակած, 2018 թ. (64), հոկտեմբեր-դեկտեմբեր

ՀՀ-ի համահայկեակազմի հանրապետական պատմագիտական թանգարանի հրատարակած, 2018 թ. (64), հոկտեմբեր-դեկտեմբեր

предприняты шаги, направленные на улучшение экономического состояния и быта горожан.

## REFERENCES

1. **Asatryan A.**, Hayastani Hanrapetutyán teghakan inqakaravarman marminnerə 1918-1920 tt., «Vem», Yer., 2018, hunvar-mart, N 1(61). **(In Armenian)**
2. Araratyan ashkhatavor, 6 hunis, 1919. **(In Armenian)**
3. Hayastani ashkhatavor, Yer., 9 mayis, 1919. **(In Armenian)**
4. Yaraj, Yer., 9 hunvar, 1920. **(In Armenian)**



# ԱՐՏԱՔԻՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ժ (ԺԶ) փաթի, թիվ 4 (64), Խոկարներ-դեկտեմբեր, 2018

ՎԼՎ համահայկական հանդես



Լիլիտա Գ. Գգոյան  
*Պատմ. գիյր. թեկնածու*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 1918–1920 ԹԹ.

Ըստ Ազգերի լիգայի Ժնևյան արխիվի նորահայտ  
վավերագրերի

**Բանալի բառեր** – Հայաստանի Հանրապետություն, միջազգային իրավական կարգավիճակ, միջազգային ճանաչում, Ազգերի լիգա, անդամակցության հարց, Անդրկովկասյան հանրապետություններ, Խորհրդային Ռուսաստան, Սևրի պայմանագիր, Փարիզի Խաղաղության վեհաժողով:

### Մուտք

Առաջին համաշխարհային պատերազմը, Փետրվարյան հեղափոխությունը և Հոկտեմբերյան հեղաշրջումը նոր պատմաքաղաքական իրավիճակ ստեղծեցին Անդրկովկասում: 1917 թ. նոյեմբերի 15-ին խորհրդային իշխանությունն ընդունեց Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին հռչակագիրը, որով ճանաչում էր նրանց ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև կայսրության կազմից դուրս գալը (the right of secession) և կայսրության տարածքում անկախ պետություն ստեղծելը (independent states)<sup>1</sup>:

Ստեղծված պայմաններում 1917 թ. նոյեմբերին ձևավորվեց անկախ Անդրկովկասի առաջին կառավարությունը՝ Անդրկովկասյան կոմիսարիատը, իսկ քիչ անց նաև Անդրկովկասյան Սեյմը, որը 1918 թ. ապրիլի 22-ին հռչակեց Անդրկովկասի ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծումը: Սակայն, վերջինիս գոյությունը շատ կարճ տևեց. 1918 թ. մայիսի 26-ին Վրաստանը հռչակեց իր անկախությունը, որին հետևեց Ադրբեջանը և ապա՝ Հայաստանը:

Կարճ տևեց նաև Մոսկվայի համեմատաբար հանդուրժողական վերաբերմունքը նորանկախ պետությունների նկատմամբ: Շուտով՝ 1918 թ. ամռանը, Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրա-

<sup>1</sup> Տե՛ս Edward W. Walker, *Dissolution: Sovereignty and the Breakup of the Soviet Union*, Lanham, Maryland Rowman & Littlefield, 2003, էջ 25:

պետության ստեղծումից հետո, Մոսկվայի կառավարությունը փաստորեն հրաժարվեց իր հռչակած սկզբունքներից և վերսկսեց պայքարը այն տարածքների համար, որոնք նախկինում Ռուսական կայսրության մաս էին կազմել<sup>2</sup>:

Ներքին պետականաշինությանը զուգահեռ, նորանկախ պետությունները ձգտում էին ձեռք բերել պետականությանն անհրաժեշտ բոլոր ատրիբուտները և ամրագրել իրենց միջազգային իրավական կարգավիճակը՝ հիմնականում այլ պետությունների կողմից ճանաչումների և միջազգային կառույցներին անդամագրվելու միջոցով: Այս առումով միջազգային ճանաչման հարցն ամենակարևորն էր և գտնվելով աշխարհաքաղաքական հակոտնյա շահերի բախման կիզակետում՝ մեծապես պայմանավորված էր Անտանտի ու բոլշևիկյան Ռուսաստանի առձակատմամբ:

Ներկա հոդվածում Հայաստանի Հանրապետության միջազգային կարգավիճակը կներկայացվի Ազգերի լիգային վերջինիս անդամակցության համատեքստում՝ միաժամանակ զուգահեռներ անցկացնելով Ռուսական կայսրության տարածքում ձևավորված այլ պետությունների, մասնավորապես Վրաստանի և Ադրբեջանի իրավական դրության հետ: ՀՀ միջազգային իրավական կարգավիճակը կներկայացվի և կքննվի նաև աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում:

## 1. Բոլշևիկյան Ռուսաստանի և նախկին Ռուսական կայսրության տարածքում ձևավորված պետությունների նկատմամբ Ազգերի լիգայի քաղաքականության ձևավորումը

Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած մի շարք պետությունների նախաձեռնությամբ 1920 թ. հունվարի 10-ին պաշտոնապես հիմնվեց Ազգերի լիգան, որի գլխավոր նպատակներից էր ապագայում պատերազմների կանխագելումն ու պետությունների միջև վեճերի խաղաղ հանգուցալուծումը: Չանսալով համաշխարհային պատերազմի կործանարար հետևանքներին՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսի ընթացքում դեռևս 1919 թ. հունվարին, Ազգերի լիգայի կանոնադրության տեքստը միաձայն ընդունվում է բոլոր շահագրգիռ պետությունների կողմից: Քանի որ կազմակերպությունն իր առջև նպատակ էր դրել հասնելու միջազգային խաղաղության ու անվտանգության, և միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները դնել պետությունների միջև փոխհարաբերությունների հիմքում, որոշ հեղինակների կողմից Ազգերի լիգան հռչակվեց նաև որպես այլընտրանք բոլշևիզմին և կարևոր գործիք դրա դեմ պայքարում երկրների «քաղաքական, տնտեսական և սոցիալական պայմանները» թեթևացնելու և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպան բոլշևիզմի տարածման վտանգից պաշտպանելու միջոցով<sup>3</sup>: Ազգերի լիգայի բոլոր անդամ-պետությունները միակարծիք էին, որ բոլշևիկյան Ռուսաստանը որպես թշնամական և ոչ վստահելի երկիր ոչ մի դեպքում չպետք է անդամակցի Ազգերի լիգային<sup>4</sup>,

2 Տե՛ս **Charlotte Hill**, *State-Building and Conflict Resolution in the Caucasus*, Leiden, 2010, էջ 96:

3 Տե՛ս **Harold Temperley**, *A History of Peace Conference in Paris*, vol. VI. London Oxford University Press, Hodder & Stoughton, 1924, էջ 579-580:

4 Տե՛ս **Donald Buzinkai**, *The Bolsheviks, the League of Nations and the Paris Peace Conference, 1919*. "Soviet

իսկ ահա ժողովրդավարական Ռուսաստանի անդամակցությունը ոչ միայն ողջունվում էր, այլև վերջինիս գլխավոր տեղ էր խոստացվում կազմակերպության Խորհրդում: Ինչ վերաբերում էր բոլշևիկներին, ապա նրանք Ազգերի լիգան որակում էին որպես «բուրժուա գողերի լիգա», «կապիտալիստների սուրբ միություն», որի նպատակը ժողովուրդների և աշխատավորների հեղափոխության ճնշումն է<sup>5</sup>:

Ազգերի լիգան որոշակի դիրքորոշում էր մշակել նաև նախկին Ռուսական կայսրության տարածքում ձևավորված պետությունների հանդեպ, որը կարելի է բնութագրել որպես բավականին զգույշ և շրջահայաց: Կազմակերպության Իրավական բաժինը նախկին կայսրության տարածքում ձևավորված դե ֆակտո կառավարությունների հարցում հիմնական շեշտը դնում էր անդամ-պետությունների կողմից նորանկախ պետությունների ճանաչման վրա, այլապես որևէ այլ գործողություն կարող էր դիտարկվել որպես միջամտություն Ռուսաստանի ներքին գործերին: Սակայն Իրավական բաժինը ակնհայտ իրավունք էր վերապահում անդամ-պետություններին մերժել նոր պետության անդամությունը, եթե նրանք չեն «համակրում» վերջինիս կառավարության ձևը: Այս մոտեցումը, սակայն, կտրուկ հակասում էր կազմակերպության կանոնադրությանը:

Ազգերի լիգային անդամության հարցը կարգավորվում էր կազմակերպության Կանոնադրության հոդված առաջինի 2-րդ մասով, որտեղ մասնավորապես նշված էր, որ «Յուրաքանչյուր պետություն, դոմինիոն կամ գաղութ, որը կառավարվում է ազատ, և որը նշված չէ կանոնադրության հավելվածում, կարող է դառնալ Ազգերի լիգայի անդամ, եթե նրա անդամությանը կողմ է արտահայտվում Վեհաժողովի երկու երրորդը, և տվյալ երկիրը արդյունավետ երաշխիքներ է ներկայացնում իր ստանձնած միջազգային պարտավորությունները պահպանելու, զինված ուժերի, ցամաքային, ջրային և օդային սպառազինությունների վերաբերյալ Ազգերի լիգայի կանոնակարգն ընդունելու իր անկեղծ մտադրությունների վերաբերյալ»<sup>6</sup>:

## 2.2.2 միջազգային իրավական կարգավիճակի հարցի արծարծումները Ազգերի լիգային անդամակցության համատեքստում

Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ազգային պատվիրակությունները դիմեցին Ազգերի լիգային՝ կազմակերպությանն անդամակցելու խնդրանքով: Առաջինը Վրաստանի պատվիրակությունն էր, որի դիմումը ներկայացվեց 1919 թ. մայիսի 21-ին: Մեկ տարի անց՝ 1920 թ. մայիսի 13-ին, հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը հեռագիր է ուղղում Ազգերի լիգայի Խորհուրդ՝ լիարժեք անդամակցություն խնդրելով Հայաստանի Հանրապետության համար: Հայաստանի այս ուշ դիմումը պայմանավորված էր երկու հանգամանքով.

Studies” 19 (2), 1967, էջ 260:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 259, նաև՝ Alexander Khodnev, The Legacies of Woodrow Wilson and the League of Nations in Russia. “World Affairs” 158 (1), 1995, էջ 22:

6 Ազգերի լիգայի կանոնադրության հոդված առաջին, մաս 2-րդ, [http://avalon.law.yale.edu/20th\\_century/leagcov.asp#art1](http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp#art1) [ընդվել է 26. 10. 2016]

ա) Հայաստանի Հանրապետությունը որպես դաշնակից պետություն կարող էր մեխանիկորեն դառնալ Ազգերի լիգայի անդամ որպես Վերսալյան համակարգի մի մաս, որի շրջանակներում կնքված հաշտության պայմանագրերը ստորագրող հաղթանակած կողմերը դարձել էին կազմակերպության կանոնադրական անդամներ: Սակայն դա տեղի չունեցավ, քանի որ 1920 թ. հունվարին, երբ վերջնականապես ձևավորվեց Ազգերի լիգան, Վերսալյան համակարգի մաս կազմող Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագիրը չէր կնքվել:

բ) Բացի այդ՝ նույն ժամանակահատվածում քննարկվում էր նաև Հայաստանի մանդատը Ազգերի լիգային փոխանցելու հարցը՝ համաձայն կազմակերպության Կանոնադրության XXII հոդվածի, որի դեպքում անդամակցության հարցը պետք է հետաձգվեր մանդատի իրականացման ողջ ընթացքում<sup>7</sup>:

Մինչև պաշտոնական դիմումներին անդրադառնալը նշենք, որ 1920 թ. սկզբում բավական կարևոր իրադարձություն տեղի ունեցավ նորանկախ պետությունների միջազգային իրավական կարգավիճակի հարցում: 1920 թ. սկզբին Փարիզի խաղաղության կոնֆերանսի Գերագույն խորհուրդը դե ֆակտո ձանաչեց Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունները: Այնուամենայնիվ, ձանաչումը տրվեց երկու հիմնական վերապահումով.

ա) տվյալ ձանաչումը չէր վերաբերում պետություններին, այլ կառավարություններին,

բ) ձանաչումը չէր ենթադրում սահմանների վերջնական կարգավորում, և սահմանների հարցը պետք է որոշվեր հետագա փոխադարձ համաձայնագրերով:

Այս քաղաքական քայլի պատճառները բազմաթիվ էին և հիմնականում պայմանավորված էին բոլշևիկյան Ռուսաստանի գործոնով՝ նպատակ ունենալով թուլացնել վերջինիս, շրջապատել այսպես կոչված «սանիտարական կորդոնով» կամ սահմանագծով, պաշտպանել Արևմուտքը բոլշևիկյան վտանգից, ինչպես նաև ստեղծել դաշնակիցների ազդեցության ներքո պետությունների խումբ<sup>8</sup>:

Սակայն պետք է նշել, որ ոչ բոլոր դաշնակիցներն էին միակարծիք այսպես կոչված «ռուսական հարցի» վերաբերյալ: Օրինակ՝ ԱՄՆ-ն այն կարծիքին էր, որ Ռուսաստանում բոլշևիկյան խառնաշփոթը ժամանակավոր է և այդ առումով ապագա ժողովրդավարական Ռուսաստանի շահերը, այն Ռուսաստանի, որը կհաղթի բոլշևիկներին, պետք է պաշտպանված լինեն և նրա ինքնիշխան իրավունքները պետք է պահպանվեն նախկին ռուսական կայսրության տարածքում: Արդյունքում, Վաշինգտոնը հրաժարվեց ձանաչել Բալթյան երկրների անկախությունն առանց Ռուսաստանի համաձայնության: ԱՄՆ-ը հավանություն չտվեց նաև Անտանտի Գերագույն խորհրդի որոշմանը՝ դե ֆակտո ձանաչել այսպես կոչված Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունները<sup>9</sup>: Այս մտտեցումը, սակայն, չէր վերաբերում

7 Մանրամասն տես **Էդիտա Գոդյան**, Հայաստանի Առաջին Հանրապետությունը և Ազգերի Լիգան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն, 2013, էջ 14-74:

8 Տես **Benjamin Akzin**, Choices before the Baltic States, "Foreign Affairs 15" (3), 1937, էջ 495-508:  
9 Տես **Ազգերի լիգայի արխիվ** (League of Nations' Archives), դասակարգում II, փաստաթուղթ 7653, թղթա-

Լեհաստանին, Հայաստանին և Ֆինլանդիային, որոնց անկախությունը, ըստ ԱՄՆ նախագահի, պետք է ճանաչվեր և պահպանվեր<sup>10</sup>:

Անդրադառնալով անդամակցության հարցերին՝ նշենք, որ 1920 թ. ստացվեցին անդամության համար պաշտոնական նամակները: Հետաքրքրական է, որ անդրկովկասյան երեք հանրապետությունները որպես անդամակցության հիմք մատնանշում էին տարբեր հանգամանքներ: 1920 թ. սեպտեմբերի 1-ի իր պաշտոնական դիմումում Վրաստանի կառավարությունը Ազգերի լիգայի ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքին, որ Վրաստանը հստակ աշխարհագրական, էթնիկական և կրոնական տարբերություններ ունի Ռուսաստանի հետ<sup>11</sup>: Սեպտեմբերի 25-ին հայկական պատվիրակությունը Խորհրդի նախագահին տեղեկացնում է, որ քանի որ Սևրի պայմանագիրը դաշնակից պետությունների կողմից վերջնական ձևակերպում է տվել Հայաստանի Հանրապետության ճանաչմանը, Հայաստանի կառավարությունը դիմում է անդամակցության համար<sup>12</sup>:

Փաստորեն Հայաստանի Հանրապետությունն իր դիմումի հիմքում դրել էր Հայաստանի ճանաչման հանգամանքը, ինչը նաև համընկնում էր Ազգերի լիգայի Իրավական բաժնի մոտեցման հետ, մինչդեռ Վրաստանի դեպքում շեշտը քաղաքական բնույթի էր՝ հասկանալով կազմակերպության վերաբերմունքը բոլշևիկյան Ռուսաստանի սկատմամբ և փորձելով այդ կերպ անվտանգության երաշխիքներ ստանալ:

Հայաստանի Հանրապետության դիմումի նման ձևակերպումը հիմնված էր հետևյալ հանգամանքների վրա: Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածով Թուրքիան հայտարարում էր, որ **ճանաչում է Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն, ինչը արել են դաշնակից պետությունները:** Բացի այդ՝ 1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանը կնքել էր նաև Փոքրամասնությունների վերաբերյալ միջազգային պայմանագիրը, որի նախաբանը սկսվում էր հետևյալ կերպ. «Գլխավոր Դաշնակից պետությունները մի կողմից և Հայաստանի Հանրապետությունը մյուս կողմից, **քանի որ Գլխավոր Դաշնակից պետությունները ճանաչում են Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն...**»<sup>13</sup>: Այստեղ հարկ է ավելացնել նաև Ազգերի լիգայի Քաղաքական բաժնի ղեկավար Փոլ Մանթոյի գնահատականը. «Կասկած չկա, որ Հայաստանն այժմ մի պետություն է, որը դե ֆակտո և դե յուրե ճանաչվել է այն պետությունների կողմից, որոնք թույլ են տվել վերջինիս ստորագրել Սևրի պայմանագիրը»<sup>14</sup>:

Ավելացնենք նաև, որ ստորագրելով Սևրի պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ստորագրել էր նաև դրան կցված Ազգերի լիգայի Կանոնադրությունը:

Այստեղ պետք է ավելացնել նաև, որ 1920 թ. սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 8-ը Հայաստանի Հանրապետությունը քվեարկելու իրավունքով

պանակ 5343:

10 Տե՛ս **The United States, Poland and Russia**. Advocate of peace through justice. 1920.82 (9/10), էջ 319, **Buzinkai**, նշվ. աշխ., էջ 261:

11 Տե՛ս **Ազգերի լիգայի արխիվ**, դասակարգում 28, փաստաթուղթ 9516, թղթապանակ 254:

12 Տե՛ս **Հայաստանի ազգային արխիվ**, ֆոնդ 368, գործ 114:

13 Տե՛ս **Ավետիս Ահարոնյան**, Զեկույցներ, «Հայրենիք», N 2, էջ 63-66:

14 Տե՛ս **Юрий Барсегов**, Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. Сб. док. т. 1, М. 2002, էջ, 531:

լիիրավ մասնակցություն է ունենում Ազգերի լիգայի կողմից Բրյուսելում կազմակերպված միջազգային ֆինանսական կոնֆերանսին (ի տարբերություն, օրինակ, Բալթյան պետությունների, որոնք մասնակցում էին առանց քվեարկելու իրավունքի), ինչը ևս մեկ անգամ հավաստում է, որ կազմակերպությունը Հայաստանին դիտարկում էր որպես ինքնիշխան պետություն<sup>15</sup>:

Գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի և Վրաստանի անդամակցության վերաբերյալ զեկույցները հիմնականում դրական էին: Հիմնական շեշտը դրված էր Ռուսաստանի հետ ունեցած տարբերությունների, ինչպես նաև այլ պետությունների կողմից ծանաչման վրա: Զեկույցում մատնանշված էին երկու հին ազգերի պատմական, էթնիկական և լեզվական առանձնահատկությունները, որոնք կորցրել էին իրենց պետականությունը Ռուսական կայսրության կողմից բռնազավթման արդյունքում: Հայաստանի Հանրապետության իրավական կարգավիճակի մասով զեկույցը նշում էր, որ, ըստ էության, Սևրի պայմանագրի ստորագրումով դաշնակից կառավարությունները դե յուրե ծանաչել են Հայաստանի Հանրապետությունը, որը դե յուրե ծանաչվել է նաև Արգենտինայի և Միացյալ Նահանգների կողմից<sup>16</sup>:

Զեկույցի համաձայն՝ Վրաստանը դե յուրե ծանաչվել էր Արգենտինայի, Գերմանիայի և Խորհրդային Ռուսաստանի, իսկ դե ֆակտո՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Բելգիայի կողմից<sup>17</sup>:

Բավականին հետաքրքիր էր Ադրբեջանի վերաբերյալ գլխավոր քարտուղարի զեկույցը, որը նշում էր, որ Ադրբեջանի Հանրապետությունը զբաղեցնում է արհեստական (superficial) 40.000 քառակուսի տարածք և նախկինում երբեք չի եղել պետություն, ընդգրկված է եղել մոնղոլական կամ պարսկական խմբերի մեջ, իսկ 1813 թ. Ռուսական կայսրության մեջ: Նոր հանրապետության համար ընտրված Ադրբեջան անվանումը նույնպես վերցված է հարևան պարսկական գավառից: Զեկույցն անդրադառնում էր երկու իրավական հարցի: Առաջինը վերաբերում էր Ադրբեջանի Հանրապետության ծանաչմանը՝ նշելով, որ հանրապետությունը դե ֆակտո ծանաչվել է միայն Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կողմից, իսկ ԱՄՆ-ն հրաժարվել է ծանաչել Ադրբեջանը (նշենք, որ Վրաստանի դեպքում այս հանգամանքը չէր շեշտվել, մինչդեռ ԱՄՆ հրաժարվել էր դե ֆակտո ծանաչել նաև Վրաստանը): Երկրորդ դիտարկումը կապված էր պետության ինքնիշխանության հետ. արդյո՞ք Ադրբեջանի անկախության հռչակումը և դաշնակիցների կողմից դե ֆակտո ծանաչումը բավարար էր Ադրբեջանին լիովին ինքնակառավարվող պետություն համարելու համար: Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարը բարձրացնում է նաև ադրբեջանական պատվիրակության օրինականության հարցը, արդյո՞ք վերջինս ներկայացնում է Ադրբեջանի օրինական կառավարությունը՝ Ազգերի լիգային անդամակցության դիմում ներկայացնելու համար, և արդյո՞ք այդ կառավարությունը կարող է ստանձնել պարտավորություններ և տալ անհրաժեշտ երաշխիքներ<sup>18</sup>:

15 Տե՛ս Ազգերի լիգայի արխիվ, դասակարգում 11, փաստաթուղթ 3421, թղթապանակ 8580:

16 Տե՛ս Ազգերի լիգայի արխիվ, դասակարգում 28, փաստաթուղթ 9055, թղթապանակ 4395:

17 Տե՛ս Ազգերի լիգայի արխիվ, դասակարգում 28, փաստաթուղթ 9516, թղթապանակ 254:

18 Տե՛ս Ազգերի լիգայի արխիվ, դասակարգում 28, փաստաթուղթ 8466, թղթապանակ 8466:

1920 թ. նոյեմբերին գումարվեց Ազգերի լիգայի առաջին Վեհաժողովը, որն անդամության հարցերը հանձնեց Հինգերորդ հանձնաժողովի քննությանը: Սակայն պետք է արձանագրել, որ Հինգերորդ հանձնաժողովը անդամության հայտերի քննությունը սկսեց՝ առանց հստակեցնելու, թե արդյոք որևէ պետության ընդունումը որպես Լիգայի անդամ հանգեցնում է բոլոր անդամ-պետությունների կողմից ճանաչման, և այդ դեպքում արդյո՞ք նախկինում չճանաչված երկրները դառնում են փաստացի դաշնակիցներ: Այս հարցում կարծիքները տարբեր էին. ոմանք համարում էին, որ անդամակցության հետ կապված բոլոր իրավական հարցերը պետք է կարգավորվեն նախօրոք՝ մինչև անդամության դիմումների ընդունումը: Կային նաև այնպիսիք, որոնք հակված էին նրան, որ անդամության և ճանաչման հարցերը պետք է լուծվեն նախադեպային եղանակով՝ հիմնված տարբեր երկրների անդամակցության վերաբերյալ առանձին որոշումների վրա: Ակնհայտ էր, որ անդամակցության խնդիրներն ավելի քաղաքական, քան իրավական բնույթի էին<sup>19</sup>: Այսինքն՝ յուրաքանչյուր երկրի անդամակցության վերաբերյալ որոշումն ընդունվում էր քաղաքական նկատառումներից ելնելով, և այս պայմաններում Անդրկովկասի նորանկախ հանրապետությունների ճակատագրում մեծ էր Խորհրդային Ռուսաստանի քաղաքական դերակատարումը:

Անդամակցության հայցադիմումների քննարկումը հանձնվում է երեք ենթահանձնաժողովների, ընդ որում Անդրկովկասյան երեք հանրապետությունների դիմումները հանձնվում են նույն՝ երրորդ ենթահանձնաժողովին, որոնք պետք է ուսումնասիրեն ներկայացված փաստաթղթերը և ի թիվս կառավարության ազատ և արդար ընտրված լինելու, սահմանների ու պետության կայունության, ստանձնած միջազգային պարտավորությունների և ռազմամթերքի կրճատման նկատմամբ պարտավորությունների կատարման և այլ հարցերի, պետք է պատասխանեն միջազգային ճանաչման վերաբերյալ հարցին, արդյոք անդամության հայտ ներկայացրած պետությունների կառավարությունները ճանաչված են դե ֆակտո, թե՞ դե յուրե:

Ադրբեջանի անդամակցության վերաբերյալ ենթահանձնաժողովի որոշումը կրկին բացասական էր: Չանդրադառնալով Ադրբեջանի միջազգային իրավական կարգավիճակի հարցին՝ զեկույցը մատնանշում էր երկրի ներսում փաստացի երկիշխանության հանգամանքը՝ Բաքվում բոլշևիկյան և Գյանջայում՝ Մուսավաթական, և հարևանների հետ սահմանային վեճերի առկայությունը (խոսքը վերաբերում էր Հայաստանի և Վրաստանի հետ սահմանային վեճերին՝ Ղարաբաղի, Զանգեզուրի և Զաքաթալայի շրջանների հետ կապված)<sup>20</sup>:

Թեև Հայաստանի հետ կապված ենթահանձնաժողովը չէր պատասխանել առաջադրված բոլոր հարցերին, սակայն Հայաստանի անդամակցության վերաբերյալ դիմումն, ըստ էության, դրական էր: Մատնանշելով, որ կառավարությունը ներկայացնում է հայ ժողովրդին և լիովին վստահելի դիրքորոշում ունի իր ստանձնած միջազգային պարտավորությունների հանդեպ՝

19 Տե՛ս **Ազգերի լիգայի արխիվ**, The Records of the First Assembly Meetings of the Committees, 1920, էջ 161:

20 Մանրամասն տե՛ս **Գոյան Էդիտա**, Ղարաբաղյան հիմնահարցը և Ադրբեջանը Ազգերի լիգայի արխիվի (Ժան, Շվեյցարիա) փաստաթղթերում, «Վէմ», համահայկական հանդես, N 3 (39), 2012, էջ I-XVI:



զեկույցը որպես ՀՀ ճանաչման հիմք մատնանշում էր Սևրի պայմանագիրը<sup>21</sup>: Զեկույցի քննարկումների ընթացքում Բրազիլիայի պատվիրակը ևս հաստատում է, որ Բրազիլիան նույնպես դե յուրե ճանաչել է Հայաստանի Հանրապետությունը<sup>22</sup>:

Վրաստանի անդամակցության վերաբերյալ ենթահանձնաժողովի զեկույցն ավելի նպաստավոր էր. Վրաստանի Հանրապետության կառավարությունը ենթահանձնաժողովը որակում էր որպես կայուն, իսկ հարևան Հայաստանի և Վրաստանի հետ սահմանները՝ հստակեցված (ակնհայտ է, որ այս պնդումը հակասում էր Ադրբեջանի վերաբերյալ զեկույցին, որտեղ Ադրբեջանի մերժման հիմքերից մեկը սահմանային վեճերն էին հարևան երկրների հետ): Վրաստանի հարցում էական նշանակություն ուներ 1920 թ. մայիսի 7-ին Խորհրդային Ռուսաստանի կողմից Վրաստանի ճանաչումը, որը Ազգերի լիգայի որոշ անդամներ համարել էին Վրաստանի անկախության երաշխիք<sup>23</sup>: Հատկանշական է, որ Բալթյան պետությունների անդամակցության դիմումների քննարկման ժամանակ ևս Ռուսաստանի կողմից վերջիններիս ճանաչումը դիտվում էր որպես կարևոր հանգամանք ի նպաստ Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի անդամակցության<sup>24</sup>:

Ցանկանալով որևէ լուծում տալ Անդրկովկասյան (միայն Հայաստանի և Վրաստանի, քանի որ Ադրբեջանի անդամակցության դիմումը մերժվել էր) և Բալթյան պետությունների անդամակցության հարցերին՝ 1920 թ. դեկտեմբերի 6-ին 5-րդ հանձնաժողովն ընդունում է միջանկյալ որոշում, որով տեղեկացնում է, որ վերջիններիս անդամության դիմումները դրական արձագանք են ստացել, սակայն հանգամանքները (Խորհրդային Ռուսաստանի հանգամանքը – Է.Գ.) այնպիսին են, որ Վեհաժողովը չի կարողանում գալ վերջնական որոշման և առաջարկում է այդ երկրներին մասնակցել լիգայի տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին<sup>25</sup>: Այս առաջարկը ներկայացվում է Ազգերի լիգայի Վեհաժողովին:

1920 թ. դեկտեմբերի 3-ին՝ անդամության հարցերի քննարկման կիզակետում, ստացվում է Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի արտգործնախարարների նամակը, որով վերջիններս Ազգերի լիգայում իրենց ներկայացուցիչներին հորդորում էին չընդունել Հայաստանը որպես անդամ, քանի որ «... Սևրի պայմանագիրը, որը կազմավորում է Հայաստանը որպես անկախ պետություն, դեռ վավերացված չէ»: Ակնհայտ է, որ այս հեռագիրը հակասում էր Սևրի պայմանագրի էությանը և պայմանավորված էր այլ հանգամանքով, այն է՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության անդամության վերաբերյալ պաշտոնական քվեարկությունը տեղի է ունենում Վեհաժողովի՝ դեկտեմ-

21 Տե՛ս **Ազգերի լիգայի արխիվ**, Admission of new Members to the League of Nations. Armenia. Report presented by the 5<sup>th</sup> Committee to the Assembly. 20/4/39, նսև՝Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 430, ց. 1, գ. 1227:

22 Տե՛ս **Գղոյան Էդիտա**, Հայաստանի առաջին հանրապետությունը և Ազգերի լիգան, էջ 80:

23 Տե՛ս **Сабанин Андрей**, Россия и Лига Наций 1920–21–22, М., Издание Литиздата НКВД, 1924, էջ 41–42, նսև՝ **Авалов Зураб**, Независимость Грузии в международной политике 1918–1921 гг.: Воспоминания. Очерки, Paris, [6. и.], 1924, էջ 298:

24 Տե՛ս **Gzoyan Edita**, The admission of the Caucasus states to the League of Nations: the role of Soviet Russia, “Caucasus Survey”, 2018, Vol. 6, Issue 1, էջ 1–17:

25 Տե՛ս **Ազգերի լիգայի արխիվ**, Minutes of the Committees, Admission of Armenia, Georgia and of Baltic States, Finland excepted, էջ 238–240:

բերի 16-ի առավոտյան նիստում: Հայաստանի Հանրապետության անդամության հայտը մերժվում է 21 ձայնով ընդդեմ 8-ի, քանի որ հանրապետության սահմանները հստակ չեն, կառավարությունը կայուն համարվել չի կարող, իսկ Սևրի պայմանագիրը վավերացված չէ: Հայաստանի անդամությունը կողմ են քվեարկում Կանադան, Պերուն, Պորտուգալիան, Ռումինիան, Սալվադորը, Շվեյցարիան, Ուրուգվայը, Վենեսուելան, դեմ՝ Ավստրալիան, Բոլիվիան, Բրազիլիան, Բրիտանական Կայսրությունը, Չիլին, Կոլումբիան, Կուբան, Դանիան, Իսպանիան, Հունաստանը, Հնդկաստանը, Իտալիան, Ճապոնիան, Պանաման, Նորվեգիան, Նոր Զելանդիան, Պանաման, Պարագվայը, Նիդերլանդները, Սերբ-Խորվաթ-Սլովենական Հանրապետությունը, Շվեդիան: Ձեռնպահ կամ բացակա էր 13 ներկայացուցիչ: Վրաստանի անդամությունը կողմ է քվեարկում 10 անդամ-պետություն, իսկ դեմ՝ 13-ը:

**Եզրափակելով** անդամության հայտերի քննությունը՝ արձանագրենք, որ ի տարբերություն Վրաստանի՝ Հայաստանը չի ընդունվում անգամ Լիգայի տեխնիկական կազմակերպությունների մեջ: Դրանց մեր երկրի անդամակցելու հարցը քննարկելու ժամանակ պարզվում է, որ Հայաստանը որպես ինքնիշխան պետություն, կարող է մասնակցել տարբեր կոնֆերանսների և ստորագրել համապատասխան կոնվենցիաներ՝ այսպիսով մասնակցելով Ազգերի լիգայի մասնագիտական կազմակերպությունների աշխատանքներին: Բայց այս փաստարկով առաջարկվում է հարցը վերադարձնել 5-րդ հանձնաժողով՝ հետագա մշակման համար: Իսկ ահա Վրաստանը և Բալթյան պետությունները իրավունք են ստանում մասնակցել նշյալ հանձնաժողովների աշխատանքներին:

Այսպիսով, հենց սկզբից Ազգերի լիգան մերժում է Ադրբեյջանի, նաև Ուկրաինայի անդամակցության հայտերը, քանի որ այնտեղ հաստատվել էին խորհրդային կարգեր: Հայաստանի խորհրդայնացումից հետո մերժվում է անգամ վերջինիս մասնակցությունը լիգայի տեխնիկական կազմակերպությունների աշխատանքներին, թեև անդամակցության հարցի քննարկումների ժամանակ Հայաստանի անդամակցության հարցը դրական արձագանք էր ստացել:

1921 թ. հունվարի 27-ին դաշնակիցները **դե յուրե** ձանաչում են Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը, սակայն ընդամենը մեկ ամիս անց՝ 1921 թ. փետրվարի 25-ին, խորհրդային զորքերը գրավում են Թիֆլիսը, ինչն անհնար է դարձնում Վրաստանի անդամակցությունը Ազգերի լիգային երկրորդ Վեհաժողովի ընթացքում, ինչպես առաջարկված էր 5-րդ հանձնաժողովի բանաձևում<sup>26</sup>: Իսկ, օրինակ, Բալթյան պետությունները, որոնց անդամության հայտերը առաջին Վեհաժողովի ժամանակ ստացել էին ընդամենը 5 ձայն, 1921 թ. դառնում են Ազգերի լիգայի անդամ, քանի որ խորհրդային կարգերը այստեղ հաստատվում են միայն երկրորդ աշխարհամարտի ժամանակ<sup>27</sup>:

Այսպիսով, թեև Հայաստանի Հանրապետությունը Ազգերի լիգայի կողմից դիմում էր որպես անկախ և ինքնիշխան պետություն, սակայն երկրում

26 Տե՛ս **Авалов Зураб**, նշվ. աշխ., էջ 60-64:

27 Տե՛ս **Nicholai Vakar**, Russia and the Baltic States. "Russian Review" 3 (1), 1943, էջ 45-54:

խորհրդային կարգերի հաստատումից հետո միջազգային կազմակերպությունը մերժում է որևէ ձևաչափով Հայաստանի անդամակցությունը:

**Էդիտա Գ. Գզոյան** –հեղինակել է մեկ մենագրություն և շուրջ 4 տասնյակ հոդված: Central and Eastern European Review միջազգային ամսագրի հայաստանյան խմբագիրն է, ինչպես նաև՝ «Ցեղասպանագիտական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալը: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայոց ցեղասպանության իրավական և պատմական հինախնդիրները, Ազգերի լիգայի և հայկական հարցի առնչությունները, գիտաչափությունը:

[editagzoyan@gmail.com](mailto:editagzoyan@gmail.com) 098 30-90-97

Summary

## INTERNATIONAL-LEGAL STATUS OF THE REPUBLIC OF ARMENIA IN 1918-1920

According to the League of Nations' newly discovered  
documents from Geneva archive

Edita G. Gzoyan  
*Candidate of Historical Sciences*

**Key words** –Republic of Armenia, international legal status, international recognition, League of Nations, membership, Transcaucasian Republics, Soviet Russia, Treaty of Sevres, Paris Peace Conference.

The current article deals with the issue of international legal status of the Republic of Armenia, which is studied in the framework of the admission of the newly established republic to the League of Nations. The issue is presented and discussed in parallel with the admission of other states formed after the collapse of the Russian Empire, particularly Georgia and Azerbaijan. The international legal status of the Republic of Armenia is presented and researched also in the context of geopolitical developments, mainly in the context of the West – Soviet Russia confrontation.

ՎԼՃ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) փայտի թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

## МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЙ СТАТУС РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 1918–1920 ГГ.

Согласно вновь найденным документам женеvского  
архива Лиги Наций

Эдита Г. Гзоян  
*Кандидат исторических наук*

**Ключевые слова** – Республика Армения, международно-правовой статус, международное признание, Лига Наций, вопрос о членстве, Закавказские республики, Советская Россия, Севрский договор, Парижская мирная конференция.

В данной статье обсуждается международно-правовой статус Республики Армения, который рассматривается в рамках принятия новообразованного государства в состав Лиги Наций. Этот вопрос рассматривается и обсуждается параллельно с принятием в Лигу Наций других стран, появившихся после распада Российской Империи, в частности, Грузии и Азербайджана. Международно-правовой статус Республики Армения представлен и исследован также в контексте геополитических процессов, главным образом – в свете конфронтации Запада с Советской Россией.

### REFERENCES

1. **Andrzej Sabanin**, *Rossija i Liga Nacii 1920-21-22. M. izganije Litizdata NKID, 1924.* (In Russian)
2. **Avetis Aharonyan**, “Hayastan”, *Hayreniq*, 1933, N 2 (134): 63–66. (In Armenian)
3. **Edita Gzoyan**, “Gharabaghyan himnaharcə ev Adrbejanə Azgeri Ligayi arxivi (Zhnev, Shveycaria) pastatghtherum”, *VEM, hamahaykakan handes*, N 3 (39), 2012. (In Armenian)
4. **Edita Gzoyan**, *Hayastani arajin hanrapetutyunə ev Azgeri Ligan*, HH, GAA hrat, 2013. (In Armenian)
5. *Hayastani Azgayin Arxiv*, fond 368, gorc 114. (In Armenian)
6. *Hayastani Azgayin Arxiv*, fond 430, cucak 1, gorc 1227. (In Armenian)
7. **Juri Barsjegov**, *Gjenocid Armjan. Otvjetstvjennost' Turcii i objazatjel'stva mirovogo soobshjestva. Dokumjenti i kommjentarii. Sbornik dokumjentov t. 1. M. 2002.* (In Russian)
8. **Zurab Avalov**, *Njezavisimost' Gruzii v mezhdunarognoj politikje 1918-1921, Vo-spominanija, Ocherki, Parizh 1924.* (In Russian)



Աշոտ Ա. Մելքոնյան  
ՀՀ ԳԱԱ *ակադեմիկոս*

## ԶԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

(1918 թ. մայիս – 1919 թ. հունվար)

**Բանալի բառեր** – Ջավախքի հիմնահարց, ազգագրական սկզբունք, թուրքեր, վրացական զորքեր, հայ-վրացական երկշաբայա կոնֆլիկտ, անգլիացիներ, ֆրանսիացիներ, Լոռի, Ախալքալաքի գավառ, Թիֆլիս, հայ-վրացական խորհրդածողով:

1918 թ. մայիսին՝ Ախալքալաքի զանգվածային գաղթի օրերին, կյանքի կոչվեցին Այսրկովկասի երեք հանրապետությունները:

Հայոց ազգային խորհուրդը մայիսի 30-ի անկախության հռչակագրում իրեն հայտարարել էր հայկական գավառների գերագույն ու միակ իշխանություն: «Հայկական գավառներ» անորոշ բառակապակցության ընտրությունը ինքնանպատակ չէր: Նման ձևակերպումով Ազգային խորհուրդը մի կողմից խուսափում էր ռազմաքաղաքական բարդ իրավիճակում օսմանյան թուրքերի և հարևան նորաստեղծ պետությունների հետ տարածքային վեճերի մեջ հայտնվելու վտանգից, մյուս կողմից, թեկուզև անորոշ սահմաններով, իր իրավունքներն էր հայտնում հայկական տարածքների նկատմամբ: Տվյալ դեպքում վերջինիս տակ կարելի էր նկատի առնել և Արևմտյան Հայաստանը, և՛ Ղարաբաղը, և՛ Ջավախքը, և՛ այլ վիճահարույց տարածքներ:

Վրաց մենչևիկները տարածաշրջանում Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ ֆոն Լոսովի հետ նախապատրաստել էին ոչ միայն իրենց հանրապետության անկախության հռչակումը, այլև որոշակի հավաստիացումներ ստացել վիճելի նկատվող Ախալքալաքն ու Բորչալուն Վրաստանի մաս ձանաչելու խնդրում: Ուստի պատահական չէ, որ նրանք 1918 թ. հունիսի սկզբին գերմանացիների հովանավորությամբ հսկողություն սահմանեցին Հյուսիսային Լոռու նկատմամբ (Հարավային Լոռին բռնազավթվեց թուրքերի կողմից), իսկ ամսի 4-ին, Բաթումում Օսմանյան կայսրության հետ կնքած

ՎԿՄ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

1 Տե՛ս **Զամայեան Ա.**, Իմ պատասխանները «Պրոմեթեոս»-ի և «Անկախ Վրաստանի» հրապարագիրներին, «Յառաջ», Փարիզ, 1928, 19 հունիս, N 677, էջ 2:

հաշտության պայմանագրով, իրենց իրավունք վերապահեցին թուրքերին «հանձնել» գերագանցապես հայերով բնակեցված Ախալցխայի և Ախալքալաքի գավառները: Դրանով նորահռչակ Վրաստանը տպավորություն էր ստեղծում, որ Հայաստանի նման լուրջ տարածքային զիջումներ է անում ռազմական հաղթանակներ գրանցած Թուրքիային և երկրորդ՝ իր կնքած առաջին միջազգային պայմանագրով, իբրև պայմանավորվող կողմ արձանագրում է իր իրավունքներն այդ գավառների բախտը տնօրինելու հարցում: Պատերազմում Թուրքիայի ռազմական անհաջողության դեպքում Վրաստանը կարող էր նորից վերականգնել իր «օրինական» իրավունքը Ախալցխայի և Ախալքալաքի նկատմամբ: Եվ վերջապես, որ ամենացավալին է, թուրքական բռնազավթումը կարող էր արմատապես փոխել Ջավախքի ժողովրդագրական պատկերը. այն է՝ գրկել նրան իր հայկական էթնոնկարագրից: Հետագա դեպքերը բացահայտելու եկան վրաց քաղաքական շրջանակների այդ ծրագրերը:

Ախալցխայի, Ախալքալաքի և Բորչալուի բռնակցումով թուրքերն անմիջական կապ էին ստեղծում Ադրբեջանի հետ՝ միաժամանակ սեպ խրելով Հայաստանի ու Վրաստանի միջև: «Նրանց մի ցանկությունն էր,– Բաթումի բանակցություններում թուրքերի նպատակների մասին գրում էր հայկական պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանը,– Բորչալուի միջոցով կապ պահպանել Ախալքալաքի և Ղարաբաղի միջև, մեզ կտրում էին Վրաստանից»<sup>2</sup>:

Բաթումի պայմանագրով Օսմանյան կայսրությանն անցան մեծ մասամբ հայկական և հայաբնակ գավառներ: Ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակը նպաստավոր էր վրացիների և կովկասյան թաթարների համար: Գործելով միասնաբար՝ մենշևիկներն ու մուսավաթականները փորձեցին օգտվել Հայաստանի ծանր վիճակից: Հայաստանի նկատմամբ Վրաստանի պահանջները, ներառյալ թուրքերի կողմից բռնազավթված Ախալքալաքի գավառը, կազմեցին 13 հազ. քառ. կմ՝ 261 հազ. հայ և միայն 7 հազ. վրացի բնակչությամբ<sup>3</sup>:

Բարդ ռազմաքաղաքական իրադրության մեջ կարևորելով նորաստեղծ հանրապետությունների միջև սահմանների ձգբրտման հարցը, արդեն հունիսի սկզբից Վրաց և Հայոց ազգային խորհուրդները սկսեցին բանակցությունները: Վրաց ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և վարչապետ Ն. Ռամիշվիլին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին՝ ի դեմս Ավ. Ահարոնյանի, Հովհ. Քաջազնունու և Ալ. Խատիսյանի, առաջարկեցին Բորչալուի գավառի հարցում առաջնորդվել ազգագրական սկզբունքով: Ախալքալաքի մասին խոսք չկար, քանզի այն գրավված էր թուրքերի կողմից, թեև, ինչպես նշվեց, վրացիները ապագայում նրա հարցի լուծումը ևս տեսնում էին հօգուտ Վրաստանի: Սակայն շուտով սահմանազատման հարցով Հայոց ազգային խորհրդի նշանակած հատուկ հանձնախմբին (Խ. Կարճիկյան, Գ. Խատիսյան և Գ. Ղորղանյան) վրացական պատվիրակության նախագահ Ի. Ծերեթելին հայտարարեց, որ Վրաստանը ռազմավարա-

2 «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի ժողովածու, կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան...», Եր., 2000, էջ 43:

3 Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Եր., 1997, էջ 255:

կան նկատառումներով չի կարող հրաժարվել Ախալքալաքից և Լոռուց, ինչպես և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանից: Ընդ որում, վրաց գործիչը հավատացնում էր, որ դա բխում է նաև այդ տարածքների հայ բնակչության շահերից, քանի որ Գերմանիայի հովանավորությանն արժանացած Վրաստանում հայերի համար ևս կատեղծվի կյանքի ավելի ապահով վիճակ: Ազգագրական սկզբունքից հրաժարվելու վրացական կողմի այդ քայլի դեմ բողոքեց Խ. Կարձիկյանը՝ վրաց մենշնիկների նման մոտեցումը բնութագրելով Հայաստանը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու գործելակերպ<sup>4</sup>:

Իսկ Բակուրիանի անտառներում և Ծալկայի շրջանում հաստատված ախալքալաքի գաղթականների վիճակը շարունակում էր վատթարանալ: Նրանք փաստորեն հայտնվել էին յուրահատուկ արգելափակոցում: Դեպի հյուսիս՝ Բակուրիան ու Բորժոմ ճանապարհը փակել էր վրացական զորքը, իսկ տունդարձի ուղին դեպի գավառ՝ թուրքերը:

1918 թ. հուլիսի սկզբին վրաց կառավարությունը մերժեց Հայոց ազգային խորհրդի միջնորդությունները գաղթականներին Վրաստանի խորքերը տեղափոխելու, ինչպես և Բորչալուից հեռացած մահմեդականների բնակավայրերում տեղավորելու իրավունք արտոնելու մասին՝ իր այդ տմարդի քայլը «բացատրելով» համաձայրակների տարածումը Վրաստանում կանխելու պատճառաբանությամբ<sup>5</sup>:

Կասկած չկա, որ այս ամենը հնարանք էր: Նախ՝ դեռ հունիս-հուլիս ամիսներին գաղթականների մեջ համաձայրակային հիվանդություններ չկային: Իրանք հայտնվեցին ավելի ուշ՝ աշնանը: Եթե անգամ այդ պատճառաբանությունը հիմնավորված լիներ, չէր կարող վրաց իշխանություններին ազատել ախալքալաքի փախստականների՝ իրենց քաղաքացիների ճակատագրով մտահոգվելու պարտականությունից: Մինչդեռ, այդ «պարտականության» փոխարեն, գեներալ Արջևանիձեի վերջին ջոկատները հեռացան Ախալքալաքի գավառի հյուսիսային սահմանագծից՝ թուրքական հրոսակներին ու տեղական ավազակախմբերին հնարավորություն ընձեռելով մշտական հարձակումներով նորանոր վնասներ հասցնելու գաղթականներին<sup>6</sup>: «Երբ թուրքն անսանձ ու տմարդի, ոտքի ու սրի տակ էր առել հայ ժողովուրդը,– այդ մասին գրում էր Ակսել Բակունցը,– Վրաստանը օգնեց արդյոք: Անկարող էր, ճյոժ չուներ...Իսկ երբ Ախալքալաքի հայությունը հազարներով կոտորվում էր ամիսների ընթացքում, էլի՞ անկարող էր գեթ մեղմացնել այդ թշվառների տանջանքների, զոհերի չափը»<sup>7</sup>: Թեև վաղի, Սուրամի և այլ շրջանների իշխանությունները դրդեցին անգամ տեղի վրաց բնակչությանը՝ հանդես գալ հայ գաղթականներին իրենց բնակավայրերից

4 Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1997, էջ 214–215:

5 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 127–127ա և ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեռնի անձն. ֆ. 1, գ. 1, գ. 264, թ. 1–2:

6 Այդ հարձակումների ընթացքում թուրքերը Բակուրիանի գաղթականական ճամբարից առևանգեցին կամ սպանեցին մինչև 1500 մարդ, հաիշտակեցին մեծ թվով անասուններ ու շարժական գույք («Հորիզոն», 1918, 27 հունիս, N 125): Ծալկայի հայկական գյուղերում իրենց հայրենակիցների տներում ապաստանած ախալքալաքի գաղթականների վիճակը, անշուշտ, ավելի տանելի էր: Սակայն այստեղ ևս հնարավոր չէրավ խուսափել համաձայրակներից: Եղան նաև զոհեր, թալանի բազմաթիվ դեպքեր Ծալկայի մի քանի մահմեդական գյուղերի բնակիչների կատարած ավազակային հարձակումների պատճառով («Հայրենիք», 1928, սեպտեմբեր, էջ 122):

7 **Ղազվաճեցյան Վ.**, Երես առածները, «Հայաստանի աշխատավոր», 1919, 24 հունիս, N 79:

վտարելու պահանջով<sup>8</sup>:

Այսպիսով, և՛ վրաց կառավարության, և՛ թուրքական հրամանատարության կողմից որևէ ուղղությամբ տեղաշարժվելու իրավունքից զրկված ջավախքի գաղթականները դատապարտվում էին բնաջնջման: Օգոստոս ամսին, երբ դեռ չէին սկսվել ցրտերը, արդեն գաղթականների շրջանում օրական մահանում էր մինչև 100 մարդ<sup>9</sup>: Խոսելով վրացական իշխանությունների նման անմարդկային վերաբերմունքի մասին՝ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը ցավով նշում էր. «Այս տխուր փաստը հիշատակում ենք ոչ թե մեր ահռելի կորուստների կսկիծը վերարժարծելու համար, այլ որպեսզի ցույց տանք, որ ժողովանիան և իր ընկերները... Ախալքալակի և Հայկական Բորջալուի հայ բնակիչներին հանրապետության քաղաքացի չէին նկատում, այլ անցանկալի եկվորներ, որոնց մասին հոգալը իրենց պարտականությունը չէին համարում»<sup>10</sup>:

Ի պատասխան սեպտեմբերին և հոկտեմբերի սկզբին Հայաստանի կառավարության, Ախալքալաքի Հայրենյաց վարչության (միության) նորանոր բողոք-դիմումներին՝ գաղթականներին կամ Վրաստան անցնելու, կամ Ախալքալաք վերադառնալու թույլտվության արտոնման մասին, հոկտեմբերի 4-ին վրացական կառավարության գրասենյակի պետ Կոժուխովը Հայոց գլխավոր գաղթականական խորհրդին պաշտոնական գրությամբ հայտնեց, որ քանզի Վրաստանում ստեղծվել է պարենային ճգնաժամ, իսկ թուրքական հրամանատարությունը հրաժարվում է թույլ տալ Ախալքալաքի հայությանը վերադառնալ հայրենիք, վրաց իշխանությունները առաջարկում են ամենակարճ ժամանակամիջոցում գաղթականությանը տեղափոխել Հյուսիսային Կովկաս կամ Հայաստանի Հանրապետություն: Արտաշես Աբեղյանը ձիշտ է նկատել, որ այդ ժամանակ «Եթե՛ ո՛չ մարդասիրական տարրական գիտակցութիւնից, գէթ քաղաքական ողջմտութիւնից դրդուած՝ պէտք է, որ վրաց կառավարութիւնը ձեռք մեկնէր կոտորուող ախալքալաքցիներին, ցոյց տալով, որ նրանց հետ է դժբախտութեան օրերին, որպէսզի գէթ դրանով երեսատեղ ունենար՝ պատեհ առթիւ «հիմնաւորելու» իր «վեհապետական իրաւունքը» Ախալքալաքի վրայ»<sup>11</sup>:

Գաղթականության հոգսերի ողջ ծանրությունը մնաց Հայոց գաղթականական խորհրդի, Ախալքալաքի Հայրենյաց վարչության, Կովկասի հայոց բարեգործական ընկերության, Վրաստանում Ամերիկյան առաքելության, մասամբ նաև Վիրահայոց Ազգային խորհրդի և Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալյանի ուսերի վրա: Մինչև 1918 թ. դեկտեմբերը բժավոր տիֆն ու խոլերան սկսեցին հնձել գաղթականությանը: Այդ օրերին «Մշակում» տպագրված մի թղթակցությունում Ախալքալաքի հայրենյաց վարչության քարտուղար Պողոս Աբեղյանը գրում էր. «Ախալքալաքցիների բնաջնջումն այնքան աճող է գնում, որ եթե գաղթականներին փրկելու համար ձեռք չառնվեն ժամանակի պահանջած միջոցներ, ախալքալաքցիների այս սերունդը կլինի վերջինը երկրագնդի վրա»<sup>12</sup>: 1918 թ. հունիսից մինչև

8 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1928, սեպտեմբեր, էջ 123:

9 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, 30 օգոստոս:

10 **Ջամալեան Ա.**, նշվ. աշխ., «Հայրենիք», 1928, Բոստոն, ապրիլ, էջ 90:

11 **Աբեղեան Ա.**, Մենք և մեր հարևանները, «Հայրենիք», Բոստոն, 1928, դեկտեմբեր, N 2:

12 «Մշակ», Թիֆլիս, 1919, N 14:



նոյեմբեր Բակուրիանի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազ. մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծավկայի և Մանգլիսի շրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքցի գաղթականների կորուստները հասան 40 հազարի<sup>13</sup>:

1918 թ. հոկտեմբերի 30–ին Մուդրոսում Անտանտի երկրների հետ կնքված զինադադարի համաձայն՝ թուրքերն սկսեցին զորքերը հետ քաշել մինչև 1914 թ. սահմանը: Հետևաբար, դրվում էր նաև Ախալցխայի և Ախալքալաքի գավառներից զորքերի դուրսբերման հարցը: Ինքնաբերաբար մեջտեղ էին գալիս նաև այդ գավառների պատկանելության և գաղթականության վերադարձի խնդիրները:

1918 թ. նոյեմբերից հաղթահարելով վրաց զինվորական իշխանությունների հարուցած զանազան արգելքները՝ հաճախ շրջանցիկ ճանապարհներով, Ախալքալաքի գաղթականության բեկորներն սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու թալանված բնակավայրերը: Բակուրիանից հայրենի գավառ անցնելու թույլտվության դիմաց վրաց զինվորականները գաղթականներից պահանջում էին ստորագրություններ՝ վրացահպատակություն ընդունելու, գավառը Վրաստանի մաս ճանաչելու մասին<sup>14</sup>: Դեպքերի զարգացումն ականայից տանում էր դեպի հայ-վրացական հարաբերությունների սրում:

Կանխագգալով Վրաստանի կողմից Զավախքի նկատմամբ հավակնությունների քաղաքական հետևանքները՝ Հայաստանի կառավարությունը փորձեց դիվանագիտական եղանակով լուծել խնդիրը: Նոյեմբերի 12–ին Երևանում Վրաստանի ներկայացուցիչ Բ. Միլիվանու հետ հանդիպման ժամանակ Հայաստանի արտգործնախարար Ս. Տիգրանյանը և ճանաչված գործիչ Գ. Խատիսյանը հայտարարեցին, որ ի կատարումն դեռ 1917 թ. հեղափոխությունների նախօրյակին և ընթացքում վրացական սոցիալ–դեմոկրատիայի ու ՀՅԴ–ի միջև ձեռք բերված համաձայնությունների՝ հայկական կառավարությունը գերազանցապես հայերով բնակեցված տարածքները՝ Ախալքալաքի գավառը, նրան հյուսիսից սահմանակից Գորիի գավառի հարավային հատվածը (Տաբաձորի լճի շրջանի հայկական գյուղերը–Ա.Մ.) և Բորչալուն՝ մինչև Խրամ գետը, մտնելու են Հայաստանի կազմի մեջ: Այդ գրույցի բովանդակությունը Միլիվանին հեռագրով հաղորդեց Թիֆլիս<sup>15</sup>: Վրաստանի կառավարության պատասխանը եղավ ժխտական:

Շուտով հայ-վրացական հարաբերությունները ավելի սրվեցին թուրքերի յուրահատուկ «միջանտության» հետևանքով: Վիճելի համարվող տարածքներից հեռանալուց առաջ<sup>16</sup> թուրքական հրամանատարությունը նոյեմբերի 20–ից 25–ն ընկած ժամանակահատվածում, միաժամանակ, միայնացից գաղտնի և՛ Վրաստանի և՛ Հայաստանի կառավարություններին տեղեկացրեց գավառները նրանց հանձնելու մասին: Վրացական ղեկավարությունը չպահադեց «օգտվել» թուրքերի ընձեռած հնարավորությունից և անցավ ակտիվ

13 Տե՛ս ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 264, թ. 1–2:

14 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 131ա:

15 Տե՛ս *Ձեռագրեր, պրենձլա, տեղեկություններ, 1908, 4–6, թ. 5*:

16 Թուրքական զորքերն Ախալցխայի և Ախալքալաքի գավառներից դուրս եկան նոյեմբերի 27–ին՝ իրենց հետ տանելով մեծ քանակությամբ թալանված գույք:

գործողությունների<sup>17</sup>:

Թիֆլիսից նոյեմբերի 29-ին ստացվեց տարածքային հարցերի լուծման վերաբերյալ Վրաստանի կառավարության «նոր» տեսակետը: Վրացական կողմի կարծիքով՝ հայ-վրացական սահմանագիծը պետք է անցներ նախկին Թիֆլիսի նահանգի հարավային սահմանով, այսինքն՝ Լոռին և Ախալքալաքը մտնելու են Վրաստանի կազմի մեջ: Դրան հաջորդեցին ավելի գործնական քայլեր. կազմվեց Ախալքալաքի վրացական վարչություն, նշանակվեց նահանգապետ, գործերը մարտական պատրաստության բերվեցին:

Ի պատասխան նման մոտեցման, որը հակասում էր խաղաղ միջոցներով և էթնիկ-ազգագրական սկզբունքի հիման վրա վիճելի հարցերը լուծելու վերաբերյալ նախկինում ձեռք բերված համաձայնություններին, դեկտեմբերի 2-ին Հայաստանի արտգործնախարարությունը բողոքի նոտա ներկայացրեց Վրաստանին: «Սահմանային գծի վերաբերյալ վրաց և հայ ներկայացուցիչների (ձեռք բերած-Ա.Մ.) համաձայնության որոշման հիմքում, - ասվում էր արտգործնախարար Ս. Տիգրանյանի ստորագրությամբ ներկայացված նոտայում, - ինչպես հայտնի է, ընկած էր ազգագրական սկզբունքը»: Այդ մոտեցումից վերապահումներ՝ հոգուտ Վրաստանի, նախատեսվում էր միայն տեղագրական (տոպոգրաֆիական) նկատառումներով: Այնպես որ հայկական կողմի պնդումները բխում էին փոխադարձ համաձայնություններից: Հետևաբար, «Ախալքալաքի գավառն ամբողջությամբ և Բորչալուի գավառի մեծ մասը՝ իրենց բացարձակ գերակշիռ հայ բնակչությամբ հանդիսանում են Հայաստանի անբաժան մասերը»<sup>18</sup>:

Դեկտեմբերի 1-ին Հայաստանի կառավարությունը քննարկեց Ախալքալաքի գավառ կանոնավոր գործեր մտցնելու հարցը: Զինվորական նախարար Հովհ. Հախվերդյանը տեղեկացրեց, որ նախօրյակին բարձրաստիճան զինվորականներ Սիլիկյանի, Դրոյի, Դոլուխանյանի, Զինկևիչի մասնակցությամբ կայացած հատուկ խորհրդակցությունը Ջավախք գործը մտցնելու քայլից առժամանակ ձեռնպահ մնալու որոշում է կայացրել. «...նկատի առնելով սպասվելիք բարդությունները հարավային սահմանի վրա և մի քանի այլ հանգամանքներ...»: Կառավարությունը հիմնավոր գտավ զինվորական նախարարի պատճառաբանությունները և վճռեց «...լիազորել նրան՝ չմտցնել ներկայումս Ախալքալաքի գավառը գործ և առայժմ բավականանալ նախապատրաստական գործողություններով»<sup>19</sup>:

Հայաստանի կառավարության դանդաղ կոտ ու սպասողական գործելակերպի համար թերևս միակ, բայց ոչ ծանրակշիռ փաստարկ կարող էր լինել այն հանգամանքը, որ Ջավախքին հարևան Շիրակը, որտեղով անցնում էր Երևանից Ախալքալաք տանող ճանապարհը, այդ օրերին դեռ շարունակում էր մնալ թուրքերի ձեռքում (թուրքերն Ալեքսանդրապոլի գավառից իրենց վերջին զինվորներին դուրս բերեցին դեկտեմբերի 6-ին):

Հայկական զորքերի հրամանատարությունը մի քանի օր անց՝ հավանաբար դեկտեմբերի 6-ին, տեղեկացած չլինելով Ալեքսանդրապոլի գավառ

17 Վրաց քաղաքագետներն ու պատմաբանները, որոշ չափով նաև հայ հեղինակները, նվազ չափով ուշադրություն դարձնելով հայ-վրացական ընդհարումը սանձազերծելու գործում թուրքերի ունեցած ամենամեծ դերին, ավելի կարևորել են միմյանց մեղադրանքներ ներկայացնելու հանգամանքը:

18 «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 74 և *Ճողովոյ», 1998, 4-6, թթ. 6.*

19 ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 105, հմտ.՝ «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 73:

ռից թուրքերի դուրս գալու մասին՝ Ղարաքիլիսայից, Ծալկայի վրայով մի փոքրաթիվ հեծյալ ջոկատ է հասցրել Ախալքալաքի գավառ: Վերջինս կարողացել է մտնել գավառի հարավային մասը՝ Եֆրեմովկա-Տրոյիցկոյե գյուղերի շրջան: Այդ մասին վկայում է նաև Ջավախք շարժվող վրացական զորքերի հրամանատարության մի հաղորդագրությունը՝ ուղղված կառավարությանը, որում խնդրվում էր միջոցներ առաջարկել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, քանզի սպասվում է անցանկալի միջադեպ, այն է՝ ռազմական բախում Բոգդանովկա մտած հայկական էսկադրոնի հետ<sup>20</sup>: Սակայն ինչպես կտեսնենք, հայկական կողմը հապաղեց, իսկ վրացիները գրավեցին գավառի հիմնական՝ կենտրոնական և հյուսիսային մասը:

Ղեկտեմբերի 5-ին Ս. Տիգրանյանն անհրաժեշտ համարեց հուշագիր ներկայացնել Մոլդովանուն՝ առաջարկելով ձեռնպահ մնալ Ախալքալաքը գրավելու գործողություններից և սկսել բանակցություններ<sup>21</sup>: Այնինչ Հայաստանի ղեկավարությունն անտեղյակ էր, որ նույն օրը՝ դեկտեմբերի 5-ի առավոտյան, արդեն վրացական կառավարությունը, որ մինչև այդ բռնագավթել էր Լոռին<sup>22</sup>, զորավար Մակակի (Մաղաշվիլի) գլխավորությամբ զորք էր մտցրել նաև Ջավախք և գրավել նրա կենտրոն Ախալքալաքը:

Գերակշիռ վրացական ուժերի հետ չբախվելու նկատառումով, հայկական փոքրաթիվ ջոկատը ստիպված դուրս եկավ գավառից<sup>23</sup>: Առնվազն տարօրինակ է, որ Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին դեկտեմբերի 7-ին հայկական կողմին ուղարկած իր պատասխան հեռագրում վրացական զորքերի մուտքը Ախալքալաք պատճառաբանում էր տեղական բնակչության շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ և պատմական, քաղաքական ու բարոյական տեսանկյուններից այն Վրաստանին պատկանելու «իրողությամբ»: Ընդ որում, ոչինչ չէր ասվում էթնիկական սկզբունքի մասին: Զարմանալի է, որ այս գավառը ևս գրավելու և հայերին կատարված փաստի առաջ կանգնեցնելու անխոհեմ քայլից հետո էլ «... Վրաստանի կառավարությունը մնում էր լիովին համոզված, որ այդ հանգամանքը (Ախալքալաքի գրավումը- Ա.Մ.) ոչ մի կերպ չի կարող ազդել տարածքային սահմանազատման համար մեր բանակցությունների ընթացքի վրա...»<sup>24</sup>:

Վրացական զորքերը, Ախալքալաքում «կարգ ու կանոն հաստատելու նպատակով», զինաթափեցին տեղի ինքնապաշտպանական ուժերը, մինչև դեկտեմբերի 10-ը հսկողության տակ վերցրին ամբողջ գավառը, ստեղծեցին վրացական վարչություն, սկսեցին խոչընդոտել դեռ հայրենի օջախներ չվերադարձած գաղթականների մնացած մասի տունդարձը:

20 Տե՛ս ժողովրդագր., 1998, 4-6, թթ. 7.

21 Տե՛ս **Զամալեան Ա.**, նշվ. աշխ., «Հայրենիք», Բոստոն, 1928, ապրիլ, էջ 94 և «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 75:

22 1918 թ. հոկտեմբերին թուրքական զորքերը դուրս եկան Լոռուց: Երբ հայկական զինված ուժերը փորձեցին մտնել գավառ, նրանց կանգնեցրին գերմանական պահակային ջոկատները: Ֆոն Կրեսը Լոռու տարածաշրջան զորք մտցնելու դեպքում Հայաստանին նույնիսկ սպառնաց պատերազմով: Վրացական ուժերը, օգտվելով գերմանական աջակցությունից, ներխուժեցին Լոռի և հսկողություն սահմանեցին հայկական գյուղերի վրա («Յառաջ», Փարիզ, 1928, 19 հունիս, N 677, էջ 2):

23 Տե՛ս **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 225-226:

24 «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 77, **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., եր., 1999, էջ 52-53:

Դեկտեմբերի 16-ին Հայաստանի խորհուրդը (խորհրդարան) հավանություն տվեց Ախալքալաքի և Բորչալուի գավառների հայ բնակչության անվտանգության ապահովմանն ու այդ տարածքները վրացական զորքերից ազատագրելուն ուղղված Քաջազնունու կառավարության ուշացած քայլերին և հատուկ որոշում ընդունեց գործադիր իշխանությանն ազատ գործելու իրավունք արտոնելով: Միննույն ժամանակ խորհրդարանը համաձայնեց Այսրկովկասում անգլիական գինվորական հրամանատարության ներկայացուցիչ կապիտան Գրինի առաջարկությանը՝ ռազմական գործողություններից ձեռնպահ մնալու և բանակցություններ սկսելու մասին՝ պայմանով, որ հայկական ուժերը չեն հեռանալու վիճելի տարածքներից այնքան ժամանակ, քանի դեռ չի ապահովված տեղի հայ բնակչության անվտանգությունը վրացական զորքերից<sup>25</sup>: Հայաստանի կառավարությունը նորից բողոքեց Լոռու և Ախալքալաքի գավառան կապակցությամբ: Սակայն վրացիները մնացին անդրդվելի: Այսպես՝ դեկտեմբերի կեսերին ծագեց հայ-վրացական պատերազմը, որի սանձազերծման գործում, ինչպես նշվեց, իրենց ամենամեծ դերն ունեցան թուրքերը:

Հայ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, ժամանակի հայ մամուլը ցավով ընդունեցին եղբայրասպան պատերազմի լուրը: Սակայն միանգամայն արդարացի համարելով հայկական կողմի մոտեցումները՝ հիմնականում հանդես եկան Հայաստանի կառավարության գործողությունների պաշտպանությամբ<sup>26</sup>:

Հայկական ուժերը Դրոյի գլխավորությամբ ազատագրեցին Լոռու մեծ մասը: Դեկտեմբերի 11-12-ին հայկական դիվիզիայի 4-րդ հետևակային գնդի մեկ գումարտակ Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Ախալքալաք և այնտեղ մտած վրացական զորքերի հետ ընդհարումից հետո հսկողության տակ վերցրեց գավառի մեծ մասը: Վրացական ուժերը քաշվեցին հյուսիս<sup>27</sup>: Դեկտեմբերի 17-ին Վրաստանի խորհրդարանում ճառով հանդես եկավ կառավարության նախագահ Ն. Ժորդանիան, որն սկսված պատերազմի սանձազերծման ողջ մեղքը բարդեց Հայաստանի կառավարության վրա: Վրաստանում հայերի նկատմամբ իսկական մարդաորս սկսվեց: Հազարավոր հայեր հայտարարվեցին ռազմագերիներ և աքսորվեցին Քութայիս<sup>28</sup>:

Դեկտեմբերի 19-ին Ս. Տիգրանյանը հատուկ ռադիոգրով Վրաստանի արտգործնախարարին տեղեկացրեց, որ հայկական կողմը դեռ հնարավոր է համարում ռազմական գործողությունների դադարեցումը և ուղարկում է հատուկ պատվիրակություն անգլիացի կապիտան Գրինի միջնորդությամբ բանակցություններ սկսելու համար: Միակ նախապայմանն այն է, որ ի կատարումն Հայաստանի խորհրդի որոշման՝ պահանջվում էին երաշխիքներ Բորչալուի և Ախալքալաքի հայ բնակչության անվտանգության համար: Ռա-

25 Տես «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 79:

26 Տես **Թադևոսյան Մ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքը անդրկովկասյան և սփյուռքահայ մամուլի լուսարանմամբ (1918 մայիս-1919 մայիս), թեկնածուական ատենախոսություն, ձեռագիր, եր., 2001, էջ 84-99: Այսպես՝ Հայ Ժողովրդական կուսակցության օրգան «Ժողովուրդը» (Երևան) միանգամայն արդարացի էր համարում Ախալքալաքի և Լոռու միացումը Հայաստանին («Ժողովուրդ», 1919, 9 փետրվար): ՀՅ Դաշնակցությունը միանշանակ նույն կարծիքին էր: Մամուլի այլ օրգաններ խնդիրը նույնացնում էին ֆրանս-գերմանական վիճելի էլզաս-Լոթարինգիայի հետ (**Թադևոսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 95):

27 Տես **Հարությունյան Կ. Ա.**, Հայկական ազգային գորամիավորումները 1918-1945 թվականներին, եր., 2002, էջ 58:

28 Տես **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 242-248:

դիողգրում նաև նշվում էր, որ մինչև դեկտեմբերի 13-ը հայկական ոչ մի գործառնաս վրացական ուժերի նկատմամբ որևէ ագրեսիվ գործողություն չի կատարել, այն դեպքում, երբ վերջիններս հայ բնակչության նկատմամբ իրենց բռնություններով հարկադրել են Հայաստանին հանդես գալ հայության շահերի պաշտպանությամբ: «Վերջին ամիսներին, – ասվում էր փաստաթղթում, – Հայաստանի կառավարությունը հանդես է բերել ծայրահեղ խաղաղասիրություն: Մինչդեռ Վրաստանի կառավարությունը Լոռու նկատմամբ ոտնձգությամբ, Ախալքալաքի բռնազավթումով, Բորչալուի (բնակչության նկատմամբ) ռազմական բռնություններով հանդես է եկել իբրև ագրեսիվ, զավթողական քաղաքականության կրող՝ Հայաստանի կառավարության բազմաթիվ դիվանագիտական բողոքներին և խաղաղասիրական առաջարկություններին վերաբերվելով լիակատար քամահրանքով»<sup>29</sup>:

Միջնորդի դեր ստանձնած անգլիացիներին չհաջողվեց կանխել ռազմական բախումը: Պատերազմը շարունակվեց: Հատկապես Լոռիում հայկական զորքերն ունեցան լուրջ հաջողություններ, իսկ ռազմաձակատի ձախ թևում հասան մինչև Բելի Կյուչ (այժմ՝ Թեթթիծղարո):

Անտանտի ներկայացուցիչները շարունակեցին փորձերը՝ հաշտության եզրեր գտնելու հարցում: Բայց այս անգամ արդեն անգլիացիներն իրենց միջնորդական գործունեության մեջ չառաջնորդվեցին արդարության սկզբունքով: Դեկտեմբերի 25-ին անգլիացի գեներալ Ռայկրոֆտը (նաև՝ Ռեյկրոֆտ, Ռիկրոֆտ) և ֆրանսիացի գնդապետ Շարդինյին, առանց Հայաստանի ներկայացուցիչների հետ խորհրդակցելու, Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիայի հետ ստորագրեցին զինադադարի մի համաձայնագիր հիմնահարցի լուծման ուղիների մասին: Այն նախատեսում էր ռազմական գործողությունների դադարեցում, Զալալոլի-Դսեղ կորագծից հյուսիս ընկած տարածքում վրացական, իսկ դրանից հարավ մնացող շրջանում՝ հայկական զորքերի տեղակայում: Ախալքալաքում հաստատվելու էր վրացական վարչակազմ՝ դաշնակից երկրների հսկողությամբ: Վարչակազմի մեջ ընդգրկվելու էին տեղի հայ և մահմեդական ներկայացուցիչներ<sup>30</sup>: Վրացական զորքերի թիվը գավառում պետք է լիներ խիստ սահմանափակ:

Այս համաձայնության տակ Հայաստանի կողմից առաջարկվեց ստորագրել Արշակ Զամայանին: Վերջինս կտրականապես հրաժարվեց՝ առարկելով Ախալքալաքին վերաբերող ձևակերպմանը: Անգլիացիները համաձայնագրի տակ ավելացրին հետևյալ նախադասությունը. «Պ. Զամայանը համաձայն չէ Ախալքալաքի գավառը Վրաստանի կողմից գրավելու կետին»: Փաստորեն դաշնակիցները, հաշվի չնստելով հայկական կողմի կարծիքի հետ, միակողմանի համաձայնագիրը փորձեցին դնել գործողության մեջ: Նման պայմաններում Հայաստանին մնաց հաշտվել ստեղծված իրավիճակի հետ: Դեկտեմբերի 29-ին Մեծ Ղարաքիլիսայում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Հարությունյանը անգլիացիների հորդորների ներքո և մի նախապայմանով, որ զինադադարով նախատեսվող պայմանները ժամանակավոր են և դեռ ենթակա են վերանայման, ստորագրեց վերոհիշյալ համաձայնագիրը: Այն բացահայտորեն միակողմանի էր և բխում էր միայն վրացիների

29 «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 80–81:  
30 Տե՛ս Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 234–235:

շահերից: Այդ մասին է վկայում նաև Ղարաբիլիսայում դաշնակից տերությունների հանձնաժողովի նախագահ Դուգլաս Վիձերսը: Նրա կարծիքով կնքված համաձայնագրից հայկական կողմի դժգոհությունը միանգամայն արդարացի էր: Բայց նույնիսկ այդ պարագայում, ստորագրելով զինադադարի փաստաթղթի տակ, «Հայաստանի կառավարությունը հանդես բերեց լայն մեծահոգություն և խաղաղության անկեղծ ցանկություն»<sup>31</sup>:

Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 31-ին, հայ-վրացական ընդհարումը դադարեցվեց: 1919 թ. հունվարի 9-17-ը Թիֆլիսում կայացավ հաշտության կոնֆերանս: Այն, որ կոնֆերանսի անցկացման վայր էր ընտրված ոչ թե չեզոք վայր, այլ Վրաստանի մայրաքաղաքը, ենթադրում էր վրացական պատվիրակության համար գերակա դիրք: Հավանաբար անգլիական պատվիրակությունը, որը գլխավորում էր խորհրդաժողովը, ինչպես դեկտեմբերի վերջին, այնպես էլ այժմ, տրամադրված լինելով պաշտպանելու Վրաստանի շահերը, նույնպես պնդեց կոնֆերանսը Թիֆլիսում անցկացնելու վրացական կողմի առաջարկության օգտին: Հայաստանի կառավարությունը, հաշվի առնելով, որ Թիֆլիսում գործող Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչները կարող են ներկայացնել իր շահերը, չառարկեց կոնֆերանսի անցկացման վայրի վերաբերյալ վրաց-անգլիական առաջարկությանը: Ինչպես ցույց տվեցին դեպքերը, այդ հանգամանքը կարևոր դեր կատարեց կոնֆերանսում ոչ հայանպաստ որոշումներ կայացնելու հարցում:

Կոնֆերանսը նախագահում էր անգլիական բանակի գնդապետ Ստյուարտը: Ֆրանսիական հրամանատարությանը ներկայացնում էր կապիտան Հասսելդը: Հայկական պատվիրակության մեջ ընդգրկված էին Մ. Հարությունյանը (նախագահ), Ստ. Մամիկոնյանը և ուրիշներ, իսկ ռազմական խորհրդականն էր գեներալ Գ. Կորգանովը (Ղորղանյան), քարտուղարը՝ Ա. Ա. Ահարոնյանը: Վրաստանի պատվիրակությունն ավելի ներկայացուցչական էր: Այն ղեկավարում էր արտգործնախարար Ե. Գեգեչկորին: Անդամներն էին Սաբախտարաշվիլին, գեներալ Գեդևանովը և ուրիշներ:

Ախալքալաքի հարցը, որ կոնֆերանսի ամենատուր խնդիրներից էր, քննարկվեց հունվարի 13-ի նիստում<sup>32</sup>: Գնդապետ Ստյուարտն ի սկզբանե դրսևորեց կողմնակալ պահվածք և ամբողջ նիստի ընթացքում, գործեց վրացիների հետ փոխհամաձայնեցված սցենարով: Նախ՝ նա առաջարկեց, որ հիմնահարցի կարգավորման վերաբերյալ քննարկման դրվի վրացական պատվիրակության առաջարկը, որը մինչ այդ՝ հայ-վրացական պատվիրակությունների հանդիպման ժամանակ, արդեն մերժվել էր հայերի կողմից: Խնդիրը վերաբերում էր Ախալքալաքում զորքեր տեղակայելուն: Վրացիներն առաջարկում էին Ջավախքում պահել միայն վրացական զորքեր. 200 հոգանոց մի զորաջոկատ պետք է կանգնե՞ր գավառի սահմանի երկայնքով, իսկ 360 հոգանոց մեկ գումարտակ՝ չորսական հրանոթներով ու գնդացիներով, տեղակայվե՞ր Ախալքալաք քաղաքում: Ջավեշտական է, որ գավառում վրացական զորքերի ներկայությունը գեներալ Գեդևանովը «հիմնավորում» էր հայ բնակչության շահերի պաշտպանության «մտահոգությամբ»:

31 «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. », էջ 81:

32 Սահմանային վիճելի հարցերի քննարկման մասին տե՛ս նաև **Խառատյան Վ.**, Լոռու և Ախալքալաքի հարցը 1919 թ. հայ-վրացական խորհրդաժողովում, «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, N 2, էջ 98-103:

վրացական գորքը պետք է կանխեր արյունահեղությունը գավառ վերադարձող հայ գաղթականության և նրանց բնակավայրերում հաստատված մահմեդականների միջև: Ինչ վերաբերում է հայ բնակչության անվտանգությանը, ըստ վրաց գեներալի՝ անհանգստանալու հարկ չկար, քանի որ «ձմռանը, ձյան առկայությունն Ախալքալաքի գավառում անհնարին է դարձնում այդ շրջանում ռազմական գործողությունները, և ուստի, այդ գորքերը չեն կարող օգտագործվել Հայաստանի դեմ»<sup>33</sup>:

Հայկական կողմի առարկությունները չեն ընդունվում անգլիացիների կողմից: Ստյուարտն առաջարկում է որպես երաշխիք գավառ մտցնել դաշնակիցների մեկ վաշտ: Բայց շուտով պարզվում է, որ հայերի համար քիչ թե շատ ընդունելի այդ տարբերակը հնարավոր չէ իրագործել, քանի որ դաշնակից գորքերն անմիջապես չեն կարող ժամանել տարածաշրջան: Այդ ժամանակ Ստյուարտն ընդունում է վրացական կողմի առաջարկը՝ մինչև դաշնակիցների ժամանումը Ախալքալաքում տեղակայել վրացական 800 հոգանոց մի գորախումբ: Կորգանովն առաջարկում է ի հակակշիռ վրացական գորքերի այդ քանակության, հայերին թույլատրել իրենց ռազմական ուժերն Հարավային Բորչալուում հասցնել 600 զինվորի: Բայց ապարդյուն: Հասկանալի է, որ այս ամենը նախապես մշակված վրաց-անգլիական դիվանագիտական հնարք էր:

Ստյուարտի ճնշման տակ հայկական պատվիրակությունը համաձայնվում է վրացական նախագծի հետ, որը ոչ միայն արտոնում էր Վրաստանին զգալի քանակությամբ գորքեր պահելու Զավախքում, այլև առանց դաշնակիցների ներկայության և հսկողության, բացառել Հայաստանի որևէ մասնակցություն Ախալքալաքի գավառի գործերին: Ավելին, Գեդևանովի պահանջով արձանագրության մեջ մտցվում է հատուկ կետ, ըստ որի՝ Վրաստանի նկատմամբ Հայաստանի որևէ ագրեսիվ գործողություն գնահատվելու էր իբրև թշնամական քայլ դաշնակիցների հանդեպ<sup>34</sup> :

Կոնֆերանսում դաշնակիցների ջանքերով ի վնաս հայերի որոշում է կայացվում նաև Ախալքալաքի վարչակարգի ձևավորման սկզբունքների վերաբերյալ: Չի ընդունվում տեղական մարմիններն ընտրովի դարձնելու մասին հայերի առաջարկը: Ստյուարտը, խուսափելով իրեն ուղղված հայկական կողմի արդարացի հարցադրումներից, առաջնորդվում էր այն «սկզբունքով», որ այդ խնդիրը դուրս է կոնֆերանսի իրավասությունից և արդեն լուծված է դեկտեմբերի վերջին գեներալ Ռայկրոֆտի նախագծով կնքված զինադադարի համաձայնագրով: Հայկական պատվիրակությանը չի հաջողվում հասնել գոնե այնպիսի որոշման, որ վրացական վարչակարգի գործունեությունը հսկելու համար նախատեսվող հանձնաժողովում հայ անդամների թեկնածությունն առաջադրվի Հայաստանի և հաստատվի դաշնակիցների կողմից: Այդ հարցը ևս փաստորեն մնում է միայն Վրաստանի

33 ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 77: Գեներալ Կորգանովը, ի պատասխան Գեդևանովի արտահայտած վերջին մտքի, հիշեցրեց, որ Առաջին աշխարհամարտի կարևորագույն գործողություններից երկուսը՝ գերմանական Հինդենբուրգի պաշտպանական գծի ձեղքումը և Էրզրումի գրավումը, տեղի են ունեցել ձմռանը: Բացի այդ, Ախալքալաքում զգալի թվով վրացական ուժերի առկայությունը վտանգում է նաև հայկական գորքերի դիրքերը Բորչալուի գավառի հարավում:

34 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 78-79: Վրացական պատվիրակության վստահությունը Ստյուարտի նկատմամբ այնքան մեծ էր, որ Գեդևանովը պահանջեց, որ Հայաստանին արգելվի Ախալքալաքի գավառի սահմանագլխին պահելու անգամ մեկ զինվոր:

իրավասությանը, որը պետք է տեղի հայերից և մահմեդականներից ընտրված ներկայացուցիչներին, դաշնակից երկրների դիտորդների ներկայությամբ, վստահեր իր գործունեության «հսկողությունը»: Բայց քանի որ ոչ դաշնակից գործեր ժամանեցին Ջավախք, ոչ էլ նրանց դիտորդները, վրացական կառավարությունը գավառում հաստատեց իր լիակատար իշխանությունը, իսկ Վերահսկիչ հանձնաժողովում ընդգրկվելու համար տեղի հայ ու մահմեդական ներկայացուցիչներին ընտրելու գործը դարձավ ձևական և նույնպես հայտնվեց վրացական իշխանությունների ձեռքում:

Այսպիսով, բրիտանական պատվիրակությունը Ախալքալաքի հիմնահարցի քննարկումը տարավ այնպիսի ուղիով, որ արդյունքում ընդունվի միայն վրացիների համար ընդունելի որոշում: Հայկական կողմի բոլոր արդարացի առարկություններին, հատկապես այն հարցում, որ անհասկանալի է, թե ինչպես կարելի է Հայաստանին զրկել գերազանցապես հայերով բնակեցված այդ գավառի վարչաքաղաքական կյանքին մասնակցելու իրավունքից, գնդապետ Ստյուարտը դեմագոգիկ ձևով պատասխանեց, որ այդ գործառնությունը կկատարեն դաշնակիցների գործերն ու նրանց դիտորդները:

Անգլիացիների կողմնակալ կեցվածքն այնքան ոգևորեց վրացական պատվիրակությանը, որ արտգործնախարար Ե. Գեզեչկորին վստահորեն հայտարարեց, որ «այդ (Ախալքալաքի – Ա.Մ.) վարչակարգի հանդեպ Հայաստանը ոչ մի գործ չպետք է ունենա»՝ նույնիսկ չհամաձայնելով Վերահսկիչ հանձնաժողովի ընտրությունների մասին Հայաստանի կառավարությանը տեղյակ պահելու վերաբերյալ Ստյուարտի առաջարկության հետ: Հատկանշական է, որ վրացական պատվիրակության նախագահի այդ կարծիքը, հայերի ու դաշնակիցների համար նաև վիրավորական կեցվածքը, անգլիացի գնդապետը բավարար համարեց և, առանց հայկական կողմի բողոքները հաշվի առնելու, հայտարարեց հարցը վերջնականապես լուծված<sup>35</sup>:

Խաղաղության խորհրդաժողովն ավարտվեց հունվարի 17-ին: Կնքված հաշտությունը խիստ ձեռնտու էր վրացական կողմին: Հայկական գործերի ռազմական հաջողություններն ի չիք էին դառնում: Լոռու ազատագրված ավելի քան 40 գյուղեր՝ մեծ մասամբ հայաբնակ, մտնում էին Չեզոք գոտու մեջ, իսկ Ջավախքը, թեև դիտվում էր վիճելի տարածք, մնում էր վրացիների հսկողության ներքո<sup>36</sup>: Այնտեղ վրացական կառավարությանը թույլատրվում էր պահել ոչ ավել, քան 225 հետևակային (2 վաշտ՝ 2 գնդացի-րով): Տեղի վրացական վարչության գործունեության հսկողությունը, ինչպես նշվեց, ձևականորեն դրվելու էր Աստանտի երկրների ներկայացուցիչների վրա, որոնք այն իրականացնելու էին գավառի հայ և մահմեդական բնակչության օժանդակությամբ<sup>37</sup>:

Չբավարարվելով այսքանով՝ հետագա ամիսներին ևս անգլիական գորահրամանատարությունը հանդես եկավ վրացանպաստ նոր «առաջարկություններով» և երկու հարևան ժողովուրդների միջև ավանդական բարիդրացիական հարաբերությունները վերականգնելու փոխարեն, իրակա-

35 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 80-82:

36 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, թ. 3ա, 5ա:

37 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 82-83:



նում լուրջ դեր կատարեց նրանց միջև սառնությունը պահպանելու գործում: Ինչևէ, հայ-վրացական եղբայրասպան պատերազմն ավարտվեց, ազգամիջյան լարվածությունը հետզհետե տեղի տվեց, և երկու երկրների միջև շուտով հաստատվեցին ընդունելի միջպետական հարաբերություններ: Մարտին երկու հանրապետությունները ճանաչեցին միմյանց անկախությունը, վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը, աշխուժացան տնտեսական կապերը: Սակայն Վրաստանի կառավարությունը, օգտագործելով իր աշխարհագրական դիրքը, չնոռացավ ժամանակ առ ժամանակ հակահայ քայլեր կատարել՝ ընդհուպ մինչև տնտեսական շրջափակումն ու արտասահմանից հայ սովյալների համար նախատեսված սննդամթերքի թալանը<sup>38</sup>:

Բարեբախտաբար, այդ ռազմական կոնֆլիկտից հետո հայկական և վրացական քաղաքական շրջանակներում երկուստեք գերակշռեց հարցերը քաղաքական ճանապարհով լուծելու մոտեցումը, որին կողմերը հետագայում հարազատ մնացին անգամ ամենաբարդ իրավիճակներում: Ուշագրավ է, որ թեև վիճելի խնդիրներից շատերին այդպես էլ լուծումներ չգտնվեցին, սակայն բարեկամական հարաբերությունները պահպանվեցին: 1919–1920 թթ. ընթացքում հայ-վրացական վիճելի խնդիրների թվում շարունակվեցին բանակցությունները ինչպես Ջավախքի, այնպես էլ այլ հարցերի շուրջ<sup>39</sup>: Հայաստանի ու Վրաստանի խորհրդայնացումից հետո Ախալքալաքի պատկանելության հարցը փոխանցվեց խորհրդային իշխանությանը:

**Աշոտ Ա. Մելքոնյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Արևմտյան Հայաստանի պատմական ժողովրդագրության, Ջավախքի 19–20-րդ դարերի պատմության հիմնահարցերը: Ունի բազմաթիվ մենագրություններ և հոդվածներ հայոց նոր պատմության առանցքային հիմնահարցերի վերաբերյալ:

38 Տե՛ս **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 99–100:

39 1919–1921 թթ. Ջավախքի շուրջ հայ-վրացական առնչությունների մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Աշոտ**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր, 2003, էջ 314–349:

## Summary

### **THE ISUUE OF JAVAKHK IN THE CONTEXT OF ARMENIAN-GEORGIAN RELATIONSHIP**

(May, 1918 – January, 1919)

Ashot A. Melqonyan  
*Academician of NAS RA*

**Key words** – the issue of Javakhk, ethnographic principal, the Turks, Georgian troops, Armenian-Georgian two weeks' conflict, the English, the French, Lori, the province of Akhalkalak, Tiflis, Armenian-Georgian conference.

In late May, 1918 after the proclamation of Republics of Armenia and Georgia the disputable territorial issues included the question of the identification of the province of Akhalkalak. The approach of the Armenian side based on the national principal of delimitation was rejected by the Georgian government. When the Turks left Javakhk, on December 5 the Georgian troops entered Akhalkalak. The official protests of Armenia had no effects. In mid-December the two weeks' Armenian-Georgian conflict was unleashed in the provinces of Lori and Akhalkalak due to instructions given by the Ottoman Turks. On December 31 a cease-fire agreement was struck due to the mediation of the English and French intermediaries, and on January 9-17, 1919 the Armenian-Georgian conference was held. Especially due to the pressure implemented by the English officer Stuart the province of Akhalkalak appeared under Georgia's control. In 1919-1920 the Armenian government tried for several times to solve this issue at different international instances. After the Sovietization of the region the issue of Javakhk was transmitted to the Soviet Republics of Georgia and Armenia.

## Резюме

### **ДЖАВАХКСКАЯ ПРОБЛЕМА В КОНТЕКСТЕ АРМЯНО-ГРУЗИНСКИХ ОТНОШЕНИЙ**

(май 1918 г. – январь 1919 г.)

Ашот А. Мелконян  
*Академик НАН РА*

**Ключевые слова** – Джавахкская проблема, этнический принцип, турки, грузинские войска, армяно-грузинский двухнедельный конфликт, англичане, французы, Лори, Ахалкалакский уезд, Тифлис, армяно-грузинская конференция.

В конце мая 1918 г., после провозглашения Республики Армения и Республики Грузия, в числе спорных территориальных вопросов, возникших

между сторонами, был вопрос о принадлежности Ахалкалакского уезда. Предложение армянской стороны о разграничении по этническому принципу было отвергнуто грузинским правительством. После выхода из Джавахка турок, 5-го декабря, грузинские войска вошли в Ахалкалак. Официальные протесты Армении были безрезультатны. По наводке османских турок в середине декабря был развязан двухнедельный армяно-грузинский военный конфликт за Лорийский и Ахалкалакский уезды. 31-го декабря при посредничестве англичан и французов было заключено перемирие, а 9-17-го января 1919 г. была созвана армяно-грузинская конференция. Ахалкалакский уезд, особенно под давлением английского офицера Стюарта, был взят под контроль Грузии. В 1919-1920 гг. правительство Армении сделало множество попыток решить проблему в разных международных инстанциях. После советизации региона джавакская проблема перешла к Грузинской и Армянской советским республикам.

## REFERENCES

1. **Jamalean A.**, Im pataskhannerə «Promete»-i yev «Ankakh Vrastani» hraparakagirnerin, «Yaraj», Pariz, 1928, 19 hunis, N 677. (In Armenian)
2. «Hayastani Hanrapetujunə 1918-1920 tt. (qaghaqakan patmutyun), pastatghteri zhoghovatsu, kazmoghner G. Galoyan, V. Ghazakhecyan... », Yer., 2000. (In Armenian)
3. **Avetisyan H.**, Haykakan harcə 1918 t., Yer., 1997. (In Armenian)
4. **Vracean S.**, Hayastani Hanrapetutiun, Yer., 1997. (In Armenian)
5. **Ghazakhecyan V.**, Yeres aratsnerə, «Hayastani ashkhatavor», 1919, 24 hunis, N 79. (In Armenian)
6. «Hayreniq», 1928, september. (In Armenian)
7. «Horizon», 1918, 30 ogostos. (In Armenian)
8. **Abeghyan A.**, Menq yev mer harevannerə, «Hayreniq», 1928, april. (In Armenian)
9. **Tadevosyan M.**, Hayastani Hanrapetutyun qaghaqakan kyanqə andrkovkasyan yev spyurqahay mamuli lusabanmamb (1918 mayis-1919 mayis), teknatsuakan atenakhosutyun, dzeragir, Yer., 2001. (In Armenian)
10. **Harutyunyan K. A.**, Haykakan azgayin zoramiavorumnerə 1918-1945 tvakannerin, Yer., 2002. (In Armenian)
11. **Kharatyan V.**, Loru yev Akhalqalaqi harcə 1919 hay-vracakan khorhrdazhoghovum, Hayoc patmutyan harcer, Gitakan hodvatsneri zhoghovatsu, N 2. (In Armenian)
12. **Melqonyan Ashot**, Javakhqə XIX darum yev XX dari arajin qarordin, Yer., 2003. (In Armenian)



Ալեքսանդր Ս. Մանասյան  
*Փիլիս. գիտ. դոկտոր*

## ԱՐՑԱԽԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 1918–1920 ԹԹ.

### Մուտք

**Բանալի բառեր** – Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարներ, Արցախը որպես ինքնորոշման սուբյեկտ, Արցախի 1918 թ. ինքնորոշման ակտը, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության հիմնման լեգիտիմության խնդիրը, Ժամանակավոր համաձայնագիր:

Թեև Ռուսական կայսրության փլուզմանը հաջորդած խառնակ տարիներին մասին ստեղծվել է հսկայածավալ գրականություն, սակայն սույն հոդվածի վերտառության մեջ ձևակերպված թեման դեռ սպասում է իր համարժեք իմաստավորմանը: Մեր ազգային իրավագիտական միտքը չի անդրադարձել այս հարցին՝ հիմնավոր ու համակարգված պատկերացում մշակելու նպատակով: Խնդիրն ավելի շատ քննարկվել է պատմագիտական հոդվածներում ու գրքերում, սակայն հասկանալի պատճառներով պատմագետները չէին կարող անել այն, ինչ մասնագիտորեն պետք է անեին իրավաբաններն ու քաղաքագետները:

Թեման միայն **Արցախ-Ադրբեջան** հակամարտության պատմագիտական ու իրավական հրատապ տեսանկյուններին չի վերաբերում: Այն արդիական է նաև ԼՂ Հանրապետության մերօրյա զարգացումների իրավաքաղաքական իմաստավորման տեսակետից: Զուգահեռները, որ նկատելի են Արցախի իրավական կարգավիճակների հարցում հարյուրամյա պատմություն ունեցող այդ հակամարտության 1918–1920 թթ. և 1988–ից սկսված և մինչ օրս շարունակվող շրջափուլերի միջև, կարող են բացահայտել խնդրի միջազգային քաղաքական կարևոր տեսանկյուններ, որոնք տեսանելի չեն համեմատական վերլուծության համատեքստից դուրս:

Պետք է նկատել, որ 1918–1920 թթ. Ղարաբաղի կարգավիճակի իրավական վերլուծությունը ընդհարվում է հարցերի, որոնք դյուրին չեն նաև մաս-

նագետ իրավաբանների համար: Բավական է ասել, որ 1918–1920 թվականներին Անդրկովկասը հայտնվել էր «պետական անտերության», կարգավիճակային անորոշության, քաղաքական վայրիվերումների, օտար ուժերի ներխուժումներով ուղեկցվող ազգամիջյան կոնֆլիկտների, տարածքային վերաձևումների՝ մեկը մյուսին հաջորդող գործընթացների մի ժամանակաշրջանում, երբ չէին երևում դրանից դուրս գալու ուղիներն ու հնարավոր հեռանկարները:

## 1. Խնդրին կանխահղվող երկու դիտարկում

Տարածաշրջանային զարգացումները 1918–1920 թվականներին, անշուշտ, որոշակիորեն պայմանավորված են եղել դիտարկվող շրջանին նախորդած քաղաքական գործընթացներով: Դրանցում պետք է առանձնացվեն Անդրկովկասում և հատկապես նրա արևելյան շրջաններում Ռուսական կայսրության կողմից տարվող իրանագերծման քաղաքականությունը, **կովկասյան թաթարներ** անվանված տեղի փոքրաթիվ թուրքական համայնքին ամենատարբեր արտոնությունների տրամադրումը և այդ հունում Պարսկաստանից որպես աշխատուժ երկրամաս մտնող էթնիկապես տարախառն զանգվածի հաշվին կովկասյան թաթարների թվաքանակի մեծացումը: 1918–1920 թվականներին Արևելյան Անդրկովկասը քաղաքական այլ բնույթի զարգացումների ծիրում կհայտնվեր, եթե Ռուսական կայսրությունը կովկասյան թաթարների նկատմամբ բարեհաճ քաղաքականությանը զուգահեռ չտաներ ընդգծված հակահայ քաղաքականություն՝ այն նկատառումով, որ վերջիններս, ի տարբերություն պետականության գաղափարից հեռու կովկասյան թաթարների, հետամուտ են ազգային անկախ պետականության վերականգմանը:

Ընդգծման կարիք ունի նաև մեկ այլ կանխադրույթ, որ կարևոր է 1918–1920 թթ. Արցախի իրավական կարգավիճակի հետ կապված հարցերը իրենց բնույթին համարժեք հասկանալու համար: Դա այն է, որ մինչև 1918–ը **հայեր-ադրբեջանցիներ** կամ **Արցախ-Ադրբեջան** տարածքային վեճ չէր կարող լինել և չի եղել այն պարզ պատճառով, որ մինչ այդ տարածաշրջանում ադրբեջանցիներ էթնոսիմը կրող ազգություն և Ադրբեջան անունով պետություն կամ այլ կարգի տարածքային մի միավոր չի եղել: Էթնիկական տարածքների վերակազմավորման բոլոր հարցերը Անդրկովկասում ծագել են ի հետևանս բոլշևիկյան հեղաշրջման և դրա հետ կապված՝ Ռուսական կայսրության փլուզման: Մինչ այդ Անդրկովկասը կայսրության մաս է կազմել, և նրա բոլոր վարչական միավորների սահմանները գծված են եղել այնպես, որ դրանք ունենան ազգային տարախառն բնակչություն և բացառվի դրանց հիմքով ազգային կազմավորումներ ստեղծելու հնարավորությունը: Այդպիսիք հիմնելու հարցը Անդրկովկասի գլխավոր էթնիկ համայնքների քաղաքական օրակարգում հայտնվեց կայսրության փլուզումից անմիջապես հետո: Դրանք հայերը, վրացիները և կայսրության ջանքերով ձևավորված և թուրքական ազդեցության ծիրում հայտնված կովկասյան թաթարներն էին:

Ժ (ԺԶ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
վլլ համահայկական հանդես

## 2. Ներքին և արտաքին քաղաքական ուժերը տարածաշրջանում 1918–1920 թթ.

Նախօրեին Արևմտյան Հայաստանում տեղի էր ունեցել Մեծ Եղեռնը, և Օսմանյան կայսրությունը, որ վաղուց էր աչքադրել Անդրկովկասին, դրանից հետո պիտի փորձեր գերմանացիների օգնությամբ գրավել այն: Եվ փորձեց: Գերմանական կայսրությունը օգնում էր Առաջին աշխարհամարտում իր դաշնակից Օսմանյան կայսրությանը՝ նրա տարածքով դեպի Բաղդադ դուրս գալու աշխարհաքաղաքական իր ծրագրերի շրջանակներում, որում «ռուսամետ հայերը» խոչընդոտ էին դիտվում: 1918–1919-ին բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով ռազմադաշտը լքած և խորհրդայնացված Ռուսաստանը ուշքի չէր եկել տարածաշրջանային գործերին լրջորեն միջամտելու համար: Անտանտի գլխավոր քաղաքական դերակատարը՝ Մեծ Բրիտանիան, որ հանդուրժել էր Հայոց ցեղասպանությունը, չէր ցանկանա բաց թողնել Բաքվի նավթին տիրանալու շանսը: Անգլիացիներին ձեռնադրելու չէր Բաքվում խորհրդային կարգերի հաստատումը, որին սատարում էր տեղի հայությունը: Բրիտանական կայսրությանը ձեռնադրելու էր Բաքուն տեսնել ոչ թե ռուսամետ, այլ հակառուսական քաղաքական ուժերի իշխանության ներքո:

Տարամետ էին նաև տեղական ազգային ուժերը: Վրաց մենշևիկները հայացքներն ուղղել էին գերմանացիներին, կովկասյան թաթարները՝ օսմաններին: Անդրկովկասում հայության վիճակն ամենալուրջն էր՝ հուսալի այնպիսի դաշնակցի բացակայության իմաստով, որի շահերը կհամընկնեին նրա ազգային շահերի հետ: Երկրատարածքի հայոց ուժերը միավորելու խնդիրը բարդ էր, քանի որ նրանք բնակվում էին ողջ Անդրկովկասով մեկ՝ տարբեր քաղաքական իրավիճակների պայմաններում: Եթե նույնիսկ տեսականորեն նման հնարավորություն կար, չկար այն իրագործելու մշակված ու գործողության մեջ դրված ծրագիր: Մնում էր գործադրել ինքնակազմակերպման հատվածական ջանքեր՝ կորուստներից խուսափելու, ներքին ու արտաքին ուժերին դիմակայելու և անորոշության պայմաններում անկախության երազանքը Արևելյան Հայաստանում իրագործելու համար:

Խոսելով ինքնակազմակերպման հատվածական մարտավարության մասին՝ առաջին հերթին թերևս պետք է անդրադառնալ Բաքվի հայության դիրքորոշմանը: Հայտնի է, որ հայոց այդ հատվածը նպաստեց, որպեսզի տեղում իշխանությունը անցնի սովետների ձեռքը: Հայերը, որ XIX դարի վերջերից սկսած հսկայական հարստության էին տիրացել և տնտեսական ու քաղաքական իրական ուժ էին ներկայացնում, անկասկած գիտեին, որ խորհրդային կարգերի հաղթանակի դեպքում իրենք պետք է զրկվեն կուտակած հարստություններից: Սակայն նրանք գերադասեցին սատարել սովետներին և պաշտպանել երկրամասը Ռուսաստանի կազմում մնալու գաղափարը, քան թե հանդես գալ Անդրկովկասը Ռուսաստանից բաժանելու օգտին: Բաքվի հայությունը այդ պահին ընտրություն էր կատարում ոչ թե սոցիալիզմի ու կապիտալիզմի, այլ Ռուսաստանի ու ցեղասպան Թուրքիայի միջև:

Այլ իրադրության մեջ էր արցախահայությունը: Արևմտահայոց ցեղաս-

պանությունը, Ռուսական կայսրության փլուզման հետևանքով Անդրկովկասի պետականորեն անտերունչ իրավիճակը, տարածաշրջանին տիրելու Թուրքիայի և խոշոր տերությունների հավակնությունները 1918-1920 թթ. ձևավորեցին այն միջազգային քաղաքական իրավիճակը, որում այդ տարիներին ծավալվեցին իրադարձություններն Արցախի շուրջ: Արցախահայությունից պահանջվում էր ոչ միայն արտաքին ճնշումներին դիմակայելու կամք ու վճռականություն, այլև քաղաքական դիրքորոշումներում ու քայլերում շրջահայացություն, դիվանագիտական հմտություններ: Ցանկացած սայթաքում կարող էր ճակատագրական լինել Արցախի համար: Պետք է ասել, որ մահացու վտանգներով հղի այդ տարիներին արցախահայությունը ներկայացնող ազգային ու քաղաքական գործիչները թե՛ ռազմի դաշտերում, թե՛ դիվանագիտական հարթակներում ուժերի ակնհայտ անհավասարության պայմաններում կարողացան խուսափել կոպիտ սխալներից և Արցախը դուրս բերել նոր երկրաքաղաքական միջավայր: Նրանց գործունեության արդյունքները արձանագրված են հայրենի երկրամասի իրավական կարգավիճակին վերաբերող փաստաթղթերում, որոնց իրավական նշանակությունը դրանց ընդունման պահին կասկածից դուրս էր:

### 3. Արցախը Անդրկովկասի էթնոքաղաքական վերաձևումների համատեքստում

Ռուսական կայսրության փլուզումը Անդրկովկասը նետեց էթնոքաղաքական անկառավարելի կոնֆլիկտների հորձանուտը: Երկրատարածքը ցարական իշխանություններից ժառանգել էր հատուկ դիտավորությամբ պատմական ու ժողովրդագրական իրողություններին հակասող վիճահարույց վարչական սահմաններ: Կայսրության կողմից հրահրված էթնիկական կոնֆլիկտներն ավելի սաստկացան հիմնական ազգային համայնքների ինքնորոշման խորքի վրա: Թվում էր, թե ներքին տարածքային վեճերը պետք է մեղմվեին 1918-ի ապրիլի 22-ին Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության (ԱԴՖՀ) հիմնումով: Սակայն այդ նախագիծը, ինչպես պարզվեց, ավելի շուտ պիտի օրինականացներ Ռուսաստանից երկրատարածքի «պոկումը»: Հակասությունները վրացիների, կովկասյան թաթարների ու հայերի միջև այնքան խորն էին, որ ԱԴՖՀ-ն գոյատևեց ընդամենը 36 օր: Մայիսի 26-ին վրաց մենշևիկները, իսկ 27-ին մուսավաթականները լքեցին դաշնային պետությունը և հայտարարեցին անկախ պետականություն հիմնելու մասին: Կովկասյան թաթարների գլխավոր քաղաքական կուսակցությունը, որ հանդես էր գալիս Անդրկովկասի մահմեդականների անունից, քաղաքական հեռահար նպատակներով սեփականելով Պարսկաստանի հյուսիս-արևմտյան երկրամասի անունը՝ նորահռչակ, բայց դեռ կայացման անորոշության մեջ գտնվող պետությունն անվանեց **Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն (ԱԴՀ)**: Իսկ երբ մայիսի 28-ին անկախության ուղին բռնեց Հայաստանը, տարածաշրջանը մտավ զարգացումների նոր փուլ:

Ինքնահռչակված նորանկախ պետություններից իր ծավալապաշտական նկրտումներով առանձնանում էր ԱԴՀ-ն: 1919-ին Ազգերի լիգային ներկա-

յացված քարտեզում նրա հավակնությունները ձգվում էին Կասպից ծովից մինչև Սև ծով: Հայաստանին «մեծահոգաբար» թողնվում էր Սևանա լճի արևելյան ափից մինչև Էջմիածին ընկած մի կղզյակ՝ ԱԴՀ ներսում տեղակայված առանձնատարածքի ձևով: Առաջին անգամ «լույս աշխարհ եկած» և պանթյուրքական ծրագրերին լծված պետական կազմավորումը գործում էր օսմանյան թուրքերի թելադրանքով: Նրա կողմից պահանջվող տարածքները պատմական իրավունքի փաստարկով կարող էին նորանկախ Վրաստանի կամ Հայաստանի մաս կազմել: Ազգերի լիզա ներկայացրած և վերջինիս կողմից մերժված տարածքային հավակնությունների մեջ մտնում էին հսկայածավալ հայկական տարածքներ՝ ի թիվս որոնց և Արցախը՝ իր գերակշիռ հայ ազգաբնակչությամբ:

Կոնֆլիկտներով ուղեկցվող էթնոքաղաքական այս գործընթացների համարժեք ընթերցման ու գնահատման համար հատուկ կարևորություն է ստանում դրանց սուբյեկտների իրավաքաղաքական կարգավիճակն ու վարքը: **Մեր քննարկման թեման 1918-1920 թթ. արցախահայության իրավական պահվածքն ու Արցախի իրավական կարգավիճակն է՝ տարածաշրջանում ստեղծված և վերը նկարագրված խառն իրադրության մեջ:** Արցախահայության ձեռնարկած քայլերի իրավական գնահատականը, բնական է, պետք է տրվի ծավալապաշտական մարմաջով տարված ԱԴՀ հավակնությունների և գործողությունների իրավական գնահատականի խորքի վրա, քանի որ Արցախի ձեռնարկած քայլերը եղել են այդ նորագոյացության ռազմատենչ գործողությունների ու ապօրինի հավակնությունների պատասխանը:

#### 4. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության հռչակումը միջազգային իրավունքի տեսանկյունից

Անդրկովկասի թուրքերի (կովկասյան թաթարների) կողմից հիմնվող ԱԴՀ-ն տարածաշրջանի քաղաքական քարտեզում նոր անուն էր, ուստի հասկանալի է, որ նրա հիմնադիրների համար մատչելի չէին պատմական իրավունքի այն փաստարկները, որ կային հայերի ու վրացիների համապատասխան փաթեթներում: Անդրկովկասի տարածքների մեծ մասը պատմական անցյալում հայկական ու վրացական պետությունների մաս է կազմել, ինչը ձանաչված է եղել հարևանների կողմից: Մասնավորապես Արցախը եղել է Մեծ Հայքի՝ տարածաշրջանի իր ժամանակի հզոր պետություններից մեկի, տասներորդ նահանգը, իսկ հետագայում մաս է կազմել Հայ Բագրատունիների թագավորության: Վերջապես հայտնի է, որ Արցախի պետական կազմավորումները ողջ միջնադարում ունեցել են անկախ ու կիսաանկախ կարգավիճակ (օրինակ՝ Խաչենի իշխանությունը, Խամսայի մելիքությունները, Ղարաբաղի խանությունը): Կովկասյան թաթարների Մուսավաթ քաղաքական կուսակցությունը, որ ձեռնարկել էր նոր պետություն հիմնելու թուրքական նախագծի իրագործումը, նման փաստարկներ բերել չէր կարող: Հանրապետությունը պետք է ասպարեզ իջներ ու կայանար **ինքնորոշման առաջնային ակտով**, և միջազգային իրավունքի տեսանկյունից միայն այդպիսի ակտը կարող էր լինել նոր պետություն ստեղծելու



իրավական հիմքը: Դա էր նոր պետություն հիմնելու օրինական ուղին:

Սակայն օսմանյան թուրքերի ծավալապաշտական նախագծերին լծված և նրանց թելադրանքով գործող կովկասյան թաթարների մտքով անգամ այդ բանը չէր անցնում: Ո՛չ պատմական և ո՛չ էլ իրավական բնույթի որևէ հիմնավորում առաջին անգամ հռչակված պետական նորագոյացությունը իր հիմքերում չուներ և ունենալ չէր կարող, քանի որ հիմնվել էր այլ երկրի ռազմական միջամտության և այդ երկրամասի տերերից մեկի՝ Արևելյան Անդրկովկասի հայության զանգվածային ջարդերի միջոցով: 1918-1920 թթ. Արցախը ստիպված էր գործել ու դիմակալել ապօրինի, իրավական որևէ հիմքից զուրկ, բայց և ագրեսիվ վարք դրսևորող պետական մի նորագոյացության նկրտումների պայմաններում: Իրավունքի տեսանկյունից ինչպիսին պետք է լինեին արցախահայության ձեռնարկած քայլերը, որ դրանք համահունչ լինեին նոր ձևավորվող միջազգային իրավունքի այն սկզբունքների, որ որդեգրել էր Ազգերի լիգան և հետագայում նաև ՄԱԿ-ը: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից եռանդագին առաջ մղվող ժողովուրդների ազատ ինքնորոշման գաղափարը այդ ժամանակ արդեն շրջանառվում էր որպես էթնոքաղաքական կոնֆլիկտների հանգուցալուծման իրավական գործիք, որ պատմական իրավունքի հետ մեկտեղ կարող էր իրական հիմք դառնալ նաև հայերի ու կովկասյան թաթարների միջև առկա տարածքային վեճերի կարգավորման համար:

## 5. Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները որպես իրավունքի տեսանկյունից ողջ տարածաշրջանում բացառիկ երևույթ

Հայ պատմագիտությունը սովորաբար արձանագրում է այն փաստը, որ 1918 թ. հունիսի 22-26-ին Շուշիում տեղի է ունեցել Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների (ԱԱԼՆ) առաջին համագումարը, որը Լեռնային Ղարաբաղը հռչակել է Հայաստանի Հանրապետության անկախ տեղի մաս: Պատմագիտությունը վկայում է նաև, որ «համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ղարաբաղի հայոց Ազգային Խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած Ղարաբաղի ժողովրդական կառավարություն»<sup>1</sup>: Առաջին համագումարին հաջորդել է ևս ինը համագումար: 1920 թ. մայիսի 28-ին Լեռնային Ղարաբաղի Թաղավարոց գյուղում տեղի է ունեցել վերջինը՝ տասներորդ համագումարը, որը, որպես արցախահայության բարձրագույն իշխանություն, հայտարարել է երկրամասի խորհրդայնացման մասին: Արձանագրելով այս փաստերը՝ հայ պատմագիտությունը անդրադառնում է Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարներին որպես զուտ պատմական փաստերի, որպես արցախահայության կողմից ձեռնարկված ինքնին հասկանալի միջոցառումների, որոնց գլխավոր իմաստը կովկասյան թաթարների ծավալապաշտական նկրտումներին դիմադրելն էր: Ստվերում է մնում ողջ տարածաշրջանի (և ոչ միայն տարածաշրջանի) համար այն իրավաքաղաքական նշանակությունը, որ ունեցել են 1918-1920 թթ. արցա-

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

<sup>1</sup> Տե՛ս Արբահանյան Հրանտ, Արցախյան գոյամարտ, Եր., 1991, էջ 7:

խահայության համագումարները:

**Իրականում որպես տարածաշրջանի և հայոց քաղաքական պատմության կարևոր փաստ պետք է արձանագրվի հետևյալը. ԱՄՆ համագումարները նոր իրավական ու քաղաքակրթական երևույթ են նշանավորել 1918–1920 թթ. զարգացումներում՝ գործողության մեջ դնելով ազգերի հավասարության, նրանց ազատ ինքնորոշման այն իմաստներն ու լիցքերը, որ հետագայում ամրագրվեցին ՄԱԿ-ի կանոնադրության մեջ որպես ազգային հարաբերություններում ժողովրդավարության գաղափարի մարմնավորում: Արցախն իր այդ քաղաքական վարքով առանձնանում է տարածաշրջանում գործոն հանդիսացող բոլոր սուբյեկտներից:**

Իհարկե, կարելի է պնդել, որ անդրկովկասյան նորանկախ պետությունները հռչակվել են 1917 թ. նոյեմբերի 12-ի արդյունքում՝ Համառուսաստանյան սահմանադիր ժողովի պատգամավորների և ազգային-քաղաքական կուսակցությունների առանցքային գործիչների կողմից: Սահմանադիր ժողովի պատգամավորները տեղերում օրինաբար իրենց ընտրողների քվեն ստացած գործիչներ էին: Բայց նրանց խնդիրը հետմիապետական Ռուսաստանի պետական կարգի որոշումը պիտի լիներ, և լիազորված չէին այլ հարցեր լուծելու: Սահմանադիր ժողովի ձայնողումից հետո երկրամաս վերադարձած պատգամավորները տեղի ազգային կուսակցությունների հեղինակավոր գործիչների հետ ստանձնեցին Անդրկովկասում նոր դաշնային պետություն հիմնելու խնդիրը: Ստեղծված խառնակ իրավիճակը միակ մեղմացուցիչ հանգամանքն էր՝ արդարացնելու համար նրանց ձեռնարկած քայլը, որը իրավունքի տեսանկյունից, այնուամենայնիվ, խոցելի էր:

Այլ էր ԱՄՆ համագումարի՝ որպես օրինական իշխանական հաստատության, դեպքը: ԱՄՆ առաջին համագումարի պատգամավորները ընտրված էին երկրամասի բարձրագույն իշխանական մարմին հիմնելու համար և հենց դրա համար էլ ազգաբնակչության կողմից օժտված էին համապատասխան լիազորություններով<sup>2</sup>: Իրողությունը բացահայտվում է հասարակ համեմատությամբ<sup>3</sup> (մենք խոստացել էինք չանդրադառնալ կովկասյան թաթարների «ինքնորոշման» հարցին, բայց արժե նշել, որ մուսավաթականները, որ հանդես էին գալիս տարածաշրջանի մուսուլմանների անունից, նման լիազորություն չէին ստացել Արևելյան Անդրկովկասի իսլամադավան ժողովուրդների կողմից):

Ակնհայտ է, որ ժողովրդավարության, արդարության, ազգերի հավասարության և համանման բոլոր հիմնարար սկզբունքների տեսանկյունից Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարներն առանձնանում էին իրենց իրավազորության առումով: Արցախի գյուղերն իրենց ընտրած պատգամավորներով ներկայացված էին համագումարներում՝ արտահայտելու համար բնակչության դիրքորոշումները և միաժամա-

2 Կովկասյան թաթարների դեպքում մենք չենք տանի այդպիսի զուգահեռներ դրանց բացակայության պատճառով: Նրանց ի վերջո իշխանության են բերել թուրքական զորքերը՝ անիմաստ դարձնելով իրավունքի և ժողովրդավարության տեսակետից նրանց իրավական գոյության դիտարկումը:

3 Թե՛ Վրաց ազգային խորհուրդը, թե՛ Հայոց ազգային խորհուրդը ձևավորվել էին որպես միջկուսակցական մարմիններ: Առաջինը 1917 թվականի նոյեմբերի 20-ին, իսկ երկրորդը՝ նույն թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 13-ը՝ Թիֆլիսում տեղի ունեցած Համախորհրդակցությունում:

նակ ներկայացնելու համար բնակավայրի շահերը երկրամասի բարձրագույն մարմնում: Ժողովուրդն ինքն է իր ընտրած պատգամավորին օժտել իր անունից որոշումներ ընդունելու լիազորություններով: ԱԱԼՆ համագումարները որպես քաղաքական երևույթ կանխանշում էին ազգամիջյան հարաբերությունների կարգավորման՝ պատմական արդարության ու ժողովրդավարության XX դարի իդեալներին հարիր ուղիները: Ներազգային քաղաքական զարգացումների տեսակետից ԱԱԼՆ համագումարները իրենցից պատվանենտարիզմի, ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքով երկրամասի բարձրագույն իշխանության ձևավորման օրինակ են հանդիսացել: Բնական է, որ համագումարներում առաջին հերթին քննարկվում էին երկրամասի համար առավել կարևոր հարցերը: Կուսակցական շահերը երկրորդ պլանում էին, չնայած համագումարները իրենց կազմով բազմակուսակցական էին: Միայն բոլշևիկներն էին Ալեքսանդր Ծատուրյանի գլխավորությամբ երբեմն բոյկոտում համագումարների ու նրանց ձևավորած իշխանական կառույցների աշխատանքը:

Պետք է նկատել, որ ԱԱԼՆ համագումարի՝ որպես բարձրագույն իշխանական հաստատության հիմնումի գաղափարը հանպատրաստի առաջադրված գաղափար չէր: Դեպի այդ հանգրվանը տանող ճանապարհին արցախահայությունը հաղթահարել է բազմաթիվ արգելքներ, իրագործել ինքնավար իշխանության հաստատման միջանկյալ, նախապատրաստական միջոցառումներ, որոնց ընթացքում ազգաբնակչության մեջ և քաղաքական հիմնական ուժերի շարքերում հասունացել է համագումար հրավիրելու հանրային պահանջմունքը: Դրանցից հիշարժան են հետևյալները:

– Դեռևս 1917 թ. դեկտեմբերին, ինչպես հաղորդում է այդ տարիների՝ Արցախի հայտնի քաղաքական գործիչ Հարություն Թումյանը<sup>4</sup>, արցախահայության քաղաքական ուժերի Շուշիում տեղի ունեցած խորհրդաժողովը ձևավորեց «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ», որ հետագայում անվանվեց **Միջկուսակցական բյուրո**: Միջկուսակցական բյուրոն ստանձնեց երկրատարածքի օրենսդիր և գործադիր գործառույթներով օժտված իշխանական մարմնի կարգավիճակ: Ուրեմն արդեն 1917-ի դեկտեմբերին, երբ դեռ ողջ Անդրկովկասում չկար ազգային հիմքի վրա հենված իշխանական կառույց, Արցախում ձևավորվել էր այդպիսին:

– Նույն 1917-ի դեկտեմբերին Արցախի անվտանգության ապահովման և հայրենի երկրամասում պատշաճ ձևով հասարակական կարգի պահպանման նպատակով ստեղծվեց Ռազմական խորհուրդ: Խորհրդը գլխավորում էր Հարություն Թումյանը: Դա մերօրյա իմաստով Արցախի պաշտպանության նախարարությունն էր, որ զբաղվում էր ոչ միայն զենքի հայթայթմամբ, այլև զինագործական ու զենքի նորոգման արհեստանոցների ստեղծմամբ: Ավելին, ստեղծվեցին ոստիկանական ջոկատներ՝ տեղերում հասարակական կարգի պահպանման ու թաթարական ավազակախմբերի ոտնձգությունները կանխելու համար: Հարություն Թումյանի վկայությամբ՝ Ռազմական խորհուրդն իր տրամադրության տակ ուներ ավելի քան քսան հազար մարտիկ<sup>5</sup>:

4 Թումյան Հ., Դեպքեր Լեռնային Ղարաբաղում (1917–1920): Պատմական ակնարկ, Եր., 1996, էջ 9:  
5 Տե՛ս նույն տեղում, էջ 63:

ՎԿՎ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր–դեկտեմբեր, 2018

–1918 թ. հունիսի 17–ին Միջկուսակցական բյուրոն վերակազմավորվեց և անվանվեց «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների կոմիսարների խորհուրդ»։ Այն արցախահայության քաղաքական ինքնակազմակերպման և պետականաշինության նախապարաստական գործունեության հաջորդ քայլն էր։ Ողջ հանրային կյանքը Արցախում գտնվում էր հստակ գործող ինքնակառավարման հունում՝ գյուղացիների միջև ծագած վեճերի, երկրամասի տնտեսական ու մշակութային հարցերի կարգավորման, ռազմական ու պարենային անվտանգության ապահովման ու նոր վարչական միավորների ստեղծման գործընթացում։

–Ինքնավարության հենց այդ ամբողջ փորձը թույլ տվեց անցնել ինքնիշխանության հաստատման նոր, ավելի բարձր կարգի իրավական քայլի՝ Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարների իրավիքմանը։ Առաջին համագումարը տեղի ունեցավ Շուշիում 1918 թ. հուլիսի 22–26–ը։ Այդ պահին ինքնահռչակված Ադրբեջանական Հանրապետությունը դեռ քաղաքական իրողություն չէր դարձել։ Կովկասյան թաթարները ինքնուրույն չէին կարողանում հայտնվել Բաքվում։ Թուրքական բանակը պիտի Բաքուն նրանց տար։

Ասվածը թույլ է տալիս արձանագրել, որ **տարածաշրջանում իշխանական ոչ մի մարմին չի ունեցել լեգիտիմության այնպիսի պաշար, որպիսին ունեցել են Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները։ Դա ժողովրդավարության մարմնավորման քաղաքական բացառիկ երևույթ էր, որ իր նախադեպը չուներ Անդրկովկասի նախընթաց պատմության մեջ։ Այստեղից էլ բխում է իրավական բնույթի հետևյալ կարևոր եզրակացությունը՝ միջազգային իրավունքի ժամանակակից չափանիշներով ԼՂ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները՝ որպես ազգաբնակչության քաղաքական կամքն արտահայտող բարձրագույն իշխանական հաստատություններ, ունեցել են օրինականության ամենաբարձր մակարդակը, և նրանց ընդունած որոշումները եղել են իրավազոր՝ այդ պահանջի ամենախիստ չափանիշների իմաստով։ Վերջապես, ասվածից բխում է երկրորդ կարևոր իրավական բնույթի եզրակացությունը։ ԱԱԼՆ հենց առաջին համագումարի կողմից երկրամասը Հայաստանի Հանրապետության մաս հռչակելու մասին որոշումը եղել է Արցախի ազգաբնակչության ինքնորոշման՝ լեգիտիմության ամենաբարձր բնութագրերով օժտված իրավական ակտը։**

Արտահայտելով Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս կազմելու իր անկոտրում կամքը՝ արցախահայությունը՝ հանձինս իր բարձրագույն իշխանությունների, ստիպված է եղել նաև հոգալ հարագատ երկրամասը օսմանյան ու տեղական թուրքերի (կովկասյան թաթարների) հարձակումներից պաշտպանելու հարցերը։ Դրա համար էլ հենց ԱԱԼՆ առաջին համագումարում Արցախը հայտարարվում է անկախ վարչաքաղաքական միավոր։ Քաղաքական ինքնակազմակերպման մասին այդ որոշումը ընդունվել է այն բանի հստակ գիտակցումով, որ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը բավարար ուժեր չունի Արցախը թուրքական ոտնձգություններից պաշտպանելու համար։ Պետք էր հավաքագրել ներքին

տնտեսական ու հոգևոր բոլոր ուժերը, վերահսկել նյութական պաշարները՝ ինքնապաշտպանական ռազմական գործողություններում դրանք արդյունավետ կերպով գործադրելու համար: Թուրքական ռազմական ու քաղաքական աջակցությունը ստացող ԱԴՀ հարձակումների ու այնպիսի խոշոր տերության ճնշումների պայմաններում, որպիսին Անգլիան էր, արցախահայությանն ի վերջո հաջողվել է փրկել հայրենի երկրամասը: Եվ դրանում վճռորոշ դեր են կատարել ԱԱԼՆ համագումարները՝ որպես քաղաքական ինքնակազմակերպման ու ազգային ուժերի համախմբման ժողովրդավարական հաստատություններ: Պատահական չէ, որ քաղաքական ինքնակազմակերպման հարցերում բարձր չափանիշներով ներկայացող արցախահայության հետ հաշվի են նստել ռազմական միսիայով Բաքու մտածանգլիացիները:

Պետք է ենթադրել, որ հասուն ժողովրդավարության դիրքերից հանդես եկող արցախցիների քաղաքական վարքը խոր տպավորություն է թողել պառլամենտական ժողովրդավարության անգլիական ավանդույթներին քաջատեղյակ գեներալ Թոմսոնի և հետագայում նրան փոխարինած գնդապետ Շատելվորտի վրա: Կատարելով Արցախն Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կազմ մտցնելու՝ տարածաշրջանում նավթային շահեր հետապնդող իրենց պետության առաջադրանքը՝ Թոմսոնը և Շատելվորտը, այնուամենայնիվ, **Արցախ-Ադրբեջան** կոնֆլիկտի կարգավորումը մտցրին բանակցային հուն, և, պետք է ենթադրել, պարտադրեցին մուսավաթական Ադրբեջանի կառավարությանը հաշվի նստել Արցախի իշխանությունների՝ որպես ինքնուրույն քաղաքական սուբյեկտի հետ:

Սակայն ուժերն անհավասար էին: Անգլիացիների կողմից իրագործվող ճնշումների և սպառնալիքների, զենքի ու ռազմաթերքի պակասի պայմաններում արցախահայության յոթերորդ համագումարը որոշեց ադրբեջանական կառավարության հետ կնքել **Ժամանակավոր համաձայնագիր** այն մասին, որ Արցախը մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովը իրեն համարում է ԱԴՀ սահմաններում: 1919 թ. օգոստոսի 26-ին կնքված այդ համաձայնագիրը երկար ժամանակ հանիրավի չի դարձել իրավական վերլուծության փաստաթուղթ: Անշուշտ կարելի է արձանագրել, որ **Ժամանակավոր համաձայնագիրը** իրավական ուժ չի ունեցել կնքման պահից, քանի որ այն ստորագրվել է արցախյան իշխանությունների վրա անգլիացիների կողմից գործադրած ճնշումների պայմաններում: Բայց փաստաթղթի իրավական ու քաղաքական բովանդակությունը դրանով չի սպառվում, և մեր իրավագետների ու քաղաքագետների խնդիրը դրա բացահայտումն է: Մենք այստեղ կարձանագրենք միայն «փաստաթղթի մակերեսին գտնվող» ակնհայտ իրավաքաղաքական մի քանի սկզբունքային փաստեր:

**Առաջին: Ժամանակավոր համաձայնագրի** ստորագրումը բնավ չի ենթադրել, որ արցախահայությունը ի դեմս ԱԱԼՆ յոթերորդ համագումարի՝ համաձայնություն է տալիս Արցախը ԱԴՀ անկապտելի մաս համարելու համար: «Անկապտելի մաս» հասկացությունն ընդհանրապես բացակայում է փաստաթղթում:

**Երկրորդ:** Փաստաթղթի ստորագրումը չի նշանակել **Արցախ-Ադրբեջան** հարաբերության վերջնական լուծում: Ընդհակառակը՝ **Ժամանակավոր հա-**

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԼՎ համահայկական հանդես

**մաձայնագիրը** հարցը տեղափոխել է Առաջին աշխարհամարտի ավարտից հետո տեղի ունենալիք Փարիզի խաղաղության վեհաժողով, և հենց այդ պատճառով էլ այն անվանված է «ժամանակավոր»:

**Երրորդ:** Փաստաթուղթը ստորագրող կողմերը միմյանց ճանաչել են որպես հակամարտության և դրա կարգավորման բանակցային կողմեր: Բայց ավելի կարևոր է, որ **ժամանակավոր համաձայնագրով** ԱԴՀ-ն ըստ էության Արցախը ճանաչել է որպես ինքնորոշման իրավունք ունեցող սուբյեկտ, պետականության ատրիբուտներով օժտված վարչաքաղաքական միավոր:

**Չորրորդ:** ԱԴՀ սահմաններում ժամանակավորապես գտնվելու որոշումը Արցախի իշխանություններին ազատ էր թողնում Բաքվի կողմից Համաձայնագրի խախտման դեպքում այն անվավեր հայտարարելու համար: Իսկ փաստաթուղթը Արցախի նկատմամբ ռազմական գործողությունների վերսկսումը բացառող բավականաչափ հստակ և խիստ պայմաններ էր նախատեսում: Այն իր 9-րդ կետով Ղարաբաղի Ազգային խորհրդի կողմից գեներալ-նահանգապետի վարչակազմի գործունեության վերահսկողության իրավունք էր վերապահում, իսկ 15 և 16 կետերով արգելում էր առանց Ղարաբաղի Ազգային խորհրդի համաձայնության Շուշիում և Խանքեղիում խաղաղ ժամանակի կազմով տեղակայված զինվորական մասերի տեղաշարժ<sup>6</sup>:

**Հինգերորդ:** Եթե նույնիսկ անգլիացիների կողմից իրագործված ճնշումները անտեսվեն, եթե նույնիսկ անտեսվի այն փաստը, որ արտաքին ճնշումների պատճառով փաստաթուղթը իրավունքի տեսակետից առաջին է եղել իր կնքման պահից, ապա անհնար է անտեսել, որ ընդամենը մի քանի ամիս հետո **ժամանակավոր համաձայնագիրը** իր ուժը կորցրել է ի հետևանս մուսավաթական Ադրբեջանի կողմից փաստաթղթում արձանագրված պայմանավորվածությունների խախտման: Ինչպես հայտնի է, 1920 թ. մարտին Շուշիում տեղակայված ԱԴՀ զորամասը հրկիզեց հայկական Շուշին ու հարևան գյուղերը: Իսկ դրանից ընդամենը մեկ ամիս անց Բաքվում խորհրդային իշխանության հաստատումով ԱԴՀ-ն լքեց պատմությունը առանց իրավահաջորդի<sup>7</sup> իր հետ տանելով իր իսկ կողմից խախտված Համաձայնագիրը: Թուրքական բանակի կողմից հիմնված պետական կազմավորման տեղում հայտնվեց Ռուսաստանի XI Կարմիր բանակի կողմից հիմնած Խորհրդային Ադրբեջանը՝ իրավունքի իմաստով նույնքան ապօրինի, որքան ԱԴՀ-ն էր:

Ինչպես ցույց է տալիս հողվածի վերտառության մեջ ձևակերպված թեմայի վերն արված հակիրճ վերլուծությունը, ռազմաքաղաքական գործընթացների հորձանուտում հայտնված արցախահայության ձևավորած իշխանական կառույցներն ու դրանք ներկայանացնող քաղաքական գործիչները 1918–1920 թվականներին արտաքին ճակատում դրսևորել են բարդ իրադրությանը համարժեք քաղաքական հեռատեսություն և դիվանագիտական հմտություններ ու ձկունություն, իսկ ներքին հարցերում՝ ժողովրդավարու-

6 Համաձայնագրի տեքստին ընթերցողը կարող է ծանայանալ Վ. Միքայելյանի խմբագրությամբ 1992 թ. Երևանում լույս տեսած «Нагорный Карабах в 1918–1923 гг.» փաստաթղթերի ժողովածուից, էջ 323–327:

7 Կարևոր է իրավական այն փաստի գիտակցումը, որ ոչ Խորհրդային Ադրբեջանն է եղել ԱԴՀ իրավահաջորդը, ոչ էլ մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունն է հռչակվել որպես Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդ: Իրավահաջորդության այդ խզումները մեր փաստարկների փաթեթում ընդհանրապես բացակայում են:

յան բարձր չափանիշներով հասարակական կյանքի կազմակերպման բացառիկ ունակություններ: Դա վկայվեց նաև Մամնայի ձորում, որտեղ արցախցիները 1918 թ. հոկտեմբերի 18-ին ջարդեցին Շուշիից դեպի Կարյազինո շարժվող թուրքական զորագունդը: Արցախահայության ձեռնարկած քայլերը անբասիր ու անխոցելի էին այդ տարիներին ձևավորվող միջազգային իրավունքի տեսակետից: Եվ դա անհետևանք մնալ չէր կարող: 1921 թվականին Արցախն Ադրբեջանի կազմ մտցնելուն անվերապահորեն տրամադրված բոլշևիկյան Մոսկվան 1918-1920 թթ. իրողությունների հաշվառումով էր, որ ընդունեց երկրամասում որպես խորհրդային պետականության ձև հայկական ինքնավար մարզ հիմնելու որոշումը:

1988 թ. վերսկսված Արցախյան գոյամարտը վերահաստատեց այն կարևորությունը, որ հայոց համար ուներ արցախահայության 1918-1920 թթ. իրավաքաղաքական փորձառությունը: Երբ 1989 թ. ԼՂԻՄ-ում մտցվեց Հատուկ կառավարման համակարգ և կասեցվեց մարզխորհրդի աշխատանքը, հենց 1918-1920 թթ. փորձով 1989 թ. օգոստոսի 16-ին հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար, որն իրեն հայտարարեց մինչ այդ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային Խորհրդի և կուսակցության մարզային կոմիտեի իրավասության տակ գտնվող հարցերի պատասխանատու<sup>8</sup>: Նրա ընդունած որոշումը միջազգային իրավունքի և ԽՍՀՄ Սահմանադրության տեսակետից անխոցելի էր: Մոսկվայի ու Բաքվի բռնություններին հայկական ինքնավար մարզը պատասխանում էր իրավունքի դիրքերից ձեռնարկվող քայլերով: Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և լուծարվող ԽՍՀՄ-ի օրենքների համաձայն է արցախահայությունը հայտարարել իր անկախությունը 1991 թ. սեպտեմբերին և այդ դիրքերից է հանդես գալիս հետխորհրդային իրողությունների պայմաններում: Այսօր Արցախը ոչ միայն ինքորոշման իրավունքի միջազգայնորեն ճանաչված սուբյեկտ է, ինչպիսին եղել է, 1918-1920 թթ., այլ դե ֆակտո կայացած և արդեն պետականության բոլոր ատրիբուտներով օժտված պետություն, որի միջազգային ճանաչման գործընթացը, ճիշտ է, դանդաղ, բայց հաստատուն քայլերով գնում է առաջ:

## Հիմնական եզրակացություններ

**Առաջին:** Տարածաշրջանում իշխանական ոչ մի մարմին 1918-1920 թթ. չի ունեցել լեգիտիմության այնպիսի պաշար, որպիսին ունեցել են Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների (ԱԱԼՆ) համագումարները: Ներքաղաքական իմաստով դա ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքով երկրամասի բարձրագույն իշխանության ձևավորման օրինակ է ներկայացրել: Տարածաշրջանում (և ոչ միայն տարածաշրջանում) դա ժողովուրդների իրավահավասարության, նրանց ազատ ինքնորոշման և ազգային հարաբերություններում ժողովրդավարության գաղափարի մարմնավորման բացառիկ դրսևորում էր, որ իր նախադեպը չունեին Անդրկովկասի նախընթաց պատմության մեջ: Արցախն այդ տեսակետից առանձնանում է Անդրկովկասում գործոն հանդիսացող բոլոր սուբյեկտներից:

8 Տե՛ս **Арутюнян В. Б.**, События в Нагорном Карабахе. Хроника. Ч II. Январь-декабрь 1989. Ереван, 1993.

**Երկրորդ:** ԱԱԼՆ առաջին համագումարի կողմից երկրամասը Հայաստանի Հանրապետության մաս հռչակելու մասին որոշումը եղել է Արցախի ինքնորոշման լեգիտիմության ամենաբարձր բնութագրերով օժտված իրավական ակտ: Ըստ էության՝ 1988-ին ԼՂԻՄ բարձրագույն մարմինը՝ Ժողովրդական պատգամավորների մարզային Խորհուրդը վերահաստատել է (և դարձյալ իրավունքի տեսակետից անխոցելի ձևով) հայրենի երկրամասը հայկական պետության անկապտելի մասը տեսնելու Ղարաբաղի Ժողովրդի 1918-1920 թթ. արտահայտած կամքը:

**Երրորդ:** Թուրքերի, անգլիացիների, իսկ հետագայում նաև ռուսների ներգրավվածությունը 1918-1920 թթ. **Արցախ-Ադրբեջան** հակամարտությունը և խնդրի արծարծումը Ազգերի լիգայում, հաստատումն է այն բանի, որ այդ հակամարտությունը ընդունել էր միջազգային հակամարտության բնույթ:

**Չորրորդ:** Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կողմից ԱԱԼՆ համագումարների ու նրանց ձևավորած գործադիր մարմինների հետ բանակցությունների մեջ մտնելն ու նրանց հետ Ժամակավոր համաձայնագրի կնքումը հաստատումն է այն բանի, որ հենց Բաքվի կողմից Արցախը ճանաչվել է որպես հակամարտության կարգավորման բանակցային կողմ և ինքնորոշման իրավունքով օժտված սուբյեկտ:

**Հինգերորդ:** Արցախի օրինաբար ձևավորված իշխանությունների կողմից հայրենի երկրամասի ներքին կյանքի կառավարման, արտաքին հարաբերություններում արցախահայությունը ներկայացնելու և ներքին ու արտաքին կյանքին վերաբերվող հարցերում ինքնուրույն որոշումներ կայացնելու փաստերը վկայում են, որ Արցախը 1918-1920 թթ. ունեցել է դե ֆակտո կայացած պետական կազմավորման կարգավիճակ և եղել է ինքնիշխանության հիմնական ստրիբուտներով օժտված վարչաքաղաքական միավոր:

**Ալեքսանդր Ս. Մանասյան** – աշխատանքները վերաբերվում են իմացության տեսության, գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության հիմնախնդիրներին: Գլխավոր իմաստասիրական աշխատությունն է «Գիտական գիտելիքի օբյեկտիվության մեթոդաբանական սկզբունքները և գիտության միասնությունը» (ռուսերեն, Երևան, 1985 թ., վերահրատարակվել է 2002 թ.): 1990-ական թվականներից ուսումնասիրում է Ղարաբաղյան հիմնախնդրի պատմա-քաղաքական, իրավական ու մշակութային-քաղաքակրթական տեսանկյունները: Այդ թեմայով գրված հարյուրից ավելի հոդվածների ու մի քանի գրքերի հեղինակ է, որ հրատարակվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, պարսկերեն լեզուներով:



## Summary

### ARTSAKH'S LEGAL STATUS IN 1918–1920

Aleksandr S. Manasyan  
*Doctor of philosophy*

**Key words** – Congresses of the authorized representatives of the population of Artsakh, Artsakh as a recognized subject of self-determination, the act of self-determination of Artsakh in 1918, the problem of the legitimacy of the establishment of the Azerbaijan Democratic Republic, Interim agreement.

Not a single power institution in the Transcaucasian in 1918–1920 did have such a resource of legitimacy as the Congress of authorized representatives of the population of Artsakh had. In domestic politics they presented an example of the formation of political power according to the principle of representative democracy. In international terms Artsakh set an example of the implementation of the idea of equal rights of peoples based on the principle of free self-determination. The decision taken by the Perm Congress of Plenipotentiaries of the population of Artsakh on declaring Artsakh an integral part of the Republic of Armenia was a legitimate act of self-determination in the modern sense of this principle of international law.

## Резюме

### ПРАВОВОЙ СТАТУС АРЦАХА В 1918–1920 ГГ.

Александр С. Манасян  
*Доктор философ. наук*

**Ключевые слова** – съезды полномочных представителей населения Арцаха, Арцах как признанный субъект самоопределения, Акт самоопределения Арцаха в 1918 г., проблема легитимности основания Азербайджанской Демократической Республики, временное соглашение.

Ни один облеченный властью институт в Закавказье в 1918–1920 гг. не имел такого ресурса легитимности, какой имели съезды полномочных представителей населения Арцаха. Во внутривластной жизни они олицетворяли пример формирования политической власти по принципу представительной демократии. В международном плане Арцах подал пример реализации идеи равноправия народов на основе принципа свободного самоопределения. Решение, принятое Первым съездом полномочных представителей населения Арцаха о декларировании Арцаха неотъемлемой

Ժ (ԺԶ) քառր. թիվ 4 (64), հոկտեմբեր–դեկտեմբեր, 2018

ՀՀ Կառավարության հանրապետական համայնքի տնօրեն

частью Республики Армения, было легитимным актом о самоопределении в современном смысле этого принципа международного права.

#### REFERENCES

1. **Hrant Abrahamyan**. Artsakhyan goyamart. Yerevan, 1991.
2. **Avtabdil Mentetashvili**. Iz istorii vzaimootnosheniy Gruzinskoj demokraticeskoj respubliki s Sowetskoj Rossiey I Antantoy. <http://sisauri.tripod.com/politic/chapter2.html>
3. **Mikaelyan V.** Nagornyj Karabakh v 1918-1923 gg. Yerevan, 1992.
4. **Arutyunyan V. B.** Sobitiya v Nagornom Karabakhe. Khronika, Sh. II. Yerevan, 1993.

# ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժ (ԺԶ) փաթի, թիվ 4 (64), Խոկարներ-դեկտեմբեր, 2018

ՎԼՎ համահայկական հանդես



Կարեն Պ. Հայրապետյան  
*Պարմ. գիյր. թեկնածու*

## ՀԱՏՎԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Բանալի բառեր** – հատվածականություն, արևմտահայեր, արևելահայեր, հատվածական գործելակերպ, Արևմտահայ 1-ին համագումար, Հայաստանի Հանրապետություն, Արևմտահայ 2-րդ համագումար, Միացյալ Հայաստան:

### Մուտք

**Հայոց պատմության դասերի ուսումնասիրության արդյունքում ակներև է դառնում այն իրողությունը, որ հայ ժողովրդի ազգային-քաղաքական նպատակների և իդեալների իրագործումը մեծապես դժվարացել, իսկ հաճախ էլ՝ պարզապես անհնար է դարձել առանց համազգային համերաշխության և միասնության ապահովման:**

20-րդ դարասկզբին հայ ժողովրդի երկու խոշոր՝ արևմտահայ և արևելահայ հատվածների միասնության ապահովման խնդրի չլուծված լինելու փաստն իբրև դարերով մեզ միմյանցից բաժանող հատվածականության համախտանիշի դրսևորում, մեծ ազդեցություն է ունեցել 1917-1918 թթ. Հարավային Կովկասում ծավալված հասարակական-քաղաքական գործընթացների, ու մանավանդ՝ Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) ներքին կյանքի և արտաքին քաղաքականության վրա: Ուստի՝ հատվածականության համախտանիշի և դրա հաղթահարման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության իշխանությունների ձեռնարկած քայլերի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի նշված ժամանակաշրջանի քաղաքական գործընթացների լուսաբանման համար:

Հատվածականության առաջացումը պայմանավորված է հայ ժողովրդի երկու հատվածների բաժանված լինելու իրողությամբ: Հայտնի է, որ 16-րդ դարի երկրորդ կեսից Հայաստանը բաժանվել է երկու տերությունների՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև և պատմական ճակատագրի բերումով հայ ժողովուրդը նույնպես բաժանվել է երկու խոշոր՝ արևմտահայ և արևելահայ հատվածների: 19-րդ դարի առաջին երեսուն տարիներին տեղի ունեցած երկուական ռուս-պարսկական ու ռուս-թուր-

քական պատերազմների արդյունքում Արևելյան Հայաստանն ընկել է Ռուսական կայսրության տիրապետության տակ: Արդյունքում՝ հայ ժողովրդի արևելյան հատվածը տրոհվել է ռուսահայ և պարսկահայ մասերի: 16-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դարի սկիզբն ընկած երկար ու ձիգ տարիների ընթացքում հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածներում առաջացել են էթնոսոցիալական, մշակութային, լեզվական և կենցաղային որոշակի տարբերություններ: Վերջիններս վերածվել են օբյեկտիվորեն գոյություն ունեցող և խոր արմատներ ձգած ազգագրական առանձնահատկությունների, որոնք ձեռք են բերել հատվածական բնույթ: Ժամանակակից հայ ազգի ձևավորման և ազգային-ազատագրական պայքարի վերելքի արդյունքում մեզանում սկիզբ է առել այս երևույթի հաղթահարման գործընթացը, ինչը, սակայն, բխվել է 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին օբյեկտիվորեն գոյություն ունեցող արգելքներին ու խոչընդոտներին:

Հայ ժողովրդի երկու հատվածների գոյության օբյեկտիվ իրողությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ հայ ազգային-քաղաքական կուսակցությունները հաճախ արևմտահայ և արևելահայ հատվածների համար առանձնացրել են իրարից տարբեր քաղաքական նպատակներ: Հայ ազգային-քաղաքական ուժերի նման դիրքորոշումն առաջին հերթին թելադրված էր տարբեր պետությունների կազմում գտնվող երկու հատվածների կյանքի առանձնահատկությունները հաշվի առնելու ցանկությամբ: Բնական է, որ այդ պետությունների ներքաղաքական կյանքի, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների էական տարբերությունները, ինչպես նաև նրանց աշխարհաքաղաքական տարբեր կարգավիճակները հանգեցրել են նման մոտեցումների առաջացմանը:

Հատվածականությունը՝ որպես օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթի քաղաքականացման արդյունք, ծագել է այն իրողությունից, որ հայ ժողովրդի յուրաքանչյուր հատվածի կողմից կարևորվել է իր առանձին քաղաքական նպատակը, ուստի մի հատվածի շահերը վեր են դասվել մյուսի նկատմամբ: Առաջնահերթությունը վերապահելով իրենց հատվածական խնդիրների լուծմանը, հայ ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների մի մասը հաճախ որդեգրել է նաև հատվածական, այսինքն մեկը մյուսից տարանջատ գործելակերպ:

## 1. Հատվածականությունը որպես ազգային-քաղաքական երևույթ

Հայ ժողովրդի երկու հատվածների միջև ազգագրական տարբերությունները և առանձնահատկությունները օրինաչափորեն հանգեցրել են որոշակի երկփեղկվածության ու տարանջատվածության առաջացմանը, ինչը իր արտահայտությունն է գտել նաև երկու հատվածների հանրային գիտակցության մեջ: Վերջիններս նույնպես երբեմն իրարից տարբերվել են՝ հստակ ձեռք բերելով հատվածական բնույթ: Այսպես, ազգային-քաղաքական մակարդակում այն վառ կերպով դրսևորվել է Հայաստանի՝ որպես իրենց հայրենի երկրի մասին պատկերացումների մեջ: Արևմտահայ և ար-

Ժ (ԺԶ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎՎ համահայկական հանդես

ևելահայ հատվածների կողմից Հայաստանը հաճախ ընկալվել է տարբերակված, տարանջատ ձևերով: «Թրքահայոց համար,- գրել է Ա. Չելեպյանը,- Երեւանի Նահանգը, որ 1828-էն ի վեր Ռուսմանֆներու կայսրութեան մաս կը կազմէր, Հայաստան նոյնիսկ չէր. այդ իսկ պատճառով զայն կը կոչէին «Երեւանյան» կամ «Արարատեան» հանրապետութիւն: Բուն Հայաստանը արևմուտքի մէջ էր, Տարօնի և Վասպուրականի կողմերը»<sup>1</sup>: Մ. Տեր-Մինասյանը (Ռուբեն) վկայաբերել է «թրքահայ Ազգային Խորհրդի եւ Հայրենակցական Միութեանց այն գաղափարը՝ որ ներկայ Հայաստանը իրենց խորթ միայն «Արարատեան Հանրապետութիւն» մըն է»<sup>2</sup>:

Արևմտահայերի կողմից Հայաստանի Հանրապետությունը դիտվել է սուկ որպես «Արարատեան» կամ «Երևանեան» հանրապետություն: Այդ պատճառով Մինոն Վրացյանի վկայությամբ՝ «Հայաստանի Հանրապետություն» խոսքն էլ ընդունելի չէր շատերի համար՝ եղածը սուկ «Արարատյան Հանրապետություն էր»<sup>3</sup>: Ա. Ջամալյանը նույնպես վկայաբերել է, որ արևմտահայն «էլ մի առանձին տեսակի վերաբերմունք ունէր դէպի մեր պետականութեան օրրանը հանդիսացող երկիրը: Նրա համար Ռուսահայաստան բառը իսկական իմաստով Հայաստան չէր հանդիսանում, այլ մի վայր, որտեղ ինքը ժամանակաւորապէս ապաստանել էր, որպէսզի հէնց որ **երկրի** դռները բացուին՝ վերադառնայ այնտեղ եւ Հայաստանը ստեղծի»<sup>4</sup>: Նման մոտեցումը բնորոշ էր նաև ռուսահայերին: «Մենք ռուսահայերս,- գրել է հայ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը,- սովորաբար Հայաստան անվանել ենք Տաճկահայաստանին: Նույնիսկ Արարատյան կամ Շիրակի դաշտից Տաճկահայաստան գնացողն էլ ասում է՝ Հայաստան եմ գնում: Էլ չեմ քննում, թե ինչ է սրա պատճառը, բայց էսպես է»<sup>5</sup>:

Երկփեղկված հատվածական գիտակցության վառ օրինակ է հանդիսացել նաև Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության նկատմամբ արևմտահայ և արևելահայ հատվածների վերաբերմունքը: Մ. Տեր-Մինասյանը (Ռուբեն) գրել է, որ «տաճկահայը, գլուխ ունենալով գլխաւորապէս Վանի և Պիթլիսի վիլայէթների ժողովուրդը, այն գիտակցութիւնն ունէր, որ ձեռք բերուած ազատութիւնն ու անկախութիւնը իւր արիւնի գնով եւ իւր աշխատանքով է վաստակուած. նա նախանձով կը դիտէր, որ Նոր-Բայազէտի կամ Շիրակի ժողովուրդը, որի մէջ դեռ ազատութեան և անկախութեան գաղափարները չէին ամրապնդուած, ապահով եւ ազատ է ու կը գտնուի իւր հայրենի օջախում, իսկ ինքը թափառական եւ արհամարուած գաղթական կը համարուի»<sup>6</sup>: Արևելահայերի մի զգալի մասի համար էլ անկախ Հայաստանի գոյությունն անհասկանալի է եղել, իսկ անկախությունը անբովանդակ մի խոսք: Գ. Չալխուշյանն իրավամբ նշել է, որ հանրապետության գոյության առաջին ամիսներին Հայաստանում ոչ ոք չէր հավատացել, թե անկախությունը մնայուն է, և վերջինիս գոյությունը ժամանակի

1 **Չելեպյան Ա.**, Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Եր., «Արևիկ», 1990, էջ 501:

2 Տես **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Եր., «Ադանա», 1990, էջ 151:

3 **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 269:

4 «Հայրենիք», Պոսթըն, յունիս, 1924 թ., էջ 70:

5 **Թումանյան Հ.**, Երկերի ժողովածու, հատ. 4, Եր, 1951, էջ 396:

6 **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, էջ 150:

հարց էր թվացել<sup>7</sup>: Նույնիսկ Հայաստանի խորհրդում հնչել են անկախությանը դեմ ելույթներ և պահանջել «վերականգնել միությունը Ռուսաստանի հետ»<sup>8</sup>: «Ռուսահայ հատուածը իր խոշոր մեծամասնութեամբ անտարբեր, արհամարական կամ բացասական վերաբերում ունէր դէպի մեր անկախ պետական կեանքը: Ռուսահայ գիւղացին եւ քաղքենի մանր բուրժուան, որոնք վերջին տարիների վերիվայրումներից շատ էին տուժել եւ տնտեսապէս ծանր վիճակի մէջ էին գտնուում՝ երազում էին Ռուսաստանի վերադարձի մասին, որ իր հետ պիտի բերէր աժան հաց, շաքար, կերպասեղէն եւ կյանքը նորից դարձնէր այնքան դիրաւի, ինչպէս առաջ...»<sup>9</sup> - գրել է Ա. Զամալյանը: Ռուբենը նույնպէս վկայել է, որ «թէեւ 1918ից Երեւանեան Հանրապետութիւնը անկախ էր, թէեւ 1919ից Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարն էր առաջադրուած, բայց փաստօրէն ռուսահայ ժողովուրդի մի խոշոր մասի համար դրանք անհասկանալի եւ անբովանդակ խօսքեր էին միայն. նոյնիսկ պետական հիմնարկութեանց եւ շատ պատասխանատու անձանց համար, ձեռք բերուած անկախութիւնը կը համարուէր ժամանակաւոր մի երեւոյթ, Հայաստան երկիրը կը համարուէր ռուսական մի երկրամաս եւ հայ զօրքը նոյնիսկ ռուսական զօրքի մի մասը»<sup>10</sup>:

Էթնոսոցիալական առանձնահատկությունը դրսևորվել նաև հայ ժողովրդի երկու խոշոր հատվածների ավելի մանր խմբավորումների բաժանվածության հանգամանքով: «Իւրաքանչիւր հատուած իր ներսում ունէր գանազան տեղացիական խմբաւորումներ, որոնցից ամէն մէկը բոլոր խնդիրները դիտում էր իր առանձին շահերի անկիւնագծով եւ շարունակ իր ուրոյն տրամադրութիւնները մղում առաջին գծի վրայ,- գրել է Ա. Զամալյանը,- Այս բոլոր Երեւանցիները, Վանեցիները, Սասունցիները, Ղարաբաղցիները, Շատախցիները, Նուխեցիները, Արէշցիները են. Մի այնպիսի սումբուր էին առաջացնում մեր պետական-հասարակական գործերում, որ դժուար է նոյնիսկ պատկերացնել»<sup>11</sup>: Նման վերաբերմունքի հետաքրքիր օրինակ է հանդիսացել սասունցիների կեցվածքը Հայաստանի Առաջին Հանրապետությունում: «Սասունցիք մի ուրոյն աշիրէթի պէս ապրում էին իրենց համար,- գրել է Ա. Զամալյանը,- չէին թոյլ տալիս, որ որեւէ մէկը իրենց ներքին գործերին միջամտի, ինչպէս որ իրենք էլ չէին միջամտում ուրիշի գործերին, եւ կառավարական ոչ մի կարգադրութիւն իրենց համար պարտադիր չէին համարում, մինչեւ որ այդ կարգադրութիւնը չգար իրենց աչքում աշիրապետի հանգամանք առած «Ռուբէն փաշայի»<sup>12</sup> անունով»<sup>13</sup>:

Նշված ժամանակաշրջանում հասարակական-քաղաքական օրակարգից փաստացի հանվել են նախորդ ժամանակահատվածում երկուստեք համազգային համարվող ազգային-քաղաքական նպատակները: Ազգային-քաղաքական ընդհանուր նպատակները երկու հատվածների միասնական ուժերով լուծումներ տալու փոխարեն՝ դրանք թողնվել են հատվածներից մեկի ուսերին, կամ ժամանակավորապես առկախվել են: Օրինակ՝ Արևմտ-

7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Բ-4033, ց. 6, գ. 293, թ. 26:  
 8 ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 7, թ. 80:  
 9 «Հայրենիք», Պոսթըն, յունիս, 1924 թ., էջ 69:  
 10 **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, էջ150:  
 11 «Հայրենիք», Պոսթըն, յունիս, 1924, էջ 70:  
 12 Խոսքը Մ. Տեր-Մինասյանի (Ռուբենի) մասին է:  
 13 «Հայրենիք», Պոսթըն, յունիս, 1924, էջ 70:

յան Հայաստանի գրավված տարածքների վերաբնակեցման և այնտեղ բնականոն կյանքի ապահովման գործը 1917 թ., փաստացի, մնացել էր արևմտահայ հատվածի ուսերին: Իսկ երկուստեք համազգային համարվող Հայկական հարցի հետ կապված խնդիրների՝ երկու հատվածների միասնական ուժերով լուծումները մինչև Առաջին աշխարհամարտի ավարտն առկախվել են:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունում հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների հասարակական գիտակցության մեջ խոր արմատներ էր ձգել «անվտանգությունն ու սառնությունը», ինչն անդրադարձել է «թէ՛ երկու հատուածների փոխհարաբերութեանց, թէ՛ պետական կեանքի և թէ՛ կուսակցական կառուցուածքի ու կեանքի վրայ»<sup>14</sup>: Արդյունքում՝ «տաճկահայ և ռուսահայ խորթ կը զգային իրարու, եւ շատ վայրերում, շատ անգամներ անպատեհութիւններ և ցավալի դէպքեր տեղի կ'ունենային»<sup>15</sup>: Ռուբենը մատնանշելով «տաճկահայերի եւ ռուսահայերի միջեւ» առկա «հակոտնեայ» տրամադրությունները՝ արևելահայ և արևմտահայ հատվածների փոխհարաբերությունների մասին գրել է. «Եթէ չստենք թշնամական, պիտի ասել անվտանգութիւն կար հայ ժողովրդի այդ երկու հատուածների միջեւ»<sup>16</sup>: Նշված վերաբերմունքն առաջին հերթին դրսևորվել է կենցաղում: Սակայն այն գոյություն է ունեցել ոչ միայն կենցաղում, այլ նաև հասարակական-քաղաքական փոխհարաբերություններում:

Համազգային կամ առանձին-հատվածական նպատակների ընտրության խնդիրը նույնպես առաջ է բերել միջհատվածական հակասություններ: Յուրաքանչյուր հատվածի ազգային-քաղաքական ղեկավար շրջանակները հաճախ միակ ընդունելի և արդարացված են համարել իրենց մոտեցումներն այդ ուղիների ընտրության հարցում: Այստեղից էլ առաջ են եկել ազգային-քաղաքական միասնությունը խաթարող անհամաձայնություններ և դրան հետևող հակասություններ: Միջհատվածական հարաբերություններում այս ամենը հանգեցրել է փոխադարձ անվտանգության մթնոլորտի, միմյանց նկատմամբ անբարյացակամ վերաբերմունքի, անտարբերության, խորթության և սառնության զգացողության ձևավորմանը: Վերջիններս իրենց հերթին առաջ են բերել միմյանց հանդեպ անհանդուրժողական, որոշ դեպքերում նաև թշնամական վերաբերմունք՝ իր անպատեհ դրսևորումներով: Նմանօրինակ հասարակական-քաղաքական զարգացումների պայմաններում ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ հատվածների ղեկավար շրջանակները դիմել են նաև տարանջատ, հատվածական գործելակերպի:

Արևմտահայ և արևելահայ հատվածների հասարակական-քաղաքական փոխհարաբերություններում հատվածականությունը՝ որպես ազգային-քաղաքական առանձնահատուկ երևույթ, հայ իրականության մեջ առավել ցցուն հանդես է եկել 1917 թվականից: Դա պայմանավորվել է մի քանի հանգամանքներով: Առաջինն այն էր, որ 1915 թ. Մեծ եղեռնը վերապրած հայ ժողովրդի արևմտահայ հատվածի մի ստվար մասը՝ մոտ 300 հազար մարդ<sup>17</sup>, փախստականի կարգավիճակով ապաստանել էր Հարավային և

14 Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ 150:

15 Նույն տեղում:

16 Նույն տեղում, էջ 149:

17 Տե՛ս Հայոց պատմություն, հատ. 3, գիրք 2, եր., 2015, էջ 539:



Հյուսիսային Կովկասում: Պատմական այդպիսի զարգացումների արդյունքում հայ ժողովրդի երկու՝ արևմտահայ և արևելահայ հատվածների ներկայացուցիչները փաստացի դարձել էին պետական սահմաններով իրարից չտարանջատված անմիջական հարևաններ՝ ունենալով ամենօրյա շփումներ կենցաղում: Եվ հենց կենցաղային մակարդակի միջհատվածական փոխհարաբերություններում է առաջին հերթին դրսևորվել հատվածականությունը:

Արևելահայերի հիմնական մասի համար տեղահանված ու թափառական արևմտահայ փախստականը միայն «գաղթական» է հանդիսացել, ով «այդ վիրաւորական կոչումին կ'ենթարկուէր յաճախ, իր արեւելահայ դրացիէն կամ տանտիրուհիէն»<sup>18</sup>: «Գաղթական» բառը տեսակ մը վիրաւորական պիտակ դարձած էր թրքահայերու հասցէին ուղղուած, եւ անկէ խորշողները կ'ըլլային առաւելաբար թրքահայ կիները, որոնք ռուսահայերու հետ յաճախ նոյն բակին մէջ բնակութիւն հաստատած ըլլալով, ենթակայ կ'ըլլային այդ կշտամբանքին, երբ որ վէճ ու վիճաբանութիւն ծագէր երկու դրացիներուն միջեւ,- գրել է Ա. Չելեայանը,- Նեղը մնացած պարագային, ռուսահայ կիներ «գաղթական» պոռայով կը սկսէր իր անուանարկումներու եւ լուտանքներու շարանը, յայտնաբերելով իր գերակայութեան զգացումն ու յողորտանքը թրքահայ աղէտեալին հանդէպ»<sup>19</sup>: Մեծաթիվ արևմտահայ փախստականների առկայությունը տեղացի արևելահայ ազգաբնակչության համար մեծ փորձություն է հանդիսացել: Նրանց զգալի մասը պարտադրված գնալով գոհողությունների՝ ենթարկվել է որոշակի զրկանքների՝ արդյունքում կրելով էական տնտեսական կորուստներ: «Պիտի նկատել որ ռուսահայ մասան տաճկահայերին կը համարէր եկուոր, գաղթական,- գրել է Մ. Տեր-Միսնասայանը, -Նա կը կարծէր թէ այդ մասսան՝ մոտ 200, 000՝ միայն հիւր է իրենց երկրում: Մի քանի վայրերում տաճկահայութիւնը բեռ կը համարուէր իրենց համար: Այդ հոգեբանութիւնը աննշմար չէր մնում տաճկահայերից, որոնց ինքնասիրութիւնը կը վիրավորվէր»<sup>20</sup>: Նման վերաբերմունքի մասին է գրել նաև Ա. Օզանյանը (Անդրանիկ), նշելով, որ պատերազմի ողջ ընթացքում ոչ մի ձնշումների չենթարկված Սյունիքի տեղական ազգաբնակչությունը սարսափահար և սովահար արևմտահայ փախստականների նկատմամբ դրսևորել է սառը, անտարբեր, իսկ ժամանակ առ ժամանակ նույնիսկ թշնամական վերաբերմունք<sup>21</sup>:

Նշված ժամանակաշրջանում հայ ժողովրդի երկու՝ արևմտահայ և արևելահայ հատվածների ազգային-քաղաքական ուժերն իրենց գործունեությունը ծավալել են մեկ ընդհանուր հասարակական-քաղաքական դաշտում: Հասարակական-քաղաքական ոլորտում այդպիսի ընդհանուր դաշտի առկայությունը, ըստ էության, առաջ է բերել արևմտահայ և արևելահայ հատվածների միջև միջհատվածական անմիջական փոխհարաբերություններ: Վերջինս ենթադրել է իրենց հատվածի հետ առնչվող այս կամ այն ներքին և արտաքին քաղաքական իրադարձությունների նկատմամբ միաս-

18 Չելեայան Ա., Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, էջ 377:

19 Տես նույն տեղում:

20 Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ 149-150:

21 Տես Андраник Озанян, Документы и материалы, «Вестник архивов Армении», Ер., 1991, NN 1(89)-2(90), аіе. N 155, с. 314-315.

նական քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացների իրականացում՝ ինչն անհնար է եղել առանց ներհատվածական և միջհատվածական հանրային քննարկումների: Այդ ընթացքում արևմտահայ և արևելահայ հատվածների ղեկավար շրջանակների փոխհարաբերություններում, բնականաբար, ի հայտ են եկել որոշակի անհամաձայնություններ, որոնք առանձին դեպքերում վերաճել են միջհատվածական հակասությունների և միմյանց նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի:

1918 թ. մայիսից սկսած, արևմտահայ փախստականների մի մասը, իրենց կամքից անկախ, հայտնվել էին նորաստեղծ Հայաստանի Հանրապետության սահմաններում: Եթե նախորդ ժամանակահատվածում արևելահայ և արևմտահայ հատվածները լոկ հարևաններ էին օտար պետությունների կազմում, ապա հիմա նրանք պետք է գոյատևեին Հայաստանի նորաստեղծ հանրապետության մեջ, որը ձևավորվել էր Արևելյան Հայաստանի մի փոքրիկ մասում՝ արևելահայ ազգային-քաղաքական կառույցների անմիջական ղեկավարությամբ: Այժմ Հայաստանի Հանրապետության ներքաղաքական բնագավառը դարձել էր հասարակական-քաղաքական ընդհանուր դաշտ՝ միջհատվածական փոխհարաբերությունների համար: Հայաստանի Հանրապետությունում արևմտահայ փախստականներն իրենցից ներկայացրել են յուրահատուկ ազգագրական ընդհանրություն՝ իր ուրույն հատվածական ինքնագիտակցությամբ, բարքերով և ավանդույթներով: Հանրապետության նկատմամբ նրանք դրսևորել են ավելի քան զուսպ և սառը, եթե չասենք՝ անտարբեր, իսկ որոշ դեպքերում նաև՝ թշնամական վերաբերմունք: Այդ վերաբերմունքը շաղախված էր խորթության, օտարության զգացումով: Ժամանակակիցներից Ս. Վրացյանը նշել է, որ արևմտահայ փախստականները, առհասարակ, հարազատ չեն զգացել իրենց հանրապետության մեջ<sup>22</sup>: Իսկ Անդրանիկի գլխավորությամբ արևմտահայ փախստականների մի մասը թշնամական վերաբերմունք է դրսևորել Հայաստանի Հանրապետության իշխանությունների նկատմամբ՝ չձանաչելով «Թուրքիայի շնորհիվ» ստեղծված «Երեւանի հայկական հանրապետութիւնը»<sup>23</sup>:

## 2. Հեղափոխությունը որպես հատվածականության դրսևորման խթան

Հատվածականության հանրային դրսևորման հիմնական հանգամանքը Ռուսաստանի 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունն էր: Այսրկովկասում ազգային-քաղաքական զարգացումների համար Փետրվարյան հեղափոխությունը ստեղծել էր նպաստավոր պայմաններ: Ս. Վրացյանը նշել է, որ նոր առաջացած հասարակական-քաղաքական պայմաններում հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների կյանքը «գնաց տարբեր ճանապարհներով»: Արևելահայությունն ի դեմս իր ղեկավար հասարակական-քաղաքական շրջանակների «ամբողջապես տարվեց համապետական ընդհանուր հարցերով և ընկերային գաղափարներով», իսկ արևմտահայերը՝ «ապրում էին սեփական, ազգային-տեղական կյանքով, նրանց հե-

<sup>22</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 269:

<sup>23</sup> «Աշխատանք», Եր., 22 հունվարի, 1919 թ.:

տաքրքրությունն անփոփված էր Թուրքահայաստանի և գաղթականական գործերի սահմաններում»<sup>24</sup>: Արևմտահայ գրող և հասարակական գործիչ Ա. Չոպանյանը՝ նշելով, որ «մեր ցեղի բոլոր հատուածների միացումը ամենացանկալի իտեալ մըն է», ցավով արձանագրել է, որ հայությունը այժմ գործում է երկակի բաժանված ռուսահայերի և թուրքահայերի «կամ ինչպես հիմա կըսեն հոն, ավելի ախորժալուր անվանականութեամբ՝ արեւմտահայ և արեւելահայ»<sup>25</sup>: Ա. Չոպանյանը ևս արձանագրել է այն իրողությունը, որ հայության արևմտահայի և արևելահայի «բաժանումը ռուս հեղափոխութիւնէն հետո աւելի շեշտուեց, փոխանակ մեղմանալու»<sup>26</sup>: Իր հերթին ճանաչված արևմտահայ դաշնակցական գործիչ Կ. Սասունին արձանագրել է, որ Փետրվարյան հեղափոխության շնորհիվ քաղաքական ազատություններ ստանալով՝ ռուսահայությունը տարվել էր հեղափոխական գաղափարներով և նետվել ռուսական հեղափոխության հորձանուտը՝ մոռացության մատնելով Թուրքահայաստանը<sup>27</sup>: Եվ այդ ամենն այն պարագայում, երբ նախորդ պատմական ժամանակաշրջանում արևելահայության ղեկավար հասարակական-քաղաքական շրջանակներն առաջնահերթ լծվել էին Արևմտյան Հայաստանի ազատագրման և արևմտահայ փախստականերին պատուպարելու գործին:

Ս. Վրացյանը նշված իրողությունն իր զարգացումներով փորձել է բացատրել անորոշ «իրերի բերումով»<sup>28</sup>: Սակայն պատճառներն ավելի խորքային են եղել: Նմանօրինակ զարգացումների պատճառներից հիմնականը եղել է հայ ժողովրդի երկու խոշոր հատվածների բաժանվածությունը և դրանից բխող հատվածականությունը: Փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված հասարակական քաղաքական բարենպաստ պայմաններում արևմտահայ և արևելահայ հատվածների ազգային-քաղաքական նպատակների ընկալման, ձևակերպման, դրանց միջև առաջնահերթությունները որոշելու և նմանատիպ այլ հիմնահարցերի շուրջ կուսակցությունների, քաղաքական հոսանքների, առանձին ազգային-քաղաքական գործիչների փոխհարաբերություններում օբյեկտիվորեն ծագել են տարակարծություններ և դրանցից բխող տարաձայնություններ: Այդ ամենը հանգեցրել է ինչպես ներկուսակցական և միջկուսակցական, այնպես էլ միջհատվածական հակասությունների սրմանը:

1917 թ. մարտի 7-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Թիֆլիսի Հայոց առաջնորդարանում կայացել է հայկական կուսակցությունների և հոսանքների խորհրդակցություն, որի հիմնական նպատակն է եղել ստեղծված հասարակական-քաղաքական նոր իրավիճակում մշակել զարգացող հեղափոխության պայմաններում հայության առջև ծառայած հիմնահարցերի շուրջ միասնական մոտեցումներ: Խորհրդակցության 6 նիստերին մասնակցել են Ազգային բյուրոյի, քաղաքական կուսակցությունների և հոսանքների տասնյակ ներկայացուցիչներ, ինչպես նաև արևելահայ

24 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 34:  
 25 «Վերածնունդ», Փարիզ, 14 հուլիսի 1917 թ., էջ 59:  
 26 Նույն տեղում:  
 27 Տե՛ս Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 128:  
 28 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 34:

և արևմտահայ ազգային-քաղաքական գործիչներ և ճանաչված մտավորականներ<sup>29</sup>: Մարտի 7-ի առաջին նիստում «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանը հայտարարել է, որ նկատի ունենալով տեղի ունեցած քաղաքական ու զինվորական հեղափոխությունը՝ ներկա հանգամանքներում մենք պետք է բռնենք որոշակի դիրք, անպատրաստ չգտնվենք օրվա հարցերի հանդեպ, որ շոշափում են քաղաքացիների ու ազգերի շահերը<sup>30</sup>:

Միաժամանակ, Ռուսաստանում ցարիզմի տապալումից հետո ստեղծված նպաստավոր պայմաններում հայ ժողովրդի արևմտահայ հատվածի մի մասը կազմող արևմտահայ փախստականները՝ իրենց հերթին փորձել են վերահիմաստավորել արևմտահայության առջև ծառայած հիմնախնդիրները, վերագնահատել արևմտահայ-արևելահայ հատվածական փոխհարաբերությունները: «Արևմտահայ մտավորականությունը վերագնահատման էր ենթարկում ռուսահայ մտավորականության վերաբերմունքը դեպի թուրքահայ ժողովուրդը, այսինքն այն, ինչ տասնյակ տարիների ընթացքում ներկայացրել էր թուրքահայ հեղափոխությունը: Նոր էին հասկացվում սխալները, մոլորությունները, միակողմանի գործողությունների վնասը»<sup>31</sup>, - մատնանշել է Լեոն: Միաժամանակ, արևմտահայ հասարակական-քաղաքական ուժերը վերակազմելով իրենց շարքերը՝ ձեռնամուխ են եղել կոռ ազգային կազմակերպություն ստեղծելու գործին: Նրանք ձգտել են իրենց ձեռքը վերցնել արևմտահայ փախստականների և ընդհանուր առմամբ՝ արևմտահայության հետագա ձակատագրի տնօրինումը և ղեկավարումը՝ ձերբազատվելով արևելահայ հասարակական-քաղաքական և բարեգործական կազմակերպությունների մի տեսակ խնամակալական վերաբերմունքից: Այդ վերաբերմունքն առաջ էր բերել արևմտահայերի օրինական դժգոհությունը: Դ. Անանունն իրավացիորեն նշել է, որ դժգոհությունը ռուսահայերից «չպետք է մնար որպես անցողակի զգացում, այլ պետք է խթան դառնար, որպեսզի թուրքահայերը ստեղծեին կոռ կազմակերպություն»<sup>32</sup>:

Առավել ցայտուն այս մոտեցումներն իրենց արտահայտությունն են գտել «Հայաստան» թերթի էջերում: Ազգային հերոս Անդրանիկի անմիջական ղեկավարությամբ մի քանի արևմտահայ մտավորականներ 1917 թ. հունվարից նախաձեռնել<sup>33</sup> և ապրիլի 16-ին իրականացրել են արևմտահայ ոչ կուսակցական պարբերական «Հայաստանի» հրատարակումը<sup>34</sup>: 1917 թ. մարտի 15-ի «Հայաստան» թերթի հրապարակման մասին ազդարարում Անդրանիկը նշում էր, որ «ռուսական մեծ յեղաշրջման շնորհիվ կովկասահայ թերթերը գրեթե չեն զբաղիր տաճկահայ փախստականներու հարցով, որովհետև, իրաւացիորեն, պետք է իրենց բոլոր ճիգերը ի մի հավաքել ներքին կեանքի կազմակերպութեան, մենք, տաճկահայերս, կարիք զգացինք և անհրաժեշտ տեսանք Թիֆլիսի մեջ հրատարակել տաճկահայ փախստական գործի համար նուիրուած լրագիր մը, որ բացառաբար զբաղի այդ կոտորուած ժո-

29 Տե՛ս ՀԱՄ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 4, թթ. 1-52:

30 Տե՛ս նույն տեղում, թ. 1:

31 Լեոն, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1935, էջ 195:

32 «Բանվոր», Բարու, 18 ապրիլի 1917 թ.:

33 Տե՛ս **Андраник Озаян**, Документы и материалы, «Вестник архивов Армении», N 1(89)-2(90), док. NN 79, 80, с. 222-223.

34 Տե՛ս «Հայաստան», Թիֆլիս, 16 ապրիլի 1917 թ., N1:

ղովուրդի կարիքներով»<sup>35</sup>: Անդրանիկի առաջնորդությամբ «Հայաստան» թերթի շուրջ փաստացի ձևավորվել էր արևմտահայ նոր ազգային-քաղաքական հոսանք: Հայ ժողովրդին ուղղված նրա դիմումում մատնանշվում էր, որ «Հայաստան» թերթի շուրջ միավորված ազգային-քաղաքական գործիչների հիմնական նպատակն է՝ համախմբել հայկական բոլոր հասարակական-քաղաքական ուժերը արևմտահայ փախստականների ֆիզիկական գոյության ապահովման և օժանդակության տրամադրման գործի շուրջ<sup>36</sup>: Արևմտահայ փախստականների օժանդակության կազմակերպման գործը սկզբունքային վերլուծության ենթարկելով՝ Անդրանիկը «Հորիզոն» թերթի «Իմ խոսքը» խորագրով հողվածում ներկայացրել է իր մոտեցումներն այդ բնագավարում տեղ գտած թերությունների վերացման վերաբերյալ: Խորին շնորհակալություն հայտնելով արևելահայությանը, բարեգործական կազմակերպություններին՝ արևմտահայ փախստականներին պատսպարելու և սատարելու համար, Անդրանիկը միաժամանակ առաջարկում էր գաղթականական գործի կազմակերպչական աշխատանքներում առաջին հերթին ներգրավել արևմտահայ փախստականների ներկայացուցիչներին<sup>37</sup>:

Սկզբում ինչպես ՀՅ Դաշնակցությունը, այնպես էլ «Մշակի» կողմից առաջնորդվող՝ հետագայում ժողովրդական կուսակցության վերակազմավորված քաղաքական հոսանքն անհանդուրժողական վերաբերմունք են ցուցաբերել հայ քաղաքական ասպարեզում Անդրանիկի և «Հայաստան» թերթի շուրջ նոր ձևավորված արևմտահայ փախստականների հասարակական-քաղաքական հոսանքի, նրա կողմից քարոզվող գաղափարների նկատմամբ: Իրենց հերթին՝ հետևողականորեն պայքարելով գաղթականական բարեգործական մարմինները միավորելու, նրանց կողմից տնօրինվող «բոլոր գանձարանները» «կօնտրոլի ենթարկելու» համար, այդ հոսանքի ղեկավարները միանշանակորեն հանդես են եկել ռուսահայերի խնամակալական վերաբերմունքի, թրքահայ-ռուսահայ խտրականության դեմ: Փախստականների նյութական և ֆինանսական օժանդակության նկատմամբ իրենց վերահսկողությունը հաստատելու համար արևմտահայ փախստականների ղեկավար շրջանակների ձեռնարկած քայլերը թուլացրել էին ինչպես «մշակականների», այնպես էլ դաշնակցականների ազդեցությունն արևմտահայ փախստականների վրա: Ուստի բնական է, որ Անդրանիկի ղեկավարած հոսանքը հանդիպում էր մի կողմից՝ բարեգործական միության նախագահ Ս. Հարությունյանի և ընդհանրապես «մշակականների», մյուս կողմից՝ դաշնակցականների անբարյացակամ վերաբերմունքին ու հակազդեցությանը<sup>38</sup>:

Պատահական չէր, որ վերը նշված քաղաքական ուժերն ընդհանրապես հարցականի տակ էին դրել արևմտահայ փախստականների նման հասարակական-քաղաքական հոսանքի գոյության հնարավորությունը՝ «Երբ ամբողջ թուրքահայությունը կներկայանա բոլորովին ջախջախված ու փլատակված մի զանգված, երբ նա զրկված է քաղաքացիական իրավունքներե, երբ հոս՝ Կովկասի մեջ մենք ժամանակավոր հյուր ենք միայն, միթե այդ

35 ՀԱԱ, ֆ. Պ-370, ց. 1, գ. 93, թ. 6:

36 Տե՛ս Անդրանիկ Օզանյան, Документы и материалы, Вестник архивов Армении, N 1(89)-2(90), док. N86, с. 228.

37 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 29 հունվարի 1917 թ., N 21:

38 Տե՛ս Սուրենյան Գ., Ինչու գոր. Անդրանիկի հետազգվ Հ. Յ. Դաշնակցությունն է, Կ. Պոլիս, 1920, էջ 6-7:

մասն ընդունակ է քաղաքական կուսակցություններ ստեղծելու»<sup>39</sup>, - «Մշակ»-ում արված այս հարցադրումը ենթադրել է, իհարկե, բացասական պատասխան: Չնայած այդ ամենին, Անդրանիկի և նրա կողմնակիցների հստակ դիրքորոշումը և համապատասխան գործելակերպը հանգեցրել էին նրան, որ նրանց ազդեցությունն արևմտահայ փախստականների վրա ավելի էր ուժեղացել, և այդ հոսանքի փաստացի օրգան հանդիսացող «Հայաստան» թերթի «հանգանակությունն ավելի զորավոր թափ ստացավ, թերթի տիրածը 1800-էն բարձրացավ 3000-ի»<sup>40</sup>:

Այսպիսով, 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված նոր պայմաններում արևմտահայ ազգային-քաղաքական ուժերը ձգտում էին վերակազմել իրենց շարքերը և ստեղծել համազգային կուռ կազմակերպություն: Նրանք ցանկանում էին իրենց ձեռքը վերցնել արևմտահայ փախստականների և ընդհանուր առմամբ՝ արևմտահայության հետագա ճակատագրի տնօրինումը և ղեկավարումը՝ ձերբազատվելով արևելահայ հասարակական-քաղաքական և բարեգործական կազմակերպությունների խնամակալական վերաբերմունքից:

### 3. Արևմտահայ հատվածի ինքնահաստատվելը Արևմտահայ 1-ին համագումարում

Արևելահայ հասարակական-քաղաքական և բարեգործական կազմակերպությունների խնամակալական վերաբերմունքն առաջ էր բերել արևմտահայ փախստականների, նրանց ղեկավար շրջանակների օրինական դժգոհությունը և բողոքը: Ինչպես նշել է Անդրանիկը, արևմտահայ փախստականների բողոքն այն իրողության արդյունք է, որ արևմտահայությունը 1915-1916 թվականների ընթացքում ձայն չունեցավ փախստականական և պատասխանատու այլ գործերում<sup>41</sup>: Այդ է պատճառը, որ դեռևս 1916 թվականին արևմտահայ ազգային-քաղաքական գործիչները բարձրացրել էին արևմտահայ համագումար հրավիրելու հարցը<sup>42</sup>: Արդեն 1917 թ. ՀՅ Դաշնակցության, ռամկավարների և հնչակյանների ներկայացուցիչների միջև «երկար» խորհրդակցությունների արդյունքում որոշվել էր «համագումար մը հրավիրել Արևմտահայ մտավորականներէ և հանրային այլ գործիչներէ՝ ոչ մեկ խտրություն դնելով կուսակցական այլազան դավանանքներու մեջ»<sup>43</sup>, - գրում է Վ. Փափագյանը:

Բնական է, Արևմտահայ համագումար հրավիրելու հարցը քննարկվել է վերը հիշատակված հայկական քաղաքական կուսակցությունների և հոսանքների խորհրդակցությունում: Ելնելով հեղափոխության զարգացման պայմաններում նոր մարտահրավերների և դրանց հետ կապված վտանգների անկախատեսելիությունից՝ նշված խորհրդակցության մասնակիցները անհրաժեշտ են համարել զգուշավոր մոտեցումներ դրսևորել արևմտահայ

39 Տես «Մշակ», Թիֆլիս, 5 օգոստոսի 1917 թ.:

40 **Սուրենյան Գ.**, Ինչու գոր. Անդրանիկ հեռացավ Հ. Յ. Դաշնակցութիւնէն, էջ 10:

41 Տես **Андраник Озаян**, Документы и материалы, «Вестник архивов Армении», N 1(89)-2(90), док. N86, с. 229.

42 Տես **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, Պէյրոս, 1952, էջ 438, նաև **Չելեպյան Ա.**, Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Եր, «Արևիկ», 1990, էջ 375:

43 **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, էջ 438:

ազգային-քաղաքական խնդիրների առաջադրման և լուծման գործում: Խորհրդակցության մարտի 12-ի նիստում նշելով, որ թուրքահայերին դեռ որոշակի վտանգներ են սպառնում, Ա. Խատիսյանը առաջարկել է չշտապել թուրքահայ դատի համար համագումար հրավիրելու հարցում<sup>44</sup>: Իսկ մեն-շնիկ-ինտերնացիոնալիստ Ա. Երզնկյանը գտնում էր, որ քանի դեռ տաճկահայ դատն իր լուծումը չի ստացել, դրա բարձրացումն այս պահին կարող է վտանգ ներկայացնել հենց կովկասահայության խնդիրների համար<sup>45</sup>:

Մարտի 19-ի նիստում Ա. Սահակյանը խոսելով թշնամական վերաբերմունք ունեցող հարևանների կողմից արևմտահայերին սպառնացող վտանգների, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում նրանց գրեթե բացակայության մասին՝ իր համաձայնությունն է հայտնել Մ. Պապաջանյանի այն տեսակետի հետ, որ Արևմտյան Հայաստանում անհրաժեշտ է փաստացիորեն իրականացնել այն ամենը, ինչը հնարավոր է և կոչ է արել. «տիրանաճաճ մեր հողին, ժողովուրդ ունենանք»: Այնուհետև նա կարծիք է հայտնել, որ «դեռ մի 100 օր չենք կարող զբաղվել տաճկահայերի գործերով»<sup>46</sup>:

Արևմտահայ փախստականներին հայրենիքում վերաբնակեցնելը հիմնական ազգային-քաղաքական խնդիրներից էր: Սակայն նկատի ունենալով թուրք և քուրդ հարևանների ճնշումները՝ Անդրանիկը դեռ է եղել փախստականների վերադարձին: «Աշնանն ասի, որ չի կարելի այնտեղ թողնել որբերին ու կանանց, չլսեցիք,- ասել է նա խորհրդակցության մարտի 30-ի նիստում,- Թող բոլորն էլ այստեղ [Այսրկովկաս] գան, հակառակ են, որ մի գաղթական այստեղից գնա»<sup>47</sup>:

Խոսելով վտանգների մասին՝ հայ քաղաքական գործիչները նկատի են ունեցել ոչ միայն թշնամաբար տրամադրված թուրք-թաթար և քուրդ հարևաններին: Աչքի առջև ունենալով դարասկզբի ռուսական և թուրքական հեղափոխությունների տխուր փորձը, նրանք գտել են, որ անիրատես պահանջները կարող են թշնամաբար տրամադրել նոր ռուսական իշխանություններին հայերի նկատմամբ: «Թույլ ուժերով պահանջներ անել ժամանակավոր կառավարությունից, ի՞նչ օգուտ,- ասել է իր ելույթում Անդրանիկը,- խոշոր պահանջներ դնող ազգերը մոռանում են, որ պատերազմ է: Հեղափոխության տվածը չկորցնենք: Մի դանակ էլ չունենք ձեռքներս, սպասենք մինչև հաղթեն գերմանացոց: Կարող է հեղաշրջում լինել»<sup>48</sup>: Նույն մտահոգությունն է հնչել նաև հայ մեծ գրող Հ. Թումանյանի խոսքում: «Կերենսկին այստեղ [Թիֆլիս] եղած ժամանակ չէր ուզում լսել «Անկախ Հայաստանի» մասին: Դրությունը այնքան խախտու է, որ այդպիսի մի հայտարարություն վտանգավոր է: Որին է դուր գալու, ռուսին, տաճիկին, վրացու՞ն, նույնիսկ անգլիացու՞ն: Գուցե հայի հանգստության համար»<sup>49</sup>, ասել է նա: Իսկ Ա. Խատիսյանը գտնում էր, որ արևմտահայ և արևելահայ ազգային-քաղաքական պահանջների առաջադրումը, առավել ևս դրանց իրականացման ուղղությամբ գործողությունները կարող են դժգոհություն առա-

44 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 111, թ. 101:

45 Տե՛ս նույն տեղում, թ. 79:

46 Տե՛ս նույն տեղում, թ. 103:

47 Տե՛ս նույն տեղում, թ. 111:

48 Նույն տեղում, թ. 102:

49 Նույն տեղում, թ. 113:

ջացնել ռուսական բանակի վերնախավում՝ «այսքան նվաճել ենք, միթե մեզ բան չի հասնելու» իմաստով<sup>50</sup>:

Խորհրդակցության մարտի 7-ի նիստում որոշվել է «գաղթականական համաժողով հրավիրելու հարցը» առժամանակ հետաձգել, «մինչև կպարզվեն հանգամանքները»<sup>51</sup>: Մարտի 19-ին արդեն Հայոց Ազգային բյուրոն միաձայն ընդունել էր տաճկահայության համագումար հրավիրելու և տաճկահայության համար որևէ կառավարական հայտարարություն անելու վաղաժամկետության մասին որոշում: Այդ մասին Ազգային բյուրոյի մարտի 20-ի հերթական նիստում հայտարարել է Ազգային բյուրոյի նախագահ Ա. Խատիսյանը<sup>52</sup>: Այդ որոշումներն առաջին հերթին բխել են ինչպես հայկական քաղաքական կուսակցությունների և հոսանքների խորհրդակցության, այնպես էլ Հայոց Ազգային բյուրոյի կողմից որդեգրված սպասողական, զգուշավոր դիրքորոշումից: Ընդ որում, նման դիրքորոշումը որդեգրվել է ոչ միայն արևմտահայության, այլև արևելահայության առջև ծառայած հիմնախնդիրների առաջադրման և դրանց իրականացմանը հետամուտ լինելու հարցերում:

Չսայած այդ որոշումներին՝ արևմտահայ ազգային-քաղաքական գործիչների մի մասը, այնուամենայնիվ, ձեռնամուխ եղավ արևմտահայ համագումարի հրավիրման գործին: Դրանով իսկ նրանք, փաստացի ընդդիմանում էին հայ ժողովրդի արևելահայ հատվածի հասարակական-քաղաքական կազմակերպությունների իրենց վերաբերող որոշմանը: «Ռուսահայերը մեզի համար բան մըն ալ պիտի չընեն, եկէք թոքահայ համագումար մը կազմակերպենք»<sup>53</sup>, - հայտարարել է Անդրանիկը: Ըստ ամենայնի, այս մտայնությունն է տիրել արևմտահայ ազգային-քաղաքական գործիչների մեծամասնության մոտ: Դա է պատճառը, որ արևմտահայ ազգային-քաղաքական գործիչները փաստացի կերպով դիմեցին հատվածական ձեռնարկման՝ Արևմտահայ 1-ին համագումարի հրավիրմանը:

Ռամկավար գործիչ Ա. Դարբինյանը արտահայտում էր այն դիրքորոշումը, որ պետք է Անդրանիկն էլ համաձայնվեր, քանզի փախստականների խոշոր զանգված կապված էր նրա անվան հետ, առանց նրա համաձայնության չէր կարելի ընդհանուր միություն կազմել<sup>54</sup>: Ա. Դարբինյանի այդ տեսակետի հետ համաձայնվել է նաև Արամ Մանուկյանը: Համագումարին Անդրանիկի մասնակցության մասին նրանց տեսակետն ավելի քան հիմնավորված էր: Համագումարին նախորդած մեկ տարվա ընթացքում Անդրանիկը, թողնելով ռազմական գործը և մտնելով Այսրկովկասի հայ ազգային հասարակական-քաղաքական կյանքի հորձանուտը, հետևողական գործունեության արդյունքում հասել էր արևմտահայ ազգային-քաղաքական մի նոր հոսանքի առաջնորդի բարձր դիրքի<sup>55</sup>:

Անդրանիկն այն կարծիքին էր, որ կովկասահայ դաշնակցականները պետք է հակառակվեն տաճկահայերի որևէ ձեռնարկին, եթե իրենք ղեկա-

50 Տես նույն տեղում, թ. 104:

51 Նույն տեղում, թ. 1:

52 Տես ՀԱԱ, ֆ. Դ-222, ց. 1, գ. 111, թ. 105:

53 **Չելեյան Ա.**, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, էջ 375:

54 **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 346:

55 Տես **Հայրապետյան Կ.**, Անդրանիկը Արևմտահայ առաջին համագումարում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Եր., 2015, էջ. 140-149:



վարողի դերի մեջ չգտնվեն<sup>56</sup>: Նա փաստացի արտահայտել էր արևմտահայ այն ղեկավար շրջանակների տեսակետը, որ կոմկասսահայ դաշնակցականները չեն հանդուրժելու արևմտահայ փախստականների հասարակական-քաղաքական ինքնուրույն գործելակերպը: Այդ պատճառով երեք արևմտահայ կուսակցությունների խորհրդակցությունների արդյունքում Անդրանիկին համոզելու գործն իր վրա էր վերցրել Արամը: Նա վստահեցնում է Անդրանիկին, որ կոմկասսահայ դաշնակցականները երբեք չեն ցանկացել և չեն մտել փախստականական գործի մեջ, թուրքահայ դաշնակցականները նույնպես կուզեն անկախ մնալ կոմկասսահայ դաշնակցականներից<sup>57</sup>: Արդյունքում, Անդրանիկը տալիս է իր համաձայնությունը:

Իհարկե, կասկածելի է Ա. Դարբինյանի հուշերում Արամին վերագրած՝ դաշնակցական կուսակցության միասնության դեմ ուղղված և, ըստ էության, հատվածական այն մտտեցումը, որ թուրքահայ դաշնակցականները նույնպես կուզեն անկախ մնալ կոմկասսահայ դաշնակցականներից: Միաժամանակ, հասկանալի են այն դրդապատճառները, որոնք հիմք են հանդիսացել «կոմկասսահայ դաշնակցականները երբեք չեն ուզել և չեն մտել փախստականական գործի մեջ» դիրքորոշումը որդեգրելու համար: Եթե հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ազգային-քաղաքական ղեկավար շրջանակներում ձևավորվել էր համագումար հրավիրելու անկոտրում ցանկություն և դրա իրագործման ուղղությամբ ծավալվել էր իրական շարժում, ապա քաղաքական առումով, ելնելով համազգային շահերից, ավելի արդյունավետ կլինեին այն սահմանափակել նվազ վտանգ ներկայացնող գաղթականական հարցերով: Բնական է նաև, որ Այսրկովկասի հայ քաղաքական դաշտում գերիշխող քաղաքական ուժ հանդիսացող ՀՅ Դաշնակցությունը նման պայմաններում պետք է փորձեր օգտագործել պատեհ առիթը և այդ շարժումը վերցնել իր քաղաքական ազդեցության ներքո:

Այնուհետև հրապարակվում է Անդրանիկի, Արամի և Ա. Դարբինյանի ստորագրությամբ հայտարարություն, որը կոչ էր Արևմտյան Հայաստանի գրավված վայրերի և Կովկասում ապաստանած 250 000 թրքահայ գաղթականներին՝ միանալ, ժողով գումարել, ընտրել հեղինակավոր մի մարմին, որ իրավունք ունենանք գործակցելու կոմկասսահայ կազմակերպությունների հետ՝ գաղթականների օգնության գործը ավելի կանոնավոր հիմքերի վրա դնելու համար<sup>58</sup>: Այսպիսով, համագումարում նախատեսվել էր քննության դնել լրկ արևմտահայ փախստականական գործի կազմակերպման հետ կապված հարցերը: Փոխադարձ համաձայնությամբ Հայկական հարցը մնացել է համագումարի օրակարգից դուրս: Ըստ երևույթին, ձեռք էր բերվել նաև համաձայնություն՝ համագումարում չանդրադառնալ Մեծ եղեռնի ողբերգական հետևանքների և դրանում մեղավորների մասին հարցերին:

1917 թ. մայիսի 2-ից 11-ը Երևանում տեղի ունեցավ Արևմտահայ 1-ին համագումարը: Համագումարի հանդիսավոր բացումը կատարվեց մայիսի 1-ին<sup>59</sup>: Համագումարին մասնակցում էին 80 պատգամավորներ և խորհրդակ-

56 Տե՛ս Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 346:

57 Տե՛ս նույն տեղում, էջ 347:

58 Տե՛ս նույն տեղում:

59 Փափազյան Վ., Իմ հուշերը, էջ 439:

ցական ձայնի իրավունք ունեցողներ, ինչպես նաև մոտ 400 հյուրեր<sup>60</sup>: Համագումարի պատգամավորներից և խորհրդակցական ձայնի իրավունք ունեցողներից՝ 15-ը Արևմտյան Հայաստանից էին, 27-ը ներկայացնում էին Կովկասում ապաստանած արևմտահայ փախստականներին, 14-ը՝ տարբեր ընկերությունների և միությունների, 8-ը՝ կուսակցությունների ներկայացուցիչներ էին, 3-ը՝ արևմտահայ մամուլից էին, 11-ը մասնակցում էին խորհրդակցական ձայնի իրավունքով և 6-ը՝ հրավիրվածներ էին<sup>61</sup>:

Համագումարի պատվավոր նախագահ ընտրվեց Անդրանիկը, համանախագահներ՝ Լ. Շանթը, Վ. Փափագյանը և Ա. Դարբինյանը<sup>62</sup>: Հակիրճ ելույթով և համերաշխության կոչով համագումարի բացումը կատարեց Անդրանիկը: «Մենք պիտի կրնանք մեր ցեղին բեկորները պահել ու պահպանել, - ասաց նա, - մեր օձախները վերականգնել և մեր ապագայի վրա հույս դնել առեն, երբ զիրար հասկանանք ու համերաշխինք»<sup>63</sup>: Այնուհետև բացման մեծ ճառով հանդես եկավ Արամը<sup>64</sup>: Համագումարի անունից Անդրանիկի և Լ. Շանթի ստորագրությամբ ժամանակավոր կառավարությանը ողջույնի հեռագիր ուղարկվեց<sup>65</sup>:

Ազգային-քաղաքական խնդիրների առաջադրման առումով Արևմտահայ 1-ին համագումարը դրսևորել է բավական զուսպ, չափավոր մոտեցումներ: Արևմտահայ 1-ին համագումարը հանդես գալով որպես հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ներկայացուցչական ժողով՝ ձեռնպահ մնաց Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներում անկախ Հայաստանի ստեղծման խնդրի առաջադրումից: Այդ հիմնական նպատակի իրագործման ուղղությամբ առաջնահերթությունների հստակեցման, կարճաժամկետ ծրագրերի մշակման ու հասարակությանը ներկայացման խնդիր չի դրվել նաև համագումարի կողմից ձևավորված Արևմտահայ կենտրոնական մարմնի առջև: Արևմտահայ 1-ին համագումարի մասնակիցները պետք է նկատի ունենային, որ վերոնշյալ հիմնարար նպատակի առաջադրումը կարող է հանգեցնել Ռուսաստանի նոր իշխանությունների անբարյացկամ վերաբերմունքին և հնարավոր հակազդեցությանը: Համագումարը գտնելով, որ Հայկական հարցը վստահված է Պողոս Նուբարի ղեկավարությամբ և արևմտահայերի մասնակցությամբ կազմված պատվիրակությանը, սահմանափակվում է միայն հետևյալ բանաձևի ընդունմամբ. «Ներկա քաղաքական ընդհանուր պայմանները ոչ մի կերպ չեն կրթնա փոխել արդեն իսկ միջազգայնորեն և պատմականորեն նվիրագործված Հայկական հարցի էությունը»<sup>66</sup>:

Արևմտահայ 1-ին համագումարում՝ միաձայն ընդունված բանաձևով, ձևակերպվել է արևմտահայության առջև ծառայած ազգային-քաղաքական հետևյալ առաջնահերթ նպատակները՝ «1) Թուրքահայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանումը և անոր քայքայված տնտեսության վերականգնումը. 2) Հայրենիքի վերաշինությունը. 3) Նոր սերնդի կրթական, ֆի-

60 Տես «Հայաստան», Թիֆլիս, 5 մայիսի, 1917 թ., N 18:

61 Տես Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 30:

62 Տես «Սշակ», Թիֆլիս, 6 մայիսի, 1917 թ.:

63 «Հայաստան», Թիֆլիս, 7 մայիսի, 1917 թ.:

64 Տես Փափագյան Վ., Իմ հուշերը, էջ 439:

65 Տես Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Եր., 1997, էջ 135:

66 ՀԱՄ, ֆ. Պ-32, ց. 1, գ. 12, թ. 160:

զիկական և քաղաքացիական դատարարությունը»<sup>67</sup>: Այդ ազգային-քաղաքական առաջնահերթ նպատակների իրագործման համար Արևմտահայ 1-ին համագումարը ձևակերպել է նաև ընտրվելիք արևմտահայ գործադիր մարմնի գործունեության հետևյալ երեք հիմնական սկզբունքները.

«1) Տեղական կազմակերպություններ առաջացնել զբաղված վայրերու հայության, ինչպես նաև Ռուսաստան և Պարսկաստան ապաստանած հայ փախստականության մեջ.

2) Փախստականական գործերու մեջ իրագործել արևելահայերու և արևմտահայերու սերտ համագործակցությունը.

3) Օգնության գործի ղեկավարությունը և դրամական միջոցները կենտրոնացնել մեկ կենտրոնական մարմնի ձեռք»<sup>68</sup>:

Վերջին երկու սկզբունքների համար հիմք է հանդիսացել Վ. Փափազյանի առաջարկած և Արևմտահայ 1-ին համագումարի կողմից 51 կողմ, 8 դեմ ձայներով առաջինն ընդունված փախստականական ազգային մարմինների՝ նախկինում իրականացված գործունեության մասին բանաձևը<sup>69</sup>:

Արևմտահայ 1-ին համագումարում հստակորեն իրարից սահմանազատվել են հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածները, որդեգրվել է արևմտահայ փախստականների գործերում արևելահայերի և արևմտահայերի սերտ համագործակցության սկզբունքը, ինչը նշանակում էր, որ միջհատվածական հարաբերություններում արևմտահայերն էլ պետք է հանդես գան որպես իրավագործ և հավասարազոր կողմ: Արևմտահայ փախստականների օգնության գործի ղեկավարությունը և դրամական միջոցների հոսքը պետք է իրականացնեն մեկ կենտրոնական մարմին, որի «անդամներու կեսը կընտրվի թուրքահայ համագումարի կողմե, իսկ մյուս կեսը ռուսահայ փախստականական գլխավոր մարմիններու և կամ ռուսահայ համագումարի կողմե»<sup>70</sup>: Դա հնարավորություն կտար արևմտահայ ղեկավար գործիչներին անմիջականորեն մասնակցելու արևմտահայ փախստականների ներքին կյանքի կազմակերպմանը, այդ նպատակով ծախսվող ֆինանսական միջոցների վերահսկմանը:

Արևմտահայ 1-ին համագումարում ընդունված որոշումները բավարարել են ամբողջ արևմտահայության բնական ձգտումները՝ ինքնահաստատվել որպես հայ ժողովրդի իրավահավասար մի հատված, հանդես գալ որպես առանձին, կուռ կազմակերպված հանրություն, ինքնուրույն տնօրինել հետագա ճակատագիրը՝ ձերբազատվելով միայն խնամքի կարիք ունեցող փախստականի կարգավիճակից, գաղթականի «վիրավորական կոչումից»<sup>71</sup>:

«Երեւանի համագումարին կարելոր իրագործումներէն մէկն ալ արեւմտահայ գաղթականութեան բերած բարոյական ուժի, ինքնավստահութեան եւ յարգանքի ներշնչումն էր,- իրավացիորեն նշել է Ա. Չելեյայանը,- Համագումարէն առաջ, տեղահանուած ու թափառական արեւմտահայը «գաղթական» մըն էր պարզապէս ... : Համագումարէն ետք, թրքահայը ինքզինք նուազ անտէր,

67 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 31-32:

68 Նույն տեղում, էջ 32:

69 Տեն նույն տեղում, էջ 30:

70 Տեն Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 32:

71 Տեն Չելեյայան Ա., Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, էջ 377:

ստորադաս, կամ բարոյալքուած կը զգար»<sup>72</sup>: Համագումարը, որպէս արևմտահայ փախստականների ներկայացուցչական մարմին, ամրագրել է արևմտահայ փախստականների գործերում արևելահայերի և արևմտահայերի սերտ համագործակցության, նրանց իրավահավասարության սկզբունքները, ինչը հնարավորություն է տվել արևմտահայերին հետագայում անմիջականորեն մասնակցելու փախստականների օգնության և ներքին կյանքի կազմակերպմանը, այդ նպատակով ծախսվող ֆինանսական միջոցների վերահսկմանը: Այսպիսով, լուծվել է արևմտահայության առջև ծառայած հիմնական խնդիրներից մեկը. «Թրքահայ գաղթականությունը դուրս բերել ռուսահայ կազմակերպութանց խնամակալութենէն եւ անոր տալ ուրոյն դիմագիծ եւ քաղաքական իտէալ»<sup>73</sup>:

#### 4. Հատվածականության դրսևորումները Արևմտահայ 1-ին համագումարում

Չնայած Արևմտահայ 1-ին համագումարում հնչեցված համերաշխության բազմաթիվ կոչերին՝ նրա աշխատանքի ընթացքում օրինաչափորեն ի հայտ են եկել լուրջ հակասություններ: Այդ հակասությունների հիմնական պատճառը հատվածականության երևույթն էր: Արևմտահայ 1-ին համագումարում ձևավորվել էր երկու քաղաքական խմբավորում, որոնց միջև ծավալվել էր անզիջում պայքար: Մեկի ղեկավարությունը ստանձնել էր Անդրանիկը: Նրա շուրջ համախմբվել էին համագումարում ներկայացված արևմտահայ բոլոր ոչ-դաշնակցական ուժերը: Միաժամանակ Անդրանիկին էր հարել արևմտահայ դաշնակցականների մի մասը, որոնց անվանել են «Անդրանիկյան դաշնակցականներ»<sup>74</sup>: Արևմտահայ 1-ին համագումարում Անդրանիկի կողմից ղեկավարվող ուժերին հակադիր բոլոր էր կազմել դաշնակցականների մնացած մասը՝ Ա. Մանուկյանի ղեկավարությամբ<sup>75</sup>: Ակներև է, որ Անդրանիկի պատվավոր նախագահ ընտրվելը և համագումարի ոչ դաշնակցական քաղաքական խմբավորման լիդեր դառնալը պայմանավորված էր ազգային հերոսի և ազգային-քաղաքական գործչի նրա հեղինակությամբ, արևմտահայ ազգային-քաղաքական խնդիրների շուրջ բոլոր ուժերի համերաշխության ու համախմբման մասին նրա դիրքորոշմամբ և այդ ուղղությամբ ծավալած գործունեությամբ:

Ձգտելով իրենց ձեռքը վերցնել արևմտահայերի ազգային-քաղաքական նպատակների և իդեալների իրագործումը՝ Արևմտահայ 1-ին համագումարի պատգամավորները ինքնըստիներքյան հակադրվել էին հայ հասարակական-քաղաքական կյանքում ՀՅ Դաշնակցության ղեկավար դիրքին: Ընդ որում, համագումարում այդ հակադրությունը ստացել է որոշ չափով նաև հատվածական երանգ: ՀՅ Դաշնակցության ղեկավար դիրքի դեմ պայքարը պատճառաբանվել է այն հանգամանքով, որ կուսակցության կենտրոնական մարմինը՝ Արևելյան բյուրոն գտնվել է կովկասահայ Դաշնակցության

72 Նույն տեղում:

73 Տե՛ս **Չելեպյան Ա.**, Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, էջ 377:

74 Տե՛ս նույն տեղում, էջ 376:

75 Տե՛ս նույն տեղում, էջ 377:

ղեկավարության ներքո: Փաստորեն, արևմտահայ ազգային-ազատագրական շարժման մեջ ՀՅԴ մենաշնորհային դիրքը, ըստ համագումարի մասնակիցների մի մասի, նշանակել է ոչ թե ողջ կուսակցության, այլ կովկասահայ Դաշնակցության, այսինքն՝ արևելահայերի գերիշխանությունն արևմտահայերի գործերում: Նպատակ ունենալով ձերբազատվել արևելահայերի խնամակալությունից՝ համագումարում ներկայացված արևմտահայ ուժերը սուր պայքար են սղել իր ղեկավար դիրքը վերահաստատելուն ուղղված դաշնակցական բլոկի ձգտման դեմ<sup>76</sup>:

Անդրանիկի մասնակցությամբ ձեռք բերված միջկուսակցական համաձայնությամբ համապատասխան համագումարում դրվել և քննարկվել են միայն արևմտահայ փախստականների ֆիզիկական գոյության պահպանմանը, ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստան փախստականների վերադարձի կազմակերպմանը, հայրենիքի վերաբնակեցմանն ու վերաշինությանը վերաբերող՝ ըստ էության՝ փախստականական հարցեր: Արևմտահայ 1-ին համագումարում չի առաջադրվել Արևմտյան Հայաստանի հարցը: Արևմտահայ ազգային-քաղաքական գործիչներն այստեղ փաստացի դրսևորել են գուսպ և շրջահայաց դիրքորոշում, ինչը հայ իրականության մեջ բավականին հազվադեպ երևույթ էր: Համագումարը չանդրադարձավ նաև հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ցեղասպանության և դրա հետևանքով արևմտահայության համար ստեղծված աղետալի վիճակի պատճառներին: Այդ մասին է վկայել ժողովրդական կուսակցության պաշտոնաթերթը՝ «Մշակը»՝ հայտնելով, որ մոտ 200 000 փախստականների շահերը պաշտպանող արևմտահայ համագումարն անուշադրության է մատնել արևմտահայերի ներկա աղետալի վիճակի պատճառները<sup>77</sup>: Մեծ եղեռնի և արևմտահայության աղետալի վիճակի պատճառներին չանդրադառնալը պայմանավորվել է, մեր կարծիքով, ոչ թե «արևմտահայ համագումարի անուշադրությամբ», այլ համագումարի աշխատանքները չվտանգելու, համերաշխության պահպանման նկատառումներով:

Արևմտահայ 1-ին համագումարի որոշումների իրականացումը պետք է ապահովեր համագումարի կողմից ընտրված արևմտահայ ներկայացուցչական մարմինը՝ Արևմտահայ խորհուրդը, որի ձևավորման շուրջ ծավալվել է սուր պայքար: Եվ դա բնական էր, քանի որ համագումարում հռչակելով այդ մարմնի գուտ փախստականների օգնության գործերով զբաղվելու նպատակը՝ նրա բոլոր մասնակիցների համար հասկանալի է եղել, որ իրականում այն պետք դառնար մի մարմին, առանց որի չէր կարող իրականացվել արևմտահայ փախստականների հետ կապված որևիցե գործ<sup>78</sup>: Այդ իրողությունը գիտակցել են արևմտահայ ինչպես դաշնակցական, այնպես էլ ոչ դաշնակցական գործիչները: Անդրանիկը և իր կողմնակիցները ձգտել են հասնել այն բանին, որ դաշնակցականները Արևմտահայ խորհրդում մեծամասնություն չկազմեն: Նրանք անընդունելի են համարել Արևմտահայ խորհուրդ անվանել մի մարմին, որը հրահանգներ պիտի ստանար, այ-

76 Տե՛ս Հայրապետյան Կ., Հատվածականության դրսևորումները Արևմտահայ առաջին համագումարում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, մաս Բ, 2013, էջ 88:

77 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 21 մայիսի 1917 թ.:

78 Տե՛ս Մասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, էջ 138:

սինքն՝ ղեկավարվել արևելահայերի մենաշնորհի դարձած ՀՅ Դաշնակցության Բյուրոյի կողմից<sup>79</sup>: Դաշնակցականները, իրենց հերթին, ինչպես նշել է Կ. Սասունին, գտել են, որ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը Թուրքահայաստանի մեջ գործող միակ կուսակցությունն է: Իսկ համագումարին մասնակցող մյուս քաղաքական ուժերը, հակառակ դրան, ցանկացել են դաշնակցականներին հավասար տեղ գրավել Արևմտահայ խորհրդում<sup>80</sup>:

Արևմտահայ խորհրդի ընտրության կարգի և կազմի շուրջ երկու խմբավորումների միջև ծավալվել է բավական սուր պայքար: Երկու օրվա թեժ քննարկումներից հետո համագումարը որոշել է Արևմտահայ խորհուրդը ընտրել Արևմտյան Հայաստանը ներկայացնող պատգամավորներից՝ նահանգական ներկայացուցչական սկզբունքով: Թե ինչպիսի իրավիճակ էր ստեղծվել համագումարում, երևում է Գ. Հայկունու հուշերի հետաքրքրական մի դրվագից: «Արամ փաշայի իմ հասցեին ուղղված սպառնալիքի դեմ բորբոքված,- գրել է Գ. Հայկունին,- ոտքի կանգնեց համագումարի պատվավոր նախագահ Անդրանիկը և ներշնչեց դաշնակցականներին, որ ոչ ոք չհամարձակվի խանգարել Հայկունու ճառը և կամ սպառնալ նրան»<sup>81</sup>: Ըստ Գ. Սուրենյանի՝ Ա. Մանուկյանը, համագումարում փորձել է թելադրել իր կամքը՝ ձգնելով համագումարում ընտրվելիք թուրքահայ ղեկավար մարմնի մեջ խցկել դաշնակցականներ<sup>82</sup>:

Անդրանիկի կողմնակիցները՝ օգտագործելով Արևմտահայ 1-ին համագումարում վառ արտահայտված հատվածականության երևույթը, պայքարել են դաշնակցական բլոկի առաջադրված թեկնածուների դեմ: Արդյունքում Արևմտահայ խորհրդի կազմում չի ընտրվել ճանաչված ազգային-քաղաքական, պետական գործիչ, սակայն ծագումով արևելահայ, Արամ Մանուկյանը: «Արամին չուզեցին ընտրել,- գրել է Վ. Փափազյանը,- որովհետև ծագումով թիրքահայ չէր...: Մարդ մը, որ իր գիտակցական տարիքէն նուիրուեցաւ թիրքահայ դատին և յեղափոխական թափով ու մոլեռանդօրէն՝ նետուեցաւ անոր ազատագրական գործին, կրեց անհուն հոգեկան և ֆիզիքական տառապանք այդ ժողովուրդին համար. բայց ... ծագումով իրենցմէ չը համարուեցաւ - անհեթեթ և անարդար էր»<sup>83</sup>: Նկատի ունենալով նույն Վ. Փափազյանի՝ Արևմտահայ խորհրդի և բյուրոյի նախագահ ընտրելու փաստը, վստահաբար կարելի է պնդել, որ Արևմտահայ խորհրդի կազմում Արամի չընտրվելու հիմնական պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ համագումարում վերջինս ղեկավարել է դաշնակցական բլոկը, փաստորեն հանդես գալով որպես արևելահայերի մենաշնորհը դարձած դաշնակցական ղեկավար մարմնի՝ Արևելյան Բյուրոյի քաղաքականությունը մարմնավորող հասարակական-քաղաքական գործիչ:

Թեժ պայքարի արդյունքում Արևմտահայ համագումարն ընտրել է 15 անդամից և 10 փոխանորդից բաղկացած Արևմտահայ խորհուրդ<sup>84</sup>: Արևմ-

79 Տե՛ս Ավետեան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեն և Ջօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 176:

80 Տե՛ս Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, էջ 138-139:

81 ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 4, գ. 24, թ. 17:

82 Սուրենյան Գ., Ինչնո՞ գօր. Անդրանիկ հեռացավ Հ. Բ. Դաշնակցութիւնէն, Կ. Պոլիս, 1920, էջ 8:

83 Փափազեան Վ., Իմ յուշերը, էջ 441:

84 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 8 հունիսի, 1917, N 119:

տահայ խորհրդի անդամ են դարձել արևմտահայ հասարակական-քաղաքական և ռազմական հետևյալ գործիչները՝ Անդրանիկը (Ա. Օզանյան), Սմբատը (Ս. Բորոյան), Հ. Գալիկյանը, Ա. Դարբինյանը, Զապել Եսայանը, Ա. Թերզիբաշյանը, Գ. Հայկունին, Հ. Մանուկյանը, Լ. Շանթը, Վ. Պապիկյանը, Բժիշկ Խ. Բոնապարտյանը, Կ. Սասունին, Սեպուհը (Ա. Ներսիսյան), Հ. Տեր-Զաքարյանը, Վ. Փափագյանը: Արևմտահայ խորհրդին կից կազմակերպվել են կրթական, որբախնամ, առողջապահական, պարենավորման, իրավական օգնության, աշխատանքի և տեղեկատվության հանձնախմբեր<sup>85</sup>: Համագումարը նաև ընտրել է հինգ հոգուց բաղկացած վերստուգիչ մարմին:

Համագումարի ընթացքում երկու խմբավորումների կողմից միմյանց նկատմամբ առանձին դեպքերում դրսևորած անհաղորժողական վերաբերմունքը հանգեցրել էր նրան, որ կրքերը չէին հանդարտվել նույնիսկ համագումարի ավարտից հետո: Անհանդուրժողականության մթնոլորտի վառ վկայությունն է հանդիսացել Արևմտահայ 1-ին համագումարի աշխատանքներն ավարտելու կապակցությամբ Երևանի ձմեռային ակումբում ճաշկերույթի ժամանակ Անդրանիկի և Արամի միջև տեղի ունեցած միջադեպը<sup>86</sup>: Արդյունքում՝ համագումարի նախօրյակին փոխադարձ փոխհարաբերություններում տեղ գտած անվստահությանը համագումարից հետո գումարվել է անհանդուրժողականությունը և միմյանց նկատմամբ անբարյացկամ վերաբերմունքը՝ դրանից բխող սառնությամբ, խորթությամբ ու անտարբերությամբ:

Այսպիսով, Արևմտահայ 1-ին համագումարում՝ հայ իրականության մեջ առաջին անգամ հրապարակավ ի հայտ եկավ օբյեկտիվորեն գոյություն ունեցող հատվածականության երևույթը և դրա վրա հիմնված հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների փոխհարաբերություններում առկա հակասությունները: Արևմտահայ փախստականների նկատմամբ արևելահայ քաղաքական, բարեգործական ղեկավար շրջանակների կողմից հովանավորչական, խնամակալական վերաբերմունքից ձերբազատվելու, իր հետագա ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու հայ ժողովրդի արևմտահայ հատվածի վճռականության փաստը մարմնավորող խմբավորումը՝ Անդրանիկի ղեկավարությամբ, քաղաքական լուրջ հայտ էր ներկայացրել: Հրապարակային այդ հայտը համագումարի ընթացքում հանդիպել է հայ իրականության մեջ ղեկավար դիրք ձեռք բերած ՀՅ Դաշնակցության դիմադրությանը, ինչը երկու կողմերի փոխհարաբերություններում առաջ է բերել խորթության և սառնության զգացողություն, իսկ հետագայում հանգեցրել միմյանց նկատմամբ անտարբեր և անբարյացկամ վերաբերմունքի:

## 5. Հատվածական գործելակերպը 1917 թ. երկրորդ և 1918 թ. առաջին կեսին

1917 թ. օգոստոսի սկզբին Արևմտահայ խորհուրդն իր կազմից ընտրել է 5 հոգուց բաղկացած գործադիր մարմին՝ Արևմտահայ բյուրո, որում ընդգրկվել են Վ. Փափագյանը (նախագահ), Կ. Սասունին, Հ. Գալիկյանը,

85 Տե՛ս Փափագեան Վ., Իմ յուշերը, էջ 440:

86 Տե՛ս Թերզիպաշեան Ա., Նույաբ, Փարիզ, 1939, էջ 154:

Ա. Դարբինյանը և Ս. Գյուլբենկյանը<sup>87</sup>: Արևմտահայ բյուրոյին վերապահվել է արևմտահայ գործերի ղեկավարությունը, այդ թվում համագումարի և Արևմտահայ խորհրդի որոշումների իրականացումը: Արևմտահայ բյուրոյին կից կազմվել են հատուկ հանձնախմբեր՝ կրթական, խնամատարական, նպաստամատույց, առողջապահական և, այսպես կոչված, «հարաբերական»՝ հայ մարմինների և բարեգործական կազմակերպությունների, ռուսական քաղաքացիական և ռազմական իշխանությունների հետ կապերն իրականացնելու համար: Յուրաքանչյուր հանձնախումբ ուներ իր առանձին գրասենյակը՝ սակավաթիվ արևմտահայ պաշտոնյաներով: Արևմտահայ բյուրոյի մասնաձյուղեր են ստեղծվել Արևմտյան Հայաստանի գրավված վայրերում, ինչպես նաև Այսրկովկասի և Հյուսիսային Կովկասի այն վայրերում, որտեղ կային արևմտահայ փախստականների սովորական գնդեր: Այսպես տարածվելով՝ արևմտահայ գործադիր մարմինը, ինչպես վկայել է Վ. Փափագյանը, «հետզհետե իր ձեռքը ամփոփեց բովանդակ թիրքահայության հանրային ղեկավարությունը և դարձաւ տեսակ մը ժամանակաւոր կառավարութիւն»<sup>88</sup>: «Մի տեսակ արտահոգային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով, - գրել է Ս. Վրացյանը, - Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդեն պատրաստ էր<sup>89</sup>»:

Անդրանիկի «Հայաստան» թերթի շուրջ նոր ձևավորված արևմտահայ փախստականների հասարակական-քաղաքական հոսանքի ակներև ազդեցության տակ է գտնվել նորակազմ Արևմտահայ խորհրդի մի մասը և, հատկապես՝ հետագայում վերջինիս կազմից ձևավորված Արևմտահայ բյուրոն: «Արևմտահայ նորակազմ Խորհուրդին մեջ արդէն կային տարրեր, որոնք կ'ընդվզէին ռուսահայերուն դէմ, - վկայել է Վ. Փափագյանը, - իբր թէ անոնք «ինքնակոչ հովանաւորի» դեր ստանձնած լինէին և իրենց ձեռքը ամփոփել ուզէին արևմտահայերու քաղաքական ձակատագիրը»<sup>90</sup>: Արևմտահայ խորհուրդն իր ազդեցության տակ դնելու ՀՅ Դաշնակցության Բյուրոյի ջանքերն անհաջող անցան, «որովհետև անոր կազմին մեջ կային թրքահայ երիտասարդ մտավորականներէ ամենէն ուժեղները, ինչպես Հակոբ Տեր-Ջաքարյան, Հրանդ Գալիկյան, Ժիրայր Միրզախանյան և ուրիշներ»<sup>91</sup>, - գրել է Գ. Սուրենյանը: Միաժամանակ, արևմտահայ ազգային-քաղաքական ղեկավարների մի մասը որքան միջհատվածական հարաբերություններում անհանդուրժող և ըմբոստ է եղել արևելահայ ղեկավար քաղաքական և բարեգործական շրջանակների նկատմամբ, այնքան միմյանց նկատմամբ հանդուրժողական և փոխադարձ հարգալից: «Հակառակ անոր, որ Արևմտահայ Խորհուրդը իր մեջ կ'ամփոփէր թիրքահայ կուսակցութիւններու բոլոր հատուածները, չէմ յիշեր անգամ մը իսկ, որ անոնց մէջ հակամարտութիւններ, անհարթելի տարակարծութիւն կամ կուսակցական միակողմանի նեղմիտ և զարտուղի քայլեր կամ մեքենայութիւններ տեղի ունենա-

87 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 25 օգոստոսի, 1917 թ., N 179:

88 Փափագեան Վ., Իմ յուշերը, էջ 440:

89 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 33:

90 Փափագեան Վ., Իմ յուշերը, էջ 446:

91 Սուրենեան Գ., Ինչո՞ւ գոր. Անդրանիկ հեռացավ Հ. Յ. Դաշնակցութիւնէն, Կ. Պոլիս, 1920, էջ 10:



յին»<sup>92</sup>,– գրում է իր հուշերում Վ. Փափազյանը:

Նման պայմաններում բավականին երկիմաստ վիճակում է գտնվել արևմտահայ բոլոր գործադիր մարմինների անփոփոխ նախագահ ճանաչված, արևմտահայ դաշնակցական գործիչ, ծագումով արևելահայ Վ. Փափազյանը: «Իմ վիճակն շատ փափուկ էր՝ «հակաարևելականները» ինձի կը համարեին ռուսահայ (մասամբ այդ պատճառով կը զգուշանայի իմ արտահայտություններու մեջ),– գրել է նա իր հուշերում,– Սյուս կողմէ սակայն, դարձած էի կերպով մը օղակը երկու հատվածներու»<sup>93</sup>: Հանդուրժողական կեցվածք ունեցող հասարակական–քաղաքական գործիչ լինելու հանգամանքը հանգեցրել էր նրան, որ Վ. Փափազյանը ընդունելի է եղել արևմտահայ գործադիր մարմիններում ներկայացված բոլոր կողմերի համար:

Արևմտահայ գործադիր մարմիններում իր լիակատար քաղաքական ազդեցությունը հաստատելու գործում հաջողության չհասնելով՝ ՀՅ Դաշնակցությունը որդեգրել էր այդ մարմինների գործունեության շրջանակները զուտ գաղթականական գործերով սահմանափակելու քաղաքականություն: Այդ քաղաքականության գաղափարական հիմնավորումն առկա է Արևմտահայ խորհրդի անդամ և Արևմտահայ 1-ին համագումարից անմիջապես հետո՝ մայիսի 11-ին Երևանում հրավիրված ՀՅ Դաշնակցության արևմտահայ հատվածի շրջանային ժողովի մասնակից Կ. Սասունու մոտ: Անդրադառնալով Կովկասում ապաստանած արևմտահայ փախստականներին՝ նա այն կարծիքն է հայտնել, որ նրանք, զբաղված լինելով միայն ապրուստի միջոցների հայթաթման խնդիրներով, ունեին լոկ գաղթականական հոգեբանություն<sup>94</sup>:

Պատահական չէ, որ ՀՅ Դաշնակցության վերոնշյալ շրջանային ժողովի ընդունած որոշմամբ նպատակահարմար է համարվել աջակցել Արևմտյան Հայաստանի տեղական բնակչության կողմից ընտրված վարչություններին: Արևմտյան Հայաստանում կուսակցության քաղաքականության մասին ՀՅԴ արևմտահայ հատվածի շրջանային ժողովի այդ որոշման մեջ դաշնակցականներն ընդհանրապես չեն անդրադարձել կուսակցության կողմից նախատեսվող քաղաքական գործընթացներում Արևմտահայ խորհրդին ներգրավելու, առավել ևս դրանցում վերջինիս հետ համագործակցելու հարցերին<sup>95</sup>:

Մինչդեռ Արևմտահայ 1-ին համագումարի միաձայն ընդունած բանաձևով որպես արևմտահայության առջև ծառայած առաջնահերթ ազգային–քաղաքական նպատակ էր ճանաչվել Հայրենիքի վերաշինության խնդիրը և ընդունվել էր որոշում, որով նախատեսվել է ընտրել վարչաքաղաքական հանձնաժողով՝ Արևմտյան Հայաստանի բարեփոխությունների ծրագիրը մշակելու համար: Միաժամանակ համագումարի ընդունած վարչաքաղաքական բանաձևում նշվել է. «1) անկախ ապագայի համար քաղաքական և իրավական սկզբունքներեն, աչքի առաջ ունենալով միայն տեղական առանձնահատուկ պայմանները, ստեղծել տեղական վարչական կազմա–

92 Փափազյան Վ., Իմ յուշերը, էջ 443:

93 Տե՛ս նույն տեղում:

94 Տե՛ս Մասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914–1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, էջ 129:

95 Տե՛ս «Աշխատանք», Եր., 31 մայիսի 1917 թ., նույնը տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 16 հունիսի, 1917 թ.:

կերպություններ՝ բնիկ տարրերու մասնակցությամբ, որոնք պետք է ընտրվեն ժողովրդական ընտրությամբ, 2) հիմնել տեղական դատարաններ և 3) ապահովել հայության գոյությունը. ա) ընձեռել ինքնապաշտպանության հնարավորություն, բ) կազմակերպել միլիցիա»<sup>96</sup>: Ինչպես տեսնում ենք, Արևմտահայ համագումարը, հետագայում նաև արևմտահայ գործադիր մարմինները, չեն սահմանափակվել միայն գաղթականական գործերով, այլ փորձել են փախստականների առջև ծառայած հիմնախնդիրներին լուծումներ տալով՝ հող նախապատրաստել հայրենիք վերադառնալու և ազատ ու անկախ Հայաստանում իրենց հետագա ճակատագիրը կերտելու արևմտահայերի հիմնական ազգային-քաղաքական նպատակն իրագործելու համար: Արևմտահայ 1-ին համագումարի որոշումների վրա հիմնվելով՝ Արևմտահայ խորհուրդը և Բյուրոն բնականաբար չէին կարող ընդունել ՀՅ Դաշնակցության քաղաքականությունը, ինչը հանգեցրել էր միջհատվածական հակասությունների հետագա սրմանը:

Դեռևս 1917 թվականի հունվարին, Թիֆլիսի Հայոց Ազգային բյուրոյի նիստերից մեկում ՀՅԴ առաջնորդներից Ստեփան Ջորյանը (Ռոստոմ) հանդես էր եկել որպես արևմտահայերի և արևելահայերի խնդիրների տարանջատման կողմնակից: Նա գտնում էր, որ այդ «երկու խնդիրներն ամփոփելով մեկ մարմնի մեջ – դա կլինի զենք հենց մեր դեմ»<sup>97</sup>: «Մյուս կատարուած էր սկիզբէն, երբ հիմնարկութիւններու կամ պաշտօններու բաշխման մէջ, Դաշնակցութիւնը, փափկանկատութեամբ սը կարծես, ղեկավարուած էր արեւմտահայերու և արեւելահայերու անջատ մասնակցութեան գաղափարով, կարծես միեւնոյն շաղախէն չէինք կամ նոյնը չէին մեր նպատակը և միջոցները»<sup>98</sup>, – գրել է Վ. Փափագյանը: Վ. Փափագյանի կողմից նման դիրքորոշումը սեփական կուսակցության «փափկանկատութեամբ» բացատրելը, ի հարկե, հիմնավոր չէ: Իսկ ինչ վերաբերում է նպատակներին և միջոցներին, ապա անկասկած դրանք տվյալ ժամանակաշրջանում իրոք տարբեր են դիտարկվել:

Ինչպես ՀՅ Դաշնակցությունը, այնպես էլ մյուս բոլոր հայկական քաղաքական կուսակցությունները և հոսանքները տվյալ ժամանակաշրջանում Հայկական հարցում որդեգրել էին հետևյալ քաղաքականությունը՝ թուրքական բռնատիրությունից Արևմտյան Հայաստանի ազատագրում և այնտեղ անկախ հայկական պետության կազմավորում, իսկ Ռուսաստանի կազմում մնացող Արևելյան Հայաստանում՝ այս կամ այն ձևի ու ծավալի ինքնավարության հաստատում<sup>99</sup>: Այդ քաղաքական դիրքորոշումն ուներ իր պատմական ակունքները և օբյեկտիվորեն բխում էր ստեղծված միջազգային և ներքին ռազմաքաղաքական դրությունից: Դրանով իսկ ամրագրվել են հայ ժողովրդի երկու հատվածների համար տարբեր ազգային-քաղաքական նպատակներ և իդեալներ: Այդ տարբեր ազգային-քաղաքական նպատակների իրականացման միջոցներից մեկն էլ ՀՅ Դաշնակցությունը տեսել է նրանում, որ պետք է ձևավորվեն առանձին արևելահայ և արևմտա-

96 ՀԱԱ, ֆ. Պ-32, ց. 1, գ. 12, թ. 160:

97 Տես ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 111, թ. 82:

98 Փափագեան Վ., Իմ յուշերը, էջ 446-447:

99 Տես Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Եր., 1997, էջ 182-260:

հայ ղեկավար մարմիններ ու դրանցից յուրաքանչյուրի ենթակայությամբ, միմյանցից տարանջատ գործող գրասենյակներ, հիմնարկություններ, հաստատություններ, կազմակերպություններ:

Վերոնշյալ քաղաքականությամբ է պայմանավորված տարանջատ արևելահայ և արևմտահայ ազգային ղեկավար մարմինների և դրանց ենթակայությամբ տարաբնույթ հիմնարկությունների ստեղծումը ու աշխատանքների կազմակերպումը: Դրանով է բացատրվել նաև Թիֆլիսում սեպտեմբերի վերջին – հոկտեմբերի սկզբին անցկացված արևելահայ համագումարում ընտրված Հայոց ազգային խորհրդի գործելակերպը: «Ազգային Խորհուրդի կազմութենէն յետոյ և մինչև վերջ, իրարմէ գրեթէ կտրուած էինք ու անտեղեակ: Տարօրինակ և ցուալի առանձնութիւն մը...: Մէկ թէ երկու անգամ միայն, մեզի հրաւիրած էին իրենց նիստին, իսկ իրենցմէ և ոչ մէկ հոգի ոտք չկոխեց արևմտահայ պիւրոյի գրասենեակը»<sup>100</sup>, – վկայել է Արևմտահայ խորհրդի և բյուրոյի նախագահ Վ. Փափագյանը: Սրանով նա հակադրվել է Ս. Վրացյանի այն կարծիքին, թե իբր՝ «ընդհանուր բնույթ կրող բոլոր կարևոր հարցերում Ազգային խորհուրդը և Արևմտահայ բյուրոն գործում էին համախոհ ու համերաշխ, մասավանդ, ձակատի պաշտպանության գործում»<sup>101</sup>: Արևելահայ և արևմտահայ ազգային խորհուրդների միմյանց հետ կապերի մասին «Մշակի» թղթակցի հարցին Անդրանիկը պատասխանել է, որ երկու խորհուրդների միջև կանոնավոր հարաբերություններ չկան, առկա են միայն առանձին կապեր այն դեպքերում, երբ պետք է լինում փրկել գործը: Իսկ արևելահայ Ազգային խորհրդի հետ ունեցած իր անձնական հարաբերությունների մասին հարցին Անդրանիկը կտրուկ պատասխանել է, որ ինքն այդ մարմնի հետ ոչ մի կապ չի պահպանում, բացի առանձին մարդկանց հետ զուտ անձնական կարգի հարաբերություններից<sup>102</sup>:

Այնուամենայնիվ, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը համազգային մարմին դառնալու հավակնություն է ունեցել: Այդ հավակնությունն արևմտահայ փախստականների ղեկավարների մի մասի համար, ինչպես նշել է Անդրանիկը, նորություն չէր և այդ երևույթի արմատները շատ խորն են եղել<sup>103</sup>: Հայոց ազգային խորհրդի կողմից այդ հավակնության իրագործման ուղղությամբ ձեռնարկված հատուկենտ քայլերը հանդիպել են Արևմտահայ խորհրդի և Բյուրոյի առանձին անդամների հակազդեցությանը: Արդյունքում, ինչպես նշել է Վ. Փափագյանը, ձևավորվել է Հայոց ազգային խորհրդի «պաղ ու անտարբեր վերաբերմունքը դէպի Արևմտահայ խորհուրդը» և «աստիճանաբար՝ հոգեւին և գործունէութեամբ՝ կարծես անջատուեցանք, աշխարհագրականապէս տեղականացանք՝ հեռացանք իրարմէ. հանրային մարզերուն մէջ մէկզմէկէ դարձանք անտեղեակ»<sup>104</sup>:

Մինչդեռ Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով Ժամանակավոր կառավարությունը տապալվելուց հետո Կովկասյան ռազմաճակատում իրավիճակը փոխվել էր. սկսվել էր ռուս զինվորականության

100 Փափագեան Վ., Իմ յուշերը, էջ 445:

101 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 52:

102 Տե՛ս Андраник Озаян, Документы и материалы, «Вестник архивов Армении», N 1(89)-2(90), док. N102, с. 253:

103 Տե՛ս նույն տեղում, թ. 254:

104 Փափագեան Վ., Իմ յուշերը, էջ 446, 447:

զանգվածային դասալքությունը: 1917 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված Երզնկայի զինադադարը ոչ միայն չէր թուլացրել այդ գործընթացը, այլ արագացրել էր Կովկասյան ճակատի կազմալուծումը: Առաջնահերթ էր դարձել ռազմաճակատի պահպանության նպատակով հայկական ազգային զորամիավորումներից դատարկվող դիրքերը փակելու խնդիրը:

Նման տագնապալի պայմաններում Թիֆլիսի նորաստեղծ Հայոց ազգային խորհուրդը Ռուսաստանի քաղաքացիական և ռազմական իշխանությունների հովանավորությամբ շարունակում էր արևելահայերից կազմավորվող Հայկական բանակային կորպուսի ձևավորման գործընթացը<sup>105</sup>: Ազգային զորամասեր ձևավորելու գործընթացները հավանության են արժանացել ինչպես ռուսական իշխանությունների, այնպես էլ դաշնակից պետությունների կողմից: Այդ խնդրում դաշնակից պետությունների պատրաստակամության մասին էր վկայում 1917 թ. դեկտեմբերի 5-ին ԱՄՆ-ի պետական քարտուղար Լանսինգին հյուպատոս Սմիթի ուղարկած հեռագիրը, որով վերջինս խորհուրդ էր տալիս իր կառավարությանը՝ այդ նպատակով մեկ միլիոն դոլար տրամադրել հայերի օգնության կոմիտեին<sup>106</sup>:

Իր հերթին Արևմտահայ Բյուրոն Թիֆլիսում հրավիրել էր արևմտահայ ներկայացուցչական խորհրդակցություն: Արևմտահայ մարտական ուժերը կազմակերպելու նպատակով այստեղ որոշվել է՝ ա) ստեղծել հատուկ գործադիր մարմին՝ ապահովության խորհուրդ, բ) բոլոր արևմտահայերի համար հայտարարել պարտադիր զորակոչ, գ) կազմել 15-20 հազար արևմտահայ զինվորներից բաղկացած առանձին զորամաս, դ) վերջինս ենթասպայական կադրերով ապահովելու նպատակով Թիֆլիսում բացել համապատասխան դպրոց<sup>107</sup>: Արևմտահայ ռազմական ուժերը կազմավորելու մասին խորհրդակցությունում ընդունված որոշումներն իրագործելու, Արևմտյան Հայաստանի գրավված տարածքների պաշտպանությունը կազմակերպելու նպատակով ձևավորվեց «տեսակ մը թուրքահայ կառավարություն»՝ Արևմտահայ ապահովության խորհուրդ, «տալով անոր իրաւուսութիւն գործօն մասնակցութիւնը բերելու Թիւրքահայաստանի և Թիւրքահայերու պաշտպանութեան»<sup>108</sup>: Ապահովության խորհրդի նախագահ է ընտրվում Վ. Փափագյանը, անդամներ՝ Սեպուհը, Կ. Սասունին, Ա. Թերզիբաշյանը, Հ. Տեր-Ջաքարյանը, Ժ. Միրզախանյանը, Հ. Գալիկյանը, Հ. Հակոբյանը<sup>109</sup>: Ապահովության խորհրդի աշխատանքները կազմակերպելու համար հիմնվեցին զորահավաքի, զինվորների ընտանիքների խնամատարական, առողջապահական, վիճակագրական, հաշվապահական դիվաններ և գործավարության գրասենյակ<sup>110</sup>:

Կովկասյան ռազմաճակատում հայկական զորամիավորումների կազմակերպման գործը, ինչպես և արևմտահայ փախստականների հետ կապված

105 Տե՛ս **Նազարյան Ա.**, Հայկական զորամիավորումների կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Եր., 1999, էջ. 149-176:

106 Տե՛ս Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ընդլուծից և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 1960, էջ 144:

107 Տե՛ս **Չելեպյան Ա.**, Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, էջ 382:

108 **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, էջ 452:

109 Տե՛ս **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, էջ 147:

110 **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, էջ 455:

նախորդ այլ ձեռնարկումներ, նույնպես իրականացվել են իրարից տարանջատ՝ հատվածական սկզբունքի հիման վրա: **Փաստորեն միջհատվածական հարաբերություններում վերոնշյալ հանգամանքները և գործոնները հանգեցրել էին նրան, որ հայ ժողովրդի երկու հատվածների համար թուրքական գորքերի ներխուժման՝ իր կանխատեսելի հետևանքներով վտանգի պայմաններում էլ, երկրի և ժողովրդի պաշտպանության գործը կազմակերպելու նպատակով չստեղծվեց համազգային միասնական մարմին:** Առանձին արևմտահայ կանոնավոր գորամիավորումի կազմակերպումը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Փարիզից ուղարկված հեռագրով Պողոս Նուբարն Արևմտահայ խորհրդին հայտնել է, որ եթե թուրքահայերն իրենց սեփական ուժերով պաշտպանեն Թուրքահայաստանի սահմանները, ապա դաշնակիցները կձանձեն նրանց անկախությունը և կպաշտպանեն նրանց<sup>111</sup>:

Երբ Արևմտահայ երկրապահ դիվիզիայի հրամանատարի պաշտոնում արևմտահայ Ապահովության խորհրդի կողմից առաջադրվեց Անդրանիկի թեկնածությունը, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդն առարկեց այդ թեկնածությանը՝ գտնելով, որ նրա ռազմական գիտելիքները և ունակությունները չեն համապատասխանում այդ պաշտոնին: Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նման դիրքորոշումը ևս մի սեպ էր խրել արևմտահայ-արևելահայ ղեկավար շրջանակների փոխհարաբերություններում, նրանց միջև գոյություն ունեցող անհանդուրժողականության և անվստահության մթնոլորտն ավելի էր շիկացել: Չնայած Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի առարկություններին, Արևմտահայ ապահովության խորհրդի պնդմամբ, այդ երկու մարմինների միացյալ նիստում որոշվել է արևմտահայ երկրապահ դիվիզիայի հրամանատարի պաշտոնի համար հաստատել Անդրանիկի թեկնածությունը<sup>112</sup>:

Ապահովության խորհրդի այս ընտրության համար ոչ պակաս կարևոր դեր էին խաղացել նաև այլ հանգամանքներ: Մի կողմից դեռևս 1917 թ. մայիսի 29-ին Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոս Ֆ. Սմիթի հետ կայացած հանդիպման ժամանակ հայտարարվել էր, որ դաշնակից պետությունների կողմից ընդունվել է որոշում 30 հազարանոց արևմտահայ զորախմբի ձևավորման մասին<sup>113</sup>: Ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա՝ երեք օր անց հայ սպաների մասնակցությամբ կազմվել ու ներկայացվել էր արևմտահայ կանոնավոր զորախմբի կազմավորման, ռազմական գործողությունների և ծախսերի նախահաշվի ծրագիրը<sup>114</sup>: 1917 թ. դեկտեմբերի կեսին Անդրանիկի հետ ունեցած հանդիպման ժամանակ Կովկասում անգլիական միսիայի պետ գեներալ Շորը հայտնել էր դաշնակից պետությունների կողմից նշված ծրագրի ընդունման մասին: Ռուսական կողմը պետք է ապահովեր այդ զորախումբը զենքով, զինամթերքով և հանդերձանքով, իսկ դաշնակից պետությունները՝ ամերիկյան հյուպատոսի միջոցով տրամա-

111 Տե՛ս Թ-Էրզիպաշեան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 310:

112 Տե՛ս Андраник Озаян, Документы и материалы, «Вестник архивов Армении», N 1(89)-2(90), док. N90, с. 236-238.

113 Տե՛ս Մարմարեան Ա., Զօր. Անդրանիկ և իր Պատերազմները, Կ. Պոլիս, էջ 262-263:

114 Տե՛ս Զօր. Անդրանիկի Կովկասեան ձակատի պատմական օրագրութիւնը, 1914-1917, Պոսթոն, 1924, էջ. 58-59:

դրելու էին անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Մյուս կողմից՝ հատկանշական է այն իրողությունը, որ չնայած Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի մի քանի անդամների ձեռնարկած քայլերին, Կովկասում անգլիական միսիայի պետ գեներալ Շորը՝ իր կառավարության հրահանգների հիման վրա միայն Անդրանիկին էր ճանաչել որպես տվյալ գործի պատասխանատու<sup>115</sup>: Այն մասին, որ խնդրի նյութական կողմն ապահովված է, Անդրանիկին Լոնդոնից հեռագրով հայտնել էր նաև Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը<sup>116</sup>: Շուտով Թիֆլիսում դաշնակից պետությունների ներկայացուցիչներն արևմտահայ գործնասի կազմակերպման համար ապահովության խորհրդին տրամադրեցին երկու միլիոն ռուբլի գումար<sup>117</sup>: Ինչպես տեսնում ենք, իրենց ազգային շահերից ելնելով, Անտանտի տերությունների ներկայացուցիչները նույնպես ցուցաբերել են հատվածական մտեցում:

Ստեղծված պայմաններում օրակարգում դրվել էր Արևմտյան Հայաստանում «կենտրոնական ազգային մի մարմին» ընտրելու և Արևմտյան Հայաստանի անկախության հռչակման խնդիրը: «Հայ ժողովուրդը, պայմաններու բերումով, մնացած էր իրական եւ իրավական տէրը Տաճկահայաստանի», - գրել է Կ. Սասունին և ապա շարունակել. «Այդ մթնոլորտի մէջ հասունացած էր Տաճկահայերու նոր համագումարի մը անհրաժեշտութիւնը: Թէ՛ երկրի եւ թէ՛ Կովկասի մէջ գոյութիւն ունեցող Տաճկահայ մարմինները համաձայն էին համագումար մը հրաւիրելու, որ պիտի գար պաշտոնապէս, յանուն տաճկահայերու, Տաճկահայաստանը հռչակել անկախ»<sup>118</sup>: 1917 թ. դեկտեմբերի 7-ի Ամերիկայի ՀՅԴ ԿԿ-ին ուղղված նամակում Ս. Վրացյանը գրել է, որ մտադրություն կար երկրում, օրինակ, Ալաշկերտում կազմել տաճկահայկական համագումարի պես մի բան և ընտրել երկրի համար կենտրոնական ազգային մարմին, որը երևան պետք է գա ամեն անգամ, երբ պետք լինի տաճկահայության ձայնը լսելի դարձնել<sup>119</sup>: Համագումարը նշանակված է եղել 1918 թ. մարտի 4-ին՝ Կարինում: Սակայն մինչ այդ՝ փետրվարի 27-ին թուրքական զորքերի կողմից Կարինի գրավմամբ և հետագա դեպքերի բերումով Արևմտահայ համագումարը տեղի չի ունեցել<sup>120</sup>:

Միջհատվածական հարաբերությունների սրման, փոխադարձ անվստահության մթնոլորտի մասին է վկայել նաև Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հերթական նիստերից մեկում՝ թուրքական առաջխաղացման պայմաններում, ձակատի պաշտպանության հարցի քննարկման ժամանակ տեղի ունեցած միջադեպը: Նիստին մասնակցել են նաև Արևմտահայ ապահովության խորհրդի անդամները: Օրակարգում՝ որպես գլխավոր, դրված է եղել Արևմտյան Հայաստանի պաշտպանության և այդ նպատակով Անդրանիկի և իր զորախմբի էրզրում մեկնելու կազմակերպման հարցը: Նկա-

115 Տե՛ս նույն տեղում, էջ 68:

116 Տե՛ս նույն տեղում, էջ 65:

117 Տե՛ս Փափազեան Վ., Իմ յուշերը, էջ 466:

118 Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, էջ 159, 159-160:

119 Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմության համար, Պէյրոս, 1962, էջ 259-260:

120 Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, էջ 160:

տի ունենալով արևելահայ և արևմտահայ գորամիավորումների կազմավորման գործի անավարտ լինելը, ինչպես նաև փոքրաթիվ հայկական գորաջոկատներով լայնածավալ Կովկասյան ճակատի պաշտպանության հետ կապված բազմաթիվ դժվարությունները, Հայոց ազգային խորհրդի ռազմական բաժանմունքի ղեկավար Ս. Մամիկոնյանը ներկայացրել է բավականին իրատեսական առաջարկություն՝ հայկական բոլոր գորաջոկատները հետ քաշել Ռուսաստանի նախկին սահմաններ և այդտեղ դիմագրավել թուրքական բանակին: Այս անգամ ևս չի հաջողվել նորմալ քննարկում կազմակերպել՝ առաջակության դեմ ցատումով առարկել է Անդրանիկը և արդյունքում այն չի ընդունվել:

Ստեղծված պայմաններում, երբ արևմտահայությունը դարձել էր «իրական եւ իրավական տէրը Տաճկահայաստանի»<sup>121</sup>, նման առաջարկն արևմտահայ ռազմաքաղաքական շրջանակների կողմից գնահատվել է որպես արևելահայ քաղաքական ուժերի և, հատկապես, ՀՅ Դաշնակցության կողմից ղեկավարվող Ազգային խորհրդի հերթական ոտնձգություն արևմտահայության նկատմամբ: «Լքել Մայր Հայաստանը...,- գրել է Ա. Չելեայանը,- Եւ այսպիսի ծանրակշիռ առաջարկ մը ... չէր կրնար անձնական բնոյթ ունեցած ըլլալ. այս շշմեցուցիչ առաջարկը հրապարակ գալէ առաջ շատ հաւանաբար ծեծուած էր Ազգային Խորհուրդի ղեկավար շրջանակին մէջ, իբրեւ գալիք ժողովի գլխատոր օրակարգ»<sup>122</sup>: Այս կասկածն բնավ անսխիմն չի եղել: Մինչ այդ, «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանը հնչեցրել է արևելահայ քաղաքական շրջանակների մի մասի այն դիրքորոշումը, որ «մենք՝ ռուսահայերս, Ռուսահայաստանի սահմանները կպաշտպանենք, իսկ թրքահայերը թող Թրքահայաստանի սահմանները պաշտպանեն», որին Անդրանիկը պատասխանել է. «Պահենք, միասին պահենք Թուրքահայաստանի սահմանները, որով պահած կըլլանք Ռուսահայաստանի սահմանները»<sup>123</sup>:

Մտահոգված լինելով արևմտահայ գաղթականության հետագա ճակատագրի նկատմամբ արևելահայ քաղաքական ուժերի անտարբերությամբ, արևմտահայերը գտել են, որ արևմտահայերի հիմնական ազգային-քաղաքական նպատակի՝ այսինքն Հայկական հարցի լուծումն ինչպես ՀՅ Դաշնակցությունը, այնպես էլ արևելահայ բոլոր ազգային քաղաքական ուժերը պետք է ընդունեն որպես առաջնային համազգային խնդիր: Դրա լուծումը անհրաժեշտ է իրականացնել միասնաբար, համախմբելով հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների բոլոր կարողությունները: «Պետք է վերացվի ռուսահայ ու թուրքահայ հարցը, պետք է փվվին այդ խրամատները և միացած պետք է դիմել թշնամու դեմ և այսպես կռվել», - ասել է Անդրանիկը<sup>124</sup>: Այդ ուղղությամբ որդեգրված գործելակերպում, իհարկե, էական էր հայ իրականության մեջ ամենաազդեցիկ դիրք ունեցող ՀՅ Դաշնակցության դերը: Սակայն վերջինս, արևմտահայ հատվածի ղեկավար շրջանակների հետ փոխհամաձայնեցված աշխատելու փոխարեն որդեգրել էին վերոնշյալ մոտեցումները՝ թուրքական գերակշիռ ուժերի հարձակման

121 Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, էջ 159:  
122 Տեն Չելեայան Ա., Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, էջ 390:  
123 Տեն Ասանուն Գ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, Վենետիկ, 1926, հատ. 3, (1901-1918), էջ 56:  
124 Տեն նույն տեղում:

պայմաններում փորձելով փրկել Հայաստանի գոնե մեկ հատվածը:

## 6. Հատվածականության վերացման քաղաքական նպատակի հայտարարումը Արևմտահայ 2-րդ համագումարում

1918 թ. մայիսի 26-ին, Անդրկովկասյան Սեյմի կազմալուծման արդյունքում, Անդրկովկասի դաշնային հանրապետությունը դադարեցրել էր իր գոյությունը: Միաժամանակ սկսվել էր Հայաստանի անկախացման գործընթացը: Այն իրականացվել է Թիֆլիսի կենտրոնական Հայոց Ազգային Խորհրդի կողմից: Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդը հանդիսացել է հայ ժողովրդի արևելահայ հատվածի ղեկավար ազգային-քաղաքական մարմինը: Հայաստանի Հանրապետության ստեղծման, նրա պետական կառավարման մարմինների ձևավորման գործընթացներին արևմտահայ փախստականները, նրանց ազգային և ռազմաքաղաքական ղեկավար մարմինները՝ Արևմտահայ և Ապահովության խորհուրդները չեն մասնակցել: Ապահովության խորհուրդն արդեն իսկ կազմալուծված էր, իսկ Արևմտահայ խորհուրդն իր անդամներով արևմտահայ փախստականների հետևից տեղափոխվել էր Հյուսիսային Կովկաս:

Արևմտահայերն ակնհայտ հատվածական վերաբերմունք են դրսևորել նորակազմ Հայաստանի իշխանությունների և նրա կողմից իրականացվող ձեռնարկումների նկատմամբ: «Հայաստանի Հանրապետության գոյության սկզբի շրջանում, արևմտահայությունը իրեն մեկուսացած էր պահում պետական կյանքից», - վկայում է Ս. Վրացյանը<sup>125</sup>: Ռուբենը նշում է, որ հանրապետության «նոր կազմակերպված կառավարությունը, որի պաշտոնյայից և գործառնությանց մեջ դեռ ևս իշխում էին ռուսական ոգին, օրենքն ու լեզուն, չէր կարողանում լայն ասպարեզ տալ թրքահայ տարրին պետական վարչաձևին մեջ, մի երևույթ, որ առավել ևս օգտագործվում էր հատվածական ձգտումներով տարված անհատների կողմից»<sup>126</sup>: Այդ վերաբերմունքը դրսևորվել է նրանով, որ պետական հիմնարկներում համեմատաբար քիչ արևմտահայ պաշտոնյաներ կային: Իսկ Արևմտահայ երիտասարդությունը՝ խուսափելով պարտադիր զորակոչից, «երբեմն ալ հակառակ էր կառավարությանը»<sup>127</sup>:

Հատվածականությունը, ըստ էության, խոչընդոտ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կայունության ապահովման, նրա ամրապնդան և հզորացման գործում: Նկատի ունենալով արևմտահայ փախստականների ռազմաքաղաքական ներուժը, հանրապետության իշխանությունները չէին կարող անտեսել նման վերաբերմունքը դեպի Հայաստանի Հանրապետությունը: Արևմտահայ փախստականները և հատկապես նրանցից կազմված զինված խմբերը՝ ինչպես հանրապետության ներքին կյանքն ապակայունացնելու, այնպես էլ հակառակը՝ կայունությունը ապահովելու առումով իրենցից ներկայացրել են լուրջ ներքաղաքական գործոն:

125 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 269:

126 Նույն տեղում, էջ 150-151:

127 Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. 7, էջ 150, Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 269:



Հայաստանի Հանրապետության իշխանությունների համար հատվածականության նման դրսևորումներն անխուսափելիորեն վերածվել են դժվարին լուծումներ պահանջող ներքաղաքական հիմնախնդրի: Արևմտահայ փախստականների առջև ծառայած հարցերին այս կամ այն չափով լուծումներ տալիս հանրապետության իշխանությունները ձգտել են ներգրավել նրանց երկրի ներքին կյանքին: Արևմտահայ փախստականների մեկուսացման հանգամանքը իշխանությունների համար զգալի վտանգ կարող էր ներկայացնել: Մի կողմից՝ լինելով միայն պետական սոցիալական օգնության սպառողներ, այսինքն՝ լոկ նպաստառուներ, արևմտահայ փախստականները ծանր բեռ էին փոքրածավալ, քայքայված տնտեսություն ունեցող հանրապետության համար: Մյուս կողմից՝ ինքնամփոփ, մեկուսացած վիճակում գտնվող արևմտահայ փախստականները, ընկնելով այս կամ այն հակապետական ուժերի ազդեցության տակ, կարող էին իրական վտանգ ներկայացնել երկրի կայունության համար<sup>128</sup>:

Անհրաժեշտ էր արևմտահայ փախստականներին դուրս բերել ներքաղաքական դաշտ, ճշտել վերջիններիս առաջնահերթ նպատակները և իդեալները, փորձել նրանց հետ սկզբնավորել միջհատվածական քաղաքական երկխոսություն: Այդ քաղաքական շփումների արդյունքում անհրաժեշտ էր հասնել հանրապետության առջև ծառայած ներքաղաքական կարևոր խնդիրներից մեկի՝ արևմտահայերին հանրապետության ներքաղաքական կյանք ներգրավելու խնդրի լուծմանը: Դա է պատճառը, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները, գիտակցելով հանդերձ արևմտահայերի համագումարի հատվածական բնույթը, կարևորել են նրա հրավիրման անհրաժեշտությունը: Հայաստանի Խորհրդի 1918 թ. տարեվերջյան նիստում ընդունվել է արևմտահայ համագումարի հրավիրման և անցկացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման մասին օրենք<sup>129</sup>: Նախարարների խորհրդի 1919 թ. փետրվարի 3-ի նիստում քննարկվել է նաև Արևմտահայ 2-րդ համագումարի կազմակերպիչ կոմիտեի՝ համագումարի բացմանը կառավարության ներկայացուցիչ ուղարկելու մասին հրավերը<sup>130</sup> և որոշվել «հանձնարարել Մինիստր-նախագահին կառավարության կողմից ներկա լինել Արևմտահայերի 2-րդ համագումարի բացմանը»<sup>131</sup>: Կառավարության նման հանձնարարականը խոսում է այն մասին, թե ինչպիսի նշանակություն է տվել հրավիրվող համագումարին հանրապետության ղեկավարությունը:

Արևմտահայ 2-րդ համագումարը հրավիրվել է աշխարհաքաղաքական մեծ փոփոխությունների պայմաններում: 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարի համաձայն՝ թուրքական զորամասերը հեռանում էին Արևելյան Հայաստանի տարածքից: Անտանտի պետությունների հաղթանակով ավարտված Առաջին աշխարհամարտից հետո Փարիզում (1919 թ. հունվար) հրավիրվել էր հաշտության վեհաժողով: Այստեղ Պողոս Նուբարի ղեկավարած ազգային պատվիրակությունն առաջ էր քա-

128 Տե՛ս **Հայրապետյան Կ.**, Հատվածականության հիմնախնդիրը Հայաստանի առաջին Հանրապետությունում, «ՎԷՄ» համահայկական հանդես, եր., 2013, N 2(42), էջ. 58-76:

129 Տե՛ս Հայաստանի Խորհրդի հաստատած օրենքները (1918-1919 թթ.), եր., 1919, էջ 37:

130 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Դ-199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 30:

131 ՀԱԱ, ֆ. Դ-199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 19:

շել Ազատ և Միացյալ Հայաստանի անկախության խնդիրը և կազմել Արևմտահայաստանի կառավարություն: Նման իրավիճակում արևմտահայ փախստականները, նրանց ղեկավար ազգային-քաղաքական շրջանակները, մեծ հույսեր էին փայփայում, որ մոտ ապագայում հնարավոր կլինի հայրենի երկիր վերադառնալ: Արևմտահայ համագումարի կազմակերպիչ կոմիտեի 1919 թ. հունվարի 1-ի «Արևմտյան Հայաստանի փախստական հայությանն» ուղղված կոչում նշվել են գումարվող համագումարի երկու հիմնական նպատակները՝ ա) արևմտահայ փախստականների քաղաքական իդեալների և նպատակների ձևակերպումը, բ) Արևմտյան Հայաստան ներգաղթի խնդիրը<sup>132</sup>:

Արևմտահայ 2-րդ համագումարը գործել է Երևանում 1919 թ. փետրվարի 6-ից 13-ը<sup>133</sup>: Փետրվարի 6-ին համագումարում ելույթով հանդես է եկել Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ. Քաջազունին՝ հայտարարելով «իր կառավարության ցանկությունը վերացած տեսնել այս համագումարով հայության հատվածական բաժանումը»<sup>134</sup>: Հայաստանի խորհրդի ներկայացուցիչ Ս. Վրացյանի խոսքը նույնպես հիմնականում վերաբերել է հատվածականության վերացման խնդրին<sup>135</sup>:

Արևմտահայ 2-րդ համագումարի առանցքը կազմող արևմտահայ գաղթականության քաղաքական դիրքորոշման հարցը մի քանի օրվա լուրջ, վիճարանություններով լի քննարկման առարկա է հանդիսացել: Առաջին և երկրորդ ընթերցմամբ կետ առ կետ քննելուց հետո Արևմտահայ 2-րդ համագումարը փետրվարի 12-ին ընդունել է քաղաքական բանաձև<sup>136</sup>: Արևմտահայ 2-րդ համագումարը՝ քննելով հայ ժողովրդի կացությունը, բանաձևի առաջին կետով սրտագին ողջունել և իր հերթին հայտարարել է Ազատ և Միացյալ Հայաստանի անկախությունը: Բանաձևի երկրորդ կետով համագումարն իր լիակատար վստահությունն է հայտնել «Ազատ և Միացյալ Հայաստանի Պողոս - Նուպար փառայի Անդրանիկ Դահլիճին»: Բանաձևի երրորդ կետով համագումարը հայտարարել է «իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մէկ միություն համագաղթին հատվածներու և երկրամասերու միավորությամբ»<sup>137</sup>: Բանաձևի չորրորդ կետով համագումարը պարտադրել է իր կողմից ընտրված Գործադիր Մարմնին՝ Պողոս Նուբարի «նախարարական դահլիճին հետ անմիջական հարաբերության մեջ մտնել՝ իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքներ, որոնք հարկավոր են Ազատ և Միացյալ Հայաստանի պետական գոյությունը հիմնավորելու համար»<sup>138</sup>: Միաժամանակ, հաջորդ՝ հինգերորդ կետով համագումարը պարտադրել է նույն Գործադիր Մարմնին «գործնական քայլեր անել Արարատ-

132 ՀԱԱ, ֆ. Պ-199, ց.1, գ. 23, մաս 1, թ. 31: Նույնը տես Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2004, էջ 293:

133 Տես Համառօտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, Թիֆլիս, Տպ. «Աշխատավոր», 1919, էջ 4-5:

134 Նույն տեղում, էջ 7, տես նաև «Աշխատանք», Եր., 11 փետրվարի 1919 թ., «Ժողովուրդ», Եր., 11 փետրվարի 1919 թ.:

135 Տես «Աշխատանք», Եր., 11 փետրվարի, 1919 թ.:

136 Տես Համառօտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, էջ 13-14:

137 Նույն տեղում, էջ 13:

138 Նույն տեղում:

յան Հանրապետության նախարարության և խորհրդարանի հետ Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը հայտարարելու և իր մասնակցությունը բերելու գոյություն ունեցող պետական և օրենսդրական հաստատություններու մեջ համազգային միությունը իրականացնելու համար»<sup>139</sup>:

Արևմտահայ 2-րդ համագումարի քաղաքական բանաձևի 5-րդ կետով ձևակերպված դիրքորոշումը կտրականապես մերժած ռամկավար պատգամավորները լքել են համագումարը՝ լինելով «ավելի հետևողական» «իրենց հակաարարատյան տրամադրություններով»: «Պետք էր կանգնել կամ Հայաստանի կամ Փարիզի տեսակետի վրա. ռամկավարները ընտրեցին վերջինը...»<sup>140</sup>, - գրել է Ս. Վրացյանը: Կամ Հայաստանի կամ Փարիզի տեսակետի վրա կանգնելու անհրաժեշտության մասին այդ մոտեցումը ինքը՝ Ս. Վրացյանը, անկասկած, փորձել է անցկացնել նաև Արևմտահայ 2-րդ համագումարում: Հակառակ Ս. Վրացյանի ու իր համախոհների և արևմտահայ ռամկավարների կողմից համագումարի պատգամավորների վրա երկուստեք իրականացված ճնշումների՝ Արևմտահայ 2-րդ համագումարը, որտեղ մեծամասնություն են կազմել արևմտահայ դաշնակցականները, միանշանակ չի կողմնորոշվել ո՛չ դեպի Փարիզը՝ ինա Պողոս Նուբարը, ո՛չ էլ դեպի Հայաստանի Հանրապետության իշխանությունները: Քաղաքական և պետական առումներով համազգային միասնության իրականացման նպատակով Արևմտահայ 2-րդ համագումարը ոչ միայն չի ընդունել այս հակադիր տեսակետները, այլև համագումարի քաղաքական բանաձևի 4-րդ և 5-րդ կետերով փաստորեն պարտադրել է նորընտիր Գործադիր Մարմին՝ այդ երկու կողմերի հետ էլ համագործակցել վերոնշյալ նպատակների իրականացման համար:

Արևմտահայ 2-րդ համագումարում իշխանության ներկայացուցիչները և նրանց համախոհները հատվածականության վերացման, Միացյալ Հայաստանի անկախության իրականացման համար որպես հենակետ են դիտարկել արդեն գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետություն՝ իր տարածքով, բանակով և կազմակերպված իշխանությամբ: «Ամբողջ իր ծավալով հայկական հարցի լուծման համար ելակետ մենք վերցրեցինք Հանրապետությունը, - ներկայացրել է հանրապետության իշխանությունների տեսակետը Հ. Քաջազունին, - Հանրապետության ամրապնդումը մենք հայտարարեցինք որպես մեր քաղաքական ծրագիր՝ բոլոր մնացած հայկական հողերը նրան հետագայում միացնելու համար»<sup>141</sup>: Եթե վերանանք համագումարում տեղ գտած միջհատվածական, միջկուսակցական հակասություններից, ապա այդ մոտեցումը, իհարկե, ավելի իրատեսական է ու զերծ հատվածականությունից:

Արևմտահայ 2-րդ համագումարի աշխատանքի վերջին օրը՝ փետրվարի 13-ին գաղտնի քվեարկությամբ ընտրվել է «Արարատյան Հանրապետության մեջ ապրող Արևմտահայ հատվածի «Գործադիր Մարմին»», որի կազմում էին Սմբատ Բորոյանը, Խաչատուր Բոնապարտյանը, Արմեն Սասունին, Գրիգոր Բուլղարացին, Վարազդատ Տերոյանը, Ռուբեն Դրամբյանը, Վահագն

139 Նույն տեղում, էջ 14:

140 Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 273:

141 ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 431, թ. 19:

Քրնոյանը, Վաղարշակ Հոխիկյանը և Արսեն Կիտուրը: Գործադիր մարմնի կարգավիճակը և իրավասության շրջանակները սահմանվել են նույն օրը համագումարում հաստատված «Կազմակերպչական բանաձևում»: «Այսպիսով, ստեղծվում էր մի նոր կառավարություն՝ «Արարատյան կառավարության» կողքին: Գործադիր մարմինը կազմակերպվեց պետական հիմունքներով՝ տալով իրեն մի տեսակ նախարարական դեր»<sup>142</sup>, - իրավացիորեն նշել է Ս.Վրացյանը:

Այսպիսով, նոր պայմաններում անդրադարձալով արևմտահայ փախստականների առջև ծառայած խնդիրներին, Արևմտահայ 2-րդ համագումարը դրսևորել է ազգային հատվածները և երկրամասերը պետական մեկ միության մեջ համախմբելու իր վճռական կամքը: Համազգային միությունը իրականացնելու համար պարտադրելով նորընտիր Գործադիր Մարմնին «իր մասնակցությունը բերելու» Հայաստանի Հանրապետության պետական և օրենսդրական մարմիններին, համագումարն առաջին էական քայլն է կատարել Հայաստանի Հանրապետության նկատմամբ արևմտահայ փախստականների վերաբերմունքի փոփոխման ուղղությամբ: Միաժամանակ, Արևմտահայ 2-րդ համագումարի ամբիոնից բարձրաձայն հնչեցվել է արևմտահայ փախստականների հարցում Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքականության հիմնական նպատակը՝ վերացնել հատվածականությունը:

## 7. Հատվածականության հաղթահարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության իշխանությունների քայլերը

Արևմտահայ 2-րդ համագումարում Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ, վարչապետ Հ. Քաջագունին և Հայաստանի Խորհրդի ներկայացուցիչ, պատգամավոր Ս. Վրացյանը համագումարի ամբիոնից բարձրաձայն հնչեցրին արևմտահայ փախստականների հարցում Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքականության հիմնական նպատակը՝ վերացված տեսնել հատվածականության երևույթը: Այդ նպատակին կարելի էր հասնել լուծելով Հայկական հարցը, որի լուծման ելակետը պետք է հանդիսանար տվյալ ժամանակաշրջանում Հայկական պետականության մարմնացումը հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը, նրա ամրապնդումը և հզորացումը: Հայաստանի Հանրապետության շուրջ հետագայում պետք է միավորվեին բոլոր մնացած հայկական հողերը: Այդ նպատակի իրագործումը եղել է Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքական ծրագիրը: Իհարկե, հանրապետության ամրապնդման գործում պետք է օգտագործվեր ինչպես ողջ արևմտահայության, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ապաստանած արևմտահայ փախստականների ներուժը: Սակայն հանրապետության իշխանությունների կողմից այդ քաղաքականությունն իր ամփոփ ձևակերպումը չէր ստացել ինչպես մինչև Արևմտահայ 2-րդ համագումարն ընկած ժամանակահատվածում, այնպես էլ նրան հաջորդած ամիսներին: Բնականաբար, գոյություն չի ունեցել նաև այդ քաղաքականության իրագործման

<sup>142</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 275:

ուղղված, ծրագրված գործունեություն:

Ինչպես Արևմտահայ 2-րդ համագումարից առաջ, այնպես էլ դրանից հետո հանրապետության իշխանությունները՝ հատվածականության վերացման ուղղությամբ իրականացրել են որոշակի քայլեր: Հայաստանի Հանրապետության գոյության հենց առաջին ամիսներից հանրապետական կանոնավոր բանակ արևմտահայ զինապարտների զորահավաքն առաջին քայլերից է եղել: Այս ուղղությամբ մյուս քայլը արևմտահայ առանձին առողջապահական, հանրակրթական հիմնարկների և հաստատությունների պահպանմանն ուղղված ֆինանսավորման մերժումն էր: Դրանով բացառվել է իրարից տարանջատ արևմտահայ և արևելահայ առողջապահական, հանրակրթական համակարգերի գոյությունը: Նման մոտեցումը կարող էր արևմտահայ փախստականներին մեկուսացնել երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքից: Ֆինանսական միջոցների սղության, ինչպես նաև հատվածականության վերացման պատճառներով պայմանավորված՝ հանրապետության իշխանություններն իրականացրել են այդ ձեռնարկումները:

Բայց նման քայլերը ծրագրված քաղաքականության արդյունք չեն եղել, այլ պարզապես հանդիսացել են օրակարգում դրված հարցերի լուծումներ՝ ուղղված պետության կայացմանն ու ամրապնդմանը, այդ թվում՝ հատվածականության հաղթահարմանը: Դրանք արևմտահայ փախստականների հիմնախնդրի հետ կապված, կամ էլ այս կամ այն հանգամանքների բերումով օրակարգում դրված, այդ թվում նաև արևմտահայ փախստականների ղեկավար շրջանակների կողմից բարձրացված և լուծումներ պահանջող հարցեր են եղել: Նույն գործելակերպը շարունակվել է նաև Արևմտահայ 2-րդ համագումարից հետո: Հանրապետության իշխանությունները ոչ թե ծրագրված գործունեություն են ծավալել հատվածականության հաղթահարման ուղղությամբ, այլ միայն այս կամ այն միջոցներով արձագանքել են դրա հետ կապված հարցերին:

Հայաստանի Հանրապետության իշխանություններին, անկասկած, լիովին չէին կարող գոհացնել Արևմտահայ 2-րդ համագումարի քաղաքական դիրքորոշումները: Հատկապես այն, որ համագումարը լիակատար վստահություն հայտնելով «Ազատ և Միացեալ Հայաստանի» Պողոս Նուբարի «Անդրանիկ Դահլիճին», պարտադրել է Գործադիր Մարմնին անմիջական հարաբերությունների մեջ մտնել Պողոս Նուբարի նախարարական դահլիճի հետ՝ իրականացնելու համար «քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքները», որոնք անհրաժեշտ են «Ազատ և Միացյալ Հայաստանի պետական գոյությունը հիմնավորելու համար»<sup>143</sup>: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը համագումարի փաստաթղթերում այդպես էլ մնաց լուրորպես «Արարատյան Հանրապետություն»: Չնայած դրան հանրապետության կառավարությունը քայլեր է ձեռնարկել համագումարում ընտրված Գործադիր Մարմնի հետ որոշակի գործնական հարաբերություններ հաստատելու նպատակով:

Այդպիսի հարաբերություններ հաստատելու գործում կարևոր հանգամանք է հանդիսացել Արևմտահայ Գործադիր Մարմնի ֆինանսավորումը

143 Տե՛ս Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, էջ 13:

Հայաստանի Հանրապետության գանձարանից իրականացնելու մասին Ա. Խատիսյանի որոշումը: Գործադիր Մարմինը «անգամ նյութական կողմով հետ չհնաց կառավարությունից. նախագահին նշանակեց վարչապետական ռժիկ, անդամներին՝ նախարարական՝ դրամը, իհարկե, ստանալով «Արարատյան Հանրապետության» գանձարանից»<sup>144</sup>, - գրում է Ս. Վրացյանը: Ս. Վրացյանի խոսքերում երևում է որոշակի հեգնանք: Նման վերաբերմունքը որքանով կարող էր օգտակար լինել համատեղ գործնական աշխատանքում: Եվս մեկ անգամ ի հայտ է եկել հատվածականության վրա հիմնված արևելահայ՝ արդեն իսկ պետական գործչի մի տեսակ՝ խնամակալական վերաբերմունքը արևմտահայ փախստականների և նրանց նորընտիր ղեկավարների նկատմամբ: Մեր կարծիքով՝ հատվածականությունը հաղթահարելու մասին հայտարարությամբ հանդես եկած գործչի այդպիսի վերաբերմունքն անընդունելի էր:

Արևմտահայ 2-րդ համագումարից հետո հատվածականությունը վերացնելու նպատակով հանրապետության իշխանությունները ձեռնարկել են ևս մի շարք քայլեր.

ա) Հայաստանի խորհրդարանի ընտրություններում արևմտահայ փախստականներին ընտրության իրավունքի վերապահումը,

բ) պետության կողմից ներքաղաքական կյանքի ազգայնացման քաղաքականության իրականացումը,

գ) Միացյալ և Ազատ Հայաստանի հռչակումը և Հայաստանի Խորհուրդ արևմտահայ 12 պատգամավորների հրավիրումը:

Հատվածականության վերացման ուղղությամբ կարևորագույն քաղաքական քայլերից էր Միացյալ Հայաստանի անկախության հռչակումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Արևմտահայ 2-րդ համագումարի կազմակերպական բանաձևով նորընտիր Գործադիր Մարմնի առջև դրված էր համագումարում ընդունված որոշումների իրագործման խնդիրը<sup>145</sup>: Ազգային-քաղաքական առումով դրանցից առաջնային էին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և խորհրդարանի կողմից Միացյալ և Ազատ Հայաստանի անկախության հայտարարումն ու «մոտիկ ապագային» Արևմտահայաստանի ներգաղթի իրականացումը: Այդ նպատակով Արևմտահայ Գործադիր Մարմինը դիմումներ է հղել Հայաստանի կառավարությանը<sup>146</sup> և Խորհրդին: Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի 1919 թ. փետրվարի 28-ի նիստում Ա. Խատիսյանը ներկայացրել է Միացյալ Հայաստանի մասին հայտարարություն անելու վերաբերյալ 1919 թ. փետրվարի 23-ին կառավարությանն ուղղված արևմտահայ Գործադիր Մարմնի դիմումը<sup>147</sup>: Լիովին համաձայնելով դիմումում արտահայտված մտքերի հետ՝ կառավարությունն այնուամենայնիվ որոշել է հանձնարարել արտաքին գործերի նախարարին՝ ներկայացնել գեկուցում արևմտահայ Գործադիր Մարմնի առաջարկությունն իրականացնելու մասին<sup>148</sup>:

144 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 275:

145 Տե՛ս Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, էջ 14:

146 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 68:

147 Տե՛ս նույն տեղում:

148 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 30:

Միանգամայն հասկանալի էին կառավարության նման սպասողական դիրքորոշման պատճառները: Անհրաժեշտ էր դիվանագիտական խողովակներով ձշտել Միացյալ Հայաստանի անկախության մասին հայտարարության, ինչպես նաև արևմտահայ փախստականների Արևմտահայաստան ներգաղթի նկատմամբ դաշնակից և հարևան պետությունների վերաբերմունքը, վերլուծել այդ քայլերի հետևանքները: 1919 թ. փետրվարի 12-ին Ա. Ահարոնյանի և Պողոս Նուբարի ստորագրությամբ Փարիզի հաշտության համաժողովին ուղղված զեկուցագրում արդեն իսկ առաջադրվել է Միացյալ Հայաստանի անկախության գաղափարը: Զեկուցագիրը վերահաստատել է ազգային պատվիրակության կողմից դեռևս 1918 թ. նոյեմբերի 30-ին դաշնակից պետությունների կառավարություններին Միացյալ Հայաստանի անկախության մասին արված հայտարարությունը<sup>149</sup>: Անհրաժեշտ էր սպասել այդ քայլի նկատմամբ առաջին հերթին՝ Փարիզի հաշտության համաժողովում հավաքված դաշնակից պետությունների արձագանքին: Միաժամանակ արևմտահայ փախստականների ներգաղթի խնդիրն անհրաժեշտ էր նաև համաձայնեցնել Անդրկովկասում բրիտանական հրամանատարության հետ: Նշված հանգամանքներով է բացատրվել նաև 1919 թ. ապրիլի 3-ի կառավարության նիստում ընդունված հաջորդ որոշումը: Ի պատասխան ներգաղթ կազմակերպելու մասին Արևմտահայ Գործադիր Մարմնի դիմումի՝ կառավարությունը որոշել է. «Հայտարարել Հայաստանի Խորհրդում, որ հայկական պատգամավորությունների կողմից Փարիզում ընդհանուր համաձայնությամբ և մեր որոշման համեմատ հայտարարված է Միացյալ Հայաստանի անկախությունը»<sup>150</sup>:

Արևմտահայ փախստականների համար հայրենիք վերադառնալը կամ, ինչպես իրենք են անվանել՝ ներգաղթը կարևորագույն և առաջնահերթ հարցերից է եղել: Հայաստանի Հանրապետության իշխանություններն արևմտահայերի ներգաղթի խնդիրը համարել են «պետության ներքին գործ»: 1919 թ. մարտի 17-ին նախարարների խորհուրդը քննարկել է Արևմտահայ Գործադիր Մարմնի «վիճակագրություն կազմելու և ներգաղթը կազմակերպելու համար նրան 300 000 ռ. փոխարինաբար բաց թողնելու մասին» դիմումը: «Համարելով Տաճկահայերի վիճակագրությունը և ներգաղթի կազմակերպումը պետության ներքին գործ», - նախարարների խորհուրդը որոշել է «հանձնարարել Խնամատարության մինիստրության հոգ տանել այդ բոլորի մասին և հարկ եղած դեպքում միջնորդել Մինիստրների Խորհրդի առաջ վարկ բանալու մասին»<sup>151</sup>:

Խնամատարության նախարարության դիվանից ստանալով կառավարության վերը նշված որոշման պատճենը՝ արևմտահայ Գործադիր Մարմինը մարտի 24-ին գրությամբ դիմել է «Արարատյան Հանրապետության» վարչապետին: Նշելով, որ ներգաղթը ոչ թե մասնավոր կամ տեղական մի խնդիր է, այլ Հայկական ընդհանուր մի հարց և որ այդ գործի կազմակերպման համար Գործադիր Մարմինն ըստ ամենայնի ցանկանում է առաջին հերթին համաձայնության գալ Հանրապետական կառավարության հետ:

149 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Բ-4033, ց. 2, գ. 1005, թ. 1:  
150 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Բ-4033, ց. 2, գ. 1005, թ. 1:  
151 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 45:

Գործադիր Մարմինը գտել է, որ այստեղ առաջ է գալիս «քաղաքական մեծ դժվարություն մը, շնորհիվ այն հանգամանքի, որ Հանրապետության Նախարարական Խորհուրդը ներգաղթը կը համարէ պետական ներքին գործ»: Եվ դա այն դեպքում, որ թեև Արևմտահայ 2-րդ համագումարը «հայտարարեց իր միաձայն կամքը» Անկախ և Միացյալ Հայաստանի վերաբերյալ, «Հանրապետության Խորհրդարանը ոչնչով ընդառաջ չգնաց այդ հայտարարության»: Մինչդեռ արևմտահայ փախստականները, տեսնելով հանրապետության իշխանությունների «անորոշ և տատանվող քաղաքականությունը», կարիք ունեն «ապացուցանելու թե դաշնակից ենք եղած և կովող կողմ, կամ պետություն ունինք և անկախություն կը ցանկանք, թե հայ ժողովրդի հատվածները բոլոր մը անգամ չեն տատանվիր Միության և Միացյալ Հայաստանի հայտարարության և իրականացման առջև, թեև մասնակի հայտարարություններ, հեռու և այստեղ էլ ատոնց հակառակ կը խոսին, բայց դարձյալ չեն հերքեր այդ ակտերի դեռևս չիրականացած լինելուն փաստը՝ ժողովուրդի, ժողովրդական ներկայացուցչության և անոր կառավարության կողմեն»: Այնուհետև հույս հայտնելով, որ կառավարությունը լուրջ քննության կենթարկի քաղաքական դիրքի ճշտման հարցը, ընդառաջ կգնա Արևմտահայ 2-րդ համագումարի որոշումներին, Գործադիր Մարմինը պնդել է, որ Միացյալ և Անկախ Հայաստանի մասին հայտարարությունը պետք է լինի անհապաղ: «Գործադիր Մարմինս այնքան մեծ նշանակություն կուտա ատոր, որ կը կարծէ թե առանց այդ կանխորոշումներուն շատ դժվար կը լինի ներգաղթը արտաքին թե ներքին մեկ գործ համարել, – ասվել էր Գործադիր Մարմնի՝ կառավարությանն ուղղված գրության մեջ<sup>152</sup>:

1919 թ. մայիսի 15-ին կառավարությունում քննարկվել է խնամատարության նախարար Ս. Թորոսյանի «Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու գործում Արևմտահայ փախստականներու Գործադիր Մարմնի ունենալիք մասնակցության մասին» զեկուցումը: Կառավարությունը միանշանակ որոշել է՝ «արևմտահայերի ներգաղթի գործը ճանաչել պետական խնդիր» և այն իրականացնել պետության համապատասխան մարմինների միջոցով: Իսկ արևմտահայերի Գործադիր Մարմինը «ճանաչել իբրև արևմտահայ կյանքին լավատեղյակ մի հաստատություն, որի խորհուրդներից և գործնական աջակցությունից օգտվելն անհրաժեշտ համարել» և «երբ Մինստրների Խորհրդում քննվեն ներգաղթի վերաբերյալ խնդիրներ, խորհրդակցական ձայնով հրավիրել Արևմտահայ Գործադիր Մարմնի ներկայացուցչին»<sup>153</sup>: Հայաստանի Հանրապետության կառավարության այդպիսի որոշման դրդապատճառները միանգամայն հասկանալի են: Կառավարությունը մի կողմից չէր կարող ընդունել իրեն կառավարական գործառույթներ վերապահող արևմտահայ Գործադիր Մարմնի մոտեցումները: Մյուս կողմից՝ հատվածականության վերացումը քաղաքական նպատակ հայտարարած հանրապետության իշխանությունները՝ կապված մոտալուտ ներգաղթի հետ, լիովին չէին կարող մերժել համագործակցությունն արևմտահայ Գործադիր Մարմնի հետ:

Անհրաժեշտ է նշել, որ հանրապետության իշխանությունների և

152 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Գ-199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 104:

153 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Գ-199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 99:



արևմտահայ փախստականների փոխհարաբերություններն այնքան էլ հարթ չեն եղել: Այդ մասին է վկայել 1919 թ. ապրիլի 19-ին Երևանում տեղի ունեցած միջադեպը, որի ժամանակ Անդրանիկի և տեղացի զինվորների միջև առաջացած խժոժությունը հրազենի կիրառմամբ սաստվել է կառավարական ուժերի կողմից<sup>154</sup>: Այդ միջադեպի կապակցությամբ Արևմտահայ Գործադիր Մարմինը ապրիլի 22-ին բողոքի դիմում է հղել Հայաստանի Հանրապետության կառավարությանը: «Արևմտահայ Գործադիր Մարմինն իրազենի լինելով ապրիլի ցավալի դեպքին, երբ հանրապետական կառավարության պաշտոնյաների և գործուն անդամների հրամանով հրազեն պարավեց քաղաքի հրապարակում անզեն ժողովրդի վրա, – սավել է դիմումում, – հայտնում է կառավարությանն իր բուռն բողոքն այս առթիվ և պահանջում օրինական պատասխանատվության կանչել անզեն ժողովրդի վրա կրակ բանալու հրաման տվողներին ու բարի լինել հայտնել թե ինչ միջոցներ են ձեռք առնված հանցավորներին պատժելու և նման դեպքերը կանխելու համար»<sup>155</sup>: Վարչապետի կարգադրությամբ ապրիլի 26-ին հանձնարարվել է Երևանի քաղաքային վարչությանը՝ «ըստ հնարավորության կարճ ժամանակամիջոցում ներկայացնել մանրամասն զեկուցում քաղաքային այգում ամսույս 19-ին տեղի ունեցած ցավալի դեպքի մասին»<sup>156</sup>:

1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի խորհրդի շենքում հանդիսավոր պայմաններում վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանը հայերենով, ապա ֆրանսերենով հրապարակել է Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը<sup>157</sup>. «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»<sup>158</sup>, – ասվում էր ակտում: Ակտով նաև հայտարարվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը «հանդիսանում է միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը»<sup>159</sup>:

Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտի հրապարակումից հետո արևմտահայ 12 պատգամավորներ՝ Վ. Քրմոյանը, Ա. Սատունին, Վ. Հոխիկյանը, Ա. Կիտուրը, Հ. Մանուկյանը, Ա. Մաքսապետյանը, Վ. Առաքելյանը, Զ. Կորկոտյանը, Հ. Կոստյանը, Վան-Փուշը, Հ. Հայրապետյանը, Ա. Միրզոյանը<sup>160</sup> տեղ են գրավել Հայաստանի խորհրդի անդամների շարքում: Հանդիսավոր արարողության ժամանակ հնչել են բազմաթիվ ճաներ և ողջույնի խոսքեր: Այդ շարքում երկրորդը՝ Հայաստանի խորհրդի փոխնախագահ Ա. Սահակյանից հետո և Ամենայն Հայոց կաթողիկոսից առաջ արևմտահայ Գործադիր Մարմնի անունից ողջույնի խոսքով հանդես է եկել Վ. Քրմոյանը: Վերջինիս կողմից ընթերցվել է նաև «Գործադիր

154 Տե՛ս Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 571-575:  
 155 ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 163:  
 156 Տե՛ս նույն տեղում, թ. 186, նույնը տե՛ս ՀԱԱ, ֆ. Բ-4033, ց. 2, գ. 1019, թ. 1:  
 157 Տե՛ս Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, Կ. Պոլիս, 1919, էջ 80-81:  
 158 ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 4, թ. 1: Նույնը տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 56, թ. 16:  
 159 Տե՛ս նույն տեղում:  
 160 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, մաս 2, թ. 277: Նույնը տե՛ս Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, էջ 81:

Մարմնի գրավոր հայտարարությունը այն մասին, որ այս կառավարությունը կընդունվի իբրև կորիզ երկու հատվածներու քաղաքական պետականության, որուն շուրջ պետք է խմբվի Միացյալ Հայաստանի պետական կյանքը»<sup>161</sup>:

Հայաստանի խորհրդի հանիսի 4-ի նիստում Ա. Խատիսյանը՝ հիմնավորելով կառավարության իրականացրած քայլերը, իրավացիորեն նշել է, որ «գործնական տեսակետեն անհրաժեշտ էր ստեղծել Միացյալ Հայաստանի կառավարություն»<sup>162</sup>: Մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության սահմանները հասել են նախկին Թուրքիայի սահմաններին, մյուս կողմից՝ արևմտահայ փախստականների սահմանների վրա կուտակվելու պատճառով «ոչ մեկ հնար չկա ներգաղթը կանգնեցնելու»: Դաշնակիցների կողմից արդեն վաղուց թույլատրված էր ներգաղթը դեպի Բայազետ և Ալաշկերտ<sup>163</sup>: Նշելով այդ հանգամանքը՝ Ա.Խատիսյանը գրել է, որ «չեր կարելի երկիր մտնել իբրև հպատակ կամ օտար. պետք է մտնեինք որպես տերեր, և անհրաժեշտ էր օրինական իրավասություն այդ երկրի տերը համարվելու համար»<sup>164</sup>: Ա. Խատիսյանը որպես դրդապատճառ, մատնանշել է նաև անհրաժեշտությունը ձերբազատվելու, ինչպես արտերկրում, այնպես էլ արևմտահայ փախստականների մոտ տարածված այն կասկածից՝ «թե Հայաստանի Հանրապետությունը չի ձգտիր բացարձակ անկախության և թե ան կը վարանի Ռուսիայեն բաժնվելու համար»<sup>165</sup>: Միաժամանակ ներգաղթը իրագործելու համար անհրաժեշտ էր կազմավորել արևմտահայ կանոնավոր զորամասեր, ինչը հնարավոր չէր առանց վերացնելու արևմտահայերի այն կասկածանքը, «որ արևելահայերը կը ձգտին չբաժանվիլ Ռուսաստանեն և անկախ ըլլալ»<sup>166</sup>:

Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը հատվածականության վերացմանն ուղղված հանրապետության իշխանությունների կողմից իրականացված քայլերից ամենակարևորն ու նշանակալին է եղել: Միացյալ, Ազատ Հայաստանի հռչակումով Հայաստանի Հանրապետությունում հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների փաստացի իրավահավասարության հիմքն է դրվել: «Հատվածների միացումը», հատվածականության վերացումը իրոք իդեալ է եղել, որը կարող էր իրականություն դառնալ միայն ազգային պետության մեջ երկարատև, նպատակամղված, ծրագրված պետական քաղաքականության իրագործման պայմաններում:

Ելակետ ունենալով այդ ժամանակաշրջանում հայկական պետականության մարմնացում հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը, նրա ամրապնդումը և հզորացումը՝ հանրապետության իշխանությունները հատվածականությունը վերացնելու քաղաքականության իրագործումը շարունակել են նաև Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտի ընդունմանը հաջորդող ժամանակաշրջանում: Այդ նպատակով իրականաց-

161 Տես Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, էջ 83:

162 Տես նույն տեղում, էջ 94:

163 Տես ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 32, թ.թ. 86-87, նույն տեղում, թ.143, նույն տեղում, գ. 53, թ. 27:

164 Տես Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, էջ 95:

165 Տես նույն տեղում:

166 Տես նույն տեղում:

վել են մի շարք քայլեր՝ ա) արևմտահայ փախստականները ճանաչվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ և նրանց հնարավորություն է ընձեռվել մասնակցելու պառլամենտական ընտրություններին, բ) արևմտահայերի կողմից արտահայտված դժգոհությունների կապակցությամբ ՀՅԴ Բյուրոյն համապատասխան որոշումներ է կայացրել և պարտադրել համապատասխան մարմիններին այդ ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, գ) ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը հատվածականության դեմ ուղղված որոշումների ընդունումը և դրանց իրագործումը, դ) 1919 թ. աշնանը Երևանում միջհատվածական բանակցությունների իրականացումը, ե) ազգայնացման քաղաքականության շրջանակներում «Լեզվի մասին» օրենքի ընդունումը և դրանից բխող միջոցառումների իրականացումը, զ) արևմտահայերի նշանակումը պետական պաշտոններում, է) հանրապետության օրենսդրությունն արևմտահայերին հարմարացնելու նպատակով համապատասխան հանձնաժողովի ստեղծումը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության գոյության ընթացքում հատվածականության հիմնախնդրի լուծման նպատակով հանրապետության իշխանությունները իրականացրել են մի շարք քաղաքական քայլեր: Դրանցից հիմնականը հանդիսացել է Միացյալ Հայաստանի անկախության 1919 թ. մայիսի 28-ի ակտը: Հատվածականությունը վերացնելու նպատակի իրագործման համար անհրաժեշտ է եղել առաջ քաշել և հռչակել համազգային մի կարևոր գերնպատակ: Այդ նպատակը Միացյալ Հայաստանի գաղափարն էր, որն իրագործելու համար անհրաժեշտ էր ամրապնդել և հզորացնել Հայաստանի Հանրապետությունը, որի շուրջ պետք է միավորվեին մնացած բոլոր հայկական հողերը: Ընդ որում, Միացյալ Հայաստան հռչակելով, նկատի է առնվել ոչ միայն միացյալ հայկական պետության կազմավորումը, այլև այդ գաղափարի իրագործման համար արևմտահայ և արևելահայ հատվածների միասնության ապահովումը: Այս է եղել Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքական ծրագիրը:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կարելի արձանագրել, որ հայ ժողովրդի քաղաքական պատմության մեջ հատվածականությունը՝ որպես մի առանձնահատուկ ազգային-քաղաքական երևույթ, ի հայտ է եկել հայոց նոր պատմության վերջին ժամանակահատվածում (1917-1918 թթ.) և տարբեր դրսևորումներ է ունեցել նորագույնի առաջին շրջանում՝ Հայաստանի առաջին Հանրապետության (1918-1920 թթ.) գոյության ողջ ընթացքում: Հատվածականության վերացումը որպես Հայաստանի Հանրապետության իշխանությունների համար պետական կարևոր խնդիր առաջին անգամ հնչեցվել է Արևմտահայ 2-րդ համագումարում: Վերջինս դժվար էր իրականացնել առանց արևմտահայ փախստականների ռազմաքաղաքական ներուժի օգտագործման: Սակայն ինչպես այդ, այնպես էլ դրան հաջորդած ժամանակաշրջանում հատվածականության վերացման քաղաքականությունն իր համապարփակ ծրագրի տեսքով ամփոփ ձևակերպում այդպես էլ չի ստացել: «Մեր ցեղի բոլոր հատվածների միացումը ամենացանկալի իդեալ մըն է»<sup>167</sup>, - գրել է Ա. Չոպանյանը: Սակայն «հատվածների միացումը», դեռևս սոսկ իդեալ էր, որը կարող էր իրականություն դառնալ միայն ազ-

167 Տե՛ս «Վերածնունդ», 14 հուլիսի 1917 թ., էջ 59:

գային պետության մեջ՝ համախմբելով հայ ժողովրդի հատվածները համազգային միասնական գաղափարի շուրջ՝ երկարատև, նպատակամղված, ծրագրված պետական քաղաքականության իրագործման պայմաններում: Ակներև է, որ առանց տվյալ ժամանակաշրջանում հայկական պետականության մարմնացումը հանդիսացող Հայաստանի Հանրապետության ամրապնդման և հզորացման՝ հատվածականության վերացման խնդրի լուծումն անհրաժեշտ էր:

**Կարեն Պ. Հայրապետյան** – գիտական հետաքրքրություններն ընգրկում են Հայաստանի Հանրապետության պատմության հիմնահարցերը, արևմտահայ գաղթականության և հատվածականության հետ կապված պատմագիտական խնդիրները:

Summary

## **THE ISSUE OF OVERCOMING THE FRAGMENTATION IN THE REPUBLIC OF ARMENIA**

Karen P. Hayrapetyan  
*Candidate of Historical Sciences*

**Key words** – fragmentation, Western Armenians, Eastern Armenians, fragmental approach, First Congress of Western Armenians, Second Congress of Western Armenians, Republic of Armenia, United Armenia.

In the political history of the Armenian people fragmentation as a specific national-political phenomenon was manifested in the last part of the new era of the history (1917-1918) and also in the entire period of the existence of the First Republic of Armenia (1918-1920). The unity of the West Armenian and East Armenian parts of the Armenian people, their united and joint activities were of great importance in resolving both the Pan-Armenian and separate national-political problems. In the past, as well as, at present times the fragmentation and respective fragmentary activities have always been among main obstacles hindering the assurance of unity of both parts of the Armenian people. The authorities of the First Republic of Armenia declared the policy of eliminating fragmentation at the second congress of Western Armenians. The most important initiative taken by the Armenian authorities in the direction of eliminating fragmentation was the official proclamation of the Act of Independent and United Armenia on May 28, 1919.

## ПРОБЛЕМА ПРЕОДОЛЕНИЯ ФРАГМЕНТАРНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Карен П. Айрапетян  
*Кандидат исторических наук*

**Ключевые слова** – фрагментарность, западные армяне, восточные армяне, фрагментарная деятельность, Первый съезд западных армян, Республика Армения, Второй съезд западных армян, единая Армения.

В политической истории армянского народа фрагментарность как специфическое национально-политическое явление проявилось как в последней части новой истории (1917–1918 г.г.), так и в весь период существования первой Республики Армения (1918–1920 г.г.). Единство западной и восточной частей армянского народа, их объединенная и солидарная деятельность имела важное значение в разрешении как общенациональных, так и отдельных фрагментарных национально-политических задач. Как в прошлые времена, так и в наши дни в деле обеспечения единства двух частей армянского народа основным препятствием являлась фрагментарность и исходящая из нее фрагментарная деятельность. Власти первой Республики Армения на Втором съезде западных армян объявили о политике устранения фрагментарности. В деле преодоления фрагментарности главнейшим начинанием властей РА стало торжественное провозглашение 28-го мая 1919 года Акта о независимой и единой Армении.

### REFERENCES

1. **Chelepyan A.**, Zoravar Andranik yev hay heghapokhakan sharzhumy, kensagrakan aknark, Yer., Arevik, 1990, ej 501.
2. **Ruben**, Hay heghapokhakani mə hishataknerə, E h., Yer., Adana, 1990, ej 151.
3. **Vracyan S.**, Hayastani Hanrapetyun, Yer., Hayastan, 1993, ej 269.
4. **Hayrenik**, Postən, hunis, 1924 t., ej 70.
5. **Tumanyan H.**, Erkeri zhoghovatsu, h. 4, Yer., 1951, ej 396.
6. **Ruben**, Hay heghapokhakani mə hishataknerə, E h., Yer., Adana, 1990, ej 150.
7. **НАА**, f. Q-4033, с. 6, g. 293, t. 26.
8. **НАА**, f. P-200, с. 1, g. 7, t. 80.
9. **Hayrenik**, Postən, hunis, 1924 t., ej 70.
10. **Ruben**, Hay heghapokhakani mə hishataknerə, E h., Yer., Adana, 1990, ej 149.
11. **Hayoc patmutyun**, h. 3, girq 2, Yer., 2015, ej 539.
12. **Chelepyan A.**, Zoravar Andranik yev hay heghapokhakan sharzhumy, kensagrakan aknark, Yer., 1990, ej 377.
13. **Ruben**, Hay heghapokhakani mə hishataknerə, E h., Yer., Adana, 1990, ej 149-150.

14. **Andranik Ozanjan**, Dokumenty i materialy, Vestnik arxivov Armenii, Jer., 1991, NN 1(89)-2(90) dok. N 155, s. 314-315.
15. **Ashkhatank** , Yer., 22 hunvari, 1991 t.
16. **Vracyan S.**, Hayastani Hanrapetyun, Yer., Hayastan, 1993, ej 34.
17. **Veracnund** , Pariz, 14 hulusi 1917 t., ej 59:
18. **Sasuni K.**, Tackahayastanə rusakan tirapetutyun tak (1914-1918), Tackahayoc gazhtasharzhə yev anonc derə Hayastani Hanrapetutyun kazmutyan mej, Boston, 1927, ej 128.
19. **HAA**, f. P-222, c.1, g. 4, tt. 1-52.
20. **Leo**, Turqahay heghapokhutyun gaghaparabanutyunə, Pariz, 1935, ej 195.
21. **Banvor**, Baqu, 18 aprili 1917 t.
22. **Andranik Ozanjan**, Dokumenty i materialy, Vestnik arxivov Armenii, Jer., 1991, N 1(89)-2(90) dok. N 79, 80, s. 222-223.
23. **Hayastan**, Tiflis, 16 aprili 1917 t., N1:
24. **HAA**, f. P-370, c. 1, g. 93, t. 6.
25. **Andranik Ozanjan**, Dokumenty i materialy, Vestnik arxivov Armenii, Jer., 1991, N 1(89)-2(90) dok. N 86, s. 228.
26. **Horizon**, Tiflis, 29 hunvari 1917t., N 21.
27. **Surenyan G.**, Inchu zor. Andranik heracav H. H. Dashnakcutyunen, K. Polis, 1920, ej 6-7.
28. **Mshak**, Tiflis, 5 ogostosi, 1917 t.
29. **Surenyan G.**, Inchu zor. Andranik heracav H. H. Dashnakcutyunen, K. Polis, 1920, ej 10.
30. **Andranik Ozanjan**, Dokumenty i materialy, Vestnik arxivov Armenii, Jer., 1991, N 1(89)-2(90) dok. N 86, s. 229.
31. **Papazyan V.**, Im husherə, Peyrut, 1952, ej 438, naev Chelepyan A., Zoravar Andranik ev hay heghapokhakan sharzhumə, kensagrakan aknark, Yer, Arevik , 1990, ej 375.
32. **HAA**, f. P-222, c. 1, g. 111, t. 101.
33. **HAA**, f. P-222, c. 1, g. 111, t. 105.
34. **Darbinyan A.**, Hay azatagrakan sharzhman oreren, Pariz, 1947, ej 346:
35. **Hayrapetyan K.**, Andranikə Arevmtahay arajin hamagumarum, Patmutyun ev mshakujt, hayagitakan handes, Yerevan 2015, ej 140-149:
36. **HAA**, f. P-32, c. 1, g. 12, t. 160:
37. **Vracyan S.**, Hayastani Hanrapetyun, Yer., Hayastan, 1993, ej 31-32.
38. **Chelepyan A.**, Zoravar Andranik yev hay heghapokhakan sharzhumə, kensagrakan aknark, Yer, Arevik , 1990, ej 377.
39. **Hayrapetyan K.**, Hatvatsakanutyun drsevorumnerə Arevmtahay arajin hamagumarum, Patmutyun ev mshakujt, hayagitakan handes, mas B, 2013, ej 88:
40. **Mshak**, Tiflis, 21 mayisi, 1917 t.
41. **Sasuni K.**, Tackahayastanə rusakan tirapetutyun tak (1914-1918), Tackahayoc gazhtasharzhə yev anonc der. Hayastani Hanrapetutyun kazmutyan mej, Boston, 1927, ej 138.
42. **Avetean M.**, Hay azatagrakan azgayin hisnamya (1870-1920) hushamatyan yev Zor. Andranik, Pariz, 1954, ej 176. **Sasuni K.**, Tackahayastanə rusakan tirapetutyun

- tak (1914-1918), Tackahayoc gazhtasharzhə yev anonc derə.
43. Hayastani Hanrapetutyān kazmutyān mej, Boston, 1927, ej 138-139.
  44. HAA, f. K-4033, c. 4, g.24, t.17.
  45. Surenyan G., Inchu zor. Andranik heracav H. H. Dashnakcutyunen, K. Polis, 1920, ej 8.
  46. Papazyān V., Im husherə, Peyrut, 1952, ej 441.
  47. Horizon, Tiflis, 29 hunvari 1917 t., N 119.
  48. Papazyān V., Im husherə, Peyrut, 1952, ej 440.
  49. Terzipashyan A., Nupar, Pariz, 1939, ej 154:
  50. Mshak, Tiflis, 25 ogostosi 1917 t., N 179.
  51. Vracyan S., Hayastani Hanrapetytyun, Yer., Hayastan, 1993, ej 33.
  52. Papazyān V., Im husherə, Peyrut, 1952, ej 446.
  53. Surenyan G., Inchu zor. Andranik heracav H. H. Dashnakcutyunen, K. Polis, 1920, ej 10.
  54. Papazyān V., Im husherə, Peyrut, 1952, ej 443.
  55. Sasuni K., Tackahayastanə rusakan tirapetutyān tak (1914-1918), Tackahayoc gazhtasharzhə yev anonc derə Hayastani Hanrapetutyān kazmutyān mej, Boston, 1927, ej 129.
  56. Ashkhatank, Yer., 31 mayisi 1917 t., nuynə tes Horizon , Tiflis, 16 hunisi 1917 t.
  57. HAA, f. P-32, c. 1, g. 12, t.160.
  58. HAA, f. P-222, c. 1, g. 111, t.82.
  59. Papazyān V., Im husherə, Peyrut, 1952, ej 446-447.
  60. Melikyan V., Petrvaryan heghapokhutyunə yev Hayastanə (1917 t. mart-hoktember), Yer., 1997, ej 182-260:
  61. Papazyān V., Im husherə, Peyrut, 1952, ej 445.
  62. Vracyan S., Hayastani Hanrapetytyun, Yer., Hayastan, 1993, ej 52.
  63. Andranik Ozanjan, Dokumenty i materialy, Vestnik arxivov Armenii, Jer., 1991, N 1(89)-2(90) dok. N 102, s. 253.
  64. Nazaryān A., Haykakan zoramavorumneri kazmavorumə Kovkasyān tchakatum (1914-1918t.t.),Yer., 1999, ej 149-176:
  65. Hoktemberyān Socialistakan mets revolycian yev sovetakan ishghanutyān haghtanakə Hayastanum, Pastatghteri yev nyuteri zhoghovatsu, Yer., 1960, ej 144:
  66. Chelepyān A., Zoravar Andranik yev hay heghapokhakan sharzhumə, kensagrakan aknark, Yer, Arevik , 1990, ej 382.
  67. Papazyān V., Im husherə, Peyrut, 1952, ej 452.
  68. Sasuni K., Tackahayastanərusakan tirapetutyān tak (1914-1918), Tackahayoc gazhtasharzhə yev anonc derə Hayastani Hanrapetutyān kazmutyān mej, Boston, 1927, ej 147.
  69. Papazyān V., Im husherə, Peyrut, 1952, ej 455.
  70. Terzipashyan A., Andranik, Pariz, 1942, ej 310:
  71. Andranik Ozanjan, Dokumenty i materialy, Vestnik arxivov Armenii, Jer., 1991, N 1(89)-2(90) dok. N 90, s. 236-238.
  72. Marmaryān A., Zor. Andranik yev ir Paterazmnerə, K.Polis, ej 262-263.

73. Zor. Andraniki Kovkasyan tcakati patmakan oragrutyuny, 1914-1917, Poston, 1924, ej 58-59.
74. **Papazyan V.**, Im husherə, Peyrut, 1952, ej 446-447.
75. **Sasuni K.**, Tackahayastanə rusakan tirapetutyany tak (1914-1918), Tackahayoc gazhtasharzhə yev anonc derə Hayastani Hanrapetutyany kazmutyany mej, Boston, 1927, ej 159, 159-160.
76. **Vracyan S.**, Hin tghter nor patmutyany hamar, Pejrut, 1962, ej 259-260.
77. **Sasuni K.**, Tackahayastanə rusakan tirapetutyany tak (1914-1918), Tackahayoc gazhtasharzhə yev anonc derə Hayastani Hanrapetutyany kazmutyany mej, Boston, 1927, ej 160.
78. **Sasuni K.**, Tackahayastanə rusakan tirapetutyany tak (1914-1918), Tackahayoc gazhtasharzhə yev anonc derə Hayastani Hanrapetutyany kazmutyany mej, Boston, 1927, ej 159.
79. **Chelepyan A.**, Zoravar Andranik yev hay heghapokhakan sharzhumə, kensagrakan aknark, Yer, Arevik , 1990, ej 390.
80. **Ananun D.**, Rusahayeri hasarakakan zargacumə, Venetik, 1926, h.3, (1901-1918), ej 56.
81. **Vracyan S.**, Hayastani Hanrapetyyun, ej 269.
82. **Ruben**, Hay heghapokhakan my hishataknerə, h.7, ej 150; Vracyan S, Hayastani Hanrapetutyun, ej 269:
83. **Hayrapetyan K.**, Hatvatsakanutyany himnakhndirnery Hayastani arajin Hanrapetutyunum, ‘VEM hamahaykakan handes, Yer., 2013, N 2(42), ej 58-76.
84. Hayastani Khorhrdi hatatats orenqnerə (1918-1919 t.t.), Yer., 1919, ej 37.
85. **HAA**, f. P-199, c. 1, g. 23, mas 1, t. 30.
86. **HAA**, f. P-199, c. 1, g. 14, mas 1, t. 19.
87. **HAA**, f. P-199, c. 1, g. 23, mas 1, t. 31. Nuynə tes Hamahaykakan khorhrdakutyunner (1912-1920 t.t.), Pastatghteri yev nyuteri zhoghovatsu, Yer., 2004, ej 293.
88. Hamarot Teghekagir Arevmtahay erkrord hamagumari yev kazmakerpich komitei hashivə, Tiflis, Tp. , Ashkhatavor, 1919, ej 4-5:
89. Hamarot Teghekagir Arevmtahay erkrord hamagumari yev kazmakerpich komitei hashivə, ej. 13-14.
90. **Vracyan S.**, Hayastani Hanrapetyyun, ej 273.
91. **HAA**, f. P-200, c. 1, g. 431, t. 19.
92. **Vracyan S.**, Hayastani Hanrapetyyun, ej 275.
93. Hamarot Teghekagir Arevmtahay erkrord hamagumari yev kazmakerpich komitei hashivə, ej. 13.
94. Hamarot Teghekagir Arevmtahay erkrord hamagumari yev kazmakerpich komitei hashivə, ej. 14.
95. **HAA**, f. P-199, c. 1, g. 23, mas 1, t. 68.
96. **HAA**, f. P-199, c. 1, g. 14, mas 1, t. 30.
97. **HAA**, f. P-4033, c. 2, g. 1005, t. 1
98. **HAA**, f. P-199, c. 1, g. 14, mas 1, t. 45.
99. **HAA**, f. P-199, c. 1, g. 23, mas 1, t. 104.
100. **HAA**, f. P-199, c. 1, g. 14, mas 1, t. 99.



- 101.Simonyan H.**, Andraniki zhamanakə, girq B, ej. 571-575:  
102. **HAA**, f. P-168, c. 1, g. 23, mas 1, t. 163.  
103. Miacyal yev Ankakh Hayastan, Patmakan qailə, K.Polis, 1919, ej 80-81.  
**104.HAA**, f. P-198, c. 1, g. 4, t.1; Nuynə tes HAA, f. P-199, c.1, g. 56, t.16.  
**105.HAA**, f. P-199, c. 1, g. 23, mas 2, t. 277: Nuynə tes Miacyal yev Ankakh Hayastan, Patmakan Kaily, ej 81.  
106. Miacyal yev Ankakh Hayastan, Patmakan qailə, ej 83.  
107. Miacyal yev Ankakh Hayastan, Patmakan qailə, ej 94.  
108. **HAA**, f. P-199, c. 1, g. 32, t.t. 86-86; nuyn teghum, t. 143; nuyn teghum, g. 53, t. 27.  
109. Miacyal yev Ankakh Hayastan, Patmakan qailə, K.Polis, 1919, ej 95.  
110. **Veratsnund**, 14 hulisi 1917 t., ej 59.



*Սուրեն Թ. Սարգսյան  
Պատմ. գիյ. դոկտոր*

## **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918–1920 ԹԹ.**

Մուտք

**Բանալի բառեր** – Հայաստանի Հանրապետություն, Հայ Ժողովրդական կուսակցություն, անկախություն, կուսակցություն, ընդդիմություն, ծրագիր, կառավարություն, պաշտոնաթերթ, խորհրդարան, կոալիցիա:

70 տարի շարունակ Խորհրդային Հայաստանում Հայաստանի Հանրապետությունը հայտարարվել էր «դաշնակցական» և բոլոր հնարավոր միջոցներով պայքար էր ծավալվել նրա պատմությունը վատաբանելու ու որևէ դրական իրողություն բացառելու ուղղությամբ: Հայկոմկուսի կողմից դա արվում էր, որպեսզի գաղափարական հակառակորդը (տվյալ դեպքում Հայ Յեղափոխական Դաշնակցությունը), ավելի ուժեղ և «վտանգավոր» ներկայացվեր, հետևաբար իրենց կատարած գործն էլ՝ կարևոր ու արժանի ամենայն գնահատանքի և բարձր վարձատրության:

Իսկ Սփյուռքում 1918–1920 թթ. պատմությանն անդրադառնում էին գերազանցապես այն դեպքերում, երբ սրվում էին միջկուսակցական և գաղափարական հակասությունները, ինչպես երեք ավանդական կուսակցությունների, այնպես էլ նրանց տարածայնությունների վրա պարբերաբար յուղ լցնող հայ կոմունիստների միջև: Ուստի նման գրվածքներում հիմնականում գերակա էր սուբյեկտիվիզմը և կուսակցական գծին հավատարիմ մնալու ձգտումը: Այդ գործընթացը շարունակվեց 70 տարի:

Նկատելի է նաև, որ մանավանդ Հայաստանի 1991 թվականի վերանկախացումից հետո 1918–1920 թթ. պատմությունը մի կողմից՝ ավելորդ գունագարդվում է և գործիչների մեծ մասն արժանացվում է լուսապսակի, իսկ մյուս կողմից՝ անհիմն հարձակումների է ենթարկվում ինչպես նախկին՝ խորհրդային պատմագրության ներկայացուցիչների, այնպես էլ նրանց ավանդույթները ժառանգած Հայաստանի նոր իշխանավորների կողմից: Այնինչ հարկավոր է մերժել կուսակցականությունը և ամեն ինչ լուսաբանել ճշմարիտ և անաչառ դիրքերից:

Հայտնի է, որ 20-րդ դարասկզբի հայ իրականության մեջ անկախ մո-  
դայիկ տեսություններին տուրք տալուց՝ կուսակցությունների մեծ մասը  
լծված էր Հայկական հարցի լուծման գործին, իսկ սոցիալ-քաղաքական  
խնդիրներին վերաբերվում էր որպես հեռավոր ու մշուշապատ տեսլականի՝  
Ընդհանուր առմամբ՝ այդ տարիներին գործած կուսակցությունների գոր-  
ծունեությունը գնահատելիս հարկ է որպես չափանիշ ընդունել նրանց ազ-  
գաշահությունը և անկախ կառավարող քաղաքական ուժի նկատմամբ նրա  
վերաբերմունքից՝ պետականության գաղափարի պաշտպանության գործին  
նվիրվածությունը:

ՀՀ կարճատև գոյության 2 ու կես տարիներին իշխող քաղաքական ու-  
ժը ՀՅԴ-ն էր: Մյուս բոլոր կուսակցությունները հիմնականում եղել են քա-  
ղաքական ընդդիմություն: Հանրապետության ձևավորման սկզբնամասում  
ստեղծված բարդ իրավիճակում փորձի և օրենքների բացակայության պայ-  
մաններում դուրս մնալով կառավարությունից ու մասնակցելով ամենալայն  
լիազորություններով օժտված խորհրդարանի աշխատանքներին՝ նրանք  
հնարավորություն էին ստանում բավականին լուրջ դեր խաղալու պետա-  
կան կյանքի հետ կապված ամենակարևոր խնդիրների լուծման մեջ և մեծ  
ի մասամբ հանդես էին բերում զուսպ և հանդուրժողական կեցվածքներ:  
«Մենք որ ապրում էինք անասելի պայմաններում, - գրում է էսեռների տե-  
սաբաններից Ա. Խոնդկարյանը, - որով և շատ ատելի առիթ ունեինք ջղայնոտ  
ու կուռզան լինելու, շատ հարցեր լուծում էինք համերաշխությամբ»<sup>2</sup>: Մին-  
նույն ժամանակ բոլոր քաղաքական ուժերի, այդ թվում նաև ՀՅԴ-ի, գոր-  
ծունեության վրա մշտապես ազդում էր հայ ժողովրդին սպառնացող ար-  
տաքին վտանգի ու նորակազմ հանրապետության առջև ծառայած մոայլ  
հեռանկարների գիտակցումը:

ՀՀ առաջին խորհրդարանում ՀՅԴ-ից բացի՝ գործել են Սոցիալ-դեմոկ-  
րատները (այսուհետև՝ սոցդեմ), Սոցիալիստ հեղափոխականները (այսու-  
հետև՝ էսեռներ) և Հայ ժողովրդական կուսակցությունը (այսուհետև՝ ՀԺԿ):  
Ընդ որում, դրանցից ֆինանսատնտեսական և կադրային ամենամեծ ռե-  
սուրսների տիրապետում էր ՀԺԿ-ն, որի մասին էլ հիմնականում կխոսենք  
ստորև:

## 1. Հայ ժողովրդական կուսակցության ձևավորումը

Հայաստանի Հանրապետությունում ՀՅԴ-ից հետո ամենահզոր քաղա-  
քական ուժի՝ ՀԺԿ-ի պատմության վերաբերյալ նյութերը շատ քիչ են: ՀԺԿ-  
ին նվիրված հուշագրություններ էլ չկան<sup>3</sup>: Նյութի սակավությունն ու խորի-

1 Թեկուզ այն հանգամանքը, որ գրեթե բոլոր հայ կուսակցությունների ակունքներում ունևոր դասին պատկանող կամ նրա ծոցից դուրս եկած մտավորականությունն էր, արդեն իսկ մեր ասածի խոսուն վկայություն է: Այնուհայտ իրողություն է նաև այն, որ չնայած նրանց ծրագրերի գունագեղ «սոցիալիստական» հանդերձանքին, Արմենականների հետ հնչակյաններն էլ, դաշնակցականներն էլ առանց դասի ու դասակարգի խտրականության իրենց շարքերն էին ընդունում բոլոր այն հայրողիներին, ովքեր պատրաստ էին պայքարել Հայաստանի ու հայ ժողովրդի ազատության համար, իսկ դասակարգային ներհակություններին ու առավել ևս դասակարգային պայքարին բացի գուտ տեսական, իսկ հաճախ էլ՝ թերթային անդրադարձներից, փաստորեն ուշադրություն չէին դարձնում:

2 Խոնդկարեան Ա., Օպոզիցիան հանրապետական Հայաստանում, «ՎԷՄ», Փարիզ, 1934, N 4, էջ 78:

3 Լավ է, որ գոնե իրենց հուշերում ՀԺԿ-ին երբեմն անդրադարձել են Մ. Վրացյանը («Հայաստանի Հանրապետություն», Փարիզ, 1928), Ա. Խատիսյանը («Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», Պեյրուք, 1968), Ա. Ահարոնյանը («Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Քաղաքական օրագիր, 1919-

դային շրջանում տիրող միակուսակցական համակարգը «նպաստել են», որ ՀԺԿ-ի պատմությունը դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Միակ բացառությունը Դավիթ Խեչումյանի մի քանի հրապարակումներն են<sup>4</sup>: Չնայած դրան, 1918–1920 թթ. պատմությանն անդրադարձած խորհրդային ու հետխորհրդային ուսումնասիրողներից ոմանք այս կամ այն չափով խոսել են ՀԺԿ-ի մասին: Մասնավորապես Ռ. Հովհաննիսյանը<sup>5</sup>, Լ. Խուրշուդյանն ու Կ. Խուրավերդյանը<sup>6</sup>, Ա. Հակոբյանը<sup>7</sup>, Վ. Մելիքյանը<sup>8</sup>, Հ. Վարդիվառյանը<sup>9</sup>, Գ. Ավագյանը<sup>10</sup>, Վ. Բարաջանյանը<sup>11</sup>, Վ. Վիրաբյանը<sup>12</sup> և ուրիշներ: Կուսակցության պատմության վերաբերյալ զգալի նյութեր կան նաև Հայաստանի Ազգային արխիվի (ՀԱԱ), Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) ֆոնդերում<sup>13</sup>, տպագրված փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում<sup>14</sup> և մամուլում<sup>15</sup>:

Կուսակցության գաղափարական նախորդները «Սշակ» թերթի շուրջ համախմբված ազատական մտավորականներն էին, որոնք իրենց համարում էին մշակականներ և ՀԺ կուսակցության նախապատմությունն էլ հասցնում էին մինչև XIX դ. 70–80–ական թվականները: Ուստի այս կուսակցությունը պաշտպանում էր հայ ազատական–ժողովրդավարական շրջանակների շահերը, իղձերն ու ցանկությունները և արևմտահայ ռամկավարների շահերի արտահայտիչ ՀՍԽԿ-ի հետ գտնվում էր սերտ, բարեկամական հարաբերությունների մեջ:

Հաճախ ՀԺԿ-ին նույնացրել են կայսրության հպատակ ազգերին սոսկ ազգային–մշակութային ինքնավարություն խոստացող ռուսական Կադետ–

1927»), Եր., 2001, Ա. Գարբիյանը («Հայ ազատագրական շարժման օրերէն», Եր., 2003), Ա. Խոնդկարյանը («Օպորդիցիան հանրապետական Հայաստանում», «ՎԷՄ», 1933, Ա, էջ 63–82, Բ, էջ 68–79, 1934, Գ, էջ 76–98, Ե, էջ 43–46):

4 Տես **Խեչումյան Գ.**, Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսության և գործունեության հակաժողովրդական էությունը, ԼՀԳ, Եր., 1984, N 2: Տես նաև՝ **Хечумян Д.**, Критический анализ идеологии и политики Армянской народной партии (1917–1921 гг.), (ատենախոսության սեղմագիր), Երևան, 1987.

5 Տես **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն (4 հատոր, The Republic of Armenia, հատոր 1 (1971) և հատոր II (1982), հատորներ III և IV (1996) Ս.Ս. Press):

6 Տես **Хуршудян Л., Худавердян К.**, Армянские политические партии. Некоторые вопросы истории и идеологии, «Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне», Калинин, 1980, с. 102.

7 Տես **Հակոբյան Ա.**, Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսությունը, ծրագիրը և մարտավարությունը, ԼՀԳ, N 2 (106), 2002, էջ 106–111, նույնի՝ Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), Եր., 2005, նույնի՝ Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., Եր., 2018:

8 Տես **Մելիքյան Վ.**, 1917 Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Եր., 1997:

9 Տես **Վարդիվառյան Հ.**, Մեծ երազի ձամբուն ուղեվորները եվ համապարփակ պատմություն Ռամկավար ազատական կուսակցության, հատ. Ա, Արմենական կազմակերպություն, Հայ ժողովրդական կազմակերպություն, Նիւ Ճրզգի, 2015, էջ 315–391:

10 Տես **Ավագյան Գ.**, Միքայել Պապաջանյանի հասարակական–քաղաքական գործունեությունը, ատենախոսության սեղմագիր, Եր., 2009:

11 Տես **Բարաջանյան Վ.**, Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1918–1920 թթ., Եր., 2017:

12 Տես **Վիրաբյան Վ.**, Հայաստանի Հանրապետությունը 1918–20 թթ.: Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները (Հայոց քաղաքական պատմության էջերից), Եր., 1999:

13 Տես ՀԱԱ ֆ. N N 292, 1022, 4033, Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ Ա. Չոպանյանի, Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Մ. Արեղյանի, Թ. Ազատյանի ֆոնդերը և այլն:

14 Օրինակ՝ «Документы и материалы по Внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919. Նիւթեր Հ.Յ. Դաշակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր...), խմբ. **Շր. Տասնապետեանի**, հրատ. Հ. Յ. Դաշակցութեան, Պէյրոյթ, Ա, հատ., 1984, Բ, հատ., 1985, Գ, հատ., 1976, Դ, հատ., 1982, Նիւթեր..., խմբ. **Շր. Փամպուրեանի**, հրատ. Հ. Յ. Դաշակցութեան, Պէյրոյթ, Ե. 2007, Զ, հատ., 2010, Է, հատ., 2010, Ը, հատ., 2011, Թ, հատ., 2012 և այլն:

15 Շահեկան են հատկապես ՀԺԿ պաշտոնաթերթեր «ժողովուրդ», «ժողովրդի ձայն», ինչպես նաև «Վան–Տոսպ», «Հայաստան», «Մշակ», «Հորիզոն», «Կառավարության լրաբեր», «Հովիտ», «ՎԷՄ», «Тифлисский листок», «Кавказское слово» պարբերականները:

ների կուսակցության (Սահմանադրական դեմոկրատների) հետ: Սակայն ՀԺԿ-ն ուներ ընդգծված ազգային նկարագիր, իսկ կադետները ժուսական մյուս կուսակցությունների նման առանձնապես մեծ կարևորություն չէին տալիս ազգային հարցին:

Արևելահայոց քաղաքական կյանքի կենտրոն **Թիֆլիսում** «Մշակ» թերթի շուրջ համախմբված հենց այս մտավորականության ջանքերով էլ (նախաձեռնող խումբը՝ Լ. Առաքելյան, Մ. Պապաջանյան, Ս. Հարությունյան, Լ. Ղուկյան, Գ. Մելիք-Ղարաբյոզյան և ուրիշներ) **1917 թ. ապրիլի 11-ին** հիմնադրվեց Հայ ժողովրդական կուսակցությունը: Հրապարակվեց հռչակագիր, որը փաստորեն ուներ ծրագրային բովանդակություն<sup>16</sup>:

ՀԺԿ-ի որևէ խորհրդանիշ գտնելու ուղղությամբ մեր ջանքերն անարդյունք եղան: Մեր ունեցած փաստերը խոսում են այն մասին, որ ամենայն հավանականությամբ կուսակցությունը գինանշան, դրոշ կամ մեկ այլ խորհրդանիշ չի հասցրել ստեղծել: Նորաստեղծ կուսակցությանն անդամագրվեցին մտավորականներ, ֆաբրիկատերեր, առևտրականներ, վաճառականներ, մանր ու միջին քաղաքային և գյուղական խավերի ներկայացուցիչներ<sup>17</sup>:

ՀԺԿ-ն ողջունեց ժուսական Փետրվարյան մեծ ու անարյուն հեղափոխությունը և իր լիակատար համակրանքն ու աջակցությունը հայտնեց Ժամանակավոր կառավարությանը: Ազգային և տնտեսական խնդիրների լուծումը թողնվում էին մոտ ապագայում հրավիրվելիք Սահմանադիր ժողովի իրավասությանը:

ՀԺԿ-ն գումարել է **երկու համագումար՝ 1-ինը 1917 թ. սեպտեմբերի 24-28-ը Թիֆլիսում և 2-դը՝ 1919 թ. սեպտեմբերին Երևանում**: Դրանցում մշակվել և ընդունվել են կուսակցության երկու ծրագրերը, կանոնակարգվել են կենտրոնի և մասնաձյուղերի միջև հարաբերությունները և այլ կազմակերպական հարցեր:

Թիֆլիսում ընդունված ՀԺԿ-ի առաջին ծրագիրը հավաստեց, որ շատ կարճ ժամանակի ընթացքում կուսակցությունը սահմանազատվելով ժուսական կադետներից և ապրելով հետագա քաղաքական բարեշրջում, լիովին կանգնել է ազգային հողի վրա<sup>18</sup>: Համագումարն ընտրեց 23 անդամից բաղկացած մշտական Կենտրոնական կոմիտե և Կենտրոնական բյուրո: Կենտրոնական բյուրոյի **նախագահ ընտրվեց** Ռուսաստանի 4-րդ պետական դումայի և Անդրկովկասյան հատուկ կոմիտեի անդամ **Միքայել Պապաջանյանը**<sup>19</sup>: Փոխնախագահներ ընտրվեցին Համբարձում Առաքելյանը, Իսահակ Ամիրյանը և հայտնի բժիշկ Կարապետ Ստեփանյանը<sup>20</sup>:

Կուսակցության առաջին համագումարում ընդունվեցին նաև մի շարք հիմնարար փաստաթղթեր: Դրանցից ամենակարևորը 1917 թ. ապրիլի 11-ին հրապարակված հռչակագրի հիման վրա վերամշակված և սեպտեմբերի 27-ին վավերացված կուսակցության անդրանիկ ծրագիրն էր և կուսակցության կանոնադրությունը<sup>21</sup>:

16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, գ. 7, ց. 11, թ. 1-2, ֆ. 1022, գ. 7, գ. 96, թ. 26, Մշակ, 7. IV.1917:

17 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, գ. 1, գ. 562, «Մշակ», 14 սեպտեմբերի 1917, «Ժողովրդի ձայն», 29 հունիսի, 1919:

18 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսությունը, ծրագիրը և մարտավարությունը», ԼՀԳ, N 2 (106), էջ 108:

19 Տե՛ս **Ավագյան Գ.**, նշվ. աշխ., էջ 35:

20 Տե՛ս նույն տեղում, 13. X. 1917:

21 Տե՛ս Ծրագիր Հայ ժողովրդական կուսակցության, վերաքննված Ա. Համագումարում սեպտեմբերի 27-ին,

**Ծրագիրը** բաղկացած էր երկու՝ Ընդհանուր պետական և Ազգային հարցեր բաժիններից և 75 հոդվածներից: Ընդ որում, առաջին բաժինը ութ, իսկ երկրորդը՝ երկու ենթագլուխներից էր կազմված: Ծրագրի առաջին հոդվածում հայտարարվում էր, որ ՀԺԿ-ն համազգային կուսակցություն է և «կարող է ճիշդեր բանալ թէ Ռուսաստանում և թէ նրա սահմաններից դուրս»<sup>22</sup>: Ծրագրվում էր երկրում դասային արտոնությունների վերացում և բոլոր քաղաքացիները, առանց սեռի, դավանանքի և «ազգի խտրության, հավասար կղառնային օրէնքի առաջ»: Հռչակվում էին մամուլի, խղճի, խոսքի, միտինգների, կրթության և այլ դեմոկրատական ազատություններ: Հայտարարվում էր, որ եկեղեցին պետք է անջատ լինի պետությունից, վերացվի գրաքննությունը: Մարդիկ պատասխանատվության կարող էին ենթարկվել բացառապես դատարանների վճիռներով: Մասնավոր սեփականության իրավունքն համարվում էր անձեռնմխելի:

Ծրագրում առանձին ենթաբաժիններ էին հատկացված պետական կարգին և տեղական կառավարմանը: Հայտարարվում էր, որ երկիրը պետք է «լինի դեմոկրատական պարլամենտական հանրապետություն» և «օրէնսդրական իշխանությունը պատկանելու է ժողովրդական ներկայացուցչության»<sup>23</sup>: Իսկ վերջիններս ընտրվելու էին ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ձայնատվությամբ: Հստակ հայտարարվում էր, որ ոչ մի որոշում, կարգադրություն, հրաման, «ինչ անուն էլ որ կրէ և ումնից որ բղխէ» չի կարող օրէնքի ուժ ստանալ առանց ժողովրդական ներկայացուցչության որոշման<sup>24</sup>:

Ծրագրում ասվում էր նաև, որ բոլոր տեսակի հարկերն ու դրանց չափերը պետք է որոշվեն բացառապես օրենսդրական կարգով: Բոլոր այդ սկզբունքները պիտի գործեին նաև տեղական կառավարման մարմիններում, որոնք պիտի կազմվեին ըստ ազգային հատկանիշի:

Առանձին՝ «Դատաստան» ենթաբաժնում հռչակվում էր, որ դատական իշխանությունը պետք է անկախ լինի իշխանության մյուս՝ օրենսդիր և գործադիր թևերից: Բոլորը պետք է հավասար լինեն դատարանի առաջ, իսկ դատական գործընթացները պետք է կազմակերպվեն հրապարակայնորեն և ունենան մրցակցային բնույթ: Վերացվում էր մահապատիժը և կիրառվում պայմանական դատապարտությունը:

«Ֆինանսներ և տնտեսական քաղաքականություն», «Հողային օրենսդրություն» ենթաբաժիններում լուսաբանվում էին կուսակցության մոտեցումներն այդ կարևոր տնտեսական ոլորտների հանդեպ և պարտադիր էր համարվում դեմոկրատական սկզբունքների կիրառումը նաև այդ ասպարեզներում: «Բանվորական օրենսդրություն» ենթաբաժնում էլ հռչակվում էին ութժամյա աշխատանքային օրվա, գործադուլի իրավունքի, գիշերային և սահմանված չափերից ավելի աշխատանքային օրերի նորմավորման, կանանց և անչափահասների աշխատանքի պաշտպանության, պետական ապահովագրություն մտցնելու և այլ առաջադիմական պահանջներ: Իսկ «Ժողովրդական լուսավորություն» ենթաբաժնում հայտարարվում էր նախ-

Թիֆլիս, «Էկոնոմիա» տպարան, 1917: Ի դեպ, ծրագիրը համարվում է նաև ՀԺԿ-ի թիվ 1 հրատարակությունը:

22 Նույն տեղում, էջ 3:

23 Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցության, Թիֆլիս, 1917, էջ 7:

24 Տե՛ս նույն տեղում, էջ 8:

նական դպրոցներում ընդհանուր, անվճար և պարտադիր ուսուցման և բոլոր այն տեսակի սահմանափակումների վերացման մասին, որոնք «հիմնված են սեռի, ծագման և կրօնի վրա»<sup>25</sup>:

Ժողովրդականները Հայկական հարցում Արևելահայաստանի և Արևմտահայաստանի հանդեպ դրսևորում էին տարբերակված մոտեցում: Այսօրվասում բնակվող արևելահայերի համար նախատեսում էին «օրէնսդրական մարմնով ազգային տերիտորիալ ատոնումիա», որի տարածքում պաշտոնական լեզուն պետք է լիներ հայերենը: Իսկ այդ ինքնավարության սահմաններից դուրս գտնվող հայերը պետք է վայելեին «անձնական ազգային-կուլտուրական ատոնումիա»<sup>26</sup>: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա ժողովրդականներն այն համարում էին միջազգային հարց, որը հնարավոր էր լուծել որևէ միջազգային վեհաժողովում, իսկ ՀԺԿ-ն պետք է ամեն ինչ աներ, որ «այդ հարցը լուծվի ըստ թիրքահայերի ցանկության»<sup>27</sup>: Հայ ժողովրդի և Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում, ըստ քաղաքական հանգամանքների ու իրադրության, ժողովրդականներն ունեցել են փոփոխական, բայց շրջահայաց դիրքորոշում: Սակայն **ՀԺԿ-ն միշտ դավանել է Հայաստանը և հայ ժողովուրդը պետք է ունենան միայն մեկ՝ հայկական կողմնորոշում սկզբունքը:**

**ՀԺԿ-ն ոչ հեղափոխական գործելակերպի, խաղաղ, աստիճանական բարեշրջման, ամուր խորհրդարանական, իրավական, ժողովրդավարական պետության կողմնակից կուսակցություն էր:** Ժողովրդականներն ընդունում էին **ազգային շահերի գերակայությունը դասակարգայինի նկատմամբ:**

Ծրագրին կից 1917 թ. սեպտեմբերի 27-ին ընդունվեց նաև կուսակցության **կանոնադրությունը**, որը սահմանում էր. «կուսակցութեան անդամ կարող են լինել այն հայերը, որ ընդունում են կուսակցութեան ծրագիրը, կենթակվեն կուսակցական կարգապահութեան և պարբերաբար վճարքներ են հատուցանում կուսակցութեան գանձարանին»<sup>28</sup>: Սահմանվում էին կուսակցության բարձրագույն (համագումար) և «ընթացիկ» (կենտրոնական կոմիտե) ղեկավար մարմինների իրավասությունները և դրանց ու տեղական համապատասխան կառույցների միջև եղած իրավունքների ու պարտականությունների շրջանակները:

Ինչպես արդեն նշեցինք, կազմակերպական ձևով ՀԺԿ-ն նույնպես ազգային էր: Կուսակցության անդամ կարող էին լինել միայն հայերը<sup>29</sup>: Մյուս հայ ավանդական կուսակցությունների նման ՀԺԿ-ն ևս գործունեություն էր ծավալում բոլոր այն տեղերում, որտեղ հայեր էին բնակվում: Կուսակցությունը հիմնել է մասնաձյուղեր ոչ միայն Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում, այլև Հյուսիսային Կովկասում, Իրանում և այլուր: 1917 թ. ՀԺԿ 1-ին համագումարի հաշվետվության մեջ հիշատակվում էր, որ հինգ ամսվա ընթացքում հիմնվել է կուսակցության 32 ձյուղ և 10 ենթաձյուղ<sup>30</sup>, իսկ

25 Ծրագիր Հայ ժողովրդական կուսակցության, Թիֆլիս, 1917, էջ 15:

26 Նույն տեղում, էջ 17:

27 Նույն տեղում, էջ 17:

28 Տես նույն տեղում, էջ 18:

29 «Ժողովուրդ», Եր., 29. IX. 1918:

30 Տես «Մշակ», Թիֆլիս, 26. IX. 1917.

մինչև 1920 թ. վերջը՝ 50-ից ավելի ճյուղեր<sup>31</sup>: Իր գոյության ընթացքում ՀԺԿ-ն հրատարակել է «Ժողովուրդ», «Ժողովրդի ձայն», «Ժողովրդական թերթ», «Երկիր», «Նոր կյանք» թերթերը: Կուսակցությանը կից գործում էին ուսանողական, աշակերտական, կանանց ֆրակցիաներ, որոնք հրատարակում էին «Քայլեր» և «Նոր ուղի» թերթերը:

## 2. ՀԺԿ-ն նորանկախ Հայաստանի օրենսդիր և գործադիր իշխանության մեջ

1917 թ. հուլիսի 17-ին հիմնադրված Հայոց ազգային խորհուրդն իրականացրեց իր հիմնական և գլխավոր նպատակը՝ հիմնեց համազգային միասնական ղեկավար և պատասխանատու մարմին: Փաստորեն այն դարձավ հայ ժողովրդի գերագույն իշխանությունը մինչև Հայաստանի անկախության հռչակումը և «ստանձնեց կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»<sup>32</sup>: ՀԱԽ-ը կազմված էր 15 անդամից՝ վեց դաշնակցական, երկու էսէռ, մեկ հնչակյան, մեկ մենշևիկ, երեք անկուսակցական և ՀԺԿ երկու ներկայացուցիչ (Սամսոն Հարությունյան, Հարություն Այվազյան)<sup>33</sup>:

Հայաստանի անկախության հռչակումից հետո կառավարություն ստեղծելու հարցի շուրջ սուր պայքար ծավալվեց հատկապես ՀՅԴ-ի և ՀԺԿ-ի միջև: ՀԺԿ-ն որոշում ընդունեց կառավարության ստեղծումը չվստահել ՀՅԴ հաշնակցությանը և իրեն դիտելով իբրև ավելի խելացի և հավասարակշռված գործելակերպ ունեցող կուսակցության՝ հենց իրեն էր վերապահում ՀՀ կառավարություն ստեղծելու իրավունքը: Ժողովրդականները գտնում էին նաև, որ ժամանակին ազատագրական զինյալ պայքարը ղեկավարած կուսակցության համար անհնարին կլինի լեզու գտնել թուրքերի ու նրանց դաշնակիցների հետ:

1918 թ. հուլիսի 17-ին Ազգային խորհուրդն ու ՀՀ կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվեցին Հայաստան, որի հետևանքով հայ քաղաքական կյանքի կենտրոնը դարձավ **Երևանը**: Այստեղ կուսակցությունների «փոխադարձ համաձայնութեամբ կատարելով պաշտոնների բաշխում»<sup>34</sup> Ազգային խորհրդի անդամների թվաքանակը եռապատկելու սկզբունքով կազմվեց Հայաստանի խորհրդարանը, որի 46 պատգամավորներից 6-ը ՀԺԿ-ականներ էին<sup>35</sup>: Ի դեպ, ՀԺԿ-ն երկու մանդատ էլ ուներ Վրաստանի խորհրդարանում<sup>36</sup>: Խորհրդարանի ընտրված երկու փոխնախագահներից մեկը ՀԺԿ կողմնակից Գրիգոր Խաչատրյանն էր:

Հովհաննես Քաջազնունու գլխավորած ՀՀ առաջին կառավարությունը կազմվեց հայ ժողովրդի համար ծանր և դժվարին պայմաններում: Վար-

31 Տես **Хуршудян Л., Худавердян К.** Армянские политические партии. Некоторые вопросы истории и идеологии, «Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне», Калинин, 1980, с.102.

32 **Խոնդկարեն Ա.** նշվ. աշխ., «Վէմ», Փարիզ, 1934, N 1, էջ 77:

33 Տես ՀԱԽ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 1-3:

34 Տես **Խոնդկարեն Ա.**, նշվ. աշխ., 1934, N 1, էջ 92:

35 Խորհրդարանում վեցական պատգամավոր ունեին ընդդիմադիր սոցիալ-դեմոկրատները (5 մենշևիկ և 1 բոլշևիկ) և էսեռները: Կային նաև վեց մահմեդական, երկու անկուսակցական և մեկական ռուս ու եզդի պատգամավորներ:

36 Տես «Հորիզոն», Թիֆլիս, 20 սեպտեմբերի, 1918:



չապետը խորհրդարան ներկայացրեց հայտագիր (դեկլարացիա), որին ընդդիմությունը բավականին զուսպ արձագանքեց: Էսեռների ֆրակցիան ձեռնպահ քվեարկեց: Սոցիալ-դեմոկրատները քաղաքական անզգուշություն դրսևորելով (նրանք նշում էին, որ «կառավարության յայտագիրը յիշեցնում է Ստոլոպինին, ով ասում էր՝ «նախ խաղաղութիւն, ապա ընթրման»<sup>37</sup>) ևս ձեռնպահ մնացին: Ժողովրդականները մատնանշելով մի շարք բացթողումներ՝ գոհունակություն հայտնեցին հայտագրի հեղինակ կառավարությունից: Ի վերջո բանաձևն անցավ 23 ձայնով: Ոչ ոք դեմ չքվեարկեց: Ձեռնպահ մնացին 11 հոգի: Իր ձեռնպահությամբ ապահովելով անհրաժեշտ մեծամասնությունը կառավարության համար, ընդդիմությունը չուզեց գնալ առձակատանն և հնարավորություն «ուառ Հայաստանի Խորհրդին արագ կերպով փակելու դահլիճի հարցը ու անցնելու հերթական խնդիրներին»<sup>38</sup>:

Երկրում տիրում էր ծանր կացություն, կառավարությունն էլ անփորձ էր: Այդ պատճառով էլ ունեցավ լուրջ բացթողումներ: Առանց այն էլ դժվարագույն պայմաններում գոյատևող հայ ժողովուրդն աստիճանաբար հայտնվում էր անդունդի եզրին: Օրեցօր սաստկացող սովն ու տարափոխիկ հիվանդությունները խլում էին մեծ թվով մարդկային կյանքեր: Հազարավոր սոված ու տկլոր գաղթականների առկայությունը՝ մի կողմից, մաուզերիստների անկարգությունները՝ մյուս կողմից, խաթարում էին հանրային կյանքը բնականոն հուն տեղափոխելու իշխանությունների ջանքերը:

Այդ իրողություններից դժգոհ ընդդիմադիր ուժերն իրենց պաշտոնաթերթերում<sup>39</sup> ու բանավոր ելույթներում պարբերաբար քննադատում էին կառավարությանը և պահանջում նրա հրաժարականը: Մասնավորապես ՀԺԿ-ն նշում էր, որ հանրապետության դրությունը կառավարության գործունեության առաջին երեք ամիսների ընթացքում ամենևին չբարելավվեց, «անարխիան հետզհետե՛ սկսեց աւելի խորանալ, պարենաւորման գործը, գաղթականութեան հարցը ռացիոնալ հիմունքների վրայ չդրվեցին, և ստեղծեց մի քաօս»<sup>40</sup>: Բանը հասել էր այնտեղ, որ նույնիսկ դաշնակցական ֆրակցիայի ներկայացուցիչներն էին «անբավականութիւն արտայայտում» կառավարությունից: Իրավիճակը ձիշտ գնահատելով՝ ՀՀ խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում Հ. Քաջագունու կառավարությունը ստիպված հրաժարական ներկայացրեց:

Խորհրդարանը դարձյալ Հ. Քաջագունուն հանձնարարեց կազմել նոր կառավարություն: Քաղաքական ընդդիմությունից սոցիալ-դեմոկրատներն ու էսեռները կտրուկ հրաժարվեցին մաս կազմել նորաստեղծ կառավարությանը: ՀՅԴ-ն էլ առանձնապես «չէր փնտռում ձախ օպոզիցիայի գործակցութիւնը» և դրանով էր բացատրվում այն շտապողականությունը, որով ավարտվեցին բանակցությունները: Իսկ Առաջին աշխարհամարտի ավարտից

37 Տե՛ս Խոնդկարեան Ա., նշվ. աշխ., 1934, N 4, էջ 80:

38 Խոնդկարեան Ա., նշվ. աշխ., 1934, N 4, էջ 83:

39 Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի Հանրապետության գոյության ընթացքում լույս են տեսել կենտրոնական և տեղական նշանակության 60 անուն թերթեր: Դրանցից աջակողմյան թեևին պատկանող ազդեցիկ պարբերականներ էին ՀԺԿ-ական «Ժողովուրդը», ՀՄՌ-ի «Վան-Տոսպը» և նրա իրավահաջորդ Հայաստանի ձայնը: Զախակողմյան մամուլը ներկայացնում էին սոցիալիստ-հեղափոխականների (էսեռներ) «Սոցիալիստ հեղափոխական», սոցիալ-դեմոկրատ մենշևիկների հայաստանյան կազմակերպության օրգան «Կայծ» եռօրյան, Ալեքսանդրապոլում լույս տեսնող մենշևիկյան «Մարդկություն» եռօրյան և այլն: 40 «Ժողովուրդ», N 26, 1 նոյեմբերի 1918:

հետո լավատես և ավելի ինքնավստահ դարձած ՀԺԿ-ն առանց երկնտելու և պատասխանատվությունից վախենալու անմիջապես ցանկություն հայտնեց մաս կազմել ստեղծվելիք կառավարությանը<sup>41</sup>: Մի քանի օր տևած բանակցություններից հետո **կոալիցիոն սկզբունքով** կազմվեց ինը նախարարություններից բաղկացած կառավարություն: Չորս պորտֆել (վարչապետի, արտաքին, ներքին գործերի և խնամատարության) ղեկավարումը տրվեցին ՀՅԴ-ին, չորսը (ֆինանսների, արդարադատության, լուսավորության և պարենավորման)՝ ՀԺԿ-ին և մեկը՝ գինվորականը, պետք է ղեկավարեր չեզոք անձնավորություն: Որոշվեց նաև, որ արտգործնախարարի օգնականը պետք է լինի Ժողովրդական կուսակցությունից:

Նկատենք, որ ՀԺԿ-ի շարքերում ֆինանսատնտեսական, վարչաիրավական բնագավառների բարձրակարգ մասնագետներ ավելի շատ կային, քան մյուս կուսակցություններում: Ժողովրդականները, մտնելով կառավարություն, նպատակ ունեին կարգուկանոն հաստատել երկրում: Սակայն մի քանի ամիսների համատեղ աշխատանքը ցույց տվեց, որ երկրի իշխանությունը համախմբված և միասնական մարմին չդարձավ: Նախարարությունները, ըստ կուսակցական պատկանելության, գործում էին իրարից անջատ և չէին կիսում ընդհանուր պատասխանատվությունը: «Ոչ կառուարութեան ներսը և ոչ էլ Հայաստանի Խորհրդարանում, - հիշում է Ա. Խոնդկարյանը, - չստեղծեց ունե միություն դաշնակցականների ու ժողովրդականների միջև»<sup>42</sup>: Հատկապես մեծ հիասթափություն ապրեցին ժողովրդականները: Նրանք համոզվեցին, «որ սխալ է եղել իրենց այն կարծիքը, թե գրաւելով մեծ թոււ աթոռներ դահլիճում, ձեռք կը բերեն նաև մեծ ազդեցութիւն երկրի իշխանութեան մէջ»<sup>43</sup>: Նրանք հասկացան, որ քվեարկությունների ընթացքում «ձայները կշուում են և ոչ թէ համրում», որը Հայաստանի այն ժամանակվա պայմաններում միանգամայն համապատասխանում էր իրականությանը:

Ճգնաժամ էր հասունանում նաև խորհրդարանում, որը փաստորեն ոչ թե ընտրովի մարմին էր, այլ ստեղծվել էր կուսակցական սկզբունքով և իրապես չէր արտահայտում ժողովրդի հավաքական կամքը: Օրինակ՝ սոցդեմը և էսեռները թեև խորհրդարանում ունեին պատգամավորներ, սակայն ժողովրդի կողմից լայն աջակցություն չունեին: Որ Հայաստանի խորհրդարանում պատգամավորների քանակական հարաբերակցությունը չէր արտացոլում իրականությունը, ակնհայտ երևաց նաև 1918 թ. վերջերին տեղի ունեցած Երևանի քաղաքային դումայի ընտրություններից: ՀՅԴ-ն այդ ընտրություններում ստացավ երկու անգամ ավելի ձայն, քան մյուս կուսակցությունները միասին վերցրած<sup>44</sup>: Այստեղ ձայները (սոցդեմը և էսեռները) ստացան ընդամենը 4 տեղ<sup>45</sup>:

Ակնհայտ իրողություն էր, որ 1919 թ. գարնանը խոր հակասություն էր առաջացել ժողովրդի և խորհրդարանական պատգամավորների միջև: Այդ սուր հակասությունները բացասաբար էին անդարադառնում նրա աշխա-

41 Տե՛ս «Ժողովրդի ձայն», 6 դեկտեմբերի, 1918:

42 **Խոնդկարեան Ա.**, նշվ. աշխ., 1934, N 4, էջ 95:

43 Նույն տեղում:

44 Տե՛ս «Վեմ», Փարիզ, 1934, N Ե., էջ 50:

45 Տե՛ս ՀԱՎ, ֆ. 203, ց. 1, գ. 230, թ. 29:

տանքների արդյունավետության վրա և **խորհրդարանի արձակուճը անհետաձգելի խնդիր էր դարձել**: Այդ պատճառով 1919 թ. ապրիլի 27-ին խորհրդարանը ՀՅԴ-ի և ՀԺԿ-ի առաջարկած երեք կետից բաղկացած համատեղ օրինագծով օրենք ընդունեց իր աշխատանքները մեկ ամսով դադարեցնելու, այդ ընթացքում խորհրդարանի իրավունքները կառավարությանը հանձնելու և խիստ անհրաժեշտության դեպքում՝ խորհրդարանի արտակարգ նիստ գումարելու մասին<sup>46</sup>: Ինչպես վկայում է Ս. Վրացյանը, Հայաստանի խորհրդարանի այս արձակուրդով ըստ էության վերջ տրվեց նրա գործունեությանը<sup>47</sup>: Նրա գործառույթներն ամբողջովին յուրացրած կոալիցիոն կառավարությունը ապրիլի 27-ից մինչև մայիսի 27-ը ընդունեց ու հրապարակեց 99 օրենք<sup>48</sup>: Այդ ամենով հանդերձ սակայն հնարավոր չեղավ հաղթահարել նաև խորհրդարանի ձգնաժամը:

Երկու կուսակցությունների միջև առկա տարաձայնություններն իրենց գագաթնակետին հասան, երբ 1919 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրը, պաշտոնապես հրապարակվեցին 1919 թ. մայիսի 26-ին ընդունված՝ «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության» և մայիսի 27-ի՝ դրանից բխող և դրա տրամաբանական շարունակությունը կազմող «Հայաստանի խորհրդի համալրման մասին» նախարարների խորհրդի իրավական ակտերը: Դրանով կառավարությունը ձգտում էր այն բանին, որ Միացյալ Հայաստանը պետք է ունենար նաև միացյալ խորհրդարան: Այսինքն՝ խորհրդարանը պետք է համալրվեր արևմտահայ ներկայացուցիչներով:

Դեռևս 1919 թ. փետրվարի 6-13-ին տեղի ունեցած Արևմտահայերի երկրորդ համագումարը<sup>49</sup> հայտարարել էր, որ նա Հայաստանը միացյալ և անկախ է ճանաչում: Ակտի գերնպատակը նշանակում էր մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ կառավարություն գաղափարի վրա հիմնված պետական քաղաքականության իրագործում: Իսկ դրա համար անհրաժեշտ էր կազմել միացյալ Հայաստանի կառավարություն և միացյալ խորհրդարան<sup>50</sup>:

Ի դեպ, ինչպես իրավամբ նշում է Ա. Հակոբյանը, Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը նորություն չէր, և այն առաջին անգամ առաջ էր քաշել Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը 1918 թ. նոյեմբերի 30-ին՝ հորդորելով դաշնակիցներին ստեղծել այդպիսի պետություն<sup>51</sup>: Պողոս Նուբարը և արևմտահայ գործիչների մեծ մասը մտավախություն ունեին, որ Ռուսաստանն ի վերջո կգրավի Հայաստանը<sup>52</sup>: Այդ պատճառով էլ ձգտում էին հասնել Արևմտյան Հայաստանի (հնարավորության դեպքում՝ Կիլիկիայի հետ) անկախության հռչակմանը: Այդ դեպքում իրենց

46 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86., թ. 32: Տե՛ս նաև «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս I, Եր. 1919, էջ 61:  
 47 Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Պէյրոս, 1958, էջ 253:  
 48 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88:  
 49 Համագումարին մասնակցել են 55 պատգամավոր: Որոշվել է աջակցել ՀՀ կառավարությանը հասնելու Հայկական հարցի արդարացի լուծմանը և օգնել հայ գաղթականությանը ծանր վիճակից դուրս գալու համար:  
 50 Տե՛ս **Վրացեան Ս.**, Բանակցություններ Ազգային պատվիրակության և ՀՀ միջև, Պոսթրն, 1920, էջ 6:  
 51 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920, Եր., 2005, էջ 162:  
 52 Տե՛ս **Ճիզմեճեան Մ.**, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 397:

նպատակն էր նաև Պ. Նուբարի վարչապետությանը կազմել ապագա կառավարությունը<sup>53</sup>:

Աշխարհամարտի ավարտից հետո ՀՀ իշխանությունները պաշտպանեցին Միացյալ Հայաստանի գաղափարը և ձեռնամուխ եղան դրա իրագործմանը: Այդ մասին արևելահայ պարբերական մամուլում առաջին անգամ գրվեց ՀԺԿ Երևանի կոմիտեի պաշտոնաթերթ «Ժողովուրդ»-ի էջերում<sup>54</sup> 1918 թ. դեկտեմբերի 8-ի համարում «Ազատ Հայաստան» վերնագրված հրապարակման մեջ՝ «Միացեալ և Ազատ Հայաստան՝ դա կլինի արմատական լուծումը Հայկական հարցի, դա կլինի ամենանպատակահարմարը թե՛ միջազգային խաղաղութան և թե՛ հայ ժողովրդի շահերի տեսակետից»<sup>55</sup>:

Միացյալ և Ազատ Հայաստանի գաղափարը հրապարակավ հռչակեց ու պաշտպանեց նաև 1919 թ. փետրվար 6-13-ին Երևանում տեղի ունեցած Արևմտահայերի երկրորդ համագումարը, որը նաև իր ընտրած Գործադիր մարմնին հանձնարարեց «գործնական քայլեր անել Արարատեան Հանրապետութեան կառավարութեան ու խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը հայտարարելու և մեկ համազգային միութիւն իրականացնելու համար»<sup>56</sup>: Համագումարը դիմեց ՀՀ վարչապետին և խորհրդարանին «օր առաջ հայտարարել Միացեալ, Ազատ Հայաստանի անկախութիւնը» և հանդես եկավ այդ ուղղությամբ գործնական քայլեր անելու հորդորով<sup>57</sup>:

Համագումարի մյուս կարևոր հարցը խորհրդարանն արևմտահայ ներկայացուցիչներով համալրելն էր, որով կհաղթահարվեր այն ստոնությունը, որ առաջացել էր հայության երկու հատվածների միջև՝ հանրապետությունում քաղաքական գործընթացներից արևմտահայության դուրս մնալու հերևանքով: Վերջիններս գտնում էին, որ «ՀՀ կառավարութիւնը հավասար աչքով չի նայում ռուսահայ և տաճկահայ գաղթականութեանը»<sup>58</sup>:

1919 թ. մայիսի 27-ին նախարարների խորհրդի կողմից հաստատված օրենքով, որպես երկու Հայաստանների իրական միացման արտահայտություն, որոշվեց Հայաստանի խորհրդի կազմը համալրել արևմտահայերի 12 ներկայացուցիչներով: Ընտրվեցին խորհրդարանը համալրող 12 պատգամավորներ, որոնք ՀՅԴ անդամներ էին կամ նրան հարողներ: Մինչդեռ հայտնի էր, որ գաղթականության մեջ զգալի կշիռ ու ազդեցություն ունեին ռամկավարները և այդ 12 անդամների թվում պետք է որ լինեին նաև ռամկավարներ: Բայց քանի որ նրանք որպես բողոքի նշան մինչ այդ հեռացել էին համագումարից, և Արևմտահայ նորընտիր գործադիր մարմինը բաղկացած էր միայն դաշնակցականներից, ուստի ընտրվածներն էլ նույն ՀՅԴ կուսակցությունից էին: Սակայն ինչպես նշում է այդ հարցի խորագիտակ պատմաբան Ա. Հակոբյանը, «իրավական, էլ չենք ասում բարոյական տեսակետից պատշաճ չէր..., ավելին, ոչ մի կերպ չի կարելի արդարացնել կառավարու-

53 Տես «Արձագանք», Եկատերիստոպ, 10 հունվարի, 1919:

54 «Ժողովուրդ» թերթի մասին ավելի մանրամասն տես Մարգարյան Ս., Հայ ժողովրդական կուսակցության «Ժողովուրդ» պաշտոնաթերթը, «Հայագիտության հարցեր», N 3 (15), էջ 29-54:

55 Տես «Ժողովուրդ», Եր., 8 դեկտեմբերի, 1918:

56 Տես «Համառոտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի», Եր., 1919, էջ 13-14:

57 Տես «Համառոտ տեղեկագիր...», էջ 17, Վրացեան Ս., Բանակցութիւններ ազգային պատվիրակութան և ՀՀ միջև, Պոսթրն, 1920, էջ 4-5:

58 ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 144, թ. 2:

թյան որոշումը 12 արևմտահայ ներկայացուցիչներ խորհրդարան ներգրավելու մասին»<sup>59</sup>: Ինքնըստինքյան 12 արևմտահայ ներկայացուցիչների խորհրդարան մուտքով ապահովվում էր ՀՅԴ-ի կայուն մեծամասնությունը, որն էլ անհանգստություն ու վրդովմունք առաջ բերեց ընդդիմության շրջանում: Դա մեծ աղմուկով դիմավորեցին թե «աջ» և թե «ձախ» կուսակցությունների ներկայացուցիչները:

1919 թ. հունիսի 4-ին խիստ լարված պայմաններում տեղի ունեցավ խորհրդարանի 12 պատգամավորներով համալրված առաջին նիստը: Նախապես պատրաստված հայտարարության տեքստով ամբիոնին մոտեցավ և վրդովված իր դժգոհությունն արտահայտեց սոցդեմ խմբակցության ներկայացուցիչ Գ. Ղարաջյանը: Այնուհետև ելույթ ունեցավ ՀԺԿ պատգամավոր Գ. Տեր-Խաչատրյանը: Վերջինս հայտարարեց, որ կառավարությունը անօրինական քայլ է կատարել, փաստորեն պետական հեղաշրջում, ուստի իրենք հրաժարվում են խորհրդի աշխատանքներին մասնակցելուց<sup>60</sup>: Ժողովրդական կուսակցությունը, պնդելով, որ Մայիս 28-ի ակտը միակողմանի բնույթ է կրում, չունի Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարի հավանությունը, չի բխում Հայկական հարցի միջազգային իրավիճակից, չի համապատասխանում հայ ժողովրդի շահերին, չընդունեց այն և պահանջեց չեղյալ հայտարարել այդ ակտը: Դաշնակիցների տված կեղծ խոստումներից օրեցօր ավելի ինքնավստահ դարձած ՀՅԴ-ական կառավարությունը մերժեց ընդունել այդ պահանջը: Հունիսի 24-ին ՀԺԿ-ական նախարարները կառավարության կազմից դուրս եկան և ՀՅԴ-ՀԺԿ կռալիցիան վերջ գտավ: ՀԺԿ-ն դարձավ արմատական ընդդիմություն և շրջադարձ կատարեց ի նպաստ հայ ռամկավարների հետ մերձենալու գործընթացի:

Ընդդիմադիր կեցվածք որդեգրած ՀԺԿ-ն բոյկոտեց նաև 1919 թ. ամռան խորհրդարանական ընտրությունները՝ դրանց նախօրյակին՝ հունիսի 20-ին, հանելով իր պատգամավորական թեկնածուների ցանկը: ՀՅԴ-ի և ՀԺԿ-ի միջև հարաբերություններն այն աստիճանի լարվեցին, որ կառավարախորհրդական ձգնաժամը հնարավոր չեղավ հաղթահարել: ՀԺԿ-ն թեև խորհրդարանական ընտրությունները բոյկոտելուց հետո այլևս գործուն մասնակցություն չունեցավ ՀՀ պետական կյանքին, սակայն շարունակում էր մնալ ՀՅԴ-ից հետո ՀՀ և կովկասահայ երկրորդ ազդեցիկ ուժը: Ժողովրդականները մեծ թվով ներկայացուցիչներ ունեին տեղական ինքնակառավարման մարմիններում և ազդեցիկ ընդդիմություն էին: Ծիշտ է, խորհրդարանական ընտրություններից հետո ՀԺԿ-ն պահանջեց անվավեր համարել հունիսյան քվեարկության արդյունքները և նշանակել նոր ընտրություններ, բայց այս բողոքն ընդամենը ինքնահանգստացման միջոց էր և որևէ գործնական նշանակություն այլևս ունենալ չէր կարող:

**1919 թ. սեպտեմբերին** տեղի ունեցավ ՀԺԿ II համագումարը: Երկրում ստեղծված իրավիճակին համահունչ այն ընդունեց **նոր ծրագիր**: Հիմնականում հավատարիմ մնալով առաջին ծրագրի հիմնադրույթներին՝ այս ծրագրով կուսակցությունը ձգտում էր ստեղծելու ծովային ելքով «միաս-

59 Վակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920, Եր., 2005, էջ 166:

60 Տե՛ս ՀԱՄ ֆ. 393, ց. 2, գ. 118, թ. 1, «Ժողովուրդ», Եր., 6 հունիսի, 1919 թ.:

նական Հայաստան», որտեղ պետք է հաստատվեր պառլամենտական հանրապետություն, որի պետական պաշտոնական լեզուն պետք է լիներ հայերենը<sup>61</sup>: Արտասահմանում գտնվող հայերի համար այս ծրագիրը պահանջում էր ազգային մշակութային ինքնավարություն<sup>62</sup>: ՀԺԿ-ն նախագահական ինստիտուտի անհրաժեշտությունն ընդունելով հանդերձ, առաջությունը տալիս էր խորհրդարանին:

Հետագա քաղաքական իրադարձությունների արդյունքում Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, որից հետո ՀԺԿ-ն ևս տարագրվեց և շուտով միացավ նորաստեղծ ՌԱԿ-ին:

## Ամփոփում

1. Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանության մեջ՝ Հայաստանի խորհրդում, ՀՅԳ-ից բացի գործում էին ընդդիմադիր չորս կուսակցություններ, որոնք ունեին նաև իրենց խորհրդարանական ֆրակցիաները: Դրանք էին՝ Սոցիալ-դեմոկրատական, Սոցիալիստ-հեղափոխական և Հայ Ժողովրդական կուսակցությունները:

2. Հայ Ժողովրդի համար ստեղծված ծանր տնտեսական ու քաղաքական իրավիճակում՝ քննադատելով հանդերձ իշխանություններին, ընդդիմությունը հիմնականում հանդես էր բերում զուսպ, կառուցողական վերաբերմունք:

3. Ընդդիմադիրներից ամենահզորը Հայ Ժողովրդական կուսակցությունն էր, որը տիրապետելով ֆինանսական լուրջ ռեսուրսների և ունենալով խելացի ու բանիմաց կադրեր, քննադատում էր իշխանության թույլ տված սխալները, միաժամանակ հանդես էր բերում հանդուրժողական մոտեցումներ նրա վարած քաղաքականության նկատմամբ: Չխուսափելով պատասխանատվությունից՝ ՀԺԿ-ն չորս նախարարական պորտֆելով մաս կազմեց 1918 թ. նոյեմբերի 4-ին ստեղծված կոալիցիոն կառավարությանը:

4. Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի առաջին Հանրապետությունում թե՛ իշխանությունները և թե՛ ընդդիմությունը հիմնականում հանդես էին բերում պետականության գաղափարի խորը ըմբռնում: Պետությունը համարելով ազգային բարձրագույն արժեք՝ յուրաքանչյուրն իր պատկերացրած ձևով փորձում էր նպաստել նրա հետագա հզորացմանը:

**Սուրեն Թ. Սարգսյան** – ունի յոթ մենագրություն և շուրջ 100 գիտական հոդվածներ: Զբաղվում է հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության, Արմենական, Հայ Սահմանադրական ռամկավար, Ռամկավար Ազատական և Հայ Ժողովրդական կուսակցությունների և դրանց հրատարակած պաշտոնաթերթերի պատմության հարցերով:

61 Տե՛ս նույն տեղում:

62 Տե՛ս նույն տեղում:

## Summary

### THE POLITICAL OPPOSITION IN REPUBLIC OF ARMENIA 1918–1920

Suren T. Sargsyan  
*Doctor of Historical Sciences*

**Key words** – Republic of Armenia, Armenian People Party, independence, party, opposition, program, government, official newspaper, parliament, coalition.

In the legislative power of the Armenian Republic restored on May 28, 1918 besides ARF presented in the parliament of Armenia there were four opposition parties which had their parliamentary factions. There were the Social-Democratic, Social-Revolutionary and the People's Party of Armenia. Because of the hard economic and political situation created for the Armenian people the opposition alongside with the criticism of the power had to mainly express composed and constructive attitude. The most powerful one of the opposition parties was the People's Party of Armenia which had serious financial resources and clever and adapt members: it was criticizing the mistakes committed by the power and at the same time expressed strongly tolerant attitudes towards its policies. By taking the responsibility the PPA party alongside with its four ministerial portfolios became the part of the coalition government created on November 4, 1918. In general both the powers of the First Armenian Republic and the opposition mainly expressed deep perception of the idea of statehood. By considering the state as a national high value each of them in their own way contributed to its further enhancement.

## Резюме

### ПОЛИТИЧЕСКАЯ ОППОЗИЦИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В 1918–1920 ГГ.

Сурен Т. Саргсян  
*Доктор исторических наук*

**Ключевые слова** – Республика Армения, Армянская народная партия, независимость, партия, оппозиция, программа, правительство, официальная газета, парламент, коалиция.

В законодательной власти основанной 28-го мая 1918 г. Республики Армения – Совете Армении, кроме АРФ Дашнакцутюн, действовали четыре оппозиционные партии, имевшие также свои парламентские фракции. Это были Социал-демократическая партия, Партия социалистов-революционеров и Армянская народная партия. Исходя из тяжелого положения армянского народа, оппозиция, критикуя власти, вместе с тем в основном проявляла

ՀՀ-ի հանրապետության հանրապետության 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018 ժ (ժ-Ձ) քառրի, քառրի, քառրի

сдержанное, конструктивное отношение. Сильнейшей среди оппозиционеров была Армянская народная партия, которая обладала серьезными финансовыми ресурсами и располагала толковыми и сведущими кадрами. Она критиковала ошибки, допущенные властями, и одновременно проявляла подчеркнуто толерантный подход к проводимой ими политике. Не избегая ответственности, АНП четырьмя министерскими портфелями вошла в состав коалиционного правительства, созданного 4-го ноября 1918 г. В общей сложности, как власти, так и оппозиция в первой Республике Армения в основном проявляли глубокое понимание идеи государственности. Считая государство высочайшей национальной ценностью, каждый по своим представлениям пытался способствовать его дальнейшему усилению.

## REFERENCES

1. HAA f. f. 200, ts. 1, g. 86, t. 32: HAA, f. 203, ts. 1, g. 230 t. 29: HAA, f. 222, ts. 1, g. 141, t. 1-3: 292: HAA f. 393, ts. 2 g. 118 t. 4033, HAA, f. 1021, g. 7, ts. 11, t. 1-2, f. 1022, ts. 7, g. 96, t. 26, HAA , f. 1457, ts. 1 g. 562, HAA, f. 4047, ts. 1 g. 144, t.2.
2. Yeghishe Charentsi anvan Grakanutyun ev arvesti tangarani archive A. Chopanyani, H. Tumanyani, Shirvanzadei, M. Abeghyani, T. Azatyani foder.
3. «Dokumenti I materialy po Vneshney politiki Zakavkazya i Gruzii, Tiflis, 1919. 4.
4. Nyuter H.Y. Dashnaksutean patmutean hamar (aysuhetev Nyuter...), khmb. **Hr. Tasnapeteani**, h.A, Peyrut, 1984, h. B, 1985, h. G, 2007, h. D, 1982, h. E, 2007, h. Z, 2010, h. T, 2012, h. ZH, 2014, h. ZHA,2015, h. ZHB, 2016.
5. «Hayastani khorhrdi hastatats orenqneri 1918–1919 tt», mas I, E. 1919,
6. Tsragir hay Zhoghovrdakan kusakysutean, veraqnnvats A. hamagumarum septem-beri 27-in, Tiflis, 1917.
7. «Hamarot teghekagir Arevmtahay erkrord hamagumari», E., 1919,
8. **Aharonyan A.** «Sardarapatits minchev Sevr ev Lozan, Qaghaqakan oragir, 1919–1927»), Er., 2001,
9. **Avagyan G.** , Mikayel Papajanyani hasarakakan-qaxaqakan gortsuneutyuny, atena-khosutyun seghmagir, Er., 2009.
10. **Babajanyan V.**, «Mijkusaktsakan haraberutyunnery Hayastani Hanrapetutyunum 1918–1920 tt. », Er. , 2017.
11. **Darbinyan A.** «Hay azatagrakan sharzhman oreren», Er. 2003),
12. **Khatisyan A.** «Hayastani Hanrapetutean tsagumn u zargatsumy», Peyrut, 1968),
13. **Khechumyan D.** Hay zhoghovrdakan kusaktsutyun gaghaparakhosutyun ev gortsuneutyun hakazhzhoghovrdakan eutyuny, LHG, Er., 1984, tiv 2.
14. **Khechumyan D.** Kriticheskiy analiz ideologii I politiki Armyanskoy partii /1917–1921gg./, (atenakhosutyun seghmagir) Erevan, 1987.
15. Hayastani Hanrapetutyun (4 hator, The Republic of Armenia, hator I(1971) ev hator II (1982), hatorner III ev IV (1996) U.C. Press).
16. **Khondkaryan A.** , «Opozitsian hanrapetakan Hayastanum», «Vem», 1933, A, ej 63–82, B, ej 68–79, 1934, G, ej 76–98, E, ej 43–46).
17. **Khondkaryan A.** , «Opozitsian hanrapetakan Hayastanum», «Vem», Pariz, 1934, N 4, ej 78.
18. **Khurshudyan L. Khudaverdyan K.** Armyanskie politicheskie partii. Nekotorie voprosi istorii i ideologii, «Neproletarskie partii I organizatsii natsionalnikh rayonov Rocii v Oktyaberskoy revolyutsii I grazhdanskoy voyne», Kalinin, 1980, c. 102.
19. **Hakobyan A.**, Hay zhoghovrdakan kusaktsutyun gaghaparakhosutyuny, tsragiry ev martavarutyuny», LHG, N 2(106), 2002, ej 106–111,



20. **Hakobyan A.**, Hayastani khorhgarany ev qaghaqakan kusaktsutyunnery (1918–1920 tt.), Er., 2005.
21. **Hakobyan A.**, Hayastani Hanrapetutyuny 1918–1920 tt., Er. , 2018.
- Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., Եր., 2018:
22. **Chizmechean M.**, Patmutiun amerikahay qaghaqakan kusaktsuteants 1890–1925, Frezno, 1930, ej 397.
23. **Meliqyan V.**, 1917 petrvaryan heghapokhutyuny ev Hayastany, Er., 1997. Sarg-syan S., Hay Zhoghovrdakan kusaktsutyany «Zhovovurd» pashtonaterty, «Hayagitutyany hartser», tiv 3(15), ej 29–54.
24. **Vardivarean H.**, Mets erazi chambun ughevornery ev hamaparpak patmutedun RAK-I, hat. A, Armenakan kazmakerputeun, hay Zhoghovrdakan kazmakerputeun, Niv Chyrzi, 2015.
25. **Virabyan V.** , Hayastani Hanrapetutyuny 1918–20tt. Karavarutyany razmaqaghaqakan gortsuneutyuny ev kusaktsutyunnery (Hayots qaghaqakan patmutyany ejerits), Er., 1999.
26. **Vratsyan S.**, Banaktsutiunner Azgayin patvirakutean ev HH mijev, Postyn, 1920, ej 6.
27. **Vratsyan S.**, «Hayastani Hanrapetuteun», Pariz, 1928.
28. «Zhoghovurd», « Zhoghovrdi dzayn », «Van-Tosp», «Hayastani dzayny », «Hayastan», «Mshak», «Horizon», «Karavarutyany Iraber», «Hovit», «Vem», «Tifliski listok», «Kavkazskoye slovo», «Sotsialist heghapoxakan », «Kayts», «Mardkutyun», «Vem», «Ardzaganq», Ekaterinodar, 10 hunvari, 1919.



Նարեկ Ա. Մկրտչյան  
*Պատմ. գիտ. թեկնածու*

## ԵՐԵՎԱՆԸ 1918–1920 ԹԹ. ՀՀ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Ազգային ինքնության տարածական կազմակերպման  
իմաստաբանությունը

**Բանալի բառեր** – Երևան, ինքնություն, ազգային կենտրոնատեղի, Առևտրական հրապարակ, քաղաքային միջավայր:

### Մուտք

Սույն աշխատանքի նպատակը Հայաստանի Հանրապետության տարածաճարտարապետական կազմակերպման հիմնախնդիրների ուսումնասիրությունն է: Մասնավորապես անդրադարձ է կատարվում մայրաքաղաք Երևանի մշակութային և ճարտարապետական վերակառուցման հիմնախնդրին: Այն դիտարկվում է ինչպես պետականաշինության, այնպես էլ ազգաշինության համապատկերում:

Պետք է նկատել՝ քաղաքային միջավայրերի միջոցով հանրույթի և անհատի ձևավորումը համապատմական փորձառություն է, որը չի շրջանցել նաև Հայաստանը: Միջավայրի տարածական կերպափոխությունն ազգաշինության և պետականաշինության գործընթացները խթանող հասարակական ներուժակ գործիք է: Հենց այս մեկնակետից էր ելնում Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը 1918–1920 թվականներին: Երևանը դիտարկվում էր իբրև քաղաքակրթական ինքնանորոգման կենտրոնատեղի, որտեղ կառավարող և ստավոր ընտրանին պետք է մշակեր ազգային վերածննդի ծրագրեր: Քաղաքային միջավայրը դիտարկվում էր իբրև ազգային նոր ինքնության ձևավորման կենսատարածք: Դա մշակութային համընդգրկուն գործընթաց էր, որտեղ հատկապես կարևոր է ընդգծել ճարտարապետ **Ալեքսանդր Թամանյանի** դերը:

Նպատակին հետամուտ՝ այս աշխատանքում ուսումնասիրվում է Ալեքսանդր Թամանյանի՝ մինչ այժմ չհրատարակված հայցադիմումն իրեն ՀՀ գլխավոր ճարտարապետ նշանակելու մասին: Իբրև սկզբնաղբյուր՝ աշխատանքում օգտագործվել են նաև Երևանի մշակութային, տարածաճարտա-

րապետական վերակառուցման նախագծին վերաբերող՝ ՀՀ կառավարության և խորհրդարանի նիստերի արձանագրությունները, Երևանի առաջին հատակագիծը, ինչպես նաև մի շարք արխիվային նյութեր: Այսպիսով, չնայած գիտական դիսկուրսում Երևանը գրեթե միշտ դիտարկվում է իբրև խորհրդային նախագիծ, այն, ըստ էության, Հայաստանի Հանրապետության կառավարող և մտավոր ընտրանու ազգային 1918–1920 թթ. նախագծերի կիզակետում էր, որն ավաղ անկեց բոլշևիկաքեմալական արքանում:

## 1. Երևանի մշակութայնացման փորձը

Հայաստանի Հանրապետության հիմնադրմամբ երկրում սկսվեց կերպափոխումների լայնածավալ գործընթաց: Երկրի կառավարող ընտրանին քաղաքակրթական ինքնանորացման ծրագրերով փորձում էր հաղթահարել պետականագուրկ ազգի պատմական փորձառությունը: Նպատակին հետամուտ՝ փորձում էին կիրառել արդի քաղաքական տեխնոլոգիաներ և ավանդական արքետիպեր, որոնց շարքում առանձնակի տեղ ուներ **քաղաքակրթական կենտրոնի** գաղափարը, որը հայոց մեջ իր կիրառելիությունն էր գտել դեռևս Արտաշես 1-ինի կառավարման տարիներին<sup>1</sup>:

ՀՀ կառավարությունն իր առջև ծառայած դժվարագույն պետականաշինական մարտահրավերների պայմաններում ի շարս այլ հարցերի օրակարգային էր համարում նաև երկրի տարածաձարտարապետական կազմակերպման խնդիրը: Սա համապատմական երևույթ է, երբ անցումային շրջանում կառավարող ընտրանին (**էլիտա**) որոշակի ձգնաժամային իրավիճակներ հաղթահարելու համար գործադրում է նաև քաղաքաշինական ճիգ: Վերջինիս միջնորդությամբ հնարավոր է լինում պատասխանել ոչ միայն մարտահրավերներին, այլև նախաձեռնել քաղաքակրթական ինքնության հաստատման կամ վերահաստատման երկարաժամկետ գործընթացներ: Համաշխարհային պատմությանը հայտնի են մի շարք երկրներ, օրինակ՝ Ռուսաստան, Թուրքիա, Գերմանիա, Բրազիլիա, Ղազախստան և այլն, որոնք իրենց մեջ կրել են վերոնշյալ փորձառությունը<sup>2</sup>:

Բացառություն չէր նաև Երևանը, որն ինչ-ինչ հանգամանքների բերումով դուրս է մնացել գիտական մի շարք խոսույթներից և մասնավորապես քիչ է քննարկվել Հայաստանի 1918–1920 թվականների պատմության համապատկերում: Հավանաբար խնդիրը նաև սեփական կենտրոնի բացակայությունն էր. նախքան Երևանը 19-րդ դարում հայերի համար մշակութային և քաղաքական կենտրոնի դեր էին կատարում Թիֆլիսը և Կոստանդնուպոլիսը: Այս առումով կարևոր և արժեքավոր դիտարկումներ է անում ամերիկացի քաղաքագետ Սեմյուել Հանթինգթոնն իր «**Քաղաքակրթությունների բխումը և աշխարհակարգի վերաձևակերպումը**»<sup>3</sup> աշխատությունում, որտեղ մայրաքաղաքի վերակառուցումը, տեղափոխումը, ներկայացվում է իբրև հանրույթի քաղաքակրթական ինքնության հաստատա-

1 Տե՛ս **Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան, Եր., «Սարգիս Խաչենց», «Փրինթինգթոն», 2012, էջ 36:

2 Տե՛ս **Mkrtychyan N.**, Nation-building projects through new capitals: from St. Petersburg to Yerevan and Astana, Nationalities Papers, 45:3, 2017, pp. 485–498.

3 **Huntington S.**, The Clashes of Civilizations and the Remaking of World Order, New York: Simon and Shuster, 1996.

մանը միտված քայլ: Այս համապատկերում պետք է հատկապես ընդգծել «ձեռքված հասարակություններ» կամ «ձեռքված երկրներ» հոլացքը: Նման հասարակությունները կամ երկրները որոշակի իրադրություններում իրենց հայացքն ուղղում են դեպի այլ քաղաքակրթություններ: Ուստի որպեսզի տվյալ երկիրը վերասահմանի իր քաղաքակրթական ինքնությունը, անհրաժեշտ է կառավարող ընտրախմբի և հանրության համագործակցություն<sup>4</sup>:

Ցեղասպանությունից հետո Հայաստանի Հանրապետության գոյության իրողությունը դիտարկվում էր իբրև հույժ կարևոր հնարավորություն՝ ստեղծելու համահայկական նոր կենտրոն: Դրա անհրաժեշտությունը ընկալում էր նաև երկրի բարձրագույն ղեկավարությունը, որի վկայությունը Հայաստանի նոր կառավարության՝ 1919 թ. օգոստոսի 5-ի հայտագրի հետևյալ հատվածն է. «Այս պայմաններում աշխատելու համար անհրաժեշտ են ուժեղ պետական ապարատ, փորձված գործիչներ և պաշտոնյաներ. մինչդեռ շնորհիվ այն հանգամանքի, որ հայ ժողովրդի մտավորական ուժի մի խոշոր մասը շարունակում է մնալ մեր երկրի սահմաններից դուրս, պետությունը գուրկ է բազմաթիվ կարող ինտելիգենտ ուժերից, որոնց բացակայությունը նպաստում է մեր պետական վարչական մեխանիզմի բազմաթիվ թերություններին: Հայաստանի Հանրապետության կենտրոնն անգամ՝ մայրաքաղաքը, գուրկ է կուլտուրական, տեխնիկական հարմարություններից, որոնք անհրաժեշտ են մի պետության վարչական ապարատն ստեղծելու՝ կենտրոնում և դրսում մնացած մտավոր ուժերը դեպի մեր երկիրը գրավելու համար»<sup>5</sup>:

Այսպիսով, Երևանի կառուցակազմման նախագիծը լույս քաղաքաշինական երևույթ չէր. այն, ըստ էության, հայկական նոր ազգային կենսաշխարհի կազմակերպման հայտ էր: Միջավայրը ունակ է հասարակությունում ձևավորելու նոր արժեհամակարգ և գիտակցություն: Ուստի միջավայրի կերպափոխումը հասարակություններում նոր գործընթացների զարգացման հնարավորություն է ընձեռում: Հայաստանի Հանրապետության կառավարող և մտավոր ընտրանու՝ Երևանի կառուցակազմման նախաձեռնությունը տվյալ պատմական հոլովությունում առավել քան արդիական նշանակություն ուներ: Նոր էր ավարտվել Առաջին աշխարհամարտը, հայությունը դեռ ուշքի չէր եկել ցեղասպանության հարվածից, Հայաստանը կանգնած էր համաճարակի, սովի, պետականաշինության և վերակազմակերպման ներքին և արտաքին մեծ մարտահրավերների առջև: Եվ չնայած այս ամենին՝ կառավարող և մտավոր ընտրանին խնդիր էին դրել վերականգնելու կորուսյալ հայրենիքի պատկերը, որը կարող էր գայթակղել նաև երկրի սահմաններից դուրս ապրող մտավորականությանը: Ձևակերպումը, թե «Հայաստանի Հանրապետության կենտրոնն անգամ՝ մայրաքաղաքը, գուրկ է կուլտուրական, տեխնիկական հարմարություններից»<sup>6</sup>, ունի ավելի խորքային բացատրություն. Երևանը, լինելով քաղաքային խիստ ցածր մշակույթի կրող հասարակական կառույց, հազիվ թե կարողանար վերակազմակերպել կամ

4 Տե՛ս նույն տեղում, էջ 139:

5 «Հայաստանի աշխատավոր», Եր., N 121. 16 օգոստոսի 1919 թ.:

6 Նույն տեղում:

ամրապնդել հայկական ազգային ինքնագիտակցությունը, քանզի ինչպես Մենյուել Հանթինգթոնն է նկատում՝ բնակչությունը «պատկանելության և ինքնության բարձրարժեք զգացողություն ձեռք է բերում քաղաքային և մշակութային միջավայրում [...]»<sup>7</sup>:

Չնայած մայրաքաղաքի ազգաբնակչությունը հիմնականում կազմված էր հայկական էթնիկ զանգվածից<sup>8</sup>, Երևանի՝ գյուղաքաղաքի նմանվող ծուռումուռ և տրամաբանությունից զուրկ փողոցներն ու հողաշեն շինություններն իրենց գեղագիտական գործառույթով անհնար էին դարձնում քաղաքաբնակ անհատի ինքնության վերակազմակերպումը: Քաղաքացին թրծվում է՝ անցնելով մի շարք մշակութային շերտերի միջով, ինչպիսիք են, օրինակ, երաժշտությունը, գրականությունը, կերպարվեստը, թատրոնն ու համալսարանական կրթությունը և այլն: Գյուղական կամ գյուղատիպ միջավայրում մշակութային անհատ չի կարող ձևավորվել, քանի որ այն հնարավորինս փակ է, կրոնական և ավանդական, մինչդեռ քաղաքային միջավայրը բաց է, արդի, աշխարհիկ և մշակութային<sup>9</sup>: ՀՀ խորհրդարանի նիստերի արձանագրությունները թերևս խոսում են այն մասին, որ հանրապետության կառավարող ընտրանին գիտակցում էր դրա անհրաժեշտությունը: Օրինակ՝ 1919 թ. սեպտեմբերի 16-ի 13-րդ նիստին խորհրդարան էր բերվել օրինագիծ Երևանում թատերական վարժարան հիմնելու մասին. «Ինչի համար է արվում մի հասարակություն առանց ստեղծագործելու: Հացը ստորադաս է արվեստից: Ոչ թե արվեստը պետք է իջնի դեպի ժողովուրդը, այլ ժողովուրդը՝ դեպի արվեստը: Մեր ժողովուրդը, երկար ժամանակ զրկված լինելով մտավոր հոգեկան բավականություններից, բթացել է նրա զգացումները, գռեհկացել է նրա բարքերը, գեղարվեստի միջոցով պետք է կրթենք, դաստիարակենք նրա այլասերված հոգին»<sup>10</sup>, - հայտարարում է Լուսավորության նախարար Նիկոլ Աղբալյանը: Երևանի բնակչությանը բարեկրթելու միջավայր էր նաև թանգարանային տարածությունը, որի ստեղծման ուղղությամբ նույնպես քայլեր էին ձեռնարկվում, երբ, օրինակ, 1919 թ. սեպտեմբերի 5-ին խորհրդարանի 11-րդ նիստում քննարկվում էր Երևանում մարդաբանական թանգարան-գրադարան հիմնելու հարցը<sup>11</sup>:

Երևանցիների մշակութային ինքնությունը զորացնելու փորձ էր նաև 1919 թ. նոյեմբերի 21-ին խորհրդարանի 37-րդ նիստում ներկայացված օրինագիծը Երևանում երաժշտական վարժարան բանալու մասին, որն ըստ խորհրդարանականների՝ կարևոր նշանակություն ուներ հայրենիքի վերակազմակերպման առումով. «Հայրենիքի վերաշինության աշխատանքի ընթացքում մեր մտահոգության առարկան պիտի լինի նաև ժողովրդի ու մանուկ սերնդի գեղարվեստական կրթության գործը, մենք պիտի միջոցներ մտածենք հրահրելու մեր նոր սերնդի գեղարվեստական ունակություններն ու թարմացնելու վերջին արհավիրքների մեջ ընդարմացած հոգիները. այդ-

7 Huntington S., Political Order In Changing Societies, New Haven And London: Yale University Press, 2006, p. 72.  
8 Տե՛ս Հայկական Ուսումնասիրությունների Անի Կենտրոն, Երևանի բնակչությունը ըստ ազգությունների 1831-ից 1931 թվականներին, <http://www.aniarc.am/2017/10/15/yerevan-population-1831-1931-korkotian/>  
9 Տե՛ս Huntington S., Political Order, էջ 72:  
10 Հայաստանի հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Գլխ. խմբագիր և կազմող՝ Ա. Վիքսոյան, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2009, էջ 268:  
11 Տե՛ս նույն տեղում, էջ 261:

Ժ (ԺԶ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿԱ համահայկական հանդես

պիսի դեր կարող է խաղալ մեր կյանքում երաժշտական վարժարանը»<sup>12</sup>, – պնդում էր գեկուցող Պ. Պարսամյանը:

Ալեքսանդրապոլում հիմնվում, իսկ հետագայում Երևան է տեղափոխվում Հայաստանի համալսարանը, որտեղ պատմալեզվաբանական ֆակուլտետից բացի հիմնվեցին նաև բնագիտամաթեմատիկական, գյուղատնտեսական բաժանմունքներ, իրավաբանական և բժշկական ֆակուլտետներ<sup>13</sup>: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ այս ամենի իրագործման համար անհրաժեշտ էր օրինագծերին և քաղաքական որոշումներին հարիր միջավայր՝ հստակ գեղագիտական, ճարտարապետական լուծումներով: Քաղաքի գեղագիտական վերակառուցման նախաձեռնությունն իր վրա վերցրեց երիտասարդ, տաղանդավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը (1878–1936 թթ.):

## 2. Ինքնանորացման ճարտարապետական ճիգը. Ալեքսանդր Թամանյան

Քաղաքամայր Երևանի մասին պատմագիտական խոսույթում առկա է մի թյուր կարծիք, համաձայն որի՝ Ալեքսանդր Թամանյանի հեղինակած՝ Երևանի ճարտարապետության գաղափարական բովանդակությունը գուտ խորհրդային նախագիծ է: Անշուշտ, Երևանն իր վերջնական պատկերն ստացավ խորհրդային իշխանության տարիներն հարդյունա կառավարող և մտավոր էլիտայի ներկայացուցիչների՝ Ալեքսանդր Սյասնիկյանի և Ալեքսանդր Թամանյանի ջանքերի: Սակայն պատմության հանդեպ չմեղանչելու համար պետք է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության կառավարող և մտավոր ընտրանին Երևանի համահեղինակն էր: Հետագոտողները համեմատաբար քիչ են անդրադառնում 1918–1920 թվականներին Երևանը վերակառուցելու համար Ա. Թամանյանի ծավալած գործունեությանը: Պատճառը հավանաբար աղբյուրների սակավությունն է, քանի որ Թամանյանի՝ Հայաստանի Հանրապետության տարիների գործունեության մասին նյութերի մեծ մասը խորհրդային տարիներին ոչնչացվել է հենց Թամանյանի ընտանիքի կողմից:

**Ալեքսանդր Թամանյանը ծնվել է 1878 թ. Ռուսաստանում՝ Եկատերինոգարում: Հիմնավոր կրթություն է ստացել Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի Կայսերական ակադեմիային կից Գեղարվեստի բարձրագույն ուսումնարանում: Ալեքսանդր Թամանյանի ստեղծագործական կյանքը կապված էր Ռուսաստանի հետ, սակայն 1918 թ. Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո նրա հետագա ստեղծագործական գործունեությունը պետք է շաղկապվեր անկախացած հայրենիքի հետ:**

Շնորհիվ 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության կառավարության և պառլամենտի նիստերի արձանագրությունների՝ տեղեկանում ենք, որ Ալեքսանդր Թամանյանն ակտիվորեն ներգրավված էր հանրապետության տարածաճարտարապետական կազմակերպման գործում: Նախ՝ 1920 թ. փետրվարին նա նշանակվել էր շինարարական հանձնաժողովի փոխ-

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 352:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 523:

նախագահ՝ պետական հաստատությունների համար նախատեսված շենքերի շինաշխատանքների գծով<sup>14</sup>: Իսկ 1920 թ. հունիսի 2-ին կառավարության N 281 որոշմամբ ակադեմիկոս Ա. Թամանյանը նշանակվում է շինարարական հանձնաժողովի նախագահ<sup>15</sup>: Հանրապետության շինարարական հանձնաժողովը զբաղվում էր պետական և հասարակական նշանակության շենք-շինությունների կառուցման և վերանորոգման հարցերով:

Թեև Հայաստանի Հանրապետության գոյության տարիներին Թամանյանի գործունեության մասին մեր ունեցած տեղեկությունները բավականին սուղ են, սակայն գիտենք, որ Ալ. Թամանյանը նշանակվել է նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր ճարտարապետ: Չնայած որ նշանակման որոշման մասին համապատասխան սկզբնաղբյուր դեռևս չունենք, սակայն 1920 թ. հոկտեմբերի 8-ի կառավարության նիստի արձանագրություններից մեկում հանդիպում ենք Ալ. Թամանյանի՝ պառլամենտը և նախարարությունները կառուցվող գիմնագիայի նոր շենքում տեղավորելու մասին զեկուցմանը, որտեղ նա ներկայացված է իբրև գլխավոր ճարտարապետ<sup>16</sup>: Հետաքրքիր է, որ ի սկզբանե նորանկախ հանրապետության գլխավոր ճարտարապետ նշանակվելու նախաձեռնությունը հենց Ալ. Թամանյանինն էր: Նա իբրև մտավորական՝ պատեհ առիթ էր տեսնում սկսելու հայրենի կենսատարածքը վերակերտելու գործընթացը: Այս մասին է վկայում ՀՀ վարչապետին ուղղված Ալ. Թամանյանի՝ 1919 թ. հոկտեմբերի 28-ի հայցադիմումն իրեն ՀՀ գլխավոր ճարտարապետ նշանակելու մասին, որում մասնավորապես նշվում էր.

**«Հայաստանի Հանրապետության նորին գերազանցություն  
Մինիստրների Սովետի պրն. նախագահին  
Ճարտարապետության ակադեմիկոս  
Ա. Ի. Թամանովի**

Դիմում

Կամենայով ծառայել Հայաստանի Հանրապետությանը ճարտարապետական շինարարության ոլորտում իմ աշխատանքներով, հիրագործումն Ձերդ գերազանցությանը ներկայացված զեկուցագրում շարադրված խնդիրների՝ խնդրում եմ ինձ նշանակել Գլխավոր ճարտարապետի պաշտոնին հետևյալ նախադրյալների հիմամբ.

**1. Գլխավոր ճարտարապետի պաշտոնն սահմանվում է Հայաստանի Հանրապետության մինիստրություններից մեկին առընթեր: Գլխավոր ճարտարապետի վրա է դրվում հետևյալ խնդիրների լուծման ղեկավարումը.**

**ա) Հայաստանի՝ վերականգնման ենթակա գյուղերի ու քաղաքների հետազոտում և տարբեր շրջանների կացարանային տիպերի ուսումնասիրություն:**

**բ) Վերականգնվելիք և վերստին կառուցվելիք գյուղերի**

14 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 119, ց. 1, գ. 112-1, թ. 170:

15 Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ. Գլխ. խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Եր., Հայաստանի ազգային արխիվ, էջ 478:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 569:

ու քաղաքների նախագծերի մշակում:

գ) Գյուղացիական կացարանների, տնտեսական շինությունների, վարչական և հանրային շենքերի օրինակելի տիպերի մշակում և այլն, ինչպես նաև տեղերում տեխնիկական հսկողության կազմակերպում դրանց իրագործման պարագայում:

դ) Հայաստանի քաղաքների կարգաբերման ծրագրերի մշակում՝ դրանց բարեկարգման և աճի կապակցությամբ:

ե) Նախագծերի մշակում և շենքերի կառուցման ղեկավարում պետական հաստատությունների կարիքների համար:

զ) Օրինագծերի նախապատրաստում և պետական տեխնիկական հսկողության կազմակերպում հանրային և մասնավոր շինարարության կարգավորման համար և պետության ճարտարապետական շինարարությանն առնչվող այլ հարցեր:

2) Գլխավոր ճարտարապետն ենթարկվում և զեկուցում է անմիջապես նախարարին:

3) Գլխավոր ճարտարապետին առընթեր կազմակերպվում է հետևյալ բաժիններից բաղկացած նրա կառավարումը. ճարտարապետական գեղարվեստական, տեխնիկական և քարտուղարությունների՝ անկախ լինելով մինիստրության մնացյալ բաժիններից:

4) Գլխավոր ճարտարապետին է վերապահվում Հանրապետության ճարտարապետաշինարարական բոլոր հաստատությունների և աշխատանքների ղեկավարումը: Մինիստրության առկա բոլոր ճարտարապետաշինարարական հաստատությունները, որոնց առընթեր ստեղծվելու է Գլխավոր ճարտարապետի պաշտոնը, պետք է մաս կազմեն նրա կառավարման:

5) Գլխավոր ճարտարապետը ճանաչվում է ճարտարապետաշինարարական հարցերի լուծման բարձրագույն ատյան:

Ակադեմիկոս Ա. Թամանով

28-ը հոկտ./19 թ.

Էրիվան

\* \* \*

Հանրային խնամատ. և աշխատանքի նախարար:

Մեր գրույցի հիմամբ՝ խնդրում եմ Ձեզ ակադեմիկոս Թամանովին հրավիրել հայկական «Գեղարվեստի ակադեմիա» [...] և համապատասխանաբար ընդունել նրան քանդակագործության բաժին...<sup>17</sup>28-ը հոկտ./1919 թ.»:

Փաստաթղթից պարզ է դառնում, որ Ալ. Թամանյանը ցանկանում էր

17 Փաստաթղթի այս հատվածում որոշ բառեր դժվարընթեռնելի են: Սակայն ակնհայտ է, որ Ալ. Թամանյանի դիմումի տակ առկա մակագրությունը պատկանում է Հանրային խնամատարության և աշխատանքի նախարար Ավ. Սահակյանին:



ստանձնել ահռելի մի աշխատանք, որը նպատակ ուներ ոչ միայն տարածաճարտարապետական համակարգման ենթարկելու հանրապետության տարածքը, այլև մշակելու զարգացման տարբեր ծրագրեր, որոնց նախագծումը պետք է իրագործվեր հաստատութենական կառավարման մեխանիզմների կիրառմամբ:

Բացի վերոբերյալ համառոտ արձագանքից՝ մեզ հայտնի չէ ՀՀ կառավարության պատասխանը, սակայն այն, որ Ալ. Թամանյանի հայցադիմումը ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ի գիտություն, անհերքելի փաստ է: Դրա մասին է վկայում նաև 1920 թ. ապրիլի 23-ի՝ ԽՆԱմատարության և վերաշինության մինիստրի գեկուցումը գլխավոր ճարտարապետի վարչությունը հաստատելու մասին, որը պետք է գործեր այդ նույն մինիստրության ներքո և որի գործունեության համար նախատեսվում էր բանալ 22.904.950 ռ. վարկ: Առաջարկն հավանության է արժանանում և հաստատման համար ուղարկվում Խորհրդարան<sup>18</sup>: Գլխավոր ճարտարապետ հաստատվելուց հետո Ալ. Թամանյանը պետք է ձեռնամուխ լիներ հայոց նոր համակեցական կենտրոնի՝ Երևանի վերակերտմանը՝ ըստ կենտրոնի վերակառուցման նոր սկզբունքի:

### 3. Երևանի վերակառուցման մարտահրավերները

Երևանին վերաբերող մի շարք արխիվային նյութերից, ինչպես նաև կառավարության նիստերի արձանագրություններից ակնհայտ է դառնում, որ Երևանի կենտրոնի վերակառուցումը երկրի կառավարող և մտավոր ընտրանու ուշադրության կենտրոնում էր: Երևանն այդ տարիներին գտնվում էր արտակարգ անմխիթար վիճակում և ըստ էության ոչ այլ ինչ էր, քան փոշոտ, գավառային մի քաղաք, զուրկ քաղաքային մշակույթին բնորոշ տարածություններից: Անգամ քաղաքի կենտրոնի շրջակա միջավայրը, որտեղ տեղակայված էին, օրինակ, Առևտրական հրապարակը, անգլիական այգին, Սբ Սարգիս եկեղեցին, մզկիթը և 19-րդ դարի մի քանի ճարտարապետական շինություններ, զուրկ էր գեղագիտական համակարգերից և վտանգավոր՝ մարդկանց առողջության համար: Հույժ տագնապալի վիճակում էին քաղաքի սանիտարահիգիենիկ պայմանները: Ահա այսպիսին էր պատկերը, երբ 1919 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ Ալ. Թամանյանի և Երևանի «հանդիպումը»: Չնայած հիասթափեցնող տեսարանին՝ ակադեմիկոս Թամանյանը լավատեսորեն մտածում էր, որ Երևանում դեռ կան որոշ տարածքներ և կառույցներ, որոնք որոշակի վերափոխումների արդյունքում կարող էին վերածվել քաղաքային նոր միջավայրերի:

Հայաստան գալուստ պես ակադեմիկոս Ալ. Թամանյանը ձեռնամուխ է եղել մայրաքաղաք Երևանի զարգացման նախագծերի մշակման գործընթացին: Ըստ էության, Թամանյանը ցանկանում էր համակարգային և բովանդակային վերակառուցման ենթարկել հանրապետության մայրաքաղաքը, որի համար, իբրև սկզբնակետ, ընտրել էր մայրաքաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցումը: Թամանյանի այս նախաձեռնության

ՎԼՎ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

18 Տե՛ս Հայաստանի հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 436-437:

մասին բավականին արժեքավոր տեղեկույթ է պարունակում 1920 թ. մայիսի 8-ին Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարին ուղղված նրա զեկույցը<sup>19</sup>, որին կցված է Երևանի գլխավոր հրապարակի և նրա շրջակա միջավայրի հատակագծի լուսապատճենը (**տե՛ս պատկեր 2**): Երևանի կենտրոնի վերակառուցման նախաձեռնությունից առաջ Ալ. Թամանյանն զբաղված էր հասարակական և պետական նշանակության տարբեր շինությունների կառուցման և վերակառուցման աշխատանքներով: Իբրև ակադեմիկոս-ճարտարապետ՝ մասնագիտական աշխատանքից զատ՝ Ալ. Թամանյանն անձամբ ներգրավված էր նաև շինանյութերի հայթայթման գործում, որը խիստ դժվար էր հանրապետության ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում: Պետք է նշել, որ մինչ Ալ. Թամանյանը, պետական հիմնարկությունների շենքերի կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերմամբ զբաղվում էր շինարարական հանձնաժողովը: Օրինակ՝ կառավարության նիստերի 1918-1920 թթ. արձանագրություններից ակնհայտ է դառնում, որ դեռ 1918 թվականից կառավարության օրակարգային հարցերի շարքում քննարկվել են նաև մի շարք պետական նշանակության շենքերի վերանորոգման կամ կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների, ինչպես և շինարարական տարբեր նյութերի հայթայթման հարցերը<sup>20</sup>:

Կառավարության՝ Թիֆլիսից Հայաստան տեղափոխվելու ձգձգումը սկզբում պայմանավորված էր նաև Երևանում հանրային կառավարման և պետական այլ նշանակության շենքերի բացակայությամբ: Երևանն արդյունաբերական ոլորտից զուրկ, փոշոտ գյուղաքաղաք էր, որը երբեք կենտրոնական քաղաքի նշանակություն չէր ունեցել Ռուսական կայսրությունում<sup>21</sup>: Եվ իսկապես, հանրապետության կենտրոնը՝ Երևանը, զուրկ էր շենքերից, որոնք կարող էին օգտագործվել պետական կարիքների համար: Սրա մասին է վկայում նաև վարչապետ Հովհաննես Քաջազնունու 1919 թ. ապրիլի 9-ի զեկուցումն արական գիմնագիայի նոր շենքը պետական կարիքների համար հարմարեցնելու մասին, որից հետո կառավարությունը որոշում է այդ շենքը հարմարեցնել Հայաստանի խորհրդի և մինիստրությունների համար<sup>22</sup>:

Մինչ տարածաճարտարապետական խնդիրներին համակարգային լուծումներ առաջադրելը, կարծես թե նույն մտեցմամբ էր գործում նաև Ալ. Թամանյանը, երբ փորձում էր գործառույթային այլ նշանակություն ունեցող շենքերը հարմարեցնել կառավարական հաստատություններին: Հետագայում կտեսնենք, որ Ալ. Թամանյանը կողմ էր համակարգային մտեցմանը, որի ապացույցը Երևանի հատակագծի ստեղծումն էր: Սակայն նախ հարկ էր լուծել պետական ինստիտուտների համար անհրաժեշտ շենքերի խնդիր-

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ. 531 Ինքնագիր, Զեկույցի ամբողջական տեքստը տե՛ս հավելված 1-ում:

20 Տե՛ս 1919 թ. հունիսի 28-ին Ներքին գործերի մինիստրի] զեկուցումը Պառլամենտի շենքը վերանորոգելու համար 251.850 ռ. հատկացնելու մասին, որը բավարարվում է ըստ 1919 թ. հունիսի 5-ի օրենքի: ՀԱԱ, ֆ. 199, ց.1, գ.43, թ.143: Բնագիր: Մեքենագիր: Մյուս օրինակը 1919 թ. հուլիսի 22-ի՝ Ներքին գործերի մինիստրի զեկուցումն է՝ շինարարական հանձնաժողովին Սարիղամիշի պահեստներից պետական շենքերի համար անհրաժեշտ քանակությամբ փայտանյութ բաց թողնելու մասին, որը նույնպես հավանության է արժանանում: ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.43, թ.166: Բնագիր: Մեքենագիր:

21 Տե՛ս **Bournoutian G.**, A Concise History of the Armenian People, Mazda Publishers, 2002, p. 300.

22 Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 152:

րը: Այս առումով հետաքրքիր է Ալ. Թամանյանի 1920 թ. հոկտեմբերի 8-ի զեկուցումը պառլամենտը և նախարարությունները կառուցվող գիմնագիւ- յի նոր շէնքում տեղավորելու մասին, որն ըստ էության հաստատվել էր կառավարության կողմից<sup>23</sup>: Նույն զեկուցումից հասկանալի է դառնում, որ Ալ. Թամանյանը հարմարեցման մոտեցմանը համադրում էր նաև հատա- կագծային մոտեցումը, քանի որ իր զեկուցման մեջ նա ներկայացրել էր նաև սենյակների բաշխման հատակագիծը, ըստ որի՝ այդ նորակառույց շէնքում տեղ էր տրվելու՝ «1. պառլամենտին, 2. Նախ. խորհրդին, 3. Արտաքին գոր- ծոց նախարարությանը, 4. Գյուղատնտեսության և պետական գույքերի նա- խարարությանը, 5. Պետական վերահսկողության, 6. Հաղորդակցության նախարարությանը (Ելևմտից նախարարության հատկացված բաժինը), 7. Արդարադատության նախարարությանը, 8. Ներքին գործոց նախարարու- յանը, 9. Պետական գրադարանին: Պառլամենտին, ըստ հատակագծի, հատ- կացված սենյակներից տալ 3 սենյակ՝ Աշխատանքի նախարարությանը և երկու սենյակ՝ Պետական տեղեկատու բյուրոյին և Հեռագրական գործա- կալությանը»<sup>24</sup>:

Շինարարական հանձնաժողովի, իսկ հետո նաև Ալ. Թամանյանի՝ հար- մարեցնելու քաղաքականության հիմնական պատճառներից մեկը հավա- նաբար խիստ սահմանափակ ռեսուրսներն էին: Այս զեկույցից պարզ է դառնում, որ անգամ այդ շէնքի կառուցման համար երկրում չկար բավա- կանաչափ շինանյութ, և անհրաժեշտ նյութերը ստիպված էին ձեռք բերել երկրի տարբեր մասերում գտնվող պետական կամ մասնավոր հիմնար- կություններից: Օրինակ՝ իր զեկուցման մեջ Ալ. Թամանյանը մատնանշում էր անգամ Ուլուխանլու և Շահթախթի կայարանների և Էջմիածնի կիսա- կառույց Վեհարանի տարածքները, որտեղից հնարավոր էր շինանյութ ձեռք բերել: Եթե կայարանների շինանյութը ստանալը հեշտությամբ արտոնվեց կառավարության կողմից, ապա Վեհարանում գտնվող նյութերի առնչու- թյամբ կառավարությունը Ալ. Թամանյանին առաջարկում էր ուղիղ բանակ- ցությունների մեջ մտնել Էջմիածնի հոգևոր իշխանությունների հետ<sup>25</sup>: Ար- խիվային մեկ այլ փաստաթղթից պարզ է դառնում, որ կառավարության որոշումից հետո Ալ. Թամանյանն ուղիղ նամակագրական կապ է հաստա- տել Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ՝ Վեհարանում գտնվող շինարարա- կան նյութերը ձեռք բերելու համար<sup>26</sup>:

#### 4. Երևանի հատակագիծն ըստ Ալ. Թամանյանի նախագծի

Հայաստանի Հանրապետության կառավարության և հատկապես ճար- տարապետ Ալ. Թամանյանի ուշադրության կենտրոնում գտնվող մյուս կար- նոր թեման վերաբերում էր Երևանի կենտրոնի վերակառուցմանը: Եթե նախկինում պետական նշանակության շէնքերի առնչությամբ Ալ. Թաման- յանը երբեմն առաջնորդվում էր հարմարվողական սկզբունքով, ապա մայ- րաքաղաքի կենտրոնի վերակառուցման տարածաճարտարապետական

23 Տե՛ս նույն տեղում, էջ 569:

24 Նույն տեղում:

25 Նույն տեղում:

26 Տե՛ս ՀԱԱ, Ֆ.199, ց.1, գ.195, թ.49:

խնդիրների հաղթահարումը տեսնում էր համակարգային լուծումների մեջ, որոնց արդյունքում պետք է ստեղծվեր մայրաքաղաքի հատակագիծը:

Չնայած Առաջին Հանրապետության ծայրաստիճան վատթար պայմաններին՝ Ա. Թամանյանը 1920 թվականի հատակագծի (**տես պատկեր 1**) հիման վրա փորձում էր վերակառուցել Երևանի կենտրոնը: Չնայած Երևանի հատակագիծը հետագայում ենթարկվելու էր տարաբնույթ փոխակերպումների, այն ըստ էության հիմնակազմիկ նշանակություն ունեցավ քաղաքի հետագա զարգացման համար:



**Պատկեր 1:** Երևանի հատակագիծը, 1920 թ.

Մինչ հատակագծին անցնելը պետք է նշել, որ կառավարությունը նախ՝ իր առջև խնդիր էր դրել լուծել քաղաքի կենտրոնում գտնվող շենքերի և հողամասերի տնօրինման իրավունքի ձեռքբերման խնդիրը հոգուտ քաղաքային ինքնավարության: Ըստ էության, Երևանի վերակառուցման կարևոր փուլերից մեկը հենց մունիցիպալիզացիայի գործընթացն էր, որն սկսվել էր 1919 թվականից: Այս առումով կառավարությանը հատկապես մտահոգում էր քաղաքի կենտրոնի անմխիթար և սանիտարահիգիենիկ ծանր պայմաններում գտնվող շինությունների և դրանց շրջակա հողերի մունիցիպալիզացիայի հարցը: Խոսքը մասնավորապես Երևանի Առևտրական հրապարակի տարածքում գտնվող այրված շենքերի և հողամասերի մասին էր, որոնց մունիցիպալիզացման առաջարկով 1919 թ. նոյեմբերի 25-ին ՀՀ Ներքին գործերի նախարար Ա. Գյուլիսանդանյանը դիմել էր կառավարությանը<sup>27</sup>: Մունիցիպալիզացիայի գործընթացը, որին կողմ էր նաև Ա. Թամանյանը

<sup>27</sup> Տես Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ.

յանը, ինքնանպատակ չէր. այն հնարավորություն կտար կենտրոնի տարածքները և դրանց շրջակայքում գտնվող շենքերը դարձնել քաղաքային ճարտարապետությանը բնորոշ միջավայրեր: Դա հաճախ տեղի էր ունենում **արդար վարձակալությամբ բռնագրավման** ճանապարհով, ինչը կառավարությունն արդարացնում էր հանրագուտ հիմնարկներ կառուցելու անհրաժեշտությամբ: Դրա իրավական ձևակերպման մասին պատկերացում կարող ենք կազմել 1920 թ. հուլիսի 14-ին Ներքին գործոց նախարարի՝ կառավարությանը հղած զեկուցումից, որին ներկա էր նաև ակադեմիկոս Ալ. Թամանյանը: Ջեկուցումը Երևան քաղաքի Առևտրական հրապարակի դիմացի այրված խանութները և հարակից հողամասերը մունիցիպալիզացնելու մասին էր, որին ի պատասխան՝ կառավարությունը կայացրել էր հետևյալ որոշումը.

«ա. Ջեկուցմանը կցած նախագիծն սկզբունքով հաստատել:

բ. Հավանություն տալ բոլոր հողամասերի բռնադատ օտարացմանը և ընդունել, որ սեփականատերերը պիտի վարձատրվեն օրինագծում նախատեսված հանձնաժողովի միջոցով:

գ. Այժմ ևեթ համարել քաղաքի սեփականություն առաջին երեք հողամասերը, որոնք այրված և ավերված են. ինչ վերաբերում է մյուս հողամասերին՝ հանձնարարել ինքնավարությանը և իրավաբանական խորհրդակցությանը մշակել մի ձև, որով սեփականատերերի շահերը պաշտպանվեն ներկայացուցիչ նախարարության խորհրդում՝ ի հաստատումն»<sup>28</sup>:

Կառավարության որոշման վրա ազդեցություն էր ունեցել նաև գլխավոր ճարտարապետ Ալ. Թամանյանի կարծիքը: Նշենք, որ Ալ. Թամանյանը դրական կարծիք էր տվել մունիցիպալիզացման գործընթացին դեռևս 1920 թ. մայիսի 8-ին Ներքին գործերի նախարարին ուղղված իր զեկույցում<sup>29</sup>: Դրանում Ալ. Թամանյանը կառավարության ուշադրությունն է հրավիրում մունիցիպալիզացիայի գործընթացից բխող Երևանի զարգացմանն ուղղված այնպիսի կետերի, որոնք հաշվի չէին առնվել կառավարության կողմից և սպա առաջարկում է նկատի առնել դրանք կառավարության հաջորդ քննարկումներում<sup>30</sup>: Ջեկույցին կցված է Երևանի Առևտրական հրապարակի և նրա շրջակա միջավայրի հատակագծի լուսապատճենը (**տես պատկեր 2**): Ըստ էության, սա գործող հատակագծի վերանայման նախագիծ էր, որը, ըստ Ալ. Թամանյանի, մշակվում էր «համապատասխան եվրոպական շինարարության և քաղաքների բարեկարգման ժամանակակից պահանջներին»<sup>31</sup> և նպատակ ուներ ստեղծելու եվրոպական տիպի քաղաք՝ ուղիղ ճանապարհով ձգվող փողոցների և պողոտաների համացանցով՝ սևեռված դեպի Առևտրական հրապարակը (**տես պատկեր 2**): Խոսքը ճարտարապետական համակարգային մոտեցման մասին էր, որի համար պետք էր ստեղծել ենթակառուցվածքներ, հրապարակներ, համակարգված փողոցներ և այլն: Ալ. Թամանյանը նպատակ ուներ ամբողջությամբ վերակառուցելու

344:

28 Նույն տեղում էջ 518:

29 Տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1.գ. 531 Ինքնագիր, Ջեկույցի ամբողջական տեքստը տես Հավելված 1-ում:

30 Տես նույն տեղում:

31 Նույն տեղում:

քաղաքի կենտրոնը, որտեղ տեղակայված էին Անգլիական այգին և Առևտրական հրապարակը և ապա կապել դրանք քաղաքի ծայրամասային հատվածներին<sup>32</sup>: Ըստ Թամանյանի՝ «այդ հրապարակը (Առևտրական-Ն.Մ.) ամենայն իրավամբ քաղաքի կենտրոնական հանգույցը կարող է համարվել, շրջապատված լինելով բավականին նշանավոր քաղաքամասերով, մի կողմից հրապարակին մոտենում է գլխավոր փողոցը՝ Կրեպոստնայա, և նրա շարունակությունը՝ Աստաֆյանը, մյուս կողմից մոտենում է Զանգուն, իր այն մասով, որը ամենահարմարն է նոր կամուրջի համար, որը և հարմար կլինի տրամվայի գծեր անցկացնելու»<sup>33</sup>:

Սակայն դա ստանալու համար Ալ. Թամանյանը խնդրահարույց էր համարում քաղաքի Առևտրական հրապարակի, այրված և ավերված խանութների, շենքերի և դրանց շրջակա գավառատիպ միջավայրի գոյությունը: Թամանյանը շատ լավ էր գիտակցում, որ քաղաքային միջավայրը պետք է ունենար հնարավորինս մշակութային և գեղագիտական բովանդակություն, որը, ավաղ, Երևանի այդ տեսքով հնարավոր չէր: Քանզի ինչպես Վ. Բենիամինն է նկատում՝ քաղաքը շոկային փորձառությունների միջավայր է<sup>34</sup>, որից հնարավոր է պաշտպանվել միայն քաղաքի գեղագիտական համակարգի միջոցով<sup>35</sup>: Երևանի կավե շինությունները, ծուռուճուռ և նեղլիկ փողոցները հազիվ թե կարողանային հնարավորություններ տալ ներդնելու այնպիսի նշանային համակարգ, որով կշեշտվեր հայկական երկարատև ինքնութենական քաղաքակրթական ժառանգությունը:

Հաշվի առնելով Առաջին Հանրապետության պատմական համատեքստը, ինչպես նաև Երևան քաղաքի բազմաշերտ խնդիրները՝ կարող ենք ասել, որ Երևանն ապրում էր շոկային փորձառության մի ժամանակաշրջան, որի հաղթահարման իր բանաձևն էր առաջարկում Ալ. Թամանյանը: Վերջինս այն տեսնում էր մի կողմից՝ քաղաքի ռացիոնալացման, մյուս կողմից՝ ազգային ինքնության մի շարք արքետիպերի և ճարտարապետության համադրման մեջ: Այս առումով դիպուկ է Յու. Լոտմանը, համաձայն որի՝ քաղաքի ճարտարապետությունը կապված է տվյալ հանրույթի պատմության հետ<sup>36</sup>: Առևտրական հրապարակի տխուր պատկերը և շրջակա կիսաքանդ միջավայրը լրջորեն խոչընդոտում էին քաղաքի որոշ պատմաճարտարապետական կառույցներին՝ նրա բովանդակության գործառական մաս կազմելուն: Այս առումով Թամանյանի գեկույցում կարդում ենք հետևյալ առաջարկը. «Հրապարակի մոտերքը ուշագրավ են հոյակապ դարավոր կառուցվածքները՝ Սուրբ Սարգիս եկեղեցին և Գեոյի մեչիդը, որ ներկայումս ծածկված են մի շարք տխուր և տգեղ շենքերով: Հարկավոր է հարմար ճանապարհի բաց անել քաղաքի կենտրոնից, այսինքն՝ հրապարակից դեպի այդ կողմը: Հարկավոր է նաև քաղաքի ազգաբնակչության հայացքներին բացել Զազուն իր կենդանարար ավերով և Արարատի սքանչելի տեսարանով»<sup>37</sup>:

Պետականագուրկ կեցությամբ և ենթակայության փորձառությամբ պայ-

32 Տե՛ս նույն տեղում:

33 Նույն տեղում:

34 Տե՛ս **Benjamin W.**, On Some Motifs In Baudelaire, in **Neil Leach**, Rethinking Architecture: A Reader in Cultural Theory. London: Routledge, 1997, pp. 28-30.

35 Տե՛ս **Pusca A.**, Ed., Walter Benjamin and the Aesthetics of Change, Palgrave Macmillan 2010, pp. 182-183.

36 Տե՛ս **Лотман Ю. М.**, Семиосфера, Санкт-Петербург, «Искусство – СПб», с. 680.

37 Տե՛ս Հավելված 1:

մանավորված՝ հայկական մշակույթի ազգային իմաստի և տարածքի միջև կապը խաթարված էր: Թամանյանի առաջադրած քաղաքի **հրապարակ-եկեղեցի-Արարատ լեռ** սեմիոտիկ կապը միտված էր ստեղծելու «ազգային երևակայությունների»<sup>38</sup> տարածք՝ նորօրյա «հայ ազգ» հասկացության ձևակերպման համար: Ցավոք սրտի, այս խնդիրը շարունակեց մնալ չլուծված անգամ խորհրդային տարիներին, որի հաղթահարման փորձը դարձյալ Ա. Թամանյանին ու իր հաջորդներին էր, որոնք, ըստ պատմագետ Ալբերտ Ստեփանյանի, կարողացան «հաղթահարել այն՝ հաճախ մեջբերումներ անելով միջնադարյան Հայաստանի (Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անի<sup>39</sup>) ճարտարապետությունից<sup>40</sup>: Քաղաքային միջավայրի նման դրսևորումները գործում են իբրև հավաքական ինքնության և հավաքական հիշողությունների խթանիչներ: Քաղաքը դառնում է տվյալ հանրության պատմության կրողը, քանի որ այն վերածվում է կոլեկտիվ հիշողության տարածության:

Այդ սեմիոտիկ համադրությունը ստանալու համար Ա. Թամանյանն իր զեկույցում առաջարկում էր Երևանի հատակագծի նախագծում կատարել հետևյալ փոփոխությունները.

«1. Ընդարձակել Առևտրական հրապարակը՝ տալով նրան ուղիղ քառանկյունու ձև, փոխարեն գոյություն ունեցող ձագարածիկ:

2. Միացնել այդ հրապարակը լայն և ուղիղ փողոցներով կայարանի հետ, Զանգուի հետ, ուր նախագծվում է նոր կամուրջը, Թափաբաշի հետ և Բերդի հետ, ուր տեղավորված են Զորական հիվանդանոցը, կազարմաները, թեյանոցները և այլն:


3. Մունիցիպալիզացիայի ենթակա հողամասերի վրա շինարարությունն այնպես կատարել, որ նոր շինված շուկաները, խանութները, գրասենյակները և այլն ամեն կողմից ազատ ճանապարհ ունենան:

4. Անցկացնել նոր փողոցներ և կամ կարգի բերել եղածները, որոնք կապում են Առևտրական հրապարակը քաղաքի [հյուսիսային] մասի հետ: Այդպիսի փողոցներից ամենագլխավորը Արմյանսկայա փողոցն է, որը պիտի բավականին լայնացնել, ուղղել և շարունակել մինչև քաղաքի ծայրամասը: Այս մայրաքաղաք փողոցը, որը պիտի անմիջապես միացվի Առևտրական հրապարակի հետ, նույնպես և Քարվանսարայսկայա փողոցը: Կենտրոնական Առևտրական հրապարակի շինարարության հարցը կարող է բավարար լուծումն ստանալ այն դեպքում, երբ կտրամադրվի ձևակերպելու համար ոչ միայն այրված խանութների հողամասը, այլև մյուս հարևան հողամասերը՝ համաձայն դրան կցած գծագրի»:

38 Այս եզրույթն առաջին անգամ կիրառվել է ազգագիտության տեսաբան Բենեդիկտ Անդերսոնի կողմից: Այն կիրառվում է ինչպես քաղաքագիտության մեջ, այնպես էլ պատմության և այլ գիտակարգերի: Տե՛ս **Benedict Anderson B.** Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, Verso, 2006 p. 6.

39 Այս առումով հետաքրքիր օրինակ է խորհրդային շրջանում Ա. Թամանյանի նախագծած Ժողտան կամ Օպերայի տան շենքը, որի պատերը Թամանյանի նախագծով գարդարվել են նրան, խաղողի ողկույզներով, պունակներով, խոյակներով և այլն: Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի ճարտարապետական խորհրդանիշերին ծանոթանալու համար տե՛ս **Ashot Haykazun Grigoryan**, Symbolic Thinking in The Architecture of Ani, Website of National Museum-Institute of Architecture of Armenia <http://www.archmuseum.am/?p=598&lang=en#/-/1/>

40 Տե՛ս **Ստեփանյան Ա.**, Պատմության հետագիծը: Գործք, գրույթ, իմաստ, Եր., «Սարգիս Խաչենց» – «Փրինթինֆո», 2014, էջ 40–41.



**Պատկեր 2:** Երևանի կենտրոնի հատակագծի վերանայված տարբերակը

Ըստ էության՝ Ալ. Թամանյանն առաջադրում էր քաղաքի ռացիոնալացման խնդիրը՝ ըստ գործառական քաղաքի հղացքի, որը խորհրդային տարիներին պետք է դառնար Երևանի գլխավոր հատակագծի թամանյանական նախագծի բովանդակային բաղադրիչներից մեկը<sup>41</sup>:

### Ամփոփում

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության խիստ ծանր դրությունը և սահմանափակ հնարավորությունները՝ Ալ. Թամանյանի՝ Երևանի վերակառուցման նախագիծն առաջին հայացքից անիրական էր թվում: Սակայն իրականի և երևակայականի միաձուլումից ծնվում է բոլորովին այլ իրականություն կամ միություն<sup>42</sup>: Ուստի Երևանի միջնորդությամբ՝ Հայաստանը նոր իրականության ստեղծման ճանապարհին էր, որը սակայն

41 Խորհրդային Երևանի հատակագիծը կազմված էր երկու հղացքից՝ ֆունկցիոնալ քաղաք և քաղաք-պարտեզ: Քաղաք-պարտեզի գաղափարը, որպես քաղաքային նախագծման մեթոդ, սկզբնապես կիրառվել է բրիտանացի սոցիոլոգ, ուտոպիստ, «Քաղաք-պարտեզ» շարժման հիմնադիր Էրենսգեր Հովարդի կողմից 1898 թ.: Տե՛ս **Howard E.**, Garden Cities of To-Morrow, ed. F. J. Osborn, Routledge, 2013.

42 Տե՛ս **Զալոյան Վ.**, Հասարակական տարածություն. Քաղաքը հայ գրականության մեջ, **Ազատյան Վ.**, խմբ. Հանրային ոլորտ. վիճարկման և վերըմբռնման միջև: Արվեստի քննադատների ազգային ասոցիացիայի (ԱՔԱԱ) և Մեծ Բրիտանիայի Փլիմութի համալսարանի համագործակցությամբ կազմակերպված միջազգային գիտաժողով (25-27 հոկտեմբերի 2005 թ), Եր., «Անկյունաքար», 2007, էջ 236:



վիժեցվեց բոլշևիկաքենալական արքանում:

Արխիվային մի քանի փաստաթղթերի հիմամբ կատարված այս համեստ ուսումնասիրությունը խոսում է այն մասին, որ Երևանը Առաջին Հանրապետության քաղաքական և մտավոր ընտրանու կողմից մշակվող ազգային նախագիծ էր: Պատմության առաջ չմեղանչելու համար նշենք, որ Ալ.Թամանյանն Առաջին Հանրապետության տարիներին սկսած գործը փորձեց իրականություն դարձնել Խորհրդային Հայաստանում: Սակայն դրա համար Ալ. Թամանյանի ընտրած՝ Երևանի ազգային (նուռ, խաղողի ողկույզ, խոյակներ և այլն) և եվրոպական սիմվոլիկան (դորիական ճարտարապետության տարրեր և այլն) մերժում է Երևանի՝ լոկ խորհրդային նախագիծ լինելու տեսակետը և հաստատում վերջինիս հայկական իմաստն ու նշանակությունը՝ ի ցույց դնելով հայ ազգի՝ եվրոպական միջավայրում ապրելու ուտոպիստական ցանկությունը: Սակայն կանգ առնենք. սա ուսումնասիրության այլ տիրույթ է և դուրս է սույն հետազոտության շրջանակներից

Հավելված 1

## Ներքին գործերի պարոն նախարարին ԶԵԿՈՒՑՈՒՄ

### **Ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի՝ այրված առևտրական խանութների հրապարակը մունիցիպալիզացիայի ենթարկելու մասին<sup>43</sup>**

Համաձայնվելով Երևանի քաղաքային ինքնավարության միանգամայն արդարացի պատճառաբանությունների հետ, որոնք բերել են նրան շուկայի այրված խանութների հողամասը մունիցիպալիզացիայի ենթարկելու անհրաժեշտ որոշումին, պարտքս եմ համարում լուսաբանել այդ խնդրի մի քանի կետը, որոնք ցարդ ի նկատի չեն առնվել և կխնդրեմ այդ հարցը նորից կառավարության քննությանը դնել:

Այդ հողամասի սեփականության բարձրացումը մի մասն է Երևանի ձևակերպման և շինարարության կարգավորման ընդհանուր նախագծի, որով նախատեսվում է քաղաքի հետագա զարգացումը և աճումը:

Ներկայումս մշակվում է քաղաքի հատակագիծը՝ համապատասխան եվրոպական շինարարության և քաղաքների բարեկարգման ժամանակակից պահանջների: Երևանի ձևակերպման նախագիծը պահանջում է անհրաժեշտ հրապարակների, փողոցների և հողամասերի բարձումը, որը և կներկայացվի կառավարությանը ի քննություն մտնող ապագայում, իսկ այրված առևտրական տների հողամասը ծայրահեղ հակաառողջապահական դրության մեջ է և առևտրական տներ շինելու կարիքը ու նոցա իրականացումն առանձին պայմաններ են պահանջում, այդ պատճառով էլ նա առանձին է ներկայացվում:

Առանձնացնելով այդ հարցը, հարկավոր է այն լուծել այնպես, որ ձևակերպված և վերաշինված այդ մասը օրգանապես միանա քաղաքին ու նրա

Ժ (ԺԶ) փաթի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
վլլ համահայկական հանդես

43 Տես ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.531 ինքնագիր:

մյուս մասերի հետ մի ամբողջություն ներկայացնի: Միմիայն վերացնելով այրված կիսաքանդ շինությունները և նոցա փոխարեն նոր խանութներ շինելով, չի կարելի կատարելապես վճռել այդ հարցը, որովհետև նոր շենքերը գուցե և լինեն մաքուր, բայց, այնուամենայնիվ, կլինեն այն [ ...]<sup>44</sup> պատը, որ կբաժանի առևտրական այդ հրապարակը յուր հետևում գտնվող մյուս շրջաններից, որ առողջ են բնակության համար և արդեն բավականաչափ բնակեցված են ու կարիք են զգում քաղաքի կենտրոնական և առևտրական հրապարակի հետ լավ հաղորդակցության [...] <sup>45</sup>: Անհրաժեշտ է, որ այդքան մեծ հարցի լուծման համար [...] այդ շրջանների աճումը և նոցա ու քաղաքի պահանջներն ըստ կարելոյն 50-10 տարի առաջուց նախատեսել:

Քննելով առևտրական հրապարակը շրջապատող ռայոնների վերաբերմամբ, դժվար չի համոզվել, որ այդ հրապարակը ամենայն իրավամբ քաղաքի կենտրոնական հանգույցը կարող է համարվել, շրջապատված լինելով բավականին նշանավոր քաղաքամասերով, մի կողմից հրապարակին մոտենում է գլխավոր փողոցը՝ Կրեպոստնայան և նրա շարունակությունը՝ Աստաֆյանը, մյուս կողմից մոտենում է Ջանգուն, իր այն մասով, որը ամենահարմարն է նոր կամուրջի համար, որը և հարմար կլինի տրամվայի գծեր անցկացնելու:

Ըստ երևույթին, այդ նոր կամուրջով մոտիկ ապագայում կանցնեն էլեկտրական տրամվայի գծերը, որ այնքան կարևոր են հաղորդակցություն ստեղծելու էջմիածնի, Աշտարակի և Ջանգվի մյուս ավտոմ գտնվող շինկետերի միջև: Անհրաժեշտ է ի նկատի ունենալ նաև այն, որ նախագծվող կամուրջը, Փարաքար գյուղը և էջմիածին քաղաքը գտնվում են մի ուղիղ գծի վրա, և այդ գիծը ավելի կկարճի էջմիածին և Աշտարակ տանող ճանապարհը: Երրորդ կողմից այդ հրապարակը շրջապատված է մի շարք երկհարկանի քարե առևտրական տներով և նրանց կից անգլիական այգիով, որը բաժանում է հրապարակը այն կետից, ուր ենթադրվում է կառուցել երկաթուղու նոր կայարանը և այդտեղ պիտի անպայման կայարանային հրապարակ շինվի: Անհրաժեշտ է ի նկատի ունենալ կայարանից բերվող լայն ճանապարհը հարմար տրամվայի համար, որպիսին և ամենահաջող կերպով կարող է անցնել անգլիական այգու հարավ-արևմտյան սահմանով Մ.-Ն. ուղղությամբ: Չորրորդ կողմից առևտրական հրապարակին մոտենում է քաղաքի ամենահաջող մասը՝ Թափուբաշը իր Խորում Բուլաղ այգիներով, որոնք քաղաքի կենտրոնին իբրև մոտ, կլինեն թանկագին ռայոն թե՛ բնակության և թե՛ հասարակական հիմնարկությունների համար: Անհրաժեշտ է այդ ռայոնը կապել հրապարակի հետ մի լավ փողոցով: Հրապարակի մոտերքը ուշագրավ են հոյակապ դարավոր կառուցվածքները՝ Սուրբ Սարգիս եկեղեցին և Գեոյի մեչիդը, որ ներկայումս ծածկված են մի շարք տխուր և տգեղ շենքերով: Հարկավոր է հարմար ճանապարհ բաց անել քաղաքի կենտրոնից, այսինքն՝ հրապարակից դեպի այդ կողմը: Հարկավոր է նաև քաղաքի ազգաբնակչության հայացքներին բացել Ջագուն իր կենդանարար ավերով և Արարատի սքանչելի տեսարանով: Ներկայումս Ջանգուն բոլորովին անջատված է քաղաքից մի շարք կիսաքանդ շենքերով իրենց անան-

<sup>44</sup> Բառը դժվարընթեռնելի է:

<sup>45</sup> Փաստաթղթի այդ հատվածը վնասված է:

ցանելի կեղտոտ և նեղլիկ փողոցներով, իսկ Ջանգուի ափը վերածվել է աղբանոցի: Ցանկալի կլիներ մաքրել այդ տեղերը աղբից և փլած շենքերից, սկսած շուկայի հրապարակից, և տրամադրել այն որևէ հասարակական շենքի, իսկ ներքևը, Ջանգուի ափին շինել դեպի նախագծվող կամուրջը գառիվայր իջնող գբոսավայր:

Ի նկատի առնելով քաղաքի ապագա աճումն, անհրաժեշտ է նախատեսել Ջանգուի աջ ափի բնակությունը էջմիածնի և Աշտարակի ճանապարհների վրա, որ տրամվայի գիծը անցկացնելուց հետո շատ շուտով առաջ կգա:

Այդ վայրը բարձր է և կլիմայական պայմաններով լավ է բնակության համար, այնինչ շուկայի ցածր և անառողջ հրապարակը պիտի տրամադրել բացառապես առևտրական տների: Ազգաբնակչության խտացումն այստեղ պիտի պակասեցնել և բնակեցրած քաղաքամասերի փոխարեն պիտի շինել լայն փողոցներ և հրապարակներ:

Անհրաժեշտ է ի նկատի առնել նաև այն, որ այդ հրապարակը, հանդիսանալով առևտրի կենտրոն, կլինի նաև քաղաքի և շրջապատի բոլոր տրամվայի գծերի հանգույցի կետը: Տրամվայի բոլոր գծերը զանազան կողմերից անցնելու են առևտրական հրապարակով, որպեսզի գնան դեպի վակզալ, իսկ այդ հարկավոր է թե՛ քաղաքի բնակչությանը հարմարություններ տալու նպատակով և թե՛ շրջապատի բնակչությունը վակզալի հետ կապելու համար:

Ակներև է, որ այդ հրապարակը, որ այդքան նպատակների է ծառայելու, պիտի բավականին ընդարձակ լինի:

Ուրեմն այդ նկատառումներով հարկավոր է.

1. Ընդարձակել առևտրական հրապարակը, տալով նրան ուղիղ քառանկյունու ձև, փոխարեն գոյություն ունեցող ձագարաձևի:

2 Միացնել այդ հրապարակը լայն և ուղիղ փողոցներով կայարանի հետ, Ջանգուի հետ, ուր նախագծվում է նոր կամուրջը, Թափաբաշի հետ և Բերդի հետ, ուր տեղավորված են Ջորական հիվանդանոցը, կազարմաները, թեյանոցները և այլն:

3. Մոնիցիցիպալիզացիայի ենթակա հողամասերի վրա շինարարությունը այնպես կատարել, որ նոր շինված շուկաները, խանութները, գրասենյակները և այլն ամեն կողմից ազատ ճանապարհ ունենան:

4. Անցկացնել նոր փողոցներ և կամ կարգի բերել եղածները, որոնք կապում են առևտրական հրապարակը քաղաքի [իյուսիսային] մասի հետ: Այդպիսի փողոցներից ամենագլխավորը Արմյանսկայա փողոցն է, որը պիտի բավականին լայնացնել, ուղղել և շարունակել մինչև քաղաքի ծայրամասը: Այա Մայարսկայա փողոցը, որը պիտի անմիջապես միացվի Առևտրական հրապարակի հետ, նույնպես և Քարվանսարայսկայա փողոցը:

Կենտրոնական Առևտրական հրապարակի շինարարության հարցը կարող է բավարար լուծումն ստանալ այն դեպքում, երբ կտրամադրվի ձևակերպելու համար ոչ միայն այրված խանութների հողամասը, այլև մյուս հարևան հողամասերը՝ համաձայն դրան կցած գծագրի: Իսկ եթե հրապարակի բարձրացումը սահմանափակվի, այն ժամանակ ձևակերպման խնդիրը կստանա պոզիտիվ (կիսատ-պռատ) լուծումն, այլևս ապագայում հա-

գիվ ուղղելի: Այդ նկատառումների հիման վրա միջնորդում են կառավարության առաջ.

Հաստատել քաղաքի այդ ռայոնի ձևակերպումն համաձայն գծագրի և երկրորդ՝ հրապարակների սեփականությունը բարձել հոգուտ քաղաքի գծագրում նշանակված ա. բ. գ. դ. ե. ժ. զ. ի. լ. խ. կետերով, որ ըստ հատակագծի չափերի՝ կազմում են հետևյալ հրապարակները.

ա. =8082 քառ. սաժեն

բ. =1908

գ. =3360

դ. =7875

ե. =9600

ժ. =6270

զ. =2100


ի. =1700

լ. =9500

խ. =3400

ընդամենը՝ 53.795 քառ. սաժեն

8 մայիսի 1920 թ., Երևան, Ակադեմիկոս Ա. Թամանյան

**Նարեկ Ա. Մկրտչյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հետխորհրդային շրջանի պատմության և ազգաշինության տեսությունների ուսումնասիրությունը, թեմայի մասին ունի մի շարք հրատարակություններ հայաստանյան և միջազգային գրախոսվող հանդեսներում՝  [orcid.org/0000-0003-3539-1649](https://orcid.org/0000-0003-3539-1649).

## Summary

### YEREVAN AS THE CAPITAL REPUBLIC OF ARMENIA IN 1918–1920

#### The meaning of forming national spatial identity

Narek A. Mkrtchyan

*Candidate of Historical Sciences*

**Key words** – Yerevan, identity, national location, urban environment.

By taking into consideration the extremely heavy state and limited opportunities of the First Armenian Republic Tamanyan’s project of reconstructing Yerevan at first sight seemed unreal. But the fusion of reality and imagination gives birth to completely other reality or unity<sup>46</sup>. Thus Armenia was on the new

46 **Jaloyan V.** Public space: The city in Armenian literature, **Azatyán V.**, edit. Public sphere: between dispute and understanding. An international conference conducted by the cooperation of National Association of Art Critics (NAAC) and the university of Plymouth of Great Britain , (October, 2005), Yerevan , 25–27. Cornerstone, 2007, p 236.

path of reality due to the mediation of Yerevan but this was however impeded by Bolshevik–Kemalian crap.

This modest study carried out due to some archive documents reveals the fact that Yerevan was a national design put forward by the political and intellectual elite of the First Armenian Republic. And for the sake of not denying the history we must state that, nonetheless, Tamanyan tried in Soviet Armenia to bring into reality his job initiated in the First Armenian Republic. Tamanyan's typically Armenian (pomegranate, grape clusters, chapter and so on) and European symbolism (elements of Dorian architecture and etc.) rejected the idea of Yerevan being solely Soviet design and established the latter's pan-Armenian importance and the utopian desire of the Armenian people about living in European environment. But let us stop here: this is another domain of study and is out of the framework of the given study.

Резюме

## ЕРЕВАН – СТОЛИЦА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 1918–1920 ГГ.

Семантика пространственной организации национальной идентичности

Нарек А. Мкртчян

*Кандидат исторических наук*

**Ключевые слова** – Ереван, идентичность, национальное средоточие, Торговая площадь, городская среда.

С учетом крайне тяжелого положения и ограниченных возможностей первой Республики Армения, проект реконструкции Еревана, представленный Таманяном, на первый взгляд казался нереальным. Но из слияния реального и воображаемого рождается совершенно иная реальность или единство. Поэтому и через посредничество Еревана Армения находилась на пути к созданию новой реальности, сорванной в большевистско–кемалистических клещах.

Настоящее скромное исследование, проведенное на основе нескольких архивных документов, говорит о том, что Ереван был национальным проектом, выработанным политической и интеллектуальной элитой Первой Республики. И чтобы не провиниться перед историей, отметим, что Александр Таманян попытался осуществить начатое в годы Первой Республики дело в Советской Армении. Таманяновская национальная (гранат, виноградная гроздь, капитель и т. д.) и европейская (элементы дорийской архитектуры и т. д.) символики опровергают мнение, что Ереван – лишь советский проект, и подтверждают его общеармянскую важность и утопистическое желание армянской нации жить в европейской среде.

ՀՀ-ի հանրապետության հանրապետական պատմության և հուշարձանաբանության ինստիտուտի փոխնախագահ, 2018 թ. հունիսի 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018 թ.

## REFERENCES

1. **Jaloyan V.**, Hasarakakan taratsutyun. Qaghaqə hay grakanutyany mej, khmb. Azatyan V., Hanrayin volort. vicharkaman yev verəmbərman mijev. Arvesti qnnadatneri azgayin asociaciayi (AQAA) yev Mets Britaniayi Plimuti hamaslarani hamagortsakcutyamb kazmakerpvats mijazgayin gitajoghov (25-27 hoktemberi 2005 t.), Yerevan. Anyunaqar, 2007. **(In Armenian)**
2. Hayastani hanrapetutyany karavarutyany nisteri ardzanagrutyunner 1918-1920 tt. **(In Armenian)**
3. **Lotman Yu.**, Semiosfera, Sankt-Peterburg, Iskusstvo, 2000. **(In Russian)**
4. **Stepanyan A.**, Patmutyan hetagitsə. Gortsq, gruyt, imast, Er., Sargis Khachenc – Printinfo, 2014. **(In Armenian)**
5. **Stepanyan A.**, Patmutyan kerapokhutyunnerə Mets Hayqum, Girq A, Artashisyandarashrjan, Er., Sargis Khachenc, Printinfo, 2012. **(In Armenian)**



Դավիթ Ս. Գյուրջինյան  
Բանաս. գիտ. թեկնածու

## ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918–1920 ԹԹ.

**Բանալի բառեր** – հայացման շարժում, Հայացման կոմիտե, Հայաստանի Հանրապետության պետական լեզու, լեզվի հարցը խորհրդարանում, հայերենը պետական լեզու, պետական լեզվական քաղաքականություն, բանակի աշխատանքային լեզուն:

Հայաստանը անկախ հռչակվեց հայ ժողովրդի համար ծանրագույն պայմաններում. Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանության արդյունքում Արևմտյան Հայաստանի հայությունը բնաջնջվել էր իր բնօրրանում, ողջ մնացածներն արտաքսվել էին հայրենի երկրից կամ սփռվել աշխարհով մեկ, Արևելյան Հայաստանը լցված էր հարյուր հազարավոր գաղթականներով, երկրի տնտեսությունը քայքայված էր, մոլեգնում էին սովն ու համաճարակը

Կործանարար հարված էր հասցվել նաև հայոց լեզվին. բնաջնջվել էր հայերեն (արևմտահայերեն) խոսողների զգալի մասը, հայոց պատմական հողերի վրա հայերենն այլևս չէր գործառում իբրև հայ հանրության հաղորդակցության միջոց:

Իսկ ինչպիսին էր լեզվական իրավիճակը Հայաստանի արևելյան հատվածում՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությունում: 1828–ից (մասամբ 1801–ից) Ռուսական կայսրությանը միացված Արևելյան Հայաստանում պետական մարմինների, դատարանի և բանակի լեզուն ռուսերենն էր: Ռուսական շուրջ հարյուրամյա իշխանության անմիջական հետևանքն էր, որ անկախ դարձած Հայաստանի պետական մարմիններում սկզբնական շրջանում գործավարության լեզուն գրեթե համատարած ռուսերենն էր, պատոնյանների զգալի մասը հայերեն չգիտեր կամ ուղղակի չէր ուզում գրել կամ խոսել մայրենի լեզվով: Նույն պատկերն էր հայոց բանակում:

1918–1920 թթ. հայաստանյան մամուլը հաճախ է անդրադարձել հայերենի, ապա նաև հայերենի և երկրի այլ լեզուների գործառության հարցերին: Այդ խնդիրներին կարևոր, ինչպես և հպանցիկ անդրադարձներ եղել

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր–դեկտեմբեր, 2018

ՎԿՄ համահայկական հանդես

են Հայաստանի խորհրդարանի և կառավարության նիստերի ընթացքում: Դրանց շարքում ամենակարևորը, անտարակույս, հայերենը պետական լեզու հռչակելու պատմական փաստն էր (իր բոլոր դրական հետևանքներով):

**Հետևենք խնդրի արծարծմանը ժամանակի մամուլում, ինչպես նաև պետական իշխանության բարձրագույն մարմինների նիստերի ընթացքում հարցին առնչվող քննարկումներին, ապա և ձեռնարկած քայլերին:** Այդ կերպ կարող ենք որոշակի գաղափար կազմել երկրում տիրող լեզվական իրավիճակի, Առաջին Հանրապետությունում սաղմնավորված, ապա հստակ ձևավորված լեզվական քաղաքականության մասին: Պետական լեզվաքաղաքականությունը վերաբերում է ինչպես հայերենի, այնպես էլ երկրի ազգային փոքրամասնությունների լեզուների կարգավիճակին և գործառությանը՝ հանրային կյանքի տարբեր ոլորտներում:

Անկախության հռչակումից շուրջ մեկ տարի անց՝ 1919 թ. ապրիլին, ՀՅԴ Դաշնակցության «Երկրի» կենտրոնական կոմիտեի «Աշխատանք» թերթը «Հայ լեզվի պաշտպանութիւնը» վերնագրի ներքո գրում էր. «Հայաստանի Կառավարութիւնն իր պաշտօնաթերթը՝ «Կառավարութեան Լրաբերը» կը հրատարակէ ռուսերէն լեզուով: Հայաստան և ռուսերէն»:

Վերջերս «Վան քոփերաթիր» սկսած է ռուսերէն նամակներ ստանալ Հարկային Տեսչութենէն և այլ պետական հաստատութիւններէ: Դրկւած նամակները յետ վերադարձւած են, յայտնելով յիշեալ հաստատութիւններուն, որ պետական լեզուով միայն գրութիւններ կրնան ընդունիլ:

Արևմտահայ Գործադիր Մարմինը նոյնպէս ետ է դրկած ելևմտական նախարարութենէն ստացած ոչ պետական լեզուով գրած գրութիւնը»<sup>2</sup>:

Հակիրճ, բայց և չափազանց խոստուն: Հարկ է ուշադրության առնել այն, որ ռուսերենի գերակայության դեմ պայքարում հատկապես գործուն մասնակցություն ունեին Հայաստանի Հանրապետությունում հաստատված արևմտահայ գործիչները և մտավորականները, որոնք արտահայտում էին ռուսերեն բոլորովին չիմացող արևմտահայ գաղթականության շահերը: Թեպետ ռուսերենի չիմացությունը բնորոշ էր նաև արևելահայ ժողովրդական զանգվածներին:

Խնդիրը միայն ռուսերեն հասկանալ-չհասկանալը չէր, այլ այն, որ օտար լեզուն փաստացի պետական-պաշտոնական գրագրության լեզու էր դարձել: Այդպիսով կասկածի տակ էր առնվում Հայաստան պետության անկախությունը: Ահա թե ինչ է գրված ՀՅԴ Հայաստանի կենտրոնական և Երևանի քաղաքային կոմիտեների «Հայաստանի աշխատաւոր» թերթի 1919 թ. ապրիլի 27-ի համարի «Հայերեն» վերնագրով խմբագրականում. «Որքան էլ ցաւալի, բայց դառն ու տխուր փաստ է, որ Հայաստանի հանրապետութեան պետական լեզուն օտար և ժողովրդի մեծամասնութեանը անհասկանալի լեզու է: Այդ դեմոկրատական-պետական անոմալիան, մայրենի և ժողովրդին հասկանալի լեզվի վտարումը պետական հաստատութիւններից մեր կառավարութեան գլխաւոր արատներից մէկն է: Այդ և մի շարք այլ պատճառներով է, որ մեր հանրապետութիւնը որոշ գոյն չունի, որ դա միայն

1 Սա հիշեցնում է «Ազգային ջոջերից» հետևյալ դիմապատկերը «Կարապետ Պեյ Երեմյան ծնած է 1830-ին: Կազմով բարեձև, սև աչերով և սև ընթվիներով մարդ մ'է: Սգկիթ մը շինել տված է» (տե՛ս **Պարոնյան Լ.**, Երկեր, Եր., «Սովետական գրող», 1979, էջ 177):

2 «Աշխատանք», Եր., N 11, 19 ապրիլի 1919 թ.:



անունով է Հայաստան: Այլապես չգիտես՝ թե ինչ երկիր ու պետություն է այս»<sup>3</sup>:

Ավելի վաղ՝ 1918 թ. սեպտեմբերի 13-ին՝ խորհրդարանի 18-րդ նիստի ժամանակ, պատգամավոր Ա. Խոնդկարյանը, օրենքներ հրատարակելու օրինագծի վերաբերյալ իր առաջարկությունը պնդելով, ավելացնում է, որ «այդ գործը դատարանին հանձնելը գործնական տեսակետից էլ անհարմար է, որովհետև այնտեղի ծառայողները հայոց լեզու չգիտեն»<sup>4</sup>: Իսկ օրեր անց՝ 1918 թ. սեպտեմբերի 17-ին, հաջորդ՝ 19-րդ նիստում, պատգամավոր Գ. Ենգիբարյանը արդարադատության նախարարին քննադատում է, որ վերջինս հայերեն չհմացողների է նշանակել տարբեր պաշտոններում<sup>5</sup>:

Սա պարզորոշ ցույց է տալիս, որ երկրում լրջորեն ծառայել էր պաշտոնետության շրջանում հայերենի չհմացության հիմնախնդիրը, որը մեծ խնդրոտ էր պետական և հասարակական մարմինների բնական գործունեության համար. խզված (կամ ընդհատ) էր պետական, դատական և այլ հաստատությունների կապը հանրապետության քաղաքացիների, ինչպես նաև արևմտահայ գաղթականների հետ:

1919 թ. սեպտեմբերի 26-ին կառավարության 160-րդ նիստում (Ա. Խատիսյանի նախագահությամբ) լսվել է հանրային կրթության մինիստրի զեկուցումը պաշտոնյաների համար հայոց լեզվի դասընթացներ բանալու մասին: Որոշվել է հանձնարարել առաջարկություն ներկայացնել բոլոր մինիստրությունների պաշտոնյաների համար դասընթացներ հիմնելու մասին<sup>6</sup>:

Թեև հայերենը դեռևս պետական լեզու չէր հայտարարվել, 1918 թ. օգոստոսի 6-ին խորհրդարանի 4-րդ նիստում վարչապետ Հ. Քաջազնունին ասում էր, որ քննարկելի է լեզուների հարցը. հարկավոր է օրինագիծ մշակել, իսկ մինչ այդ «կառավարությունը պետական լեզուն ընդունելով հայերենը՝ դրա հետ միասին թույլ է տալիս տեղական մյուս լեզուների գործածությունը»<sup>7</sup>: Փաստորեն հստակ ընդգծվում էր, որ պետական լեզու պիտի համարվի հայերենը, սակայն հանրապետության խորհրդարանում այդ հարցը քննարկվել է շատ ավելի ուշ:

Մինչ այդ պետությունը ձեռնամուխ էր եղել հայերեն չհմացող պաշտոնյաների համար հայոց լեզվի դասընթացներ սկսելուն և ֆինանսավորել էր այդ գործը:

1919 թ. նոյեմբերի 28-ին խորհրդարանի 41-րդ նիստում պատգամավոր Պերճունի Բարսեղյանը ներկայացնում է «Պաշտոնյաների համար հայոց լեզվի դասընթացներ հաստատելու օրինագիծը»՝ բառացի ասելով. «Ամենքիդ հայտնի է, որ պաշտոնյաների մեծ մասը հայերեն չգիտե, և շատ հիմնարկությունների մեջ գործավարությունը տարվում է օտար լեզվով: Այս անտրամալ երևույթի դեմ կռվելու համար է, որ առաջարկվում է ներկա

3 «Հայաստանի աշխատուոր», Եր., N 47, 27 ապրիլի 1919 թ.:

4 Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 / Գլխավոր խմբագիր և կազմող՝ Վիրաբյան Ա., Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2010, էջ 44 (ըստ «Ջանգ» թերթի՝ 24 սեպտեմբերի 1918 թ.):

5 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 47 (ըստ «Ջանգ» թերթի, 28 սեպտեմբերի 1918):

6 Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ: 1918-1920 / Գլխավոր խմբագիր և կազմող՝ Վիրաբյան Ա., Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2014, էջ 308:

7 Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 17 (ըստ «Ջանգ» թերթի՝ 17 օգոստոսի 1918 թ.):

օրինագիծը»: Պատգամավորը հայտնում է շտապողականություն, քննարկումից հետո օրինագիծն ընդունվում է<sup>8</sup>:

Մեծագույն ձեռքբերում էր հայերենի դիրքերի յուրաքանչյուր ամրապնդում:

1919 թ. հունիսի 4-ին խորհրդարանի 87-րդ նիստում ծավալուն (երկուսուկես ժամանոց) զեկուցմամբ հանդես է գալիս վարչապետ Ա. Խատիսյանը: Վարչապետն հայտնում է, որ հիմնված է դատաստանական պալատ, որտեղ անցյալ օրը տեղի է ունեցել առաջին նիստը՝ հայոց լեզվով: Անկախության հռչակումից մեկ տարի անց հայերենով անցկացված նիստի փաստն արժանանում է ներկաների (խորհրդարանի անդամներ և հասարակության ներկայացուցիչներ) բուռն ծափերին<sup>9</sup>:

Լեզվական իրավիճակի փոփոխությունն ընթանում էր դանդաղ, հայերենն իր բնական իրավունքին մեծ դժվարությամբ էր տիրանում: 1919 թ. գարնանը Հայաստանում սկիզբ էր առել մի շարժում, որը հայտնի է «Հայացում» անունով (սա պետք է հասկանալ որպես «հայերենացում»<sup>10</sup>):

1919 թ. ապրիլի 17-ին Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցավ հայերեն թերթերի ներկայացուցիչների առաջին ժողովը, որին մասնակցում էին «Աշխատանքի» խմբագիր Հմ. Մանուկյանը, «Հայաստանի աշխատավորի» խմբագիր Վ. Խորենին, «Աշխատանքի կոոպերացիայից»՝ Զ. Կորկոտյանը, «Վան-Տոսպից»՝ Ա. Ավետիսյանը: Ժողովը կայացրեց գործնական մեծ նշանակություն ունեցող որոշումներ.

Կոչ ուղղել պետական, հասարակական ու մասնավոր հիմնարկություններին՝ խոսել ու գրել հայերենով:

Մերժել ոչ հայերենով գրություններ, լուրեր ու հայտարարություններ ընդունելը: Բացառություն կարող է լինել միայն այն դեպքում, երբ նրան «ընկերանա» հայերենը, և կամ այն ոչ հայերի կողմից է տրվել:

Պահանջել հայերենի պաշտոնականացում, իսկ նյութների գործածությունը թույլատրել միայն որպես օժանդակ լեզուներ:

Թերթերի մեջ ունենալ «հայացման» բաժին, որում տպվելու են լուրեր թե՛ դրական և թե՛ բացասական, նույնիսկ ազդեցություն բնույթ ունեցող՝ հայոց լեզվի գործածության շուրջ<sup>11</sup>:

Կազմվում է «Հայացման կոմիտե», որի մեջ մտնում են ներկաները, ինչպես և հրավիրվում են մասնակցելու բացակա թերթերի, նախարարությունների և քաղաքապետարանի ներկայացուցիչները: Այն բաց էր լինելու՝

8 Տես Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 363-364 (ըստ «Յառաջ» թերթի, N 61, 3 դեկտեմբերի 1919):

9 Տես Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 229:

10 Այլադեմիական բացատրական բառարանը **հայացում**-ը բացատրում է իբրև «հայացնելը, հայ դարձնելը» (տես **Տր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ**, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 3, Եր., Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976, էջ 282 ), Էդ. Աղայանի բառարանը՝ «հայանալը, հայացնելը, հայացվելը» (տես **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան», 1976, էջ 811), արևմտահայերենի երկհատորյա բացատրական բառարանը ներկայացնում է բառի երկու իմաստ՝ «1. Հայացնելու-հայացուելու՝ հայ դարձնելու-դարձուելու գործողություն. 2. օտար լեզու է հայերէն թարգմանելու-թարգմանուելու գործողություն» (տես **Գնել արք. ձերլճեան, Փ. Կ. Տոնիկեան, Արտ. Տէր Խաչատուրեան**, Հայոց լեզուի բառարան, հատ. 1, Պէշրուք, «Տոնիկեան և որդիք», 1992, էջ 1138): Զարմանալի է, որ Սո. Մալխասյանցի բացատրական բառարանը, ինչպես նաև հայկական հանրագիտարանները **հայացում** գլխաբառ չունեն:

11 Տես **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 373: Տես նաև «Հայաստանի աշխատավոր», N 47, 27 ապրիլի 1919 թ.:

ընդունելու նոր անդամների: Կոմիտեն զբաղվելու էր նաև գործնական խնդիրներով՝ ցուցումներ տալով և օգնելով, որ տարբեր հիմնարկություններ արագ հայացվեին:

Իրվեց մեծածավալ լեզվաքարոզչության սկիզբը: Հայացման շարժում հայտարարելուց տասն օր անց՝ 1919 թ. ապրիլի 27-ին, «Հայաստանի աշխատաւոր» թերթի 2-րդ և 3-րդ բացվող էջերի խորագիրն է դառնում խոշորագիր հետևյալ կոչը՝ «Քաղաքացիներ, պահանջեցէք, որ հայերէնը պետական լեզու ճանաչւի: Պահանջեցէք, որ ձեզ հետ խօսեն ձեզ հասկանալի լեզուով»<sup>12</sup>:

«Հայացման կոմիտե»-ի քարտուղարությունն ընդունում է «Կոչ Հայաստանի քաղաքացիներին», որում նկարագրվում է պետական, հասարակական հիմնարկություններում հայերենի գործառնության տեսանկյունից տիրող բավական տխուր իրավիճակը. «Շուտով կը լրանայ մէկ տարին, ինչ մենք մեզի անկախ ենք հռչակած ու մեր երկրի տէրը դարձած: Բայց այն օրնէ մինչ այսօր դեռ մեր պետական, հասարակական հիմնարկութիւնները մեզ համար մնացած են օտար, կարծես ըլլային մեր անհարազատ, խորթ որդիները: Պետական պաշտօնատները մինչև այսօր ալ ոչ միայն իրենց ամբողջ գրագրութիւնը կը կատարեն ռուսերէն լեզուով, այլև չեն ընդուներ այն գրութիւնները, որոնք հայերէնով, մեր մայրենի լեզուով են գրած: Սանձարձակութիւնն ու արհամարհանքը մեր տարիներով պայքարած սկզբունքներին՝ իրենց չափն ու սահմանը անցուցած են»<sup>13</sup>:

Հայացման կոմիտեն հանուն հայերենի իրավունքների հաստատման Հայաստանի քաղաքացիներին կազմակերպվելու և անդով պայքարի բաց կոչ է ուղղում: Կոչը, ժամանակակից լեզվով ասած, անգամ քաղաքացիական անհնազանդության տարրեր էր պարունակում.

«Քաղաքացիներ, կազմակերպու՛՛մ ու սիստեմատիք պայքար մղեցէք այդ օտարամոլների և հայատեացների դէմ:

Պահանջեցէք ամեն տեղ պետական լեզուն:

Հասարակական հիմնարկութիւններից դուրս վտարեցէք անոնց, որոնք պետական լեզուն չգիտեն և կամ զայն արհամարհելով կը սիրեն ուրիշ լեզուով խօսել և գրել:

Մի՛ ընդունէք, մերժեցէք, ետ ձամբեցէք այն բոլոր գրութիւնները, որոնք պետական լեզուով չեն գրած:

Մի՛ յաճախէք այն խանութները, սրճարաններն ու այլ վայրերը, որոնց ցուցանակներու վրայ պետական լեզուն տեղ չէ գտած:

Պահանջեցէք, որ դատարանի մէջ ձեզ լսեն ձեր մայրենի լեզուով:

Պահանջեցէք, որ օրէնքներն ու հրամանները հրատարակւին անպայմանօրէն պետական լեզուով:

Պէտք է որ ամեն հիմնարկութիւն ճանչնայ հայերէն լեզւի պարտադրութիւնը:

Քաղաքացիներ, ձեր պահանջը արդարացի է և ատոր համար եղէք յամառ, անխնայ ու աններող: Զարկեցէք, հարուածեցէք բոլորին, ամեն տեղ

Ժ (ԺԶ) քառի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԿՎ համահայկական հանդես

12 «Հայաստանի աշխատաւոր», N 47, 27 ապրիլի 1919 թ.:  
13 Նույն տեղում:

ու ամեն պարագային»<sup>14</sup>:

Կոչը գրված է այնպիսի հայերենով, որի մեջ կան ինչպես արևելահայերենի տարրեր (**հիմնարկութիւններից**), այնպես էլ արևմտահայերենի բազմաթիվ իրողություններ (**ըլլային, անոնց, ցուցանակներու, տեղ չէ գտած, ատոր, ճանչնայ** և այլն): Սա ուշագրավ լեզվական որակ է, ինչպես նաև պարզորոշ վկայություն, որ արևմտահայերն ակնհայտ շահագրգռվածություն էին ցուցաբերում պետական-պաշտոնական գործավարությունը ռուսերենի տիրապետումից ազատելու համար:

Հարկ է նշել, որ կոչում նշված որոշ քայլեր այժմեական են եղել նաև Խորհրդային Հայաստանում, մեկ-երկուսը տակավին արդիական են մեր օրերում:

Սկիզբ առած հայացման շարժումը լայն արձագանք գտավ մանավանդ մամուլի հետևողական աշխատանքի շնորհիվ: Շուտով կատարվեցին առաջին շոշափելի քայլերը: Հայացման շարժման ազդեցությամբ մայիսի 15-ին ներքին գործերի նախարարությունը հրապարակեց հետևյալ շրջաբերականը. «Առաջարկում են այսուհետև գավառում բոլոր գրագրությունը գավառական, հասարակական և գյուղական կոմիսարների և նմանապես բոլոր հիմնարկությունների պաշտոնյաների հետ վարել հայերեն՝ հասկացնելով ազգաբնակչության, որ խնդիրները, բացատրությունները հիմնարկություններին և պաշտոնյաներին պետք է գրել հայերեն: Նոր պաշտոնյաներին ընդունելիս պետք է պահանջել և գերադասություն տալ նրանց, որոնք տիրապետում են հայոց լեզվին: Թե գավառական կոմիսարների և թե բոլոր ստորադրյալ պաշտոնյաների կազմած արձանագրությունները պետք է լինեն հայերեն, իսկ եթե մեղավորը հայ չէ, արձանագրությունը կարելի է կազմել և ռուսերեն: Կարգադրեցեք, որ բոլոր հայ գյուղերում համախոսականներ, հրամաններ և, ընդհանրապես, ամբողջ գործավարությունը կազմվեն և կատարվեն հայերեն»<sup>15</sup>:

Հայացման շարժումն ընդգրկում է ողջ երկիրը: Հայաստանի խորհրդարանում ևս անդրադարձ է կատարվում պետական մարմինների հայացմանը (բառը պետական-պաշտոնական մակարդակով գործածվում էր հայոց լեզվի իրավունքները հաստատելու իմաստով): Հայացումը հետագայում դիտվել է Հայաստանի առաջին հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական բնորոշիչը<sup>16</sup>:

1919 թ. հունիսի 4-ին խորհրդարանի արդեն հիշատակված նիստում վարչապետ Ալ. Խատիսյանը նշում էր, որ «հայ պաշտոնեության մեջ կան բազմաթիվ հայերեն չիմացողներ, որոնց աջակցությունը հայրենիքի վերս-

14 Նույն տեղում:

15 **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 374:

16 Հմտ. «Հայաստանի Առաջին Հանրապետության առաջնակարգ խնդիրներից է եղել՝ «ՀԱՅԱՍՏԱՆԷ՛» բոլոր պետական հիմնարկները իրենց գրագրությունների բոլոր գործառնություններով՝ վերևից ներքև, համընդհանուր և ամբողջական ընդգրկումով, առանց բացառության, նախապատույթանք կառավարական պաշտոնները տրամադրելով նախևառաջ հայեցի կրթություն ստացած հայորդիներին» (**Խաչերան Լ. Գ.**, Հայոց համագգային մաշտոցեան համակարգում միասնական և միակերպ ուղղագրության պատմությունը (Ե.-Ի. դարեր), Լոս Անջելոս, «Նոր Կենսք» մատենաշարի հրատ., 1999, էջ 261): Հետաքրքրական է, որ պրոֆեսորը «Հայաստանի առաջին հանրապետության լեզուական քաղաքականությունը» ենթավերնագրի տակ խիստ համառոտակի խոսում է միայն հայացման մասին՝ ծավալում մեջբերում անելով Ս. Վրացյանից: Սա ցույց է տալիս, թե որքան կարևոր է նկատվել հայացման գործընթացը (տես նույն տեղում, էջ 261-263):

տեղծման գործում անհրաժեշտ է: Ունենք ռուս պաշտոնյաներ բոլորովին հայերեն չգիտեցող: Նախարարությունների մեջ հայացումն աստիճանաբար առաջ է գնում: Զինվորական և արդարադատության նախարարություններն են զուտ ռուսերենով գործողները: Մի քանի նախարարություններ գործը տանում են զուտ հայերենով, Նախարարական խորհրդում նույնպես»<sup>17</sup>: Ասվում էր նաև, որ կառավարությանը կից հանձնաժողովը (գործերի կառավարիչ Գ. Խատիսյանի նախագահությամբ) մշակել է հայացման օրինագիծ, «կարգադրված է հայերեն մտցնել այն զորամասերում, որտեղ հնարավոր է, որոշ զորամասերում մտել է արդեն: Հայերեն հեռագրեր են ստացված»: Հայերեն հեռագիր ստանալու փաստը հայոց խորհրդարանում արժանանում է բուռն ծափերի:

Փաստ է, որ անկախություն հռչակած Հայաստանում հայերենը պետական լեզու է հայտարարվել ավելի ուշ, թեև հայոց լեզուն թե՛ ժողովրդի և թե՛ կառավարության ու խորհրդարանի անդամների կողմից բնականորեն ընկալվում էր որպես պետական:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Հայաստանում կային քաղաքական ուժեր և հասարակական խմբեր, որոնք քննադատում էին հայացման գործընթացը և նրա մեջ ազգայնականություն տեսնում: Այդ մասին պարզորոշ գրված է «Ազգայնացում, թե՛ հայացում» վերնագրով հոդվածում, որ լույս է տեսել Հայաստանի սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության թերթում<sup>18</sup>: Այստեղ առանձնահատուկ կերպով մատնանշվում էր Հայաստանի ազգային փոքրամասնությունների լեզվի (լեզուների) իրավունքների խնդիրը՝ հայացման քաղաքականությունը որակելով հակադեմոկրատական:

Երկրի և ազգի համար պատմական իրադարձությունը՝ հայերենը պետական լեզու հայտարարելը, տեղի է ունեցել խորհրդարանի 52-րդ նիստում, որը գումարվել է 1919-ի տարեվերջին՝ դեկտեմբերի 24-ին (նիստը վարում էր խորհրդարանի փոխնախագահ Լ. Շանթը): Ազգային-պետական հսկայական նշանակություն ունեցող այս հարցի շուրջ ծավալվել է բուռն ու երկարատև քննարկում<sup>19</sup> (նիստի աշխատանքն ավարտվել է գիշերվա ժամը 11-ին):

Հայոց լեզվի պետականացման օրինագծի մասին զեկուցում է Հ. Տերտերյանը: Ասվում է, որ պատգամավոր Հ. Մանուկյանն օրինագիծ է ներկայացրել հայերենի պետականացման մասին: Սակայն օրենսդրական հանձնաժողովը, օրինագծի հիմունքները ընդունելի համարելով, կարծում է, որ այն պիտի ենթարկվի մի քանի անհրաժեշտ փոփոխությունների, ուստի մշակել է երեք հոդվածից բաղկացած նոր օրինագիծ, որով հայերենը հռչակվում է պետական լեզու՝ բանակում և պետական-հասարակական հաստատություններում պարտադիր գործածվելու: Այլ լեզուների գործածության շրջանակները սահմանվելու են հատուկ օրենքով, իսկ մինչ այդ այլազգի քաղաքացիները իրավունք կունենան իրենց մայրենի լեզվով դիմումներ անելու: Գործնական քայլեր անելու և հայերենը պետական գոր-

17 Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 230 (ըստ «Հայաստանի աշխատավոր» թերթի, 21 հունիսի 1919 թ.):

18 Տե՛ս «Սոցիալիստ յեղափոխական», Եր., 15 հունիսի 1919 թ.:

19 Ծավալված քննարկման մասին տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 403-407 (ըստ «Յառաջ» օրաթերթի, N 80-ի՝ 31 դեկտեմբերի 1919 թ.):

ծավարության լեզու դարձնելու համար առաջարկվում է երեք ամիս ժամանակ տալ<sup>20</sup>:

Քննարկման ժամանակ դրսևորվել են մի քանի մոտեցումներ՝

ա) լրամշակելով ընդունել օրենքը,

բ) մերժել օրինագիծը՝ այն ուղարկելով լրամշակման,

գ) օրինագիծը մերժել, քանի որ ինքնին հասկանալի է, որ հայերենը Հայաստանի պետական լեզուն է,

դ) օրենք չընդունել, այլ հանդես գալ պետական լեզվի մասին հայտարարությամբ:

Անհրաժեշտ ենք համարում հանգամանալից անդրադառնալ լեզվի մասին օրենքի քննարկմանը, քանի որ այստեղ դրսևորվել է հասարակության տարբեր խավերի ու խմբերի, կուսակցությունների վերաբերմունքը հայերենի նկատմամբ, ինչպես նաև բացորոշ կերպով ներկայացվել է հանրապետության լեզվական իրավիճակը, հայերենի գործածության իրական պատկերը, ուրվագծվել են անելիքները և զարգացման հեռանկարները:

Պատգամավոր Հ. Մելիքյանը ընդգծել է, որ «պաշտոնությունը հմուտ չէ հայերենին. շատ հիմնարկություններում կարևոր պաշտոնները օտարազգիների ձեռքին են, այդպես է դատարանը, զինվորական նախարարությունը և այլն: Զինվորական հանձնաժողովը արդեն մտածել է զինվորական դիվանատները և հրամանները հայացնելու մասին և շատ տեղեր հրամանները տրվում են հայերեն»<sup>21</sup>: Հայացման համար նախատեսված եռամսյա ժամանակամիջոցը նա քիչ էր համարում՝ առաջարկելով դա անել աստիճանաբար, մեկուկես տարվա ընթացքում:

Պատգամավոր Հ. Մանուկյանը պարզաբանում էր, որ պահանջ չի դրվում, թե օտարազգիները երեք ամսվա ընթացքում հայերեն սովորեն. եթե կարևոր պաշտոնյաներ են, կարող են թարգմանչի միջոցով վարել գործը, «միայն թե հայ պաշտոնությունը խոսի հայերեն և դատարանն էլ հայ մարդու դիմումին հայերեն պատասխան տա, կարծում եմ, որ այսքանը պահանջելու իրավունք ունենք»: Անհատ քաղաքացիներին օտար լեզվով դիմումներ անելու արգելք չէր դրված, ուստի օրինագծում մատնանշված էին միայն հասարակական մարմինները<sup>22</sup>:

Օրինագիծը պարունակում էր որոշակի պարտադրանք, որ բխում էր ժամանակի պահանջից և Հայաստանում տիրող լեզվական իրավիճակից (մեկ այլ ելույթում Հ. Մանուկյանը նշում էր, որ տուժողը ժողովուրդն է): Հ. Մանուկյանը դժգոհում էր, որ հայերենի պետականացման օրենքը չգործադրող պաշտոնյային ազատ արձակելու իր առաջարկությունն օրենսդրական հանձնաժողովը հանել է: Այսպես հատուկ կերպով ընդգծում, որ դա անհրաժեշտ է հարկադրանքի տեսակետից. «մինչև այժմ հայերենը քմահաճույքի ենթակա է եղել, սրանից հետո պաշտոնությունը հարկադրաբար պետք է գործադրե այն և եթե օրենքը պատժի ազդարարություն չանե, իրականացումը կդանդաղի»: Իր խոսքը պատգամավորը եզրափակում էր հետևյալ խոսույն նախադասությամբ. «**Լեզուն անկախ Հայաստանի հիմ-**

20 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 403:

21 Նույն տեղում:

22 Տե՛ս նույն տեղում:

**նաքարերից մեկն է և քանի որ կառավարությունը ժողովրդի հետ չի խոսում մայրենի լեզվով, անկախությունը չի կարող իրական լինել»<sup>23</sup>** (ընդգծումը մերն է.- Դ. Գ.): Սա լավագույն վկայությունն է, որ գիտակցվել ու մեծապես կարևորվել է հայերենի դերը հայկական պետության կայացման գործում:

Խորհրդարանի փոխնախագահ Ս. Տիգրանյանը նշում էր, որ օրենսդրական հանձնաժողովը բառացի թարգմանել է Ռուսաստանի Հիմնական օրենքների երրորդ հոդվածը և որպես նոր օրինագիծ ներկայացրել խորհրդարանին: Նա պարզաբանում էր, որ նորանկախ Հայաստանը Ռուսաստանից ժառանգություն է ստացել օրենքների ժողովածու, որից վերցված որոշ հոդվածներ հակասում են հանրապետության իրավակարգին: Օրենքների մի մասն էլ վերցված, լրացված կամ փոփոխված է Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի և Հայաստանի Խորհրդի ու պառլամենտի սահմանած կարգերով, մյուս հոդվածներն ու մասերը շարունակում են մնալ ուժի մեջ, մինչև որ նոր օրենքով փոփոխված կամ վերացված չհայտարարվեն<sup>24</sup>: Այնուհետև Ս. Տիգրանյանը ներկայացնում է հիշյալ 3-րդ հոդվածը. «Ռուսերենը համապետական լեզու է և պարտադիր գործում, նավատորմի դրոմ ու բոլոր պետական ու հասարակական հիմնարկություններում», և քանի որ դա վերցված չէ, ապա պետական լեզվի գոյությունը չի հակասում հայաստանյան իրավակարգին, ուստի նա առաջարկում է միայն փոխել «ռուսերեն» բառը, որի փոխարեն ինքնին հասկացվում է «հայերենը»<sup>25</sup>:

Ըստ Ա. Խոնդկարյանի՝ պետությունը հռչակված է Հայաստան, այնինչ ոմանք ձգտում են հայկականի վերածել այն՝ հայերենը դարձնելով պետական լեզու. «լեզուն պիտի հարազատ լինի ոչ թե հայ, այլ Հայաստանի դեմոկրատիայի համար» և ապա նույն տրամաբանությամբ. «Հայաստանը ապագային պետություն պիտի լինի .... Անդրկովկասի քայքայումից հետո ստեղծված Հայաստան պետությունը իր անունով, իր ծագման ու կազմակերպական հանգամանքներով բնորոշվում է որոշ ազգությամբ, հետևաբար նա ազգային պետություն է, և հայերենը՝ պետական լեզու. վերջին խնդիրը արդեն օրենքի ուժ ունի ռուսական հիմնական օրենքների 3-րդ հոդվածի համաձայն», ուստի «օրինագիծը .... մերժելի է, որովհետև այն, ինչ ուզում ենք հաստատել, արդեն հաստատված է»<sup>26</sup>:

Ս. Տիգրանյանի և Ա. Խոնդկարյանի հիշատակած ռուսական օրենքի 3-րդ հոդվածի առնչությամբ զեկուցող Հ. Տերտերյանը դիպուկ պատասխանում է. «Ռուսական օրենքը չի ենթադրում, թե Հայաստանում հայերենը պետական լեզու պիտի լինի, մենք հռչակել ենք Հայաստանի և ոչ հայկական հանրապետության, այնպես որ երբեք ըստինքյան հասկանալի չէ, որ հայերենը պետական լեզու է»<sup>27</sup>:

Ա. Աբեղյանը հակադրվում է մի կողմից իր այն գործընկերներին, որոնք կարծում են, թե օրինագծի հեղինակները շտապել են, մյուս կողմից էլ փոխնախագահ Ս. Տիգրանյանին, որի կարծիքով օրինագիծը միանգամայն ավե-

23 Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 404:

24 Տե՛ս նույն տեղում:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում:

27 Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 407:

լորդ է, որովհետև ինքնըստինքյան հասկանալի է: Ըստ Աբեդյանի՝ «Օրինագիծը բավական ուշացել է և թվում է, Հայաստանի անկախության հայտարարման օրը պետք է հայերենը պետական լեզու հռչակվեր»<sup>28</sup>: Նա ներկայացնում է հանրապետության լեզվական իրավիճակը. հայերենի մասնակի գործադրությունը չի ապացուցում նրա պետական լինելը, հայերենը ոչ միայն իբրև պետական, այլ նույնիսկ իբրև տեղական լեզու արհամարհված է, հիմնարկությունների մեծ մասը վտարել է հայերենը, հայերեն չի մացող շատ պաշտոնյաներ այն չեն գործադրում<sup>29</sup>: Պատգամավորը եզրակացնում էր, որ հայերենը հատուկ օրենքով պիտի պետականացվի, հայերեն չի մացող պաշտոնյաները պետք է աշխատեն սովորել լեզուն:

Մակայն այստեղ կրկին հապաղելու առաջարկություն է արվում: Հ. Սարգսյանի կարծիքով՝ անհնարին է հայերենի հարցը միանգամից լուծել, «որովհետև անհրաժեշտ պաշտոնյաներ կան, որոնք հայերեն չգիտեն, բայց որոնցից մենք հրաժարվել չենք կարող»<sup>30</sup>: Կողմնակից լինելով հայերենի պետականացման՝ նա առաջարկում է նոր օրինագիծ մշակել բոլոր մասնաբաժնույններով, այդ թվում հաշվի առնելով նաև այլազգիների հարցը: Այլապես միայն հայտարարություն պիտի արվի, որ հայերենը պետական լեզու է՝ մնացածը թողնելով ապագային:

Վ. Փափազյանը համոզված էր, որ «հայերենի պետականացումը կենսական խնդիր է»<sup>31</sup>: Առկա դրությունը նա բնական չէր համարում, ուստի կարծում էր, որ հայերենը պետք է հռչակել պետական, իսկ հայացումը՝ պարտավորեցուցիչ: Դրանից հետո կլինեն դրական հետևանքներ՝ կավելանան հայերեն իմացող մասնագետները, որոնք թարգմանություններ կանեն, հայերեն տերմիններ կստեղծվեն, գործավարական ոճ կմշակվի: Սա իրատեսական մոտեցում էր:

Պատգամավոր Ա. Հովհաննիսյանը կարծում էր, որ «Հայերենը պետական լեզու է անցյալ տարվա մայիսի 28-ից՝ այն օրից, երբ հայտարարվեց Հայաստանի անկախությունը»: Ըստ նրա՝ «այդ մասին վիճելը կնշանակե կասկածել, որ մենք անկախ ենք, կամ ցույց տալ, որ ուրիշ պետական լեզու կա. սակայն ամենքս գիտենք, որ այդպիսի բան գոյություն չունի, ռուսերենի գործածությունը մասնակի երևույթ է և մնացել է մինչև այժմ, որովհետև վերացնելու տեխնիկական հնարավորություն չի եղել»<sup>32</sup>:

Անվիճելի փաստ է, որ անկախության հռչակման հետ հայերենը պետական լեզու չի հայտարարվել, և երկրում լեզվական իրավիճակն աննպաստ էր հայերենի համար, որ նշանակում է՝ ազգային պետության համար:

Խ. Պապայանն արձանագրում էր, թե այն հիմնարկությունները, որտեղ հայացումն իրականացվել է, քննարկվող օրենքի կարիքը չունեն, սակայն այն անհրաժեշտ է, քանի որ շատ հաստատություններ հայացումը սկսելու ցանկություն չունեն, մեկ պաշտոնյայի համար ամբողջ գործավարությունը

28 Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 405:

29 Տարիներ անց այս շրջանի մասին խոսելիս Ս. Վրացյանը գրում է, թե տարվա վերջին պետական և հանրային հիմնարկությունների մեծ մասը արդեն հայացված էր (տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 374), այնինչ ժամանակի մամուլը և խորհրդարանական քննարկումներն հակառակն են ասում:

30 Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 405:

31 Նույն տեղում:

32 Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 405-406:



օտար լեզվով է կատարվում, շատ տեղերում նախապատվությունը տալիս են ռուսերեն ինացողներին, իսկ դատարանի քննիչի հայերեն գրված զեկուցումը հետ է տրվել: Այս ամենը պերճախոս փաստեր են օրենքի անհրաժեշտության, ուստի այն պիտի ընդունվի<sup>33</sup>:

Կ. Սասունին նշում էր, որ երբ հռչակվել է անկախ Հայաստան, հայերենն էլ պիտի հռչակվեր պետական, բայց դա չի արվել: Նա հարց էր տալիս. «Հայաստանում մի քանի գործածական լեզուներ կան, բնականորեն հարց է ծագում, թե հայերենը ինչ տեղ է բռնում»<sup>34</sup>: Ձգտում կա պահել ռուսերենը մի փոքրամասնության համար, սակայն այդ ձգտումը կխորտակվի, որովհետև լեզվի հարցը քաղաքականից գատ գերազանցապես ժողովրդական բնույթ ունի: Պատգամավորը չէր կարծում, թե երեք ամսում հայացումը կավարտվի, գուցե երեք տարի է պետք դրա համար, բայց վստահ էր, որ արագ քայլերով պիտի գնալ դեպի պետականացում:

Երկարատև քննարկումից հետո երկու հոդվածից բաղկացած օրենքն ընդունվում է. **Հայաստանի Հանրապետության պետական լեզու հռչակվում է հայերենը** և պարտադիր դառնում պետական ու հասարակական հաստատություններում և բանակում: Հիմնարկությունները պարտավոր են վեց ամսվա ընթացքում միջոցներ ձեռնարկել հայերենը պետական գործավարության պաշտոնական լեզու դարձնելու ուղղությամբ: Այլ լեզուների գործածությունը պիտի սահմանվեր հատուկ օրենքով<sup>35</sup>:

1919 թ. դեկտեմբերի 26-ի օրենքով հայերենը հայտարարվեց պետական լեզու<sup>36</sup>:

Հայերենը հայության կյանքում պետական լեզվի գործառույթ չէր ունեցել Կիլիկյան հայկական թագավորության շրջանից<sup>37</sup> ի վեր, հինգ հարյուր տարուց ավելի: Աշխարհաբարը կամ նոր հայերենն իր երեքհարյուրամյա պատմության ընթացքում պետական լեզվի կարգավիճակ էր ստանում առաջին անգամ<sup>38</sup>: Ազգային պետության կայացման առումով հայերենի պետականացումը մեծ նշանակություն ունեցավ<sup>39</sup>:

33 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 406:

34 Նույն տեղում:

35 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, Եր., Պատմության կենտրոնական պետական արխիվ, 1998, էջ 209:

36 Եթե խորհրդային շրջանում հայերենը բնութագրվում էր միայն որպես Հայկական ՍՍՀ պետական լեզու (տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 6, Եր., Հայկական սովետական հանրագիտարանի գլխ. խմբագրություն, 1980, էջ 159), ապա 1991-ի անկախությունից հետո՝ Հայաստանի Հանրապետության (1918-20), ՀԽՍՀ (1920-91), Հայաստանի Հանրապետության (1991-ից) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (1991-ից) պետական լեզուն (Հայկական համառոտ հանրագիտարան, հատ. 3, Եր., Հայկական հանրագիտարանի գլխ. խմբագրություն, 1999, էջ 232):

37 Կիլիկյան Հայաստանում պետական-պաշտոնական լեզու էր հայերենի գրական դրսևորումներից միջին հայերենը (տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., Հայպետհրատ, 1951, էջ 235, **Ղազարյան Ս. Ղ.**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, 2-րդ հրատ., Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981, էջ 285-286):

38 Պատմական այս կարևոր իրադարձության մասին հայոց լեզվի պատմությանը վերաբերող աշխատություններում սովորաբար ոչինչ չի ասվում:

39 Մեկ տարի անց՝ 1920 թվականի դեկտեմբերի 6-ին (ըստ այլ կարծիքների՝ 9-ին), Հայաստանի Հեղկոմը դեկրետ ընդունեց պետական լեզվի մասին, որի համաձայն հանրապետության սահմաններում պետական լեզու ճանաչվեց հայերենը (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. VII, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Եր., 1967, էջ 42): Ակադեմիական բազմահատորյակում, սակայն, որևէ խոսք չկա այն մասին, որ Առաջին Հանրապետության շրջանում հայերենը հռչակվել էր պետական լեզու: Խորհրդային Հայաստանի բոլոր սահմանադրություններում (1922, 1936, 1978) ամրագրված է, որ Հայաստանի պետական լեզուն հայերենն է, թեև Խորհրդային Միություն կոչված կայսրությունում հայերենի խնդիրները լիովին լուծված չեն եղել:

Ընդունված օրենքը **ՀԱՅԵՐԵՆԻ** մասին էր, չկար որևէ տարբերակում արևելահայերեն /արևմտահայերեն, որ հատվածականություն չդրսևորելու, նրանից վեր կանգնելու միանգամայն ճիշտ մոտեցում էր<sup>40</sup>: Այս մոտեցումը հետագայում որդեգրվեց Խորհրդային Հայաստանի, պալա և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, նաև 1993 թ. ապրիլի 17-ին ընդունված «Լեզվի մասին» ՀՀ օրենքում: Թեև հայտնի է, որ հայերեն ասելով հասկացվում էր արևելահայերենը<sup>41</sup>:

Հայերենի հարցին զուգահեռ հայոց պետության ուշադրության կենտրոնում են եղել երկրի այլազգի քաղաքացիների լեզվական խնդիրները: Խորհրդարանի վերոհիշյալ նիստում, որի ընթացքում հայերենը պետական լեզու հռչակվեց, առաջարկություններ են արվել (Ա. Աբեղյան, Հ. Մարգարյան, Ա. Խոնդկարյան)՝ օրենքով ապահովելու այլազգի քաղաքացիների մայրենի լեզվի գործադրումը: Առաջարկվել է հայերենին վերաբերող օրինագիծը վերադարձնել հանձնաժողովին, քանի որ «անտես է առնված նաև այլազգիների լեզվի հարցը» (Ա. Մելքոնյան): Ա. Հովհաննիսյանը, զուգահեռ անցկացնելով Ռուսաստանի հետ, նշել է, որ այնտեղ ճնշվում էր փոքր ազգերի լեզուն, որի հետևանքով այդ ազգերն ատելությամբ էին լցված պետության հանդեպ, ուստի Հայաստանը չի կարող գնալ նույն ճանապարհով. փոքր ազգերի լեզուն պիտի ապահովվի Հայաստանի Հանրապետությունում: Արվել է առաջարկություն՝ օրինագիծը մերժելու և նորը (փոքր ազգերի լեզվի գործածության մասին) մշակելու և ոչ թե հայերենը պետականացնելու<sup>42</sup>:

Հայոց լեզվի խնդրին մասնակի անդրադարձ եղել է 1920 թ. հունվարի 3-ի խորհրդարանի 58-րդ նիստում: Գրագիտական, գրավարժական և հանրային համալսարանի օրինագծի մասին զեկուցում է Ա. Աբեղյանը՝ նշելով, որ ցարական կարգերի հետևանքով ժողովրդի զգալի մասը մնացել է անգրագետ, որ անհանդուրժելի է: Հանրային կրթության նախարարն առաջարկում է չափահասների համար բացել երեք կարգի դպրոց. անգրագետների համար՝ գրավարժական, գրաձանաչների՝ գրագիտական դասընթացներ և գրեթե բոլոր քաղաքներում՝ ժողովրդական համալսարաններ: Դասընթացներում սովորելու են հայոց լեզու և թվաբանություն, ժողովրդական համալսարաններում՝ հումանիտար առարկաներ<sup>43</sup>:

Խորհրդարանում հայերենին առնչվող հարցերը միայն օրինաստեղծ ոլորտում չեն սահմանափակվել. հայերենի իրավունքների պաշտպանությունը դրսևորվել է նաև այլ կերպ: Այսպես. 1919 թ. ապրիլի 15-ի նիստին սոցիալիստ-հեղափոխական պատգամավոր Լ. Թումանյանն իր գրավոր մի հարցապնդումը հիմնավորելիս խոսում է ռուսերեն: Դաշնակցական խմբակցությունը պահանջում է հայերեն խոսել, սակայն պատգամավորն ընդդիմանում է, ընկերներն էլ սատարում են նրան: Անտեսվում է ներկա հասա-

40 Քննարկման ժամանակ ամենևին չի արժարժվում արևմտահայության լեզվական խնդիրը: Պատգամավոր Հ. Մանուկյանը միայն նշում է. «Չկա նաև թուրքահայի խնդիր. թուրքահայը շատ լավ իմանալով թուրքերեն, կրվում էր նրա դեմ, որպես բռնությամբ իր վզին փաթաթված լեզվի» (տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 406):

41 Բուհական դասագրքերից մեկում խորհրդային շրջանի վերաբերյալ գրված է. «Արևելահայ գրական լեզուն դառնում է պետական լեզու» (**Ջահուկյան Գ. Բ.** և ուրիշներ, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Եր., «Լույս», 1980, էջ 35):

42 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 405-406:

43 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 426 (ըստ «Ցառաջ» թերթի՝ N 8,9, 11, 13 հունվարի, 1920 թ.):

րակության պահանջը ևս: Իսկ երբ Ա. Խոնդկարյանն անվանարկում է ՀՅ Դաշնակցությանը, դաշնակցական խմբակցությունը և հասարակությունը լքում են խորհրդարանը, նիստն ընդհատվում է: Թերթերից մեկը հռետտ-րական հարց է հնչեցնում. «Նրբ պիտի խելքի գան այս խելակորույսները»<sup>44</sup>: «Խելակորույս» անվանյալները չէին գիտակցում հայոց լեզվի դերն անկախ Հայաստանում:

**Ինչպես ասացինք, հայերենի հարցերին անդրադարձներ եղել են նաև Հայաստանի կառավարության նիստերում:**

1919 թ. մայիսի 10-ին լսում են հանրային կրթության նախարարի գեկուցումը՝ հայերեն ներկայացումներից պատերազմական տուրքը վերացնելու մասին: Կարևոր չէ այն, որ հարցի առնչությամբ որոշում չի ընդունվել և այն հետաձգվել է: Մեր կարծիքով կարևորը հայերենին վերաբերող հարցի արժարժումն էր, որին տուրքից ազատելը կարող էր նպաստել մայրենի լեզվով ներկայացումների ավելացմանը<sup>45</sup>:

1919 թ. հոկտեմբերի 14-ին կառավարությունը հավանություն է տալիս Երևանում և Ալեքսանդրապոլում պաշտոնետության համար հայոց լեզվի դասընթացներ հիմնելու համար վարկ բացելու օրինագծին և հաստատման ներկայացնում խորհրդարանին<sup>46</sup>:

Պետական լեզվի մասին օրենքի ընդունումից հետո՝ 1920 թ. սկզբին, կազմակերպվում են հայերենի դասընթացները, որոնց մասնակից պաշտոնյաների ցուցակը կազմում են նախարարությունները: Դասընթացը գործնական բնույթ էր ունենալու. նպատակն էր լինելու պաշտոնական թղթերն ընթերցելի գրել սովորեցնելը և, բնականաբար, նման գրություններ կարդալը (և հասկանալը): Նախատեսվում էր շաբաթական 6 ժամ պարապմունք (առնվազն 4 օր), սակայն դասերն անկանոն էին ընթանում, և Ալեքսանդրապոլի դասընթացի ղեկավար Լ. Սարգսյանը հանրային կրթության նախարարին գրում էր, որ ցուցակագրված 73-ի փոխարեն դասընթացին մասնակցել է 48 պաշտոնյա (ի դեպ, կանոնավոր հաճախել են օտարազգիները), իսկ գինվորական իշխանությունների նշած 38 հոգուց որևէ մեկը չի ներկայացել<sup>47</sup>: Կրթության նախարարը ստեղծված վիճակի մասին տեղեկացնում է նախարարություններին և խնդրում ծանուցել հայերեն սակավ իմացող պաշտոնյաներին, որ նրանք հետագայում խնդիրներ կունենան<sup>48</sup>:

1920 թ. մայիսի 30-ին օրենք է ընդունվում հայերեն չիմացող պաշտոնյաներին աշխատանքից ազատելու պայմանների մասին («Պետական լեզուն չիմացող պաշտոնյաների լիկվիդացիայի մասին»)՝<sup>49</sup>: Պաշտոնատար անձանց լեզվի իմացությունը ստուգելու նպատակով ստեղծվում են հանձնաժողովներ, իսկ հայոց լեզու չիմացողները ենթարկվելու էին քննության և անհաջողության դեպքում, օրենքի համաձայն, ազատվելու էին պաշտոններից<sup>50</sup>:

44 «Վշխատանք», Եր., N 11, 19 ապրիլի 1919 թ.:  
45 Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 185:  
46 Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 322:  
47 Տե՛ս **Ալեքսանյան Կ.**, Հայաստանի առաջին հանրապետությունում լեզվական քաղաքականության հարցի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատ. 14, Գյումրի, 2011, էջ 59-60:  
48 Տե՛ս նույն տեղում:  
49 Հայաստանի Հանրապետության օրենքները, էջ 318:  
50 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Եր., «Լուսակն», 2018, էջ 96:

Ժ (ՃՃ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎՎ համահայկական հանդես

Կառավարությունն անգիջում էր, բացառություն էր արվում միայն փորձառու սպաների առնչությամբ, քանի որ նրանց հրաժարեցումը կվնասեր բանակին, երկրի անվտանգությանը:

1920 թ. հունվարի 5-ին հաստատում են հանրային կրթության և արվեստի նախարարի՝ Երևանում և Կարսում բացվելիք հաշվապահական դասընթացների համար վարկ բացելու օրինագիծը: Որոշման մեջ մեզ հետաքրքրողը առաջին կետն է, որտեղ շեշտվում էր, որ դասավանդումը պետք է իրականացվի հայերեն<sup>51</sup>:

1920 թ. մայիսի 11-ին վարչապետ<sup>52</sup> Հ. Օհանջանյանի նախագահությամբ լսում են Հանրային կրթության նախարարի գեկուցումը համալսարանի դասավանդումը հայերեն իրականացնելու մասին<sup>53</sup>:

1920 թ. հունիսի 10-ին կառավարությունում լսում են կրթության նախարարի գեկուցումը համալսարանի հայերենին անտեղյակ ուսուցիչների մասին: Որոշում են վարվել համաձայն մայիսի 30-ին ընդունված օրենքի, բացառություն նկատել միայն մասնագետները<sup>54</sup> (ամենայն հավանականությամբ նկատի էին առնվում «առանձնահատուկ՝ նեղ» մասնագետները):

Կառավարությունն աշխատեց աստիճանաբար հայացնել բոլոր պետական հիմնարկությունները՝ խուսափելով, սակայն, կտրուկ միջոցներից: Հապաղումը ջղայնացնում էր (Ս. Վրացյանի բառն է-Գ.Գ.) հասարակության որոշ մասերին, մանավանդ արևմտահայերին, որոնք պահանջում էին անմիջապես հայացնել ամբողջ պետական մեքենան<sup>55</sup>: Մամուլը անողորք քննադատում էր այն հիմնարկները, որտեղ ազգայնացումը դանդաղ էր ընթանում<sup>56</sup>: Հարկ է ուշադրություն դարձնել Ս. Վրացյանի գործածած «ազգայնացում» բառին. սա հասկանալ է տալիս, որ հայացում-հայերենացումը ազգայնացում է նշանակում, որ պետական մարմինները ազգային (հայկական) կարող են կոչվել միայն հայերենի միջոցով:

Եթե հետևենք Ալ. Խատիսյանի կատարած շրջանաբաժանմանը, ըստ որի ՀՀ կառավարության գործունեությունը բաժանվում է երեք շրջանի<sup>57</sup>,

51 Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 372:

52 Նկատելի է, որ անգամ պետական բարձր պաշտոնների անունների գործածությունը լիարժեք չէր կանտոնակարգված. պետական կառավարման հայերեն եզրաբանությունը ձևավորման և կայունացման փուլում էր: Այսպես՝ հունիսյան նիստի արձանագրության մեջ **վարչապետը** կոչվել է **նախարարապետ**: Մի դեպքում գործածվում էր **նախարար**, մեկ այլ դեպքում՝ **մինիստր** և այլն:

53 Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 452:

54 Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 483:

55 Դա պարզ երևում է «Հայացման կոմիտեի» կոչի այս հատվածում. «...մեր քաղաքացիների 80 տոկոսը, մանաւանդ ամբողջ տաճկահայութիւնը, իրեն այստեղ չհասկացած, խորթ ու անհարազատ է զգում: Այսպիսի անտրամադրութիւն չէ կարող լինել: Մեր պ.պ. մինիստրներն ու նրանց գրասենեակի կառավարիչները և այլն պէտք է ընդունեն, որ նախ այս պետութիւնը Հայաստան է և ապա որ նրա մէջ ապրող հարիւրհազարաւոր՝ ռուսերէն և ոչ մի բառ չհասկացող տաճկահայերն ու հայ գիւղացիներն էլ Հայաստանի ռամկավար հանրապետութեան քաղաքացիներ են: Ուստի և մենք պահանջում ենք, որ՝ թեկուզ աստիճանաբար, բայց անյապաղ ու հաստատապէս հայերէնը պետականացի և գլխաւոր գործնական լեզուն դառնայ բոլոր հաստատութիւններում» (տե՛ս «Հայաստանի աշխատատը», N 47, 27 ապրիլի 1919 թ.):

56 Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 374:

57 Իր գրքի «Իմ վարչապետության շրջանը» բաժնում Խատիսյանը գրում է. «1918 թ. ամառն սկսած մինչև 1920 թ. Դեկտեմբեր ամիսը Հայաստանի կառավարութեան խորհուրդը կարելի է բաժնել երեք շրջանի: Առաջին շրջանը - կառավարութիւնը նախագահութեամբ Քաջազնունիի - պետական-կազմակերպչական էր, երկրորդ շրջանը - Ալ. Խատիսեանի նախագահութեամբ եղած կառավարութիւնը քաղաքացիական-ստեղծագործական և երրորդ շրջանը Հ. Օհանջանեանի և Ս. Վրացեանի նախագահութեամբ եղած կառավարութիւնները - արտաքին և ներքին թշնամիներու հետ կռուի շրջան, որ վերջացաւ Դեկտեմբեր 2ին, Թուրքիայի հետ Ալեքսանդրապոլի դաշնագրով և իշխանութիւնը մեծամասնականներուն յանձնուեցաւ (տե՛ս **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ տպագր., Պէլրոյթ, տպ. «Համագգային», 1968, էջ 133):

ապա կարելի է արձանագրել, որ հայերենի խնդիրներն ավելի շատ արձարծովել են երկրորդ շրջանում (1919 թ. սկզբից մինչև 1920 թ. մայիսի 5): Ընց այս շրջանում հայերենը դարձավ ՀՀ պետական լեզուն:

Խատիայանն իր վարչապետության շրջանի կառավարության գործունեությունը ներկայացնում է ըստ նախարարությունների: Հանրային կրթության նախարարության (նախարար՝ Ն. Աղբալյան) աշխատանքը գնահատելիս կարևոր է համարում ոչ միայն տարաստիճան կրթական հաստատությունների բացումը (տարրական դպրոցից մինչև Ալեքսանդրապոլում հիմնված համալսարան), այլև առանձին նշում է. «Հիմնուեցան նաև հայերէն լեզուի դասընթացքներ պաշտօնեաներու համար, որոնք բոլորը չէին տիրապետեր հայերէն լեզուին»<sup>58</sup>: Սա ցույց է տալիս, թե որքան նշանակալից է եղել այդ գործընթացը նրա ընկալմամբ: Առաջին Հանրապետության շրջանի լեզվական քաղաքականությանը, որպես կանոն, խորհրդային շրջանում չէին անդրադառնում<sup>59</sup>:

Առաջին Հանրապետության շրջանի պետական լեզվաքաղաքականության դասերը կիրառվեցին 1991 թ. սեպտեմբերի 21-ին հռչակված անկախությունից հետո: Խորհրդային կարգերի փլուզումից հետո նորանկախ Հայաստանի առջև ծառայած 1918–1920 թթ. խնդիրներին նման (իհարկե, ոչ նույն ընդգրկմամբ) հիմնահարցեր՝ պաշտոնական գրագրության հայերենացում, հայերեն չիմացող պաշտոնյաների պաշտոնավարման նպատակահարմարության քննարկում<sup>60</sup>, ռուսական դպրոցների խիտ ցանցի վերացում և այլն:

Մեծապես կարևորվում էր Լեզվի մասին օրենքի ընդունումը<sup>61</sup>, որի միջոցով պետական լեզվի լիարժեք կարգավիճակ կշտրիվեր հայոց լեզվին, որ մեր ինքնության գլխավոր նշանն է<sup>62</sup>:

Այսպիսով, կարող ենք մի քանի **եզրակացություններ** անել:

1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության մտավորական շրջանակներում սկիզբ առած հայացման (իմա՝ հայերենացման) շարժումը պետական լեզվական քաղաքականության իրականացման նախադրյալներ ստեղծեց:

58 Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 138:

59 Առաջին Հանրապետության շրջանի մասին ահա թե ինչ բնութագիր է տրված խորհրդային ժամանակաշրջանում հրատարակված համալսարանական գրքում. «Դաշնակցականների կառավարությունը չկարողացավ որևէ քալ կատարել երկրի մշակութային առաջընթացի ուղղությամբ: Պետությունը աննշան նպաստ էր բաց թողնում դպրոցներին, որոնց թիվը սկսեց խիստ նվազել: Տասնյակ հազարավոր աշակերտներ մնացին փողոցում, լավագույն աշխատողները հեռացան դպրոցից» (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1972, էջ 450): Ոչ մի խոսք հայերենը պետական լեզու հայտարարելու և հայացման քաղաքականության կամ համալսարան հիմնելու մասին: Անկախության շրջանի համալսարանական դասագրքերում արդեն անդրադարձ կա հայերենը պետական լեզու հռչակելու փաստին և հայացման գործընթացին (տե՛ս «Հայոց պատմություն», Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 527–528): Ի դեպ, անկախության շրջանի դպրոցական դասագրքերում, ավելի վաղ, քան բուհական դասագրքերում, գրեթե նույն պատկերն ենք տեսնում. հիշատակվում են թե՛ հայերենը պետական լեզու հայտարարելը և թե՛ հայացումը (տե՛ս, օրինակ, Մեղրոյան Ա. և ուրիշներ, Հայոց պատմություն, 12-րդ դասարան, հումանիտար հոսք, Եր., «Զանգակ-97», 2011, էջ 12):

60 Հմմտ. Ալ. Մյանսիկյանի հետևյալ մտքերը. «Այդ տարրին պատկանող մտավորականները չեն ցանկանում ամեննին ուսումնասիրել հայ լեզուն և կյանքը ու գերադասում են կառավարել երկիրը ռուսական լեզվի միջոցով» և «Հայաստանը հայ աշխատավորների, հայ ժողովրդի պետությունն է: Եվ այդտեղ պետական լեզուն հայերենն է: Նա, ով չի ցանկանում այդ ըմբռնել, ով դիտավորությամբ խուսափում է գործածել հայերենը պետական հիմնարկությունների մեջ, իրապես վարում է հակահեղափոխական մի գործ: Նա, ով չի կարող համակերպվել մեր պետության այս պահանջին, կարող է հեռանալ երկրից:» (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1 հուլիսի 1921 թ.):

61 Հմմտ. Միքոզյան Վ., Լեզուաբանություն և լեզուաքաղաքականություն, Պէթրոթ, «Սիփան», 1998:

62 Տե՛ս Իշխանյան Ռ., Մեր ինքնության գլխավոր նշանը, Եր., «Նսիրի», 1991:

Մեծ ջանքեր գործադրվեցին հայերենը դարձնելու Հայաստանի պետական և հասարակական հիմնարկների, հայոց բանակի աշխատանքային լեզուն (գրավոր և բանավոր):

Հայաստանի Հանրապետությունն ուշադրության կենտրոնում էր պահում հանրային կրթության ոլորտը. պետական հովանու ներքո բացվեց համալսարան, լայն թափով՝ տարբեր աստիճանի դպրոցներ, որոնց ուսուցման լեզուն հայերենն էր:

1919 թ. դեկտեմբերի 26-ին հայերենը պաշտոնապես հռչակվեց Հայաստանի Հանրապետության պետական լեզու:

Հանրապետության շրջանում որոշակի աշխատանք է կատարվել օտար եզրերի հայերեն համարժեքները գտնելու կամ ստեղծելու, հայոց լեզուն օտարաբանություններից մաքրելու, գործավարության լեզուն մշակելու ուղղությամբ:

1918-1920 թթ. լեզվական քաղաքականությունը որոշակի նախահիմք դարձավ հայերենի նկատմամբ պետական լեզվաքաղաքականության համար մասամբ խորհրդային շրջանում, առավելաբար 1991-ից հետո՝ անկախ Հայաստանի Հանրապետությունում, որը 1993 թ. ապրիլի 17-ին ընդունեց «Լեզվի մասին» օրենքը:

1918-1920 թթ. լեզվական քննարկումներում (ապա և օրենքում) գործածվել է միայն «հայերեն» եզրը, որն էլ անգամ արևելահայերեն / արևմտահայերեն տարանջատում չի կատարվել. դա նշանակում է, թե իշխել է ազգային միասնական մտածողությունը, որ կա մեկ հայերեն՝ իր երկու գրական դրսևորումներով:

**Դավիթ Ս. Գյուրջինյան** – հեղինակ է շուրջ 70 գիտական հոդվածների, դպրոցական և համալսարանական բազմաթիվ դասագրքերի, բառարանների, ուսումնամեթոդական աշխատանքների: Գիտական հետաքրքրություններն են հայոց լեզվի բառակազմությունը և բառակազմական իմաստաբանությունը, բառապաշարը, բառարանագրությունը և բառարանագիտությունը, խոսքարվեստը, արդի հայերենի ուսուցման հարցերը:

Summary

**THE EXPRESSION OF STATE ATTITUDE TOWARDS THE ARMENIAN LANGUAGE IN REPUBLIC OF ARMENIA 1918-1920**

Davit S. Gyurjinyan  
*Candidate of Philological Sciences*

**Key words** – Armenization movement, Armenization committee, official language of the Republic of Armenia, language issue in the parliament, Armenian as an official language, state language policy, army working language.

The article presents that how in 1918-1920 the movement of Armenianization initiated in the circle of the intellectuals of the Armenian Republic created pre-conditions for the implementation of state language policy. Great efforts were carried out for turning the Armenian language (written and oral one) into the working language for the state, public institutions and Armenian army. Public education was at the core attention of the Armenian Republic: under the auspice of the state a university, wide ranging schools of different levels were opened which language was Armenian. On December 26, 1919 Armenian was officially declared as the state language.

Резюме

**ПРОЯВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОГО ПОДХОДА  
К АРМЯНСКОМУ ЯЗЫКУ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ  
В 1918-1920 ГГ.**

Давит С. Гюрджинян  
*Кандидат филологических наук*

**Ключевые слова** – движение арменизации, Комитет арменизации, государственный язык Республики Армения, вопрос языка в парламенте, армянский – государственный язык, государственная языковая политика, рабочий язык армянской армии.

Иницированное в 1919 г. интеллигенцией Республики Армения движение арменизации создало предпосылки для государственной языковой политики независимого армянского государства. Были предприняты большие усилия для того, чтобы армянский стал рабочим языком в государственных и общественных учреждениях, а также в армянской армии. В 1919 г. был основан университет, были открыты сотни школ с обучением на армянском языке, организованы курсы армянского языка для госслужащих и т.д.

Вопросы, касающиеся армянского языка, неоднократно обсуждались в парламенте страны и в правительстве. А 26 декабря 1919 г. армянский язык


ՀՀ-ի հանրահայտության հանդիսանում է (ԺԶ) քաղաք. թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

был официально объявлен государственным языком Республики Армения.

## REFERENCES

1. **Aghayan E. B.**, *Ardi hayereni batsatrakan bararan*, Ye., “Hayastan”, 1976. **(In Armenian)**
2. **Aleksanyan K.**, *Hayastani arajin hanrapetut'yunum lezvakan qaghaqakanut'yan hartsis shurj*, GAA SHHH kentroni “Gitakan ashkhatutyunner”, vol. 14, Gyumri, 2011. **(In Armenian)**
3. **Atcharyan H.**, *Hayots lezvi patmut'yun*, vol. 2, Ye., Haypethrat, 1951. **(In Armenian)**
4. **Ghazaryan S. GH.**, *Hayots lezvi hamarot patmut'yun*, 2nd edition, Ye., Yerevani hamalsarani hratarakchut'yun, 1981. **(In Armenian)**
5. **Gnel arch. Jerejian, Tonikian P. K., Ter Khachaturian Art.**, *Hayots lezui nor bararan*, Beirut, “K. Tonikian ev vordiq”, 1992, vol. 1. **(In Armenian)**
6. **Hakobyan A.**, *Hayastani Hanrapetutyuny 1918–1920*, Ye., “Lusakn”, 2018. **(In Armenian)**
7. *Hay zhoghovrdi patmut'yun*, vol. 7, Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakchut'yun, Ye., 1967. **(In Armenian)**
8. *Hay zhoghovrdi patmut'yun*, **M. G. Nersisyan**, Ye., Yerevani hamalsarani hratarakchut'yun, 1972. **(In Armenian)**
9. *Hayastani Hanrapetut'yan karavarut'yan nisteri ardzanagrut'yunner. 1918–1920*, **A. Virabyan**, Ye., Hayastani azgayin arkhiv, 2014. **(In Armenian)**
10. *Hayastani Hanrapetut'yan parlamenti nisteri ardzanagrut'yunner. 1918–1920*, **A. Virabyan**, Ye., Hayastani azgayin arkhiv, 2010. **(In Armenian)**
11. *Haykakan hamarot hanragitaran*, vol. 3, Ye., Haykakan hanragitarani glkhavor khmbagrut'yun, 1999. **(In Armenian)**
12. *Haykakan sovetakan hanragitaran*, vol. 6, Ye., Haykakan sovetakan hanragitarani glkhavor khmbagrut'yun, 1980. **(In Armenian)**
13. *Hayots patmut'yun*, **Hr. R. Simonyan**, Ye., EPH hrat., 2012. **(In Armenian)**
14. **Ishkhanyan R.**, *Mer inqnut'yan glkhavor nshany*, Ye., “Nayiri”, 1991. **(In Armenian)**
15. **Jahukyan G. B.** and others, *Hayots lezu*, vol. 1, Ye., “Luys”, 1980. **(In Armenian)**
16. **Khacherian L. G.**, *Hayots hamazgayin mashtotsean hamakargvats miasnakan ev miakerp ughghuagrut'ean patmut'yune*, Los Angeles, “Nor Kyanq”, 1999. **(In Armenian)**
17. **Khatisian Al.**, *Hayastani Hanrapetut'ean tsagumn u zargatsumy*, 2nd edition, Beirut, “Hamazgayin”, 1968. **(In Armenian)**
18. **Melkonyan A.** and others, *Hayots patmut'yun – 12*, Ye., “Zangak-97”, 2011. **(In Armenian)**
19. **Mirzoyean V.**, *Lezvabanut'yun ev lezvaqaghaqakanut'yun*, Beirut, “Sipan”, 1998. **(In Armenian)**
20. **Paronyan H.**, *Erker*, Ye., “Sovetakan grogh”, 1979. **(In Armenian)**
21. **Vratsyan S.**, *Hayastani Hanrapetut'yun*, Ye., “Hayastan”, 1993. **(In Armenian)**
22. *Zhamanakakits hayots lezvi batsatrakan bararan*, vol. 3, Ye., 1974, “Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakchut'yun”. **(In Armenian)**





Հայկազուն Ս. Ալվրցյան  
Բանաս. գիտ. թեկնածու

Աշխարհը ղեկավարում են ոչ թե մարդիկ և  
օրենքները, այլ նշաններն ու խորհրդանշանները:  
Կոնֆուցիոս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ

Բանալի բառեր – խորհրդանշաններ, դրոշ, կարմիր,  
կապույտ, նարնջագույն, զինանշան, հայոց փառքի ժառանգություն,  
«Իտալացի աղջկա երգը», «Մեր հայրենիք»:

### Մուտք

Հայաստանի Հանրապետության խորհրդանշանների ընդունման մասին գոյություն ունեն արխիվային փաստաթղթեր և ժամանակակիցների հուշեր, որոնցից առավել մանրամասն տեղեկություններ են պահպանվել ՀՀ չորրորդ վարչապետ Սիմոն Վրացյանի աշխատության մեջ, ով անձամբ մասնակցել է Հայաստանի խորհրդի այն նիստերին, որոնցում հաստատվել են երկրի խորհրդանշանները:

#### 1. Հայոց եռագույնի ծագումնաբանությունը

Սիմոն Վրացյանի վկայությամբ՝ դեռևս ՀՀ կառավարության ու Հայաստանի խորհրդի ձևավորման շրջանում քննարկումներ են եղել ՀՀ պետական դրոշի վերաբերյալ: Ծավալված քննարկումից հետո ներկայացված եռագույն տարբերակը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն, ընդունվել է որպես պետական դրոշ՝ պայմանով, որ այն վերջնականապես կհաստատվի «Սահմանադիր ժողովի կողմից, որը պետք է գումարի էր Հայաստանի երկու հատուածների միացումից յետոյ»: Սակայն Սահմանադիր ժողով չգումարվեց և, բնականաբար, դրոշը մնաց անփոփոխ:

ՀԽՍՀ Գերագույն Խորհուրդն այս դրոշը նույնությամբ ընդունեց 1990 թ.

1 Վրացյան Սիմոն, Հայաստանի Հանրապետություն, տպարան «Ալիք»-Թեհրան, 1982, էջ 183:

2018  
հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
Ժ (ՃԶ) փայլի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԿՄ համահայկական հանդես

օգոստոսի 26-ին՝ որպես Հայաստանի Հանրապետության պետական դրոշմ<sup>2</sup>:

Թեև Ս. Վրացյանը չի հաղորդում, թե այս նախնական քննարկման ժամանակ ինչ խորհուրդներ են վերագրվել գույներին՝ առանձնաբար և մասնավորապես դրոշին՝ որպես խորհրդակիր ամբողջություն, սակայն հաստատում է, որ «Դրօշակի ձևի և գույների շուրջ եղան բաւական երկար խորհրդակցութիւններ... լուեց հայկաբան Ստեփան Մալխասեանի հիմնաւորած գեկուցումը հայկական դրօշակի մասին և, ի վերջոյ, որոշուեց ընդունել վերոյիշեալ երեք գույները»<sup>3</sup>: Նա նաև նշում է, որ դրոշի գույների վերաբերյալ թեև տարբեր կարծիքներ եղան, այնուամենայնիվ ոչինչ չի հաղորդում այդ քննարկման բովանդակության մասին և ավելացնում է, որ Հայաստանի խորհուրդն էլ այն կարծես չի կարևորել և այդ մասին որոշում չի ընդունել: Ուստի Ս. Վրացյանը վկայում է, որ «...դրօշակն իր ամբողջութեան մէջ, գույների ընտրութիւնն ու դասաւորութիւնը, աւելի շուտ, արդիւնք էր քւեարկութեան պատահականութեան»<sup>4</sup>: Դրա հետ միասին նա հայտնում է նաև որ դրոշի գույներից հատկապես վեճի առարկա էր դարձել նարնջագույնը, որը համառորեն պաշտպանում էր վարչապետ Հովհ. Քաջազունին՝ գուտ գեղագիտական նկատառումներով:

Ս. Վրացյանը փոխանցում է նաև առանձին պատգամավորների տեսակետները, որոնց համաձայն՝ «Կարմիրը հայ ժողովրդի թափած արիւնն էր, կապոյտը՝ Հայաստանի կապոյտ երկինքը, և նարնջի կամ ոսկու գոյնը՝ խտացումը աշխատանքի»<sup>5</sup>:

Սակայն մեր ձեռքի տակ եղած փաստերը վկայում են, որ եռագույնի տարբեր գույների ու նրանց երանգների առիթով քննարկումները շարունակվել են ՀՀ գոյության ողջ ժամանակամիջոցում: Որովհետև արդեն 1918 թ. սեպտեմբերի 19-ին հրապարակված ՀՀ Ներքին գործոց նախարար **Աբամ Մանուկյանի** շրջաբերական-հրահանգով սահմանվել էր, որ «Հայաստանի Հանրապետութեան պետական-կառավարական հիմնարկությունները պէտք է ունենան և կրեն Հանրապետութեան դրօշակ հետևյալ գույներով ըստ կարգի վերևից-ներքև՝ կարմիր, կապոյտ, դեղին: Յայտնելով այս մասին, առաջարկում են անմիջապէս կիրառել սոյն հրահանգը և հետևել նրա իրագործման»<sup>6</sup>:

Այս շրջաբերականը վկայում է, որ ՀՀ դրոշի երրորդ գույնի ընտրության հարցը դեռևս բաց էր մնում, քանի որ դեղին գույնը կարող էր մատուցվել թե՛ իր ուղղակի տեսքով, թե՛ իր երանգներից մեկը հանդիսացող նարնջագույնով: Սակայն դրանից հետո էլ եղել են այլ առաջարկներ, քանի որ ծիածանի երեք հիմնական գույները խորհրդանշող կարմիրը, կապոյտն ու

2 Նույնությամբ ասելով՝ նկատի ունենք գույներն ու դրանց դասավորվածությունը, իսկ չափսերը 2:3-ի հարաբերակցությունից փոխվեցին 1:2-ի: ՀՀ դրոշի մասին 2006 թ. օրենքում տրվում է հետևյալ բացատրությունը. «Կարմիր գույնը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար: Կապոյտ գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո: Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արաբական տաղանդը և աշխատասիրությունը»: Ինչպես կտեսնենք ստորև, որոշ միշտ շեշտադրումներով հանդերձ այս բացատրությունը թերի է. բացատրության մեջ չի գիտակցվում երևույթի համակարգվածությունը, խորհրդարանությունն ու սրբազնությունը (սվիրականությունը):

3 **Վրացեան Սիմոն**, նույն տեղում:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:

6 ՀԱԱ, ֆ. 214, ց. 3, գ. 24, թ. 19:

դեղինը ունեն բազմաթիվ երանգներ:

Գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը նախագծել է ՀՀ դրոշի տարբերակներ, որոնք պահվում են ՀՀ Ազգային արխիվում: Առաջինն ընդգրկում էր ծիածանի բոլոր գույները, երկրորդը եռագույն էր, որտեղ նարնջագույնի փոխարեն առաջարկվում էր դեղինը՝ որպես երկրորդ գույն, սակայն Մարտիրոս Սարյանը նաև այն կարծիքին էր, որ անգամ նարնջագույնով եռագույն դրոշը խորհրդանշում է ծիածանը, քանի որ ծիածանի հիմնական գույներն այդ երեքն են՝ կարմիր, կապույտ, դեղին-նարնջագույն:

Այդ պատճառով Նոր Նախիջևանից Ալ. Խատիայանին ուղղված իր 1919 թ. հուլիսի 31-ի նամակում Մարտիրոս Սարյանն առաջարկում էր մանրամասնել ծիածանի երեք հիմնական գույները՝ դրանք վերածելով վեցի, իսկ նարնջագույնին հաջորդող դեղինը տեղադրել դրոշի միջնամասում<sup>7</sup>: Սակայն հերթականության նման փոփոխությունը տանում էր Դոնի կազակության դրոշի ընդօրինակմանը: Ուստի, ի վերջո, ՀՀ դրոշի վրա առկա ծիածանի հիմնական գույների հերթականությունը պահպանվեց, բայց դեղինի երանգներից ընտրվեց հայերիս համար ամենահոգեհարազատը՝ նարնջագույնը:

Նշենք, որ բոլոր ազգերն էլ պայքարել են ազատության համար և արյուն թափել, բոլոր ազգերի հայրենիքների երկինքն էլ կապույտ են, շատ երկրներում էլ աշխատանքի խտացումն արտահայտվում է նարնջագույն ցորենով (հացի ընդհանրական խորհրդանշանը): Անգամ աստվածամերժ-խորհրդային գինանշանի վրա այն պատկերված էր ցորենի ժապավենապատ խրձով: Եզրակացությունն այն է, որ գույներն ընդհանրական են՝ չկա ազգային գույնով արյուն, ազգային կապույտ երկինք, ազգային (հացի) աշխատանքի գույն (նարնջագույն), բայց, ինչպես կտեսնենք ստորև, կա այս խորհուրդների ազգային ընկալում և իմաստավորում:

Այժմ փորձենք հասկանալ, թե պատահականությամն արդյունք էր արդյոք գույների նման ընտրությունն ու դասավորությունը: Թեև հայտնի չէ, թե Ստ. Մալխասյանն ինչպես է բացատրել առաջարկված գույների խորհուրդները կամ իմաստները, սակայն նա հայ մատենագիտության խոշոր գիտակ էր և լավ գիտեր հատկապես գույների և թվերի խորհուրդները, որոնք, ինչպես ասում է հայոց մեջ խորհրդանշանների մեծագույն գիտակներից մեկը՝ Ներսես Շնորհալին, բոլորին չէ, որ հայտնի էին, «այլ սակաւուց, և բովանդակ Աստծոյ միայն»<sup>8</sup>:

Քրիստոնեական քաղաքակրթության և հատկապես խորհրդաբանական նշանագիտության ականավոր գիտակներից մեկը՝ Նիկոլայ Բիչկովը այս համաքրիստոնեական երևույթի մասին գրում է. «Ամբողջ աշխարհը, ինչպես բնական, այնպես էլ սոցիալական, միջնադարյան մարդուն պատկերանում էր որպես խորհրդանշանների, պատկերների, նշանների, այլաբանությունների մի հսկայական, խիստ կանոնավորված համակարգ, որ բացվում էր որպես գիրք մարդու առջև, որը ձգտում էր այն կարդալ, իսկ **տգետների** համար այն մնում էր հանելուկ»<sup>9</sup>:

7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200 ., ց. 1, գ. 35, թ. 136 և շրջ.:

8 Մեկնությունք խորանաց, հետազոտություն և քննադրեր, Աշխ. Վ. Հ. Ղազարյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004, էջ 275:

9 Бычков В., Эстетика поздней античности, Москва, 1981, с. 290.

ՎՎԻ համահայկական հանդես Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

Քրիստոնեական մշակույթի մեջ թվերն ու գույները ունեին բացառիկ խորհրդաբանական նշանակություն: Ժամանակագրական առումով առաջնությունը թերևս պատկանում է թվերին, որոնց արմատները ձգվում են անտիկ աշխարհից, սակայն գույները ևս օժտված են խորհուրդներով, որոնք առավել ընդգծված արտահայտվեցին աստվածաշնչյան թեմաններով ստեղծված մանրանկարներում և սրբապատկերներում: Գույներից հատկապես կարևորվում է համաքրիստոնեական տարածում ունեցող կարմիրը, որը թերևս ամենախորհրդանշականն է:

Այն, որ գույների մեջ կարմիրն առանձնահատուկ է իր խորհուրդով, միջնադարի հայ ստեղծարարների կողմից բազմիցս է վկայվել: Դեռևս **Հովհաննես Օձնեցին** կապույտի և կարմիրի մասին գրում է. «Կապույտական զերկնաւորն եցոյց առաքինութիւն և կարմրովն մանուածոյ՝ զանապական արեանն կցորդութիւն, որով հաւասարեաց մեզ արեան և մարմնոյ: Եւ բեռեզովն սպիտակաւ զԱստուածութեանն ընդ բնութիւնս մեր խառնումն, և ծիրանեան՝ զծածկեալ խորհուրդ անճառելի տնօրէնութեան»<sup>10</sup>: Այսինքն՝ կապույտը խորհրդանշում է երկնավոր առաքինությունը, կարմիրը՝ անապական արյունը, սպիտակը՝ մեր էության մեջ Աստվածության խառնումը, ծիրանին՝ անճառելի տնօրինության ծածկյալ խորհուրդը:

Ստ. Մալխասյանը իր «Հայերէն բացատրական բառարանում» հենվում է դեռևս Օձնեցու ժամանակներից գիտությանը հայտնի գույների տեսության վրա: Հայկազյան բառարանը ևս կարմիրը բացատրել է ըստ նախնայց իմաստավորման՝ կարմիրը ստուգաբանելով որպես արյան գույն, որը բազմաթիվ լեզուներում նույն իմաստն ունի, օրինակ՝ պահլավերեն՝ **կարմիր**, պարսկերեն՝ **ղըրմըզի**, եբրայերեն՝ **գարմիր**, հին հնդկերեն՝ **գարմիլա** և այլն:

Քրիստոնեական մշակույթի մեջ կարմիրը, ինչպես տեսանք Օձնեցու մոտ, խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի անապական արյունը, նույնն է թե՛ Հիսուս Քրիստոսին, և քանի որ Հիսուսն ասում է՝ «Ես և Հայրը մի ենք», ուրեմն Աստծուն՝ երկնային ԹՎԳԱՎՈՐԻՆ: Այս խորհուրդն է պարունակում այն իրողությունը, որ երկրի վրա Աստծո փոխանորդները՝ երկրային թագավորները, կրում էին վառ կարմիր պատմուճաններ (արքայական ծիրանի) և կարմիր կոշիկներ:

Կապույտը Հրաչյա Աճառյանի ստուգաբանությամբ նշանակում է **երկինք** կամ **երկնքի գույն**: Ուրեմն՝ դրոշի կապույտը Աստծո և մարդու միջև ընկած տարածության խորհրդանիշն է, այլ կերպ՝ խաղաղությունը, որը մարդու հոգում երկնավոր առաքինության ծնողն է: Հիսուսն իր աշակերտներին ողջունում էր «խաղաղություն ձեզ»<sup>11</sup> արտահայտությամբ: Եվ քրիստոնեական, և՛ հուդայական (շալոմ), և՛ իսլամական (սալամ) ավանդույթի մեջ մարդիկ առայսօր իրար մաղթում են խաղաղություն, առողջություն կամ խաղաղ երկինք՝ այն պատկերացնելով կապույտ:

Նարնջագույնն ըստ էության ցորենագույնն է: Ցորենը (այլ կերպ՝ հացը), երկրի վրա լինելով մարդու կենսաբանական գոյության համար անհրաժեշտ հիմնական միջոցը, խորհրդանշում է երկիրը՝ իսկ խորհրդաբանական

<sup>10</sup> **Յովհաննու Իմաստասիրի Աձնեցոյ** մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 160-161:

<sup>11</sup> Դուկ., ԻԲ, 36:

մակարդակում խորհրդանշում է հոգևոր հացը: Հիշենք Հիսուս Քրիստոսի խոսքը վերջին ընթրիքի ժամանակ. «Յիսուսը հացն առաւ և օրհնելով կտրեց, և աշակերտներին տուաւ և ասեց. Առէ՛ք կերէ՛ք, այս է իմ մարմինը: Եւ բաժակն առաւ, գոհացաւ, նորանց տուաւ և ասեց. Խմեցէ՛ք դորանից ամենքդ: Որովհետև այդ է իմ արիւնը նոր ուխտի, որ թափվում է շատերի համար ի թողութիւն մեղաց»<sup>12</sup>:

Այստեղ խոսքը հոգևոր հացի և նրա իմաստի մասին է. այսինքն՝ լսէ՛ք իմ խոսքը (մարմին) և հասկացե՛ք նրա իմաստը (արյուն): Սա մեր էպոսում դրոշակի արժեք ունեցող կարգախոս է. «Հացն ու գինին՝ Տեր Կենդանին», որը միշտ արտաբերում էին հերոսները պատերազմի գնալիս:

Դրոշի խորհուրդն ընկալելու համար կարևորվում է այն հանգամանքը, որ ծիածանը խորհրդանշում է Աստծո ուխտը մարդկանց հետ ջրհեղեղից անմիջապէս հետո. «Եւ Աստուած ասաց. Սա է այն ուխտի նշանը, որ ես դնում եմ իմ ու ձեր մէջ, և ձեզ հետ լինող ամեն շնչաւոր կենդանու մէջ յաւիտենական դարերի համար. Իմ աղէղը դրի ամպի մէջ, և նա ուխտի նշան լինի իմ ու երկրի մէջ: Եւ լինի որ ես երկրի վերայ ամպ բերելիս՝ աղէղը ամպի մէջ տեսնուի»<sup>13</sup>:

Այս հանգամանքը նշում է նաև հանրահայտ «**Britannica**»-ն՝ հիշատակելով Ղևոնդ Ալիշանին, սակայն այն տարբերությամբ, որ Ալիշանը կապույտի փոխարեն առաջարկում էր կանաչ գույնը: Փարիզի հայկական ուսանողական համաժողովը 1885 թ. դիմել էր Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանին՝ Հայաստանի ապագա պետության համար դրոշ ստեղծելու խնդրանքով. «Վերջինս խորհուրդ է տալիս օգտագործել «ծիածանի գույներով դրոշ, որը տրվել է հայերին, երբ Նոյ Նահապետը հանգրվանել է Արարատ լեռան վրա»: Նա առաջարկել է կարմիր, կանաչ ու կապույտ գույները: Հայերը շատ քննարկումներ են ունեցել դրոշի ձիշտ գույների ընտրության շուրջ»<sup>14</sup>:

Վերոնշյալ մեջբերման մեջ էական է այն հաստատումը, որ «Հայերը շատ քննարկումներ են ունեցել դրոշի ձիշտ գույների ընտրության շուրջ»:

Արդ՝ միթե այս ամբողջը պատահականության հետևանք է: Անգամ թռուցիկ հետադարձ հայացքի դեպքում տեսնում ենք, որ կարմիր, կապույտ, դեղին գույներով դրոշը դարերի պատմություն ունի. 1773 թ. Հնդկաստանի Սադրաս քաղաքում լույս տեսած «Որոգայթ փառաց»-ում Շահամիր Շահամիրյանն ապագա հայոց պետության համար առաջարկում էր եռագույն դրոշ՝ կարմիր, կապույտ, դեղին գույներով, որոնք պետք է տեղ գտնեին նաև բանակի համազգեստի մեջ: Սահմանվող կարգի հանաձայն՝ հայոց ապագա բանակը բաժանվելու էր երեք զորախմբի, որոնք տարբերակվելու էին դրոշների գույներով՝ կարմիր, կապույտ, դեղին:

Ըստ այդմ՝ 3 զորախմբերի սպարապետները կոչվելու էին՝

- ա. Կարմիր դրոշի սպարապետ,
- բ. Կապույտ դրոշի սպարապետ,
- գ. Դեղին դրոշի սպարապետ<sup>15</sup>:

12 Մտթ., 26-28:

13 Ելից. Թ, 12-14:

14 <https://www.britannica.com/topic/flag-of-Armenia> հեղինակ՝ Whitney Smith

15 Տես նույն տեղում, էջ 162:

Ինչու՞ էր Շահամիրյանն այդքան վստահ իր առաջարկի մեջ: Որտեղից էր գալիս դրոշի այդ տարբերակը: Կասկած չկա, որ նա լավ գիտեր հայոց պատմությունը, նաև կիլիկյան շրջանի պատմությունը, որը համարում էր «Հայոց երկրի» պատմության բնական շարունակությունը: Ուստի այս առաջին սահմանադրության ներածության մեջ նա գրում է. «...մոտ չորս հարյուր տարվա մի ժամանակամիջոց է, ինչ Հայոց երկրից ու ազգից վերացել է թագավորությունը»<sup>16</sup>: Հստակ է, որ «Հայոց երկիր» ասելով, Շահամիրյանը նկատի ունի Կիլիկիայի Հայոց թագավորությունը: Եւ նույնքան հստակ է, որ նա հայոց ապագա պետության համար առաջարկում է ընդունել Լուսինյանների գահակալության շրջանի Կիլիկիայի թագավորական դրոշը՝ կարմիր-կապույտ-դեղին:

Մինչդեռ արևմտյան և ռուսական ավանդույթն առաջին եռագույնն է համարում 16-րդ դարում՝ 1573 թ., Հոլանդիայում օգտագործված մի դրոշ՝ այսպես կոչված արքայազն Վիլհելմ 1-ին Օրանացու դրոշը՝ նարնջագույն, սպիտակ և կապույտ գույներով: Բայց, ինչպես ասվեց, դրանից ուղիղ 200 տարի առաջ եռագույն է եղել Կիլիկիայի Հայոց թագավորության դրոշը:

Այն, որ կարմիր-կապույտ-նարնջագույն դրոշը 1918 թվականին Ազգային խորհրդում կամ էլ՝ Հայաստանի խորհրդում կայացած պատահական քվեարկության արդյունք չէ, փաստվում է նաև մեկ այլ հանգամանքով. դրոշի այս տարբերակը հայոց մեջ գոյություն է ունեցել մինչև վերոնշյալ նիստերը: 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի ժամանակ այն օգտագործել են հայկական բազմաթիվ զորամիավորումներ: **Հայ Յեղափոխական Դաշնակցության** Երևանի թանգարանում պահպանվում է առաջին հրաձգային գնդի դրոշը. այն կարված է սև գույնի ավելի մեծ դրոշի վերին աջ հատվածում: Սրա բացատրությունն այն է, որ Առաջին աշխարհամարտին մասնակցող հայ կամավորական գնդերն ռուսական ցարի որոշմամբ պետք է կրեին սև դրոշներ: Այստեղ կատարվել է ուշագրավ համադրություն. աշխարհամարտին մասնակցած կամավորական գնդերը իրենց համարում էին ոչ միայն ռուսական, այլև նոր ձևավորվող հայկական գինուժի միավորներ: Իսկ գույների նման համադրությունը գալիս է Կիլիկիայի Հայոց թագավորության կամ Շահամիրյանի առաջարկած դրոշի գույներից, որոնք, փաստորեն, նույնն են (ինչպես տեսանք՝ Մ. Սարյանը նույնպես դեղինն ու նարնջագույնը չէր հակադրում միմյանց):

Երկու խոսք էլ եռագույնի թվի խորհուրդի մասին: Նախ ասենք, որ քրիստոնեական ավանդույթը եռագույնն ավանդաբար կապում է Սուրբ Երրորդության խորհրդի հետ, որը հայկական եռագույնի դեպքում լիովին համապատասխանում է գույների խորհուրդներին. այսինքն՝

ա. Աստված (Ազատությունը՝ **կարմիրը**),

բ. Հիսուս Քրիստոսը Աստծո և մարդու միջև ընկած տարածությունն է, Աստծու հետ հաշտվելու, նրան հասնելու միակ ճանապարհը՝ (Խաղաղությունը, որն է երկնային առաքինությունը՝ **կապույտը**):

գ. Եվ երկիրը՝ Սուրբ Հոգու շնորհների վայրը, ուր գործում-աշխատում է մարդը: Սուրբ Հոգու շնորհները մարդուն տրվում էին երկրի վրա («զից մեր հանապազորդ տուր մեզ այսօր») (հացն հանապազորդ՝ աշխատանքը

<sup>16</sup> Որոգայթ փառաց, Եր, 2002, էջ 10, տես նաև էջ 49 և այլն:

– նարնջագույնը):

Սա հայ ժողովրդի դարավոր բաղձանքն է, որ մարմնավորվել է համահայկական նվիրական նշանով՝ **ԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՇՈՎ**:

Պետության խորհրդանշանները, և հատկապես դրոշը, օժտված են **նվիրականությամբ և սրբազնությամբ** քանի որ, ինչպես տեսանք իրենց խորհուրդներով ուղղակիորեն բխում են սրբազան հասկացություններից: Միջնադարյան քրիստոնեական խորհրդանշանի լավագույն գիտականերից մեկն այս մասին ուշագրավ հաստատում է կատարում. «**Խորհրդանշանը պայմանական նշանից տարբերվում է սրբության տարրի առկայությամբ**»<sup>17</sup>:

Մեծն Միքայել Նալբանդյանը մոտ 160 տարի առաջ է արձանագրել այս ճշմարտությունը մեր ապագա դրոշի համար.

Նայիր նորան՝ երեք գույնով,  
**Նվիրական** մեր նշան...

Իսկ այն, որ կարմիրը հաճախ մեկնաբանում են որպես ազատության համար մղված պայքարում թափված արյան խորհուրդ, բոլորովին չի հակասում ասվածին, քանզի Աստծո բազում անուններից մեկը հենց **ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆ** է. «Իսկ երբ դառնան Տիրոջը, ապա վարագոյրը կը վերացուի, որովհետև Տէրն ինքը Հոգին է. ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատութիւն է»<sup>18</sup> կամ «Այնպէս խօսեցէք և այնպէս գործեցէք, որպէս թէ ազատութեան օրէնքով էք դատուելու»<sup>19</sup> (հիշենք թելուզ Մ. Նալբանդյանի հայտնի բանաստեղծության առաջին տողը. «Ազատն Աստուած այն օրից», իսկ Որդու հեղած արյունը առ Աստված (դէպի ազատություն) տանող միակ ճանապարհն է («**Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը և կեանքը**»<sup>20</sup>):

## 2. ՀՀ պետական գինանշանի բովանդակության մեկնաբանության փորձ

1920 թ. հուլիսին ՀՀ Խորհրդարանի կողմից կյանքի է կոչվում մի հանձնախումբ, որը պետք է նրա հաստատմանը ներկայացներ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության պետական գինանշանի տարբերակներ: Ի թիվս էջմիածնական բազմաթիվ մտավորականների՝ հանձնախմբի անդամ էին նաև խոշորագույն հայագետներ Հակոբ Մանանդյանը, Ստեփան Մալխասյանը, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, գեղանկարիչ Հակոբ Կոջոյանը: Մոտ երկշաբաթյա ուսումնասիրություններից և հետազոտություններից հետո Խորհրդարանի հաստատմանն է ներկայացվում ՀՀ պետական գինանշանի տարբերակը, որը կազմել էին Ալեքսանդր Թամանյանը և Հակոբ Կոջոյանը: Զինանշանը Խորհրդարանի կողմից ընդունվում է պայմանով, որ այն վերջնականապես կհաստատվի Սահմանադիր ժողովի կողմից: Սակայն քանի որ Սահմանադիր ժողով չգումարվեց, ուստի ինչպես դրոշը, այնպես էլ գինանշանը մնացին անփոփոխ:

17 **Аверинцев С.**, Поэтика ранневизантийской литературы, Москва, 1977, с. 249:  
18 Բ Կոր. 16,17:  
19 Յակ., Բ., 12: Տես նաև Գաղ., Ե, 13, Յակ., Ա, 25 և այլն:  
20 Յվի., ԺԴ, 6:

ժ (ԺԶ) փարի. թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
վճվ համահայկական հանդես

Հայաստանի Հանրապետության զինանշանի կենտրոնական մասում՝ վահանի վրա, պատկերված են հայկական չորս թագավորական տոհմերի՝ Արտաշիսյանների, Արշակունիների, Բագրատունիների և Ռուբինյանների (Կիլիկյան թագավորություն) զինանշանները: Դրանք բոլորում են բիրլակական Արարատ լեռան պատկերը, որի գագաթին ուրվագծվում է Նոյյան տապանը, Արարատ լեռան վերևում տեղադրված են ՀՀ տառերը:

Վահանի երկու կողմից պատկերված են առյուծ և արծիվ, որոնք խորհրդանշում են ոգու, իշխանության, աննկունության և արիության ուժը: Ներքևում պատկերված սուրը խորհրդանշում է հայ ժողովրդի պայքարը հանուն ազատության և անկախության, փետուրն ու հասկերը՝ հայ ժողովրդի ստեղծարար տաղանդը և խաղաղասիրությունը:

Զինանշանի բոլոր պատկերներն ակնհայտ խորհուրդներ ունեն, որոնք միասին ստեղծում են մեկ խորհրդաբանական կառույց. դա **ՀԱՅՈՑ ՓԱՆՔԻ ԺԱՌԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ Է**: Այդ ժառանգությունը բաղկացած է աշխատանքը խորհրդանշող ցորենի խրճից, մտավոր աշխատանքի խորհրդանիշ գրչից, հանուն ազատության պայքարի խորհրդանշանից (շղթան փշրող սուրը), որոնք հենված են փառքի ժապավենի վրա (զինանշանի ամենաներքևում): Այս փառքի արարիչն ու ժառանգորդն է հայ ժողովուրդը՝ իր չորս արքայատոհմերով (վահանի վրա չորս արքայական զինանշանները) և միասնական հայրենիքով՝ Արևմտյան (վահանը աջից բռնած արծիվը) և Արևելյան (վահանը ձախից բռնած առյուծը) Հայաստաններով:

Վահանի կենտրոնում Հայաստանի գույգ խորհրդանշաններն են՝ Աստվածաշնչյան Արարատ լեռը և նրա վրա Մեծ ջրհեղեղից հետո հանգրվանած Նոյյան տապանը:

### 3. ՀՀ պետական Օրհներգը

Հայաստանի Հանրապետության ազգային օրհներգի վերնագիրն է **«Մեր հայրենիք»**: Բաղկացած է չորս քառատողից, որոնք վերցված են Միքայել Նալբանդյանի՝ 1859 թ. գրված «Իտալացի աղջկա երգը» (18 տուն) հայտնի բանաստեղծությունից (օրհներգը բաղկացած է առաջին, երրորդ, չորրորդ, վեցերորդ տներից)<sup>21</sup>: Բանաստեղծության նյութը Զուգեպպե Գարիբալդիի գլխավորությամբ իտալացիների մղած ազգային-ազատագրական պատերազմն է Ավստրիայի դեմ: Հեղինակն այլաբանաբորեն քարոզում է հայության ու Հայաստանի ազատագրության գաղափարը, փորձում է հայերի մեջ արթնացնել իտալացիների պայքարի ոգին.

**Սորա կեսը, կեսի կեսը  
Գեթ երևեր մեր ազգում,  
Բայց մեր կանայք... ու՛ր եղիշե,  
Ու՛ր մեր տիկնայք փափկատուն:**

Հեղինակը Վարդանանց պատերազմի մասնակից կանանց օրինակով փորձում է իր սերնդի հայերի մեջ արթնացնել Վարդանանց ոգին, ներարկել հանուն ազգի ու հայրենիքի ազատության պայքարելու, հարկ եղած դեպքում

<sup>21</sup> Առաջին անգամ տպագրվել է 1861 թ. «Հիսիսափայլ» ամսագրում:



այդ պայքարում նահատակվելու գաղափարն ու կամքը, որոնք, ցավոք, Մ. Նալբանդյանի ժամանակներում նահանջել էին ու ճնշվել:

Թե՛ 1918 թ., երբ Հայաստանի խորհուրդն ընդունեց «Մեր հայրենիքը» որպես նորանկախ Հայաստանի Հանրապետության օրհներգ, և թե՛ 1991 թ., երբ հանրապետության Գերագույն խորհուրդն այն հաստատեց որպես ազգային հիմն, խնդիր ծագեց առաջին տան երեք տողերի հարցում, ինչը պայմանավորված էր Հայաստանի անկախության իրողությամբ: Ահա այդ տարբերությունները՝ համեմատությամբ.

<p>Մեր հայրենիք, թշվառ, անտեր, Մեր թշնամուց ոտնակոխ, Յուր որդիքը արդ կանչում է Հանել յուր վրեժ, քեն ու ոխ:</p>	<p>Մեր հայրենիք, <b>ազատ անկախ, Որ ապրել է դարեդար,</b> Իր որդիքը արդ կանչում է <b>Ազատ, անկախ Հայաստան:</b></p>
--	--

Թ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

Բնագիրը առաջին սյունակն է, երկրորդ սյունակի տարբերակն ընդունված է օրհներգի գործող տարբերակում: Վկայություններ կան, որ 1918 թ. այս տան երկրորդ տողը խմբագրվել է հետևյալ կերպ. «Մեր թշնամուց **ազատված**»:

Մ. Նալբանդյանի բանաստեղծության առաջին տողի զույգ բառերի փոխակերպումը վերնագրի տեղի է ունեցել արևմտահայ իրականության մեջ, որտեղ լայնորեն տարածված էր երգի առաջին բառերի հիման վրա այն վերանվանելու **Ֆրանսիական ավանդույթը**՝ այնպես, ինչպես «Մարսելյոզն» այստեղ երգվում էր որպես «Ալոնգ անֆան...»: Այդ իրողության մասին առկա են բազմաթիվ վկայություններ՝ 1880-ականների սկզբների արևմտահայ իրականության մեջ ձևավորված ազատագրական խմբակների ու կազմակերպությունների մասին հիշողություններում:

1885 թ. Թիֆլիսում Կարա Մուրզայի կազմակերպած համերգի ժամանակ «Մեր հայրենիքը» հնչում է նաև արևելահայոց միջավայրում: Սա առաջին խմբերգային կատարումն էր: Ի դեպ՝ համերգը բացվել է այս երգով:

Երգը արագորեն տարածվում է ազատագրական գաղափարների խմբումների մեջ գտնվող հայության միջավայրում: Երկնում էր Մ. Նալբանդյանի երազած անկախ Հայաստանը:

Մարտի դաշտում առաջին անգամ «Մեր հայրենիք»-ը կատարվել է **1894 թ. հուլիսի 21-ին**՝ պարսկաթուրքական սահմանին գտնվող Դերիկի վանքի համար թուրքական կանոնավոր բանակի ու քրդական հրոսակախմբերի դեմ 17 հայ ֆիդայիների մղած հաղթական կռիվում՝ ՀՅԴ Թավրիզի Բյուրոյի անդամների՝ Նիկոլ-Դուրման (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), Վարդան (Սարգիս Մեհրաբյան), Իշխան (Հովսեփ Արղության), Օրիորդ Ծաղիկ (Սաթենիկ Մատինյան) կողմից՝ Սևքարեցի Սաքոյի (Սարգիս Ծովհանյան) հայտնի **շեփորի** ուղեկցությամբ<sup>22</sup>:

1915 թ. **ապրիլին** Երանյան վաժարանի աշակերտական նվազախմբի կատարմամբ նրա հնչյունների տակ է սկսվել Վան-Վասպուրականի հայու-

ՎԼՎ համահայկական հանդես

<sup>22</sup> Տե՛ս **Խուդինյան Գ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր. 2006, էջ 289:

թյան հաղթական գոյամարտը, որի ընդերքում **Արամ Մանուկյանի** գլխավորությամբ հասունանում էր հայոց պետականության գաղափարը:

Բազմիցս կատարվելով 1918 թ. **Սարդարապատի հերոսամարտի** ընթացքում, քիչ անց՝ օգոստոսի 1-ին, այն ինքնաբուխ կերպով հնչեց Հայաստանի խորհրդի բացման առիթով և դարձավ Հայաստանի Հանրապետության պաշտոնական օրհներգը: Սակայն, փաստորեն, «Մեր հայրենիք»-ը ազգային օրհներգ էր դարձել մինչև Հայաստանի խորհրդի կողմից նրա հաստատումը:

Հետագայում՝ որպես Հանրապետության օրհներգ հաստատվելուց հետո, մշակել է **Բարսեղ Կանաչյանը**:

Ներկայումս ՀՀ օրհներգն ունի հետևյալ բովանդակությունը:

<p>Մեր հայրենիք, ազատ անկախ, Որ ապրել է դարեդար, Յուր որդիքը արդ կանչում է Ազատ, անկախ Հայաստան:</p> <p>Ահա եղբայր քեզ մի դրոշ, Որ իմ ձեռքով գործեցի, Գիշերները ես քուն չեղա, Արտասուքով լվացի:</p>	<p>Նայիր նրան՝ երեք գույնով, Նվիրական մեկ նշան, Թող փողփողի թշնամու դեմ, Թող միշտ պանծա Հայաստան:</p> <p>Ամենայն տեղ մահը մի է, Մարդ մի անգամ պիտ մեռնի, Բայց երանի, որ յուր ազգի Ազատության կզոհվի:</p>
---	--

### Եզրակացություններ

Հանրահայտ է, որ խորհրդանշանների հիմքում ընկած են տվյալ ազգի պատմության կարևորագույն և առանցքային նշանակություն ունեցող իրադարձություններն ու փուլերը, որոնք նրա ստեղծած պետության կյանքում ունեցել են վճռական դերակատարություն:

ՀՀ խորհրդանշանների հիմքում ընկած է հայ ազգի պատմությունը՝ Մեծ ջրհեղեղից մինչև պետականության հիմնումը, այդ պետականության տարբեր փուլերի իրողությունների արձանագրումը (հիմնականում՝ զինանշանի մեջ), հոգևոր-կրոնական-մշակութային պատմության ընթացքի արձանագրումը (դրոշի խորհրդի մեջ) և ազատության, պետականության վերականգնման ու ազգային իղձերի իրականացման համար մղած պայքարը (օրհներգի տեքստում):

**Հայկազուն Ս. Ավրցյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայ հին և միջնադարյան գրականության, հատկապես հոգևոր տաղի աստվածաբանության, խորհրդական խոսքի նշանական համակարգի մեկնության, հոգևոր խորհրդանշանի տեսության խնդիրները: Հեղինակ է այս հարցերին առնչվող բազմաթիվ հոդվածների: Զբաղվել է նաև 20-րդ դարի վերջին քառորդի հայ բանաստեղծության բանարվեստի խնդիրներով, հրատարակել է մի շարք հոդվածներ:

## Summary

### THE STATE SYMBOLS OF THE REPUBLIC OF ARMENIA

Haykazun S. Alvrtsyan  
*Candidate of Philological Sciences*

**Key words** – symbols, flag, red, blue, orange, coat of arms, heritage of Armenian glory, "The Song of the Italian Girl", "Our Homeland".

The article presents the short history of adopting the symbols of the Armenian Republic (flag, emblem, hymn) emphasizing particularly their meanings and sacraments. It is widely known that the symbols are based on the most significant events and stages in the history of the given nation which had decisive role in the creation of their state. The symbols of RA are based on the history of Armenian nation ranging from the Great Flood to the foundation of statehood, recording of events that had taken place in different stages of the statehood (mainly in the sphere of emblem), of the spiritual-religious-cultural history (in the sacrament of flag) and the struggle for liberty, restoration of statehood and implementation of national desires (in the context of hymn).

## Резюме

### ГОСУДАРСТВЕННЫЕ СИМВОЛЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Айказун С. Алврцян  
*Кандидат филологических наук*

**Ключевые слова** – символы, флаг, красный, синий, оранжевый, герб, наследие армянской славы, «Песня итальянской девушки», «Наше отечество».

В статье представлена краткая история принятия символов Республики Армения (флаг, герб, гимн), с особым акцентированием толкования смыслов и замыслов символов. Общеизвестно, что в основе символов лежат события и периоды истории каждой нации, имеющие важнейшее и ключевое значение и сыгравшие решающую роль в жизни созданного ею государства.

В основе символов РА лежит история армянской нации от Великого потопа до основания государственности, констатация реалий разных этапов этой государственности (в основном в гербе), констатация хода духовно-религиозно-культурной истории (в замысле флага) и борьба за свободу, за восстановление государственности и за осуществление национальных чаяний (в тексте гимна).

## REFERENCES

1. **Vracyan S.**, Hayastani Hanrapetyt'yun, tparan «Aliq», T'ehran, 1982, eg 183. (in Armenian)
2. **Meknut'yun xvo'ranac**, Hetazvot'yun yev' bnagrer, Ash'x. V. H. Gh'azaryani, Mayr At'vor S. Egmiac'in, 2004, eg 275. (in Armenian)
3. **Bychkov V.**, Estetika pozdnej antichnosti, Moskva. 1981. s. 290. (in Russian)
4. **Hvo'vhanu Imastasiri Avdz'necvo'y** matenagitutvo'yunq, Venetik, 1833, eg 275. (in Armenian)
5. **Averincev S.** Poetika rannevizantijskoj literatury, Moskva, 1977, s. 249. (in Russian)
6. **Xudinyan G.** HY Dash'nakc t'yan qnnakan patmut'yun (akunqneric minch'ev 1895 t'vakani vergerø), Er., 2006, eg 289. (in Armenian)

# ՀՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Ժ (ԺԶ) փաթի, թիվ 4 (64), Խոկոտներ-դեկտեմբեր, 2018

ՎԼՎ համահայկական հանդես



Վլադիմիր Ա. Հարությունյան  
Ֆիզ-մաթ. գիտ. դոկտոր

## ԿԱՐՍԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Զինվորական դավադրության վարկածը

Մուտք

**Բանալի բառեր** – նահանգի քաղաքացիական և զինվորական իշխանություններ, թալան, հայ բոլշևիկներ, Մայիսյան խռովություններ, սպայակազմ, Կարսի վերջնախաղ, Քյազիմ Կարաբեքիր, հակապետական աշխարհընկալում, կողմնորոշումային մտածելակերպ, դավաճանություն:

Թեև Հայաստանի Առաջին Հանրապետության կործանումը ձևական առումով թվագրվում է 1920 թ. դեկտեմբերի 2-ով, սակայն այդ պետության իրական, փաստացի ոչնչացումն իրականացվել էր դրանից դեռևս մեկ ամիս առաջ Կարսի պատերի տակ՝ 1920 թվականի հոկտեմբերի 30-ին բառացիորեն նրա քունքին անարգել արձակված կրակոցով:

1920 թ. հոկտեմբերի 30-ից հետո «Կարս» բառը հայերիս համար դադարեց կրել նախկին թագավորանիստ մայրաքաղաքի, նույնիսկ սովորական բնակավայրի կամ էլ ինչ-որ աշխարհագրական տեղանվան իմաստ ու նշանակություն: Այդ օրվանից հատուկ անուն «Կարս»-ը վերածվեց անվանական «Կարս»-ի: «Կարս»-ն անցած հարյուր տարվա ընթացքում Մեծ Եղեռնից հետո մեզ պատահած հաջորդ ամենասոսկալի ազգային աղետի խորհրդանիշն ու կատարվածի մասին մշտական ահեղ հիշեցումն է: Դա Չարենցի ասած «ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն» է 1920 թ. հոկտեմբերի 30-ից հետո ծնված բոլոր սերունդների համար: Եվ դաժան դաս է առ այն, թե ինչ է գալիս այն ազգի գլխին, որն ամենայն խորությամբ չի արժևորում սեփական պետականությունը որպես գերագույն արժեք ունենալու և պահպանելու գաղափարը:

«Կարս»-ը՝ իր մարդկային ու տարածքային կորուստներով, հայրենագրկումով ու ազգային հոգեբանության ավերումով և խեղումներով ուղղակի շարունակությունն ու հետևանքն էր Մեծ Եղեռնի: Հենց «Կարս» ամբողջական երևույթն է ներառել Հայաստանի Հանրապետության բոլոր առումներով ողբերգական անկումը: Արտաքին ագրեսիայի ծավալման հետ մեկ-

տեղ, դա ուղղակի հետևանքն էր երկրում ու հատկապես Կարսի մարզում ամիսներ շարունակ ընթացող սուկալի մի գործընթացի, որի բնութագրման համար բացի դավաճանությունից այլ բառ գտնել գործնականում հնարավոր չէ: **Դավաճանություն**<sup>1</sup> նախ ինքդ քո հանդեպ, դավաճանություն, որով ինքդ ինքնական ստորագրում ես հայրենիքդ քեզանից խլելու, օտարի ձեռքով քեզ ոչնչացնելու համաձայնություն-վճիռը:

Այդ օրերի սարսափելի ողբերգության վերաբերյալ մեզ հասել են ականատեսների և մասնակիցների բազմաթիվ վկայություններ և պատումներ: Բայց ողբերգության մասշտաբների, նրա ողբերգական հետևանքների ու այդ ամենի իրական պատճառների լուսաբանումը, կատարվածի բացահայտումն ու վերլուծությունը տարիներ շարունակ, հիմնականում քաղաքական պատճառներով, հետազոտողների համար հայտնվել է «արգելված գոտում»: Խորհրդային տարիներին թեմայի փակ լինելը միանգամայն հասկանալի էր: Բայց կյանքը ցույց տվեց, որ հետխորհրդային Հայաստանում էլ դեռևս կան տարբեր անձինք և ուժեր, որոնք ամեն գնով դիմադրում և խոչընդոտում են «**Կարս**»-ի վերաբերյալ պատմական ճշմարտությունը վեր հանելուն:

Տասնամյակներ գործող այդ «տաբուի» առկայությունը Կարս բերդաքաղաքը ասես պարուրեց միստիկ խորհրդավորության թանձր մշուշով, որը դեպի իրեն սկսեց ձգել նաև արվեստի մարդկանց ուշադրությունը: Կարսը՝ բերդն ու քաղաքը, գլխավոր գործող հերոսն է Եղիշե Չարենցի<sup>1</sup> և Էլլեն Բյուզանդի (Եղիսաբեթ Ստամբուլցյան)<sup>2</sup>, ռուս հեղինակ Ալեքսանդր Տոնկոնոժենկոյի<sup>3</sup>, ինչպես նաև թուրք գրող Օրհան Փամուկի<sup>4</sup> վեպերում: Ի դեպ, Կարսի «մասնակցությամբ» վերջինիս գործը՝ «Ձյունը», արժանացել է գրականության բնագավառում 2006 թ. Նոբելյան մրցանակի:

«**Կարս**»-ի մեղքը, պատկերավոր ասած, մեր բոլորի, ամբողջ հայ ժողովրդի վզին է. հիշենք Նժդեհի խոսքերը Կարսը հանձնելու կապակցությամբ. «**Կարսի ամոթը ՀՀ կառավարությանը չէ միայն, այլ ողջ հայ ժողովրդի: Չափվում են, բախվում են բանակները, բայց հաղթում կամ պարտվում են ազգերը, ցեղերը: Կարսի պատերի տակ պարտվողը հայ զինվորն ու զորավարը չէին միայն, այլ բովանդակ հայությունը, հայ ժողովրդի իր ամբողջության մեջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին**»<sup>5</sup>:

Բայց... պարտվել էլ կա, պարտվել էլ... Ադրբեջանն ու Վրաստանն էլ խորհրդայնացան, կորցրին իրենց անկախությունը: Սակայն ոչ այնչափ մարդկային ու տարածքային կորուստների գնով, ինչպես որ հայությունը: Որքան էլ մեծ լինեք արտաքին գործոնի դերը, որը կբացահայտվի սույն հրապարակման մեջ, մեր այդօրվա կորուստների պատասխանատվության շրջանակում կա «հատուկ» մի հատված, որի համար պատասխանատու ենք զուտ մենք ու միայն **մենք՝ հայերս**: Եվ միայն սեփական մեղավորության փաստն ընդունելու, հասկանալու և գիտակցելու միջոցով է, որ հնարավոր

1 Տե՛ս **Եղիշե Չարենց**, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, Եր., 1987:  
 2 Տե՛ս **Էլլեն Բիզանդ**, Կարսը և ախպեր Աջոն, Թեհրան, 1962:  
 3 Տե՛ս **Тонконоженко А.**, Карсь: проклятая память, Москва, 2010:  
 4 Տե՛ս **Օրհան Փամուկ**, Ձյունը, Եր., 2009:  
 5 **Գարեգին Նժդեհ**, Որդիների պայքարը հայրերի դեմ, Եր., 2015, էջ 21:

կլինի բացառել նոր «Կարս»-երի ի հայտ գալն ու կրկնվելը այսօր և ապագայում:

Այդ առումով կարելի է ասել, որ 1920 թ. հոկտեմբերի 30-ին **ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ** մի հայելի դրեց հայ ժողովրդի առջև և ասաց. «Հայ ժողովուրդ, նայիր այս հայելու մեջ, տես քո պատկերը և ճանաչիր ինքդ քեզ»: Իսկ հայ ժողովուրդն արդեն հարյուր տարի համառորեն խուսափում է նայել այդ հայելուն, առերեսվել ինքն իր հետ, բացահայտել ու խոստովանել Կարսի պատերի տակ կատարվածի էությունն ու ճշմարտությունը:

Պատմությունը, ավանդ, այնպես կամեցավ, որ մեր մեջ եղած պահի ամբողջ նեգատիվը գերխտացված ձևով դրսևորվեց ու պայթեց Կարսի պատերի տակ: Քանզի երբ պետական իշխանությունն անկարող է դառնում կառավարել ու վերահսկել իրեն ենթակա կառույցները, երբ պետությանն ու ժողովրդին պաշտպանել պարտավորված բանակ կոչվող կառույցն այդպիսինից վերածվում է ձեռքին զենք ունեցող խուճապահար, միայն թալանի ընդունակ մի զանգվածի, իսկ ժողովուրդն էլ իր հերթին սկսում է բացահայտորեն արտահայտել ու դրսևորել իր մեջ բույն դրած հայրենամերժումը, համոզելով ինքն իրեն, որ այդ պահին հենց նման կեցվածքն է միայն, որ կարող է ապահովել և երաշխավորել իր փրկությունն ու անվտանգությունը, այդ չափազանց «բարենպաստ» ներքին ֆոնի առկայության պարագայում էլ՝ «ճիշտ ժամանակին ու ճիշտ վայրում» խաղի մեջ է մտնում արտաքին ուժը և այդ ամբողջը միասին հանգեցնում է հերթական ավերման՝ հերթական կոտորածով ու կորուստներով, հերթական հայրենազրկումով:

Ի վերջո ի՞նչ է կատարվել Կարսում: Ըստ մեզ հասած մի շարք ականատեսների՝ ժամանակակիցների ու մասնակիցների հուշերի և հետազոտող հեղինակների գործերի՝ մակերեսային ու տեսանելի մասով պատասխանը միանգամայն պարզ է ու միարժեք. Կարսի ուղղությամբ տեղակայված հայկական բանակը հրաժարվել է կռվել քենալական գորքի դեմ և գերի է հանձնվել իր բարձրագույն հրամանատարության գլխավորությամբ՝ «ձեռքի հետ» գերի գցելով նաև մի քանի երևելի պետական, ազգային ու եկեղեցական գործիչների: Դրանք փաստերն են, իսկ հարցերի հարցն է, թե ի՞նչն է եղել պատճառը, որ հայկական բանակը ռազմաճակատի հենց Կարսի հատվածում «այդ օրի էր հասել»<sup>6</sup>: Ի վերջո, նման բաները «հենց այնպես, իրեն-իրեն» չեն լինում:

Երբ անդրադարձ է լինում 1920 թ. հոկտեմբերի 30-ին Կարսը թուրքերին հանձնելու փաստին, սովորաբար թվարկվում են դրա մի շարք պատճառներ: Ընդ որում, անխտիր բոլոր հեղինակների մոտ պարտադիր մատնանշվող պատճառներից մեկը Կարսի մարզի քաղաքացիական և զինվորական իշխանությունների միջև եղած խիստ լարված փոխհարաբերություններն էին, ինչն այլ պատճառների հետ համատեղ հանգեցրել է այդ աղետին: Ամենևին մտադրություն չունենալով կասկածի տակ դնել կամ էլ անգամ չնչին չափով թերագնահատել նման հեղինակների հետազոտությունների արժեքը, մենք այն կարծիքին ենք, որ այդ անզիջում, անհանդուրժող և

6 Մենք շեշտում ենք «**հենց Կարսի հատվածում**», քանի որ այդ նույն օրերին, օրինակ, նույն հայ-թուրքական ռազմաճակատի Սուրմալուի հատվածում Դրոյի գլխավորած զորաջոկատը հետ մղեց քենալական գորքի հարձակույթ և վերականգնեց հայկական վերահսկողությունը Սուրմալուի գավառում:



հաշտության որևիցե եզր չենթադրող հակամարտությունն էր այն հիմնական առանցքը, որի շուրջ պտտվում էին մյուս բոլոր մեծ ու փոքր պատճառները, որոնք ըստ էության ծնունդն ու հետևանքն էին այդ հիմնական պատճառի: Պատճառի, որը, մեր ընկալմամբ, ոչ թե մի անախորժություն էր, որ ծագել էր քաղաքացիական ու զինվորական պաշտոնյաների անհամատեղելիությունից, կամ էլ դրսևորվում էր որպես պարզունակ մի պաշտոնակոհիվ: Ամենևին. փաստերն ու դրանց ուսումնասիրությունը մեզ բերել են այն համոզման, որ Կարսի մարզում հակամարտությունը քաղաքացիական և զինվորական իշխանությունների միջև շատ ավելի խորքային էր և ուներ, եթե կարելի է այդպես արտահայտվել՝ պատմական պահի հայեցակարգային տարբեր ընկալումներով պայմանավորված քաղաքակրթական արմատներ, պատճառներ և բնույթ: Այն է՝ թե կողմերից որ մեկը ինչպես էր ընկալում ողջ տարածաշրջանը և հայկական պետություն ասվածն առհասարակ և Կարսի մարզը՝ մասնավորապես, և ըստ դրա, ինչպես էր կառուցում իր գործելակերպն այնտեղ:

Մենք այստեղ կփորձենք ընթերցողին ներկայացնել և ամփոփել այն դեպքերն ու իրադարձությունները, որոնք ծավալվել են Կարսի մարզում 1919 թ. ապրիլից մինչև 1920 թ. հոկտեմբերի վերջը, երբ մարզը գտնվել է Հայաստանի Հանրապետության կազմում, և որոնք ի վերջո հանգեցրել են «Կարս» կոչվող համազգային աղետի. այն է՝ առանց դիմադրության հզոր ամրություններով բերդաքաղաքի հանձնմանը թշնամուն: Մեր վերլուծության համար որպես աղբյուրագիտական բազա օգտագործվել են դեպքերի ականատեսների ու անմիջական մասնակիցների հուշերն ու գրառումները, հարցի վերաբերյալ մի շարք հեղինակների մինչ օրս հրապարակած հետազոտությունները, ինչպես նաև բազմաթիվ արխիվային փաստաթղթեր, որոնք հեղինակի կողմից ուսումնասիրվել են վերջին հինգ – վեց տարիների ընթացքում և ամփոփված են արխիվային վավերագրերի հետևյալ հրապարակված ժողովածուներում<sup>7</sup>: Դրանց հղումները ներկայացնելիս մենք անհրաժեշտաբար նշում ենք նախ հիշատակվող փաստաթղթի արխիվային բնագիրը, իսկ ընթերցողի փնտրտուքը հեշտացնելու համար բերվում են նաև այդ փաստաթղթին առնչվող տվյալները նշված ժողովածուներում:

### 1. Կարսը Հայաստանի Հանրապետության կազմում: Նահանգի քաղաքացիական և զինվորական իշխանությունները

Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմի մեջ փաստացի ընդգրկվեց 1919-ի ապրիլին և իր նշանակությամբ բոլոր առումներով հատուկ շրջան էր հայկական պետության համար: Կարսը, որին տիրանալու համար օտարներն այդքան զոհեր էին տվել ու արյուն թափել, իր կարևոր ռազմավարական նշանակությամբ, հզոր ամրոցային պաշտպանական համալիրով, կուտակած ու պահեստավորված հսկա միջոցներով և պաշար-

<sup>7</sup> Տե՛ս **Հարությունյան Վլադիմիր**, Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը 1919-1920 թթ., փաստաթղթերի ժողովածու, Եր., 2014, **Հարությունյան Վլադիմիր**, 1918 թ. հայ-վրացական պատերազմը (Նյութեր և փաստաթղթեր), Եր., 2014, **Հարությունյան Վլադիմիր**, Կարսի մարզը Հայաստանի Առաջին Հանրապետության կազմում (ապրիլ 1919 թ. - հոկտեմբեր 1920 թ.), Նյութեր և փաստաթղթեր, Եր., 2016, Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում (1919 ապրիլ - 1920 հոկտեմբեր), Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանեանի յուշերը, աշխատասիրութեամբ՝ **Յարութունեանի Վլադիմիր**, Եր. 2018:

ներով, մեծածավալ ու բազմապիսի հնարավորություններով և ռեսուրսներով հարյուրամյակներ հետո վերադարձվում էր հայությանը: Եվ ոչ թե պարզապես վերադարձվում, այլ միացվում էր նորաստեղծ ու նորանկախ հայկական պետությանը:

Ռազմաքաղաքական տեսանկյունից Կարսը հայկական պետության համար ապահովելու էր հետևյալ երկու կարևորագույն խնդիրների իրականացումը. **մի կողմից՝** նա պետք է հանդես գար որպես պատվար և հուժկու պաշտպանական գոտի թուրքական կողմից հնարավոր հարձակումը կասեցնելու, հետ մղելու և հակահարձակման անցնելու համար, **մյուս կողմից՝** Հայաստանի Հանրապետության համար Կարսը հանդիսանալու էր այն հզոր ու ապահով ռազմական պլացդարմ-հենադաշտը, որի միջոցով պետք է իրականացվեր հայկական բանակի զորաշարժը դեպի արևմուտք, ինչի շնորհիվ էլ պետք է ապահովվեր հայկական պետության տարածումն ու ընդլայնումը դեպի Արևմտյան Հայաստան՝ այդ օրերին Հայաստանի Հանրապետությանը միջազգայնորեն երաշխավորված արևմտահայ գավառները:

Դեպքերը Կարսի մարզում այնպիսի ընթացք էին ստացել, որ նախորդ չորս տասնամյակներում Կարսին տիրապետող ռուսները, իրենց կայսերական նպատակներին համահունչ, ժամանակին Կարս քաղաքն ու ամրոցը հասցրել էին, ինչպես ասում են՝ պատշաճ վիճակի: Նախ՝ իրականացված անհրաժեշտ աշխատանքների շնորհիվ, իր պաշտպանական հզորությամբ Կարսն այդ օրերին համեմատվում էր Եվրոպայում ֆրանսիական Վերդեն և ավստրոհունգարական Պերեմիշլ ամրոցների հետ, իսկ Ռուսական կայսրության տարածքում նա համարվում էր երկրորդը Կրոնշտադտից հետո<sup>8</sup>:

Միանգամայն հասկանալի է, որ բոլոր առումներով մեծ ներուժ պարունակող, բայց միևնույն ժամանակ բազմաթիվ հակասություններով և ռիսկերով հագեցած պետությանը նոր միացված այդ տարածաշրջանը հնազանդեցնելու-հպատակեցնելու համար անհրաժեշտ էր նախևառաջ տեղում կազմակերպել իշխանության ուժեղ մարմին, արդյունավետ աշխատող կառույցներ, որոնց միջոցով պետք է իրականացվեին պետության նախատեսած ծրագրերը:

Այդօրվա վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը հետևյալ բովանդակությամբ է ձևակերպել և շարադրել ՀՀ կառավարության խնդիրներն ու անելիքները Կարսի նահանգում. «Չորս գլխաւոր նպատակներ կը հետապնդէր մեր իշխանութիւնը Կարսի նահանգին մեջ: Առաջին՝ օգտագործել ցարական կառավարութենէն մնացած հարստութիւնները՝ մեքենաները, երկաթէ ձողերը, հագուստեղէնը, ռազմամթերքը, երկաթուղային արհեստանոցները, փայտը և բազմաթիւ ուրիշ առարկաներ: Պէտք էր հոգ տանիլ ոչ միայն անոնց օգտագործման, այլ պէտք էր միջոցներ ձեռք առնել անոնց պահպանման համար, որ բաւական դժուար գործ էր այն ժամանակուայ պայմաններուն մեջ: Մեր երկրորդ նպատակն էր խաղաղեցնել բնակչութեան իսլամ տարրը ու հաշտեցնել զայն քրիստոնէայ զանգուածին հետ: Երրորդ՝

8 Տե՛ս Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում (1919-ի ապրիլ - 1920-ի հոկտեմբեր), Կարսի նահանգապետ Ստեփան Գորղանեանի յուշերը, աշխատասիրութեամբ՝ **Վլադիմիր Յարութիւնեանի**, Եր. 2018, էջ 202 (այսուհետ՝ Կարսի նահանգապետ Ստեփան Գորղանեանի յուշերը):

շահագործել բնական հարստությունները՝ անտառը, արօտատեղիները, ածխահանքերը և աղահանքերը: Եւ, վերջապէս չորրորդ՝ աստիճանաբար մոտենալ թրքական սահմանին՝ գրաւելով 1914 թ. սահմանին վերաբերեալ բոլոր վայրերը, և ապա պատրաստուիլ անցնելու Թրքահայաստան, երբ Փարիզի վեհաժողովը իր վերջնական որոշումը տայ մեր պետութեան սահմաններու մասին...»<sup>9</sup>:

Հաշվի առնելով մարզի յուրահատկությունն ու կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Կարսի մարզին վերագրեց առանձնակի նահանգի կարգավիճակ<sup>10</sup> և նահանգում ստեղծեց իշխանության երկու թևեր՝ քաղաքացիական ու զինվորական:

Քաղաքացիական հատվածում, այս նպատակներն իրականացնելու համար, Հայաստանի կառավարությունը Կարսի քաղաքացիական նահանգապետ էր նշանակել ցարական Ռուսաստանում պետական ծառայության ընթացքում գեներալ-մայորի (պետական խորհրդական – статский советник)<sup>11</sup> աստիճանի հասած տոհմիկ ազնվական Ստեփան Ալեքսանդրի Ղորղանյանին (1.08.1865 թ.– 30.03.1925 թ.), որն ուներ կայսրության կովկասյան տարածաշրջանի, այդ թվում և Կարսի մարզի տեղական մարմինների կառավարման մոտ երեք տասնամյակի հարուստ փորձ, մշտապես ունեցել էր ծառայողական առաջխաղացում և դատելով նրա նամակագրությունից և հուշերից՝ գրագետ ու հմուտ պետական ծառայող էր, բանխմաց ու ձկուն կառավարիչ<sup>12</sup>: Ստ. Ղորղանյանը թեև անկուսակցական էր, սակայն տարբեր առիթներով բավականին սերտորեն համագործակցել էր ՀՅ Դաշնակցության հետ դեռևս ցարական վարչակարգի օրերին<sup>13</sup>, ուստի և վայելում էր երկրի բարձրագույն իշխանության վստահությունը: Հենց քաղաքացիական նահանգապետը պետք է իրականացներ նահանգը Հայաստան պետության հետ միաձուլելու և պետության հետագա ընդլայնման համար մարզում անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու հայկական կառավարության քաղաքական ու տնտեսական ծրագրերը:

Իսկ Կարսի նահանգի զինվորական իշխանության բուրգի գագաթին հայկական կառավարությունը հարմար համարեց տեսնել երկու գեներալների՝ ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ) Դանիել Բեկ Աբիսողոմի Փիրումյանին (22.11.1861 թ., Նախիջևանիկ, Լեռնային Ղարաբաղ – 15.08.1922 թ., Երևան) և ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր Արտեմի (Հարություն) Գրիգորի Հովսեփյանին (02.01.1872 թ., Դաղէթ-Խաչեն, Թիֆլիսի նահանգ – 28.07.1921 թ., Ալավերդի, Հայկ. ԽՍՀ): Գնդապետի պաշտոնում Դանիել-Բեկ Փիրումյանը մասնակցել էր Սարդարապատի ձակա-

9 Հարությունյան Վլադիմիր, Կարսի մարզը Հայաստանի առաջին հանրապետության կազմում (ապրիլ 1919թ.– հոկտեմբեր 1920 թ.), Նյութեր և փաստաթղթեր, Եր., 2016 էջ 101 (այսուհետ՝ Հարությունյան Վլադիմիր, Կարսի մարզը...):

10 Հայաստանի Հանրապետությունում ամբողջ երկրով նահանգային սկզբունքով վարչատարածքային բաժանումն իրականացվել է ՀՀ կառավարության 1920 թ. մայիսի 5-ի որոշմամբ:

11 Ռուսական կայսրությունում պետական ծառայողների համար հաստատված աստիճանակարգերի ցուցակում (табель о рангах) պետական խորհրդականը (статский советник) վերևից հինգերորդ աստիճանն էր և զինվորական համակարգում համապատասխանում էր գեներալ-մայորի կոչմանը:

12 Ստ. Ղորղանյանին և նրա ընտանիքին վերաբերող կենսագրական որոշ մանրամասներ տես Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանի յուշերը, ՅԱԽԵԼՈՒԱԾ 2:

13 Տես ՀԱԱ, ֆ. 1457, g. 1, q. 1, թ. 157:

տամարտին և ուներ այդ հերոսամարտում հաղթանակ կորզող ամենահայտնի և քաջ զորապետերից մեկի համբավը: Արտեմի Հովսեփյանը Առաջին աշխարհամարտի ընթացքում կապիտանից հասել էր գնդապետի աստիճանի, բայց որևիցե բացառիկ գործով աչքի չէր ընկել:

Նախ՝ հատուկ նշենք, որ ի սկզբանե նահանգի զինվորական իշխանության առաջին դեմքերի նշանակման հարցում դրսևորվեց, մեղմ ասած, ոչ միարժեք մոտեցում: Երբ Կարսի մարզը փաստացի միացվեց Հայաստանի Հանրապետությանը, և հայկական զորքերը մուտք գործեցին Կարսի տարածք, որպես հայկական կառավարությունը մարզում ներկայացնող առաջին դեմք բնակչությանը դիմեց գեներալ-մայոր Արտյոմ (Հարություն) Հովսեփյանը, որը ներկայանում էր որպես Կարսի նահանգի ամբողջ հայկական զինուժի զորահրամանատար<sup>14</sup>: Մինչև 1919 թ. մայիսի կեսը նա ուներ նաև գեներալ-նահանգապետի պաշտոնական լիազորություններ: «Գեներալ-նահանգապետ Յովսեփեան մի ռուսախօս սպայ էր. պատերազմի քմահաճոյքը մի երկու տարում գլխապետից նրան գեներալ էր դարձրել, իսկ դաշնակցութեան գերիշխանութիւնը տեսնելով, նա օր առաջ սկսել էր մերձենալ դաշնակցականներին, իրան կուսակից, «համակրող» անվանել այդ մեծ քաղաքական զանգվածի և այսօր, այդպիսով, նա ոչ միայն Կարսի զօրաբանակի հրամանատարն էր, այլև գեներալ-նահանգապետ այդ կարևոր և պատասխանատու նահանգում... Յովսեփեան ռուսերէն խօսող և ռուսերէն մտածող կայսերական իդեալների երկրպագու էր և մի զաւէշտ թիրիմացութիւն հայ ազգային բանակում»<sup>15</sup>, - վկայում է Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանյանը:

Պաշտոնավարման առաջին իսկ օրերից սկսած՝ գեներալ-նահանգապետի պաշտոնում այդ գեներալի ձեռնարկած որոշ վարչական «էքսպերիմենտներ» խիստ մտահոգեցին երկրի կառավարությանը և 1920 թ. մայիսի 20-ին Կարսի նահանգում գեներալ-նահանգապետի պաշտոնը լուծարվեց<sup>16</sup>: Բայց միաժամանակ նահանգ «իջեցվեց» մի նոր հատուկ հաստիք-պաշտոն. Կարսի ամբողջ զինվորական պարետի պաշտոնը՝ իր առանձին շտաբով: Պարզվում է, որ պաշտոնը խիստ անվանական էր և նախատեսված էր հատուկ և անձնապես գեներալ Դանիել-Բեկ Փիրումյանի համար: Բերենք մի հատված այդ ժամանակվա Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ գեներալ **Հովհաննես Հախվերդյանի** հուշերից, որտեղ պարզ ու հստակ ներկայացված է Դանիել-Բեկ Փիրումյանին այդ պաշտոնում նշանակելու պատմությունը՝ իր բոլոր «ծալքերով» ու մանրամասներով. «...Կարսը մեր կողմից զբաղեցնելուց հետո բրիգադի<sup>17</sup> հրամանատար գեներալ Հովսեփյանցը դրա հետ մեկտեղ կատարում էր նաև բերդի պարետի պարտականությունները: Սակայն հետագայում Կառավարությունը (կուսակցության<sup>18</sup> նախաձեռնությամբ) բարձրացրեց հատուկ բերդի պարետի նշանակման հարցը: Այդ պաշտոնը նախատեսվում էր գեներալ Դանիել-Բեկ Փիրումովի համար: Գեներալ Փիրումովը Կարս ժամանեց մա-

14 Տե՛ն ՀԱԱ, ֆ 280, ց, թ. 8, թ. 1 : Տե՛ն նաև **Հարությունյան Վլադիմիր**, Կարսի մարզը ..., էջ 174-176:

15 Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանյանի յուշերը ..., էջ 44,45,439:

16 Տե՛ն Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանյանի յուշերը ..., էջ 52:

17 Խոսքը Կարսի մարզում տեղակայված հայկական 2-րդ հետևակային բրիգադի մասին է:

18 Խոսքը Հայ Յղափոխական Դաշնակցություն կուսակցության մասին է:

յիս ամսի առաջին կեսին և այդ պահից էլ սկսվեց բերդի հատուկ շտաբի ձևավորումը: Շտաբի պետ էր նշանակվել փոխգնդապետ Առաքելյանը<sup>19</sup>: Նա շարային սպա էր, գեորգիկյան ասպետ, սակայն բացարձակապես անպատրաստ էր այդ պաշտոնի համար: Ռազմական գերատեսչության առաջադրած Գլխավոր Շտաբի փոխգնդապետ Շնեուրի թեկնածությունը կառավարության հավանությանը չէր արժանացել:

Առհասարակ պետք է ասել, որ բանակում փոքրիշատե երևացող պաշտոններում նշանակումներ կատարելու հարցում Ռազմական նախարարությունը կապանքված էր ոչ միայն Կառավարության, այլ նաև, և առավել շատ՝ կուսակցության կողմից: Ուստի և առանձին անձինք, որոնք ցանկանում էին բանակում զբաղեցնել այս կամ այն պաշտոնը, կուսակցության անդամների հետ ծանոթության շնորհիվ՝ միշտ էլ կարողանում էին ստանալ ցանկալի նշանակումը: Այդպես էր եղել, հավանաբար նաև գեներալ Փիրումովի նշանակման պարագայում: Այդպիսի յուրատեսակ «քավորությունը» վնասում էր գործին, քանի որ նշված եղանակով այս կամ այն պաշտոնին էին նշանակվում անձինք, որոնք դրա համար բացարձակ պիտանի չէին, կամ, լավագույն դեպքում, չէին համապատասխանում այդ պաշտոնին: Գեներալ Փիրումովը բերդի պարետի պաշտոնին չէր համապատասխանում ոչ ռազմական գիտելիքներով, ոչ իր ընդհանուր զարգացածությամբ և ոչ էլ իր խելքով...<sup>20</sup>:

Ինչպես տեսնում ենք, իրականում ամեն ինչ հայերիս համար չափազանց պարզ է ու քաջածանոթ. այդ ժամանակահատվածի Հայաստանում ինչ-որ ազդեցիկ մարդկանց ընդամենը պետք էր «իրենց մարդուն» մի «հարմար՝ լավ գործի դնել»: Անկախ նրանից, թե տվյալ անձը իր հնարավորություններով կարող է առանց պետությանը վնաս տալու վարել այդ պաշտոնը թե ոչ: Ըստ գեներալներ Նազարբեկյանի և Սիլիկյանի՝ «...Փիրումով Կարսի բերդի կոմենդանտը նշանակվեց անձնական շահերի և կրքերի առանցքում... Կարս ուղարկեցին մի մարդու, որ ոչ մի կերպ համապատասխան չէր Կարսի կոմենդանտի բարձր կոչմանը...»<sup>21</sup>: Անգամ՝ Ռուբեն Տեր-Մինասյանն էլ այն կարծիքին է եղել, որ « ... գեներալ Փիրումով անգույն և որևէ ձեռներեցությունից զուրկ մի մարդ էր...»<sup>22</sup>:

Ինչևիցե, Փիրումյան-Հովսեփյան գեներալական այդ զույգին էր վստահված Կարսի նահանգում լուծելու հայկական կառավարության ծրագրի ռազմական հատվածի իրագործման խնդիրները: Ի՞նչ ուժ ունեին իրենց ձեռքի տակ այդ երկու գեներալները և ի՞նչ մոտեցումներով էին պատրաստվում իրականացնել երկրի քաղաքական ղեկավարության կողմից իրենց առջև դրված ծրագրերը: Նախ՝ զինուժի մասին. ինչպես նշում է Հայաստանի Հանրապետության ամենահայտնի զինվորական գործիչներից մեկը՝ Ռուբեն

19 Խոսքը փոխգնդապետ Վահան Տեր-Առաքելյանի մասին է, որի նշանակման վերաբերյալ ժամանակակիցները կատակում էին, թե «... կուսակցությունը Վահանին Փիրումյանի մոտ դայակ է նշանակել»:

20 Տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թթ.11-13:

21 Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը ..., էջ 387, 388, 403, Փիրումյանի շտաբի պետ Վահան-Տեր Առաքելյանի վկայությամբ՝ գեներալ Փիրումյանը իրականում իրեն տեսնում էր մայրաքաղաքում ավելի շոշափելի ու բարձր պաշտոն զբաղեցնելիս: Ըստ այդմ նա բավականին դժգոհ էր իրեն «զավառ» ուղարկելուց և, ըստ էության, չէր զբաղվում Կարսի զորապետի իր անմիջական պարտականություններով, այլ ամբողջապես տրվել էր անձնական կյանքին, տես **Ваан Тер-Аракелян**, Начальник штаба крепости Карса, Карс перед падением, <http://www.aniarc.am/2015/10/29/vahan-ter-arakelyan-kars-1919/>, 29 окт. 2015г: 22 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 165:

Տեր-Մինասյանը .«[Հայաստանի] զինուորական նախարարությունը պարզ մանրանկարն էր ռուս զինուորական նախարարութեան. իսկ բանակը իր ոգով, իր վարժութեամբ եւ գործելակերպով, նոյնն էր ինչ ռուսական որեւէ զորաբաժին: Ի զուր չէ, որ հայկական բանակը կը համարէին Դենիկինի բանակի մի մասը. նմանությունը մեծ էր թէ՛ կազմակերպութեան, թէ՛ ձգտումների մէջ»<sup>23</sup>: Ռուսական կայսերական բանակի նմանակին հավակնող այդ բանակը ուներ մի յուրահատկություն. ձևականորեն հանդիսանալով ազգային պետության բանակ, իրականում իր էությունը նա այդպիսին չէր: «Զինվորական գործը մեր երկրում եկել էին վարելու ռուսները և ռուսախօսները և պետական այդ յիմունքը մինչև վերջը մնաց նոցա ձեռքում և նոցա կամայեական հաճոյքից կախված»<sup>24</sup>:

Ինչպես և ցանկացած բանակի դեպքում, հայկական բանակի հիմքը նույնպես կազմում էր նրա սպայակազմը: Այն բաղկացած էր ազգությամբ ռուս կամ ցարական բանակի այլազգի սպաներից և ազգությամբ հայկական հայ սպաներից, որոնց ճնշող մեծամասնության մոտ բացի ազգանունից ուրիշ և ոչ մի բան չկար: Թեև արմատներով հայ, բայց նրանք, միևնույնն է, ռուսական բանակի սպաներ էին: «Թէ ինչպէ՛ս այդ օտարացած սպայիությունը, անտեղեակ հայ լեզվին, երկրին, մեր պահանջներին և մեր պատմութեան իմաստին, պէտք է կրթէր հայ վաշտերը, դա ոչ միայն հարց էր, այլ մտատանջություն, որ պէտք է ունենար պետական բնոյթ... Գեներալներն ու սպաները բանակի մի կողմն էր, իսկ զինվորությունը, մասսան, բուն հայիությունը, այլ բանակ էր, տարբեր հոգեբանութեամբ, մտածելակերպով և ազգային կորովով »<sup>25</sup>- վկայում է Ստ. Ղորղանյանը:

Նրանք ինչպես համարվել էին, այդպես էլ նորանկախ Հայաստանում, շարունակում էին համարվել և լինել իրենց էությամբ ռուս սպաներ: Անդրադարձնալով ՀՀ բանակին այդ նույն տեսանկյունից՝ Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստեփան Ղորղանյանն իր հերթին նշում է. «Զինվորական իշխանությունը, այդ ռուսները և ռուսախօսները, մի ցաւ էին երկրի համար»<sup>26</sup>:

Հայկական բանակի այդօրվա սպայակազմի համար բացարձակապես խորթ և անհասկանալի էր անկախ հայկական պետականության գաղափարը: Նրանք համեմատում էին հայկական պետությունն իրենց «իսկական» պետության՝ Ռուսաստանի հետ և խոր արհամարհանք ու հեզմանք դրսևորում այն պետության նկատմամբ, որի բանակում այդ պահին ծառայում էին: Այլ կերպ չէր էլ կարող լինել. եթե անգամ մի կողմ դնենք ռուսազգի զինվորականներին, ապա ցարական բանակից հայկական բանակ մեխանիկորեն տեղափոխված հայազգի սպաները իրենց ամբողջ էությամբ, ինչպես ասում են, իրենց «ուղն ու ծուծով» ռուսահպատակ էին, և միանգամայն բնական է, որ այդպիսին էլ մնալու էին: Այդ խառը ռազմաքաղաքական իրավիճակում նրանց համար ապագայի միակ հույսն ու հավատքը ոչ թե անհասկանալի և խորթ պատմական հայրենիքի տարածքում ինչ-որ անհասկանալի պետության հաստատումն ու կայունացումն էր, այլ՝ ի դեմս

23 **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակներ, Է. հատ., Բ. հրատ., Պէյրոյթ, 1979, էջ 332:

24 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 202:

25 Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը ..., էջ 203

26 Նույն տեղում, ..., էջ 23:

դենիկինյան բանակի Ռուսաստանի հետ կապող-չկտրվող պորտալարը:

Կարսի գորախմբի հրամանատարական կազմում չկար փոքրիշատե ազգային նկարագիր ունեցող, գոնե որոշ անհատականությամբ օժտված կերպար: Միայն 1920 թ. աշնանը կառավարությունը Կարս տեղափոխեց Արևմտյան Հայաստանի ազատագրական պայքարի նշանավոր և, իրոք, խարիզմատիկ դեմքեր Սեպուհին և Սմբատին (Մախլուտոյին), ինչը, բնականաբար, արդեն չէր կարող որոշակի ազդեցություն ունենալ դեպքերի կործանարար ընթացքի վրա, առավել ևս՝ կանգնեցնել այն:

Երբ 1919 թ. վարչապետ Ալ. Խատիսյանը այցելել է Կարսի մարզ, Սարիղամիշում տեղի կայագրորի գորամասերի շքերթը դիտելուց հետո կիսվել է նահանգապետ Ղորղանյանի հետ. «Ես միանգամայն բաւարարված եմ մեր շարքային զինվորի յուսալից տեսքով և եթէ մեզ վիճակվի պատշաճ ազգային դաստիարակութիւն տալ այդ զինվորութեանը, մենք կոպած կը լինենք մեր անկախութեան պատվանդանը...»<sup>27</sup>: Ասվածը հանրահայտ ճշմարտություն է. զինվորական հանդերձանք և հրացան կրող տղամարդկանց զանգվածն առանց այդ «դաստիարակչական աշխատանքի» երբևիցե պետության հենարան ու այն պաշտպանող բանակ չի եղել և չի էլ լինի: Ինչպես հայտնի է, նույն շրջանում խարիզմատիկ կերպար և ընդգծված գաղափարական անձինք հանդիսացող գորահրամանատարներ Դրոյի և Նժդեհի գորաջոկատները համալրված էին նույն հայ զինվորներով, բայց նրանք, խոշոր հաշվով, պարտություններ չունեցան, թեև միշտ էլ կռվել են իրենց թվապես գերազանցող հակառակորդի դեմ:

Ունենալով Կարսի ուղղությամբ մեր գորախմբի պատկերը՝ անդրադառնանք կարևորագույն հարցին. որպես ինչ էր դիտվում Կարսի նահանգը 1919 թ. գարնանն այնտեղ տեղակայված հայկական բանակային գորախմբի բարձրագույն հրամանատարության և, առհասարակ, նրա արհեստավարժ սպայակազմի ներսում տրամադրություն ու մթնոլորտ ստեղծող հիմնական մասի կողմից: Վերը շարադրվածը հանգեցնում է միայն մեկ հնարավոր պատասխանի. Կարսի նահանգը նրանց պատկերացումներում դիտվում էր ոչ երբեք որպես այն կենտրոնը, որտեղից պետք է ծավալվեր Հայոց պետականությունը, այլ ընդամենը որպես **ժամանակավորապես զբաղեցրած մի տարածք**, բնականաբար՝ իրենց ոչ հարազատ, որն իրենք ընդամենը պարեկելու են, քանի որ շուտ թե ուշ՝ մնացած վերահսկվող հայկական տարածքների հետ միասին այն կրկին հայտնվելու է Ռուսաստանի կազմում: Կարևոր չէ, թե որ և ինչպիսի Ռուսաստանի, բայց անհապաղ և միայն Ռուսաստանի: Դրսում 1919 թ. գարունն էր, այսինքն այն օրերը, երբ դենիկինյան կամավորական շարժումը գնալով թափ և ուժ էր հավաքում, և տպավորություն կար, թե բոլշևիկների օրերը հաշված են, և ուր որ է կրկին հառնելու է «այն» Ռուսաստանը: Էլ ինչ Հայաստան, ինչ անկախություն, ինչ հայկական պետություն:

Այնպես որ Կարսում տեղակայված հայկական գորախմբի հրամկազմը նահանգն իր տարածքով ընկալում էր ավելի շատ որպես իր կողմից ժամանակավորապես զբաղեցրած, իսկ ավելի ճիշտ, չվախենանք այդ բառից, օկուպացված տարածք, այլ ոչ թե «...այն կենտրոնը, որտեղից պետք է ծա-

27 Նույն տեղում....., էջ 313:

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

ւալվէր մեր պետականութիւնը»: Իսկ ինչպիսին պետք է լինէր նման տրամադրություններով ու ընկալումներով համակված, նման «օրակարգով» առաջնորդվող այդ գորախմբի պահվածքն ու գործունեությունը այդ տարածքում: Պատասխանը միակն է ու նա է, որը եղել է բոլոր նման դեպքերում՝ սկսած մարդկության ծագման օրվանից՝ **թալան**:

«Թուրքերը և քրդերը տեսնում էին, իհարկէ,- հիշում է Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանը,- որ այդ թալանչիները զինվորներ են և նրանք իրաւունք ունէին հաւատալու, որ թալանը կազմակերպված է զինւորական բարձր իշխանութեան գիտութեամբ...զինվորական զգեստով թալանչիները վխտում էին թուրք, քուրդ և ռուս զիւղերի շուրջը և ամեն մեկը իր իրաւունքն էր օգտագործում...»

Մէկը ձի էր «բռնագրաւում», միւսը՝ տաւար, ոչխար, բուրդ և այլն և բոլորը բացատրում էին, որ պատշաճ վկայեական ունեն... սպաները սայլերով արտահանում էին այդ զիւղերից կաթսաներ, բուրդ, գորգեր և այլ հարստութիւն: Իսկ մեր գէներալները և գնդապետները գերադասում էին նստել քաղաքում, զբաղվել ինտրիգներով, բուրդ և այլ իրեր հաւաքել...»<sup>28</sup>:

Իրենց պաշտոններում հարմար տեղավորվելուց հետո, բառացիորեն Կարս ժամանելու հաջորդ օրվանից մինչև Կարսի անկումը, Կարսի բարձրագույն զինվորական հրամանատարությունը, առանց չափազանցության, զբաղվեց ամեն ինչով՝ բացի իր ուղղակի զինվորական պարտականություններից. այն է՝ բացի գորքի մարտական պատրաստականությունը բարձրացնելուց և նրան վճռական ճակատամարտերի նախապատրաստելուց: Ինչպես վկայում են փաստաթղթերը՝ նրանց գործունեության մեջ իրական իմպերատիվը իրոք ահռելի չափերի հասնող, մշտապես իրականացվող թալանն էր: Կանգ չառնելով մանրամասների վրա, որոնք բերված են բազմաթիվ հուշերում և փաստաթղթերում, այստեղ նշենք միայն, որ այդ 18 ամիսների ընթացքում բացահայտվեցին և արձանագրվեցին տեղի բարձրագույն հրամանատարության կողմից մարզի նյութական միջոցների հափշտակման, բանակին հատկացված միջոցների գրպանման և տարաբնույթ զեղծարարության և այլ հանցագործությունների բազմաթիվ դեպքեր<sup>29</sup>:

Ի դեպ, նահանգի մահմեդական բնակչության թալանը հայերի համար անհետևանք չմնաց. ըստ այն օրերի տվյալների՝ Քյազիմ Կարաբէքիրը Հայաստանի վրա արշավելու պահին ունեցել է ընդամենը 4-5 հազար զինվորով համալրված կանտնավոր զորաբանակ, սակայն նրա զինյալների քանակը շատ արագ գրեթէ կրկնապատկվել է՝ ի հաշիվ այն անկանոն զորամիավորումների, որոնք կազմված էին դեպի քենալական կողմը փախած հայ զինվորականության կողմից թալանված մահմեդական գյուղերի բնակիչներից<sup>30</sup>:

Բազմաթիվ փաստաթղթերը, ժամանակակիցների ու ականատեսների վկայություններն ու դիտարկումները հավաստում են, որ Կարսի գորախմբի վերոհիշյալ երկու գէներալները՝ հայկական կառավարության կողմից իրենց տրված լիազորություններն ու հնարավորությունները ծառայեցնում էին բա-

28 Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը ..., էջ 154, 173,183:

29 Տե՛ս **Հարությունյան Վ.**, Կարսի մարզը ..., էջ 260-276, 331-333, 344-347,351, Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը ..., էջ 47,48,70, 71, 80, 175, 238,239,262, 279, 289, 294, 340, 341,348,349, 352, 357: 30 Տե՛ս **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 256, 384,385:



ցառապես անձնական հարստություն դիզելու նպատակին, այլ ոչ թե գորքը՝ սպասվող վճռական իրադարձություններին նախապատրաստելուն<sup>31</sup>:

Այդպիսին էր այդ վճռական օրերին Կարսի նահանգի գինվորական իշխանությունն ու հայկական բանակային զորախումբը, որը ղեկավարում էին գեներալներ Դանիել-Բեկ – Փիրումյանն ու Հարություն Հովսեփյանը:

Արդյունքում՝ իշխանության քաղաքացիական ու ռազմական թևերն իրականում ոչ թե հակակշռում և փոխլրացնում էին միմյանց, այլ գտնվում էին խոր հակասությունների, անհաշտ դիմակայության և անգիջում պայքարի մեջ, ինչը, բնականաբար, անխուսափելիորեն նահանգում առաջ էր բերելու ձգնաժամային իրավիճակ<sup>32</sup>: Եթե քաղաքացիական նահանգապետն ամեն ինչ անում էր նահանգի քաղաքացիական կյանքը կանոնավորելու, ազգամիջյան հարաբերությունները կայունացնելու և ուղղելու խաղաղ հունով, ապա Փիրումյան-Հովսեփյան «տանդեմը» պետության տված լիազորություններն օգտագործեց խիստ անձնական նպատակներով: Նրանք գործնական ոչ մի բան չարեցին բանակը վճռական գործողություններին նախապատրաստելու համար, և բախտորոշ պահին, երբ այդ բանակային զորախմբի գործողություններով էր որոշվում հայկական պետականության լինել-չլինելը, պարզվեց, որ Կարսի ուղղությամբ բանակ, որպես այդպիսին, գոյություն չուի: Եվ միակ բանը, որին դեռևս ընդունակ էր այդ գեներալների հրամանատարության ներքո գտնվող զորախումբը, իր գերագույն գեներալի՝ Դանիել-Բեկ Փիրումյանի գլխավորությամբ թուրքերին գերի հանձնվելն էր:

## 2. Հյուսիսը շառագունում է

Երբ 1919-ի ապրիլին Կարսի նահանգը Հայաստանի Հանրապետությանը միացնելուց սկսած՝ երկու ռուսախոս հայ գեներալները, թողած գինվորականի իրենց ուղղակի պարտականությունները, զբաղված էին անձնական բարեկեցության խնդիրներով, Երկիր սուլթանն իր հերթական պտույտն էր կատարում և հերթական մի շերտ էր հյուսում ու ավելացնում մարդկության ձակատագրին:

Նախ՝ 1920-ի հունվարին Հայաստանի Հանրապետությունը ճանաչվեց Առաջին աշխարհամարտում հաղթող տերությունների կողմից էական մի վերապահումով՝ Հայաստանը ճանաչվում էր առանց նրա սահմանները ձշտելու: Դա մեծ հույս էր, գրեթե համոզմունք, որ հետագայում նոր տարածքներ կմիացվեն Հայաստանին: Հաջորդն այն իրողությունն էր, որ իր տրամաբանական ավարտին էր մոտենում խաղաղության վեհաժողովը: 1920 թ. ապրիլի վերջերին հաղթող պետությունները Հայաստանի մասով Սան-Ռեմոյում որոշում կայացրին նախկին Օսմանյան կայսրության մաս կազմող Արևմտյան Հայաստանի մի քանի նահանգներ Հայաստանի Հանրապետությանը միացնելու վերաբերյալ: Հարցի վերջնական որոշումը մի կողմից «ճամփա ընկավ» դեպի Սևր՝ դիվանանագիտական ու փաստաթղթային ձևակերպում ստանալու, մյուս կողմից՝ հայտնվեց ԱՄՆ նախագահ

31 Տե՛ս **Յարութիան Վ.**, Կարսի նահանգապետ..., նույն տեղում:

32 **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրուօ, 1968, էջ 157:

Վիլսոնի սեղանին՝ սպասելով, որ նա գծի հայ-թուրքական սահմանը և հրապարակի իր Իրավարար վճիռը<sup>33</sup>: Ժամանակակցի գրառմամբ՝ «Սևրը և Վիլսոնը այն մոգական պատկերներն էին, որոնց շուրջը համախմբվում էին հայկական բոլոր վերապրումները...»<sup>34</sup>:

Այդ ամենն, իհարկե, հրաշալի էր, եթե չլիներ մի «անհարմար» նրբերանգ. հայերին այդ «հողահատկացումն» իրականացնող տերություններից և ոչ մեկը՝ ոչ առանձին-առանձին և ոչ էլ բոլորը միասին, չցանկացան, եթե չասենք՝ կտրականապես հրաժարվեցին այդ որոշումները կյանքի կոչելու երաշխավորը դառնալ: Որոշումների իրականացումը, տվյալ դեպքում դրանց կատարման ուժային պարտադրանքը մնում էր, փաստորեն, Հայաստանի Հանրապետության ուսերին: Բայց Հայաստանն արդյոք ունե՞ր դրա համար անհրաժեշտ ուժային ռեսուրսներ և նույնիսկ դրանց բավարար լինելու պարագայում, ու՞մ նկատմամբ նա պետք է կիրառեր այդ պարտադրանքը: Եվ առհասարակ, գործը հասնելու էր արդյոք այդ պարտադրանքի կիրառմանը:

Հարցն այն է, որ պատմական այդ նույն ժամանակահատվածում Հայաստանից դուրս, ավելի ճիշտ՝ Հայաստանի շուրջն արդեն ձևավորվել էր մի այնպիսի իրադրություն, որը ոչ միայն հնարավորություն չէր թողնում Սևրի պայմանագրի իրականացման համար, այլև հարցականի տակ էր դնում անգամ Հայաստանի Հանրապետության գոյությունը: Այդ խիստ վտանգավոր իրադրության ի հայտ գալը պայմանավորված էր մի կողմից՝ Թուրքիայի «արևելյան վիլայեթներում» քեմալական շարժման սկզբնավորմամբ ու թափ առնելով և միաժամանակ՝ բոլշևիկյան Ռուսաստանի զինված ուժերի կողմից Դենիկինին ծանր պարտություններ հասցնելով և սրընթաց դեպի կովկասյան տարածաշրջան շարժվելով: Այդ ամենի հետ մեկտեղ չմոռանանք նաև հաղթող տերությունների՝ Հայաստանի հարցում փաստացի «ձեռքերը լվանալու» իրողությունը:

Իրոք, 1919-ի ապրիլին հայկական զորքի Կարս մտնելուց ընդամենն օրեր անց՝ 1919-ի մայիսի 19-ին, իր մի քանի գաղափարակիցների հետ Սամսունում ափ իջավ գեներալ Մուստաֆա Քեմալը: Եվ այն մեկ տարվա ընթացքում, երբ Կարսի հայկական զորախմբի հրամանատարությունը՝ հայտնի երկու գեներալների գլխավորությամբ, թողած բանակային առօրյան, իրականում զբաղված էր բանակը բարոյալքելով ու կազմալուծելով, Մուստաֆա Քեմալը կարողացավ Օսմանյան կայսրության նախկին «արևելյան վիլայեթներում» կազմակերպել հետագայում իր անվամբ կոչված շարժումը, որի նպատակն էր՝ թույլ չտալ, որ հանկարծ Թուրքիա պետությունը և թուրքական պետականությունը կանգնեն աշխարհի քարտեզից անհետանալու հեռանկարի առաջ: Օսմանյան բանակի նախկին մեկ այլ զինվորական Քյազիմ Կարաբեքիրի հետ միասին ձեռնամուխ եղան պատերազմից հետո ջախջախված բանակի կիսամերկ ու սոված բեկորներից մարտունակ զորախմբի միջուկի կազմակերպման ու ստեղծման գործին: Արևելյան՝ հայկական ուղղությամբ քեմալականների նպատակն էր՝ ասկյարին բերել ու կանգնեցնել նվազագույնը Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված սահ-

33 Տես **Հարությունյան Վ.**, Կարսի մարզը Հայաստանի..., էջ 139:

34 **Ֆարուխնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 152:

մանագծի վրա, ինչը ենթադրում էր Կարսի նահանգի հետգրավումը Հայաստանից: Եվ դրան հասնելու համար անհրաժեշտ ուղին ու մեխանիզմը Քեմալը հնչեցրել էր չափազանց պարզ և հասկանալի. «Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակը և հայկական պետությունը»<sup>35</sup>: Այնպես որ շարադրած փաստերից միանգամայն հասկանալի է, որ Սան-Ռեմոյի և դրան հաջորդած Սևրի «հողի» վրա մոտ ապագայում զինված բախումը քեմալական շարժման գորամիավորումների հետ դառնում էր անխուսափելի:

Իսկ քեմալական շարժումն արդյոք ունե՞ր այնքան ռեսուրսներ, որ կարողանար իրագործել իր «հայկական ծրագրերը»: Սկզբնական շրջանում, իհարկե, ոչ: Բայց մեկ տարվա ընթացքում այդ շարժումը դարձավ քաղաքական մի այնպիսի գործոն, որի հետ սկսեցին հաշվի նստել նույնիսկ հաղթող տերությունները: Քանզի «իմպերիալիզմի դեմ պայքարի» հողի վրա քեմալական շարժումը ամենամտերիմ հարաբերություններ հաստատեց բոլշևիկյան Ռուսաստանի հետ: Սկսած 1919 թ. մայիսից՝ քեմալաբոլշևիկյան շփումները ինտենսիվանում էին տարբեր մակարդակներում, իսկ 1920 թ. ապրիլի 26-ին՝ հենց Սան-Ռեմոյի կոնֆերանսի ավարտի օրը, Մուստաֆա Քեմալը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անունից իր հայտնի նամակն է հղում բոլշևիկյան առաջնորդ Վլադիմիր Լենինին, որտեղ առաջարկում է իր ծառայությունները Անտանտի դեմ համատեղ պայքար մղելու հարցում, այդ թվում նաև ընդդեմ «իմպերիալիստական Հայաստանի»<sup>36</sup>: Ընդ որում՝ ընդհուպ զինված ուժերը միավորելու և անհրաժեշտության դեպքում՝ միացյալ քեմալաբոլշևիկյան զորախմբով միասնական ռազմական գործողություններ իրականացնելու միջոցով<sup>37</sup>: Ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի քեմալականները գտան այդ ուժը, որը խոստացավ օգնել նրանց, խոստումն էլ կատարեց լիովին<sup>38</sup>:

Իսկ նույն Ռուսաստանում դեպքերը նույնպես զարգանում էին շատ արագ ու սրընթաց: Ցարական բանակի, այդ թվում նաև հայկական բանակում ծառայության անցած սպայության համար անհերքելի հեղինակություն և ռուսական հզոր պետականության վերականգման հույս ներշնչող Անտոն Դենիկինն այլևս տապալված էր: Նրան փոխարինելու եկած բարոն Վրանգելը վերահսկում էր ընդամենը Դրիմը և Հայաստանից արդեն շատ հեռու էր: Իսկ Անտոն Դենիկինի պարտվելուց հետո դեպի Կովկաս առաջ էին շարժվում այլ զորքեր: Այդ գնդերի առջևից քայլող նվազախումբը արդեն «Боже царя храни»-ի փոխարեն հնչեցնում էր «Ինտերնացիոնալը», իսկ երկգլխանի ռուսական արծվի փոխարեն այդ զորքի գլխավերևում փողփողում էր մուրճ ու մանգաղով կարմիր դրոշը: Հյուսիսը սկսել էր շառագունել. «... ռուսները, մի կողմից յիմարացնելով..., միուս կողմից կաշառելով մարդկանց, աղմկում էին հրապարակը կարմիր, բանվորութիւն, աշխատանք բացականչութիւններով և աստիճանաբար ներս սողում Կովկաս և նորից գրաւում իրանց շահաւետ և բուրալից անկիւնները... Ռուսները, բոլշեվիկ դիմակի տակ, ձգտում էին գրաւել Կովկասը, վերահաստատել այս-

35 Վ.Հարությունյան, Կարսի մարզը..., էջ 126:  
36 Վ.Հարությունյան, Կարսի մարզը..., էջ141-144:  
37 Տե՛ս նույն տեղում:  
38 Տե՛ս նշվ. աշխ., էջ 145-146, 427-434:

տեղ իրանց նախկին տիրապետութիւնը և միջոցների մէջ խտրութիւն չէին դնում»<sup>39</sup>:

Եվ նման իրադրության մէջ հայերի կողմից արդեն ինչ ուժային պարտադրանքի և այդ միջոցով պետության տարածքների ընդլայնման մասին կարող էր խոսք գնալ, երբ իրականությունն այն էր, որ նախևառաջ պետք է հոգ տանեին եղած պետական սահմանների պահպանման մասին: Իսկ դրա համար նախ պետք է կարողանային գինված դիմադրություն ցույց տալ թե՛ քենալական, թե՛ բոլշևիկյան ինտերվենցիոն զորաջոկատներին և միայն որոշ դրական արդյունքի հասնելու դեպքում մտածեին, ավելի ճիշտ՝ երազեին Տրապիզոնի ու Վանի մասին: Եվ վերջապես, ու՞մ դեմ էր կռվելու հայկական բանակը: Քենալական զորաջոկատների, բոլշևիկյան գնդերի, թե՛ նրանց միացյալ զորախմբի: Եվ իրականում կռվելն էր արդյոք: Առաջ անցնելով՝ ասենք բոլորիս համար հանրահայտ փաստը. կռվողը կռվեց ու լավ էլ կռվեց: Դրոն Սուրմալուի ճակատում նախ կանգնեցրեց և ապա հետ շարտեց քենալական զորքին և Սուրմալուից մենք ի վերջո գրկվեցինք ոչ թե այդ ճակատում պարտվելու, այլ «Կարս»-ի պատճառով: Զանգեզուրում Նժդեհը հաջողությամբ մարտնչեց թե՛ բոլշևիկյան գնդերի, թե՛ կողքից նրանց սատարող ադրբեջանցի ցարական զեներալ Ալի Աղա Շիխլինսկու զորքերի դեմ և հեռացավ միայն նրանից հետո, երբ անհերքելի երաշխիքներ ունեցավ, որ Զանգեզուրը կմիացվի ոչ թե կարմրած Ադրբեջանին, այլ Խորհրդային Հայաստանին: Այնպես որ մեր բանակի կռվել-չկռվելը, բացի ամեն ինչից, որոշվում էր նրանով, թե ով է նրան կռվի տանողը և մարտի դաշտում առաջնորդողը: Իսկ ամբողջ «հայկական կամպանիայի» ելքը, այդ ժամանակաշրջանի հայկական պետության լինել-չլինելը որոշվելու էր Կարսի ռազմավարական ուղղությամբ: Բայց հայկական բանակի Կարսի զորախումբը պատրաստ էր արդյոք մարտնչել հանուն հայկական պետության պահպանման: Ու՞մ դեմ էր այդ զորախումբը պատրաստ կռվել, ու՞մ դեմ չէր կռվի, կամ էլ կկռվեր առհասարակ, թե՛ ոչ:

Ինչպես քանիցս շեշտվել է, ցարական բանակից մեխանիկորեն Հայաստանի Հանրապետության բանակում հայտնված և այստեղ ծառայության անցած ռուսական բանակի սպաների, այդ թվում և ազգությամբ հայ սպաների, ճնշող մեծամասնության հայացքը միշտ էլ հառած է եղել դեպի հյուսիս: Այնտեղ՝ հյուսիսում էր ամեն ինչը՝ ուժ, հզորություն, պետություն, բանակ, իշխանություն... Ինչ էր այդ ամենի համեմատ թշվառ, ողորմելի և անհասկանալի Հայաստանն իբրև պետություն՝ լցված նույնքան էլ անհասկանալի ու ողորմելի իրենց արյունակիցներով: Այդ սպաները «քեֆները լավ ժամանակ» իրենց զգացմունքներին ազատություն էին տալիս և իրենց կարոտախտը «վասն Ռուսիո» փարատում էին նրա հիմքը՝ «Боже царя храни» երգելով և զեներալ Վրանգելի կենացը խմելով<sup>40</sup>:

Իսկ ինչպես էր «Հյուսիսի շառագունելն» անդրադառնում հայկական բանակի Կարսի զորախմբի տրամադրությունների վրա: Խոսքը, բնականաբար և առաջին հերթին, ռուսական բանակի նախկին սպայակազմի մասին է: Նախկինից եղած հենքը և տրամաբանությունը հուշում են, որ այդ

39 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 524, 567:

40 Տե՛ս Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 405, 406:

սպայակազմի տրամադրությունների մեջ տիրող գլխավոր գիծը իրենց ռուսաստանյան զորական համարելն էր, որը ժամանակավորապես ծառայում է Հայաստանում և սպասում է տարածաշրջան Ռուսաստանի վերադառնալուն: Բոլշևիկյան հաղթանակների ֆոնին դա ամենևին էլ չփոխվեց և նույնիսկ չսասանվեց:

Նախ՝ այդ սպաները և նույնիսկ Կարսի երկու գեներալները թունդ միապետական կերպարներ չէին, որ կտրականապես մերժեին բոլշևիզմը: Նրանց համար գլխավորը իրենց Ռուսաստանի հետ կապող պորտալարի պահպանումն էր: Իսկ թե որ Ռուսաստանի՝ միապետական, սահմանադրական թե՛ բոլշևիկյան,՝ արդեն էական չէր: Կարևորը՝ որ մնար Ռուսաստանի հետ կապող այդ պորտալարը: Կարևոր չէր, թե հատկապես որ գույնի Ռուսաստանի: Կարևոր էր, որ Ռուսաստանը կրկին տեր կանգնի իրենց: Ի վերջո, այդ սպայակազմը ոչ հին, ոչ էլ նոր Ռուսաստանի տերերի շարքում չկար և չէր էլ կարող լինել: Նրանք ընդամենը Ռուսաստանի հովանու տակ իրենց «սպահով զգացողներից» էին՝ միանգամայն օտար համարելով սեփական պատմական հայրենիքը՝ իր բազում խնդիրներով. «Իր հոգու խորքերում, այդ գեներալներից և գնդապետներից ամեն մեկը փայփայիւմ էր վերստին ռուսերեն հրամանատարելու երազը և շնչասպառ յետևում էր Ռուսաստանի անցքերին: Թէ՛ ո՞վ կը տապալվի այնտեղ և ո՞վ կը հաղթէ, այդ նորան հետաքրքրում էր, իհարկէ, այս և այն չափով, բայց և այնպէս նա տրամադիր էր նորից ընկնելու ռուս մեծ օվկիանոսը, ուր կարիք չէր լինի ոչ հայ լեզվի և ոչ հայ պատմութեան...: Այդպէս էր մեր հրամանատարութեան հոգեբանութիւնը...»<sup>41</sup>: Այդ հոգեբանության ու մտածելակերպի մի շարք բացահայտ դրսևորումներ ի հայտ եկան նախ 1920-ի մայիսյան բոլշևիկյան խռովության օրերին, և ամբողջապես ջրի երես ելան արդեն 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին՝ քեմալականների ներխուժման ընթացքում:

Միաժամանակ, Հայաստան ներթափանցած բոլշևիկյան գործակալները, շատ մատչելի ձևով բացատրում և խոստանում էին, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո նախկին ռուսական սպայությունը անգործ չի մնա և իր ծառայությունը կշարունակի արդեն բոլշևիկյան կարմիր զորքերում: Բուն Ռուսաստանում, ինչպես հայտնի է, այդ օրերին նման օրինակները հազարավոր էին: Եվ ի վերջո, շատ հեռու չգնանք.՝ հենց Կովկասի «հարցերը լուծող» 11-րդ Կարմիր բանակի միմյանց փոխարինած երկու հրամանատարները՝ Միխայիլ Լևանդովսկին և Անատոլի Գեկկերը, երկուսն էլ երեկվա ցարական շտաբ-կապիտաններ էին, երկուսն էլ «թիֆլիսեցի տղերք»: Այնպես որ Ռուսաստանը գալիս էր, և պետք էր դրան պատրաստ լինել: Իսկ ինչ էր անհրաժեշտ անել, որ այդ «մեծ վերադարձը» տեղի ունենա հնարավորինս արագ, սահուն և արդյունավետ: Շատ քիչ բան՝ ընդամենը չկովել, այն է՝ ժամանակին ապահովել հայկական զորախմբի կատարյալ քայքայումն ու անհրաժեշտ կապիտուլյացիան: Բոլշևիկյան այն է՝ ռուսական զորքերի դեմ չկովելը հասկանալի էր ինքնին: Նույնիսկ Դրոն մի դրվագով հայտարարել էր, թե ռուսների դեմ կովելն իր ուժերից վեր է: Մնում էին թուրքական-քեմալական զորքերը: Բայց քեմալականները բոլշևիկների, այն է՝ ռուսների հետ նույն քարշակին էին լծված: Այնպես որ,

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

41 Յարուբինեան Վ., Կարսի նահանգապետ..., 558:

ստացվում էր, որ թուրքերի դեմ կռվելը հավասարագոր է ռուսների դեմ կռվելուն: Ուրեմն հայկական բանակի Կարսի գորախմբի հրամանատարությունն առհասարակ չէր կռվելու և ոչ մեկի դեմ՝ ոչ բոլշևիկների՝ ռուսների և ոչ էլ քեմալականների՝ թուրքերի:

Այսինքն՝ եթե Դենիկիսի պարտությունները ինչ-որ մի պահ նույնիսկ առաջ էին բերել շփոթություն ռուսաստանյան հայ սպայության կազմում՝ տիրոջը կորցնելու առումով, ապա շատ արագ վիճակը վերականգնվում էր: Գաղափարական խնդիրների բացակայության պայմաններում նոր տիրոջը երկար փնտրելու և սպասելու անհրաժեշտություն չեղավ: Հայկական բանակի սպայության այդ հատվածը նոր տիրոջը՝ բոլշևիկներին, գտավ ու ենթարկվեց նրանց շատ արագ և, կարելի է ասել, սիրով: Զավեշտալի, բայց խիստ խորհրդանշական մի դիպված. երբ 1920-ի մայիսին Կարսում ու Սարիղամիշում հայտնվեցին բոլշևիկյան հեղկոմները՝ իրենց կարմիր դրոշներով, ապա Վրանգելի կենացն առաջարկող ռուսախոս հայ գնդապետներից մեկը արդեն խոնարհվում և համբուրում էր բոլշևիկյան կարմիր դրոշը... Իսկ Կարմիր բանակը Կովկասում անկասելիորեն շարժվում էր առաջ և Հայաստանի ու նրա զինված ուժերի համար, առաջին հերթին՝ Կարսի ուղղությամբ, մոտենում էին վճռական գործողությունների օրերը:

### 3. Քեմալաբոլշևիկյան դաշինքը և հայ բոլշևիկները

Մեր օրերում ամենամոդայիկ քաղաքական տերմիններից է «գունավոր հեղափոխություն» եզրույթը: Եվ ինչպես քաջ հայտնի է, այդ «գունավոր հեղափոխությունների» ամենամոլի հակառակորդն այսօր Ռուսաստանն է: Այս կապակցությամբ ժամանակակից ռուս պատմաբաններից մեկը շատ տեղին կատակել է, թե իրոք որ, «ամեն նորը լավ մոռացված հինն է»: Ռուսաստանը, չգիտես ինչու, մոռացել է, որ այս աշխարհում «գունավոր հեղափոխությունների» պրակտիկան ներդնողն ու իրագործողն առաջինը եղել է հենց ինքը՝ Ռուսաստանը, իսկ ավելի ճշգրիտ՝ բոլշևիկյան Ռուսաստանը, որի միջոցով որևէ երկրի իրեն ոչ հարմար իշխանությունը փոխարինել է իրեն հնազանդ, բառացիորեն խամաճիկ իշխանությամբ: Այն էլ՝ ոչ միայն արտաքին օժանդակության, այլ ուղղակի ուժային՝ ռազմական միջամտությամբ: Ճիշտ է, հետհոկտեմբերյան շրջանի այդ հեղափոխությունները թեև եղել են գունավոր, բայց ցավոք սրտի՝ միշտ մեկ գույնի՝ կարմիր<sup>42</sup>:

Այս «կարմիր» հեղափոխությունների ամենադասական իրագործումն Անդրկովկասում էր, ինչը ստացավ «խորհրդայնացում» անվանումը: Անդրկովկասի խորհրդայնացման գործընթացում Մոսկվայի հենակետը Կովկասում քաղաքացիական պատերազմի օրերին ստեղծված բոլշևիկյան Կովկասյան երկրամասային կոմիտեն էր (КАВКАЗСКИЙ КРАЕВОЙ КОМИТЕТ), որի ղեկավար մարմնի՝ Կովկասյան բյուրոյի (КАВБЮРО) անփոփոխ ղեկավարը Գ. Կ. Օրջոնիկիձեն էր: Իսկ Մոսկվայի կողմից այդ մարմնի «նայողն» ու Կովկասում նրա գործունեության հիմնական ուղղորդողը Ի.Վ. Ստալինն էր:

Ռազմական գերակշռությունն ու բիրտ ուժը՝ իրենց հերթին, բայց ան-

42 Տե՛ս **Квашонкин А. В.**, Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и общество, 2016, N 4, с. 432 – 456, տե՛ս նաև՝ **Квашонкин А. В.**, Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и общество, 2016, N 5, с. 586 – 610.

կախացած կովկասյան պետությունները վերանվաճելու համար բոլշևիկյան Ռուսաստանին անհրաժեշտ էր ներխուժումից առաջ տեղերում իրականացնել տվյալ պետության փլուզումը նախապատրաստող ու ապահովող որոշ «հողային աշխատանքներ»: Կոնկրետ Հայաստանի պարագայում այդ նախապատրաստական – քայքայիչ աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը դրված էր հայազգի համոզված-հաստիքային հակապետական տարրերի՝ հայ բոլշևիկների<sup>43</sup> և նրանց օժանդակելու նպատակով դրսից ուղարկվող այլազգի գաղափարական ընկերների վրա: Դա «...նախերգանքն էր այն աշխատանքների, որ պետք է կատարեին ռուս սվինները հայ դավաճանների առաջնորդությամբ Երևանում և մեր երկրի միուս մասերում»<sup>44</sup>: Առավել ևս, որ այդ ժամանակ Հայաստանում, ի տարբերություն հարևան Վրաստանի և Ադրբեջանի, բոլշևիկներն օրենքից դուրս չէին և շատ հաճախ նրանք նույնիսկ աշխատանքի էին ընդունվում երկրի պետական հաստատություններում: Ի դեպ, տնայնաբույծ, տեղական արտադրության բոլշևիզմ Հայաստանում չկար: Նույնիսկ մարքսիզմի դասական տեսության համաձայն Հայաստանում բացակայում էր բոլշևիզմի ծլարձակման համար փոքրիշատե նպաստավոր սոցիալ-քաղաքական բազան: Պատահական չէ, որ ժամանակակիցն անկեղծորեն գրում էր. «Թէ ինչ էր բոլշևիզմը և թէ ինչ դիմակի տակ էր գալիս ռուսը այս անգամ Կովկասում մենք չը գիտեինք»<sup>45</sup>:

1919-ի վերջերին-1920-ի սկզբներին ասպարեզ իջած «Արմենկոմ»-ում հաշվառված հայ բոլշևիկների մեծ մասը, հատկապես ղեկավար կազմը, այսպես թե այնպես դրսից եկածներ էին: Իսկ կազմակերպական առումով «Արմենկոմ»-ը հանդիսանում էր Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության ընդամենը մի բջիջը՝ մարզային կոմիտեի կարգավիճակով, և նրա անդամների թիվը ամենաձոխ հաշվարկներով ամբողջ Հայաստանում չէր հասնում հազարի<sup>46</sup>: Բնական հարց է առաջ գալիս, թե հանուն ինչի, ինչ պատճառներից ելնելով և ինչ նպատակներ հետապնդելով հայ մարդկանց այս համախումբը որդեգրեց այդ խիստ ժխտողական ու ավերիչ կեցվածքն ու դիրքորոշումը իրենց ազգային պետականության նկատմամբ: Բացատրությունը ավելի քան պարզ է ու միանգամայն հասկանալի. խորտակելով սեփական ազգային պետականությունը և դարձնելով այն Խորհրդային Ռուսաստանի կցորդ՝ բոլշևիկյան կադրերը հնարավորություն էին ստանում տեղեր գրադեցնելու թեև արդեն հակամիապետական, բայց միևնույնն է՝ մեծապետական և ծավալապաշտական, աշխարհում ամենահզորներից մեկի՝ ռուսական նոր իշխանական վերնախավի շարքերում, առնվազն՝ տեղական ղեկավարների մակարդակով: Էլ չենք խոսում ավելի հեռանկարային հնարավորությունների մասին, ինչպես դա եղավ, ասենք, մի շարք կովկասյան, այդ թվում և հենց հայ բոլշևիկների պարագայում, որոնք հասան բոլշևիկյան Ռուսաստանի ամենաբարձր իշխանական էջերուններ: Միանգամայն կանխատեսելի էր և նույնիսկ բնական, որ հանդիսանալով ընդհանուր՝

43 Տե՛ս Հարությունյան Վ., Կարսի մարզը Հայաստանի..., էջ 120-127:

44 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 510:

45 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 575:

46 Տե՛ս Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը 1919-1920 թթ. Փաստաթղթերի ժողովածու, աշխատասիրությանը Վլադիմիր Հարությունյանի, Եր, 2014, 420 էջ (հետայսու՝ Հարությունյան Վ., Հայ բոլշևիկների...) էջ 101:

համառուսաստանյան բոլշևիկյան կուսակցության տեղական կառույցը, հայ բոլշևիկները Կովկասում, իսկ առաջին հերթին՝ Հայաստանում, քեմալա-բոլշևիկյան դաշինքի ծրագրերի ու նպատակների իրիականացման տեսանկյունից պետք է ունենային իրենց ուրույն տեղն ու պարտականությունները:

**«Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակը և հայկական պետությունը»**,– այս ծրագրային դրույթի հեղինակը, ինչպես արդեն նշել ենք, Մուստաֆա Քեմալն էր:

«...միտքը «Մեծ, Միացյալ և Անկախ Հայաստանի» մասին հանդիսանում է խիստ հետադիմական, վտանգավոր ու հանցավոր քիմերիկ մի գաղափար, որի դեմ պետք է պայքար ծավալի բոլշևիկյան կուսակցությունը...»,- իսկ այս ծրագրային դրույթի հեղինակը հայ բոլշևիկ Անաստաս Միկոյանն էր<sup>47</sup>:

Ինչպես տեսնում ենք, չնայած ընտրված թիրախի աշխարհագրական սահմանների որոշ տարբերությանը, էությանը երկու դրույթներն էլ նույնն էին՝ բացառել անկախ հայկական ազգային պետության գոյության հնարավորությունը: Ընդ որում՝ թուրք գործիչ Մուստաֆա Քեմալի մոտեցումը միանգամայն պարզ էր ու հասկանալի. նա ձգտում էր պարտված Թուրքիայի բեկորներից կազմել–հավաքել նոր Թուրքիա և այդպիսով անհետացման սպառնալիքից փրկել ու վերականգնել թուրքական պետականությունը: Եվ այդ ծրագրի իրացման ձանապարհին քեմալականներին անհրաժեշտ էր իրոք ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը: Մուստաֆա Քեմալը, նաև հայ բոլշևիկների օժանդակությամբ, ի վերջո իրագործեց այդ ծրագիրը և հասավ իր նպատակին:

Իսկ ի՞նչ նպատակ էին հետապնդում հայ բոլշևիկ Անաստաս Միկոյանը և իր հայ կուսակիցները: Տասնամյակներ շարունակ, ներառյալ մեր օրերը, ոմանք տքնում են ներկայացնել այդօրվա հայ բոլշևիկներին որպես գաղափարակիրների և ինչ–ինչ կարևոր գործեր իրականացնողների: Բայց չգիտես ինչու համառորեն շրջանցվում է այն պարզ իրողությունը, որ իրականում, այդ անձինք, առատորեն ֆինանսավորվելով և հենվելով մի հզոր տերության ուժի վրա, պայքար էին մղում իրենց հայրենիքի՝ օտարների կողմից դեռևս «չիրացված» բեկորներից մի կերպ կազմված–հավաքված հայկական պետականության ոչնչացման համար: Բացի այդ գնով խորհրդային իշխանական Էլիտայի շարքերում ընդգրկվելը՝ որևիցե այլ մոտիվ գտնել ու նշել նրանց գործողություններում, պարզապես հնարավոր չէ: Թերևս, որպես գաղափարական ֆոն, կարելի է ավելացնել միայն հայտնի սպեկուլյացիաները համաշխարհային հեղափոխության և Արևելքի ժողովուրդների ազատագրման վերաբերյալ:

Բնական է, որ Կարմիր բանակի առաջ շարժվելուն զուգընթաց պետք է ակտիվանար և կանոնակարգվեր հայ բոլշևիկների գործունեությունը հայկական պետականության թուլացման ուղղությամբ: Անհրաժեշտ միջոցներ «կենտրոնից» տրամադրվում էին. «Դեռ 19 թվի վերջերում այստեղ ու այն–

47 Տե՛ս Հարությունյան Վ., Կարսի մարզը Հայաստանի..., էջ.123, Հարությունյան Վ., Հայ բոլշևիկների... էջ 78–82,



տեղ խոսում էին, որ Մոսկվան մեծ գումարներ է ուղարկել մեր երկիրը»<sup>48</sup>: Նրա ուղարկած քարոզիչները վստահ կերպով պնդում էին, թե ներկայացնում են Ռուսաստանը և խոսում են Ռուսաստանի օրվա իշխանությունների անունից: Եվ քարոզում էին հետևյալ գաղափարները. ռուսը կրկին գալիս է, իր հետ բերում է պատերազմի ավարտ ու խաղաղություն, կայունություն, հաց, մթերք, կարգ ու կանոն: Հայերիս համար մտահոգիչ թուրքերի գործոնը խնդիր չէ: Թուրքերն էլ այժմ ռուսների հետ են և գալիս են ոչ թե հային կոտորելու, այլ ընդամենը դաշնակներին քշելու և ռուսին օժանդակելու՝ հայոց երկրում խաղաղություն, կարգ ու կանոն հաստատելու համար: Եվ առհասարակ, Հայաստանին և հային անվտանգ, ապահով ու հանգիստ կյանք կերաշխավորեն բոլշևիկների իշխանությունը և թուրքերի ու Ադրբեյջանի հետ մեր եղբայրանալը: Իսկ այդ դրախտին շուտափույթ հասնելու համար անհրաժեշտ է, որպեսզի հայոց բանակը չկռվի, ժողովուրդն էլ չլիանգարի թուրքերի ու բոլշևիկների առաջխաղացմանը<sup>49</sup>:

Բանակում և հասարակությունում տիրող վերը նկարագրած մթնոլորտը չափազանց բարենպաստ էր հյուսիսից եկող այդ ազդակներն ընդունելու և կլանելու համար: Թե՛ սպայակազմի վերը նշված հատվածի, թե՛ ժողովրդի համար այդ օրերին և այդ իրավիճակում բոլշևիզմը նախևառաջ ռուսն էր, իսկ ռուսը՝ նախկին ընկալմամբ, կարգ ու կանոն էր, խաղաղություն, ապահովություն: Ամենակարևորը, նույնպես հին ընկալմամբ՝ ռուսը «թուրքի դեմն առնողն էր», թեև այս անգամ՝ թուրքի հետ եղբայրանալու միջոցով: Եվ ըստ հայ բոլշևիկների՝ հայի պարտքն էր չխոչընդոտել այդ եղբայրության ծրագրերի իրագործմանը:

Թե՛ թուրքի գալուն, թե՛ ռուսի գալուն, ինչ կերպարանքով էլ նրանք ներկայանային այդ պահին, կտրականապես դեմ էին Հայաստանի Հանրապետությունում ապաստանած արևմտահայերը: Քանզի տեսել էին թե՛ թուրքի խերը, թե՛ նաև ռուսի խերը, երբ վերջիններս իրենց գործի «ստրատեգիական» առաջ-հետ-առաջ տեղաշարժերով հասել էին Արևմտյան Հայաստանի այն շրջանների վերջնական հայաթափմանը, ինչը չէին հասցրել իրականացնել թուրքերը: Իսկ գրաված շրջաններում էլ ռուսները, փաստորեն, արգելում էին հայերին վերադառնալ իրենց տները, քանզի, ինչպես արդեն նշվել է, պլանավորված էր այդ տարածքները բնակեցնել ռուս էթնոսով: Այնպես որ արևմտահայերի և արևելահայերի վերաբերմունքը հյուսիսի հանդեպ նույնը չէր և առկա էին մոտեցումների տարբերություններ: Բայց հայ բոլշևիկները այդ իրավիճակն էլ ճարպկորեն շահարկում ու ծառայեցնում էին իրենց նպատակների համար: Խաղաղով մարդկանց ցածրագույն բնագոյների վրա և իրար դեմ հանելով նույն ազգի երկու հատվածները, նրանք իրենց կողմն էին գրավում արևելահայ մեծամասնությանը և տեղի մահմեդականությանը: Բոլշևիկները տեղաբնիկ արևելահայությանն ու մահմեդական տարրին սադրում էին, որ արևմտահայերին անհրաժեշտ է ստիպել, որ թողնեն-գնան Արևմտյան Հայաստան, այսինքն՝ դեպի անխուսափելի սպանդ, կամ էլ, եթե մնում են, ապրեն որպես փախստական՝ միայն նպաստի միջոցներով, որ կառավարության կողմից նրանց տրամադրած

48 Յարոլթինեան Վ., Կարսի նահանգապետ..., նույն տեղում:  
49 Տե՛ս Ներսիսյան Ա., Կարո Սասունի, եր., 2009, էջ 165-170:

վարելահողը, սերմացուն և ամեն ինչը պետք է հետ վերցնել ու բաժին հասցնել արևելահայերին ու մահմեդականներին<sup>50</sup>: Երկրի հասարակության ու բանակի մի զգալի մասը, որ թաթախված, ներգրավված ու արդեն խրված էր պետականությունը քայքայող գործընթացների մեջ և այդ ամենից դուրս գալու ուղիներ ու հնարավորություն էլ չէր տեսնում, հյուսիսից եկած ազդակները սկսեց ընկալել որպես ստեղծված իրավիճակից հնարավոր, և ամենակարևորը՝ մեծ ձիգեր չպահանջող ուղի: Բայց թե որն էր լինելու դրա համար վճարվելիք իրական գինը, այդ ուղղությամբ խորանում ու իրենց հաշիվ էին տալիս շատ քչերը: Դեպքերի ընթացքն այնպիսին էր, որ ներսից՝ տարբեր խավերի լուռ, բայց իր էությամբ հանցավոր համաձայնությամբ իրականացվող պետականության տարուբերման ֆոնի վրա, «ձիշտ ժամանակին ու ձիշտ տեղում» հայտնվեցին օտարի ձեռքից կերակրվող և նրա կողմից գործուղված ու կառավարվող հայ բոլշևիկները: Նրանց ասպարեզ գալը և հասարակության ամենևին ոչ միարժեք կարծիքը պղտորելն ու փոթորկելը, երկրի ներսում «հինգերորդ շարայուն» կազմակերպելն ու այն գործի դնելը օտար ուժերի համար խիստ դյուրին էին դարձնում հայկական անկախ պետականության ոչնչացումը:

Հասկանալի է, որ քենալաբոլշևիկյան ծրագրի՝ Հայաստանին վերաբերող հատվածի իրականացման համար որպես գործունեության առավել կարևոր ու արդյունավետ ասպարեզ առաջին հերթին ընտրվելու էր հայկական բանակը: Այն որպես առաջնային թիրախ ընտրելը պայմանավորված էր երկու հանգամանքով. պետությունը օտար ներխուժման առաջ պաշտպանվելու անընդունակ դարձնելու համար անհրաժեշտ էր նախ քայքայել և կազմալուծել բանակը, երկրորդ հանգամանքն այն էր, որ հայկական բանակի նախկին ռուսաստանյան սպայակազմի գերակշռող մասն իրեն առաջվա նման համարում էր Ռուսաստանի, այլ ոչ թե Հայաստանի զորական: Իսկ Ռուսաստանը ներկայացնողներն այդ օրերին բոլշևիկներն էին, որոնց շարքերում հայերի կողքին «վճռական» դեպքերից առաջ հայտնվել էին նաև բազմաթիվ ռուսներ ու հրեաներ: Հակապետական գործունեություն ծավալելու համար ամենևին երկրորդական չէր նաև այն հանգամանքը, որ հայկական բանակի կրտսեր զինվորականների շարքերում հանդիպում էին նախկինում Կարմիր բանակում ծառայած հայ զինվորներ, կրտսեր պետական ծառայողներ<sup>51</sup>:

#### 4. 1920-ի Մայիսյան խռովությունները Հայաստանում և Կարսի նահանգը

Անդրկովկասում առաջինը, ինչպես հայտնի է, քենալականների անմիջական աջակցությամբ ու մասնակցությամբ խորհրդայնացվեց Ադրբեջանը: 1920 թ. ապրիլի 28-ին բոլշևիկյան զորքերը մտան Բաքու և բառացիորեն ժամեր անց Օրջոնիկիձեի անմիջական նախաձեռնությամբ ու մասնակցությամբ դիվանագիտական, գաղափարական և տեղեկատվական ճակատներով Հայաստանի Հանրապետության դեմ սկսվեց լայնածավալ հարձակում<sup>52</sup>:

50 Տե՛ս Ներսիսյան Ա., Կարո Սասունի, նույն տեղում:

51 Տե՛ս Հարությունյան Վ., Հայ բոլշևիկների..., էջ 19,20, 35-42:

52 Տե՛ս Квашонкин А.В., Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и

Տեղ-տեղ նկատվում էին նաև ռազմական սադրանքներ: Ընկեր Սերգոն՝ նույն ինքը Գրիգորի Օրջոնիկիձեն, մտադրված էր «ձեռքի հետ» միանգամից իրականացնել նաև Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը և հնարավորինս արագ ավարտել բոլշևիկյան Ռուսաստանի «կովկասյան կամպանիան»: Չանտեսենք, որ նույնիսկ ամենաբացաշունչ բոլշևիկն էլ, իսկ ընկեր Սերգոն հենց ամենաբացաշունչներից էր, գուրկ չէ մարդկային թուլություններից: Ադրբեջանի համեմատաբար սահուն խորհրդայնացումը շատ էր ոգևորել կովկասյան բոլշևիկների առաջնորդին, և նա շտապում էր գործը հնարավորինս արագ հասցնել ավարտին և դառնալ Կովկասի կարմիր փոխարքա: Նա արդեն հեռագրում էր Մոսկվա՝ պահանջելով իրեն օժտել տեղում կովկասյան կառավարություն՝ СОВНАРКОМ-ԺՈՂԿՈՄՍԻՈՐԸ կազմելու և այն գլխավորելու լիազորություններով<sup>53</sup>: Բայց Մոսկվայում այլ կերպ էին մտածում: Եթե Ադրբեջանի պարագայում անձամբ Լենինն էր շտապեցնում Օրջոնիկիձեին և 1920 թ. մարտի 17-ին հեռագրում էր նրան, թե «Взять Баку нам крайне, крайне необходимо...» («Մեզ համար ծայրահեղ, ծայրահեղ անհրաժեշտ է վերցնել Բաքուն...»)<sup>54</sup>, ապա դրանից հետո անմիջապես բոլշևիկյան գինուժի միջոցով Հայաստանն ու Վրաստանը «կարմրացնելու» գործողությունները Կրեմլում մի շարք հիմնավորումներով համարում էին ժամանակավրեպ: Այստեղ ոչ միայն չէին կիսում Օրջոնիկիձեի մտադրությունները, այլ նույնիսկ բավականին մտահոգված էին «կովկասյան ընկերների» նման խանդավառությամբ ու բավականին կտրուկ քայլեր էին ձեռնարկում նրանց այդ ինքնագործունեությունը զսպելու և կանխելու ուղղությամբ<sup>55</sup>:

Բայց եթե Վրաստանը խորհրդայնացնելու մտքից Օրջոնիկիձեն 1920-ի մայիսին ժամանակավորապես «ձեռք քաշեց», ապա Հայաստանի խորհրդայնացման հարցում նա չէր ցանկանում սպասել: Հայաստանի պարագայում առաջ էր եկել մի լրացուցիչ հանգամանք, որի պատճառով ընկ. Սերգոն Հայաստանի խորհրդայնացումը չէր ցանկանում հետաձգել: Հարցն այն էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ձեռքին ունենալով Սան-Ռեմոյի կոնֆերանսի, այն է՝ հաղթող տերությունների որոշումները, ինքն էլ որոշեց, որ արդեն իսկական ժամանակն է բոլոր առումներով կարգավորելու հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ և 1920 թ. ապրիլի վերջերին-մայիսի սկզբներին Մոսկվա՝ բոլշևիկների հետ բանակցելու գործուղեց Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությանը: Թե ինչ «արդյունք» արձանագրեցին հայ-բոլշևիկյան այդ վայ-բանակցությունները հայտնի է բոլորին, սակայն արդեն պատվիրակության Մոսկվա մեկնելու հարցն ինքնին խիստ մտահոգել էր «կովկասյան ընկերներին»: Օրջոնիկիձեն խիստ ջղաձգված ու սպառնալից տոնով հեռագրում էր. «...имейте ввиду, что если Вы с Арменией заключите мир, это будет нечто ужасным для мусульман...» («...նկատի ունեցեք, որ եթե Դուք Հայաստանը հարցնում եք, ապա Հայաստանի խորհրդայնացման հարցում նա չէր ցանկանում սպասել: Հայաստանի պարագայում առաջ էր եկել մի լրացուցիչ հանգամանք, որի պատճառով ընկ. Սերգոն Հայաստանի խորհրդայնացումը չէր ցանկանում հետաձգել: Հարցն այն էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ձեռքին ունենալով Սան-Ռեմոյի կոնֆերանսի, այն է՝ հաղթող տերությունների որոշումները, ինքն էլ որոշեց, որ արդեն իսկական ժամանակն է բոլոր առումներով կարգավորելու հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ և 1920 թ. ապրիլի վերջերին-մայիսի սկզբներին Մոսկվա՝ բոլշևիկների հետ բանակցելու գործուղեց Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությանը: Թե ինչ «արդյունք» արձանագրեցին հայ-բոլշևիկյան այդ վայ-բանակցությունները հայտնի է բոլորին, սակայն արդեն պատվիրակության Մոսկվա մեկնելու հարցն ինքնին խիստ մտահոգել էր «կովկասյան ընկերներին»: Օրջոնիկիձեն խիստ ջղաձգված ու սպառնալից տոնով հեռագրում էր. «...имейте ввиду, что если Вы с Арменией заключите мир, это будет нечто ужасным для мусульман...» («...նկատի ունեցեք, որ եթե Դուք Հայաստանը

общество, 2016, N 4, с. 436,438, տե՛ս նաև՝ А.В.Квашонкин, Советизация Закавказья..., էջ 169, տե՛ս նաև՝ Վ.Հարությունյան, Հայ բոլշևիկների...էջ 103-106,151-155, 181,182,200, 249-252:

53 Տե՛ս Квашонкин А.В., Технология «красных революций» в Закавказье в начале XX в., «Политика и общество», 2016, N 4, с. 436,437.

54 Նույն տեղում, էջ 435

55 Տե՛ս նույն տեղում, էջ 437- 440, 443,444,446.

**տանի հետ խաղաղություն կնքեք, մահմեդականների համար դա կլինի ինչ-որ սարսափելի մի բան»<sup>56</sup>**: Իսկ մեկ այլ հեռագրում էլ առաջարկվում էր հայկական պատվիրակությանը՝ Մոսկվա ժամանելուն պես պարզապես... ձերբակալել<sup>57</sup>:

Միանգամայն հասկանալի է, որ ՀՀ պատվիրակության մոսկովյան ուղևորությունը խիստ մտահոգիչ էր, նախևառաջ և հատկապես, հայ բոլշևիկների համար: Առավել ևս, որ հայկական պատվիրակությանն ընդունել-չընդունելու և բանակցային օրակարգի վերաբերյալ մոսկովյան տերերը հայ բոլշևիկներին չէին տեղեկացրել և, առհասարակ, որևիցե կերպ այդ հարցում վերջինների գոյությունը հաշվի չէր առնվել: Եվ հայ բոլշևիկներին այլ բան չէր մնում, քան Շանթի պատվիրակության մեկնելու օրվանից սկսած և մինչև նրա ամբողջովին ձախողված վերադառնալը, հիստերիա ու վայնասուն բարձրացնել, թե պետք է մերժել հայկական կողմից եկած շփվելու բոլոր առաջարկները և, իհարկե, հարցը լուծել ավանդական բոլշևիկյան կարգով՝ «...մինչև դաշնակցական գարշանքի վերջնական ոչնչացումը...»<sup>58</sup>: Այնպես որ՝ զուգադիպություն էր դա, թե նախախնամություն, բայց 1920 թ. մայիսի առաջին օրերին առկա էին երկու գործոններ, որոնք հայ բոլշևիկներին պետք է մղեին «վճռական գործողությունների»․ մեկը Ադրբեջանի համեմատաբար հեշտ ստացված խորհրդայնացման ոգևորող օրինակն էր, մյուսը՝ Հայաստանի կառավարության և Մոսկվայի միջև հանկարծ ինչ-ինչ պայմանավորվածությունների ձեռք բերման դեպքում իրենց լուսանցքում հայտնվելու վտանգը: Տրամաբանական է, և դեպքերի ընթացքն էլ ցույց տվեց, որ գործոն դառնալու և լուսանցքում չհայտնվելու փոխարեն պահանջված լինելու համար հայ բոլշևիկների առնվազն առավել անհամբեր ու ծայրահեղական հատվածին անհրաժեշտ էր երկուսն սադրել հակամարտ մի իրավիճակ: Այնպես որ տրամաբանորեն հենց սրանք պետք է համարել 1920 թ. մայիսին հայ բոլշևիկների կողմից կազմակերպված հակապետական խռովության իրագործման դրդապատճառները: Հաշվարկը շատ պարզ էր՝ հաջողության դեպքում իշխանությունն անցնում էր իրենց ձեռքը, Մոսկվան այդ ամենին տեր էր կանգնում, և արդեն Շանթի պատվիրակությունը ինքն էր հայտնվում լուսանցքում, իսկ ամենահավանականը՝ բանտում: Անհաջողության դեպքում հայաստանյան կառավարության կողմից անխուսափելի էր դառնում պատժիչ միջոցների կիրառումը, ինչը կարելի էր շատ նպաստավոր ձևով շահարկել և օգտագործել հայ-ռուսական բանակցություններում որպես կարևոր խաղաքարտ: Ինչպես հայտնի է, աշխատեց երկրորդ՝ անհաջող ելույթի տարբերակը, և դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ հայ բոլշևիկների դեմ կիրառված «անասելի բռնությունների» առասպելը, իրոք, օգտագործվեց ավելի քան նպատակային ու արդյունավետ<sup>59</sup>:

56 Квашонкин А. В., Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и Общество, 2016, N 4, С. 437.

57 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 361, թթ. 13,14, տե՛ս նաև՝ **Հարությունյան Վ.**, Հայ բոլշևիկների..., էջ 251-252, տե՛ս նաև՝ **А.В. Квашонкин**, Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и общество, 2016, N 4, С. 441.

58 ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 68, թթ. 13,14, **Հարությունյան Վ.**, Հայ բոլշևիկների..., էջ 259-261:

59 Առաջ անցնելով՝ նշենք, որ բոլշևիկյան քարոզչությունը, առաջին հերթին հենց հայ բոլշևիկների ձեռամբ, 1920 թ. հետմայիսյան շրջանում բառացիորեն հակահայաստանյան հիստերիա էր բարձրացրել՝

1920 թ. մայիսին հայ բոլշևիկները ընդգծված հակապետական խռովության փորձ ձեռնարկեցին: Խռովությունը, կամ ինչպես խորհրդահայ պատմագրությունում է ընդունված՝ ապստամբությունը ղեկավարելու համար Ղազախ-Դիլիջանից մինչև Սուրմալու և Նոր-Բայազետից մինչև Զանգեզուր ստեղծվել էին ռազմական հեղափոխական կոմիտեներ՝ ռազմհեղկոմներ<sup>60</sup>:

Այդօրվա հայկական պետությունը թուլացնելու և տապալելու գործում, ինչպես քանիցս շեշտվել է, առանցքային թիրախը Ալեքսանդրապոլ-Կարս ռազմավարական ուղղությունն էր: Ուստիև, չխորանալով ՀՀ մյուս հատվածներում մայիսյան հակապետական ելույթների մեջ, անդրադառնանք միայն նրան, թե ինչպես զարգացան մայիսյան դեպքերը հատկապես Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ: Խռովարարների կենտրոնական մարմինը՝ Հայաստանի հեղափոխական կոմիտեն՝ Հայհեղկոմը, տեղակայվել էր Ալեքսանդրապոլում: «Տեղական» հեղկոմներ ստեղծվել էին նաև Կարսում և Սարիղամիշում<sup>61</sup>: Ալեքսանդրապոլ-Կարս-Սարիղամիշ գծով, հայկական բանակի տարբեր զորամասեր՝ իրենց սպայակազմի ու շարքային համակազմի որոշ մասերով ակնհայտորեն թեքվել էին խռովարարների կողմը: Մասնավորապես՝ Կարսի ռազմհեղկոմի հինգ անդամներից երկուսը՝ շտաբ-կապիտան Մելիքյանը և հրետանավոր զինվոր Բայթունին, տեղի կայազորից էին: Ըստ բոլշևիկյան զեկույցների՝ Կարսի կայազորի 800 սվիններից 400-ից ավելին պատրաստականություն էր հայտնել հանդես գալու բոլշևիկների կողմից՝ ընդդեմ երկրի կառավարության<sup>62</sup>: Իսկ եթե խոսենք ավելի որոշակի, ապա. «Շատ բնորոշ է, որ Կարսի նահանգում այդ շարժումը առաջ [եկավ] միայն և միայն զօրամասերում և այն էլ այն գնդերում, ուր հրամանատարությունը ռուսախօս էր և օտար հայ զինվորին»<sup>63</sup>:

Իրոք, Կարսի նահանգում հայ բնակչությունը խռովարարներին որևիցե աջակցություն չցուցաբերեց: Ավելին, երիտասարդությունը՝ աշուղ Զիվանու որդի Պարույր Լևոնյանի գլխավորությամբ, քաղաքում ստեղծեց «Փրկության կոմիտե», որն իր շուրջն սկսեց հավաքել քաղաքացիական բնակչությանը: Հակառակ հայերին, հակապետական խռովությանը միանգամից աջակից ու կողմնակից դարձան և բոլշևիկների հետ իրենց համերաշխությունը հայտնեցին տեղի մահմեդական, հունական և ռուսական ազգային խորհուրդները. «Այս խռովարարները յարաբերութեան մէջ էին մտել բացի ռուսներից, թուրքերի, քրդերի և յոյների հետ, հայկական իշխանութեան տապալման ծրագիր մշակել»<sup>64</sup>: Սակայն զանգվածային աջակցություն խռովարարներին այդ ազգությունների կողմից նույնպես չցուցաբերվեց:

Հայաստանում իբր հարյուրավոր և նույնիսկ երկու հազար գնդակահարված բոլշևիկների մասին: Մինչդեռ հենց բոլշևիկյան աղբյուրների բերած տվյալները հետևյալն են. 1920-1921 թթ. կառավարության հրահանգով գնդակահարված, ապստամբական մարտերում և Հայաստանում քաղաքացիական կռիվներում զոհված Մայիսյան խռովության մասնակիցների ընդհանուր թիվը կազմում էր 46 մարդ, տես Վ.Հարությունյան. Հայ բոլշևիկներ..., էջ 217-220, 254: Հարկ է նաև նշել, որ խռովության առաջնորդները՝ Ս.Սիւսայեյան, Բ.Արրիբջանյան և այլք գնդակահարվեցին միայն այն բանից հետո, երբ Բաքվում բոլշևիկները առանց որևիցե հիմքերի գնդակահարեցին հայ բոլշևիկների ձեռքով Հայաստանից առևանգված և Բաքվի բոլշևիկներին հանձնված թվով վեց հայ կառավարական ու զինվորական պաշտոնյաների:

60 Տես Հարությունյան Վ., Հայ բոլշևիկներ..., էջ 109-122:  
61 Տես նշվ. աշխ... էջ 114, 115, 118, 119:  
62 Տես ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 154, թ. 1-4, Հարությունյան Վ., Հայ բոլշևիկներ..., էջ 147-150:  
63 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 538:  
64 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 539, Հարությունյան Վ., Հայ բոլշևիկներ..., էջ 132-144, 147-150:

Սարիղամիշում նույնպես խռովությունը հիմնված էր գինվորականության վրա: Ընդ որում այստեղ էլ հակապետական ելույթի հեղինակներն էին ռուսախոս սպաները. «Շատ բնորոշ է, որ և Սարիղամիշում ըմբոստացան այն զօրամասերը, ուր հրամանատարությունը ռուսախոս էր...»<sup>65</sup>: Այստեղի ռազմհեղկոմի կազմում էր կրտսեր սպա Լիպարիտ Մխչյանը<sup>66</sup>, ում հեղկոմը նշանակեց Սարիղամիշի կայազորի կարմիր զորքերի հրամանատար: Բացահայտ հակապետական գործողություններ էր կազմակերպում կապիտան Չմշկյանը: Դեպքերի մասնակից մի բոլշևիկ գինվորականի վկայությամբ, ոչ բացահայտ, սակայն իրականում հակապետական տարրերի կողմն էր անցել նաև Սարիղամիշում տեղակայված 4-րդ գնդի հրամանատար գնդապետ **Ա. Միրիմանյանը**<sup>67</sup>: Խռովությունը Սարիղամիշում եղավ ամենաերկարատևը՝ մինչև մայիսի 18-ը: Խռովարարները նույնիսկ հասցրել էին բեռնատար վագոնից զրահագնացք կառուցել: Ի դեպ՝ Սարիղամիշին վերաբերող ուշագրավ մի փաստ. այստեղի հեղկոմի հինգ անդամներից երկուսն ունեին սլավոնական ազգանուններ. Կուխնալակին Պավել, Մատիչկո Պյոտր: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք ոչ հայկական բանակի գինվորականներ էին և ոչ էլ տեղի ռուս աղանդավորական: Ամենայն հավանականությամբ նրանք պարզապես եկած, ավելի ձիշտ՝ ուղարկված «ընկերներից» էին:

Իսկ ինչպիսի դիրքորոշում ու կեցվածք դրսևորեցին այդ օրերին նահանգային իշխանություններն ի դեմս իրենց բարձրագույն ղեկավարության: Քաղաքացիական նահանգապետի դիրքորոշումը միաբժեքորեն երկրի օրինական կառավարության կողմն էր: Նա կանգնած էր անկախ ազգային պետականության պահպանման դիրքերում: Իր վաղեմի ծանոթ, այդօրվա Հայհեղկոմի անդամ, բժիշկ Արտաշես Մելքոնյանը նրան մի մեծ նամակ էր ուղարկել, առաջարկելով անցնել խռովարարների կողմը, և հետագայի համար խոստումներ ու երաշխիքներ էր տալիս իր հնարավորությունների շրջանակում: Եղել էր նաև շատ կոնկրետ առաջարկ. «Խնդրում եմ Ձեզ մնալ Ձեր պաշտօնում և միննոյն ժամանակ ստանձնել խորհրդային իշխանությունների գործերի կոմիսարի պաշտօնը: Բժիշկ Արտաշես Մելքոնեան»<sup>68</sup>: Սակայն քաղաքացիական նահանգապետի կողմից առաջարկը կտրակա՛նապես մերժվել էր. «...Ես մնում եմ իմ տեղում և հայրենի իդեալների հետ. Նահանգապետ Ղորղանեան»<sup>69</sup>:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլ-Կարս գորախմբի բարձրագույն հրամանատարական կազմին, ապա Ալեքսանդրապոլում գեներալ **Խաչատուրովը** բացահայտորեն անցել էր բոլշևիկների կողմը, ինչի համար էլ սպանվեց տեղի դաշնակցականների ձեռքով: Իսկ Կարսում, ինչպես վկայում են փաստերը, գեներալներ **Փիրումյանն** ու **Հովսեփյանը** խռովության օրե-

65 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 539:

66 Լիպարիտ Մխչյանը ծնունդով Կարսից էր, ծառայել էր ռուսական բանակում, բոլշևիկյան կուսակցության անդամ էր 1917-ից:

67 Տե՛ս Հայկական ճարտարապետության ուսումնասիրության հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ, հուշագրական ժառանգություն, հ. 14, էր., 2011, էջ 57, 58: Այստեղ անհրաժեշտ է հստակեցնել, որ խոսքը գնդապետ **Ալեքսանդր Միրիմանյանի** մասին է, որը Սարիղամիշում տեղակայված 4-րդ գնդի հրամանատարությունը ստանձնել էր **Կարապետ Հասան-Փաշայանից** հետո:

68 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 547:

69 Նույն տեղում, էջ 549:

րին անհայտացել էին ու լքել ասպարեզը. «Զօրաց շարքերում մայիսին տեղի ունեցած առաջի խռովություններին իսկ Կարսի երկու գեներալները այլևս հրամանատար չէին, գեթ այդպես էին իրանց ձևացնում հենց իրանք, գեներալները, առարկելով, որ զօրքը չի լսում և չէ հնազանդվում իրանց... զօրքերի հրամանատար գեներալ Փիրումով յայտարարեց, որ զօրքը ամբողջովին անցել է խռովարարների կողմը և հրամանատարությունը միանգամայն անգոր է ճնշելու ապստամբությունը... Գեն. Յովսեփեան այդ օրերում միանգամայն չեզօքացրել էր իրան զօրքից, առարկելով, որ զինվորները չեն լսում իրան... Որպես գործնական և հեռատես մարդ՝ նա այդ օրերում շրջում էր արդեն առանց սրի...»<sup>70</sup>:

Ի դեպ, Կարսի կայազորում խռովության նախաձեռնողն ու հակապետական կեցվածքով առավել ակտիվ զորամասերից մեկը եղել է անմիջականորեն գեներալ Հովսեփյանի ենթակայության տակ գտնվող պահակապարեկային վաշտը. «Ամենից առաջ ընթուստացաւ և ապստամբվեց գեներալ Յովսեփեանի թիկնապահ վաշտը: Նա միացաւ այդ խռովութեան ռուս և հրեայ ղեկաւարներին»<sup>71</sup>: Այդ վաշտում հակապետական ելույթի ղեկավարներից էր գեներալ Հովսեփյանի ռուսագզի համհարզը. «Երբ Աղէքսանդրապօլի զինվորական խլրտումները անդրադարձան Կարսի նահանգը, այդ հակազգային և հակապետական շարժման գլուխը կանգնեց գեներալ Յովսեփեանի թիկնապահ վաշտը: Կարզը վերականգնելուց յետոյ, պարզվեց, որ այդ խռովություններին մասնակից էր գեն. Յովսեփեանի ամենամօտ ադիուտանտներից մեկը, ռուս գլխապետ Կուտիրով»<sup>72</sup>:

Այդ օրերին Հայհեղկոմը երկու գեներալներին և զորախմբի մի շարք բարձրաստիճան սպաներին առաջարկություն էր ուղարկել անցնել բոլշևիկների կողմը, զորախումբը հայտարարել բոլշևիկյան Կարմիր բանակի մի զորամիավորում և շարունակել ղեկավարել այն<sup>73</sup>: Գեներալ Փիրումյանը պատասխանել էր հեղկոմին, որ «...հանուն ռազմաձակատի կայունության պահպանման, զորախմբի հրամկազմը ենթարկվում է հեղափոխական կոմիտեին... Իսկ միւս օրը քաղաքում ասում էին, որ նոյն ռեվկոմը Կարսի երկու գեներալներին շնորհել է կարմիր գեներալների տիտղոսը...»<sup>74</sup>:

Սակայն դեպքերի ընթացքը եղավ այնպիսին, որ հետագա մի քանի օրերի ընթացքում ՀՀ կառավարությունը խռովությունը ճնշեց: Կոնկրետ Կարսում «գնդապետ Յարութիւնեան, Կարսի բոլոր զօրամասերի գլուխ անցնելով, ստիպում է դաւաձաններին անձնատուր լինել»<sup>75</sup>:

Գեներալներն ու սպայակազմի մի մասը կրկին ասպարեզում հայտնվեցին և հանդես եկան կառավարությանը հավատարիմ լինելու դիրքերից միայն խռովությունը ճնշելուց հետո<sup>76</sup>: Իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թ. դեկտեմբերի վերջերին, 1920 թ. մայիսին Կարսի հեղկոմի

70 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 440, 539, 559:  
 71 Հարությունյան Վ., Հայ բոլշևիկների..., էջ 149-150, տես նաև՝ Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 538:  
 72 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 558-559:  
 73 Տես ՀԱԱ, ֆ.1022, ց.2, գ. 150, թ. 1, տես նաև Հարությունյան Վ., Հայ բոլշևիկների... էջ145:  
 74 Հարությունյան Վ., Հայ բոլշևիկների..., էջ 148, տես նաև՝ Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., նույն տեղում, Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ. 3, եր., 2015, էջ 288:  
 75 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 551:  
 76 Տես Հարությունյան Վ., Հայ բոլշևիկների..., էջ 221:

անդամ Վոան Ղազանջյանի<sup>77</sup> և նախկին նահանգապետ Ստեփան Ղորղան-  
յանի գրույցից պարզվում է հետևյալը. «Նոցանից մէկը, մի երիտասարդ՝  
Ղազանջեան ազգանունով, պատմեց մեզ երեքիս, որ մայիսեան Կարսի  
խռովութիւնների կազմակերպողներից մէկը ինքն էր, որ գէն. Փիրումով և  
գէն. Յովսէփեան անցել էին նոցա՝ խռովարարների կողմը, իսկ Ձեզ,- դար-  
ձաւ ինձ Ղազանջեան,- վճռված էր ձերբակալել, բայց մենք պարտվեցինք  
և դուք ազատվեցիք...»<sup>78</sup>:

**Այստեղ, թերևս, հարկավոր է շարադրանքի ընդհանուր ընթացքից  
կատարել անհրաժեշտ մի շեղում: Խոսքը այն մասին է, որ մեզանում  
առկա է և բավականին տարածում ունի մի արմատավորված կարծիք  
առ այն, որ «եթե դաշնակները չկառչեին իշխանությունից և իշխա-  
նությունը 1920 թ. մայիսին հանձնեին հայ բոլշևիկներին, ապա Հա-  
յաստանը կխորհրդայնացվեր այդ օրվա սահմաններում և հայ ժողո-  
վուրդը մի քանի ամիս անց այդքան մարդկային և տարածքային կո-  
րուստներ չէր ունենա: Դա պետք է արվեր անպատճառ, ելնելով մեր  
պետական և ազգային շահերից, քանի որ միևնույն է, խորհրդայնա-  
ցումն անխուսափելի էր և ընդամենը ժամանակի հարց էր»:** Այսինքն՝  
այդ դեպքում ըստ Հրանտ Մաթևոսյանի՝ «Ղարսը մերն էր»<sup>79</sup>:

Ճիշտ է, պատմության այս կամ այն դեպքերը քննարկելիս միանգամայն  
անիմաստ է խոսել «եթե»-ներով: Բայց տվյալ դեպքում խոսքը շատ ծանր  
ու լուրջ մեղադրանքի մասին է, և հարցը որոշակի արձագանք է պահան-  
ջում և, եթե հնարավոր է, նաև որոշ պարզաբանում:

Ինչպէս, ինչ մեխանիզմով, ինչ երաշխիքներով և ինչ պայմաններով,  
հնարավոր էր, կամ անհրաժեշտ էր իշխանությունն այդ օրերին հանձնել  
հայ բոլշևիկներին: Երբ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Սիմոն Վրացյանի կառա-  
վարությունը իշխանությունը հանձնում էր Հայեղկոմին, նա այդ իշխա-  
նությունը հանձնում էր ոչ թե պարզապես վեց հայ բոլշևիկների, այլ այն  
բոլշևիկներին, որոնք այդ պահին բացահայտ հենվում էին բոլշևիկյան Ռու-  
սաստանի քաղաքական ու ռազմական հզորության վրա: Եվ այդ վեց հո-  
գուն ընտրել և ուղարկել էր հենց բոլշևիկյան Ռուսաստանը ու վերջնագիրն  
էլ դրել հայաստանյան իշխանությունների առաջ, որ հենց սրանց՝ այս վեց  
անձանց պետք է փոխանցեք երկրի իշխանությունը: Իսկ 1920-ի մայիսին,  
նույնիսկ ամենամեծ պատրաստակամության պարագայում, ում պետք է  
փոխանցեք իշխանությունը Հայաստանի կառավարությունը՝ **մատների վրա  
հաշված մի քանի հայ բոլշևիկների:** Բայց որպես ինչ և ինչի համար: Ով-  
քեր էին այդ անձինք և ինչ իրական ուժ ունեին իրենց թիկունքում նրանք  
այդ օրերին: Հայաստանի շրջանակներում իրենց ունեցած ուժը, ինչպես  
ցույց տվեց հետագա դեպքերի ընթացքը, խիստ թույլ էր և խիստ փոքրա-  
թիվ: Ճիշտ է, նրանք ասում էին, թե իրենց սատարում է և ուղղակի օժան-  
դակում է Խորհրդային Ռուսաստանը՝ իր ողջ ռազմաքաղաքական ներուժով  
ու կարողություններով: Բայց ո՞ր էր այդ ներուժը մայիսյան օրերին, չէ՞ որ  
այդ ուժի որևիցե առարկայական ներկայություն և ցուցադրում այդպես էլ

77 Նույն տեղում, էջ 109, 110, 115:

78 Ցարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 440:

79 Հրանտ Մաթևոսյան, Տերը, Եր., «Սովետական գրող», 1983, էջ 436:



չարձանագրվեց: Բացառությամբ, թերևս, Կարմիր բանակի հեծյալ գնդի մուտքը Իջևան և այնտեղից դեպի Դիլիջան իրականացրած զորաշարժը, որը բոլշևիկյան բարձր հրամանատարության կողմից շատ արագ կանխվեց, իսկ գունդն էլ շատ շտապ դուրս բերվեց Հայաստանի Հանրապետության սահմաններից<sup>80</sup>: Այսօրվա դրությամբ թե՛ հայաստանյան, թե՛ ռուսաստանյան, թե՛ այլ արխիվներում չի հայտնաբերվել գեթ մեկ փաստաթուղթ, որը եթե ուղղակի չհաստատեր, ապա գոնե ակնարկեր, որ 1920 թ. մայիսին հայ բոլշևիկների կազմակերպած հակապետական խռովությունն անմիջականորեն հրահանգվել ու ղեկավարվել է մոսկովյան իշխանական վերնախավի կողմից: Հակառակը, ինչպես մի անգամ արդեն նշել ենք, այսօր կան բազմաթիվ վկայություններ, որ այդ օրերին բոլշևիկյան կուսակցության և պետության իշխանության բարձրագույն մարմնի՝ Քաղբյուրոյի մակարդակով քանիցս շեշտվել է, որ տվյալ պահին (1920 թ. մայիս-հունիս – Վ.Ը.) Հայաստանի խորհրդայնացման հարցը օրակարգում չկար, և նույնիսկ քանիցս շեշտվել է, որ այդ հարցում անհրաժեշտ է կովկասյան ընկերներին հետ պահել ինքնագործունեությունից<sup>81</sup>: Այսինքն՝ 1920-ի մայիսը Հայաստանում ո՛չ «Բաքվի 1920-ի ապրիլն էր», ո՛չ էլ դեռևս «Երևանի 1920-ի դեկտեմբերը»: Ասպարեզում չկար այն իրական ուժը, որի անհերքելի գերակշռության ու առավելության առկայության պայմաններում ՀՅ Դաշնակցությունը պետք է խոհեմություն ցուցաբերեր և հոժարակամ հրաժարվեր իշխանությունից՝ վերջինիս օգտին: Ավելորդ չէ մեջբերել այդ օրերին հնչած պետական պաշտոնյայի հետևյալ կարծիքը, որը միանգամայն անընդունելի էր համարում ՀՅ Դաշնակցության կողմից Ալեքսանդրապոլում նույնիսկ մեկերկու օրով իշխանությունը զիջելը. «Մայիսի սկզբներում մի բուռն եկվորներ առաջ բերեցին Ալեքսանդրապոլում հակապետական բռնկում և դաշնակցական «սիրելի ընկերներ» մի քանի ժամից յետոյ ձեռքից թողեցին իշխանությունը...»<sup>82</sup>:

Որո՞նք էին այն պատճառները, որ զսպում էին Խորհրդային Ռուսաստանին, և նա 1920 թ. մայիսին չցանկացավ Հայաստանի հարցը լուծել Ադրբեյջանի խորհրդայնացման սցենարով: Նախ՝ Կարմիր բանակի բարձրագույն հրամանատարությունը ռազմական բնույթի տեղեկատվություն էր ստանում ոչ միայն կուսակցական ընկերներից, այլ նաև պրոֆեսիոնալ հետախույզների միջոցով: Իսկ վերջիններս տեղեկացնում էին, որ հայկական բանակը բավականին մարտունակ է և երկրի խորհրդայնացումը տվյալ պահին իրենից դժվար թե ներկայացնի մի ուրախ, թեթև ու անվտանգ զորաշարժ-գրոսանք<sup>83</sup>: Առավել ևս, որ այդ օրերին զգալի ուժեր ու միջոցներ էր պահանջում խորհրդա-լեհական պատերազմը: Մյուսը, որ շատ կարևոր է, այն հանգամանքն էր, որ բոլշևիկյան Ռուսաստանի ուղղակի ռազմական ներխուժումը Հայաստան կարժանանար Արևմուտքի չափազանց բացասական արձագանքին ու գնահատականին:

80 Տե՛ս Հարությունյան Վ., Հայ բոլշևիկները... էջ 254:  
 81 Большеви́стское руково́дство. Переписка. 1912-1927. Сборник документов / Составители: А.В.Квашонкин, О.В.Хлевнюк, Л.П.Кошелева, Л.А.Роговая. – М.: 1996. — 423 с., Документы N 71, 79, 80, А.В.Квашонкин, Советизация Закавказья..., сс. 167,170,172,177, А.В.Квашонкин Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и общество, 2016, N 4, сс. 437- 440, 443,444,446.  
 82 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ...էջ 541:  
 83 Տե՛ս Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 564:

Հայաստանի խորհրդայնացման համար մշակվել էր հատուկ «մեթոդական ձեռնարկ», ըստ որի Հայաստանի վրա առաջինը պետք է հարձակվեին քեմալական զորքերը: Այդ դեպքում Արևմուտքի ԶԼՄ-ներում մեծ ազդուկ կբարձրանար, որ թուրքերը հերթական անգամ իրականացնում են հայերի կոտորած: Բոլշևիկյան մամուլը նույնպես կդատապարտեր թուրքական ներխուժումը, ինչից հետո Խորհրդային Ռուսաստանի զինուժը Հայաստանի անպաշտպան դարձած արևելյան սահմանով մուտք կգործեր երկիր, կկասեցներ թուրքերի կողմից իրականացվող կոտորածը և հայերի ու ամբողջ աշխարհի աչքին կներկայանար փրկչի կերպարով<sup>84</sup>:

Իսկ երրորդը, որը թերևս ամենակարևորն է, դա այն հանգամանքն է, որ եթե հանկարծ 1920-ի մայիսին Խորհրդային Ռուսաստանը գնար Հայաստանի խորհրդայնացմանը, մեղմ ասած խիստ անտրամաբանական է, որ երկրի կեսը խորհրդայնացվեր որպես հայկական խորհրդային պետություն, մյուս մասը՝ Կարսի մարզը, նվիրաբերվեր քեմալականներին, իսկ մի քանի կտոր էլ տրվեր Ադրբեյջանին:

Դա «չաշխատող» տարբերակ էր: Դա կլինեք արդեն քեմալական կողմին հասցված հարված, որի հետևանքները հենց Ռուսաստանի համար լինելու էին անկանխատեսելի և ոչ դյուրին, առավել ևս, որ քեմալականները այդ օրերին արդեն ինտենսիվ շփումների մեջ էին նաև հաղթող տերությունների հետ: Այնպես որ առձակատումը քեմալականների հետ՝ Հայաստանի խորհրդայնացման գնով, չէր կարող տեղավորվել Կովկասում իր համար երաշխավորված դիրքեր հաստատելու ձգտող Ռուսաստանի պլանների մեջ: Դրանք ապահովելու համար քեմալական կողմի հետ վաղօրոք արդեն ձեռք էր բերվել ապագա Թուրքիայի սահմանը Արփաչայ-Արաքս գծով անցնելու պայմանավորվածությունը<sup>85</sup>: Այնպես որ, այդ օրերին Խորհրդային Ռուսաստանը ոչ թե օժանդակելու էր հայ բոլշևիկներին՝ շուտափույթ խորհրդայնացնել Հայաստանը, այլ հակառակը, ինչպես քանիցս նշվել է, կոնկրետ քայլեր ձեռնարկեց, որպեսզի արդեն բռնկված խռովությունը զարգացում չստանա և այդ պահին գործը հանկարծ չհասնի ամբողջ երկիրը խորհրդայնացնելուն:

Ի դեպ Անկարան էլ էր բավականին անհանգստացած մայիսին Հայաստանում ծավալված դեպքերով: Քյազիմ Կարաբեքիրը, տեղեկանալով Հայաստանում բռնկված բոլշևիկյան խռովության մասին, խիստ մտահոգ նամակ է հղում Անկարա, որտեղ կարծիք է հայտնում, որ եթե հանկարծ Հայաստանում տեղի ունենա խորհրդայնացում, ապա իրենք այլևս հավերժ պետք է հրաժարվեն Կարս-Արդահանին տիրանալու մտքից<sup>86</sup>: Եվ շատ հա-

84 Տե՛ս **Հարությունյան Վ.**, Կարսի մարզը ..., էջ 146:

85 Տե՛ս **Арутюнян Бабек**, Московский и Карсский договоры 1921 года были позорнее Александропольского, «ИА Regnum», 11.11.2011, <http://old.memo.ru/hr/hotpoints/caucas1/msg/2011/11/m271212.htm>, տե՛ս նաև՝ **Հարությունյան Բ.**, Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրման քննության շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», 2011, N 3., էջ 51-61: Նշենք, որ բոլշևիկյան կուսակցությունը և նրան անդամակցող հայ բոլշևիկները միշտ էլ կողմակից են եղել Կարսը թուրքերին զիջելուն: Դեռևս 1918 թ. ապրիլի 18-ին ընթացիկ մոմենտի վերաբերյալ իր ընդունած բանաձևում այդ կուսակցության կովկասյան մարմինը Կովկասում դավաճան էր պիտակում նրանց բոլորին, ով չի ընդունում Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետերը և պայքար է մղում Անդրկովկաս թուրքական ներխուժման դեմ, տե՛ս Из истории иностранной интервенции в Армении в 1918 году (Документы и материалы), сост. **Х.А.Бадалян**, Ереван, 1970, с.73:

86 Տե՛ս **Озторк М.**, Советско-турецкие отношения на Кавказе в 191-1923 гг., Канд. Диссертация, Санкт-

վանական է, որ քենավական կողմն իր հերթին ձեռնարկեր քայլեր, որպես-  
զի Ալեքսանդրապոլի հեղկոմը հանկարծ իր ձեռքը չվերցնի երկրի իշխա-  
նությունը: Առավել ևս, որ քենավականները ուղղակի և անմիջական շփում-  
ների մեջ էին կովկասյան բոլշևիկների և այդտեղի Կարմիր բանակի հրա-  
մանատարության հետ<sup>87</sup>:

Այլ հարց է, որ կենտրոնական մոսկովյան իշխանություններին դեպքե-  
րի նման ընթացքը քարոզչական առումով, ըստ էության, շատ էլ ձեռնտու  
էր. մի կողմից՝ Հայաստանի պետականության նավակը սկսեց բավականին  
ուժգին ձռնվել, մյուս կողմից՝ հրաշալի առիթ էր ստեղծվում՝ շահարկելով  
Հայաստանում բոլշևիկների նկատմամբ իրագործվող որոշ խստություննե-  
րը, ուղղակիորեն միջամտել այդ երկրի ներքին գործերին:

**Այնպես որ, եթե կան, կամ էլ ի հայտ կգան նորանոր փաստեր և  
հանգամանքներ, որոնցից ելնելով հնարավոր է այդօրվա դաշնակցա-  
կան իշխանություններին մեղադրել հազար ու մի մեղքերի մեջ, բայց  
ոչ երբեք նրանում, որ 1920-ի մայիսին չզիջեցին իշխանությունը ար-  
կածախնդրության դիմած մի քանի հայ բոլշևիկներին: Քանզի ասպա-  
րեզում, իրոք, բացակայում էր այն ռեալ ուժը, որին հնարավոր էր և  
պարագաների բերումով՝ պետք էր, զիջել պետության կառավարման  
ղեկը: Միանգամայն բնական է, որ ստեղծված իրավիճակում գործող  
կառավարությունը պետք է դիմեր այնպիսի քայլերի, որոնց միջոցով  
կձնշվեր օտար ուժի գործակալ հանդիսացող հակապետական խմբա-  
վորման կազմակերպած և ազգային անկախ պետականության կոր-  
ծանմանը միտված խռովությունը:**

Միանգամայն այլ հարց է, իհարկե, թե որքանով կանխեցին կառավա-  
րության այդ քայլերը պետության փլուզումը և, ընդհանրապես, հնարավոր  
էր արդյոք այն օրերին և այն պայմաններում կանխել այդ փլուզումը:

Վերջում մեկ անգամ ևս անդրադառնալով 1920 թ. մայիսյան դեպքերին՝  
կարող ենք ասել, որ չնայած կրած պարտությանը, բոլշևիկները Ալեքսանդ-  
րապոլ-Կարս ուղղությամբ իրականում արձանագրեցին կարևոր ռազմավա-  
րական հաջողություն և ձեռքբերում. նրանք գործնականորեն **պարզեցին,  
փորձարկեցին և արձանագրեցին**, որ այդտեղի գորախումբը, ըստ էու-  
թյան, միշտ պատրաստ և ընդունակ է շատ ակտիվ մասնակցություն ցու-  
ցաբերելու քաղաքական գործընթացներին: Անգամ, եթե այդ գործընթաց-  
ները ունենան բացահայտ հակապետական ուղղվածություն ու բնույթ. «20  
թվի մայիսեան օրերում գինվորութեան այդ տրամադրութիւնը հրապարակ  
դուրս եկաւ և Կարսի երկու գեներալները ցոյց տվեցին այդ օրերում իրանց  
իսկական դէմքը: Այդ գեներալները մի ակնթարթում կորցրեցին իրանց նօ-  
մինալ հեղինակութիւնը, երերվեցին, աջ ու ձախ ընկան, բայց, իհարկէ,  
կորով չունեցան կանգուն լինելու այդ ուղղութիւններից և ոչ մէկում: Եւ այդ  
բնական էր: Գեներալներն ու սպաները բանակի մի կողմն էր, իսկ գինվո-  
րութիւնը, մասսան, բուն հայիութիւնը, այլ բանակ էր, տարբեր հոգեբանու-  
թեամբ, մտածելակերպով և ազգային կորովով:

Այդ մի շարք անհերքելի փաստերը բաւական էին, իհարկէ, համոզվելու,

Петербур, 2010 с. 69-70.  
87 Տես նույն տեղում, էջ 63:

որ Կարսի նահանգի զօրաց հրամանատար կազմի մեծագոյն մասը անպէտք էր և անհամապատասխան մեր պետական միտումներին: Բայց և այնպէս և մայիսեան դէպքերից յետոյ այդ բոլոր գէներալները և սպաները մնացին իրանց տեղերում: Երկրի և հասարակութեան համար պարզ էր այդ հրամանատար կազմի կատարեալ անկարողութիւնը, պարզ էր և այն, որ սանձարձակ զօրքը այդպիսի հրամանատարների ձեռքում միայն չարիք էր երկրի համար... Ուշագրաւ պէտք է համարել, որ այդ բոլոր գէներալները և սպաները նախամեծար դարձան ռուս զօրաբանակում, նոցա հայրենիքի կործանումից յետոյ»<sup>88</sup>:

## 5. Կարսի վերջնախաղը

Մինչ Հայաստանում մայիս-հունիսին այստեղ ու այնտեղ բռնկվում ու ճնշվում էին բոլշևիկյան կրքերը, Մոսկվայում շարունակվում էին հայ-բոլշևիկյան «իբր բանակցությունները»: Զուգահեռ ընթանում էին նաև քեմալաբոլշևիկյան բանակցությունները: Այդ զուգահեռ ընթացող բանակցությունների ընթացքն այնպիսին էր, որ բառացիորեն հաղորդակից անոթների օրենքով, օրեցօր աճում ու ավելի էին հաստատվում հայերի հաշվին քեմալական կողմի պահանջները բավարարելու բոլշևիկների պատրաստակամությունն ու վճռականությունը: Բնականաբար, համապատասխան համաչափությամբ նվազում էին հայկական պատվիրակության սպասելիքներն ու ակնկալիքները: Արդյունքում, բոլոր կետերով մերժված հայկական պատվիրակությունը վերադարձավ Հայաստան՝ բոլշևիկների հետ բանակցությունները արդեն տեղում շարունակելու անհասկանալի ու անհայտ հեռանկարով: Իսկ քեմալական բանագնացներին ընդունել էր անձամբ Լենինը և նրանց այն առարկությանը, թե թուրքական կողմը մտահոգված է, որ Խորհրդային Ռուսաստանը կարծես թե որոշ պայմանավորվածություն է ձեռք բերել հայերի հետ, Լենինը պատասխանել է, որ այդ հարցում Ռուսաստանն իրոք որ սխալ է թույլ տվել և կաշխատի ուղղել այդ սխալը, իսկ եթե դա արդեն նրա ուժերից վեր լինի, ապա այդ դեպքում թող դա անի հենց քեմալական կողմը<sup>89</sup>:

Այնպես որ քեմալական պատվիրակությունը վերադարձավ Լենինի հետ բարեկամության նախնական համաձայնագիր կնքած և ամենակարևորը՝ բոլշևիկների թույլ տված որոշ սխալներ շտկելու, այն է՝ Հայաստանի հետ տարածքային հարցեր ճշտելու համաձայնություն ստացած: Միաժամանակ Անկարա ուղևորվեց Հայաստանի դեմ պատերազմելու «ծախսերը հոգալու» համար բոլշևիկների նվիրատված ոսկին ու զենք-զինամթերքը տեղափոխող թուրք-բոլշևիկյան հեծյալ ջոկատը<sup>90</sup>: Քեմալաբոլշևիկյան գրկախառնությունը ավելի ու ավելի էր ջերմանում ու հզորանում՝ իր ձիրաններում ավելի ու ավելի սեղմելով Հայաստանը: Այնպես որ, արտաքին քաղաքական ասպարեզում այդ օրերին ամենաառաջնային ու ամենաարդիական հա-

88 Ցարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 342, 539:

89 Տե՛ս Հարությունյան Վ., Կարսի մարզը Հայաստանի..., էջ 145:

90 Տե՛ս Հարությունյան Վ., Կարսի մարզը Հայաստանի..., էջ 145, 427, տե՛ս նաև՝ **М. Озтюрк.** Рассмотрение советской помощи Анкаре в 1920–1922 гг. на основе турецких исторических источников. «Научные проблемы гуманитарных исследований». 2010. N 5. с. 69–76.

մարվող «մոսկովյան» ուղղությամբ ձեռքբերումները, ինչպես բոլորիս հայտնի է, նույնիսկ գրոյական չէին կարող համարվել, այլ ընդգծված բացասական ու Հայաստանի համար խիստ վտանգավոր:

Հայ բոլշևիկների 1920 թ. Մայիսյան խռովությունը, ինչպես նշվել է, հաջողություն չունեցավ և ճնշվեց: Բայց դրանով կասեցվեցին արդյոք այդ կողմից Հայաստանի պետականությանը սպառնացող արտաքին ու ներքին վտանգները: Ամենևին: Խռովությունը ճնշելուց հետո քեմալաբոլշևիկյան վտանգը Հայաստանի հանդեպ ոչ թե չեզոքացվեց կամ թուլացավ, այլ հակառակը, ավելի սաստկացավ՝ ստանալով ավելի ու ավելի համակարգված ու ահագնացող բնույթ. «...Մայիսեան դաւադրութիւնից յետոյ էլ հայ բոլշեւիկները հանգիստ չնստեցին, նրանք ավելի ևս մոլեգնած շարունակեցին իրենց դավադրութիւնը,– Կարսի շրջանի ռուսների և թուրքերի հետ ձեռք-ձեռքի...»<sup>91</sup>:

Մոսկվա–Անկարա այանսը սպասարկող և նրանց դեմից վազող ու ամենից բարձր գոռացող հայ բոլշևիկների ասածը ամեն տեղ ու ամեն պահին նույնն էր. «Կարթագենը, այն է՝ անկախ Հայաստանը, պետք է կործանվի»<sup>92</sup>: Նախ, նրանցից բոլորը չէ, որ խռովությունը ճնշվելուց հետո հեռացան Հայաստանից: Օրինակ՝ Ալեքսանդրապոլի հեղկոմի «եկվոր» անդամներից Ավիս Նուրիջանյանը, որը 1918–ին Բաքվում՝ Համագասպի ջոկատի կազմում որպես Բաքվի կոմունսայի կամավոր զինվոր կռվել էր թուրքերի դեմ, այժմ, ճողոպրելով քաղաքից, մի քանի այլազգի ուղարկված բոլշևիկների հետ թաքնվում էր Աղբաբայի կարափափախ ցեղի վրաններում և չճանաչված լինելու համար, աչքերին իջեցրած թուրքմենի սև փափախը, շարունակում էր իր բացահայտ հակապետական գործունեությունը. «Մի ինչ որ Ավիս, որ յետոյ ռուս մինիստր դարձավ Երևանում, թագնվում էր Աղէքսանդրապոլ բուն հայկական գաւառում և ռուսների ու հրեաների հետ ռուսը պատրաստում հայկական իշխանութիւնը պայթեցնելու համար»<sup>93</sup>: Նրանցից ոմանք էլ խուսափելով պատասխանատվությունից՝ ուղևորվեցին ուղիղ... Էրզրում ու Կարս և վերադարձան արդեն Քյազիմ Կարաբեքիրի գորաջոկատի շարքերում<sup>94</sup>:

Միաժամանակ, հայ բոլշևիկները, չնայած խռովության անհաջողությանը, արդեն կայուն ու հիմնավորված կարծիք ունեին երկրի ներքին պրոբլեմների, բնակչության տրամադրությունների և ամենակարևորը՝ բանակում առկա մոտեցումների ու տրամադրությունների վերաբերյալ և առիթը բաց չէին թողնում «արդյունավետ» շահարկելու և օգտագործելու այդ ամենը<sup>95</sup>:

Իսկ պետության ներսում էլ՝ բոլշևիկների հետ զուգահեռ և հուրախություն նրանց, պետականության վեճը շարունակում էին ճոճել ու խարխլել, այսօրվա լեզվով ասած, անսանձելի կոռուպցիոն դրսևորումները: Կառավարությունը կարողացավ ճնշել բոլշևիկյան հակապետական խռովությունը, սակայն չճնշվեց, չվերացվեց ու չպատժվեց այն ամենը, ինչը պետությունը ներսից

91 Յ.Ա.Ք. Հաճեան, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ, «Ալիք», օրաթերթ, Թեհրան, 2 մայիսի, 1961, N 91:

92 Վ.Հարությունյան. Հայ բոլշևիկների..., էջ 103–106, 152–155:

93 Յ. Ա. Ք. Հաճեան, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ «Ալիք» օրաթերթի, 2 մայիսի, 1961, N 91, Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 569:

94 Տեն Յ. Ա. Ք. Հաճեան, նույն տեղում:

95 Տեն Յ. Ա. Ք. Հաճեան, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ «Ալիք», Թեհրան, 1961, 581:

քանդող գործոն էր<sup>96</sup>:

Վայ այն ազգին, որն ինքն իրեն հասցնում է այնպիսի մի վիճակի, երբ պետականության վեմի տարուբերման ներքին ու արտաքին ուժերը սկսում են ներդաշնակվել իրարով: Բնության մեջ դա կոչվում է «ռեզոնանս», ինչի ի հայտ գալը նշանակում է փլուզում և ավերում ամեն ինչի և ամենուրեք: Հայաստանի պարագայում այդ ավերիչ «ռեզոնանսը» կյանքի կոչվեց և գործարկվեց առաջին հերթին հենց ամենակարևոր՝ Կարսի ուղղությամբ:

Հասկանալի է, որ մոսկովյան բոլշևիկների տված տասնյակ հազարներով հրացաններն ու միլիոններով փամփուշտները, հարյուրավոր կիլոգրամներով ոսկին, հայ-բոլշևիկյան քայքայիչ գործունեությունը, թալանն ու անօրինությունները, բացահայտ դավաճանության հասնող հրամանատարական կազմի ապիկարությունն ու բանակի բարոյալքումը, ոչ արդյունավետ պետական կառավարումը ի վերջո պետք է «կրակեին»: Այնպես որ, «Վեց տարի շարունակ պատերազմելուց և կռվելուց յետոյ, մենք կանգնած էինք շրջապատված թշնամիներով և պառակտված ներսում ազգուրացներով<sup>97</sup>»:

Առաջին կրակոցը հնչեց արդեն 1920 թ. օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին. «Կեազին Կարաբեկիր փաշայի առաջադր ոյժերը առաջին անգամ երևացին մեր սահմանագլխում 20 թվի օգոստոսի 27»<sup>98</sup>, երբ մի քանի օրվա ընթացքում Քյազին Կարաբեքիրը հայերից հետ վերցրեց նրանց կողմից հունիսին գրաված Օլթիի գավառակը:

Հայաստանի մասով քեմալաբոլշևիկյան դաշինքի նախագծած ու մշակած ծրագիրը մտնում էր իր վերջնական փուլ: Պատկերավոր ասած՝ իրադարձությունները «հայկական պարտիայում» սրընթաց զարգանում էին, և դեպքերը տեղափոխվում էին դեպի Կարսի «վերջնախաղ»:

Իսկ ինչպիսի՞ն էր այդ վերջնախաղում պաշտպանվող կողմի, այն է՝ Կարսի հայկական գորախմբի վիճակը թե՛ քանակապես, թե՛ որակապես՝ գորախմբի մարտունակության տեսակետից:

Անդրադառնանք նախ ամենաառաջնային՝ ուժերի քանակական հարաբերակցության ցուցանիշներին: Հենց սկզբից ասենք, որ տարբեր աղբյուրներում բերվում են իրարից էապես տարբերվող տվյալներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը, որոնք, դատելով թե՛ աղբյուրներից, թե՛ ներկայացվող թվերից, պետք է որ առավել մոտ լինեն իրականությանը:

1. Հայաստանի ռազմական գերատեսչության «**Ռազմիկ**» **շաբաթաթերթը**, չբերելով թվային ցուցանիշներ, ուժերի ընդհանուր հարաբերակցության մասին այդ օրերին գրել է, որ մենք ունեցել ենք «...**կանոնաւոր հազնւած ու պարենաւորւած զօրք, թվով մի քանի անգամ շատ թշնամուց...**»<sup>99</sup>:

2. Կարսի քաղաքացիական նահանգապետ **Ստեփան Ղորղանյան**. «Կարսի նահանգում գտնված մեր զօրաբանակը, իր բոլոր անկազմակերպ և թերի կողմերով հանդերձ, համենայն դէպս մի 4 անգամ մեծ էր թշնամու բանակից...»<sup>100</sup>, «...հակառակ մեր հրամանատարութեան ուռցրած տեղե-

96 Տե՛ս **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 529, 544:

97 Նույն տեղում, էջ 510:

98 Նույն տեղում, էջ 382, 395, 413:

99 «Ռազմիկ» շաբաթաթերթ, 8 նոյեմբերի, 1920 թ., N 26:

100 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 457:

կութիւներին, քեամալիստների թիւը մի 4 անգամ մեր զորաբանակից փոքր էր»<sup>101</sup>, «Պետք է զարմանալ, արդեոք, այդ բոլորից յետոյ, որ քեամալիստներից չորս անգամ աւելի ոյժեր ունենալով, մենք վարկաբեկեցինք զինվորական բախտը Կարսի մեծահռչակ ամրութիւնների տակ»<sup>102</sup>:

3. **Սիւնն Վրացյանը** թվարկում է զորախմբի կազմում ընդգրկված զորամասերը. «...այստեղ գործում էին զորավար Հովսեփյանի բրիգադրատաջին գունդ՝ գնդ. Մազմանյան, 4-րդ գունդ՝ գնդ. Միրիմանյան, 5-րդ գունդ՝ գնդ. Շագուբադյան, Սեպուհի բրիգադր, 7-րդ գունդ՝ գնդ. Իշխանյան, 8-րդ գունդ՝ փոխգնդ. Բաղդասարյան, գնդ. Ղորղանյանի ձիավոր բրիգադր և մի քանի կամավորական խմբեր՝ Փիլոսի, Մուրադյանի, Սմբատի և այլն: Կարսի ձակատում գործում էին սավառնակներ և «Ազատամարտ» զրահագնացքը»<sup>103</sup>: Թեև զինվորականության թվաքանակը բերված չէ, սակայն նշվում է, որ Կարսում գերի ընկած հայ զինվորների թիվը հասնում էր ութ հազարի: Այս դեպքում՝ նույնիսկ ամենահամեստ մոտեցման պարագայում կարելի է ենթադրել, որ Կարսի ուղղությամբ հայերն ունեցել են առնվազն 10–12 հազարից ոչ պակաս զինվորականություն:

4. Մեր մյուս վարչապետը՝ **Ալեքսանդր Խատիսյանը**, բերում է հետևյալ տվյալները. «Կարս-Ալեքսանդրապոլի ձակատում կանգնած են հետևյալ զորամասերը. խոսքը վերաբերում է կանոնավոր զորքերին և հատկապես հետիոտն զորքերին: Այդտեղ են առաջին գունդը (Մազմանյան)՝ 1500 սվին, 4-րդ գունդը (Միրիմանյան)՝ 2000 սվին, 5-րդ գունդը (Շագուբադյան)՝ 700 սվին, 6-րդ գնդի մեկ գումարտակ (Հայ Գնդունի-Համբարձում Թոփչեան)՝ 800 սվին և 8-րդ գունդը (Տիգրան Բաղդասարյան)՝ 1500 սվին, ընդամենը՝ 7200 սվին: Բացի դրանից, կան նաև Սմբատի խմբերը»<sup>104</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ բերված չեն կամավորական խմբերի զինվորների թվաքանակը, հաշվի առած չէ նաև Նիկոլայ Ղորղանյանի հեծյալ բրիգադր: Եթե հաշվի ենք առնում նաև այդ ուժերը, ապա Կարսի ուղղությամբ նորից հաշվում ենք մոտավորապես 10 հազարից ոչ պակաս զինվորականություն:

5. Դեպքերի անմիջական մասնակից, այդ օրերին հայկական բանակի գլխապետ (կապիտան), արևմտահայ **Գ. Սիրմէնեանը** իր հուշերում ներկայացնում է հետևյալ թվերը. Կարսի ուղղությամբ 1920 թ. հոկտեմբերին հայկական զինուժը կազմել է մոտ 10 հազար զինվոր, իսկ մեկ այլ հաշվարկով՝ 15–16 հազար<sup>105</sup>:

Մեր ուսումնասիրած բավականին ընդարձակ գրականության ցանկը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Կարսի ուղղությամբ հայկական զորախմբի վերաբերյալ վերը բերված թվերն առավել իրատեսական են և մոտ իրականությանը:

Ավելի անորոշ ու խայտաբղետ են Կարսի ուղղությամբ թուրքական զորախմբին վերաբերող քանակական տվյալները: Ստեփան Ղորղանյանը նշում է 4 հազար թիվը, նույն կապիտան Գ.Սիրմէնեանը՝ գեներալ Սիլիկ-

101 Նույն տեղում, էջ 163,167:

102 Նույն տեղում, էջ 151:

103 **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 508:

104 **Խատիսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրոթ, 1968 թ., էջ 289, 290:

105 Տե՛ս **Սիրմէնեան Գ.**, Տաճկահայ զինուոր և զինուորականութիւնը, Պէյրոթ, 1967, էջ 68–70, 86–87:

յանի խոսքերից, նույնպես նշում է 4 հազար թիվը<sup>106</sup>, այդօրվա հայկական հետախուզության տվյալներով թուրքերի թիվը կազմել է 5000<sup>107</sup>, Ալեքսանդր Խատիսյանը խոսում է Կարսի ուղղությամբ շարժվող 12 հազարանոց քեմալական զորքի մասին<sup>108</sup>, իսկ ակադեմիկոս Լ.Խուրշուդյանը ներկայացնում է, որ ամբողջ հայ-թուրքական ճակատում թուրքերը կենտրոնացրել էին 25-30 հազար զինվոր<sup>109</sup>: Ուստի, Կարսի ուղղությամբ արշավող Կարաբեքիրի 30-50 հազարանոց զորախմբի մասին հիշատակումները մենք համարում ենք, մեղմ ասած, ոչ այնքան հիմնավոր, և ինչպես ասում են՝ քննարկման չենք դնում:

Ճիշտն ասած՝ Կարսի պարագայում կողմերի ուժերի հարաբերակցությունը քննարկելն այնքան էլ ակտուալ հարց չէ, քանզի մեծ ընդհարումներ, առավել ևս՝ ճակատամարտեր, կողմերի միջև չեն եղել և հետևաբար չեն եղել իրավիճակներ, որտեղ վճռական լինեք կողմերից մեկն ու մեկի թվապես գերակշռող լինելու հանգամանքը:

Եվ այսպես, Կարսի ուղղությամբ հակառակորդ կողմերի զինվորների թվաքանակների միջև ինչ-որ ձևացող տարբերություն չի եղել: Ամենահամեստ ու «համաձայնողական» մոտեցման դեպքում նույնիսկ, կողմերի ուժերը կարելի է ընդունել, վատագույն դեպքում, մոտավորապես հավասար: Այսինքն՝ Կարսի ուղղությամբ հակառակորդի անհերքելի և դիմադրությունն անհիմաստ դարձնող թվային գերակշռության մասին խոսք լինել չի կարող: Էլ չենք խոսում այն մասին, որ, ըստ ռազմական գործի դասական տեսության, հարձակվող կողմը կարող է հաջողության ակնկալիքներ ունենալ, եթե գերազանցում է պաշտպանվող կողմին առնվազն երեք անգամ: Հայտնի փաստ է նաև, որ ունեցած զինատեսակներով նույնպես հայկական կողմը չէր զիջում քեմալական բանակին: Չմոռանանք, սակայն, ամենակարևորը. հայերի ձեռքում էր Կարսը՝ իր աշխարհով մեկ հայտնի ամրություններով ու գործնականում անսպառ զինապաշարով: Սակայն... «Կարսի անկումից մի շաբաթ առաջ պարզվեց, որ ամրութիւնների վերայ սպաներ չը կան, որ այդ հարիւր թնդանոթները ղեկաւարելու համար Կարսի բերդի տրամադրութեան տակ կան միայն մի քանի մասնագէտներ և պակասում է 40-50 սպայ... Այդ առիթով միայն այդ օրը ձեռք ու ոտք ընկած «շտաբը» հեղեղեց սպարապետին և գեներալ Սիլիկովին հեռագիրներով, բայց արդէն ուշ էր, իհարկէ, Կարսի ժամերը արդէն հաշված էին... Կարսի անկումից 5 օր առաջ բոլորի համար, հրապարակավ պարզվեց, որ Կարսի ամրութիւնները և խրամատները ոչ միայն էլէկտրական, կամ որևէ այլ լոյս չունեն, այլ չունեն և ջուր, չունեն հեռագրական և տելեֆօնի կապ ոչ իրար հետ և ոչ շտաբի հետ: Երկաթուղու գծերը, որոնցով փոխադրվում էին դիրքերը ռուբերը, միանգամայն փչացել էին: Ոչ միայն ֆօրտերը, դիրքերը, այլ նույնիսկ հրետանու հրամանատարը, բոլոր ամրութիւնների անմիջական մեծը, իր տրամադրութեան տակ աֆտօմօբիլ չունէր...»<sup>110</sup>:

Անցնենք այժմ կողմերի բանակների որակական, այն է՝ մարտունակությ-

106 Տե՛ս Սիւրմէնեան Գ., նույն տեղում:

107 Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., նույն տեղում:

108 Տե՛ս Խատիսյան Ա., նույն տեղում:

109 Տե՛ս Խուրշուդյան Լ., նույն տեղում:

110 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 391-392:



յան աստիճանների դիտարկմանը:

Քենալական կողմը պատմության այդ ժամանակահատվածում լուծում էր թուրքական պետականության լինել-չլինելու խնդիրը և հանուն այդ խնդրի հաղթական լուծման վարում էր, առանց չափազանցության՝ հայրենական պատերազմ: Այն էլ երկու ճակատով՝ հունական և հայկական: Արևելյան՝ հայկական ուղղությամբ այդ գաղափարի պրակտիկ իրագործման պարտականությունները ստանձնել էր նրա ամենավառ կրողներից մեկը՝ գեներալ Քյազիմ Կարաբեքիրը: Թե ինչպես էր կարողացել Մուստաֆա Քենալը Առաջին աշխարհամարտում պարտված թուրքին համոզել ու կրկին մղել պայքարի, դա գիտի միայն ինքը, բայց իրողությունն այն է, որ Քենալի գաղափարակիցներից մեկը՝ Քյազիմ Կարաբեքիրը, իր հերթին կարողացավ, այսօրվա լեզվով ասած, այնպես մոտիվացնել իրենց պարտված բանակի կիսաթափառական, մերկ ու սոված նախկին զինվորներին, որ բոլշևիկյան Ռուսաստանից անհրաժեշտ օգնությունն ստանալուց հետո հնարավոր եղավ կազմավորել կանոնավոր զորաբանակ և արշավել դեպի Հայաստան: Ու թեև այդ բանակի Գերագույն գլխավոր հրամանատար Մուստաֆա Քենալը հայտարարված էր պետական հանցագործ և հեռակա կարգով դատապարտված կախաղանի, բանակը նրան հավատում էր և գնում նրա հետևից: Նման խիստ «դեղիկատ» քաղաքական ու ռազմական պայմաններում, որոնցում հայտնվել էր Քենալը, դա հնարավոր էր միայն այն դեպքում, եթե զինվորն իր աչքի առաջ ուներ իր հրամանատարության՝ վերևից ներքև անբասիր կեցվածքը: Եթե այս ամենին գումարենք նաև արշավանքի հաջող ընթացքի պարագայում ակնկալվող թալանն ու ավարառությունը, ապա կարելի է ասել, որ թուրքական զորահրամանատարությունը կարողացել էր իր զինուժը տրամադրել պատերազմի և որոշ պայմաններում կարող էր ունենալ հաղթանակի ակնկալիքներ:

Հայաստանը նույնպես լուծում էր հայկական ազգային անկախ պետականության մնալ-չմնալու խնդիրը: Եվ հանուն դրան նույնպես մարտնչում էր երկու ճակատով՝ քենալական և բոլշևիկյան: Եվ Հայաստանի վարած պատերազմն էլ, առանց վերապահումների, նույնպես հայրենական էր: Արևմտյան՝ քենալական հատվածի գլխավոր՝ Կարսի ուղղությամբ այդ գաղափարի պրակտիկ իրագործման պարտականությունները դրված էին հայ գեներալներ Փիրումյանի և Հովսեփյանի ուսերին: Կրկնենք. Կարաբեքիրը պարտված, կիսատված ու կիսաթափառական նախկին զինվորներից կազմավորեց կանոնավոր զորախումբ և արշավեց Հայաստանի վրա: Այսինքն՝ զբաղվեց զինվորականի իր գործով: Իսկ ինչ արեցին իրենց պետության ծրագրերի իրականացման ուղղությամբ Քյազիմ Կարաբեքիրի դիմաց կանգնած հայկական բանակի գեներալները, ինչո՞վ էին զբաղված նրանք նախորդ ամիսներին և այժմ, երբ թշնամին արդեն հատել էր երկրի սահմանը: Նախորդ շարադրանքում քանիցս նշվել է, որ այդ գեներալները Կարսում զբաղված էին ամեն ինչով, բացի իրենց ուղղակի և միակ պահանջվող գործից՝ զինվորականի պարտականություններից: Իսկ հատկապես և առաջին հերթին՝ իրենց ենթակա զորամիավորման միջոցով երկրամասը թալանելով: Այսինքն՝ հայ զինվորը այդ զորախումբում նախ՝ տեղի հրամանատարության հարստացումն ապահովող գործիք էր և հետո նոր

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

միայն, եթե, իհարկե, դրան բաժին մնար՝ պետությունն արտաքին թշնամուց պաշտպանող մարտիկ: Ուստիև, միանգամայն բնական է, որ «... շատ հասկանալի հոգեբանական առանցքում մեր զօրաբանակը չէր կարող կռվել և յաղթել: Նա իր չորս կողմը տեսել էր միայն թալան, միայն ինտրիգ ու միայն ոճրալից խաղաղ ազգաբնակչությունը թալանելու և կեղեքելու կազմակերպությունը...»<sup>111</sup>:

Ընդ որում, հայ գեներալները թալանից չհրաժարվեցին մինչև վերջին պահը. «Կարսի անկումից 4 օր առաջ Կարսի ոստիկանապետ Քեասօեան գեկուցեց ինձ, որ տեղեկություն ստանալով, որ գիւղերից գինվորականները սայլերով թալան են բերում, նա պատվիրեց բռնել թալանչիներին և սայլերը: Բռնվեց 28 սայլ բուրդ և սայլերին ուղեկցող մի հայ սպեկուլեանտի մօտ գտնվեց գեներալ Փիրումօվի հետևեալ վկայեականը. «Թոյլ եմ տալիս քաղաքագլուխ Նոհրատեանին «քրդերի լքված վայրերից» բուրդ կրել քաղաքի պէտերի համար»<sup>112</sup>:

Ահա Կարսի անկումից մի քանի օր առաջ մեր մյուս գեներալի «խիստ գեներալավայել» գործողության ևս մեկ վկայություն. «Եւ այդ օրերում եւ ստանում եմ գէն. Յովսէփեանից հետևեալ ռուսէրէն տելեֆօնագրումը, այն ճակատից, ուր նա յոկտեմբերի 15 այնպես խայտառակ կերպով փախաւ Կարաբեկիր փաշայի թնդանօթների առջևից: Արփաչայի մօտ, Կարս-Աղէքսանդրապօլ խճուղու վերայ, ոստիկանությունը բռնել է իր եղբոր տաւարը, որ նա տանում էր Լօռի, առարկելով, որ այդ տաւարը գեներալինն է և այդ առիթով չար լեզուները իմ հասցէին տարածում են նենգ զրպարտութիւններ: Բարեհաճեցէք հրամայելու վերադարձնել բռնված տաւարը եղբորս, որովհետև ես մասնակից չեմ այդ տաւարին»<sup>113</sup>:

Իսկ այդ նույն օրերին «Հայկական զօրաբանակը կրիտիկ մօմենտում մի աֆտօմօրիլ անգամ չունէր: Թէ ո՛ր չքացան, այդ բազմաթիւ աֆտօմօրիլների հետ միասին և հազարաւոր ձիերը և եզները, որ գինվորական իշխանությունը անդադար բռնագրավում էր տարիուկէս ժամանակի ընթացքում Կարսի նահանգում իր «ռազմական» և պատերազմական պէտքերի համար, դա նոյնչափ հետաքրքիր որչափ և մութ պատմություն է...»<sup>114</sup>:

Նախորդ ամբողջ շարադրանքից զուտ տրամաբանորեն միանգամայն հասկանալի է, որ նման հրամանատարության ձեռքում հայտնված և նման առօրյայով՝ առանց համապատասխան կարգապահական դրվածքի ու պարտականությունների զորախումբը չէր կարող հանդես գալ որպես մարտական միավոր<sup>115</sup>: Հայ գեներալների և սպայակազմի «շնորհիվ» Կարսի հայկական զորախումբը 1920 թ. ամռան վերջերին արդեն հասցված էր հակառակորդի համար ընդունելի «անհրաժեշտ վիճակի». ներքուստ նա արդեն միանգամայն քայքայված ու բարոյալքված էր, միանգամայն անպատրաստ ինչ-որ լուրջ ռազմական գործողությունների և իրենից ներկայացնում էր հրաշալի մի հոււմքանյութ արտաքին ազդեցության միջոցով տարբեր մա-

111 **Ցարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 159:

112 Նույն տեղում..., էջ 384:

113 Նույն տեղում, էջ 163, 173:

114 Նույն տեղում, էջ 201, 239:

115 Հանրահայտ իրողություն է, որ ամեն ինչի հետ մեկտեղ Կարսի զորախումբում ահռելի չափերի էր հասնում նաև դասավորությունը, որն աճում էր օր առ օր, տե՛ս օրինակ, **Հարությունյան Վ.**, Կարսի նահանգը..., էջ 321-323, 334-337, 340, 342, 360, 364-368:

նիպույացիաներ իրականացնելու համար, քանզի «...այդ բանակը արդէն թունաւորված էր և գնում էր հսկաազգային ճանապարհով»<sup>116</sup>:

**Այդ օրերին արտաքին մանիպույացիաները պետք է դրսևորվեն քեմալական զորքին դիմադրություն ցույց չտալու, Կարաբեքիրի՝ դեպի Կարս շարժվելուն չխոչընդոտելու միջոցով: Դրա իրականացումն էլ պետք է արագացնեն հայ բոլշևիկները, որոնք ընդդէմ սեփական ազգային պետությանն ուղղված իրենց տերերի՝ այդ առաջադրանքը պետք է ասել կատարեցին փայլուն ձևով:**

Վերհիշենք 1920-ի մայիսը. զորախմբի երեք կարևորագույն կայազորների՝ Ալեքսանդրապոլի, Կարսի և Սարիղամիշի զգալի հատվածներ՝ հատկապես հրամանատարական կազմից, անցել էին խռովարարների կողմը: Հասկանալի է, որ խռովությունը ճնշվելուց հետո խիստ անտրամաբանական, նաև «ոչ մարդկային» կլիներ, եթէ հանկարծ կողմերն ուրանային ու մոռանային իրենց մայիսյան մտերմությունը: Դա չէր կարող տեղի ունենալ, քանզի հայ բոլշևիկները չէին կարող «գործը կիսատ թողնել» նրանք պետք է իրենց մասով ապահովեին Կարսը քեմալականներին հանձնելու ծրագիրը, ինչի ամենադյուրին ճանապարհը, ինչպես քանիցս նշել ենք, տեղի զորախմբի կողմից թուրքերին դիմադրություն չցուցաբերելն էր: **Բացի «կարմրած» սպայակազմի հետ այդ ուղղությամբ համապատասխան պայմանավորվածություն ձեռք բերելը, դրան հասնելու ավելի արդյունավետ ճանապարհ գոյություն չունէր:** Առավել ևս, որ Ռուսաստանի շուտափույթ Կովկաս վերադառնալուն տենչացող այդ սպայակազմի համար Ռուսաստանի նոր տերերը միանգամայն ընդունելի էին, իսկ նրանց հաղթանակն էլ՝ անխուսափելի և, բնականաբար, խիստ ցանկալի: Իսկ որն էր լինելու այդ ամենի դիմաց վճարվող գինը: Այստեղ էլ տրամաբանորեն ամեն ինչ հստակ է. անձեռնմխելիություն նոր կարգերի օրոք, հրամանատարական պաշտոններ նոր իշխանության բանակում և ինչքի պահպանում: Հետագա զարգացումները հաստատում են այդ ամենը:

Առաջին քայլը պետք է կատարեր սպայակազմը: Եվ կատարեց. «Մեր հրամանատարությունը ոչ մի հասկացողություն չունէր թշնամու ոչ միայն մոտալուտ անելիքների մասին, այլև նորա ոյժերի, նորա հրամանատար կազմի մասին...Երբ Վանանդի սարալանջերում առաջին անգամ որոտաց տաճկական թնդանոթը, հայ սպան փախաւ առաջինը և մեր ռուսական ու ռուսասեր բարձր հրամանատարութեան առաջ բացվեց մի անվիճելի ճշմարտություն՝ մենք հրամանատար կազմ չունէինք... Հրամանատարությունը կանգնած էր երկրի առաջ իր բոլոր անկարող մերկութեամբ... Յոկտեմբերի 15, առաջի և վերջի կովից յետոյ, մեր հրամանատարութեան կատարեալ սնանկութիւնը կասկածից դուրս էր... Մեզ խորթ և ապիկար հրամանատարութիւնը առաջ բերեց ամօթալից մի սօղօմ միայն, զրկելով հայկական քաջութիւնը կովելու և պատերազմի դաշտում ընկնելու մեծ պատվից»<sup>117</sup>:

Բերենք այդ դեպքերից ավելի կոնկրետ՝ առարկայական և տիպիկ օրինակ. «Քեազում Կարաբեկիր փաշայի արշաւի ժամանակ առաջի խուճապի անվիճելի հեղինակը ռուսախօս գնդապետ Միրիմանովն էր: Նա ուժգին

ՎԿԿ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) քառի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

116 Յարությունեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 558:  
117 Յարությունեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 163, 581,454, 456:

թմրկահարեց նահանջ և ո՛չ թշնամի տեսնելով և ո՛չ էլ նորա հրացանի ձայնը լսելով, մի երկու-երեք ժամվայ խուճապային մթնոլորտում ոչ միայն մերկացրեց հայ-տաճկական սահմանը, այլև դատարկեց ազգաբնակչությանից երկու մեծ գաւառակ՝ Խորասանը և Սարիղամիշը և ինքը, իհարկէ, առաջինը փախաւ... գնդապետ Միրիմանով առաջինը թողեց դիրքերը, փախաւ և գունդն<sup>118</sup> էլ, իհարկէ, յետևեց նորան... Այդ խուճապով բռնվեց միշտ դէպի թիկունք տրամադրված գեներալ Յովսէփեան և փախուստի «ռազմական միտումները» յաջորդում էին այնուհետև մէկը միուսին: Ո՛չ Կաղզման և ո՛չ Սարիղամիշ մենք թշնամի չը տեսանք, բայց և այնպէս գեներալ Փիրումով-Յովսէփեան, «առանձին սաղրական միտումներով» հարկաւոր էին համարում տենդոտ դատարկել այդ վայրերը, տնաւէր անել հայ ազգաբնակչութիւնը և փախուստի տրամադրել այն զօրքը, որին նոքա տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում դաստիարակում էին միայն թալանի և միայն կեղեքումների վարժողութիւններում...երկրի քուրդ և թուրք ազգաբնակչութիւնը միանգամայն ափշած է, թէ ինչու մեր գնդերը փախչում են, երբ մեր դիմացի թշնամին թէ դեռ շատ հեռու է և թէ շատ թոյլ»<sup>119</sup>:

Հայ բոլշևիկները «սպայական խոսքին» տեր կանգնած բանակակործան այդ սպաներին մենակ չթողեցին և քեմալականների՝ Կարսին տիրանալը առավել հաստատ ու դյուրին դարձնելու համար օգտագործեցին նաև զորքը վերջնականապես քայքայելու նոր հնարքներ:

Նախ, մայիսյան ձառերից հետո, հատկապես շարքային գորակազմի համար մշակվեց և սկսեց տարածվել հետևյալ «մեթոդական ձեռնարկը».

#### ««Հույժ գաղտնի»»

Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին, թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի Գարնիգոն մեկնող բոլշևիկներին. անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում, եթե հնարավոր է, ինչպես նաև թոռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդէմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝

Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ արքերեսիվ նպատակներ չունի:

Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային ազատության համար ընդդէմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի):

Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա՝ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգվի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև՝ Արևելքի խորհրդայնացումը:

Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը. Այս նպատակի համար պետք է.

Կազմալուծել հայկական կոմկոլ բանակը բոլոր միջոցներով, դրանք են.  
ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել գորահա-

118 Խոսքը գորախմբի առավել համալրված (2000 սվին) 4-րդ գնդի մասին է:  
119 **Ցարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 202, 386:

վաքին:

բ) ռազմաձակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը վերադառնան թիկունք:

գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:

Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասքյարը հեղափոխական ասքյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցությունից:

Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով՝ Հայաստանը ընդմիջտ կկապվի Ռուսաստանի հետ ընդմիջտ վերջ կտրվի պատերազմին և սովին ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործի:

Ծանոթություն – Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել: Հայաստանի կոմ. կուս. կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ս. Կապյան, Ա. Մռավյան, Ա. Նուրիջանյան, Շ. Ամիրխանյան, Ի. Դովլաթյան, Ա. Հովհաննիսյան

Նո. 218 Բաքու 1920 ՍԵՊ 20»<sup>120</sup>:

Բնականաբար, մեթոդական ձեռնարկներ տարածելը դեռևս բավարար չէր: Կովելուց հրաժարվելն ու դիրքերը թողնելն անհրաժեշտ էր ուսուցանել նաև կենդանի օրինակով. երբ ամբողջ Կովկասով տարածվեց Կարսի գլխին կախված վտանգի լուրը, տարածաշրջանի զգալի թվով հայ երիտասարդներ կամավորների անվան տակ ուղևորվեցին դեպի Կարսի ճակատ, իբր՝ զորքին օգնելու<sup>121</sup>, սակայն «... «ռազմաբեմ» նետվեց մի բուռն հայ երիտասարդություն: Բայց այդ եկվորները գնում էին ոչ թե մեռնելու, ապա սիրված լինելու երագներով, այլ որպես ռուս լրտեսներ և ռուս պրօպագանդիստներ գնում էին լքելու հայկական թշվառ բանակը և ստեղծելու այն սօդօմը, ուր պետք է խորտակվէր հայկական անիշխանությունը»<sup>122</sup>: Այդ «հայրենասեր»

Ժ (Ծ-Զ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԿՎ համահայկական հանդես

120 ՀԱԱ ֆ. 1022, ց.3, գ.275, թ.1: Տե՛ն նաև **Հարությունյան Վ.**, Կարսի մարզը Հայաստանի..., էջ 21-22): Արխիվային այս փաստաթղթի կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ այն իրողությանը, որ հայրենի մասնավոր պարբերաբար հայտնվում են կիսասփրոդական՝ որոշ դեպքերում՝ անստորագիր հրապարակումներ, որոնցում կասկածի տակ է առնվում արխիվային սույն փաստաթղթի խկությունը և հայտարարվում է, որ նա «կեղծ է»: Մենք ամենին չենք բացառում նման տարբերակի հավանականությունը, բայց ցանկացած ենթադրություն, առավել ևս պնդում, պետք է հիմնավորվի ինչ-ինչ ապացույցներով: Եվ ի վերջո, եթե սա իրոք կեղծ փաստաթուղթ է, ինչու է նա մինչ օրս պահվում Ազգային արխիվում և ոչ թե, համաձայն գործող կարգի, օտարվում այնտեղից: Մեր կողմից հավելենք, որ հայրենադարձներից մեկի դստեր՝ պատմաբան Անուշ Անսեյանի ասելով, իրենց մեծերը հաճախակի պատմում էին, որ Կարսի գորավմբի զինվորներին ուղարկված ծխախոտի թղթի փաթեթների մեջ շատ հաճախ հայտնաբերվում էին այդ բովանդակության բոլշևիկյան գրություններ: Այն, որ արխիվային այս փաստաթուղթը բնագիրը չէ, երկու կարծիք լինել չի կարող: **Մեր ենթադրությամբ՝ այդ բնագիրն իրականում գոյություն ունեցել է, սակայն իր բովանդակության պատճառով խորհրդային տարիներին պահվել է չափազանց «խորը և հեռու» և հասել է քայքայման եզրին: Խորհրդային կարգերի փլուզմանը զուգահեռ որոշել են այն վերականգնել և ստացվել է այն, ինչն այժմ ունենք:** Ի վերջո, իր բովանդակությամբ այս փաստաթուղթը խիստ բնորոշ է այդ օրվա հայ բոլշևիկների թե՛ մտածելակերպին, թե՛ գործելաձևին և միանգամայն համահունչ է այդ ամենը արտացոլող բոլշևիկյան բազմաթիվ այլ փաստաթղթերի հետ:

121 Տե՛ն **Արսէն Ա. Քահ. Սիմէօնեանց**, Ջօր. Նազարբեգեան, «Ալիք» օրաթերթ, Թէհրան, 1954, 18 օգոստոսի, N 182:

122 **Ֆարությունեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 581:

հայ երիտասարդները, հայտնվելով դիրքերում, վճռական պահին նախ սկսում էին գոռալ թե « ... մեր ընկեր բոլշևիկների դեմ մենք կռվել չենք ուզում, եկող թուրքերը մեր ընկերներն են», հետո ցուցադրաբար գցում էին զենքը և դիմում փախուստի, հորդորելով մյուս զինվորներին հետևել իրենց օրինակին<sup>123</sup>: Եվ ինչն է հատկանշական. մարտական դիրքերը լքելուց հետո նրանք, որպես կանոն, ուղևորվում էին ոչ դեպի թիկունք, այլ վազում էին ուղիղ դեպի թուրքական բանակի դիրքերը<sup>124</sup>: Դեպի Կարս արշավող Կարաբեկիրի զորաջոկատի հետ իրենց հայրենիքը նվաճելու էին գալիս նաև հայ բոլշևիկները<sup>125</sup>: Նրանց հետ էին, իհարկե, և այլազգի իրենց գաղափարակիցները. «Երբ թուրք հորդաները ներս խուժեցին Կարս, փողոցում երևացին կասկածելի տիպի ռուսներ և Կովկասի թուրքեր... Պարզ էր, որ ազգերի ինքնորոշման այդ նախանձախնդիր արկածախնդիրները ուղեկցում էին Կարաբեկիրի բանակը՝ որպես պրոպագանդիստներ, բերելով իրանց հետ թոյնը, որ ճաշակել էր հայ զինվորը դեռ մայիսեան օրերում...»<sup>126</sup>: Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ» թերթն այդ օրերին գրում էր. «Հոկտ. 30-ին տաճկական զորքերի առաջապահ մասերը չհանդիպելով ոչ մի դիմադրության հայկական զորամասերի կողմից գրավեցին Կարսը: Մինչև թուրքական զորքերի մտնելը, հայկական զորքերը խորը հանդգնված էին, որ Կարսի վրա հարձակվող զորքերը բոլշևիկներ են, որ պատճառով և նրանք դիմադրություն ցույց չտվին տաճիկներին...»<sup>127</sup>: Նմանատիպ բովանդակությամբ «բացատրություն» է բերում նաև հին բոլշևիկ, Իջևան-Ղազախում մայիսյան խռովության կազմակերպիչներից մեկը՝ Շավարշ Ամիրխանյանը՝ «Դեպքեր են եղել, երբ հայկական զորամասերը առանց կռվի անձնատուր են եղել Քեմալին՝ նրան ընդունելով բոլշևիկի տեղ»<sup>128</sup>:

Միակ իրական ուժը Կարսի զորախմբում, որ կարող էր ստեղծված իրավիճակում գոնե լոկալ մասշտաբներով իրական դիմադրություն ցույց տալ քեմալականներին, դա զորախմբում ընդգրկված թվով մոտ 2500 արևմտահայերն էին, որոնք ոչ միայն չէին ընդունում բոլշևիկյան քարոզչությունը, այլ բավականին կոշտ պայքարում էին դրա դեմ: **Ջորախմբի բարձրագույն հրամանատարության հրահանգով 2500 արևմտահայ զինվորները փորաքանակ խմբերով բաշխվեցին ամբողջ ռազմաճակատով մեկ**<sup>129</sup>: Այսինքն՝ այդ ուժը ոչ միայն չօգտագործվեց զորախմբի հրամանատարության կողմից, այլ նրա կողմից արվեցին քայլեր, **որպեսզի բացառվի թուրքերին դիմադրելու այդ հնարավոր օջախի ի հայտ գալը...**

Բերենք ևս երկու չափազանց կասկածելի դրվագ այդ օրերի ռազմական գործողություններից: Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերի Գլխավոր շտաբը, տեսնելով Կարսի զորախմբում տիրող իրավիճակը և հաս-

123 Ի դեպ, նման իրավիճակում է ինքնասպանություն գործել 1-ին գնդի հրամանատար Սազմանյանը, երբ զինվորները հրաժարվել են կատարել գրոհի ելնելու նրա հրամանը: Տես **Յ. Ա. Ք. Հաճեան**, Կարսի վերջին օրերը. 1920 թի., «Ալիք» օրաթերթ, ԹԷԽրան, 1961, 6-7 մայիսի, N 94-95:

124 Տես **Յ. Ա. Ք. Հաճեան**, Կարսի վերջին օրերը. 1920 թի. «Ալիք» օրաթերթ, ԹԷԽրան, 1961, 6,7 մայիսի, N 94,95,96:

125 Տես **Յ. Ա. Ք. Հաճեան**, նույն տեղում, **Իկիլիկյան Հրայր**, Վերելքի մեջ է իմաստը կյանքի, Եր., Հեղինակային հրատ., 2011, էջ 193-195:

126 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 440:

127 **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 509-510:

128 **Իկիլիկյան Հրայր**, նշվ. աշխ., էջ 192:

129 Տես **Սիրսէնեան Գ.**, Տաճկահայ զինուոր և զինուորականությունը, Պէյրութ, 1967, էջ 102:

կանալով, որ այդ գորախումբը որևիցե դիմադրություն չի ցուցաբերում թշնամուն, Կարաբեքիրի գորաջուկատը շրջապատելու և ոչնչացնելու համար մշակում է բավականին գեղեցիկ մի օպերացիա, կամ ինչպես այդ օրվա փաստաթղթերում է նշվում՝ «դիզլոկացիա»: Ընթերցենք այն. «Հռչակատր Բագարան, այնտեղ ուր Ախուրեան արնթաց փախչում է դէպի Արաքս, ինչպես և 77 թվին, թիրք գորաբանակի ամենացաւօտ թիկունքն էր: Հայկական գլխատր շտաբը, իր նշանատր դիզլոկացիան կազմելով, հաշվի էր առել ռազմաբէմի այդ խոցոտալից անկիւնը և այնտեղ ուղարկվեց իր ժամանակին փոխգնդապետ Կոնդախչեան: Այդ ըստ երևոյթին քաջ փոխգնդապետը իր հրամանատարութեան տակ ունէր հազար սվին, հարիւրից աւել հեծելազօր, ութը թնդանօթ և գնդացիներ: Բագրատունեաց ամառանոցի չքնաղ կիրճում այդ մեծ բունցքն էլ բաւական էր զինվորական մեծ ցոյց թշնամու թիկունքում անելու համար: Բայց սուրբ Գէորգի սպայական խաչով զարդարված երիտասարդ հայ փոխգնդապետը երերվեց իւր անմատչելի դիրքում մի 2-3 հարիւր քուրդ ձիաւորներ տեսնելով, թողնում է իր տեղում իր թնդանօթները, ամբողջ ռազմապաշարը, իր գորաբանակի բոլոր ծանրութիւնները և ամենաանամօթ կերպով իր գումարտակներով փախչում...

Այդ միջոցում վրա է հասնում այդ գաւառակում պատահմամբ եղած Կաղզմանի գաւառապետի օգնական Չիլինգարեան, որ ինքս ուղարկել էի դասալիք զինվորներին բռնելու: Նա իր մի 50 հեծեալ ոստիկաններով և գաւառակի մի բռուն կտրիճ հայերով հալածում է քուրդ հրոսակախումբը և այդպիսով ցրում Կարաբեկիր փաշայի առաջամասը, որից գնդապետ Կոնդախչեան, իր հազար սվիններով, փախաւ որպէս խելակորոյս»<sup>130</sup>:

Այս օպերացիան հայ սպաների կողմից ակնհայտորեն միտումնավոր կերպով ձախողվելուց հետո հայկական Գլխավոր շտաբը, ինչպես ասում են, չի ցանկանում համակերպվել հնարավոր պարտության մտքի հետ՝ առավել ևս որ ուժեր և հնարավորություններ դեռևս կային, և մշակում է մեկ այլ, նույնպես շատ գրագետ «դիզլոկացիա»: Ընթերցենք նաև այն. «...Եւ երբ Կարաբեկիր երևաց հռչակատր Վազինքոյի լեռնագոտում և սկսեց իջնել դէպի Կարսի տափարակը, Սպարապետ Նազարբէկով նպատակի է բռնում Կարաբեկիրի թոյլ թիկունքը: Այս անգամ նա ուղղում է դէպի պատմական Ալուջա մի լուրջ գորամաս, գնդ. Հասան Փաշայեանի հրամանատարութեամբ: Ինչ-ինչ յիմունքներով, գնդ. Հասան-Փաշայեանը լաւ ու քաջ զինուորականի համարում ունէր: Այդ դիվերսիայի լուրը Կարսում առնելով, մենք շատ բարձր տրամադրվեցինք: Ծանօթ երկրի տեղեկագրութեանը, մենք տեսնում էինք, թէ ինչպէս գնդապետ Հասան Փաշայեան պէտք է խփեր դէպի Կարս իջնող Կարաբեկիրի թիկունքից և ինչպէս մեր միւս զօրամասերը, որ մեր բանակի թևերն էին, պէտք է փակէին այն ծուղակը, որտեղից փախչելու այլևս հնար չըպէտք է ունենար թիրք հրամանատարը: Բայց մինչ մենք սրտատրօփ սպասում էինք Կարսում այդ հրավառ տեսիլին, մինչ գեներալ Կազարով, որ այդ օրը փոխարինեց գեն. Յովսէփեանին, շնչասպառ դիտում էր, թէ երբ Վազինքոյի բարձրունքներում կըտարածվի գնդ. Հասան Փաշայեանի հրետանու ծխալից մշուշը, գնդ. Հասան Փաշայեան հարկաւոր համարեց ոտը կարճ ձգել, դանդաղել իր մարշը, թողնելով դէպ-

130 Հարությունյան Վ., Կարսի մարզը..., էջ 383-387:

քերը իրանց բախտին ու իրանց ընթացքին...

Գնդ. Հասան Փաշայեան չերևաց Արփաշայի այդ խառնվածքում, Կարաբէկիի թիկունքը միանգամայն (փաստաթուղթը վնասված է) ... իջնում էր դէպի Կարս յաղթալից և թևաորված: Նրա հեռաոր թիկունքում եղած հայ զօրամասերը չէին յետապնդում նրան, իսկ առջևի հայ զինվորութիւնը ձգում էր զէնքը և փախչում: Այդպէս էր այն եզակի անբախտ հայ զինվորական մթնոլորտը, ուր Կարաբէկի այնչափ ուղեկից և այնչափ հեշտ դափնիք ձեռք բերեց»<sup>131</sup>:

Արդոյ՞ք մեր կողմից մի քիչ շատ ու չափից դուրս խիտ չդասավորվեցին «պատահականությունները»: Իրականում որևէից պատահականություն այստեղ չկա: Ընդհակառակը, այս ամենը միանգամայն տեղավորվում է Կարսի նվաճման քեմալաբոլշևիկյան ծրագրի՝ հայ բոլշևիկների հատվածով մշակված պլանի տրամաբանության մեջ: Այն է, ինչպես քանիցս շեշտել ենք, հասնել նրան, որպեսզի հայկական բանակը դիմադրություն չցուցաբերի քեմալական զորքի դէպի Կարս շաժվելուն: Այս ամենը պարզ ու ցուցադրական հայ բոլշևիկների պլանն էր «գործողության» մեջ. «...Հայկական զօրքը գոյիւթին չունէր: Երկու ամսվայ ընթացքում միայն նահանջելով և միայն լքելով Կարսի նահանգի իր ահռելի դիրքերը, մեր զօրաբանակը հալվել ու չքացել էր: Նրա ռուս և ռուսախոս հրամանատարութիւնը, անընդունակ, ապիկար և անցաւակից երկրի իդեալներին, միշտ խորթ և միշտ օտար էր մեզ համար: Նա չը կոփեց մեր զինվորների քաջալից շարքերը, նա թալանի ընտելացրեց նոցա... հայ զինվորը, և առիւծ և հլու երբէմն պարծանք ռուս գումարտակների, չը ստացաւ ազգային դաստիարակութիւն իր հայրենի զօրաշարքերում...»<sup>132</sup>:

Նույն պլանի տրամաբանության շրջանակներում լուծվեցին սպայության համապատասխան հատվածի նաև զուտ կենցաղային՝ ընտանեկան և ունեցվածքային հարցերը. «Ամենքից առաջ, լուսաբացին, գաղտագողի, պետական բեռնակիր աֆտօմօբիլներով և սայլերով, մեր հրամանատարութիւնը փոխադրեց դէպի Աղէքսանդրապօլ իր ընտանիքները, իր բոլոր ունեցվածքը, իրերը, պաշարը և վերջի ջարդված աթոռը»<sup>133</sup>:

Բայց նման ապահով ձևով Կարսից չկարողացավ հեռանալ գեներալ Դանիել-Բեկ Փիրումյանը. «Յոկտեմբերի 28, գիշերը, ոստիկանապետը գեկուցեց ինձ, որ գեն. Փիրումով իր արբանեակներով, լուսաբացին, գաղտնագողի փախչում է դէպի Աղէքսանդրապօլ, նկատի առնելով, որ Կարսը միանգամայն վտանգված է: Հրամանատարի այդ խայտառակ փախուստի մասին ես անմիջապես տեղեկացրեցի մինիստր Բաբալեանին: Ի ծայր յուզված, մինիստր Բաբալեան անմիջապէս գնաց գեն. Փիրումովի մօտ:

Թէև դեռ ժամի 12 էլ չը կար, բայց թէ հրամանատար Փիրումով և թէ նորա «շտաբը» անոյշ քնած էին...

Երբ մինիստրը մտնում է գեներալի նընջարանը, հայկական «գործող» բանակի հրամանատարը, յօրանջելով ասաց դժգոհ,– Էհ, նոր էր աչքս կպել...

Մինիստրը, կոշտ կտրելով, ասաց,– գեներալ, ես եկել եմ պետական կար–

131 Նույն տեղում:

132 **Ցարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 514, 526, 527:

133 **Ցարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 202:



ևորագոյն գործով, պահանջեցեք շտաբի պետին...

Շտաբի պետը, որ պառկած էր միուս սենեակում, խնդրում է մինիստրին իր ննջարանը, բայց Բաբալեան, յուզված, շատ բարձր գոռում է,– Ես կառավարութեան ներկայացուցիչն եմ բարեհաճեցէք ներկայեանալ...

Երբ գալիս է «շտաբի» պետը, մինիստր Բաբալեան բացատրութիւն է պահանջում զօրքերի հրամանատարից, թէ ինչ յիմունքներով, առանց նոյնիսկ իրան իրազէկ անելու ու ամբողջ նահանգի հայ ազգաբնակչութիւնը երեսի վրայ թողնելով նա իր արբանեակներով լուսաբացին փախչում է քաղաքից...

Գեներալը կմկմաց, իսկ շտաբի պետը փորձեց առարկել, որ այդ հրամանատարի իրատունքն է և նա ղեկավարվում է «ռազմական» միտումներով: Մինիստրի և այդ երկու զինվորականների միջև առաջ է գալիս շատ սուր ընդհարում և Բաբալեան, անվճռաբեկ առաջարկում է գեներալին տեղից չը շարժվել... Ընկճված և թակարդ ընկած, գեներալը ստիպվում է հնազանդվել: Հանգիստ քնել ժամի տասն և մէկին Կարսի անկման նախօրեակում և լուսաբացին գաղտնագողի փախչել Կարսից, «ռազմական» միտումներով: Այդ կարող էր անել միայն մեր օրերի հայկական հրամանատարը և նա փորձեց անելու այդ, պատմութեանը յանձնելու իր տիպարը և իր օրերի անհոգ ու ապիկար տրամադրութիւնը»<sup>134</sup>:

Իսկ մեկ օր անց, «Երբ Կարսի անկման առաւօտը Խնուսցի խմբապետ Փիլոս, շնչասպառ, քշում է ձին դէպի գեներալ Փիրումովի շտաբը և տեղեկութիւն է բերում, որ տաճկաց առաջաւոր մասերը արդէն տիրել են հոջակաւոր Կանլին, ..., որ Կարսից մի 2-3 վերստի վրայ է միայն, գեներալ Փիրումով և նորա «շտաբը» դէռ անուշ նիբիում էին անկողնում»<sup>135</sup>:

Երբ անդրադառնում ենք Կարսի մեր գորախմբի 1920-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների գործողութիւններին՝ ներառյալ նաև հոկտեմբերի 14-15-ի փախուստի վերածված մեր հակահարձակման միակ և անհաջող փորձը<sup>136</sup>, ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ Կարաբեքիրի գորաջոկատի՝ Հայաստանի սահմանը հատելու օրվանից **Կարսի հայկական զորախմբի հրամանատարական կազմը հետևողականորեն արել է ամեն ինչ, որպեսզի հայկական զորքը հանկարծ դիմադրություն չցուցաբերի հակառակորդին, և հետո էլ արդեն այդ փախչող զորքը հավաքել ու կենտրոնացրել է «ապահով» մի տեղ, որպեսզի այն իր ամբողջ համակազմով՝ շարքայից մինչև գեներալ, հնարավորություն ունենա «ապահով» կերպով գերի հանձնվելու թուրքերին, վերջիններիս տալով այն ամենը, ինչ որ նրանք կամենում էին՝ Կարս բերդաքաղաքն ու ամբողջ Կարսի նահանգը:**

1920 թ. հոկտեմբերի 30-ին հայկական կողմից առանց որևիցե դիմադրության հանդիպելու Քյազիմ Կարաբեքիրն իր զորաբանակով մտավ Կարս: Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստեփան Ղորղանյանը մեզ ներկայացնում է վերջին տեսարանը Կարսից, որին ինքն ակնատես է եղել Կարսի զորախմբի հրամանատարի շտաբում՝ գեներալ Փիրումյանի և մի

134 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 164,178,180,181:

135 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 457:

136 «Գործին և հանգամանքներին տեղեակ մարդիկ, ականատեսները, ասում էին, որ յաջողութիւնը մեր կողմն էր, թշնամին՝ թոյլ և անվճռական, և մի ուժգին գրոհ մեր կողմից և նա կը փախչէր, թողնելով ոչ միայն Սելիմը, այլև Սարիղամիշը...», տես **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 395:

Փ (ԺԶ) քառի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎլԿ համահայկական հանդես

քանի այլ հայ երևելիների գերի հանձնվելուց բառացիորեն թոպեներ առաջ. «... յենարանների վերայ, որպէս մի ուրուական, կանգնած էր գունատ և անտարբեր դէմքով գեներալ Փիրուսով: Այնտեղ էր մինիստր Բաբալեան, նախկին զինվորական մինիստր գեներալ Արարատով, անբախտ գեներալ Կազարով, Գարեգին Եպիսկոպոսը, մի քանի գնդապետներ, Կարսի քաղաքագլուխ Նոհրատեան և ուրիշները: Բոլորը կորցրել էին իրանց, բոլորը լուռ էին և բոլորը ինչ-որ մի բանի էին սպասում... Առաջ եկաւ գեներալ Կազարով և շատ հանգիստ ասաց ինձ, – ամէն բան վերջացած է, զօրքը միանգամայն հրաժարվում է կովել և ես մնացի հրամանատար առանց զօրաբանակի...»<sup>137</sup>:

Պատկերն իրոք, ցնցող է: Բայց այն դառնում է միանգամայն օրինաչափ և միանգամայն սպասելի, եթե մի քիչ հետ գնանք և տեսնենք, թե ինչ էր իրենից ներկայացնում այդ ռազմավարական ուղղության հայ զորահրամանատարի ռազմակայանը. «Առանց կապի զօրականների հետ, առանց սուրհանդակների, լրտեսների, տեղեկութիւնների, հերթապահ տեղեֆոնիստների, հերթապահ աֆտոմոբիլների, առանձին յանձնարարութիւնների սպաների և առանց օկուրան տեղեկատու մարմնի, [այդ շտաբը] նման էր աւելի մի անկեալանոցի և ոչ երբէք ինքնակալ հրամանատարի կայանի...»<sup>138</sup>:

Չմոռանանք համենայն դեպս, որ եթե զորախմբի մի շարք սպաներ «ռուսախոս ու ռուսամոլ» էին, ապա հայկական զինուժում նման հանցավոր անտարբերություն ու անգործություն եթե ոչ սերմանողներից, ապա հանդուրժողներից մեկը, Կարսի բերդի շտաբի պետ Վահան Տեր-Առաքելյանը, կարծես տիպիկ ազգային կերպար էր՝ նա Կոմիտասի աշակերտներից էր, այդ օրերին էլ՝ դաշնակցական:

Մեր կողմից Կարսի կորստյան հետ առնչվող դեպքերի նման ընթացքի վերը բերված ամբողջ շարադրանքը հուշում և միաժամանակ ապացուցում է, որ իրոք, առանց կողմերի՝ այն է առանց Կարսի զորախմբի սպայակազմի որոշ «ներկայացուցիչների» և հայ բոլշևիկների նախնական պայմանավորվածության և վերջիններիս կողմից առանց ինչ-ինչ երաշխքների ներկայացման, իրադարձությունների նման ընթացքը պարզապես բացառվում էր: Իսկ նման երևույթներն ունեն իրենց բնութագրող համապատասխան անվանում՝ **ԳԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ**: Հայ սպայության մի հատվածի և հայ բոլշևիկների համատեղ ու միասնական իրագործած այս դավաճանությունը հիմնված էր երկու կողմերի շահերի ընդհանրության վրա, ինչին վերը քանիցս անդրադարձել ենք: Ուստիև, նրանք գործեցին համատեղ և, ինչպես տեսանք, բավականին «արդյունավետ». «...Նոքա երկու ամիս շարունակ եռանդալից նահանջում էին անտեսանելի թշնամու առջևից և իրանց այդ հանելուկային դերը պսակեցին Կարսի պարիսպների տակ: Նրանք առանց

137 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 164, Թուրքական գերությունից վերադառնալուց հետո գեներալ Դանիելբէկ Փիրուսովը մահացել է 1922 թ. հոկտեմբերի 15-ին: Մահվան վերաբերյալ համապատասխան գրանցումը կատարվել է Երևանի քր. Պողոս-Պետրոս եկեղեցու չափաբերական մատյանում (ՀԱԱ, Ֆ.47, ց.6, գ.365, թ.33 և շրջ.): Սակայն մատյանի այն թերթը, որտեղ նշվում են մահացածի մահվան պատճառն ու հուղարկավորության վայրը, փաստաթղթում բացակայում է: «Գեներալ Ղազարեան, քեանալիստների գերութիւնից ազատվելուց յետոյ, յետին չքաւորութեան մէջ, ապրում էր Թիֆլիզում: 23 թվին, Թիֆլիզի Միքայելեան կամուրջից, նա իրան Կուր գէտը նետեց ու խեղտվեց: Անկարող լինելով որևէ աշխատանք գտնելու, ի ծայր չքաւորութեան հետ մաքառելու մթնոլորտում նա կորցնում է հաւասարակշռութիւնը և վերջ տալիս իր կեանքին»: Տես **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 48: Գեներալ Ք. Արարատյանը գերությունից ազատվելուց հետո ծառայության է անցել Կարմիր բանակում, գնդակահարվել է 1937-ին: 138 **Յարութիւնեան Վ.**, Կարսի նահանգապետ..., էջ 497:

մի գնդակի յանձնեցին Կարսի անառիկ ամրութիւնները ռուս տաճկական դաշնակցութեանը...»<sup>139</sup>:

Զմոռանանք, որ հայ բոլշևիկներն էլ գորախմբի սպաներին իրենց խոստացած վճարը, չմոռացան ու չուրացան, և ինչպես արդեն նշել ենք՝ «... այդ բոլոր գեներալները և սպաները նախամեծար դարձան ռուս զօրաբանակում, նոցա հայրենիքի կործանումից յետոյ»: Երբ Հայաստանի խորհրդայնացումից օրեր անց սկսվեց հայ սպաների աքսորը դեպի Բաքու և Ռյազան, ապա «Բացառութիւն կազմեցին և մնացին իրանց տեղերում միայն մի քանի ընտրեալներ՝ գեներալ Յովսէփեան, գեներալ Լօմիզէ (հայ), գնդապետ Միրիմանօվ և մի քանի սպաներ»<sup>140</sup>:

...1920 թ. հոկտեմբերի 30-ի առավոտյան Կարսն ընկավ՝ իր հետևից պատմության վիհը տանելով նաև Հայաստանի Հանրապետությունը՝ այն նորաստեղծ հայկական պետությունը, որը դեպքերի բերումով հարյուրամյակների ընդհատումից հետո վերստին տիրացել էր Կարսին, սակայն ընդամենը 18 ամիս. «...Եւ այդպիսով մեր պետականութիւնը, երբ այդ պէտք էր, չունէր այն ոյժը, որ պէտք է պաշտպանէր երկրի պատիւը և մեր լինել կամ չը լինելու խնդիրը... Ազգային մթնոլորտում պետական անկայտութիւն ստացած, Հայաստանը չունէր իր ազգային բանակը, նա բնականապէս պէտք է պարտվէր.. երկրի վերջի վեց ամսվայ հոգևարք ընթացքում, զինվորականները Հայոց աշխարհի տէր և տնօրենն էին...նոքա սկսեցին այն արինալից արհաւիրքը, որ դղրդալից լուծվեց Կարսի անկումով, ապա և Հայեաստանի Հանրապետութեան խորտակմամբ»<sup>141</sup>:

Հատկանշական փաստ. 1917-ին ռուսական բանակը, այդ թվում նաև Կովկասյան ռազմաճակատում, ներքաշվեց քաղաքականության մեջ և մերկացրեց թուրքական ճակատը՝ մեզ համար համապատասխան հետևանքներով: 1920 թ. արդեն հայկական բանակը՝ ներքաշվեց քաղաքականության մեջ և նույնպես մերկացրեց թուրքական ճակատը՝ մեզ համար կրկին աղետալի ու ավերիչ հետևանքներով:

## Հետզրոյթուն

Նյութը շարադրելու ամբողջ ընթացքում օդում առկախվել և համառորեն չէր հեռանում հարցերի հարցը. «Իսկ կարո՞ղ էր արդյոք ամեն ինչ այլ կերպ ընթանալ»:

139 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 452:

140 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 458: Գեներալ Հ. Հովսէփյանն ու Ա. Միրիմանյանը ակնթարթի ընթացքում հայտնվեցին հայկական բոլշևիկյան բանակի շարքերում: Միրիմանյանը և Սարիղամիշի իր բոլշևիկ գործընկեր Լիպարիտ Մխչյանը ստանձնեցին հայկական Կարմիր բանակի 1-ին բրիգադի հրամանատարությունը (Ա. Միրիմանյանը՝ հրամանատար, Լ. Մխչյանը՝ կոմիսար): Հովսէփյանն ու Միրիմանյանը հայկական կարմիր զորաջոկատի գլուխն անցած մասնակցեցին Վրաստանի խորհրդայնացմանը, ինչից հետո՝ Հայաստանում Փետրվարյան ապստամբության ճնշմանը: Վերջին գործողության համար երկուսն էլ պարգևատրվել են Խորհրդային Ռուսաստանի շքանշանով. «Տաղը էր այդ, թէ բախտի քմահաճ պատկեր, գեներալը և գնդապետը ստացան այդ ռուս շքանշանները մի ինչ-որ վրացու ձեռքից...», տես Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 540:

Դրանից հետո շատ կարճ ժամանակահատված Հովսէփյանը զբաղեցրել է Լոռու զինկոմի պաշտոնը և մահացել է 1921 թ. հուլիսին, տես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին Աշխարհամարտի և Հայաստանի Առաջին Հանրապետության Տարիներին (1914-1920), հատ. Բ (1917-1920), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018, էջ 340: Կարապետ Հասան-Փաշայանը նույնպես 1921-ի հունվարյան բռնաճնշումներին չի ենթարկվել, նույնպես շատ արագ անցել է հայկական բոլշևիկյան բանակի շարքերը՝ որպես գնդի հրամանատար: Գնդակահարվել է 1937-ին՝ բոլշևիկների կողմից:

141 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ..., էջ 203, 437:

Ո՛չ, չէր կարող: Քանզի այդ ժամանակաշրջանում հայ հասարակությունը, անցյալից իր հետ բերելով հարյուրամյակների պետականություն չունենալու խիստ բացասական բեռը և այդ պահին էլ լինելով դեռևս փաստորեն չավարտված ցեղասպանության ու հայրենագրկման մահահորում, այնպիսին չէր, որ համախմբվեր անկախ պետականության գաղափարի շուրջ և կարողանար հենց պետականությունն ընդունել որպես իր հետագա գոյատևման միակ երաշխիքը: Այդօրվա Հայաստանի տարածքում միմյանց կողքի էին հայտնվել նույն ազգի հատվածներ, որոնք ոչ միայն, ինչպես ասում են՝ լայն զանգվածներով, այլ նույնիսկ առավել «առաջավոր ջոկատների»՝ քաղաքական կուսակցությունների մակարդակով ունեին միանգամայն տարբեր մոտեցումներ ոչ միայն անկախ պետականության վերաբերյալ, այլև քաղաքակրթական հարցերում, ինչը դարերով պետականություն չունենալու և տարբեր հատվածների՝ տարբեր իշխողների լծի տակ լինելու ուղղակի հետևանքն էր:

Պատմականորեն ստեղծված տվյալ իրավիճակում, հայ ժողովրդի այդ ժամանակահատվածի ունեցած ներուժի պայմաններում Հայաստանի Հանրապետության կործանումը պատմականորեն անխուսափելի էր: Ամենն այլ ընթացք կունենար, եթե, առաջին հերթին, **մենք** այլ լինեինք: Այնպես որ սպայակազմի որոշակի հատվածի բանակկործան պահվածքը, հայ բոլշևիկների՝ ազգային պետականության դեմ տարած կատաղի պայքարը, ներսից պետությունը քանդողների առկայությունը և դրանց բոլորի դեմ խիստ անարդյունավետ պայքարն իրականում ոչ թե պատճառներ էին, այլ հետևանքն էին վերը նշված օրվա ընդհանուր բացասական «հաշվեկշռի»: Դրանք տվյալ հաշվեկշռով և արտաքին գործոններով պայմանավորված ու ի հայտ եկած այն մեխանիզմներն էին, որոնց օգտագործմամբ արտաքին ուժերին առավել հեշտ էր վերջ տալ հայկական պետականությանը:

Հայերս մի ասացվածք ունենք, թե՛ «Ակոսի ծոռությունը մեծ եզանից է...»: Արդեն հարյուր տարի խոսվում է, թե երկրի կառավարման դեկն իր ձեռքը վերցրած ՀՅ Դաշնակցությունը «...չը կարողացաւ ընդգրկել պետական իդեալները և կարողութիւն չունեցաւ բարձրանալու դէպի պետականութեան անաշառ ու սկզբունքային աստիճանները...»<sup>142</sup>: Առարկելու բան չկա: Բայց այդ նույն ՀՅ Դաշնակցությունը հո այլ մոլորակից չէր եկել, նա նույնպես այս երկրի, այս ազգի ծնունդն էր, այդօրվա նրա ունակության ու քաղաքական ներուժի ցուցանիշներից ու դրսևորումներից մեկը, պատմական այդ պահին էլ՝ փաստորեն միակն ու ամենահզորը: Բայց պարզվեց, որ անկախ պետություն ստեղծելու և այն պահպանելու համար այդքանը ևս շատ քիչ էր:

Այնպես որ նրանք, ովքեր 1918-ի մայիսին փորձեցին վերականգնել հայկական անկախ պետականությունը, ստեղծված պատմական իրավիճակում այդ պետությունից պահպանեցին և սերունդներին փոխանցեցին այնքանը, որքանը որ հնարավոր եղավ՝ այդ օրվա մեր իրական ազգային ներուժ կարողականությանը համապատասխան: Գուցեև մի բան էլ ավելի...

Ինչ վերաբերում է Կարսին, ապա «**Կարս**»-ը մեզ ակնհայտ ձևով ցույց տվեց, որ այդ օրերին Կարսը՝ որպես տարածք, իրոք որ մեր «հագով» չէր:

142 Յարութիւնեան Վ., Կարսի նահանգապետ...էջ 136:

Պատկերավոր ասած՝ շորը մեզ համար շատ մեծ էր. մի որոշ ժամանակ թողեցին կրել, հետո մի թեթև թափ տվեցին և մենք միջից իսկույն ընկանք: Կարսին տիրանալու համար դեռ շատ պետք է աճենք: Իսկ այդ ճանապարհին ունենք հրաշալի մի փորձաշրջան. մեր ձեռքում պետք է պահենք նույնպես բոլոր առումներով կարևոր բերդաքաղաք Շուշին և հարուստ ու կերակրող՝ ազատագրված 12 հազար քառ. կիլոմետր տարածքը: Իսկ որպեսզի արյան գնով մեզ հասած «շորը» իրոք մեր «հագով» լինի, գոնե այսօր պետք է վերջապես հստակ սահմանագիծ քաշել **այլակարծության և պետական դավաճանության** միջև և բացառել մեզանում արդեն հարյուրամյակներ բույն դրած այն անթույլատրելի մտայնությունը, ըստ որի բացահայտ պետական դավաճանությունն ընդունվում և ներկայացվում է որպես այլ կարծիք ունենալու և այլ մոտեցում ցուցաբերելու իրավունք: Դա կարող է ընդունելի կամ հանդուրժելի լինել ցանկացած հարցում, բայց ոչ երբեք անկախ պետականությունը պահել-չպահելու հարցում: Հակառակ պարագայում, ինչպես պատմությունն է ցույց տալիս, ամեն ինչ անխուսափելիորեն ավարտվում է «Կարս»-ով:

### Եզրակացություններ

Վերոշարադրյալ նյութը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների.

– Նորաստեղծ Հայաստանում առկա և ներգաղթյալ հայության տարբեր հատվածներն ունենին միանգամայն տարբեր կարծիքներ և տեսակետներ ոչ միայն հայկական պետության և պետականության զարգացման ուղիների, այլև առհասարակ սեփական անկախ պետականություն ունենալու նպատակահարմարության և իմաստի վերաբերյալ:

– Հայաստանի օրվան ղեկավարությունը, չունենալով բանակ կազմավորելու համար անհրաժեշտ մարդկային, նյութական և այլ տեսակի ռեսուրսներ, պետության անվտանգությունը գոնե ինչ-որ չափով ապահովելու համար ստիպված եղավ հայկական բանակը կազմավորել նախկին ցարական սպայակազմի հիմքով:

– Եթե ՀՀ բանակի բարձրաստիճան գեներալներից ոմանց մոտ (Թովմաս Նազարբեկյան, Հովհաննես Հախվերդյան, Մովսես Սիլիկյան, Գաբրիել Ղորղանյան և այլք) առկա էր ազգային նկարագիրն ու մտահոգությունը հայրենիքի ապագայի հանդեպ, ապա միջին սպայակազմը ոչ միայն անտարբեր էր այդ հարցերի նկատմամբ, այլև մշտապես հայացքը հառած էր դեպի հյուսիս՝ դեպի Ռուսաստան:

– Իր բնույթով ազգային բանակի բացակայությունն առավել ցայտուն դրսևորվեց հատկապես Կարսի գորախմբում, որտեղ հայկական զինուժի տեղակայման առաջին իսկ օրվանից փաստորեն սկիզբ առան նրա բարոյալքումն ու քայքայումը:

– Նման անկարգապահ և բարոյագուրկ զանգվածը չափազանց հեշտ մշակելու հումք դարձավ հայ բոլշևիկների անկաշկանդ հակապետական գործունեությունը հաջողությամբ պսակելու համար:

– Թեև Կարսի գորախմբի սպայակազմի և բոլշևիկների միջև առկա պայմանավորվածության վերաբերյալ ուղղակի ապացույցներ պարունակող

փաստաթղթերը բացակայում են, սակայն դեպքերի զարգացման տրամաբանությունը և բազմաթիվ կողմնակի վկայությունները միարժեքորեն հուշում են, որ նման պայմանավորվածություն իրականում եղել է:

- Դրա մասին են վկայում մի կողմից գորախմբի որոշ հրամանատարների գործադրած «ջանքերը»՝ գորքերում խուճապային իրավիճակ ստեղծելու և ճակատից զինվորների զանգվածային փախուստն «ապահովելու» ուղղությամբ (գեներալներ Դանիել-Բեկ Փիրումյան, Հարություն Հովսեփյան, գնդապետ Ալեքսանդր Միրիմանյան), Կարաբեքիի զորաջոկատը շրջապատման մեջ վերցնելու համար Գլխավոր շտաբի մշակած օպերացիաների ուղղակի ձախողումը տարբեր սպաների կողմից (փոխգնդապետ Ղոնդաղյան, գնդապետ Կարապետ Հասան-Փաշայան), ինչպես նաև՝ գեներալ Փիրումյանի՝ փախուստի դիմելու անհաջող փորձը և ապա միանգամայն հանգիստ թուրքերին գերի հանձնվելը, և վերջապես՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո Հովսեփյանի, Միրիմանյանի, Հասան-Փաշայանի ոչ միայն բռնաճնշումների չենթարկվելը, այլև անմիջապես բոլշևիկյան բանակում հայտնվելն ու հրամանատարական պաշտոններ ստանալը:

**Կարսը ոչ թե ընկել է կամ գրավվել, այլ պարզապես հանձնվել է՝ տեղի գորախմբի սպայության որոշ ներկայացուցիչների և հայ բոլշևիկների նախնական պայմանավորվածության և փոխգործակցության հետևանքով:**

Այդ դավաճանությունը հնարավոր է դարձել և իրագործվել է հայկական միջավայրում պահպանվող հակապետական աշխարհընկալման և կողմնորոշումային մտածելակերպի գերակայության պատճառով:

\* \* \*

Իմ պարտքն են համարում երախտագիտությունս հայտնել «ՎԷՄ» հանդեսի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր **Գևորգ Խուդինյանին**, որի համառ հորդորներին անսալով հեղինակն իրականացրեց սույն գործը, և իրավագետ **Մայրլ Բաբայանին**՝ մի շարք կարևոր նյութեր և հրապարակումներ տրամադրելու համար: Իմ առանձնակի շնորհակալությունն են հայտնում դոցենտ **Լևոն Խաչատրյանին**՝ արդյունավետ քննարկումների և նյութի շարադրանքի ամբողջ ընթացքում արված քննական ու խմբագրական բնույթի կարևոր դիտողությունների և առաջարկությունների համար:

**Վլադիմիր Ա. Հարությունյան** – Մասնագիտությամբ ֆիզիկոս է: Հիմնական մասնագիտության հետ զուգահեռ, գիտական հետաքրքրությունների շրջանակում ընդգրկված են նաև Հայաստանի Առաջին Հանրապետության Կարսի տարածաշրջանում ծավալված իրադարձությունների պատմությանն առնչվող հարցերը: Նշված հարցերի հետ կապված հրատարակել է հետևյալ ուսումնասիրություններն ու ժողովածուները.

1. Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը 1919-1920 թթ. Փաստաթղթերի ժողովածու աշխատասիրությամբ՝ Վլադիմիր Հարությունյանի եր., 2014:

2. Վլադիմիր Հարությունյան, 1918 թ. հայ-վրացական պատերազմը

Նյութեր և փաստաթղթեր, Եր., 2014:

3. Կարսի մարզը Հայաստանի Առաջին Հանրապետության կազմում (ապրիլ 1919թ.-հոկտեմբեր 1920թ.): Նյութեր և փաստաթղթեր, աշխատասիրությանը՝ Վլադիմիր Հարությունյանի, Եր., 2016:

4. Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում (ապրիլ 1919թ.- հոկտեմբեր 1920թ.): Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը, աշխատասիրությանը՝ Վլադիմիր Յարութիւնեանի Եր., 2018:

5. Վլադիմիր Հարությունյան, Առաջին Հանրապետություն Կարսի վերջնախաղը, Եր., 2018, 180 էջ:

## Summary

### THE SURRENDER OF KARS

#### A hypothesis of a military conspiracy

Vladimir A. Harutynyan

*Doctor of Physics and Mathematics*

**Key words** – the civilian and military powers of the province, robbery, Armenian Bolsheviks, May Day Riots, officer corps, the end of Kars, Kazim Karabekir, anti-state world perception, oriented thinking, treachery.

Different segments of existing and migrated Armenians in newly-built Armenia had completely different opinions and standpoints not only on the ways of the development of the Armenian state and statehood but generally on expediency and meaning of having their own independent statehood. As at that period the government of Armenia didn't have any human, material or other resources for forming an army it had to form its army on the basis of the previous tsarist officers' staff in order to ensure somehow the security of the state. If some high-ranked generals of RA army (Tovmas Nazarbekyan, Hovhannes Hakhverdyan, Movses Silikyan, Gabriel Ghorghanyan and some others) had a national character and a concern for the future of the motherland, then the middle-ranked officers' staff was not only indifferent towards those issues but was constantly looking at the north, namely at Russia. The lack of army that had national nature was especially vividly expressed in the detachment of Kars where just from the very first day of the deployment of the Armenian armed forces its demoralization and demolition actually started. Such an insubordinate and demoralized mass became a raw material for easy processing for the triumphant and freely anti-governmental activity of the Armenian Bolsheviks. Though there aren't documents testifying the direct proof of agreement between the officers' staff of the detachment of Kars and the Bolsheviks the logical succession of events and numerous collateral testimonies unequivocally hint at the real existence of such agreement. This is evidenced, on one hand, by the "efforts" of the officers to rise a panic in the military units and "guarantee" the mass retreat of the soldiers from the

Վլադիմիր Հարությունյանի կողմից համահայկական հանդեսի «ԺՁ» քառյակի թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

front (generals Daniel-bek-Pirumyan, Harutyun Hovsepyan, colonel Alexander Mirimanyan), as well as, by the failure of the worked out plan of operations of the main Headquarters for encircling the military unit of Karabekir carried out by some officers (lieutenant colonel Ghondaghchyan, colonel Karapet Hasan-Pashayan), and on the other hand, by the unsuccessful attempt of the escape conducted by colonel Pirumyan and then his absolutely calm surrender to the Turks, as well as, the fact that Hovsepyan, Mirimanyan and Hasan-Pashayan were not only free of repressions after the Sovietization of Armenia but also immediately appeared in Bolshevik army and then received the command posts. **Kars was not fallen or occupied, it simply surrendered as a result of primary agreement and interaction carried out between some representatives of the officers' staff of the local detachment and the Armenian Bolsheviks. This treachery became possible and was implemented because of the dominance of anti-governmental world perception and oriented mentality that existed in the Armenian environment.**

Резюме

## СДАЧА КАРСА

Гипотеза военного заговора

Владимир А. Арутюнян

*Доктор физико-математических наук*

**Ключевые слова** – гражданские и военные власти губернии, грабеж, армянские большевики, Майские мятежи, офицерский состав, Карсский эндшпиль, Кязим Карабекир, анти-государственное мировоззрение, ориентационное мышление, предательство.

Разные группы армян – жителей новосозданной Армении и беженцев – придерживались совершенно различных мнений и точек зрения не только о путях развития армянского государства, но и вообще о целесообразности и смысле существования независимой государственности. Руководство Армении тех дней, не имея необходимые человеческие, материальные и другие ресурсы для образования армии, с целью хоть как-то обеспечить безопасность государства, было вынуждено образовать армянскую армию, опираясь на бывший царский офицерский состав. Если у некоторых из высокопоставленных генералов армянской армии (Товмас Назарбемян, Ованес Ахвердян, Мовсес Силикян, Габриел Корганян и еще некоторые) присутствовали национальный облик и озабоченность будущим родины, то средний офицерский состав был не только совершенно равнодушен к этим вопросам, но и постоянно обращал взгляд на север, в сторону России. Отсутствие национальной по своей сути армии наиболее ярко проявилось в войсковом соединении в Карсе, где с первого же дня размещения там армянских



вооруженных сил фактически начались деморализация и разложение. Подобная недисциплинированная и аморальная масса стала легкообрабатываемым сырьем для беспрепятственной антигосударственной деятельности армянских большевиков.

Хотя документы, содержащие прямые доказательства наличия договоренности между офицерским составом карсского соединения и большевиками о сдаче Карса 30-го октября 1920 г., отсутствуют, однако логика развития событий и многочисленные косвенные свидетельства однозначно подсказывают, что на самом деле между ними существовала такая договоренность. Об этом свидетельствуют, с одной стороны, «старания» некоторых командиров соединений, направленные на создание ситуации паники в войсках и на «обеспечение» массового бегства солдат с фронта (генералы Даниэлбек Пирумян, Арутюн Овсепян, полковник Александр Мириманян), с другой стороны – прямой срыв разными офицерами (подполковник Кондакчян, полковник Карапет Асан-Пашаян) разработанных генеральным штабом операций по окружению отряда Кязима Карабекира, неудачная попытка бегства, а затем совершенно спокойная сдача в плен туркам генерала Пирумяна, избежание Овсепяном, Мириманяном, Асан-Пашаяном репрессий после советизации Армении и их незамедлительное появление в большевистской армии и получение командирских должностей. **Карс не пал и не был взят, а был просто сдан вследствие предварительной договоренности и сотрудничества некоторых представителей офицерского состава местного военного соединения и армянских большевиков. Это предательство стало возможным и было совершено по причине сохраняющегося в армянской среде антигосударственного мировосприятия и преобладания ориентационного образа мышления.**

## REFERENCES

1. Yeghi she Charenc, Yerkeri zeoghova cu 4 hatorov, hator 4, Er., 1987. **(In Armenian)**
2. Ellen Byuzand, Karsə ev axper Ashon, Tehran, 1962. **(In Armenian)**
3. Tonkonojenko A., Kars: proklyataya pamyac', Moskva, 2010. **(In Russian)**
4. Orhan Pamuk, Dzyunə, Er., 2009. **(In Armenian)**
5. Garegin Njdeh, Vordineri payqarə hayreri dem, Er., 2015, eg 21. **(In Armenian)**
6. Harutyunyan Vladimir, Hay bolsheviknery hakapetakan gorcuneutyunə 1919-1920 tt., Pastatgh teri jorova cu, Er., 2015. **(In Armenian)**
7. Harutyunyan Vladimir, 1918 t. Haj-vracakan paterazmə (nyter yev pastatghter), Er., 2014. **(In Armenian)**
8. Harutyunyan Vladimir, Karsi marzə Hayastani Aragin Hanrapetutyan kazmum (april 1919 t.- hoktember 1920 t) , Nyter yev phastatghter, Er., 2016. **(In Armenian)**
9. Kvachonkin A. V., Tekhnologija «krasnyx revoljucij» v Zakavkazje v nachale XX v. polotika i Obshestvo. 2016, N 4, s. 432-456. **(In Russian)**
10. Nersisyan A., Karo Sasuni, Er., 2009, eg 165-170. **(In Armenian)**

11. Bol'shevistskoe rukovodstvo. Perepiska 1912-1927. Sbornik dokumentov (Sostaviteli: **A. V. Kvachonkin, O. V. Xlevnjuk, L. P. Kosheleva, L. A. Rogovaja** , M.,1996, 423 s. **(In Russian)**
12. **Kvachonkin A. V.**, Sovetizacija Zakavkazja... ss. 167, 170, 172, 177. **(In Russian)**
13. **Oztjuk M.**, Sovetsko-tureckie otnoshenija na Kavkaze v 1921-1923 gg., Sankt Peterburg, 2010, s. 69-70. **(In Russian)**
14. **Oztjuk M.**, Rassmotrenie sovetskoj pomoshi Ankare v 1920-1922 gg. Na osnove tureckix istoricheskix istochnikov. «Nauchnye problemy gumanitarnyx issledovanij». 2010. N5, s.69-76.
15. **Hacyan Y. A. Q.**, Karsi vergin orerə, 1920 t «Aliq» oratert, Tehran, 2 majisi, 1961, N 91. **(In Armenian)**
16. **Vracyan S.**, Hayastani Hanrapetutyun, Er., 2016. Er., 1993, ej 508. **(In Armenian)**
17. **Xatisyan A.**, Hayastani Hanrapetutyan cagumn u zargacumə, Pejrut, 1968, ej 289, 290. **(In Armenian)**



Հռիփսիմե Վ. Պիկիցյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ՄԱԶՄԱՆՈՎԻ ԼԵԳԵՆԴԸ

Հայ երաժշտական բանահյուսության մեջ

**Բանալի բառեր** – Մազանով (Հովհաննես Մազմանյան), հայ երաժշտական ֆոլկլոր, պատմական երգեր, մեղեդի, բանաստեղծական տեքստ, ողբերգական երանգ, հայրենասեր մարտիկ, վախկոտ դասալիքներ, պատգամ:

Հայ ժողովրդի երաժշտական ստեղծագործության կամ, ինչպես ընդունված է անվանել, երաժշտական ֆոլկլորի ժանրային սանդղակում առանձնանում են երկրի կյանքում ճակատագրական նշանակություն ունեցած պատմական իրադարձություններին, դեպքերին ու անձանց նվիրված երգերը, որոնք միավորվում են **պատմական երգերի** ժանրում:

Ժողովրդական երաժշտության տարբեր ճյուղերի զարգացման ընթացքին, ժանրերի ստեղծման և անհետացման խնդիրներին անդրադառնալիս անվանի երաժշտագետ Մ. Բրուսյանը դրանց գլխավոր հատկանիշներից է համարում **պատմականությունը**: Այս նաև երգը բնութագրելով իբրև ժողովրդի կյանքի ու մշակույթի գեղարվեստական պատմություն՝ փաստում է, որ «ժողովրդական երգի հարուստ ու բազմազան բովանդակությունը որոշում է ժողովրդական երաժշտության պատմա-ձանաչողական մեծ արժեքը»<sup>1</sup>:

Պատմական երգերի մեջ թեմատիկ հենքով ու ներժանրային հատկություններով առանձին խումբ են կազմում ռազմի երգերը: Վաստակաշատ բանագետ Ա. Ղազիյանի դիտարկմամբ՝ բանահյուսությանը բնորոշ լեզվամտածողությամբ ու արտահայտչականությամբ՝ դրանք հիմնականում ներկայացնում են ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների և հայոց ազատագրական պայքարի առանցքային դրվագներն ու հերոսացած մարտիկների սխրանքները<sup>2</sup>:

Այս երգերը ստեղծվում են ականատեսների կամ ժամանակակիցների կողմից իբրև պատմական իրականության անմիջական արձագանք: Առաջնային նշանակությամբ՝ միտված են այդ կարևորագույն դեպքերի մասին

1 Բրուսյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Եր., «Լույս» հրատ., 1963, էջ 8-9:  
2 Տես Ղազիյան Ա., Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, էջ 8:

Ժ (ԺԶ) փայլ. թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԷՎ համահայկական հանդես

հանրությանը և, հատկապես, հետագա սերունդներին **առաջին դեմքից** տեղեկություններ փոխանցելուն: Ամենայն հավանականությամբ՝ դրանով է պայմանավորված դյուրությամբ մտապահվող, հիմնականում ոչ բարդ կառուցվածք ունեցող նրանց մեղեդին ու բանաստեղծական տեքստը, իսկ ժողովրդի վերաբերմունքը և ունկնդրին հասցեագրված ուղերձն արտահայտվում է պարբերաբար կրկնվող դարձվածների կամ կրկնեղբի միջոցով: Անուրանալի է այս երգերի տեղեկատվական, աղբյուրագիտական ու վավերագրական նշանակությունը, քանի որ հստակ նշվում են դեպքերի ճշգրիտ տարեթվերը, աշխարհագրական վայրերը, նկարագրվում տեղանքն ու շեշտվում բնակավայրերի, հերոսների, դավաձանների ու հակառակորդների անունները: Դրանց բանաստեղծական տեքստերում նկարագրվում են պատերազմական գործողությունների իրական դրվագներ, պատկերվում մարտի տեսարաններ, փառաբանվում են հայրենասեր ռազմիկների անձնուրացությունն ու հաղթանակները, մատնանշվում ու նզովվում վախկոտներն ու դավաձանները, բռնակալները, նենգ ու դաժան թշնամիները:

Պատմական ժանրի ռազմի երգերից հատկապես լայն հնչեղություն ու տարածում են ստացել հայդուկային շարժմանը և սիրված գորավարներ Անդրանիկին, Դրոյին, Քեռուն, Աղբյուր Սերոբին, Արաբոյին և ազգային-ազատագրական պայքարի մյուս հերոսներին ձոնված երգերը, որոնք մինչ օրս հնչում են թե՛ Հայաստանի բոլոր բնակավայրերում, թե՛ Սփյուռքում:

Պատմական ժանրի նման ստեղծագործություններից են 1920 թ. Կարսի անկման և պատվախնդիր գնդապետ Հովհաննես (Օսիկ) Մազմանյանի ինքնասպանության պատմությունը ներկայացնող համեմատաբար քիչ հայտնի և հիմնականում Արևելյան Հայաստանում տարածված երգերը:

Նախ հակիրճ ներկայացնենք պատմական եղելությունն ու հերոսին<sup>3</sup>:

**Հովհաննես Տիգրանի Մազմանյանը ծնվ. 1890 թ. Ալեքսանդրապոլ քաղաքում, արհեստավորի ընտանիքում: 1908 թ. ավարտում է քաղաքի Առևտրական դպրոցը: 1910 թ. անցնում է ծառայության ցարական բանակում, ապա սովորում Թիֆլիսի յունկերական դպրոցում: Ավարտելուց հետո նշանակվում է դասակի, իսկ մեկ տարի անց՝ վաշտի հրամանատար: Առաջին աշխարհամարտի բռնկվելուն պես Ապշերոնյան գունդը, որտեղ ծառայում էր Մազմանյանը (Մազմանով) մեկնում է Արևմտյան ռազմաձևատ, զորավար Ա. Ա. Բրուսիլովի հրամանատարության տակ: Երիտասարդ Մազմանովը մարտնչում է ավստրոհունգարական և գերմանական բանակների դեմ: Աչքի է ընկնում հերոսությամբ ու հմտությամբ և ստանում փոխգնդապետի աստիճան, պարգևատրվում Գևորգյան երկու խաչով ու մարտական մեդալներով: 1918 թ. կամավոր անցնում է կարմիր գվարդիայի շարքերը և անձնվիրաբար մարտնչում թուրք ջարդարարների ու մուսավաթականների դեմ՝ Բաքվի հերոսամարտի ընթացքում: Բաքվի կոմունայի անկումից հետո ծառայության է անցնում Ալեքսանդրապոլի կայազորում՝ գեներալ Խաչատուրովի հրամանատարության ներքո: Նշանակվում է հայկական առաջին գնդի հրամանատար, գործուղվում Կարս՝ ստանալով գնդապետի կոչում:**

**1920 թ. ապրիլին Մուստաֆա Քեմալի հրամանով Արևելյան ձևատի հրամանատար նշանակված Քազիմ Կարաբեքիր փաշան մոտենում է Հայաստանի**

3 Մազմանովի մասին տե՛ս Իկիիկյան Հ., Վերելքի մեջ է իմաստը կյանքի, Եր., Հեղինակային հրատ., 2011, էջ 180-206:

սահմաններին և սպասում հարձակման հրամանի: 1920 թ. հունիսի 8-ին Անկարան Հայաստանի Հանրապետության կառավարությանն է հղում մի ստորագուցիչ վերջնագիր, որով պահանջում է Թուրքիային հանձնել Կարսի, Օլթիի և Արդահանի օկրուգները: ՀՀ կառավարությունը մերժում է՝ պատճառաբանելով, որ վերոհիշյալ օկրուգները մինչ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը մտնում էին Կարսի մարզի մեջ, այսինքն՝ Ռուսաստանի մասն էին կազմում և քանի որ Սովետական Ռուսաստանի կողմից 1918 թ. սեպտեմբերի 20-ին Բրեստի պայմանագիրը չեղյալ է հայտարարվել, ուստի՝ թուրքական զորքերը պետք է թողնեն ՀՀ-ին պատկանող այդ շրջանները: Ի պատասխան՝ թուրքական կողմը Օլթիի շրջան է ուղարկում 3 սպառազեն զորագունդ: ՀՀ կառավարությունը գնդապետ Մազմանովին կարգադրում է ձեռքի տակ եղած գնդերով՝ ազատագրել Օլթին, Մերդենեկը, Ջարիշատը և մերձակա բնակավայրերն ու վերականգնել 1914 թ. սահմանները՝ մինչև օժանդակ ուժերի հասնելը:

Նախապես անձամբ հետախուզելով թշնամու դիրքերը՝ 1920 թ. հուլիսի 28-ին, թշնամու համար անսպասելի, Մազմանովը գրոհի է անցնում: Նա հրանոթներից, գնդացիներից և հրացաններից այնպիսի կենտրոնացված կրակ է տեղում հակառակորդի գլխին, որ վերջինս չի կարողանում կազմակերպված դիմադրություն ցույց տալ և ծանր կորուստներ տալով՝ նահանջում է: Մազմանովն ազատագրում է Օլթին, Մերդենեկը և մոտակա բնակավայրերը և Վասկուտ սարը: Ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու նպատակով՝ Օլթիի ռազմաձևակառ է ուղարկվում հայկական հինգերորդ հրաձգային գունդը՝ գնդապետ Գևորգ Զուրաբովի հրամանատարությամբ: Հմուտ զործելաձի շնորհիվ՝ վերադարձվում են 1914 թ. սահմանները: Սակայն, 1920 թ. սեպտեմբերի 23-ին Մուստաֆա Քեմալի հրամանով, թուրքական բազմամարդ բանակը լայն ճակատով հարձակման է անցնում:

Մազմանովի ինքնասպանության տեղի ու հանգամանքների մասին գոյություն ունեն մի քանի վարկածներ: Հ. Իկիլիկյանը հիմնվում է 1930 թ. Լենինականում Մազմանովի գնդի երկրորդ գումարտակի երրորդ վաշտի հրամանատար, դարաբաղցի կապիտան Տիգրան Օհանջանյանի հետ իր զրույցի վրա: Ըստ ականատեսի, Կարսի հանձնման նախորդ գիշերը՝ հոկտեմբերի 29-ին, գնդապետ Մազմանովը մտախոհ շրջում էր դիրքերում. նա նստել է, հայացքը հատել միջնաբերդին, մտորել, ապա, անսպասելի հանել մաուզերն ու կրակելով իր քունքին՝ ինքնասպան եղել: Իրականությունն այն էր, որ այդ գիշեր Կարսի ռազմաձևակառի շտաբում՝ ռազմական խորհրդի նիստի ընթացքում բուն վիճաբանություններ էին եղել. Մազմանովը պնդել էր, որ իրենց դիրքային առավելությունը, զենքն ու զինամթերքը հնարավորություն են տալիս կասեցնել հարձակումները: Սակայն, դավաճանության ուղին բռնած Կարսի խմբավորման հրամանատարությունն արդեն պատրաստվում էր փախուստի...

Վավերական է նաև այն փաստը որ Մազմանովի դիակով դագաղը լքված է մնացել Կարսի կայարանում և թուրքերը անարգել են նրա աձյունը, մինչդեռ կենդանության օրոք Կարաբեքիր փաշան հսկայական գումար էր խոստանում նրա գլխի դիմաց: Կարսի անկման և հայրենասեր գնդապետի ինքնասպանության պատմությունը սերնդե-սերունդ փոխանցվել է իբրև ազգային ցավի հետ միախառնված՝ ամոթի ու անարգանքի տխուր պատմություն և ժողովրդական երգի միջոցով տարածվել ու հասել է մինչև մեր ժամանակները:

Փ (ՃՁ) քաղթի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018 Վլմ համահայկական հանդես

Մեզ առայժմ հայտնի է գնդապետ Մազմանովին նվիրված երգերի տասը օրինակ, որոնցից միայն հինգն են ձայնագրվել երգվող տարբերակով և պահվում են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվ. ձայնադարանում<sup>4</sup>: Ցավոք, բանասացներից մյուս չորսի սոսկ բանաստեղծական տեքստերն են գրառվել<sup>5</sup>: Հաջորդ երկու հրատարակված նմուշներից մեկը Հ. Իկիլիյանի ստեղծագործությունն է<sup>6</sup>, մյուսը զետեղված է Վ. Արծրունու մենագրության մեջ<sup>7</sup>:

Այսուհանդերձ, գրանցված երգային և բանաստեղծական նմուշների տեքստերը միննույն այուժետային առանցքի շուրջ են ձևավորվում: Բովանդակային առումով, հիմնական շեշտադրումները ներկայացվում են չորս դրվագով: **Առաջինը** երկխոսության բնույթ ունի. սկսվում է թուրքական զորագնդի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային ուղղված գնդապետ Մազմանովի նամակ-հրամանով, որը պահանջում է մինչև կեսօր ազատել Օլթին, Մերդենեկը, Ջարիշատը՝ մինչև Արդահան: Եվ դրան հաջորդում է մեծամիտ փաշայի (որին բանասացները տարբեր անուններով են կոչում. Քյազիմ բեկ, Քյամալ բեգ, Դիվանբեգ, Ջանգիլ փաշա կամ ընդհանրացում, իբրև սուլթան ու խան) պատասխանը: **Երկրորդ** դրվագում տրվում է գորքից լքված ու միայնակ պայքարի ելած հայրենասեր գնդապետի հիասթափությունն ու ինքնասպանությունը: **Երրորդում** նկարագրվում է հայ զինվորների փախուստն ու թշնամու գրաված կայարանում հերոսի գերի մնացած դիակը:

Եթե վերը ներկայացված երեք դրվագներն իրական դեպքերի բանաստեղծական նկարագրություններ են, ապա **չորրորդում** նախ արտահայտվում է ժողովրդի վրդովմունքն ու անեծքը՝ ուղղված անաստված դասալիքներին և ապա՝ պահանջ-հորդորը՝ թույլ չտալ, որ հերոսի աճյունը մնա գերության մեջ: Բանասացների կատարումներում այս կառուցվածքային հենքի վրա հյուսված նկարագրությունները մի դեպքում խտացված ու զուսպ են, մյուսում՝ համեմատաբար ծավալուն ու մանրամասնված: Բոլոր տարբերակներում էլ բանասացները փորձում են առաջին դրվագի մեղեդին հերոսական, հաղթական երանգներով ներկայացնել, ապա աստիճանաբար, հաջորդ հատվածներում, տեքստին համապատասխան ողբերգական երանգ հաղորդել: Վերջին դրվագում ռիթմի դանդաղեցման և զայրույթ արտահայտող ելևեջների միջոցով ամբողջացվում է եղելության հանդեպ ժողովրդի վերաբերմունքը:

## Մազմանովը գրեց Քյամալ-բեգ փաշին

### Մազմանովը գրեց Քյամալ-բեգ փաշին,

4 Ձայնագրությունները կատարվել են 1960-1970-ական թվականներին, ՀՀ Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում և Վրաստանում՝ Ախալքալաքի շրջանի գյուղերում:

5 Մազմանովին նվիրված նույն երգի բանաստեղծական տեքստերից մեկը հրատարակել է Ա. Ղազիյանն, իր վերոնշյալ մենագրության մեջ (էջ 140-141), ծանոթագրելով, որ երգը գրի է առել հնագետ Ռ. Թորոյանը՝ ծագումով վանեցի Գ. Եփրեմյանից՝ 1967 թ. Երևանում: Նույնի տարբերակը երգել է 86-ամյա ծագումով բուլկանոլցի Ղ. Մելքոնյանը՝ 1964 թ., Վարդենիսի շրջանի Մեծ Մազրա գյուղում, գրի է առել պարագետ Է. Պետրոսյանը: Երգի բանաստեղծական ևս մեկ տեքստ էլ հրատարակվել է Հ. Իկիլիյանի վերոնշյալ գրքում (էջ 206): Նույն գրքում հեղինակը զետեղել է նաև Մազմանովի ձոնած իր բանաստեղծությունը (էջ 208):

6 Տե՛ս **Իկիլիյան Հ.**, նշվ. աշխ, էջ 208:

7 Տե՛ս **Արծրունի Վ.**, Հայ-տաճկական պատերազմ: Հայ սպայությունը: Շատախ, Եր., 2002, էջ 223:

Ասեց.– այս նամակը տվեք Արտաշին,  
 Օլթին թող դատարկի մինչև վաղ ճաշին:  
 Սուլթանը լսելով այսպես հրաման,  
 Ասեց.– հայերը ինչ են, որ դառնան իշխան:  
 Ղարսից եմ վճռում դեպի Երևան:  
 Մազմանովը լսեց Ղարսի վտանգը,  
 Տեսավ, կքայքայվի ամբողջ բանակը,  
 Իր կողից քաշելով ատրճանակը,  
 Իզուր զոհ տվեց իր քաղցր կյանքը:  
 Մազմանովի դիակ բերին ըստանցին,  
 Էտ անիրավ հայեր թողին, գնացին,  
 Դուք, անիրավ հայեր, բոլորդ կոտորվեք,  
 Մազմանովի դիակ գերի մի թողեք:  
 Հայեր մոլորվին, լցվին վագոնը,  
 Մազմանովի դիակ թողին բալկոնը<sup>8</sup>:

### Մազմանովը գրեց Քյազիմբեկ փաշին

Մազմանովը գրեց Քյազիմբեկ փաշին.  
 –Օլթին դատարկեցեք մինչև ճաշին:  
 Հերիք եղավ կրենք ձեր լուծը դաժան,  
 Մերդենեկ, Ջարինշատ հայերին արժան:  
 Հետո առաջ տարավ իր հերոս գունդը,  
 Թշնամուն գլորեց խորը անդունդը:  
 Ափսոս, Մազմանովի բախտը չբերեց,  
 Թշնամին նրա դեմ մեծ բանակ հանեց:  
 Ջահել գնդապետը քաջ ու համարձակ.  
 Կռվելով նահանջեց Կարսա բերդի տակ:  
 Երբ տեսավ չի կռվում հայոց բանակը  
 Պատյանից դուրս քաշեց ատրճանակը,  
 Ընկավ կռվի դաշտում հերոսին վայել  
 Եվ զուր տեղը զոհեց իր կյանքը ջահել:  
 Մազմանովին բերին, դրին ստանցին,  
 Բայց շատերը մոտից թողին, գնացին,  
 Այ, անաստված մարդիկ, թե աստված սիրեք,  
 Մազմանովի դիակն էստեղից տարեք:  
 Եվ շուտ Գյումրի քաղաք հասցրեք նրան,  
 Գոնե մայրն ու քույրը արտասվեն վրան<sup>9</sup>...

Ի տարբերություն ազգային-ազատագրական շարժման հերոսներին նվիրված գովքի երգերի, որտեղ երգաստեղծները ձգտել են հերոսին ներկայացնել վիպական անձին բնորոշ գերբնական հատկանիշներով՝ առաքինությամբ, սխրանքներով, կազմվածքով և այլ ատրիբուտներով՝ հաճախ

8 Ղազիյան Ա., նշվ. աշխ., էջ 140-141:  
 9 Իկիկյան Հ., նշվ. աշխ., էջ 206:

համեմատելով հզոր կենդանիների ու թռչունների (առյուծ, արծիվ) հետ, գնդապետ Մազմանովին նվիրված երգերն ավելի իրատեսական, պարզ ու անպաճույճ պատմություններ են, առանց հերոսին բնորոշող ածականների ու փառաբանության: Այսուհանդերձ, բոլոր օրինակներում էլ երգաստեղծ ժողովրդի համակրանքը պատվախնդիր հերոսի կողմն է, որի կերպարն իբրև հայրենասեր մարտիկի օրինակ է փոխանցվում սերունդներին՝ հակադրվելով անեծքի արժանացած վախկոտ ու դավաճան զինվորներին, նենգ ու դավադիր թշնամուն: Այս երգը հավասարապես հնչել է թե՛ կին, թե՛ տղամարդ երգասացների շուրթերից: Ուշագրավ է նաև, որ Հայաստանի տարբեր բնակավայրերում դաշտային նյութեր գրանցելիս՝ Լոռու, Ապարանի, Վայոց Ձորի և Զավախքի գյուղերի տարեց բնակիչներից շատերն էին երգի որոշ պատառիկներ հիշում կամ տեքստից հատվածներ արտաբերում<sup>10</sup>: Որոշ բանասացների հավաստմամբ՝ ժողովրդական հանդիսությունների ընթացքում հերոսներին ոգեկոչող այս երգին համընթաց՝ կարելի էր նաև դանդաղ գյովնդ պարել՝ երկու գնալ-երկու դառնալ ոտքերի համադրությամբ, որը երբեմն պարում էին նաև Դրաստամատ Կանայանին նվիրված «Ելիր, դաշնակ Դոր» հայտնի երգը կատարելիս:

Ինչպես նշեցինք, երգվող օրինակները պահվում են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվ. հայ ավանդական երաժշտության ձայնադարանում<sup>11</sup>:



10 1986 թ. Զավախքում կազմակերպված գիտարշավի ընթացքում այս թեմայով դաշտային նյութեր ենք գրանցել բանասացներ Հարություն Ալեքսանի Չախոյանից, ծնվ. 1928 թ., ք. Ախալցխա, Հակոբ Հովհաննեսի Հակոբյանից, ծնվ. 1906 թ., Ասպինձայի շրջ., գ. Դամալա, Խաչատուր Բարսեղի Թազայանից, ծնվ. 1897 թ., Ծակայի շրջ. գ. Ղզլքիլիսա (1914 և 1940-ական թթ. պատերազմների մասնակից):

11 Վարդենիսի շրջ. Ակունք գյուղի տարբերակը, բանասաց Աստղիկ Նավոյանի կատարմամբ, 1964 թ. ձայնագրել է երաժշտագետ Հ. Գրքաշարյանը: 1967 թ. Ախալքալաքի շրջ. Դիլիսկա գյուղում բանասաց Հերիքնազ Գաբրիելյանի երգած տարբերակը և 1970 թ. Ախալքալաքի շրջանի Արուլ սարում «Սուրբ Խաչատուր» սրբավայրի ուխտագնացության ժամանակ մի երիտասարդ աղջկա կատարումը ձայնագրել է երաժշտագետ Զ. Թագակչյանը: Ապարանի շրջանի Մուլքի գյուղում 1972 թ. բանասաց Իշխան Կարապետյանի երգած տարբերակը ձայնագրել է երաժշտագետ Մ. Մուրադյանը: Երգի տարբերակներից մեկը 1986 թ. ձայնագրել է Հ.Պիկիչյանը՝ Զավախքի Ծակայի շրջ. Ղզլքիլիսա գյուղում, բանասաց Խաչատուր Բարսեղի Թազայանից (ծնվ. 1897 թ.), որը մասնակցել է 1914 և 1940-ական թթ. պատերազմներին: Չայնագրյալ երգերի բանաստեղծական տեքստերը կներկայացնենք վերջում՝ նոտային օրինակների հետ միասին:



# ՄԱՋՄԱՆՈՎ

Ազգային-Հայրենասիրական

Ջայնագրութ.՝ Մ.Մուրադյանի  
վերձանութ.՝ Ջ.Թագակչյանի

ԱԽՁ, տ. 448, թիվ 42, Ապրտան-72, Մուլրի գ.  
բանասաց՝ Իշխան Մելիքի Կարապետյան

Մազ - մա-նո - վը զը - բեց սու - լը - թան ու խա - նին,

Մա-զը-մա - նո - վը զը - բեց սու - լը - թան ու խա - նին,

Օլ - թին կը - դա - սար - կես մին - չև ի - ճա - շին,

Օլ - թին կը - դա - սա - բը կես մին - չև ի - ճա - շին:

Ե - թն չը - դա - սար - կես մին - չև ի - ճա - շին

Ե - թն չը - դա - սար - կես մին - չև ի - ճա - շին,

Սու - լը-թա - նից կը կրտ - բնմ՝ մին - չև օն - բա - շին,

Սուլը - թա - նից կը կրտ - բնմ մին - չև օն - բա - շին:

Մազ - մա - նո - վին տա - բին, զը - բին ըս - տան - ցին,

Էղ ան - տտո - ված հա - յեր թոր - կին, զը - նա - ցին,

Էղ ան - տտո - ված հա - յեր թոր - կին, զը - նա - ցին:

Տս, ան-տտո - ված հա - յեր, բո - լոր կո - տոր - վեր,

Տս, ան-տտո - ված հա - յեր, բո - լոր կո - տոր - վեր,

Ժ (ԺԶ) քարի, թիվ 4 (64), Խոկրեմեր-դեկորներ, 2018

ՎԼՎ համահայկական հանդես

[Title]

2  
33  
8  
Մազ - մա - նիս դի - ա - կը Ղար - սին չը - թող - ներ,  
57  
8  
Մազ - մա - նիս դի - ա - կը Ղար - սին չը - թող

Մազմանովը գրեց սուլթան ու խանին,  
Մազմանովը գրեց սուլթան ու խանին,  
Օլթին կողատարկես մինչև ի ճաշին,  
Օլթին կողատարկես մինչև ի ճաշին:

Եթե չըղասարկես մինչև ի ճաշին  
Եթե չըղասարկես մինչև ի ճաշին,  
Սուլթանից կըկըտրեմ՝ մինչև օնբաշին,  
Սուլթանից կըկըտրեմ մինչև օնբաշին:

Մազմանովին տարին, դըրին ըստանցին,  
Լդ անաստված հայեր թորկին, գընացին,  
Լդ անաստված հայեր թորկին, գընացին:

Տո, անաստված հայեր, բոլոր կոտորվեք,  
Տո, անաստված հայեր, բոլոր կոտորվեք,  
Մազմանիս դիակը Ղարսին չըթողներ,  
Մազմանիս դիակը Ղարսին չըթողներ:

# ՄԱՁՄԱՆՈՎ

Ազգային - հայրենասիրական երգ

Չայնազորք.՝ Ն. Գրբաշարյանի,  
Վերծանող.՝ Զ. Թազակչյանի

ԱԲԶ տ. 222բ-3 Վարդենիս-64, գ. Ակունք  
բանասաց՝ Ատոլիկ Ավետիսի Նավոյան

*♩ = 100*

Մազ - մա - նո - վրն՝ զը - րեց՝ այս - պես իը - լսա - ման,  
5 «Ե - րե հա - մա - ճայն էր՝ էլ չեմ ա - նի՛ բան»:  
9 Մազ - մա - նո - վը՝ զը - րեց՝ Բյա - զիմ - րեզ՝ փա - շին,  
13 Այս նա - մա - կրն՝ տա - րեք՝ տը - վեք՝ տը - րա - շին:

*\*) Տարբերակ ա.*

*\*) Տարբերակ բ*

Մազմանովրն զըրեց այսպես իըրաման,  
«Երե համաճայն էր՝ էլ չեմ աճի բան»: -2 *անգամ*  
Մազմանովը զըրեց Բյազիմրեզ փաշին,  
Այս նամակրն տարեք, տըվեք արբաշին: -2 *անգամ*

Մուրանից կրկրորդեք մինչև Օնրաշին,  
Օրին դատարկեցեք մինչև ի ճաշին: -2 *անգամ*  
Մերդենից Զարնիշատ մինչև Արդահան,  
Օրին դատարկեցեք մինչև ի ճաշին: -2 *անգամ*

Մազմանովրն ըզգաց առշի վրտանգրն,  
Տեսավ, որ քայրայվեց ամբողջ բանակրն: -2 *անգամ*  
Նա իր կողքից քաշեց ատըրճանակրն,  
Նա գարկ, գարկ էլ տըվեց իր քաջ ձիանրին: -2 *անգամ*

Վայ, անաստված հայեր, բոլոր կոտորվեք,  
Մազմանովի դիակրն այստեղից տարեք: -2 *անգամ*  
Մազմանովին բերին, դրրին քստանցին,  
Էդ անաստված հայեր փախան, գրնացին: -2 *անգամ*

Ժ (ԺԶ) փարի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԼՎ համահայկական հանդես

## ՄԱԶՍԱՆՈՎԻ ԴԻԱԿԸ ԴԸՐԻՆ ԸՍՏԱՆՑԻՆ

Ազգային - հայրենասիրական երգ

Չայնագրուր. և վերծանուր.՝ Ջ. Թագակչյանի

ԱԲԶ տ. 275 ա.-9, Ալսաբլաթ-1970,

Չայնագրվել է Աբուլ լեռան գագաթի «Մուրր Խաչատուր» մատուռի մոտ, ուխտագնացության ժամանակ:  
Բանասացի տվյալները չեն գրանցվել. կատարողը երիտասարդ աղջիկ է:

Մազ մա-նո-վի դի-ա-կը դը-րին ըս-տան-ցին,  
Էս ա-նիրավ հա-յե-րը, թո-ղին, գը-նա-ցին:  
Մազ-մա-նո-վի դի-ա-կը դըրինկա-յա-րան  
Էդ ա-նիրավ հա-յե-րը, թո-ղին, հե-ռա-ցան:

Մազմանովի դիակը դըրին ըստանցին,  
Էս անիրավ հայերը թողին, գընացին: -2 անգամ

Մազմանովի դիակը դըրին կայարան  
Էդ անիրավ հայերը թողին, հեռացան: -2 անգամ

Մազմանովը հանեց իր ատրճամակ,  
Իգուր տեղը տվեց իր կյանքին վըսանգ: -2 անգամ

Մազմանովը դիմեց Դիվանրեկ փաշուն,  
Որ Դարսը հանձնի, շուտով՝ այս աշուն: -2 անգամ

Այս, անասոված հայեր ուր-ուր էլ գընաք,  
Մազմանովի դիակը թուրքերին չըտաք: -2 անգամ

## ՄԱՁՍԱՆՈՎԸ ՏՎԵՑ ԱՅՍՊԵՍ ՀՐԱՄԱՆ

Ազգային - հայրենասիրական երգ

Զայնագրոր.՝ Մ.Մորադյանի  
Վերծանոր.՝ Զ.Թազակչյանի

ԱԻՉ տ. 229-17, Ախաբալար 1967, Գիլիսկա գ.  
բանասաց՝ Հերիքնուգ Գարրիեյան

Մազ - մո - նո - վը գը - րեց այս - պես հը - րո - ման  
 Մեր - դե - նից Ձա - րի - շատ հա - յերն Ար - դը - հան,  
 Ե - րե հը - պա - սա - կվիք՝ էլ չեմ ա - սև - բան,  
 Շու-տով Գարս կը - վա - տենք կհաս - նինք Էր - գըն - կյան:

Մազմանովը գրեց այսպես հրրաման  
 Մերդենից Ձարիշատ հայերն Արդրիան,  
 Երե հրպատակվիք՝ էլ չեմ ասև բան,  
 Շուտով Գարս կըվառենք կհասնինք Էրգրնկյան: -2 անգամ

Արեք գիրք կորենք, խորգենք արբաշին,  
 Օրին բող դարտրկեն մինչև ի ճաշին,  
 Մուրամից կրկրարեմ, մինչև օնրաշին,  
 Ազիրիմ կըվառեն, կհասնին Հայաստան: -2 անգամ

Ձանգիլ փաշեն գրեց. «Այսպես է պայման՝  
 Հայերը ով են, օր մեզ դառնան իշխան:  
 Աշխարհը կավիրեմ, կհասնին Հայաստան,  
 \*Հայ կառավարություն քանդեմ, էլ չեմ քողնի բան:

Մազմանովը գոռաց, բուրլը ու քաշեց,  
 Հեռենն աշեց, օր քոմակը չըկա,  
 Իրան կըշտից քաշեց ատրրճանակը  
 Այ էպես քայքայվավ հայոց բանակը:

Տո, անասոված հայեր, բոլոր կոտորվեք,  
 Մազմանովին առեք, ռստից դուրս տարեք:

Հայ քու-տու-փա - րո-քյոն քան - դեմ, էլ չեմ քաղ - նի - բան:

Ըստ երաժշտագետ Զ. Թազակչյանի՝ մեղեդու կառուցվածքի առումով սրանք, նույնի տարբերակային եղանակավորումն ունենալով, շարադրված են Իոնական՝ մաժոր ձայնակարգերում և 2/4 չափակարգում ընթացող քայլերգերին բնորոշ շեշտադրում են պարունակում: Ամենից պարզը Վարդե-

Ժ (ԺԶ) քաթի, թիվ 4 (64), Խոկերեններ-դեկտեմբեր, 2018

ՎԼՎ համահայկական հանդես

նիսում ձայնագրված օրինակն է, որը, ծավալվելով երաժշտական մեկ պարբերության սահմաններում, շարադրվում է Ի3 ձայնակարգում՝ ընդգրկելով փոքրացրած հնգյակ (kvinta) հնչյունածավալ: Տնից տուն կրկնվելու պարագային՝ բանասացը վերջավորող դարձվածքները փոքր-ինչ տարբերակում է:

Ախալքալաքի Դիլիսկա գյուղից Հ. Գաբրիելյանի կատարումն է Ի3/5 ձայնակարգում, ընդգրկում է մաքուր ութնյակ (oktava) հնչյունածավալ և չափակշռությո՞վ քիչ է տարբերվում Վարդենիսի օրինակից: Նույնի տարբերակն է նաև Ծավկայի Ղզլքիլիսա գյուղում, բանասաց Խաչատուր Բարսեղի Թագայանից ձայնագրված օրինակը:

Ախալքալաքի մյուս օրինակը, որ գրանցվել է Աբուլ լեռան գագաթին «Սուրբ Խաչատուր» մատուռի ուխտագնացության ժամանակ, ընդգրկում է մաքուր ութնյակ (oktava) հնչյունածավալ և **երկմաս**՝ երգ-կրկներգ կառուցվածքն ունի: Առաջին մասն ընդգրկում է շարադրանքի 1-ին, 3-րդ և 5-րդ երկտողերը, ընթանալով Ի3/5 ձայնակարգում, երաժշտական պարբերության սկսող դարձվածքների մասով ամրագրում է հաստատական շեշտ պարունակող ձայնակարգի հիմնաձայնի և 2-րդ աստիճանի կրկնակի շարադրանքով: Այսու՝ նշված պարբերության հանգչող և վերջավորող դարձվածքները եզերվում են հիմնաձայնը հաստատող 2-րդ և 07-րդ աստիճանների շրջագարդումներով, որն ամբողջացնում է շարադրանքը որպես 1-ին մասն ամփոփող միություն: Շարադրանքի 2-րդ և 4-րդ երկտողերի սկզբի դարձվածքները սկսվում են ձայնակարգի դիմող ձայնի (5-րդ աստիճանի) հնգակի կրկնությամբ և դարձվածքի ավարտը եզերում 4-րդ և 3-րդ աստիճանների վարընթաց հաջորդականությամբ: Նման շարադրանքը, հատուկ լինելով կրկներգերի սկսող դարձվածքներին, ընկալվում է որպես ամբողջական կառույցի 2-րդ մաս:

Ռիթմական պատկերների շարադասության մեջ 1/16-ականների համեմատական առատությունը երգի քայլերգային բնույթին պարային երանգ է հավելում:

Ապարանի Մուլքի գյուղից Իշխան Կարապետյանի կատարումն իր կառուցվածքով նման է նախորդ օրինակին: Այստեղ բանասացն իր ներկայացրած 4 տուն շարադրանքի 2-րդ և 4-րդ տներն է ներկայացնում որպես կրկներգ, որտեղ կրկներգերին հատուկ ելևէջադարձումն ընդգծվում է պարբերությունների հանգչող դարձվածքներում՝ հիմնաձայն-դիմող ձայն թռիչքով, դիմող ձայնի քառակի կրկնությամբ և 2-րդ աստիճանով եզերվող վարընթաց աստիճանական շարժմամբ: Կառույցի 1-ին և 3-րդ տները որպես երգ-կրկներգ ամբողջության 1-ին մաս՝ ելևէջադարձմամբ նախորդ օրինակի 1, 3, 5 տների տարբերակային շարադրանքն են: Նմուշի ռիթմական պատկերների շարադասության մեջ 1/16-ականների համեմատական առատությունը, ինչպես նախորդ օրինակում, երգի քայլերգային շարադրանքին պարային երանգ է հավելում<sup>12</sup>:

Նկատենք, որ և՛ բանասացներից ձայնագրված երգերը, և՛ սոսկ տեքստային օրինակները հիմնականում երկտող տներից են կազմված և ունեն 11 վանկանի բանաստեղծական տող՝ 6/5 հարաբերությամբ: Նշված կառուց-

<sup>12</sup> Երգերի երաժշտագիտական քննությունը կատարել է Ջ. Թագակյանը:

վածքային և բովանդակային հենքերը պահպանվում են բոլոր օրինակներում՝ բացառությամբ Աբուլ սարի ուխտավայրում ձայնագրված երգի: Այստեղ, հավանաբար հիշողության կորստի պատճառով, երգասացը տեքստի տրամաբանական վերջավորությունը (չորրորդ դրվագ) տանում է սկիզբ և կրկնում երկու անգամ: Չի բացառվում նաև, որ կառուցվածքային փոփոխություններ կատարելով, նա ձգտել է շեշտադրել տեքստի իմաստային բեռը կրող տողերը:

Այս երգվող օրինակը տարբերվում է նաև վանկերի քանակով: Մյուս նմուշներում «Մազմանովին **տարին** (այլ օրինակներում՝ **բերին, դիակ**), դրին ըստանցին» տողում «**տարին/բերին/դիակ**» երկվանկ բառերը փոխարինվում են որոշակի **ը** հոդի շնորհիվ եռավանկ դարձած «**դիակը**» բառով, որի պատճառով՝ 11 վանկանի, 6/5 հարաբերությամբ բանաստեղծական տողը ձևափոխվում է՝ 6/6 հարաբերությամբ՝ 12 վանկանի տողի: Դրան ներդաշնակ՝ տրոհվում է նաև մեղեդու համապատասխան հատվածը:

Բոլորովին այլ կառուցվածք և բովանդակություն ունի գնդապետ Մազմանովին ձոնված Հ. Իկիլիկյանի հեղինակային ստեղծագործությունը: Այն աշուղական ոճով գրված բանաստեղծություն է հիշեցնում, որը պատկերում է թշնամու դեմ պայքարի մեկնող հերոսի հրաժեշտը՝ սիրեցյալին: Այս պատմական-քնարական բանաստեղծության տները քառյակային կառուցվածք ունեն և կազմված են հայկական բանահյուսական ավանդույթում տարածված՝ միմյանց հաջորդող 8 և 7 վանկանի տողերից:

### Մազմանովին (Ժողովրդական)

Մազմանովը նստած ալ ձին  
Կռիվ գնաց աներեր,  
Որ պաշտպանի թուրքի ձեռքից  
Նվիրական հողը մեր:

–Եկ համբուրեն վերջին անգամ,–  
Ասաց քաջը իր յարին,  
Այսուհետև կյանքիս ճամփան  
Լինելու է դժվարին:

Վաղը ծեգին կերթամ Օլթի,  
Գուցե էլ չդառնամ ետ,  
Տուր պատկերդ հետս տանեմ,  
Որ միշտ լինենք իրար հետ:

Թե պատահի վերք ստանամ  
Կռիվներում անսասան,  
Քո պատկերը կլինի անշուշտ  
Իմ վերքերին բալասան<sup>13</sup>:

13 Իկիլիկյան Հ., նշվ. աշխ., էջ 208:

Համեմատության համար ներկայացնենք նաև Վ. Արծրունու գրքում հրատարակած բանաստեղծությունը, որը, ինչպես նշում է հեղինակը. «Մագմանեանի մահէն անմիջապէս յետոյ երգուեցաւ շատ պարզ, անպաճոյճ և գեղարուեստէ գրեթէ զուրկ, բայց կենդանապատկեր երգ մը, որու հետևեալ մասը՝ առանց վերապահութեան և սեթևեթի, կը նկարագրէ հայկական ռազմաձակատի դառն իրականութիւնը.

Նրանք եկան խառնուեցան մեր անառիկ դիրքերի տակ,  
Ոռնում էին դիրքերն ի վեր գերդ՝ գայլերի սոված վոհմակ:  
Գնդապետը մեր քաջարի նշան տուեց վերջին կռիւի,  
Ինչպես մի հոտ հեզ ոչխարի մերինները կարկամեցին:  
Սովալլուկ գայլերի պէս նրանք սողում էին դէպի մեզ,  
Գնդապետը երեք անգամ աղաղակեց կռուի նշան,  
Երեք անգամ «յառնջ» ձայնեց ու սլացաւ սուսերամերկ,  
Երեք անգամ դիրքերն ի վեր նա պաղատեց կռուի հրաւեր...  
Մերոնք, ասես, շշմած էին ինչպէս հոտը հեզ ոչխարի,  
Չկռուեցին, չբռռացին հրացանները հազար լեզու,  
Չխոսեցին գնդացիներ՝ հրակոկորդ հռետորներ,  
Մինչ գազազած գայլերի պէս՝ նրանք սողում էին դէպ մեզ,  
Մերինները կորասուին բիրակոնակ խուճապեցին:  
Երբ որ խուճապը նա տեսաւ ոչխարախտուն իր գորքերի,  
Երբ ամոթը սև ամպի պէս նստեց նրա ձակտի վրայ,  
Իր դիակը սուիսամերձ թշնամիի առաջ փռուեց...  
Իսկ զինուորները դասալիք, մեր զինուորները խուճապող  
Հաւաքեցին միջնաբերդում իրենց վախը ամոթալի,  
Խոնուեցին իրարու մօտ գերդ գայլ տեսած ոչխարի հօտ,  
Լեարդերի պէս իրենց ճերմակ բարձրացուցին մի դրօշակ...  
Այս պատմութիւնն ամօթակէզ սրտերից սիրտ է գալարում,  
Եւ ամօթը բիրակնձիռ ձակատներն է մռայլում<sup>14</sup>:

**Սակայն իրականությունն այն է, որ սա Մագմանովի հիշատակին նվիրված Նաիրի Զարյանի հայտնի բանաստեղծության մի հատվածն է, որը ժողովրդի կողմից վերածվել է երգի:**

Այս բոլոր երգերում ու նրանց զանազան տարբերակներում հայ ժողովուրդը, ողբալով իր հերոսի մահը, անեծքներ ուղղելով վախկոտ դասալիքների ու դավաճանների հասցեին, որոնք ձողոպրեցին՝ Մագմանովի աճյունը թողնելով գերության մեջ, ազգային անլիարժեքության բարդույթը հաղթահարելու հզոր պատգամ է հղել հաջորդ սերունդներին: Սա ամոթից ու գերությունից մահը նախընտրած Կարսի անձնագոհ պաշտպան գնդապետ Հովհաննես Մագմանյանի կռիվն իր տրամաբանական ավարտին հասցնելու և Կարսը կրկին Հայաստանում տեսնելու՝ սերունդներին ուղղվող սրբազան պատգամ է...

<sup>14</sup> Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմ: Հայ սպայությունը: Շատախ, էջ 223: Բանաստեղծության ամբողջական տարբերակը՝ «Գնդապետ Մագմանեանը. Կարսի անկման առթիւ», տե՛ս «Վէմ», Փարիզ, 1936 թ. 1, յունւար-փետրւար, էջ 116-117:



**Հոփսիմե Վ. Պիկիչյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ավանդական ծիսական–տոնական կյանքի արդի փոխակերպումները, ավանդական նվագարանները, երաժշտական ինքնության խնդիրը, քաղաքային երաժշտական մշակույթը, թանգարանագիտությունը:

Հեղինակ է ուսումնական ձեռնարկի, մենագրությունների, այդ թվում՝ «Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ» (համահեղինակներ՝ Մ. Հարոյան, Ա. Գրիգորյան, 1998), «Հիմն արևին. «Սահարին» հայ երաժշտական մշակույթում» (համահեղինակ՝ Լ.Երնջակյան, 1998), “Armenian Folk Arts, Culture and Identity” Eds. L. Abrahamian, N. Sweezy, (Bloomington and Indianapolis, Indiana Univ. Press, 2001), համահեղինակներ՝ Լ. Աբրահամյան, Հ. Պետրոսյան, Հ. Մարության և այլք, «Երաժշտությունը հայոց ավանդական առտնին և տոնածիսական կյանքում» (2012) և այլն:

## Summary

### THE LEGEND OF MAZMANOV

In Armenian musical folklore

Hripsime V. Pikichian

*Candidate of Historical Sciences*

**Key words** – Mazmanov (Hovhannes Mazmanyán), Armenian folk music, historical songs, melody, poetic text, tragic shade, patriotic fighter, coward deserter, precept.

Songs devoted to events and personalities that played a crucial role in the destiny of the Armenian country and people have a special place in Armenian folklore. They form a genre of historical songs. A particular group within that genre consists of war songs created by eyewitnesses or contemporaries of the events described, as a direct response to historical reality. These songs are of great informational and documentary significance, since they indicate the exact dates of the described events, their geographical location, describe the area and particular settlement, the names of the national heroes, traitors or enemies. Songs of that genre are characterized by simple and easy-to-remember melodies and poetic texts, while the attitude of the singers towards the presented events along with their address to the audience is expressed by repetitive phrases or choruses.

The article describes a song, which is relatively little-known and is spread mainly in Eastern Armenia. It represents a documented and reproduced story of the surrender of Kars in 1920 during the Armenian–Turkish war followed by a suicide of Colonel Hovhannes Mazmanyán (Mazmanov). The presented musicological and textual analysis is based on historical information relating to Mazmanov’s life, as well as on folk songs recorded from informants, and the poetic text of the song, published in various collections.

## ЛЕГЕНДА МАЗМАНОВА

### В армянском музыкальном фольклоре

Рипсиме В. Пикичян  
*Кандидат исторических наук*

**Ключевые слова** – Мазманов (Ованес Мазманян), армянский музыкальный фольклор, исторические песни, мелодия, поэтический текст, трагическая интонация, воин-патриот, трусливые дезертиры, завет.

В армянском народном музыкальном творчестве особое место занимают песни, посвященные событиям и личностям, сыгравшим судьбоносную роль в жизни страны и народа. Эти песни составляют жанр исторических песен. Отдельную группу среди них представляют военные песни, которые создавались очевидцами или современниками описываемых событий как непосредственный отклик на историческую действительность. Эти песни имеют большое информационное, источниковедческое и документальное значение, поскольку в них указаны точные даты описываемых событий, географическое местоположение, описана местность и обозначен населенный пункт, названы имена героев, предателей и противников. Для таких песен характерны несложные и легко запоминающиеся мелодии и поэтический текст, а отношение самого народа к происходящему и обращение к слушателю выражаются периодически повторяющимися оборотами или припевом.

Статья посвящена относительно малоизвестной песне, распространенной преимущественно в Восточной Армении, посредством которой народ задокументировал и воспроизвел историю сдачи Карса в 1920 году во время армяно-турецкой войны и самоубийства патриота, полковника Ованеса Мазманова. Представленный музыковедческий и текстологический анализ основан на исторических сведениях о деятельности Мазманова, народных песнях, записанных от информантов, и поэтических текстах, опубликованных в различных изданиях.

## REFERENCES

1. **Ar cr uni V.**, Hay-tackakan paterazm., Hay spayu tyun ə. Shatax, Er., 2002, ej 223.
2. **Brutyán M.**, Hay zho ghovrdakan erajvotakan steghcag vor cu tyun, Er., „Luys, hrat., 1963, ej 8-9.
3. „Gndap yet Mazmanyanə Karsi ankman ar tiv,, tes „,Vem,, , Pariz, 1936 N 1 hunvar-petrvar, , ej 116-117.
4. **Ikilikyan H.**, Verelqi mej e imastə kyanqi, Er., 2011, ej 180-206.
5. **Ghaziyan A.**, Hay zho ghovrdakan razmi yev zinvori yerger, Er., HXSH GA hrat., 1989, ej 8.



Սմբատ Խ. Հովհաննիսյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔՆ ԻԲՐԵՎ «ՄՐՑԱԿՑՈՂ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՏԱՐԱԾՔ

Հայաստանի Հանրապետության 1918–1920 թթ. պատմության  
շարադրանքի օրինակով

**Բանալի բառեր** – Հայաստանի Հանրապետություն, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, «հիշողության վայրեր», մրցակցող հիշողություններ», նարատիվ ռազմավարություններ», «հակապատմություն», մոռացման տիպեր, դասագրքային հիշողություն:

### Մուտք

Անցյալի հետ երկխոսությունը սերտորեն լծորդված է հիշողության և/կամ մոռացման թեմաների հետ: Ուստի մշակութային կամ քաղաքակրթական նոր արժեքների ստեղծման գործընթացն անխուսափելիորեն ուղեկցվում է որոշ հիշողությունների ակտիվացմամբ և որոշների մոռացմամբ: Այդ իմաստով միտումնավոր մոռացումը կամ հիշումը ինքնօրինակ նշանակություն և իմաստ են ստանում, ինչպես պետությունների (հանրությունների) վերակազմակերպման, այդպես և վերարտադրության համատեքստում: Վերարտադրությունը, Մայքլ Բիլլիգի դիպուկ ձևակերպմամբ, «[Կ]ախված է հավաքական հիշողությունից ու մոռացումից, երևակայությունից և երևակայագուրկ կրկնությունից»<sup>1</sup>: Ուստի պատահական չէ, որ արդի պատմագիտական հետազոտությունների թեմատիկ բազմազանության մեջ պատմական որոշ իրադարձություններ դառնում են մշակութային ինքնօրինակ «տոպոսներ», որոնցում ակներևաբար ի ցույց են դրվում պատմության մեջ առկա գերակայությունները, հատուկ հետաքրքրությունների և սուր բանավեճերի ոլորտները, ինչպես նաև տեսական ու մեթոդական որոնումների հիմնարար ուղղությունները:

Ժ (ԺԶ) փայտի թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

1 Billig M., Banal Nationalism, London: Sage Publications, 1995, p. 10.

Այսու՝ անցյալի և հանրային (պետության) պատմական հիշողության մասին գոյություն ունեցող բազմաթիվ սկզբնաղբյուրների մեջ առանձնա- նում է դարձրել դասավանդվող «պատմություն» առարկան, որը հավա- քական (սոցիալական) հիշողության (հետևաբար՝ ինքնության) բազմաթիվ բաղադրիչների բովանդակումից զատ աչքի է ընկնում իր նպատակաուղղ- վածությամբ. միջոց է, որով տիրապետող իշխանությունը (պետությունը) միտված է իրագործելու և օրինականացնելու իր գերիշխանությունը: Ավե- լի ստույգ՝ դասագիրքը պաշտոնական գիտելիքի քաղաքականության **հա- մաձայնությունների (accords)** կամ **փոխզիջումների (compromises)** տի- րույթ է, ուր կարելի է վեր հանել, «թե տիրապետող խմբերն ինչպես են ձգտում ստեղծել իրավիճակներ, որտեղ փոխզիջումները ձևավորվում են հոգուտ նրանց»<sup>2</sup>: Ընդ որում՝ այդ փոխզիջումները տեղի են ունենում տար- բեր մակարդակներում, լինի քաղաքական, թե գաղափարախոսական տրա- մասույթների, պետական քաղաքականության, թե գիտելիքի<sup>3</sup>: Այս իմաստով աներկբա կարևորություն են ձեռք բերում պատմության դասագրքերը, որոնք մեծավ մասամբ լծորդված են իշխանության և հասարակության գո- յություն ունեցող կառույցների (սոցիալական, էթնիկական, քաղաքական, մշակութային, տնտեսական և այլ) օրինականացման գաղափարին, քանզի հիշել, նշանակում է նաև իրագործել իշխանությունը:

Այստեղից էլ՝ դասագիրքը քաղաքական տրամասույթների համատեքս- տում քննարկելու կարևորությունը: Դասագիրքը՝ որպես գաղափարախոսա- կան պայքարների ու տրամասույթների դաշտ, կարևորվում է նաև իր գոր- ծիքային գործառնությունով: Ընդ որում՝ քաղաքականությունն ու կրթությունը (հետևաբար՝ դասագիրքը), լինելով փոխշաղկապված, միևնույն ժամանակ դժվար տարանջատելի ամբողջություն են (ակնհայտ, թե անտեսանելի):

**Ուստի սույն հետազոտության նպատակն է վեր հանել խորհրդային տարիներին հրատարակված վերջին՝ «Հայ ժողովրդի պատմություն» (1988) և հետխորհրդային առաջին՝ «Հայոց պատմություն» (1994) դա- սագրքերի տրամասույթների ստեղծման դիտավորությունները, որտեղ ուսումնառողները (աշակերտները) բացահայտ կամ թաքուն կերպով ներգրավված են իշխանական պատումների օրինականացման գոր- ծընթացում: Խնդիրը դիտարկել ենք Հայաստանի Հանրապետության 1918–1920 թթ. պատմության գնահատման և վերագնահատման համա- տեքստում: Կրննարկենք՝**

- ինչպես են քաղաքական-գաղափարախոսական (նաև քաղաքա- կրթական) տարբեր մակարդակներում և միջավայրերում գտնվող պատմաբանները մեկնաբանել պատմական անցյալը,
- քաղաքական նպատակով կիրառված պատմական առասպելույթ- ներն ու կարծրակերպերը սոցիալական ինչ գործառնություններ ու մե- խանիզմներ են ունեցել:

Թեմայի հետազոտումն այս առումով մեկ այլ հետաքրքիր կողմ էլ է վեր հանում. դասագրքերից առաջինը գրվել է անցումայնության թույլ գի-

2 Apple M. W., Official Knowledge: Democratic Education in a Conservative Age, 2<sup>nd</sup> Edition, New York: Routledge, 2000, p. 10.

3 Տե՛ս Apple M. W., op. cit., էջ 10:

տակցմամբ (եթե նկատի ունենանք գորքաչոյան վերափոխությունները), իսկ երկրորդը՝ դրա կոնկրետ գիտակցմամբ, մանավանդ երբ ԽՍՀՄ-ի փլուզմամբ պատմական մի իրականության հետ խզումը հանգեցնում էր պատմական մեկ այլ իրականության հետ կապերի վերականգնմանը: Նպատակին հետամուտ՝ նախ փորձել ենք համադրական վերլուծության ենթարկել Հայաստանի Հանրապետության վերաբերյալ երկու դասագրքերի **վերնագրային ու ենթավերնագրային կառույցը, հետո՝ քննարկել հերոսի և հերոսականության, «թշնամու» և «բարեկամի», ինչպես նաև «փրկչի կերպարի», իսկ ապա՝ դասաթեմաների վերջում զետեղված «Հարցերի և առաջադրանքների» հիմնախնդիրները:**

Նշենք նաև, որ պատմության դասագրքերի հետազոտության տեսական հիմքերը դրել է ֆրանսիացի պատմագետ **Մարկ Ֆերրոն** «Ինչպե՞ս են պատմում պատմությունը երեխաներին աշխարհի տարբեր երկրներում» կոթողային աշխատության մեջ<sup>4</sup>, որտեղ անդրադարձ կա նաև Խորհրդային Հայաստանում հրատարակված՝ մեր քննարկելիք դասագրքին: Նրա աշխատանքը, սակայն, հետազոտության խնդիր չի դարձել ինչպես խորհրդային ժամանակաշրջանում, այնպես էլ անկախության առաջին տարիներին: Դասագրքերի վերաբերյալ հետազոտությունների նկատմամբ հետաքրքրություններն ի հայտ են եկել ավելի ուշ՝ 2000-ականների սկզբին միայն: Այս համատեքստում հիմնախնդրի ինչպես հիմնական, այնպես էլ առանձին կողմերի վերաբերյալ առնչվող բազմաթիվ այլ հետազոտություններ են հրատարակվել<sup>5</sup>:

### 1. Տեսական մի քանի հիմնախնդիրներ

Հետազոտության համար ելակետային նշանակություն ունի Բենեդիկտ Անդերսոնի **Երևակայական հանրությունների հղացքը**<sup>6</sup>, որը նա զարգացրել է համանուն գրքում: Այստեղ հեղինակը պատմական հարուստ նյութի հի-

4 Տե՛ս **Ferro M.**, Comment on raconte l'histoire aux enfants à travers le monde, Paris: Payot, 1983:  
5 Տե՛ս **Искандарян А., Арутюнян В.**, Армения: «карабахизация» национальной истории, в книге: **Аймерма-хер К., Бордюгов Г. (ред.)**, Национальные истории в советском и постсоветских государствах, Изд. 2-е, испр. и дополн., М.: Фонд Фридриха Науманна, АИРО-XX, 2003, с. 146-147. **Т. Матосян**, «Изобретение традиций»: тема советизации в учебниках истории советской Армении, **О. Карпенко, Дж. Джавахишвили (Ред.)**, Мифы и конфликты на Южном Кавказе, том 1, Инструментализация исторических нарративов, International Alert, 2013, с. 54-71. **Մկրտչյան Ս. Շ., Полошкевич О. А., Санина А. Г.**, Визуальное измерение Государственной идентичности: теория, методология и практика, СПб.: Изд-во Российского Государственного Педагогического Университета им. А. И. Герцена, 2012. **Մկրտչյան Ս.**, The Republic of Armenia's Neighbours in the Late 19th and Early 20th Centuries in Contemporary World History Textbooks, in: **Rumyantsev S. (ed.)**, The South Caucasus and Turkey: History Lessons of the 20th Century, Heinrich Böll Foundation South Caucasus Regional Office, 2012, p. 47-64. **Մկրտչյան Ս.**, State and Church in Armenian State Schools: from Atheistic Soviet Education to the Contemporary History of Armenian Church Course, in: **Jödicke A. (ed.)**, Religious Education Politics, the State, and Society, Ergon-Verlag GmbH., 2013, p. 149-165. **Մկրտչյան Ս.**, Armenia-Georgia Relations (1918-1921), as Reflected in School Textbooks: "Wars" or a "Dialogue" of Memories, in: City, Migration, Markets: New Studies in Social science from the South Caucasus, Collection of articles Vol.5, Heinrich Beoll Stiftung 2011, 2011, p. 169-184. **Zolyan M.**, Writing the History of the Present: The Post-Soviet Period in Armenian History Textbooks, in: **Rumyantsev S. (ed.)**, The South Caucasus and Turkey: History Lessons of the 20th Century, Heinrich Böll Foundation South Caucasus Regional Office, 2012, p. 145-169. **Zolyan M., Zakaryan T.**, The images of "Self" and "Other" in textbooks on History of Armenia, in: **Vesely L. (Ed.)**, Contemporary History Textbooks in the South Caucasus, Prague, 2008, p. 12-31. **Zolyan M., Zakaryan T.**, Representations of "Us" and "Them" in History Textbooks of Post-Soviet Armenia, in: **Sidikov B. (ed.)**, Schulbücher im postsowjetischen Kaukasus und in Zentralasien /Textbooks in the Post-Soviet Caucasus and in Central Asia, International Textbook Research, Volume 30, Braunschweig: Georg-Eckert-Institut für internationale Schulbuchforschung, 2008, p. 785-795. **Zolyan M., Mkrtychyan S., Hovhannisyan H.**, A New Beginning: State-Building and Representation of the Events of 1988-1991 in the Political Discourse of Republic of Armenia, Yerevan: Regional Studies Center, 2016. **Silova I.**, Gender Analysis of Armenian School Curriculum and Textbooks. Policy Brief, Open Knowledge Repository, World Bank Group, 2016, URL://<https://openknowledge.worldbank.org/handle/10986/24948> (26.05.2018) և այլք:

6 Տե՛ս **Anderson B.**, Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism (New Edition), London & New York: Verso, 2006:

ման վրա եզրակացնում է, որ ազգը «երևակայական ամբողջություն» է, որոշակի մտածելի կառույց, այլ ոչ թե նախապես ձևավորված կենսաբանական կամ սոցիալական տրվածություն. «[Ը]խդհանրապես գոյություն ունենալու համար բոլոր հանրությունները պետք է երևակայվեն»<sup>7</sup>: Ըստ Անդերսոնի՝ բոլոր հանրությունները, որոնք հաղթահարում են «դեմ առ դեմ»-ի փոխազդեցության սահմանները, վերածվում են երևակայական հանրությունների, որտեղ ընդհանրություն(ներ)ը վերացական է(են), այլ ոչ իրական: Ուստի «[Ը]անրությունները հարկ է գանազանել ոչ թե ըստ դրանց կեղծության/իսկության, այլ ըստ այն ոճի, որով դրանք երևակայվում են»<sup>8</sup>: Ըստ այսմ՝ դրանք լինում են **սահմանափակ** (limited) և **ինքնիշխան** (sovereign): Սահմանափակ, որովհետև ոչ մի ազգ չի հավակնում ամբողջ մարդկությունն ընդգրկելուն: Ինքնիշխան, քանի որ հենց իր մեջ, այլ ոչ դինաստիական կարգի կամ աստվածային կառույցի մեջ է գտնվում իշխանության սկզբնաղբյուրը<sup>9</sup>: Ընդ որում՝ այդ հանրություններն արդյունք են պետական կամ քաղաքական և մշակութային ընտրանու (էլիտայի) նպատակամետ գործունեության, որի մեջ մեծ դերակատարում ունի տպագրությունը (մասնավորապես՝ վեպը և ամենօրյա թերթը), որը հնարավոր է դարձնում հանրության ամբողջական՝ երևակայական պատկերը: Այսու՝ դասագիրքը ևս երևակայական հանրության կազմավորման հարցում հույժ կարևոր դերակատարում ունի, քանի որ այն տեղեկատվություն է հաղորդում մարդկանց իրենց պետության տարածքի մասին և շոշափելի է դարձնում կապն այդ տարածության հետ (մարդիկ սկսում են գիտակցել այն իբրև ամբողջական և ազգային):

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ և այն, որ դասագրքի հիմքում ընկած է գիտականությունը: Ուստի՝ հարց է առաջանում. ինչպե՞ս հարաբերակցել հիշողությունը գիտականությանը, տվյալ դեպքում՝ պատմագիտությանը: Թվացյալ հակասությունը լուծում է գտնում «հիշողության» և «պատմության» հաջորդական դիտարկման հեռանկարում: Այն է՝ դասագրքի ելակետը՝ պատմության գիտականությունը, հրնթացս դասավանդման առնչակցվում է հիշողությանը: Իսկ խորքային առումով հիշողությունն ու պատմությունը փոխըջեղի և փոխլրացնող հասկացություններ են. «Հիշողության տարածք(ներ)ը ձևավորում են պատմության և հիշողության խաղերը՝ երկու գործոնների փոխազդեցություն, որը հանգեցնում է փոխադարձ վերաորոշարկման»<sup>10</sup>: Բայց և հիշենք, որ միայն այն դասագրքերն են համարվում «հիշողության տարածք(ներ)», որոնց հիմքը «հիշողության վերամշակումն է, կամ որոնք մանկավարժական համառոտագրություններ (breviaries) են»<sup>11</sup>: Եվ քանի որ հիշողությունը ոչ այնքան կապված է անցյալի հետ, որքան ներկայի, ուստի կարծում ենք, որ **դասագրքային հիշողությունը** գործառության համակարգ է, որով ներկան և անցյալը կամ հաշտեցվում են, կամ էլ դրվում հակամարտության մեջ: Եվ այդ ամենը՝ երևա-

7 **Fields K. E.**, Translators Introduction, in: **Dürkheim E.**, *The Elementary Forms of Religious Life /A New Translation* by Karen E. Fields, New York etc.: The Free Press, 1995, p. XXXIII.

8 **Anderson B.**, op. cit., p. 6.

9 Տե՛ս **Ibid.**, էջ 6:

10 **Pierre N.**, *Between Memory and History: Les Lieux de Mémoire, Representations, Special Issue: Memory and Counter-Memory*, 26 (Spring, 1989), p. 19.

11 **Pierre N.**, op. cit., p. 21.

կայության մեջ և/կամ երևակայության միջոցով: Այսու՝ անցյալը՝ իբրև ընթանման առարկա, հնարավոր է երևակայության միջոցով, քանի որ այն այլևս գոյություն չունի ներկայում<sup>12</sup>: Պոլ Ռիկյորի դիպուկ բնորոշմամբ՝ «վլ երիուշին (rappel) հանգեցված հիշողությունն ընթանում է երևակայության հետքով»<sup>13</sup>: Նկատենք նաև, որ «երևակայությունն» ու «հիշողությունը», տրամախաչումներից զատ, նաև տարամիտում են. «[Ե]րևակայության և հիշողության համար ընդհանուր է ներկայությունն այն բանի, ինչը բացակայում է, իսկ դրանք տարբաժանող են մի կողմից՝ երևակայությանը հատուկ կտրվածությունն իրականությունից ու անիրականի տեսանումը, իսկ մյուս կողմից՝ նախորդող իրականի ենթադրումը, որ հատուկ է հիշողությանը»<sup>14</sup>:

Դասագիրքը, մեծավ մասամբ լծորդված լինելով հիշողությանը, երևակայության և հիշողության տրամախաչման տարածք է<sup>15</sup>, որի շրջանակներում պատմական իրականությունը կարելիականացվում (virtualisation) – խորհրդանշականացվում է: Ուստի խիստ իմաստաբանական սահմանում(ներ)ից շեղվող որոշ նշանակություններ ուղեկցվում են նաև հիշողության կորուստներով (ամնեզիաներով) կամ մոռացումներով, որոնցից «[Պ]ատմական առանձնահատուկ հանգամանքներում ծնվում են պատումները»<sup>16</sup>:

Պատումի և հիշողության կապը, ըստ Պոլ Ռիկյորի, հանգեցնում է «պատումային» ինքնությանը, այլորեն ասած՝ մենք այն ենք, ինչ պատումում ենք մեր մասին, և հիշողությունը մեր պատմություններն են<sup>17</sup>: Նույնը կարող ենք ասել և դասագրքային հիշողության մասին, որի մեջ պահպանվում են պետության (կայսրության), ազգի, երկրի, քաղաքի կամ հանրույթի պատմությունները: Ըստ Դեբորա Շիֆրինի՝ պատումը «տրամասույթի կերպ է, որի միջոցով մենք վերակառուցում և (վերա)ներկայացնում ենք անցյալի փորձառությունը մեզ և ուրիշների համար»<sup>18</sup>: Այլ կերպ ասած՝ հիշողությունը հնարավոր է վերակազմակերպել, ինչպես վերակազմակերպվում է պատմությունը: Այսու՝ անցյալի այժմեականացումն (արդիականացումը) օգնում է «հիշողություն–մոռացում» հարացույցի ինչպես վերհանմանը, այդպես և ապաճակագրմանը և մշակութային նոր ծածկագրերի ստեղծմանը:

Հետազոտության համար առանձնացրել ենք նաև Միշել Ֆուկոյի<sup>19</sup> առաջադրած «հակա–հիշողություն» (contre-mémoire) և «հակա–պատմություն»

12 Stü Collingwood R. G., The idea of history: Revised Edition with Lectures 1926–1928 /Edited with an Introduction by Jan van der Dussen, Oxford & New York: Oxford University Press, 1994, էջ 242:

13 Ricœur P., La Mémoire, l'histoire, l'oubli, Paris: Éditions du Seuil, 2000, p. 5.

14 Ricœur P., op. cit., p. 53–54.

15 Stü Halbwachs M., Les Cadres Sociaux de la Mémoire, Paris: Albin Michel, 1994, Halbwachs M., La Mémoire collective, Paris: P.U.F., 1968, Ricœur P., La Mémoire, l'histoire, l'oubli, Paris: Le Seuil 2000, Hutton P., History as an Art of Memory, Hanover and London: University Press of New England, 1993, Nora P., Entre la mémoire et l'histoire: Les Lieux de Mémoire, dans Nora P. (dir.), Les lieux de mémoire. La République, Paris: Gallimard, 1984, Лотман Ю. М., Память в культурологическом освещении, Лотман Ю. М., Семиосфера, СПб.: Искусство–СПб, 2000, Лотман Ю. М., Память культуры, Лотман Ю. М., Семиосфера, СПб.: Искусство–СПб, 2000. և այլք:

16 Anderson V., op. cit., p. 204.

17 Stü Рикёр П., Я–сам как другой /Пер. с франц. Б.М. Скурагова, М.: Издательство гуманитарной литературы, 2008, էջ 172:

18 Schiffrin D., In Other Words: Variation in Reference and Narrative, Cambridge University Press, 2006, p. 321.

19 Stü Фуко М., Нужно защищать общество: Курс лекций, прочитанных в Коллеж де Франс в 1975–1976 учебном году, СПб.: Наука, 2005. Foucault M., 'Nietzsche, Genealogy, History', in D. F. Bouchard (ed.), Language, Counter-Memory, Practice: Selected Essays and Interviews, Cornell University Press, Ithaca, 1977, էջ 139–164:

(contre-histoire) հղացքները և «հիշողության»՝ Յան Ասմանի<sup>20</sup> և Յուրի Լոտմանի<sup>21</sup> մեկնաբանությունները, որոնց համատեքստում մեզ ավելի շատ հետաքրքրում է հիշողության սոցիալական մակարդակը, որի բաղկացուցիչն է **պատմական գիտակցությունը**: Ընդ որում՝ պատմական գիտակցությունը ձևավորվում է ինչպես իբրև բնական (անձնական հիշողության արդյունք, անձնական կենսագրություն), այդպես և իբրև հանրային տրամասույթի գոյության արդյունք:

Հետամուտ լինելով Միշել Ֆուկոյի «հակահիշողություն» հղացքին՝ քննարկման մեջ պատմական հիշողության ներքո հասկանում ենք «ընդհանուր անցյալի վերաբերյալ հանրույթի մինչգիտական, գիտական, կեղծգիտական և ոչգիտական գիտելիքների և զանգվածային պատկերացումների ամբողջությունը»<sup>22</sup>, իսկ հակա-հիշողությունը՝ իբրև իշխանական խմբերի կողմից կազմված կամ կազմակերպված տրամասույթ (դիսկուրս), որն արտացոլում է տարբեր իրադարձությունների ըմբռնումն ու գնահատումը ներկայումս հրատապ իրադարձություններին համապատասխան: Այստեղից էլ՝ պատմական գիտելիք(ներ)ի նկատմամբ վերահսկողությունը համարժեք է վճռորոշ ռազմավարական դիրք զբաղեցնելուն<sup>23</sup>: Այսպիսի հակադրությամբ Ֆուկոն ցույց է տալիս, որ մեկի հիշողությունը (սակ պատմությունը) բոլորովին էլ մյուսի հիշողությունը (սակ պատմությունը) չէ: Ըստ էության՝ հակահիշողությունը (հակա-պատմության պես) լրության գոտում հայտնվածների կամ գտնվողների տրամասույթն է, որը կողմնորոշված է ոչ թե դեպի շարունակականությունն ու գծայնությունը, այլ խզումի հասկացումը: Հակահիշողությամբ (հակա-պատմությամբ) Ֆուկոն վեր է հանում այն, ինչ թաքցվել է կամ իրադարձություններին մասնակցած լուսանցքային մասնակիցների արհամարհումի, կամ գիտակցաբար քողարկման պատճառով:

Ուշագրավ է հիշողության՝ գերմանացի եգիպտագետ Յան Ասմանի մեկնաբանությունը, համաձայն որի՝ ոչ միայն կարելի է միմյանցից տարանջատել անհատական և հավաքական հիշողությունները, այլև հավաքական հիշողության մեջ հարկ է առանձնացնել հաղորդակցական (Kommunikatives) և մշակութային (Kulturelles) հիշողությունները: Ըստ այդմ՝ հաղորդակցական հիշողությունը ծագում է տվյալ հանրույթի բոլոր անդամների միջև ամենօրյա միջանձնային փոխհարաբերությունների արդյունքում: Այն անհատների (ուղղակի մասնակիցների կամ ականատեսների) և խմբի «կենդանի հիշողությունն է», որն ընդգրկում է ոչ վաղ անցյալի հետ կապված հիշողությունները: Ուստի հաղորդակցական հիշողությունը ծագում է ժամանակի հետ ու անցնում դրա հետ, այն է՝ իր կրողի հետ<sup>24</sup>: Իսկ մշա-

20 Assmann J., Das kulturelle Gedächtnis: Schrift, Erinnerung und politische Identität in frühen Hochkulturen, Verlag: C. H. Beck, 2007. **Ассман Я.**, Культурная память. Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности, М.: Языки славянской культуры, 2004.

21 Տե՛ս **Лотман Ю. М.**, Память культуры, **Лотман Ю. М.**, Семиосфера, СПб.: Искусство-СПб, 2000, с. 614–621, **Лотман Ю. М.**, Память в культурологическом освещении, **Лотман Ю. М.**, Семиосфера, СПб.: Искусство-СПб, 2000, էջ 673–676:

22 **Foucault M.**, 'Nietzsche, Genealogy, History', in **D. F. Bouchard (ed.)**, Language, Counter-Memory, Practice: Selected Essays and Interviews, Cornell University Press, Ithaca, 1977, p. 139.

23 Տե՛ս **Фуко М.**, Нужно защищать общество: Курс лекций, прочитанных в Коллеж де Франс в 1975—1976 учебном году, СПб.: Наука, 2005, էջ 186:

24 Տե՛ս **Ассман Я.**, Культурная память: Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности, М., 2004, էջ 52:



կութային հիշողությունը մշակութային իմաստների փոխանցման և արդիականացման առանձնահատուկ խորհրդանշական ձև է, որը դուրս է անհատական և խմբային փորձառությունից, պահպանվում է ավանդույթով, ձևանացված է և ծիսականացված<sup>25</sup>: Ընդ որում՝ մշակութային հիշողությունը «վերակառուցողական բնույթ» ունի, այն է՝ նրանում թաքնված արժեքային գաղափարները, ինչպես և նրա հաղորդած ողջ «գիտելիքն անցյալի մասին» անմիջականորեն կապված են մարդկանց կյանքում տվյալ պահին արդիական իրավիճակի հետ: Հաղորդակցական հիշողությունից մշակութային հիշողության գլխավոր տարբերակիչ հատկանիշը նրա ձևակերպվածությունն է և այն իրավիճակների ծիսականությունը, որոնցում այն դրսևորվում է<sup>26</sup>: Ասամանն ընդգծում է նաև մշակութային հիշողության բովանդակությունը տարբեր ձևերով վերակազմակերպելու հնարավորությունները, որը կախված է այս կամ այն սոցիալական հանրույթի հետաքրքրություններից և աշխարհատեսությունից: Ըստ այդմ՝ մշակութային հիշողությունը կարող է լինել «տաք» կամ «սառը»: «Տաք» հիշողությունն, ըստ Ասամանի, կողմնորոշված է դեպի շարժունությունն (Dynamik) ու զարգացումը, կենտրոնացած է պատմության մեջ առանձնահատուկի, եզակիի ու անկրկնելիի վրա: «Սառը» հիշողությունն, ընդհակառակը, կոչված է դիմադրելու փոփոխություններին, ուստի դիմում է կանոնավոր կերպով կրկնվող, անփոփոխ ամենայն ինչին՝ անցյալի պատկերը կազմակերպելով իբրև «հավերժ ներկա»: Ուշագրավ է, որ դեպի «տաք» հիշողությունն են կողմնորոշված հասարակության ստորին խավի ներկայացուցիչները, իսկ դեպի «սառը» հիշողությունը՝ իշխող խավի ներկայացուցիչները<sup>27</sup>:

Ոչ պակաս ուշագրավ է հիշողության՝ Յուրի Լոտմանի մեկնաբանությունը, որը խորքային առումով լրացնում է նախորդներին: Ըստ նրա՝ մշակութային տարածությունն ինքնին հիշողության տարածք է, որտեղ մշակութային տեքստերը պահպանվում և արդիականացվում են: Ըստ այդմ՝ մշակութային հիշողությունը նա տարբաժանում է երկու մասի՝ **տեղեկութային** (информативная) և **ստեղծարար** (креативная)<sup>28</sup>: Տեղեկութային հիշողությունը ենթակա է ժամանակի գծային հոսքին: Նրա համար նշանակալի է սոսկ ամփոփիչ տեքստը, ակտիվ է լոկ վերջնարդյունքը: Այս հիշողությունը լիովին պատկանում է ներկային և առաջ է շարժվում ներկայի հետ՝ մշտապես ջնջելով անցյալի տեղեկատվությունն իբրև ոչ հրատապ: Այստեղ ժամանակագրորեն վերջինս ամենաարժեքավորն է ու նշանակալին: Ստեղծարար հիշողությունը, ընդհակառակը, ունի **հարաժամանակյա** (панхронный) բնույթ: Նրանում ոչ մի բան վերջնականորեն չի անցնում, չի անհետանում: Որոշ տեքստեր ժամանակավորապես կորցնում են իրենց արդիականությունն ու հրատապությունը և «պահպանության» են տրվում: Մյուսներն էլ վերակազմակերպվում և պահանջվում են մշակույթի «արխիվից»: Անցյալն ընտրվում է, ծածկագրվում և հիշվում/մոռացվում է սինուսիդալային ռիթմով: **Ստեղծարար հիշողության** մեջ աշխատում են մշակույթի բո-

25 Տե՛ս **Ассман Я.**, նշվ. աշխ., էջ 54:

26 Տե՛ս **Ассман Я.**, նշվ. աշխ., էջ 61:

27 Տե՛ս **Ассман Я.**, նշվ. աշխ., էջ 72-74:

28 Տե՛ս **Лотман Ю. М.**, Память в культурологическом освещении, **Лотман Ю. М.**, Семносфера, СПб.: Искусство-СПб, 2000, էջ 674:

լոր ժամանակային շերտերը և ոչ միայն ժամանակի վերջին հատվածը: Ավելի վաղ տեքստերը ներբերվում են ներկա՝ ներգործելով ներկայի վրա: Այդուհետ փոփոխված ներկան իր հերթին փոխում է անցյալի կերպը:

Ուստի հիշողության կողքին հույժ կարևորվում է նաև մոռացումը, որը միջոց է ոչ միայն արդիականացվող տեքստերի (պատումների) վերծանման, այլև նորերի ստեղծման համար: Հետևաբար, ինչպես նշում է անգլիացի հետազոտող Փոլ Քոններթոնը, մոռացումը ոչ միշտ կարելի է դիտարկել իբրև ձախողում, ավելին՝ այն միասնական ֆենոմեն է, և եթե տարբերակվի, կարող է անգամ օգտակար լինել<sup>29</sup>: Ըստ այդմ՝ Քոններթոնն առանձնացնում է մոռացման յոթ տեսակ՝ **հարկադրական ջնջում** (Repressive erasure), **կարգադրական մոռացում** (Prescriptive forgetting), **նոր ինքնության կազմավորում** (Formation of new identity), **կառուցվածքային ամնեզիա** (Structural amnesia), **ոչնչացում** (Annulment), **ծրագրված հնեցում** (Planned obsolescence) և **ստորացված լռություն** (Humiliated silence): Ընդամին՝ մոռացման թվարկված տեսակներն ունենում են տարբեր գործորդներ (agent), տարբեր գործառույթներ ու արժեքներ: Մոռացման առաջին և երկրորդ տեսակների (հարկադրական ջնջում և կարգադրական մոռացում) գործորդները պետություններն են, կառավարությունները կամ իշխող կուսակցությունները: Երրորդ և չորրորդ տեսակների (նոր ինքնության կազմավորում և կառուցվածքային ամնեզիա) գործորդներն ավելի տարբեր են. կարող են լինել անհատներ, զույգեր, ընտանիքներ կամ ազգակցական խմբեր: Հինգերորդ տեսակի (ջնջումն իբրև հակազդում տեղեկատվական գերբեռնումի) գործորդները կարող են լինել անհատներն ու տարբեր չափի խմբերը (օր.՝ ընտանիքներ կամ խոշոր ընկերություններ), ինչպես նաև հանրույթներն ու մշակույթներն ամբողջությամբ: Վեցերորդ տեսակի (ծրագրված հնեցում) գործորդները տնտեսական արտադրության ամբողջ համակարգի անդամներն են, իսկ յոթերորդ տեսակի (ստորացված լռություն) գործորդները ոչ պարտադիր, բայց սովորաբար քաղաքացիական հասարակություններն են<sup>30</sup>:

Մոռացման կազմակերպման ավելի բարդ տարատեսակ է համարվում անցյալի ժամանակային հորիզոնի ձեռնածման տեխնոլոգիան<sup>31</sup>, որի մասին են ֆրանսիացի մարդաբան Մարկ Օժեի առանձնացրած մոռացման ձևերը՝ **վերադարձի** (retour), **առկախված** (suspens) և **վերասկզբնավորության** (recommencement)<sup>32</sup>: Մոռացման առաջին ձևի խնդիրն է «կորսված անցյալի բացահայտումը»՝ ավելի հեռու անցյալի հետ շարունակականության վերականգնման նպատակով, որն ուղեկցվում է ներկայի և ոչ վաղ անցյալի մոռացմամբ: Այսու՝ «բարդ» անցյալը կործանվում է հօգուտ «պարզ» անցյալի: Մոռացման երկրորդ ձևի խնդիրն է անցյալի և ապագայի հետ ժամանակավոր խզման գնով ներկայի վերաբացահայտումը: Եվ, վերջապես, մոռացման երրորդ ձևի խնդիրն է անցյալի մոռացման գնով ապագայի

29 Տե՛ս **Connerton P.**, Seven types of Forgetting, *Memory Studies*, 1 (2008), էջ 59:

30 Տե՛ս **Connerton P.**, *op. cit.*, էջ 69–70:

31 Տե՛ս **Васильев А. Г.**, Культурная память/забвение и национальная идентичность: теоретические основания анализа, в книге: **Кочеляева Н. А.** (ред.), *Культурная память в контексте формирования национальной идентичности России в XXI веке: Коллективная монография / Новый ин-т культурологии*, М.: Совпадение, 2015, էջ 42:

32 Տե՛ս **Augé M.**, *Les formes de l'oubli*, Paris: Payot, 1998, էջ 76–78:

վերաբացահայտումը, նոր ծնունդի համար պայմանների ստեղծումը: Ըստ այսմ՝ մոռացման վերոթվարկյալ «ձևերի» շնորհիվ ծեսերը հասցվում են խորհրդանիշների աստիճանի:

Ըստ վերոասացյալի՝ ակնհայտ է, որ մոռացումը հենց այնպես չի լինում. ինչպես հիշողությունը, այդպես և մոռացումը կարող է ունենալ ռազմավարական, նպատակային և գործնական նշանակություն, ուստի ոչ պատահականորեն այն ամենաշատն է ենթակա ձեռնածության, որը սերտորեն առնչակցվում է «պատումային ռազմավարության» (Narrative Strategy) հղացքին: Անցյալի ներկայացումը դառնում է ոչ միայն ու ոչ այնքան արժեքների, ավանդույթների և մշակույթի յուրացման մեխանիզմ, որքան հավաքական հիշողության մեջ իշխող գաղափարախոսությունների արմատավորում՝ անցյալի ցանկալի դրվագների ու մեկնաբանությունների արդիականացմամբ: Արդյունքում պատմությունը վերածվում է «առասպելական» կամ «կեղծ-գիտական» ոճի տեքստերի ստեղծմանը ծառայող քաղաքական-մշակութային նշանների ամբողջության: Պատմության առասպելականացումը, այսու, ի հայտ է գալիս հետազոտողի քաղաքական (գաղափարախոսական) ըմբռնումների առանձնահատկություններն արտացոլող տարրերի ընտրության, ամրագրման և կիրառման ռազմավարությամբ: Իսկ իրադարձության ներկայացումը կամ գնահատում-մեկնաբանումը կատարվում է գաղափարախոսական կողմնորոշվածության հիմքի վրա. իրականությունը վերադասավորվում է ըստ նախապես մշակված հարացույցի: Նպատակն է՝ ոչ այնքան իրականության հնարավորինս ճշգրիտ փոխանցումը, որքան պատմական փաստերն ու իրադարձություններն ըստ պատումային կառույցի այնպես ռճաբանելը, որ առասպելական ու կեղծ ներկայացումների միահյուսումից իրականության պատրանք ստեղծվի: Ուստի հիշումի և մոռացումի նկատմամբ վերակողության հաստատումը, դրանցում վարպետանալը դասակարգերի (դասերի), խմբերի և անհատների մշտական մտահոգությունն է, որոնք «տիրապետող էին կամ դեռ տիրապետում են պատմական հանրույթներում»<sup>33</sup>:

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

## 2. Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունն անցկացրել ենք Խորհրդային Հայաստանում ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Հ. Ա. Ավետիսյանի խմբագրությամբ հրատարակված՝ «Հայ ժողովրդի պատմություն 9-10» վերջին<sup>34</sup> և Հայաստանի Հանրապետությունում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանի<sup>35</sup> խմբագրությամբ

ՎՎ համահայկական հանդես

33 Goff J. Le, History and Memory, New York: Columbia University Press, 1992, p. 54.

34 Տե՛ս Ավետիսյան Հ. Ա. (խմբ.), Հայ ժողովրդի պատմություն (1900-1987 թթ.) /դասագիրք միջնակարգ դպրոցի 9-10-րդ դասարանների համար, 3-րդ հրատարակություն, Եր., «Լույս», 1987:

35 Վլադիմիր Բախչի Բարխուդարյան (1927-2017) - խորհրդային պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր (1968), պրոֆեսոր (1973), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1994, թղթակից անդամ՝ 1986 թվականից): Հեղինակ է բազմաթիվ հոդվածների և մենագրությունների: Աշխատությունները վերաբերում են Հայաստանում ֆեոդալական (ավատատիրական) հողատիրությանը, հայկական գաղթավայրերի պատմությանը, հայ խորհրդային պատմագրությանը, հայ-ռուսական հարաբերություններին, 1905-1907-ի թթ. հեղափոխական շարժումներին: Հայտնի են հետևյալ մենագրությունները՝ «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն» (հատ. 1-2, 1967-85), «Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության» (2006), «Պատմագիտության հարցեր» (2008), «Միակվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես-XX դարի սկիզբ)» (2010), «Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության (X-XIV դդ.)» (2016), «Ռուսաստանի հայ գաղթաջանների պատմություն»

հրատարակված՝ «Հայոց պատմություն 7-8»<sup>36</sup> առաջին դասագրքերի հիման վրա: Ընդ որում՝ դասագրքերում տեղ գտած որոշ դրույթների, հասկացությունների, գաղափարախոսական նշանակություն ունեցող ձևակերպումների վերլուծությունն ավելի ընդգրկուն դարձնելու համար երբեմն զուգահեռներ ենք անցկացրել ինչպես Խորհրդային Հայաստանի ավելի վաղ ժամանակներում հրատարակված դասագրքերի<sup>37</sup>, այդպես և Հայաստանի Հանրապետությունում հրատարակված «Հայոց պատմություն» դասագրքերի այլ հրատարակությունների հետ ևս<sup>38</sup>: Հետազոտությունը խորհրդային ժամանակների վերջին և անկախ Հայաստանի առաջին դասագրքերի հիման վրա կատարելու ռազմավարությունը պայմանավորված է անցումային փոխակերպությունը ներկայացնելու ցանկությամբ, որն ավելի ըմբռնելի դարձնելու համար հարկ էր նաև ապահովել հետազոտության որոշակի տևականություն (տվյալ դեպքում՝ այլ ժամանակներում հրատարակված դասագրքերի հետ զուգահեռներ անցկացնել, որոնց ընթացքում հետամուտ ենք եղել կոնկրետ հետազոտության նպատակին): Արդյունքների միջև տարբերություններն ու նմանությունները վեր հանելու նպատակով կոնկրետ հիմնախնդիրների վերաբերյալ գնահատականները, ընդհանրացումները կամ դատողությունները բերել ենք զուգահեռաբար՝ աղյուսակների տեսքով, որպեսզի տեքստը չծանրաբեռնենք մեջբերումներով:

Հիմնականում իբրև հետազոտության թեմա ենք ընտրել Խորհրդային Հայաստանի դասագրքից պատմ. գիտ. դոկտոր Շ. Ռ. Հարությունյանի<sup>39</sup> գրչին պատկանող հատվածները («Իրադրությունը Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո» գլխի (Գլուխ VII) «Գերմանաթուրքական ինտերվենցիան Անդրկովկասում: Հայ ժողովրդի պայքարը թուրքական զավթիչների դեմ» ենթավերնագրի նյութը, ամբողջ VIII գլուխը՝ «Հայաստանի բուրժուական հանրապետությունը», IX գլուխը՝ «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», X գլուխը՝ «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կազմավորումն ու ամրապնդումը») և հետխորհրդային Հայաստանի առաջին դասագրքից պատմ. գիտ. դոկտոր Հ. Ա. Ավետիսյանի<sup>40</sup> գրչին պատկանող հատվածները (18-րդ գլխի «3-ը՝ Թուր-

(համահեղինակ՝ Հովհ. Ալեքսանյան): Նրա նախաձեռնությամբ ու խմբագրությամբ ստեղծվել են հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված մի շարք հոդվածների ժողովածուներ՝ «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», «Հայ ազատագրական շարժումները և հայկական գաղթավայրերը 16-18-րդ դարերում» (1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» (1996): Խմբագրել և մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» դպրոցական դասագրքերի ստեղծմանը:

36 **Քարխուդարյան Վ. Բ. (խմբ.)**, Հայոց պատմություն, Դասագիրք հանրակրթական դպրոցի 7-8-րդ դասարանների համար, Եր., «Լույս», 1994:

37 Տե՛ս **Հակոբյան Ա. Մ., Մնացականյան Ա. Ն. (խմբ.)**, Հայ ժողովրդի պատմություն, Երրորդ մաս, Չեռնարկ միջնակարգ դպրոցի համար, Եր., «Հայպետսմանկհրատ», 1958:

38 Տե՛ս **Քարխուդարյան Վ. Բ. (խմբ.)**, Հայոց պատմություն: Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք, Եր., «Լույս», 2000. **Մելքոնյան Ա. Ա. (խմբ.)**, Հայոց պատմություն: Նորագույն շրջան: 1918 թվականից մինչև մեր օրերը: 12-րդ դասարան: Հումանիտար հոսք, Եր., «Զանգակ-97», 2011:

39 **Ճավվոն Ռուբենի Հարությունյան (1913-1993)** - խորհրդահայ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր (1965), պրոֆեսոր (1965): Հեղինակ է մի շարք մենագրությունների, հիմնականում պատմագիտության հարցերին նվիրված՝ «Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն. 1801-1917» (1955), «Սովետական Հայաստանը 40 տարում: Տարեգրություն» (1960), «Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920-1965» (1967), «Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում 1964-1988» (1990): Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» ինչպես բուհական, այդպես և դպրոցական դասագրքերի ստեղծմանը:

40 **Հրանտ Ալեքսանի Ավետիսյան (1927-2004)** - խորհրդահայ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր (1967), պրոֆեսոր (1991), ակադեմիկոս (1996, թղթ. անդ. 1986): Հեղինակ է մի շարք մենագրությունների, հիմնականում նվիրված Հայոց պատմության նոր և նորագույն շրջաններին: Դրանցից են՝ «Պրոլե-

քերի ներխուժումը Անդրկովկաս և Արևելյան Հայաստանը») և պատմ. գիտ. դոկտոր Վ. Ն. Ղազախեցյանի<sup>41</sup> գրչին պատկանող հատվածները (19-րդ գլուխ՝ «Հայաստանի Հանրապետության ստեղծումը: Նրա ներքին դրույթունը», 20-րդ գլուխ՝ «[Հայաստանի Հանրապետության] Արտաքին դրույթունը», 21-րդ գլխի՝ «Խորհրդային իշխանության հաստատումն ու ամրապնդումը» «1-ի «Քաղաքացիական կռիվները» ենթավերնագիրը):

Նկատենք նաև, որ մեր հետազոտության հիմնախնդրից դուրս ենք թողել աշակերտների համոզմունքների և վերաբերմունքների (կեցվածքների) կամ ազգային ինքնության և պատմական հիշողության ձևավորման վրա Հայոց պատմության դասագրքի թողած ազդեցության վերլուծությունը, քանի որ թե՛ ազգային ինքնության, թե՛ ազգային պատմության ընկալումն աշակերտների մոտ ձևավորվում է զուգահեռ կամ հարակից բազմաթիվ այլ գործոնների ազդեցությամբ ևս (զանգվածային տեղեկատվամիջոցներ, համացանց, ֆիլմեր, թանգարաններ, գրույցներ և այլն):

### 3. Կառուցվածքային համեմատական վերլուծություն

Հիշողությունը, ինչպես և պատմագիտությունը, տիրապետում է մի շարք տարանջատ իրադարձություններ տարբեր դասավորություններով պատումների վերածելու ունակությանը: Ըստ այդմ՝ միննույն իրադարձությունը կարող է ձեռք բերել տարբեր նշանակություններ՝ կախված այն բանից, թե ինչ սյուժետային կառույցի մեջ է այն ներառվել: Այս կառուցման գործընթացում կարելի է առանձնացնել որոշակի տրամաբանական հաջորդականություն: Կախված օրվա իրավիճակից՝ **ընտրվում է ժամանակավոր հեռանկար:** Խումբը կարող է տեսնել ավելի կամ պակաս հեռավոր անցյալը: Իրադարձությունը կարող է ընկնել այս կամ այն պատումի մեջ կամ էլ, ընդհակառակը, կարող է բացառվել: Այդու՝ իրադարձությունը նոր մեկնաբանությամբ ձեռք է բերում նոր նշանակություն: Սոցիալական հանրույթը պատմության մեջ առանձնացնում է խմբի ինքնանույնականացման համար սկզբունքորեն կարևոր պատմական իրադարձությունները կամ շրջափուլերը:

Պատմական անցյալի հեռավորության աստիճանի փոփոխությունը, ինչպես նաև մի համալիրից մեկ այլ համալիր անցումը կարող է նշանակել և այդ ինքնության, քաղաքական կողմնորոշման փոփոխությունը: Այդուհետ «հուշամարզական (մենմոնիկական) տարածության» ընտրված կետերի միջև **սահմանվում է հաջորդականության (ժառանգորդության) գիծը:** Հարկ է ցույց տալ և ապացուցել, որ «այդ ամենը մեր պատմությունն է», «մեր հավաքական կենսագրությունն է»: Դրա համար պահանջվում է կազ-

տարական ինտերնացիոնալիզմի նշանի ներքո» (1982), «Մեծ Հոկտեմբերը և հեղափոխական Հունգարիան» (1989), «Բրեստ-Լիտվսկ» (1993), «Հայկական Հարցը 1918 թվականին» (1997), «Հայոց ազգային միասնության հաղթանակը: 1918 թվականի մայիս» (1998) և «Ռուսական կայսրության հայ գեներալները» (2007): Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» ինչպես բուհական, այդպես և դպրոցական դասագրքերի ստեղծմանը:

41 **Վլադիմիր Նահապետի Ղազախեցյան (1926-)** - խորհրդահայ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր (1977), պրոֆեսոր (1982): Հեղինակ է մի շարք հոդվածների և մենագրությունների, որոնք հիմնականում վերաբերում են Խորհրդային Հայաստանի գյուղացիության պատմությանը, Հայրենական պատերազմին (1941-1945) հայ ժողովրդի մասնակցության և Հայաստանի Հանրապետության (1918-1920) պատմության հիմնախնդիրներին: Մենագրություններից հայտնի են՝ «Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը» (1965), «Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ.» (1975), «Նժդեհը Զանգեզուրում. 1920 թ. վերջ-1921 թ. հուլիս» (2001), «Հայ պարտիզանները» (2004), «1937-ը Հայաստանում» (2005) և «Հայաստանը 1920-1940 թթ.» (2006):

մակերպել պատմական անընդհատականության կերպը, «յուրայինների» անքակտելի կապը և միաժամանակ հստակորեն ցույց տալ խզման գծերը, «ուրիշից» «սեփականը» տարբերող ընդհատականությունը: Իրադարձությունների կապակցման խնդրի լուծումը պահանջում է փոխկապակցության տեսակի ընտրության հետ կապված հիմնախնդրի լուծում: Այսու՝ կարևոր է, թե ինչ պատումի և ինչ հարցադրումի մեջ է ներառվում այս կամ այն պատմական սյուժեն:

Առաջին բանը, որ աչքի է զարնում, **երկու գրքերում էլ նույն պատումների առկայությունն է**. թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային դասագրքերում Առաջին Հանրապետության վերաբերյալ սյուժեի առանցքային թեմաները գրեթե նույնն են (տե՛ս Աղյուսակ 1): Տարբերությունը դրսևորվում է հիմնականում մեկնաբանությունների մեջ: Վերնագրերի նմանությունները ևս շատ են: Դրանք հատկանշվում են մասնավորապես ոչ-հիմնախնդրային ուղղվածությամբ: Դասագրքերի ընդհանրությունները, թերևս, մեծավ մասամբ պայմանավորված են նրանով, որ երկու գրքերի հեղինակներն էլ խորհրդային պատմաբաններ են: Բայց և կարելի է ենթադրել, որ հետխորհրդային հեղինակները, թեկուզ խորհրդային իրենց անցյալով, այդուամենայնիվ պատմության դասագիրքը գրել են մեկ այլ հեռանկարից, տվյալ դեպքում՝ անկախ Հայաստանի: Ուստի **նրանց գրածը կարծես պատասխան գրություն է՝ ուշխորհրդային դասագրքին**, մի բան, որում ընթերցողը կարող է համոզվել ինչպես դասագրքի կառուցվածքի (Աղյուսակ 1), այնպես և հիմնական նյութերի բաղդատմամբ (Աղյուսակներ 2-7): Մանրամասնությունների մեջ չմտնելով՝ ստորև դիտարկենք երկու առանցքային հիմնախնդիրների՝ «Մայիսյան ապստամբության» և «Քեմալա-բոլշևիկյան հարաբերությունների» արծարծմանը երկու դասագրքերում:

«Մայիսյան ապստամբությունը» խորհրդային դասագրքում առանձին գլխով է ներկայացված, որով շեշտվում է երևույթի կարևորությունը: Այնինչ հետխորհրդային դասագրքում այն ներկայացված է առանձին՝ «Ներքին դրությունը» բաժնում: Ակնհայտ է, որ նման տեղաբաշխմամբ-առանձնացմամբ խորհրդային դասագրքի հեղինակը (հեղինակները) փորձել է այն դիտարկել Առաջին Հանրապետության ներքին խնդիրներից դուրս. մի կողմից՝ բարձրացնելով դրա կարևոր դերակատարումը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ճանապարհին, մյուս կողմից՝ «ճածկելով», «քողարկելով» Առաջին Հանրապետության ներքին կյանքում խաղացած բացասական դերակատարումը: Այնինչ հետխորհրդային դասագրքում ճիշտ հակառակն է՝ զետեղելով այն «Ներքին դրությունը» բաժնում՝ վեր է հանվում երևույթի ոչ թե դրական կողմը (թեկուզ խորհրդայինացման ճանապարհին), այլ բացասական կողմն ու հետևանքները, մի բան, որն արտահայտված է նաև ձևակերպումներում (ավելի մանրամասն տե՛ս Աղյուսակ 5):

Նույնը կարող ենք ասել նաև քեմալա-բոլշևիկյան համագործակցության հիմնախնդրի դեպքում. խորհրդային դասագրքում այն ուղղակի բացակայում է (ինչպես վերնագրային, այդպես և բովանդակային): Ավելին, Թուրքիան հիմնականում ներկայացված է բացասական ձևակերպումների համատեքստում և կարծես Ռուսաստանի հետ ոչ մի համագործակցություն էլ չի եղել: Դրան հակառակ՝ հետխորհրդային դասագրքում արդեն թեմային

հատկացվում է առանձին ենթագլուխ՝ «Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում», որտեղ վեր են հանված բոլոր այն հիմնախնդիրները, որոնք խորհրդային դասագրքում շրջանցվել էին:

Ընդհանրացնենք. ակնհայտ է, որ քաղաքական առասպելները կառավարվում և ներկայացվում են ոչ միայն առանձին փաստերով կամ փաստարկներով կամ մի շարք հռետորական ենթատեքստերով, այլև վերնագրային և ենթավերնագրային կառույցներով: Ուստի պատահական չէ, որ թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային դասագրքերն իրենց վերնագրերով ու ենթավերնագրերով հիմնախնդրային կողմնորոշում չունեն, բայց կառուցված են այնպես, որ առաջինի դեպքում որոշ իրադարձություններ ծածկվում, քողարկվում են, երկրորդի դեպքում վեր են հանվում հենց այդ ծածկված, քողարկված իրադարձությունները:

#### 4. «Հիշողության տարածքն» իբրև պատումային ռազմավարություն

**Պատումը մարդու վարքի հիմնային ռազմավարություն է, որն ուղղված է ժամանակին և փոփոխությանը հարմարվելուն, ռազմավարություն, որը չի գիշում իրականության երևույթների գիտական մեկնությանը:** Իսկ պատումային ռազմավարության ծիրում ուրիշի «երևակայումն»՝ իբրև «սեփականի» և «ձշմարիտի» հակաթեզ, ցանկացած դիմակայության ծագման կենտրոնական պահերից մեկն է: Ուստի «երևակայական հանրություն» նախ և առաջ կազմավորվում է «հերոսական պատումի» (heroic narratives) կամ «հարացուցային պատումի» (paradigmatic narratives) համատեքստում, որտեղ **հերոսական պատումը** պահանջում է հեղափոխական փոփոխության պատճառ և այդ հեղափոխական փոփոխության մեջ վճռական անհատների դեր<sup>42</sup>: Մինչդեռ **հարացուցային պատումները** «հերոսական և անսովոր կատարման պատմություններ չեն, այլ հաջողության, որը հասանելի է սովորական ընդունակություններով և համառությամբ և անսովոր ձախորդության բացակայությամբ»<sup>43</sup>: Հարացուցային պատումի ներքո պետք է քննարկել օրինակները, որոնցով հեռանկարում ընթերցողը կտպավորվի և օրինակ կվերցնի: Այս երկու հղացքները հույժ կարևոր են սեփական հանրության շրջանակներում ինչպես նոր անդամներ ներառելու և հաստատութենականացնելու, այդպես էլ մերժելու և բացառելու համար:

Խորհրդային դասագրքի պատմագիտական հղացքի համաձայն՝ պատմությունը երկու հակադիր ուժերի հարաբերությունների պատմություն է: Նպատակն է փոխակերպել ուժերի հարաբերությունների գոյություն ունեցող հավասարակշռությունը հոգուտ կողմերից մեկի, տվյալ դեպքում՝ կոմունիստների. «Պատմությունը վերածվում է պայքարի մասին գիտելիքի, այն շրջվում և գործում է պայքարի ոլորտում. այսու՝ քաղաքական պայքարն ու պատմական գիտելիքը լծորդված են միմյանց»<sup>44</sup>: Ուստի պատմությունը

42 Sten Linde Ch., Working the Past: Narrative and Institutional Memory, Oxford University Press, USA, 2008, էջ 83:

43 Linde Ch., op. cit., p. 141.

44 Фукко М. Нужно защищать общество: Курс лекций, прочитанных в Коллеж де Франс в 1975—1976 учебном году, СПб, «Наука», 2005, с. 186.

խորհրդային դասագրքի հեղինակների համար ոչ թե այդ հակադիր ուժերի հարաբերությունները վերլուծելու, այլ դրանց փոխակերպման հարթակ է: Ընդ որում՝ կարևոր նշանակություն ունեն անունները, քանի որ «[Ա]ռապելաբանական տեքստի առանձնահատկությունն այն է, որ առասպելներն առանց անունների գոյություն չունեն»<sup>45</sup>: Միևնույն ժամանակ ոչ պակաս կարևոր է հերոսականի թեմայի հատկեցումը:

Նշված միտումներն առանցքային նշանակություն ունեն, օրինակ, Մայիսյան հերոսամարտերի համատեքստում: Որպեսզի հնարավոր լինի ցանկալի դերակատարում վերագրել Մայիսյան հերոսամարտերին, խորհրդային դասագրքում փորձում են ավելի ակտիվացնել «ժողովրդի» դերակատարումը, ընդ որում՝ թուլացնելով կամ շրջանցելով անհատի դերը, թողնելով սոսկ հավաքական հերոսականը: Այսպես՝ «Մայիսյան հերոսամարտերի» վերաբերյալ հատվածում բազմիցս շեշտվում է «երկրամասի աշխատավորների», «Անդրկովկասի աշխատավորների», «խիզախ աշխարհագորայինների» (էջ 65), «հասարակության բոլոր խավերի» ( էջ 65), «հայ ժողովրդի զավակների» (էջ 66), բայց և «կարմիրզարդիական ջոկատների» (էջ 65) դերակատարումը (ավելի մանրամասն տես Աղյուսակ 5): Ակնհայտ է, որ «կարմիրզարդիական ջոկատների» ընդգծմամբ դասագրքի հեղինակները փորձում են շեշտել Մայիսյան հերոսամարտերին բոլշևիկների մասնակցությունը: Դրա հետևանքով՝ Մայիսյան հերոսամարտերի և ոչ մի հերոսի հիշատակում: Անգամ դասի վերջում՝ «Վավերագրական նյութեր»-ում գետեղված «Երևանի զորայնքի հրամանատարի կոչից՝ Սարգարապատի մոտ թուրքական զավթիչներին դիմադրություն ցույց տալու մասին» նյութի մեջ չի նշվում հեղինակի՝ Մովսես Սիլիկյանի անունը: Ոչ մի հիշատակություն Սարգարապատի, Բաշ-Ապարանի կամ Դարաքիլիսայի ճակատամարտերում Արամի, Փիրումյանի, Դրոյի, Նժդեհի և այլոց ներդրման մասին: Միայն հաջորդ դասում է, որ կհիշատակվի Հովհաննես Քաջազնունին՝ Առաջին Հանրապետության առաջին վարչապետը, այն էլ դաշնակցականներին քննադատելու համար (խոսքը 1918 թ. օգոստոսի 1-ին բացված Հայաստանի խորհրդի՝ պառլամենտի մասին է, որը հետագայում իր «Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս»<sup>46</sup> վերնագրով զեկուցման մեջ քննադատում է Քաջազնունին, և որի համապատասխան հատվածը մեջբերված է դասագրքում, էջ 70): Այսու՝ պատումն այնպես է կազմակերպված, որ հաղթանակի մեջ գրոյացվի դաշնակցականների ներդրումը, իսկ «երկրամասի աշխատավորներ», «Անդրկովկասի աշխատավորներ», «խիզախ աշխարհագորայիններ», «հասարակության բոլոր խավեր», «հայ ժողովրդի զավակներ» արտահայտություններն աննկատ կերպով ամբողջանում են «կարմիրզարդիական ջոկատների» մեջ, քանի որ **վերջինս միակն է, որ արտահայտում է կազմակերպվածություն՝ ի հակադրություն մյուսների տարերայնության**: Այդ տպավորությունն ավելի ամրագրելու համար խորհրդային դասագրքում հատուկ շեշտվում է ճակատամարտի վայրի՝ Սարգարապատ գյուղի մասին լրացուցիչ տեղեկատվությունը, համաձայն

45 **Топоров В.Н.**, Имена, в книге: **Токарев С. А. (глав. Ред.)**, Мифы народов мира. Энциклопедия. В 2 томах. 2-е изд., Т.1, М.: Советская Энциклопедия 1987, с. 508.

46 **Քաջազնունի Հ.**, Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923:



որի՝ այն «Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր գյուղն» է (էջ 65): Փոքրիկ այս հավելումով խորհրդային պատմաբանը հուշում է, որ Սարդարապատի վերանվանումը Հոկտեմբերի (1935)<sup>47</sup> պատահական չէ և մասն է կազմում խորհրդային գաղափարախոսական քաղաքականության: Սրանում կարող ենք համոզվել՝ նաև արդեն հետխորհրդային ժամանակաշրջանում գյուղի՝ կրկին Սարդարապատ վերանվանվելը (2009) նկատի ունենալով, որը հակառակ մեկնաբանությամբ փաստում է նույն գործողությունը: **Փաստերի միտումնավոր վերադասավորմամբ խորհրդային դասագրքում «հիշողության տարածք» կերպափոխվում է «մոռացման տարածքի»:** Մոռացում, որը կազմակերպվում է արդեն ձևավորված հիշողությունների միջոցով, քանի որ «հիշողությունների նոր համակազմը հաճախ ուղեկցվում է լռելյայն ընդունված լռությունների համակազմով»<sup>48</sup>:

Դրան հակառակ՝ հետխորհրդային առաջին դասագրքում Մայիսյան հերոսամարտերը բավականին մանրամասն են ներկայացված, ընդ որում՝ դերակատարներն արդեն միայն «ժողովուրդը», «աշխարհագորը», «աշխատավորները» և «հասարակության բոլոր խավերը» չեն, այլև անհատները: Այսպես, համապատասխան՝ «Թուրքերի ներխուժումը Անդրկովկաս և Արևելյան Հայաստանը» բաժնում այդ հերոսներն են Թ. Նազարբեկյանը (էջ 227), Մ. Միլիկյանը, Դ. Կանայանը (Դրո), գնդապետ Բաղդասարյանը, Դանիել Բեկ-Փիրումյանը (էջ 228), Ա. Մանուկյանը, Կ. Հասան-Փաշայանը (էջ 229), Բեյ Մամիկոնյանը, Ն. Ղորղանյանը, Գ. Նժդեհը, Գ. Տեր-Մովսիսյանը (էջ 230): Միննույն ժամանակ շեշտվում է, որ «Այդ օրերին տիրում էր ազգային կատարյալ միասնություն: Անկախ քաղաքական համոզմունքներից՝ ժողովուրդը ոտքի էր ելել կենաց ու մահվան մարտի, հանուն հայրենիքի, հանուն գոյատևման ու ազգային արժանապատվության» (էջ 228-229): Իսկ արդեն իբրև ընդհանրացում՝ նշվում է, որ «Հայրենիքի պաշտպանությունը համաժողովրդական գործ էր, այն կուսակցական պատկանելություն և սոցիալական շերտավորում չէր ձանաչում: Դա հայերի հայրենական պատերազմն էր» (էջ 229): Այսու՝ հստակորեն դրսևորվում է առկա տարբերությունը. խորհրդայինի դեպքում՝ «Դա իսկական ժողովրդական պատերազմ էր», հետխորհրդայինի դեպքում՝ «Դա հայերի հայրենական պատերազմն էր»: **Այլորեն ասած՝ «հայրենական պատերազմը» հակադրվում է «ժողովրդական պատերազմին»:**

Խորհրդային դասագրքի «պատումային ռազմավարության» մեջ պատումի հաջորդ ուշագրավ վերակազմակերպումն է արվում Մայիսյան հերոսամարտերը հակադրելով Բաթումի պայմանագրին: Այսու՝ շեշտադրումը կտրուկ տեղափոխվում է «հակասովետականության» համատեքստ. «Բաթումի պայմանագիրն ուներ բացահայտ հակասովետական բնույթ: Այն առաջին հերթին ուղղված էր Բաքվի կոմունայի դեմ: Դաշնակցականները համաձայնվեցին, որ թուրքական զորքերը Հայաստանի վրայով անցնեն Ադրբեջան՝ Բաքվի կոմունայի վրա հարձակվելու համար, ինչպես նաև Բաքվից դուրս բերելու հայկական ազգային զորամասերը, որոնք կռվում էին

47 Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ. (Խմբ.), Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 3, Եր., Երևանի համալս. հրատ., 1991, էջ 429:  
48 Connerton P., Seven types of Forgetting, Memory Studies, 2008, p. 63.

թուրքերի և անգլիացիների դեմ» (էջ 67): Երկու առանցքային իրադարձությունների (Մայիսյան հերոսամարտեր և Բաթումի պայմանագիր) հակադրմամբ խորհրդային դասագրքի հեղինակը հասնում է ցանկալի հեռանկարի կազմակերպմանը, այն է՝ հնարավոր է լինում Մայիսյան հերոսամարտերը ներկայացնել իբրև Ժողովրդի հաղթանակ, որը «զգալի օգնություն էր նաև Բաքվի կոմունային», մինչդեռ Բաթումի պայմանագիրը՝ իբրև դաշնակցականների «բացահայտ հակասովետական» բնույթի պայմանագիր, «առաջին հերթին ուղղված էր Բաքվի կոմունայի դեմ» (ավելի մանրամասն տես Աղյուսակ 2 և 3):

Իսկ հետխորհրդային դասագրքում թեմայի ավելի մանրամասն դիտարկմամբ փորձ է արվում լուսաբանել Բաթումի պայմանագրի «խիստ ծանր պայմանների» պատճառները (էջ 232): Որպեսզի խորհրդային դասագրքի մեղադրանքը ի չիք դարձվի, հետխորհրդային դասագրքում, ընդունելով, որ «Թուրքիային իրավունք էր վերապահվում Հայաստանի վրայով գործ տեղափոխել Ադրբեջան», հավելում են նաև լրացուցիչ տեղեկատվություն, որը բացակայում է խորհրդային դասագրքում: Այն է՝ տեղեկատվություն Բաքվի Ազգային խորհրդի կողմից այդ որոշմանն ընդդիմանալու և ռազմական ուժերը Ստ. Շահումյանի գլխավորությամբ ստեղծված Ժողովրդական կոմիսարների խորհրդի տրամադրության տակ դնելու մասին:

Այս ամենի համատեքստում ուշագրավ է հատկապես այն, որ թեպետ Առաջին Հանրապետության վերաբերյալ դատում այդպես էլ չենք հանդիպում հերոսական որևէ կերպարի, հաջորդ դասերից մեկում՝ «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» թեմայում, հանդիպում ենք խորհրդային հերոսների մի ողջ փառանգի՝ Ս. Կասյան, Ս. Ալավերդյան, Ա. Մռավյան, Դ. Շահվերդյան, Ղ. Ղուկասյան, Ա. Բուդաղյան, Ա. Խանջյան, Ս. Կիրով, Գ. Օրջոնիկիձե, Ա. Միկոյան, Ս. Մուսայելյան, Բ. Ղարիբջանյան, Հ. Սարուխանյան, Ա. Փանյան, Ե. Սևյան, Վ. Ալեքսեն, Բ. Հարությունյան (էջ 74-83), ընդամին՝ դասանյութի վերևում (էջ 75-76 և 78-82) հերթով ներկայացված են այդ հերոսներից Ա. Բուդաղյանի, Ղ. Ղուկասյանի, Ա. Խանջանի, Հ. Սարուխանյանի, Ստ. Ալավերդյանի, Բ. Ղարիբջանյանի, Ս. Մուսայելյանի, Ե. Սևյանի, Ա. Փանյանի, Ս. Կիրովի, Գ. Օրջոնիկիձեի և Ա. Միկոյանի լուսանկարները: Այստեղ նկատենք, որ հետխորհրդային դասագրքում դերակատարների թվաքանակն արդեն պակասեցված է՝ Ս. Մուսայելյան, Ա. Նուրիջանյան (էջ 247), Բ. Ղարիբջանյան, Ե. Սևյան, Ա. Մելքոնյան (էջ 248): Ընդ որում խորհրդային դասագրքում այդ հերոսական պատումն այնպես է ներկայացված, որ այն ձեռք է բերել նաև հարացուցային իմաստ:

Ուշագրավ է, որ խորհրդային դասագրքում Մայիսյան ապստամբության կազմակերպիչների ցուցակից դուրս է մնացել Ավիս Նուրիջանյանի անունը, որը, սակայն, հիշատակվում է մեկ այլ՝ «Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում» հատվածում (էջ 90), ընդ որում՝ արդեն նաև նկարի ուղեկցությամբ (էջ 91): Իսկ հետխորհրդային դասագրքում ուշագրավ մի մեկնաբանությամբ՝ «[Ե]ռանդով աչքի էր ընկնում Ավիս Նուրիջանյանը, նրա և մյուս երիտասարդ հայ բոլշևիկների համար բնորոշ էր խիստ ծայրահեղ գործելակերպը» (էջ 246), Ավիս Նուրիջանյանին վերադարձնում են բուն ապստամբական գործողությունների կիզակետ, որով վեր են հանում

բոլշևիկյան հերոսապատումի քողարկվող կողմերից մեկը: Հետխորհրդային դասագրքի այդ հիշատակումն արդեն իսկ բավական է՝ հասկանալու, թե ինչու խորհրդային դասագրքի համապատասխան հատվածից դուրս է մնացել Նուրիջանյանի անունը, որը նույն սկզբունքով հիշատակված է ավելի հին դասագրքերում (թեպետ չի հիշատակվում կոնկրետ մայիսյան դեպքերի մեջ)<sup>49</sup>:

Այսու՝ հերոսի և հերոսականի թեման հիշողության և մոռացման երկակի գործընթացի համատեքստում հավաքական ինքնությունների ձևավորման ու փոխակերպման անբաժանելի մասն է դառնում: Երկու դասագրքերում էլ ինչպես անհատական հերոսության, այդպես էլ հավաքականի դեպքում մոռացումը, լռությունը և արտամղումը միտված են խորհրդային կարգերի դրական պատկերի ապահովմանը: Այս առումով **երևակայական հանրույթի** ստեղծման ճանապարհին հույժ կարևոր է որոշ «տարբերակիչ հատկանիշներին հատուկ, խորհրդանշային իմաստ տալը, այսինքն՝ սահմանի ակտիվ կառուցումը»<sup>50</sup>: Իսկ այդպիսի «տարբերակիչ հատկանիշի» ապահովումը հնարավոր է հատկապես «թշնամու», «բարեկամի» և անգամ «փրկչի» հղացքների համատեքստում: Իսկ իբրև ներկայացման հիմնական գործիք հանդես են գալիս «քաղաքական առասպելները», որոնք, ինչպես սրբազան առասպելները, պետք է փոխանցվեն և ընկալվեն որպես խրատական պատմություններ<sup>51</sup>: Ընդ որում՝ ավելի հաճախ քաղաքական առասպելը գիտակցության մեջ իրականության և ցանկալիի ձեռնածություն է, պայմանականություն, որով քաղաքական առասպելի «նախագծողը» պատմական փաստերն այնպես է վերադասավորում, որ դրանցով ստեղծվում է անդրգիտակցական մի տարածություն, որտեղ ակտիվանում են կամ դրական, կամ բացասական ազդակները (կախված նպատակից):

Թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային դասագրքերում առանցքային ուշադրության արժանացած թեմաներից է **Մայիս 28-ի խորհուրդը**: Այսպես՝ խորհրդային դասագրքում հայ ժողովրդի «դարավոր երագանքը»՝ «պետականությունն ու ազգային անկախությունը» (էջ 94), իրագործվում է խորհրդային կարգերի հաստատմամբ՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին (կամ՝ դեկտեմբերի 2-ին), իսկ հետխորհրդային դասագրքում՝ 1918 թվականի մայիսի 28-ին և հատկապես Մայիսյան հերոսամարտերի արդյունքում: Ուշագրավ է, որ խորհրդային դասագրքը թեև ընդունում է, որ 1918 թվականի հերոսամարտը «բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար» (էջ 66), բայց այն վերապահմամբ, որ դա իրական անկախությունը չէր, քանի որ «դրանով միայն հաստատվեց բուրժուազգայնական դաշնակցության դիկտատուրան, որը փաստորեն ղեկավարվում էր օտարերկրյա իմպերիալիստների կամքով» (էջ 70): Բանն այն է, որ «օտարերկրյա զավթիչները», առաջնորդվելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, առաջ են քաշում

49 Տե՛ս **Հակոբյան Ա. Մ., Մնացականյան Ա. Ն. (խմբ.)**, Հայ ժողովրդի պատմություն, Երրորդ մաս, Ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար, Եր., «Հայպետուսմանկիրատ», 1958, էջ 23: Այստեղ ուշագրավ է, որ Մայիսյան ապստամբների նկարներից նշված են Ս. Ալավերդյանինը, Գ. Դուկայանինը, Հ. Սարուխանյանինը, Ե. Սևյանինը, Բ. Գարիբջանյանինը, Ս. Մուսայելյանինը, ընդ որում՝ անուն-ազգանունները՝ ամբողջությամբ (էջ 25-27):

50 **Barth F.**, Enduring and Emerging Issues in the Analysis of Ethnicity, in: **Vermeulen H., Govers C. (eds.)**, The Anthropology of Ethnicity. Beyond 'Ethnic Groups and Boundaries', Amsterdam: Het Spinhuis, 1994, p. 14.

51 Տե՛ս **Eliade M.**, Patterns in Comparative Religion, London: Sheed and Ward, 1958, էջ 430:

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿԸ համահայկական հանդես

«Անդրկովկասում երեք «անկախ» հանրապետություններ կազմակերպելու հարցը» (էջ 70): Չակերտներ, որոնցով մի կողմից՝ փորձ է արվում ցույց տալ, թե իբր՝ հռչակված հանրապետությունների անկախությունն իրականում կեղծիք էր, մյուս կողմից՝ Անդրկովկասյան երեք առանձին հանրապետություններ ստեղծելը սխալ դիրքորոշում էր: Ընդ որում՝ ուշագրավն այստեղ այն է, որ երկու դասագրքերն էլ շեշտում են, որ Հայաստանի Հանրապետությունն իր անկախությունը հռչակել է 1918 թ. մայիսի 28-ին, մի բան, որը չի համապատասխանում իրականությանը. **մայիսի 28-ին սկզբունքային որոշում է ընդունվել և պատվիրակություն ուղարկվել Բաթում**<sup>52</sup>: Իսկ Ազգային խորհրդի ծանուցումը մամուլում հրապարակվել է միայն մայիսի 30-ին, ընդ որում՝ այդ փաստաթղթի մեջ խոսք անգամ չկար անկախության մասին<sup>53</sup>: Առաջին հայացքից խիստ տարօրինակ է, թե ինչո՞ւ է խորհրդային դասագրքում ամրագրվում մայիսի 28-ը, այն դեպքում, երբ շատ հարմար առիթ էր քննադատելու դաշնակցականների նման հապաղումը: Բայց իրավիճակը մեկնաբանվում է համապատասխան հատվածի ներկայացման ռազմավարության վերհանմամբ: Այսպես՝ խորհրդային հեղինակների համար Առաջին Հանրապետության հռչակումն, ըստ էության, շարունակությունն էր Անդրկովկասի անկախ հանրապետության, երբ այն պաշտոնապես անջատվեց «Սովետական Ռուսաստանից» (էջ 65): **Եվ որպեսզի կարողանան Առաջին Հանրապետությունն իբրև անկախ պետություն չդիտարկել, հարկավոր էր միմյանցից տարանջատել Մայիսյան հերոսամարտերն ու Առաջին Հանրապետության հռչակումը, որտեղ Մայիսյան հերոսամարտերը, ինչպես վերն ասացինք, բացառապես վերագրվում են ժողովրդին: Ուստի իրական անկախությունն, ըստ խորհրդային դասագրքի, հաստատվեց խորհրդային կարգերի հաստատմամբ միայն:**

Խորհրդային դասագրքում բացասական գույներով են ներկայացվում նաև ՀՀ կառավարության կողմից կնքված բոլոր պայմանագրերը՝ սկսած Բաթումի պայմանագրից, վերջացրած Սևրի պայմանագրով. օր.՝ «Բաթումի պայմանագիրն ուներ բացահայտ հակասովետական բնույթ: Այն առաջին հերթին ուղղված էր Բաքվի կոմունայի դեմ» (էջ 67) կամ «Մնալով թղթի վրա, Սևրի պայմանագիրը նոր աղետներ բերեց հայ ժողովրդին» (էջ 72): Հետխորհրդային դասագրքում, ընդհակառակը, խորհրդային կարգերի հաստատումն, ըստ էության, մենիշխանության հաստատում էր (էջ 278): Եվ իբրև դրա վկայություն՝ մանրամասն ներկայացվում է 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը:

Այս ամենով, թերևս, ուրվագծվում է քաղաքական սահմանագիծը, որի մի կողմում գտնվում են թշնամիները, մյուսում՝ բարեկամները: Ընդ որում՝ խորհրդային դասագիրքն առանձնանում է նրանով, որ տարբերակող սահ-

52 Տե՛ս **Բաբայան Ա.**, Հայաստանի անկախության պատմությունը և այլ յիշատակներ, Գեղեղեղ, «Նավասարդ», 1997, էջ 22:

53 Զարմանալիորեն Ազգային խորհրդի ծանուցումն իբրև դիվանագիտական մոտեցմամբ ձևակերպված «Անկախության հռչակագիր» է ներկայացված նաև Հայոց պատմության ակադեմիական բազմահատորյալում: Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայկական անկախ պետականության վերականգնումը, **Բարխուդարյան Վ. և ուրիշ. (Խմբ.)**, Հայոց պատմություն, հատ. 4, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945), Եր., «Զանգակ-97», 2010, էջ 16: Այս հայեցակարգը որդեգրված է նաև 1994 թ. հետո հրատարակված դասագրքերում: Տե՛ս **Գևորգյան, Է.**, Հանրապետության հռչակումը, **Մելքոնյան Ա. (Խմբ.)**, Հայոց պատմություն: Նորագույն շրջան: 1918 թվականից մինչև մեր օրերը: 12-րդ դասարան: Հումանիտար հոսք, Եր., «Զանգակ-97», 2011, էջ 7:

մանագծումն արվում է վերէթնիկական հարթության մեջ՝ հիմնական շեշտադրումները պահելով քաղաքական և սոցիալական սահմանագծերի վրա: Ուստի պատահական չէ, որ նույն Վրաստանն ու Ադրբեջանը մի դեպքում կարող են հայտնվել թշնամական ճամբարում, հաջորդ դեպքում՝ բարեկամական: Այնինչ հետխորհրդային դասագրքում այդ երկու հատկորոշիչներին հավելվում է նաև երրորդը՝ էթնիկ սահմանագծումը, որը գերակայում է մյուսների նկատմամբ:

**«եղբայրության» ուտոպիան ապահովելու համար խորհրդային դասագրքում գերիշխում է «լուծյան» կամ «մոռացման» սինդրոմը:** Ավելի կոնկրետ՝ դասագրքում լուծյան են մատնվում դեպքեր, իրադարձություններ, որոնք կարող են հիշեցնել և ակտիվ պահել հակամարտությունների զգացողությունը, ինչպես հայ-վրացական հարաբերությունները Լոռու առնչությամբ կամ հայ-ադրբեջանական հարաբերությունները Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի առնչությամբ: Միայն մի վերապահումով. հայ-վրացական և հայ-ադրբեջանական հարաբերությունները բացասական երանգով են դիտարկվում այն դեպքում, երբ խոսքը ոչ-խորհրդային ուժերի մասին է (դաշնակցականներ-մենշևիկներ-մուսավաթականներ): Օրինակ՝ «Դաշնակցականները, ինչպես նաև մուսավաթականներն ու մենշևիկները, բազմազգ Անդրկովկասում բորբոքում էին ազգային ատելություն, փոխադարձ թշնամանք: Նրանք անընդհատ կազմակերպում էին եղբայրասպան ընդհարումներ՝ նպատակ ունենալով խափանել աշխատավորների համագործակցությունը, նրանց ուշադրությունը շեղել դասակարգային պայքարից և դրանով իսկ ամրապնդել իրենց իշխանությունը» (էջ 71): Բայց հակառակ տեղեկատվության դեպքում այդ հարաբերությունները պարզապես չեն հիշատակվում և շրջանցվում են, ինչպես՝ ոչ մի խոսք 1918 թվականի հայ-վրացական կարճատև պատերազմի (1918 թ. դեկտեմբերի 7-31), Լոռու և Ախալքալաքի գավառների հարցի (որը լուծվում է 1921 թվականին հետևյալ տարբերակով՝ Լոռու մեծ մասը մնում է Հայաստանին, Ախալքալաքը անցնում է Վրաստանին): Նույն կերպ՝ Ադրբեջանի կողմից Ղարաբաղի նկատմամբ կատարված գործողությունների մասին: Ավելին՝ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման կապակցությամբ ասվում է. «եղբայրական ժողովրդի հաղթանակը մեծ ցնծությամբ ընդունվեց Հայաստանի աշխատավորների կողմից և երկրում առաջ բերեց հեղափոխական նոր վերելք» (էջ 78): Երևույթն ավելի հիմնավորելու համար խորհրդային դասագրքում Փետրվարյան ապստամբության ճնշման գործում հատուկ շեշտվում է 400 աշխատավորներից կազմված «Կարմիր տարբոր» պարտիզանական ջոկատի դերակատարումը, որը ղեկավարում էր «ժողովրդական հերոս Աբաս Կուլի Շադլինսկին» (էջ 97):

Այսպիսով՝ որպեսզի կարողանան կազմակերպել «եղբայրական Ադրբեջանի» և «եղբայրական Վրաստանի» և ընդհանրապես՝ «եղբայրականության» առասպելույթը, խորհրդային պատմաբանները պատմական իրադարձություններն այլ լույսի ներքո են ներկայացնում: Ավելի ստույգ՝ խորհրդային դասագիրքը դիմում է քաղաքական ձեռնածության, որի մեթոդներից մեկը բնակչությամբ մատչելի տեղեկատվության սահմանափակումն է և

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԿՎ համահայկական հանդես

միաչափ գիտակցության ձևավորումը<sup>54</sup>:

Մյուս կողմից՝ **ոչ մի խոսք քեմալարուշևիկյան համագործակցության մասին**: Ընդհակառակը՝ պահը բաց չի թողնվում քողարկելու այդ հարաբերությունները: Իսկ դա կատարվում է բավականին նուրբ ձևով՝ փաստերի այլ կողմերի ակտիվացմամբ: Օրինակ՝ «Դաշնակների կառավարությունը, անկարող լինելով սեփական ուժերով կռվել թշնամու դեմ, դիմեց Անտանտի տերությունների օգնությանը, սակայն վերջիններս, դրժելով իրենց տված խոստումները, հրաժարվեցին որևէ օգնություն ցույց տալուց: Լինելով անհեռատես քաղաքագետներ, դաշնակցականները չէին կարողանում ըմբռնել, որ իմպերիալիստական տերությունները շահագրգռված էին թուրքական ինտերվենցիայով Անդրկովկասում և հայ ժողովրդի ողբերգական ծանր վիճակի համար այդ «քաղաքակիրթ» դաշնակիցները պակաս մեղավոր չէին» (էջ 87): Կարծես ամեն ինչ ասված է. մեղավոր էին դաշնակցական կառավարիչներն ու «քաղաքակիրթ» դաշնակիցները, բայց ոչ մի խոսք 1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում բոլշևիկների և քեմալականների միջև նախաստորագրված «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի մասին<sup>55</sup>: Ի դեպ՝ այդ մասին հիշատակում չկա նաև հետխորհրդային դասագրքում, բայց կա ավելի ուշ դասագրքերում<sup>56</sup>: Նման շրջանցմամբ խորհրդային դասագրքի հեղինակին (Շ. Հարությունյան) հաջողվում է հայ-թուրքական պատերազմի սանձագերծման ողջ մեղքը բարդել դաշնակցականների և Անտանտի երկրների վրա: Ավելին՝ նա պահը բաց չի թողնում ներկայացնելու դաշնակցականների՝ իբր՝ թուրքերի հետ եղբայրացման դրվագը: Նման վարկածն ավելի ամրապնդելու համար հաջորդ դասերից մեկում՝ «Դաշնակցականների փետրվարյան հակահեղափոխությունը և նրա ջախջախումը» ենթաթեմայի շրջանակում նշում է. «Հույս ունենալով անհրաժեշտ օգնություն ստանալ օտարերկրյա իմպերիալիստներից, վրացական մենշևիկներից և նույնիսկ Թուրքիայից, դաշնակցականները, հենվելով երկրի հակահեղափոխական ուժերի վրա, 1921 թ. փետրվարին խռովություն բարձրացրեցին սովետական իշխանության դեմ» (էջ 96): Նախադասություն, որով մի կողմից՝ հիմնավորվում է նախորդ պատումի վարկածը, մյուս կողմից՝ քողարկվում են Փետրվարյան ապստամբության ներքին պատճառները՝ դրանք բարդելով արտաքին ուժերի աջակցության վրա:

Խորհրդային դասագրքում թշնամիների ցուցակը կարելի է ամբողջական տեսքով գտնել Մայիսյան ապստամբության մասին դասի հետևյալ ձևակերպման մեջ. «Ապստամբությունը ճնշելու գործում դաշնակցական կառավարությունը հենվեց երկրի բոլոր հակահեղափոխական կազմակերպությունների, մաուգերիստների, խմբապետների, կուլակների և հոգևորականության վրա» (էջ 82): Բայց ներքին թշնամու նման մանրամասնումը,

54 Տե՛ս **Арнаутгов Н. Б.**, Образ врага народа в системе советской социальной мобилизации: идеолого-пропагандистский аспект (декабрь 1934 – ноябрь 1938 г.), Новосибирск: НГУ, 2012, էջ 203:

55 Տե՛ս **Զոհրաբյան Է. Ա.**, Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը: Քեմալարուշևիկյան մերձեցումը, **Բարխուդարյան Վ. և ուրիշ. (խմբ.)**, Հայոց պատմություն, հատ. 4, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945), Եր., «Զանգակ-97», 2010, էջ 252:

56 Տե՛ս **Խաչատրյան Կ.**, Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության ոլորտում: Քեմալարուշևիկյան համագործակցությունը, **Մելքոնյան Ա. (Խմբ.)**, Հայոց պատմություն: Նորագույն շրջան: 1918 թվականից մինչև մեր օրերը: 12-րդ դասարան: Հումանիտար հոսք, Եր., «Զանգակ-97», 2011, էջ 51:

խորքային առումով, ոչ միայն «վեր էր հանում» ապստամբության ձախողման հիմնապատճառը, այլև հող էր նախապատրաստում հաջորդիվ «ճակատագրական 1937 թվականի» դեպքերի մեկնաբանության համար:

Դրան հակառակ ռազմավարություն է որդեգրել հետխորհրդային դասագիրքը՝ փորձելով «քնակչությանը մատչելի տեղեկատվության սահմանափակման» փոխարեն՝ փաստական կողմի ակտիվացմամբ «ստիպել լսարանին հիշել այն, ինչն իրեն անհայտ էր»<sup>57</sup>: Այստեղ է, որ հետխորհրդային դասագրքի հեղինակները ակտիվացնում են էթնիկական սահմանագծումը, օր.՝ թուրքական հարցում հատուկ շեշտելով, որ «Քենալական շարժումը ուղղված էր Թուրքիայի ազգային փոքրամասնությունների, այդ թվում հայ ժողովրդի դեմ» (էջ 269): Թուրքիայի հետ նույն հարթության մեջ են քննարկվում նաև Ադրբեջանի հետ հարաբերությունները, որտեղ վերջինս «[ձ]գտում էր նվաճել Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը, Շարուրը և այլ հայկական տարածքներ» (էջ 258), ընդ որում՝ «[Մ]ուսավաթական Ադրբեջանի նվաճողական պլանները 1920 թ. փոխանցվեցին Խորհրդային Ադրբեջանին» (էջ 258): Ուշագրավ է Վրաստանի հետ հարաբերությունների ներկայացումը. չնայած Վրաստանի հետ ունեցած խնդիրներին (1918 թ. կարճատև պատերազմը, Ախալքալաքի հարցը և այլն)՝ խորհրդային դասագրքում բավականին զուսպ են ձևակերպումները. «Հայաստանը ձգտում էր Վրաստանի հետ իր ավանդական լավ հարաբերություններն ամրապնդել պաշտպանական դաշինքով՝ ընդդեմ Թուրքիայի: Դժբախտաբար հայկական կողմի այդ ձգտումը ըմբռնում չգտավ Վրաստանի կառավարության կողմից և Հայաստանը փաստորեն մնաց միայնակ՝ թշնամիների դեմ մղվող պայքարում» (էջ 258): Իսկ վիճելի տարածքների խնդիրը հետխորհրդային դասագրքում մի շատ նուրբ անցումով է ներկայացվում՝ «[Ի]նչ վերաբերում է վիճելի տարածքներին, ապա այդ հարցը վերջնականապես լուծվեց 1921 թ.՝ Ախալքալաքի գավառը տրվեց Վրաստանին, իսկ Լոռու գավառը՝ Հայաստանին»: Ուշագրավն այստեղ 1921 թվականի շեշտադրումն է, որով կարծես ակնարկ է արվում խորհրդային իշխանությանը, որն էլ հեղինակն էր հարցի նման լուծման: Միով բանիվ՝ կարծում ենք, որ հետխորհրդային դասագրքում նման դիրքորոշումը շատ բաներով պայմանավորված էր ժամանակի աշխարհաքաղաքական իրավիճակով, և պատահական չէր, որ նույն այդ թեմայի հետ կապված հետխորհրդային դասագրքում շեշտվում էր, որ «[Ա]յդուամենայնիվ Վրաստանի հետ հաստատվել էին լավ հարաբերություններ, որի շնորհիվ Հայաստանը հյուսիսում ձեռք էր բերել ազատ ելումուտի հնարավորություն» (էջ 258): Միննույն ժամանակ երկու դասագրքերում էլ մի ընդհանուր վերաբերմունք կա հարևան երկրների հետ ունեցած հարաբերությունների հարցում. երկուսն էլ լռում են հարևան Պարսկաստանի հետ Առաջին Հանրապետության հարաբերությունների մասին: Մի բան, որը հետագայում հրատարակված գրքերում շտկվում է<sup>58</sup>:

Նկատենք նաև, որ պատմական պատումի ցանկալի կառուցակազմման մեջ իր ուրույն դերն ունի նաև լեզվական օտարումը, որն առնչակցվում է

57 Лотман Ю. М., Семиосфера, С.-Петербург: «Искусство-СПБ», 2010, с. 207.

58 Տես օրինակ՝ Խաչատրյան Կ., Հարաբերությունները հարևան երկրների հետ: Տարածքային հիմնախնդիրներ, Մելքոնյան Ա. (Խմբ.), Հայոց պատմություն: Նորագույն շրջան: 1918 թվականից մինչև մեր օրերը: 12-րդ դասարան: Հունանիտար հոսք, Եր., «Զանգակ-97», էջ 28-29:

քաղաքական լեզվին, քանի որ ըստ այդմ պատումն իր զգացմունքային երանգավորումների շնորհիվ ավելի ազդեցիկ է դառնում, իսկ կրկնասացումների արդյունքում («խմբապետական բանդա», «արյունոտ հաշվեհարդար», «անփառունակ վարչակարգ», «դաշնակ-մաուզերիստ» և այլն) փորձում է ցույց տալ խորհրդային իշխանության «փրկչական» գործառնությունը: Մի բան, որը գրեթե բացակայում է հետխորհրդային դասագրքում, որը բավականին զուսպ է<sup>59</sup>, բայց այստեղ ևս կարելի է մի քանի զգացմունքային արտահայտությունների հանդիպել («ուխտադրուժ», «խաբեցին», «լքեցին» և այլն): Չնայած իր զսպվածությանը՝ կարելի է ասել, որ հետխորհրդային դասագրքում առկա վերոթվարկյալ կարգի բառերի կիրառմամբ հեռանկարում նշմարվում է «գոհի» ինքնության ուրվագիծը:

Այս ամենի համատեքստում իր ուշագրավ մեկնությունն է ստանում «փրկչի» առասպելի պատումային ռազմավարությունը: Բանն այն է, որ ձգնաժամային պահերին հանրույթի (հասարակության) մեջ սպառվում են խորհրդանշական մեկնության մարդկային ընդունակությունները, շնորհիվ որի՝ առասպելը կարող է վերահսկել և կառավարել մարդկանց գիտակցությունը՝ խոչընդոտելով իրականության համարժեք մեկնությանը<sup>60</sup>: Այսու՝ ակտիվանում են գիտակցության արթնտիպային կառույցները, որով նոր թափ են ստանում առասպելաստեղծման տրամադրությունները: Ուստի «փրկչի» կերպարը լիովին կազմակերպելու համար հարկ էր թե՛ անցյալի, թե՛ հատկապես գործող կառավարության «դեմոնացումը» կամ էլ նախընտրելի տարբերակի վեհացումը:

Այս դեպքում ուշագրավ է, որ թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային դասագրքերը միակարծիք են. «փրկչի» դերակատարը «ազատարար» Ռուսաստանն է (տե՛ս Աղյուսակ 8): Իսկ այդ գաղափարը տեքստում կազմակերպվում է «բռնապետ» (կամ «ուխտադրուժ») փրկչից դեպի «ազատարար» փրկչի կերպար շղթայով: Խորհրդային դասագրքում պատումաշարն այնպես է կազմված, որ Հայաստանում առկա ծանր վիճակի համար նախ՝ շրջանառվում է «դաշնակցականների օտարերկրյա տերերի» (էջ 84), ապա նաև՝ դաշնակցականների «դավաճանության» թեման: Ինչպես Արթուր Դանթոն է նկատում, քանի որ պատումները իրադարձություններից հյուսված կառույց են, որտեղ իրադարձությունները խմբավորվում են որոշակի նպատակի շուրջ, ուստի դրանցից որոշները կարող են բացառվել պատմաշարից իբրև բավականաչափ ոչ նշանակալի<sup>61</sup>: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ ժամանակակից քաղաքական առասպելները ոչ թե ազատ երևակայության արդյունք են, այլ նախապես ռազմավարորեն հաշվարկված<sup>62</sup>:

Եվ, իրոք, պատմական իրականությունն այնպես է պատկերվում, որ «Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու միակ ելքը Հայաստանում սովետական իշխանության հաստատումն էր» (էջ 89), ավելին՝ «Եղբայրական ռուս ժողովուրդը օգնության ձեռք մեկնեց մահվան ճիրաններում գտնվող

59 Տե՛ս **Магосян Т.**, «Изобретение традиций»: тема советизации в учебниках истории советской Армении, **О. Карпенко, Дж. Джавахишвили (Ред.)**, Мифы и конфликты на Южном Кавказе, том 1, Инструментализация исторических нарративов, "International Alert", 2013, էջ 63:

60 Տե՛ս **Cassirer E.**, The Myth of the State, New Haven: Yale University Press, 1961:

61 Տե՛ս **Danto A. C.**, Analytical philosophy of history, Cambridge, 1965, էջ 132:

62 Տե՛ս **Василик М. А., Вершинин М. С.** (ред.), Политология: хрестоматия, М.: Гардарики, 2000, էջ 94:



Հայաստանի աշխատավորությանը» (էջ 90), մի բան, որը «չէր հասկանում» դաշնակցական կառավարությունը: Գրեթե նույն սցենարով է ներկայացված հետխորհրդային դասագրքում («Մանավանդ, որ Հայաստանի դաշնակիցները բնավ մտադրություն չունեին օգնության ձեռք մեկնելու: Դա պատրաստ էր անել միայն Խորհրդային Ռուսաստանը» (էջ 272), միայն թե մի տարբերությամբ (ոչ պակաս կարևոր). Ռուսաստանի «փրկչական» կերպարը կազմակերպվում է Ռուսաստանի «խաղաթղթերը» բացելով (քենալաբոլշևիկյան համագործակցության մանրամասն ներկայացմամբ): Ավելի ստույգ՝ հետխորհրդային դասագրքում ներկայացվում է Հայաստանի համար նման ծանր իրավիճակի ստեղծման մեջ Խորհրդային Ռուսաստանի ակտիվ մասնակցությունը (էջ 271):

Եթե խորհրդային դասագրքի նման դիրքորոշումը հասկանալի է, ապա մի քիչ անհասկանալի է հետխորհրդային դասագրքի դեպքում: Բայց եթե նկատի ունենանք վերջինիս ստեղծման ժամանակաշրջանը՝ 1994 թվականը, երբ ակտիվորեն ընթանում էին հայ-ադրբեջանական ռազմական գործողությունները, ապա հասկանալի է դառնում նաև հետխորհրդային դասագրքի նման դիրքորոշումը<sup>63</sup>:

### 5. Հարցերի և առաջադրանքների հիմնախնդիրը

Հայտնի է, որ ուսումնական գործընթացի կազմակերպման հարցում հույժ կարևոր դերակատարում ունի հարցադրման մեթոդը: Հարցման հմտությունների կիրառումը կարևոր է ցանկացած առարկայի համակարգային հետազոտության, սովորելու և յուրացման համար: Հընթացս հարցադրումների՝ վեր են հանվում երևույթի պատճառահետևանքային կապերը, համադրվում են տեղեկատվության որոնման ուղղորդիչները, գնահատվում և ամփոփվում են արդյունքները<sup>64</sup>: Ընդ որում՝ հարցերը կամ հարցադրումները ենթադրում են ճանաչողական վեց մակարդակ՝ **հիշել, ըմբռնել, կիրառել, վերլուծել, արժևորել, ստեղծել** (Taxonomy of Educational Objectives)<sup>65</sup>: Սրանք ամփոփվում են երեք հիմնական մակարդակներում՝ ճանաչողության ցածր մակարդակ (գիտելիքի յուրացում), միջին մակարդակ (ընկալում և կիրառման հմտություն) և բարձր մակարդակ (վերլուծություն, համադրում, գնահատում)<sup>66</sup>: Ճանաչողության այս աստիճանակարգումը մի կողմից ցույց է տալիս ուսումնական նյութի յուրացման աճը՝ ըստ գիտելիքը կապակցելու աստիճանի<sup>67</sup>, մյուս կողմից՝ վեր հանում հարցադրումների թիրախավորումներն ու դրանց կարևորությունը (թե հարցադրմամբ ի՞նչ մակարդակ է թիրախավորված):

63 Նկատենք, որ 1994 թվականի դասագիրքն անձամբ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն է նայել: Տե՛ս Թ. Մադոսյան, «Изобретение традиций»: тема советизации в учебниках истории советской Армении, 0. Карпенко, Дж. Джавахишвили (Ред.), Мифы и конфликты на Южном Кавказе, том 1, Инструментализация исторических нарративов, International Alert, 2013, էջ 57:

64 Տե՛ս Groisser Ph. L., How to Use the Fine Art of Questioning, Teachers Practical Press, 1964. Hunkins F. P., Questioning Strategies and Techniques. Boston, Mass.: Allyn and Bacon, 1972:

65 Տե՛ս Anderson L. W., Krathwohl D. R. (Eds.), A Taxonomy for Learning, Teaching and Assessing: A Revision of Bloom's Taxonomy of Educational Objectives: Complete Edition, New York: Longman, 2001, էջ 27:

66 Տե՛ս Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., Խաչատրյան Հ., Հասարակագիտության ինտեգրված ուսուցում. ուսումնական ծրագրի մշակում և թեմատիկ միավորների օրինակներ, Ուսումնասմեթոդական ձեռնարկ մանկավարժների համար, Եր., «ԱՅՌԵՔՍ», 2006, էջ 162:

67 Տե՛ս Խաչատրյան Ս., Կամուրջներ պատերի փոխարեն. ուսուցման էկոլոգիա, Եր., «Աստարես», 2014, էջ 91:

Ուստի պատմության դասավանդման և քաղաքականության միջև կապը վեր հանելու մեկ այլ ուշագրավ միջոց է դասաթեմայի վերջում գետնեղված «Հարցեր և առաջադրանքներ»-ի ենթատեքստային-իմաստային ծավալումների դիտարկումը: Այսու՝ հարցադրումների մեթոդն ամենաազդեցիկ գործիքներից է, որի միջոցով դասանյութը կազմակերպվում է ոչ թե **անգիր անելու** կամ սոսկ **իմանալու**, այլ **հասկանալու** նպատակին հետամուտ՝ դասանյութը դարձնելով փոխանցելի<sup>68</sup>: Իսկ այն, թե ինչ ենք ուզում, որ հիշի, ըմբռնի, արժևորի կամ վերլուծի աշակերտը, մեծապես կախված է նրանից, թե աշակերտին ինչի մասին ենք մղում մտածելու: Ավելի կոնկրետ՝ վեր հանելով հարցադրումների մարտավարական միտվածությունը՝ կարող ենք այդ համատեքստում վեր հանել նաև պատմության դասավանդման և քաղաքականության քողարկված կապն ու ռազմավարությունը:

Հարցադրումներն իրենց ենթադրվող պատասխաններով օրինականացնում են դասանյութի մեջ արծարծվող գաղափարախոսական միտումները: Եթե դասը սովորելու ժամանակ աշակերտի աչքից կարող է վրիպել գաղափարախոսական հիմնականը, ապա հարցերի և առաջադրանքների միջոցով վրիպման վտանգն արդեն հասցվում է նվազագույնի: Այսու՝ հարցերն ու առաջադրանքներն իրենց միտվածությամբ ձեռք են բերում ռազմավարական նշանակություն:

Միևնույն ժամանակ թե՛ խորհրդային դասագրքի և թե՛ հետխորհրդային դասագրքի մեջ գերակայող են «փաստական» հարցերը, չնայած որ ամկա են նաև հասկացմանը միտված հարցադրումներ (տե՛ս Աղյուսակ 9, Աղյուսակ 10): Առաջին դեպքում գործ ունենք ավելի շատ ուսումնառությամբ հիշողությունը վարժեցնելու հետ, որտեղ ուսումնառությունը ենթադրում է ոչ այլ ինչ, քան ներկայացվող նյութի հիշում, այլ ոչ գիտելիքի ու քննադատական-վերլուծական մտքի խթանում կամ միմյանց ավելի բարդ ձևերով կապակցում: Իսկ երկրորդ դեպքում թեկուզ ամկա է մտածողության խթանման որոշակի փորձ, բայց այն կաղապարային ու սահմանափակ է, քանի որ հարցադրումներն արդեն իսկ ուղղորդող են: Հարցադրումների միջոցով ավելի շատ վեր են հանվում քաղաքական նպատակները, քան ինքնին պատմության քննադատական յուրացումը:

Այսու՝ ուշագրավ է, որ երկու դասագրքերի դեպքում էլ հարցերը մեծ մասամբ ուղղված են **կարճատև հիշողությանը** (short-term memory) և միայն շատ քիչ դեպքերում՝ **երկարատև հիշողությանը** (long-term memory): Բանն այն է, որ առաջին դեպքում, երբ թիրախավորված է կարճատև հիշողությունը, հնարավոր է պատումը անընդհատ խմբագրել, երկրորդ՝ երկարատև հիշողության թիրախավորման դեպքում այն դժվար խմբագրելի է: Այստեղ ևս գործ ունենք առասպելականացման հետ: Միևնույն ժամանակ նկատենք, որ հետխորհրդային դասագրքի հարցադրումներն արտաքուստ չեզոք և հավասարակշիռ հարցադրումներ են, բայց երբեմն այդ թվացյալությունը խախտվում է: Օրինակ՝ Աղյուսակ 10-ում բերված հարցադրումներից 4-րդը: Այն բաղկացած է երկու մասից. ա) «Ապստամբության պարտության պատճառներից մեկն էլ այն էր, որ ժողովուրդը չաջակցեց: Ինչո՞ւ» և բ) «Արդյո՞ք արդարացված էր կառավարության խստությունը ապստամ-

68 Տե՛ս **Petty G.**, Teaching Today: A Practical Guide, Fourth Edition, Cheltenham, U.K., Nelson Thornes, 2009, p. 191.

բության ղեկավարների նկատմամբ»: Միանգամից աչքի է զարնում հարցադրման մեջ պատասխանի առկայությունը («որ ժողովուրդը չաջակցեց»), ինչը արգելակիչ է դառնում հաջորդ հարցադրման մեջ այլընտրանքային մտածողության-պատասխանի հավանականության համար:

Ուշադրության է արժանի նաև քննարկվող խորհրդային դասագրքի թեմաների վերջում բերված «հարցեր և առաջադրանքներ»-ի մեջ տարբերվող, առանձնացող մի խումբ (օր.՝ 1. «Տեսրում գրեք և բացատրեք հետևյալ բառերի իմաստը՝ կայագոր, սեյմ, կոմունա» – էջ 68, 2. «Տեսրում գրեք և բացատրեք հետևյալ բառերի իմաստը՝ դիկտատուրա, խմբապետ, մաուզերիստ, անարխիստ» – էջ 73), որոնք ակնհայտորեն հիպերտեքստային երկխոսության մեջ են թե՛ դասանյութի, թե՛ գաղափարախոսության հետ, որով աշակերտի մոտ է՛լ ավելի է ամրապնդվում բացասական վերաբերմունքը Առաջին Հանրապետության նկատմամբ: Հարկավ այսպիսի հարցադրումներ կան նաև այդ դասերին նախորդած դասերի մեջ (օր.՝ «Տեսրում գրեք և բացատրեք հետևյալ բառերի իմաստները՝ մայովկա, ազգային-կուլտուրական ավտոնոմիա, երիտթուրքեր, վիլայեթ») և հաջորդած դասերի մեջ (օր.՝ «Տեսրում գրեք և բացատրեք հետևյալ բառերը՝ ՀՕԿ, ՀԷԿ, ֆեդերացիա» (էջ 121), «Տեսրում գրեք և բացատրեք հետևյալ բառերի իմաստը՝ լիկկայան, բանֆակ, խրճիթ-ընթերցարան, Արմֆան» (էջ 142) և այլն):

Ոչ պակաս կարևոր են հարցում արտահայտող բառերի կիրառումը (տե՛ս Աղյուսակ 11), հարցեր, որոնք կարող են մղել մտածելուն, վերլուծելուն կամ գնահատելուն (Ինչպիսի՞ն, ինչպե՛ս...): Ինչպե՛ս երևում է Աղյուսակ 11-ից՝ դրանք իրենց ձևակերպումներով ուղղված են ընդամենը հիշողության ամրապնդմանը («Ինչպիսի՞ քաղաքականություն էին վարում օտարերկրյա ինպերիալիստները Հայաստանում» – խորհրդային դասագիրք, էջ 73, «Ինչպե՛ս արձագանքեցին Անդրկովկասի քաղաքական կուսակցությունները և իշխանությունները բոլշևիկյան հեղաշրջմանը» – հետխորհրդային դասագիրք, էջ 226): Այսու՝ Աղյուսակ 11-ում դուրս բերված բոլոր հարցերը, թե՛ խորհրդային դասագրքում և թե՛ հետխորհրդային դասագրքում, Բլումի (կամ Անդերսոնի) աստիճանակարգումի (տաքսոնոմիայի) համաձայն, ուղղված են ավելի շատ ճանաչողության ցածր և միջին մակարդակներին, քանի որ պատասխանները ենթադրում են փաստերի և տեղեկատվությունների վկայակոչումներ (հավանական բայերը, որոնք աշակերտը կարող է օգտագործել հարցերին պատասխանելու համար, հետևյալներն են՝ անվանել, թվարկել, ընտրել, սահմանել, նկարագրել, մտապահել, նշել, ճանաչել, տեղակայել, անգիր անել, պատմել և այլն): Գրեթե չկան այնպիսի հարցադրումներ, որոնք աշակերտին կնդեին վերլուծության<sup>69</sup>: Արդեն իսկ հասկանալի է, որ թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային դասագրքերում հիմնական շեշտադրումն արված է հիշելու վրա:

Հասկանալի է, որ քննադատական մտածողությունը չի կարող խրա-

69 Ավելի մանրամասն տե՛ս **Anderson L. W., Krathwohl D. R.** (Eds.), *A Taxonomy for Learning, Teaching and Assessing: A Revision of Bloom's Taxonomy of Educational Objectives: Complete Edition*, New York: Longman, 2001. **Anderson L.W., Sosniak L.A.** (Eds.), *Bloom's Taxonomy: A Forty-year Retrospective, Ninety-third Yearbook of the National Society for the Study of Education, Pt. 2*, Chicago, IL., University of Chicago Press, 1994. **Bloom B. S., David R. K.**, *Taxonomy of Educational Objectives: The Classification of Educational Goals, Handbook I: Cognitive domain*. New York: David McKay Company, 1956.

խուսվել ամբողջատիրական համակարգում: Ուստի խորհրդային դասագրքում հարցադրումներն այնպես են կազմակերպված, որոնք միտված են միայն գիտելիքի տրամադրմանը, բայց ոչ դրանց միջոցով քննադատական մտածողություն ձևավորելուն: Նույնն է նաև հետխորհրդային դասագրքում. ավելին՝ **այն էլ ավելի է կենտրոնացած զուտ գիտելիքներ փոխանցելուն և հիշելուն, քան խորհրդային դասագիրքը: Թերևս այն պատճառով, որ առաջինի դեպքում կար կոնկրետ գաղափարախոսություն և հարցադրումները պետք է ծառայեին այդ գաղափարախոսությանն ու դրա վերհանմանը, իսկ հետխորհրդայինի դեպքում գործ ունենք գաղափարախոսության բացակայության հետ. չկա ազգային-պետական կոնկրետ տեսլական, ուստի մնում է միայն տեղեկույթի ուղղակի փոխանցումը**<sup>70</sup>:

## Ամփոփում

Ամփոփելով վերոասացյալը՝ նկատենք, որ խորհրդային վերջին «Հայ ժողովրդի պատմություն» (1987) և հետխորհրդային առաջին «Հայոց պատմություն» (1994) դասագրքերը **ավելի շատ իրենցից ներկայացնում են իրադարձությունների (պատմությունների) շտեմարաններ, պահուստներ, որտեղ ի պահ են տրված քաղաքական նշանակություն ունեցող իրադարձությունները (պատմությունները):** Չնայած առկա նմանություններին՝ կան և տարբերություններ: Նախ և առաջ խորհրդային դասագրքում ծայրից ծայր հստակորեն ուրվագծվում է գաղափարախոսական միտումը, մինչդեռ հետխորհրդային դասագրքում այն գրեթե բացակայում է: Անկախություն հռչակած հասարակության մեջ դեռ մշակված չեն այն մեխանիզմները, որոնցով հնարավոր կլինեի արմատավորել այդ անկախության արժեքները: Ուստի որպես այդպիսի մեխանիզմ ծառայել է խորհրդային շրջանում մշակված համակարգը, որով այդ արժեքանական կառույցն ուղղակի ստեղծվում է կամ հնի ժխտմամբ-հակադրմամբ, կամ էլ որոշ վերամեկնաբանմամբ: Ուստի պատահական չէ, որ երկու դասագրքերում էլ դասաթեման ծավալվում է «եզակի» ինքնության շուրջ, և երկուսն էլ անտարբեր են «բազմակի» ինքնության հնարավորության նկատմամբ: Ավելին՝ **հին «հերոսները», «բարեկամներն» ու «թշնամիները» փոխարինվել են «նորերով», սակայն «փրկչի» կերպարը, չնչին վերաթևորումներով, մնում է նույնը՝ Ռուսաստանը:**

Աչքի զարնող տարբերությունը շարադրանքի լեզուն է. խորհրդային դասագրքի լեզուն խիստ զգացմունքային է, մինչդեռ հետխորհրդայինը, չունենալով մշակված համապատասխան գիտական լեզու, այդուամենայնիվ, բավականին զուսպ է:

70 Վերջինս թերևս պայմանավորված էր նաև նրանով, որ այդ ժամանակ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդես էր եկել ընդդեմ ազգային գաղափարախոսության. «Կեղծ ազգային կատեգորիա է նաև ազգային գաղափարախոսությունը, որովհետև ժողովրդավարության պայմաններում անհնար է ողջ ազգին համախմբել մեկ միասնական գաղափարախոսության շուրջ»: Տես **Տեր-Պետրոսյան Լ.**, Ելույթ Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նիստում՝ Սահմանադրության ընդունման եղանակի մասին, «Հայաստանի Հանրապետություն», 26 ապրիլի, 1994: Տես նաև՝ **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի: Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ /Կազմող և խմբագիր Ա. Բ. Սարգսյան, Եր., ՀՀ առաջին նախագահի արխիվ, 2006, էջ 404:

Այսպիսով՝ համեմատելով և համադրելով խորհրդային և հետ-խորհրդային դասագրքերի նյութերը՝ պարզ է դառնում, որ խորքային փոփոխություններ գրեթե չկան թեմատիկ ուղղությունների և խնդիրները ներկայացնելու հիմնական միտումների առումով: Փոփոխությունը կատարված է սուկ մեկնաբանման-վերաբժևորման համատեքստում: Այն է՝ հետխորհրդային դասագիրքը կարծես ստեղծված է ի պատասխան խորհրդային դասագրքում մշակված կարծրատիպերի ու մտայնությունների, ուստի առաջարկված այլընտրանքն ընդամենը նախորդի հակառակ դիրքորոշումն է, որտեղ հակա-հիշողությունն ուղղակի վեափոխվել է հիշողության:

**Սմբատ Խ. Հովհաննիսյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է պատմագրության, քաղաքակրթության, նշանագիտության և պատմության տեսությունների, նախաարդյունաբերական և արդյունաբերական դարաշրջանների հայ և համաշխարհային առևտրական կապիտալի հիմնախնդիրները:

## Summary

### ARMENIAN HISTORY TEXTBOOK AS AREA OF “COMPETING MEMOIRS”

Based on the example of historical materials of the Republic of Armenia 1918–1920

Smbat Kh. Hovhannisyan  
*Candidate of Historical Sciences*

**Key words** – Republic of Armenia, First Republic, Armenian Soviet Socialist Republic, «Realms of Memory», competing memories, narrative strategy, «against history», types of forgetting, textbook memory.

The article is about discourses manifested in the following textbooks: “History of the Armenian People” (1987), which is the last manual of history published in Soviet times, and “Armenian History” (1994), which is the first manual of history published after the Soviet Union. Through these books students were explicitly or tacitly involved in the process of legitimation of narratives of corresponding authorities. The issue has been considered within the context of evaluation and reevaluation of the topic on the First Republic. First of all, both textbooks simply stand as granaries, where events (stories) of political significance are preserved. Despite existing similarities, some differences are also present.

First and foremost, in the Soviet textbook the ideology is explicit from the beginning to the end, whereas in the post-Soviet textbook it is almost absent.

Within the society, that had declared independence, mechanisms by which it would be possible to inculcate the values of that independence were not yet developed. Therefore, the mechanisms developed by Soviets was put to use. Through this mechanism the new value system is constructed, either by denial of the old values and contrasting new ones to the old values or through some reinterpretation of old values. Therefore, it is not an accident, that in both textbooks the topic is developed around “unique” identity, and they are both indifferent to the possibility of “multiple” identities. Moreover, old “heroes”, “friends” as well as “enemies” are replaced by “new ones”, but the image of the “Savior”, with minor re-evaluations, remains the same: Russia.

The language of the narration is strikingly different in these textbooks: the language of the Soviet textbook is very emotional, while the post-Soviet textbook despite lacking a corresponding political language, uses a rather restrained language.

Thus, the comparison and combination of materials from the Soviet and post-Soviet textbooks makes it clear, that there are almost no significant changes, concerning the main trends of themes and directions of presenting the issues. The changes are made only within the context of interpretation and re-evaluation. Post-Soviet textbook seems to have been created in response to stereotypes and thoughts, developed in the Soviet textbook, thus, the proposed alternative is simply the opposite position of the previous one, where anti-memory has just turned into the memory.

## Резюме

### **УЧЕБНИК ИСТОРИИ АРМЕНИИ КАК ОБЛАСТЬ «КОНКУРИРУЮЩИХ ВОСПОМИНАНИЙ»**

На примере изложения истории Республики Армения  
1918–1920 гг.

Смбат Х. Оганнисян  
*Кандидат исторических наук*

**Ключевые слова** – Республика Армения, Армянская Советская Социалистическая Республика, «места памяти», конкурирующие воспоминания, нарративные стратегии, «контристория», типы забвения, учебниковая память.

Статья посвящена изучению дискурсов учебника «История армянского народа» (1987) – последнего издания советского периода, и первого учебника «История Армении», изданного в постсоветские годы (1994). Через эти книги учащиеся были явно или молчаливо вовлечены в процесс легитимизации нарративов властей. Проблема рассмотрена в контексте оценки и переоценки темы Первой Республики. В первую очередь, оба учебника представляют собой собрания событий, хранилища, где хранятся события, имеющие политическое

значение. Несмотря на существование общих черт, есть также и некоторые различия.

Прежде всего, в советском учебнике с начала до конца явно вычерчивается идеология, тогда как в постсоветском учебнике она почти отсутствует. В обществе, провозгласившем независимость, еще не разработаны механизмы, через которые можно будет внедрить ценности этой независимости. Таким механизмом послужила система, разработанная в советские годы. В постсоветском учебнике система ценностей построена либо опровержением и противопоставлением старому, либо некоторой репрезентацией старого. Поэтому не случайно, что в обоих учебниках тема развивается вокруг «единичной» идентичности, и оба учебника равнодушны к возможности «множественной» идентичности. Кроме того, старые «герои», «друзья» и «враги» заменены «новыми», но образ «спасителя», с незначительными переоценками, остается тем же – Россия.

Язык повествования в этих учебниках значительно отличается: язык советского учебника очень эмоционален, в то время как постсоветский учебник, несмотря на отсутствие соответствующего политического языка, использует довольно сдержанный язык.

Таким образом, сравнение материалов из советского учебника и постсоветского учебника показывает, что нет почти никаких существенных изменений в тематических направлениях и в главных тенденциях представления проблем. Изменения внесены только в контексте интерпретации и переоценки. Постсоветский учебник, кажется, был создан в ответ на стереотипы и ментальность, развиваемые в советском учебнике. Таким образом, предложенная альтернатива – просто противоположное направление предыдущего, где антипамять превратилась в память.

## REFERENCES

1. **Anderson B.**, Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism (New Edition), London & New York: Verso, 2006.
2. **Anderson L. W., Krathwohl D. R. (Eds.)**, A Taxonomy for Learning, Teaching and Assessing: A Revision of Bloom's Taxonomy of Educational Objectives: Complete Edition, New York: Longman, 2001.
3. **Anderson L.W., Sosniak L.A. (Eds.)**, Bloom's Taxonomy: A Forty-year Retrospective, Ninety-third Yearbook of the National Society for the Study of Education, Pt. 2, Chicago, IL., University of Chicago Press, 1994.
4. **Apple M. W.**, Official Knowledge: Democratic Education in a Conservative Age, 2<sup>nd</sup> Edition, New York: Routledge, 2000, p. 10.
5. **Assmann J.**, Das kulturelle Gedächtnis: Schrift, Erinnerung und politische Identität in frühen Hochkulturen, Verlag: C.H. Beck, 2007.
6. **Augé M.**, Les formes de l'oubli, Paris: Payot, 1998.
7. **Barth F.**, Enduring and Emerging Issues in the Analysis of Ethnicity, in: **Vermeulen H., Govers C. (eds.)**, The Anthropology of Ethnicity. Beyond 'Ethnic Groups and Boundaries', Amsterdam: Het Spinhuis, 1994.
8. **Billig M.**, Banal Nationalism, London: Sage Publications, 1995.
9. **Bloom B. S., David R. K.**, Taxonomy of Educational Objectives: The Classification

of Educational Goals, Handbook I: Cognitive domain. New York: David McKay Company, 1956.

10. **Cassirer E.**, *The Myth of the State*, New Haven: Yale University Press, 1961, p.
11. **Collingwood R. G.**, *The idea of history: Revised Edition with Lectures 1926–1928* /Edited with an Introduction by by Jan van der Dussen, Oxford & New York: Oxford University Press, 1994.
12. **Connerton P.**, *Seven types of Forgetting*, *Memory Studies*, 1 (2008), p. 59–71.
13. **Danto A. C.**, *Analytical philosophy of history*, Cambridge, 1965.
14. **Eliade M.**, *Patterns in Comparative Religion*, London: Sheed and Ward, 1958.
15. **Ferro M.**, *Comment on raconte l’histoire aux enfants à travers le monde*, Paris: Payot, 1983.
16. **Fields K. E.**, *Translators Introduction*, in: **Dürkheim E.**, *The Elementary Forms of Religious Life /A New Translation by Karen E. Fields*, New York etc.: The Free Press, 1995, p. XVII–LXV.
17. **Foucault M.**, ‘Nietzsche, Genealogy, History’, in **D. F. Bouchard (ed.)**, *Language, Counter-Memory, Practice: Selected Essays and Interviews*, Cornell University Press, Ithaca, 1977, pp. 139–164.
18. **Goff J. Le**, *History and Memory*, New York: Columbia University Press, 1992.
19. **Groisser Ph. L.**, *How to Use the Fine Art of Questioning*, Teachers Practical Press, 1964.
20. **Halbwachs M.**, *La Mémoire collective*, Paris: P.U.F., 1968.
21. **Halbwachs M.**, *Les Cadres Sociaux de la Mémoire*, Paris: Albin Michel, 1994.
22. **Hunkins F. P.**, *Questioning Strategies and Techniques*, Boston, Mass.: Allyn and Bacon, 1972.
23. **Hutton P.**, *History as an Art of Memory*, Hanover and London: University Press of New England, 1993.
24. **Linde Ch.**, *Working the Past: Narrative and Institutional Memory*, Oxford University Press, USA, 2008.
25. **Mkrtchyan S.**, *Armenia–Georgia Relations (1918–1921), as Reflected in School Textbooks: “Wars” or a “Dialogue” of Memories*, in: *City, Migration, Markets: New Studies in Social science from the South Caucasus*, Collection of articles Vol.5, Heinrich Beoll Shtiftung 2011, 2011, p. 169–184.
26. **Mkrtchyan S.**, *State and Church in Armenian State Schools: from Atheistic Soviet Education to the Contemporary History of Armenian Church Course*, in: **Jödicke A. (ed.)**, *Religious Education Politics, the State, and Society*, Ergon-Verlag GmbH., 2013, p. 149–165.
27. **Mkrtchyan S.**, *The Republic of Armenia’s Neighbours in the Late 19th and Early 20th Centuries in Contemporary World History Textbooks*, in: **Rumyantsev S. (ed.)**, *The South Caucasus and Turkey: History Lessons of the 20th Century*, Heinrich Böll Foundation South Caucasus Regional Office, 2012, p. 47–64.
28. **Nora P.**, *Entre la mémoire et l’histoire: Les Lieux de Mémoire*, dans **Nora P. (dir.)**, *Les lieux de mémoire*. La République, Paris: Gallimard, 1984, p. XVI–XLII.
29. **Petty G.**, *Teaching Today: A Practical Guide*, Fourth Edition, Cheltenham, U.K., Nelson Thornes, 2009.
30. **Pierre N.**, *Between Memory and History: Les Lieux de Mémoire*, *Representations*, Special Issue: *Memory and Counter-Memory*, 26 (Spring, 1989), p. 7–24.
31. **Ricoeur P.**, *La Mémoire, l’histoire, l’oubli*, Paris: Éditions du Seuil, 2000.
32. **Ricoeur P.**, *La Mémoire, l’Histoire, l’Oubli*, Paris: Le Seuil 2000.
33. **Schiffrin D.**, *In Other Words: Variation in Reference and Narrative*, Cambridge University Press, 2006.
34. **Silova I.**, *Gender Analysis of Armenian School Curriculum and Textbooks*. Policy



Brief, Open Knowledge Repository, World Bank Group, 2016, [URL://https://openknowledge.worldbank.org/handle/10986/24948](https://openknowledge.worldbank.org/handle/10986/24948) (26.05.2018).

**35. Zolyan M., Mkrtchyan S., Hovhannisyán H.**, A New Beginning: State-Building and Representation of the Events of 1988–1991 in the Political Discourse of Republic of Armenia, Yerevan: Regional Studies Center, 2016.

**36. Zolyan M.**, Writing the History of the Present: The Post-Soviet Period in Armenian History Textbooks, in: **Rumyantsev S. (ed.)**, The South Caucasus and Turkey: History Lessons of the 20th Century, Heinrich Böll Foundation South Caucasus Regional Office, 2012, p. 145–169.

**37. Zolyan M., Zakaryan T.**, Representations of “Us” and “Them” in History Textbooks of Post-Soviet Armenia, in: **Sidikov B. (ed.)**, Schulbücher im postsowjetischen Kaukasus und in Zentralasien /Textbooks in the Post-Soviet Caucasus and in Central Asia, International Textbook Research, Volume 30, Braunschweig: Georg-Eckert-Institut für internationale Schulbuchforschung, 2008, p. 785–795.

**38. Zolyan M., Zakaryan T.**, The images of “Self” and “Other” in textbooks on History of Armenia, in: **Vesely L. (Ed.)**, Contemporary History Textbooks in the South Caucasus, Prague, 2008, p. 12–31.

**39. Arnautov N. B.**, Obraz vruga naroda v sisteme sovetsoy social'noy mobilizacii: ideologo-propagandicheskiy aspekt (dekabr' 1934 – noyabr' 1938 g.), Novosibirsk: NGU, 2012 (**In Russian**).

**40. Assman Ya.**, Kul'turnaya pamyat': Pis'mo, pamyat' o prošlom i političeskaya identičnost' v vi'sokukh kul'turakh drevnosti, M., 2004 (**In Russian**).

**41. Vasilik M. A., Veršina M. S. (red.)**, Politologiya: khrestomatiya, M.: Gardariki, 2000 (**In Russian**).

**42. Vasil'ev A. G.**, Kul'turnaya pamyat'/zabvenie i nacional'naya identičnost': teoretičeskie osnovaniya analiza, v knige: **Kočelyaeva N. A. (red.)**, Kul'turnaya pamyat' v kontekste formirovaniya nacional'noy identičnosti Rossii v XXI veke: Kollektivnaya monografiya /Novi'y in-t kul'turologii, M.: Sovpadenie, 2015 (**In Russian**).

**43. Iskandaryan A., Arutyunyan B.**, Armeniya: „karabakhizaciya“ nacional'noy istorii, v knige: **Ayermakher K., Bordyugov G. (red.)**, Nacional'ni'e istorii v sovet'skom i postsovet'skikh gosudarstvakh, Izd. 2-e, ispr. i dopoln., M.: Fond Fridrikha Naumanna, AIRO-XX, 2003, s. 146–147 (**In Russian**).

**44. Lotman Yu. M.**, Pamtat' v kul'turologičeskogo osveschenii, v knige: **Lotman Yu. M.**, Semiosfera, SPb.: Iskusstvo-SPb, 2000, s. 673–676 (**In Russian**).

**45. Lotman Yu. M.**, Pamtat' kul'turi', v knige: **Lotman Yu. M.**, Semiosfera, SPb.: Iskusstvo-SPb, 2000, s. 614–621 (**In Russian**).

**46. Matosyan T.**, «Izobretenie tradicii»: tema sovetizacii v učebnikakh v istorii sovet'skoy Armenii, v knige: **Karpenko O., Djavakhišvili Dj. (Red.)**, Mifi' i konflikti' na Yujnom Kavkaze, tom 1, Instrumentalizaciya istoričeskikh narrativov, International Alert, 2013, s. 54–71 (**In Russian**).

**47. Mkrtčyan S. S., Polyuškevič O. A., Savina A. G.**, Vizual'noe izmerenie Gosudarstvennoy identičnosti: teoriya, metodologiya i praktika, SPb., Izd-vo Rossiyskogo Gosudarstvennogo Pedagogičeskogo Universiteta im. A. I. Gercena, 2012 (**In Russian**).

**48. Rikyor P.**, Ya-sam kak drugoy /Per. S franc. B. M. Skuratova, M.: Izd. Gumanitarnoy literaturi', 2008 (**In Russian**).

**49. Toporov V. N.**, Imena, v knige: **Tokarev S. A. (glav. red.)**, Mifi' narodov mira, Ėnciklopediya, v 2 tomakh, 2-e izd., T. 1, M.: Sovetskaya Ėnciklopediya, 1987, c. 508 (**In Russian**).

**50. Fuko M.**, Nujno zaschischat' obščestvo: Kurs lekcij, pročítanni'kh v Kollezhe de Frans v 1975–1976 učebnom godu, SPb.: Nauka, 2005 (**In Russian**).

**51. Avetisyan H. A. (khmb.)**, Hay žoghovrdi patmutyun (1900–1987 t't') /dasagirki'

mijnakarg dproci 9–10–rd dasaranneri hamar, 3–rd hratarakutyun, Y., Luys, 1987 (**In Armenian**):

**52. Babalean A.**, Hayastani ankakhut'yan patmutiwnë ev ayl yišatakner, Glendel, Navasard, 1997 (**In Armenian**):

**53. Barkhudaryan V. B. (khmb.)**, Hayoc' patmut'yun, Dasagirk' hanrakrt'akan dproci 7–8–rd dasaranneri hamar, Y., Luys, 1994 (**In Armenian**):

**54. Barkhudaryan V. B. (khmb.)**, Hayoc' patmut'yun: Hanrakrt'akan dproci 8–rd dasarani dasagirk', Y., Luys, 2000 (**In Armenian**):

**55. Gevorgyan É.**, Hanrapetut'yun hfčakumë, **Melk'onyan A. (khmb.)**, Hayoc' patmut'yun: Noraguyn šrjan: 1918 t'vakanic minčev mer orerë: 12–rd dasaran: Humanitar hosk', Y., Zangak–97, 2011, **ëj** 6–10 (**In Armenian**):

**Zohrabyan É. A.**, Khorhrdayin Rusastani arevelyan k'aghak'akanutyunë: K'emalabolševikyan merdzecumë, **Barkhudaryan V. yev uriš. (khmb.)**, Hayoc' patmut'yun, H. 4, Girk' afajin, Noraguyn žamanakašrjan (1918–1945), Y., Zangak–97, 2010, **ëj** 237–253 (**In Armenian**):

**56. Khačtryan K.**, Hayastanë Khorhrdayin Rusastani arevelyan k'aghak'akanutyun vol-ortum: K'emalabolševikyan hamagortsakutyunë, **Melk'onyan A. (khmb.)**, Hayoc' patmut'yun: Noraguyn šrjan: 1918 t'vakanic minčev mer orerë: 12–rd dasaran: Humanitar hosk', Y., Zangak–97, 2011, **ëj** 48–52 (**In Armenian**):

**57. Khačtryan K.**, Haraberut'yunerë harewan erkrneri het: Taratsk'ayin himnakhndirner, **Մելքոնյան Ա. (khmb.)**, Hayoc' patmut'yun: Noraguyn šrjan: 1918 t'vakanic minčev mer orerë: 12–rd dasaran: Humanitar hosk', Y., Zangak–97, 2011, **ëj** 28–36 (**In Armenian**):

**58. Khačtryan S.**, Kamurjner pateri p'okharen. Usucman **ëkologia**, Y., Antares, 2014 (**In Armenian**):

**59. Hakobyan A. M., Mnacakanyan A. N. (khmb.)**, Hay žoghovrdi patmutyun, Yer-rord mas, Dzernak mijnakarg dproci hamar, Y., Haypetusmankhrat, 1958 (**In Armenian**):

**60. Hakobyan A.**, Haykakan ankakh petakanut'yan verakangnumë, **Barkhudaryan V. yev uriš. (khmb.)**, Hayoc' patmut'yun, H. 4, Girk' afajin, Noraguyn žamanakašrjan (1918–1945), Y., Zangak–97, 2010, **ëj** 11–51 (**In Armenian**):

**61. Hakobyan T'. Kh., Melik-Bakhšyan St. T., Barseghyan H. Kh. (khmb.)**, Hayastani ew harakic šrjanneri teghanunneri bařaran, H. 3, Y., Yerevani hamals. hrat., 1991 (**In Armenian**):

**Petrosyan S., Khačtryan S., Khačtryan H.**, Hasarakagitut'an integrvats usucum. Wuswumnakan tsragri mšakum ew t'ematik miavorneri orinakner, Usumnamet'odakan dzefnark mankarvžneri hamar, Y., AYREK'S, 2006 (**In Armenian**):

**62. Ter-Petrosyan L.**, Yeluyt' Hayastani Hanrapetut'yan Geraguyn Khorhrdi nistum' Sahmanadrut'yan ëndunman eghanaki masin, Hayastani Hanrapetut'yun, 26 aprili, 1994 (**In Armenian**):

**63. Ter-Petrosyan L.**, Ėntrani: Yeluyt'ner, hodvatsner, harcazruycner /Kazmogh ew khmbagir A. B. Sargsyan, Y., HH afajin nakhgahi arkhiv, 2006, **ëj** 403–409:

**64. Khuršudyan L.**, Հ Hayoc' azgayin gaghap'arakhosut'yun, Y., Zangak–97, 1999, **ëj** 225–236 (**In Armenian**):

**65. Քաղազունի Հ.**, H. Y. Dašnakcut'iwnë anelik chuni ayl ews, Vienna, Mkhit'aryan tparan, 1923 (**In Armenian**):

## ՀԱՎԵԼՎԱԾ

<b>Աղյուսակ 1</b>	
<b>Հայ ժողովրդի պատմություն (9-10), 1989</b>	
<b>Հայոց պատմություն (7-8), 1994</b>	
<b>Շ. Ռ. Հարությունյան (պատմ. գիտ. դոկտոր)</b>	
<b>Հ. Ա. Ավետիսյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս)</b>	
<b>V գլուխ</b>	<b>ՀԱՅԱՍՏԱՆԸ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՈ</b>
<b>V գլուխ</b>	<b>18-րդ գլուխ</b>
<b>V գլուխ</b>	<b>ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ:</b>
<b>V գլուխ</b>	<b>«1. ԻՐԱԳՎՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿՈՒՄՎԿԱՍՈՒՄ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՈ</b>
<b>V գլուխ</b>	<b>«1. ԻՐԱԳՎՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿՈՒՄՎԿԱՍՈՒՄ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՈ</b>
<b>VII գլուխ</b>	<b>ԻՐԱԳՎՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՈ</b>
<b>VII գլուխ</b>	<b>«2. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ</b>
<b>VII գլուխ</b>	<b>«3. ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԱՆԿՈՒՄՎԿԱՍ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ:</b>
<b>Շ. Ռ. Հարությունյան (պատմ. գիտ. դոկտոր)</b>	<b>Վ. Ն. Ղազարյան (պատմ. գիտ. դոկտոր)</b>

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԼԿ համահայկական հանդես

VIII գլուխ	<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Հայկական Հանրապետության ստեղծումը:</li> <li>✓ Կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը: Երկրի ծանր վիճակը:</li> <li>✓ Իմպերիալիստական տերությունները և Հայկական հարցը:</li> </ul>	19-րդ գլուխ	<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ: ՆՐԱ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ</b>  <b>«1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Իշխանության մարմինների ձևավորումը:</li> <li>✓ Դիվանագիտական կապերը:</li> <li>✓ Զինված ուժերի կազմավորումը:</li> </ul>
IX գլուխ	<b>ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Հեղափոխական շարժումները: ՀԿ(Բ)Կ ձևավորումը:</li> <li>✓ Մայիսյան ապստամբությունը:</li> <li>✓ Ապստամբության ճնշումը:</li> </ul>		<b>«2. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Սոցիալ-տնտեսական վիճակը:</li> <li>✓ Քաղաքական կյանքը:</li> <li>✓ 1920 թ. մայիսյան ապստամբությունը:</li> <li>✓ Թուրք-թաթարական խռովությունները:</li> <li>✓ Իրադարձությունները Ղարաբաղ-Ջանգեղուրում, Նախիջևանում և Կարսի մարզում</li> </ul>
X գլուխ	<b>ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Քաղաքական իրադրությունը Հայաստանում 1920 թ. կեսերին:</li> <li>✓ Քենավական Թուրքիայի հարձակումը Արևելյան Հայաստանի վրա:</li> <li>✓ Հեղափոխական շարժումների նոր վերելքը 1920 թ. աշնանը:</li> <li>✓ Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում:</li> <li>✓ Սովետական իշխանության առաջին ձեռնարկումները:</li> <li>✓ Դաշնակցականների փետրվարյան հակահեղափոխությունը և նրա ջախջախումը:</li> </ul>	20-րդ գլուխ	<b>ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ</b>  <b>«1. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Կապերը Քառյակ երկրների հետ:</li> <li>✓ Հարաբերությունները Վրաստանի և Ադրբեջանի հետ:</li> </ul> <b>«2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ:</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Հայկական հարցը Փարիզի խաղաղության կոնֆերանսում:</li> <li>✓ Իրադարձությունները Կիլիկիայում:</li> </ul>
		21-րդ գլուխ	<b>«3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Հայ-ռուսական հարաբերությունները:</li> <li>✓ Թուրք-հայկական պատերազմը:</li> <li>✓ Հայաստանի Հանրապետության անկումը:</li> </ul> <b>ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ</b> <b>«1. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Հեղկոմների գործունեությունը: Ռազմական կոմունիզմը:</li> <li>✓ Քաղաքացիական կռիվները:</li> <li>✓ ՀԽՍՀ դիվանագիտական կապերը:</li> </ul>

<b>Աղյուսակ 2.</b>	
<b>Մայիսյան հերոսամարտերի գնահատումն ու ներկայացումը</b>	
<b>Հայ ժողովրդի պատմություն (9-10), 1989</b>	<b>Հայոց պատմություն (7-8), 1994</b>
<b>Շ. Ռ. Հարությունյան (պատմ. գիտ. դոկտոր)</b>	<b>Հ. Ա. Ավետիսյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս)</b>
<p>Անդրկովկասի <b>հակահեղափոխական իշխանությունը</b> ձախողեց երկրամասի պաշտպանությունը: Ավելին՝ նա գործարքի մեջ մտավ <b>օտարերկրյա զավթիչների</b> դեմ: - <b>Էջ 65</b></p>	<p>«Սեյմի մուսուլման պատվիրակներն անհրաժեշտ էին համարում ընդունել թուրքերի տարածքային պահանջները և Անդրկովկասի անկախության մասին նրա առաջարկությունը: Դրան հակառակ, Սեյմում հնչեց այն միտքը, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը թուրքերի համար չի նշանակում միայն երեք օկրուգների հարց: Նրանք ավելի հեռուն գնացող նպատակ ունեին՝ «Կոստանդնուպոլիսը Բաքվի հետ միավորելու իրենց փայփայած ծրագրով»»: - <b>Էջ 225</b></p>
<p>1918 թ. ապրիլի 22-ին գերմանա-թուրքական ինպերիալիստների թելադրանքով սեյմն Անդրկովկասը հայտարարեց անկախ հանրապետություն, այն պաշտոնապես անջատելով Սովետական Ռուսաստանից: Դա ավելի նպաստեց թշնամու առաջխաղացմանը: - <b>Էջ 65</b></p>	<p>«Թուրքական զորքերի առաջխաղացման պայմաններում, ամբողջ Արևմտյան Հայաստանը զավթելուց հետո, թուրքերը Անդրկովկասյան կառավարության առաջ նորից դրեցին երկրամասի անկախության հռչակման հարցը»: - <b>Էջ 225</b></p> <p>«Սակայն վրաց մենշևիկների և մուսուլմանական մեծամասնության ճնշման տակ Սեյմը հայտարարեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և երկրամասի անկախության մասին՝ կատարելով թուրքերի պահանջը: Ստեղծվեց Անդրկովկասի դեմոկրատական ֆեդերատիվ հանրապետությունը: Այդ որոշումն ավելի արձակեց թուրք կառավարողների և զինվորականության ձեռքերը»: - <b>Էջ 226</b></p>
<p>«Թուրքական զավթիչների դեմ պայքարը հատկապես սուր բնույթ ստացավ <b>Սարդարապատի ճակատամարտում</b>: Ալեքսանդրապոլից շարժվող թուրքական զորքերը մայիսի 21-ին գրավեցին Սարդարապատ գյուղը (այժմ՝ Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր գյուղը) և կայարանը ու փորձեցին առաջ շարժվել դեպի Երևան: Սակայն հայկական զորքը, խիզախ աշխարհագրոլորայինները կասեցրեցին նրանց առաջխաղացումը»: - <b>Էջ 65</b></p>	<p>«Հարյուրավոր մարդիկ, անկախ մասնագիտությունից ու տարիքից, ներկայանում էին զորամաս, ինքնակամ գնում ճակատ: Գյուղացիները տրամադրում էին փոխադրամիջոցներ և սննդամթերք, մտնում աշխարհագրոլորայինների շարքերը: Այդ օրերին տիրում էր ազգային կատարյալ միասնություն: Անկախ քաղաքական համոզմունքներից, ժողովուրդը ոտքի էր ելել կենաց ու մահվան մարտի, հանուն հայրենիքի, հանուն գոյատևման ու ազգային արժանապատվության»: - <b>Էջ 228-229</b></p>

Ժ. (Ժ-Զ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
Վ.Վ. համահայկական հանդես

<p>Այդ հերոսամարտին ակտիվ մասնակցություն ունեցան կանայք և աղջիկները, երեխաներն ու ծերերը: <b>Դա իսկական ժողովրդական պատերազմ էր: - էջ 65</b></p>	<p>«Հայրենիքի պաշտպանությունը համաժողովրդական գործ էր, այն կուսակցական պատկանելություն և սոցիալական շերտավորում չէր ճանաչում: Դա <b>հայերի հայրենական պատերազմն էր»:</b> էջ 228</p>
<p>Այսպիսով, հայ ժողովրդի խիզախ դիմադրության շնորհիվ թուրքական զավթիչներին չհաջողվեց գրավել Երևանը՝ Երկրի կենտրոնը: Սարդարապատի ճակատամարտը հայ ժողովրդի կենաց և մահվան կռիվն էր: Այն բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Այդ հերոսամարտն զգալի օգնություն էր նաև Բաքվի կոմունային, քանի որ հսկայական ուժեր ու ժամանակ խլելով թշնամուց, դանդաղեցրեց թուրքական բանակի արշավանքը դեպի Բաքու: - էջ 66</p>	<p>«Սարդարապատը, Բաշ Ապարանը Ղարաքիլիսան հայ ժողովրդի աննկուն կամքի, անկախության համար մինչև վերջ ազգովին պայքարելու պատրաստակամության և վճռականության վկաները եղան: Հայ ժողովրդի Մայիսյան հաղթանակները վիժեցրեցին հայերին ոչնչացնելու երիտթուրքական ծրագիրը»:- էջ 231</p>

<p><b>Աղյուսակ 3.</b></p>	
<p><b>Բաթումի պայմանագրի մասին</b></p>	
<p><b>Հայ ժողովրդի պատմություն (9-10), 1989</b></p>	<p><b>Հայոց պատմություն (7-8), 1994</b></p>
<p><b>Շ. Ռ. Հարությունյան (պատմ. գիտ. դոկտոր)</b></p>	<p><b>Հ. Ա. Ավետիսյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս)</b></p>
<p>Չնայած հայ ժողովրդի հերոսական դիմադրությանը, դաշնակցականների գլխավորած Հայոց ազգային խորհուրդի պատվիրակությունը 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքեց Հայաստանի համար ծանր պայմանագիր, որով Թուրքիային էր անցնում Արևելյան Հայաստանի տարածքի զգալի մասը: - էջ 67</p>	<p>«1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքեց հաշտության պայմանագիրը Հայաստանի և Թուրքիայի միջև: Պայմանները խիստ ծանր էին Հայաստանի համար: Թուրքիային էին անցնում Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասը, Հայաստանին մնում էր ընդամենը 12 հզ. քառ. կիլոմետր տարածք»:- էջ 232</p>
<p>Բաթումի պայմանագիրն ուներ բացահայտ հակասովետական բնույթ: Այն առաջին հերթին ուղղված էր Բաքվի կոմունայի դեմ: Դաշնակցականները համաձայնվեցին, որ թուրքական զորքերը Հայաստանի վրայով անցնեն Ադրբեջան՝ Բաքվի կոմունայի վրա հարձակվելու համար, ինչպես նաև Բաքվից դուրս բերելու հայկական ազգային զորամասերը, որոնք կռվում էին թուրքերի և անգլիացիների դեմ: - էջ 67</p>	<p>«Հայաստանի հանրապետությունն ունենալու էր սահմանափակ թվով զորք, երկաթուղիների վերհսկողությունն անցնում էր Թուրքիային: Թուրքիային իրավունք էր վերապահվում Հայաստանի վրայով զորք տեղափոխել Ադրբեջան: Բաքվից դուրս էին բերվելու և ցրվելու հայկական ազգային զորամասերը, որոնք կազմում էին Բաքվի պաշտպանության հիմնական կորիզը»:- էջ 232</p>

<p>Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը, օգտվելով ստեղծված իրադրությունից, զավթեցին իշխանությունը, որը ծանր հետևանքներ ունեցավ երկրամասի, առաջին հերթին՝ Հայաստանի աշխատավորության համար: - էջ 68</p>	<p>«Մոտ 18.000 հայ մարտիկներ, որոնք ընդգրկված էին 4 բրիգադներում, 22 գումարտակներում, քաջ գիտակցում էին, որ պաշտպանելով Բաքուն, պաշտպանում են Ղարաբաղը, Երևանը, Սուրբ Էջմիածինը: Իսկ դրանց գրավումը թուրքերի կողմից կնշանակեր հայ ժողովրդի համար կործանում, աշխարհագրական քարտեզից Հայաստանի վերացում»: - էջ 232</p> <p>«Թուրքերը Բաքու ներխուժեցին 1918 թ. սեպտեմբերի 15-ին, անգլիական ուժերի կողմից դիրքերը լքելուց հետո: Թուրքերը ապրեցին եռօրյա «խրախճանք»՝ կոտորելով ու թալանելով անզեն հայերին»: - էջ 233</p>
---	---

Աղյուսակ 4.	
Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակումը	
Հայ ժողովրդի պատմություն (9-10), 1989	Հայոց պատմություն (7-8), 1994
Շ. Ռ. Հարությունյան (պատմ. գիտ. դոկտոր)	Վ. Ն. Ղազարյան (պատմ. գիտ. դոկտոր)
<p>«Անդրկովկասի կառավարող բուրժուազգայնական կուսակցությունները, թեև Սովետական Ռուսաստանի և երկրամասում աճող հեղափոխական շարժումների դեմ միավորվել էին, սակայն արտաքին և ներքին քաղաքականության մի շարք հարցերում սուր տարաձայնություններ ունեին: Այդ պատճառով էլ Անդրկովկասյան սեյմում միաբանություն չկար: Նա ապրում էր ներքին ճգնաժամ: Մյուս կողմից էլ օտարերկրյա զավթիչները, առաջնորդվելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, առաջ քաշեցին Անդրկովկասում երեք «անկախ» հանրապետություններ կազմակերպելու հարցը»: - էջ 69-70</p>	<p>«Հայերի զանգվածային սխրանքը, հայրենիքի պաշտպանության միասնական կամքը ստիպեցին թուրքերին հաշվի նստել նրանց հետ: Հաղթանակը պետականության վերականգնման, Հայաստանի Հանրապետության ստեղծման նախադրյալներ ստեղծեց, հարթեց հայ ժողովրդի վերածննդի ուղին» - էջ 231</p>
<p>«1918 թ. մայիսի վերջին Անդրկովկասյան սեյմը կազմալուծվեց: Մայիսի 28-ին Թիֆլիսում Հայոց ազգային խորհուրդը Հայաստանը հռչակեց «անկախ», ապա կազմվեց Հայաստանի բուրժուական հանրապետության կառավարությունը, որի գլուխ կանգնած էին դաշնակցական կուսակցության պարագլուխները»: - էջ 70</p>	<p>«Հայաստանի անկախ հանրապետությունը հռչակվեց Անդրկովկասի դաշնակցային հանրապետության փլուզումից հետո, 1918 թ. մայիսի 28-ին: Դա պատմության ծանրագույն մի ժամանակաշրջան էր, միաժամանակ ազգային զարթոնքի և հույսերի ժամանակաշրջան»: - էջ 231</p>

<p>«[Դ]աշնակցականներին չհաջողվեց կազմակերպել անկախ և կայուն պետականություն»: - <b>էջ 70</b></p> <p>«Հայաստանի անկախության հռչակումը ձևական բնույթ ուներ: Դրանով միայն հաստատվեց բուրժուազգայնական դաշնակցության դիկտատուրան, որը փաստորեն ղեկավարվում էր օտարերկրյա իմպերիալիստների կամքով»: - <b>էջ 70</b></p>	<p>«Հայոց պետականության վերականգնումը դարավոր իղձն էր մի հինավուրց ժողովրդի, որն այն կորցրել էր ավելի քան 500 տարի առաջ և դժնդակ պայմաններում պայքարում էր հանուն անկախության, սեփական լեզվի, մշակույթի պահպանման: Ահա թե ինչու ժողովուրդը պաշտպանում էր ազգային անկախ պետականության վերականգնման գաղափարը, պայքարով, արյունով ու զոհերով նվաճված պետականությունը: Հայկական անկախ պետականության փաստն ի լուր ամբողջ աշխարհի հունիսի սկզբին հայտնեցին Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը, վարչապետ Հ. Քաջազունին, արտաքին գործոց նախարար Ա. Խատիսյանը»: - <b>էջ 231-232</b></p>
---	---

<b>Աղյուսակ 5.</b>	
<b>Մայիսյան ապստամբությունը</b>	
<b>Հայ ժողովրդի պատմություն (9-10), 1989</b>	<b>Հայոց պատմություն (7-8), 1994</b>
<b>Շ. Ռ. Հարությունյան (պատմ. գիտ. դոկտոր)</b>	<b>Վլ. Ն. Ղազախեցյան (պատմ. գիտ. դոկտոր)</b>
<p>«Չնայած երկրում հաստատված դաժան ռեժիմին, Հայաստանի աշխատավոր զանգվածները վճռական պայքար էին մղում դաշնակցականների հակաժողովրդական կառավարության դեմ: Այդ պայքարը ղեկավարում էին կոմունիստները»: - <b>էջ 74</b></p>	<p>«Իրենց հայացքներով, քաղաքական ծրագրով ու գործելակերպով առանձնանում էին բոլշևիկները: Նրանք պատկանում էին սոցիալիստական շարժման ամենահեղափոխական (ծայրահեղական) թևին, կողմնակից էին իշխանության նվաճմանը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմանը բռնության միջոցով»: - <b>էջ 245</b></p>
<p>1919 թվականի մայիսի 1-ին Երևանում լույս տեսավ միության օրգան «Սպարտակ» թերթը, որը, սակայն, առաջին համարից հետո անգլիական զավթիչների պահանջով փակվեց»: - <b>էջ 75</b></p>	<p>«Հայ բոլշևիկները համազգային խնդիրների լուծման ժամանակ չէին գործակցում մյուս քաղաքական ուժերի հետ: Նրանք նախատեսում էին դրսի ուժերի օգնությամբ հարմար պահին գրավել իշխանությունը, ինչպես և տեղի ունեցավ 1920 թ.»: - <b>էջ 245</b></p> <p>«Հայ բոլշևիկների ազդեցության տակ էր գտնվում 1919 թ. ստեղծված «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը, որը դարձավ Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության հիմքը: Հայ կոմունիստները և սպարտակյանները <b>գործում էին ազատ պայմաններում</b>: Նրանց գործունեությունը, սակայն, արգելվեց 1920 թ. Մայիսյան ապստամբությունից հետո»: - <b>էջ 246</b></p>



<p>«Կառավարությունը հեղափոխական շարժումները ճնշելու համար զենքի էր դիմում»: - էջ 76</p>	<p>«Կառավարությունը բանակցությունների մեջ մտավ բոլշևիկների հետ, նրանց ապստամբությունից հետ պահելու համար, սակայն ապարդյուն»:- էջ 247</p>
<p>«11-րդ բանակը, մաքրելով Հյուսիսային Կովկասը սպիտակգվարդիական բանդաներից, 1920 թ. գարնանը մոտեցավ Անդրկովկասի սահմաններին: Կարմիր բանակի հաղթանակը բուռն ոգևորություն առաջացրեց Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների մեջ, որոնք հերոսական պայքար էին մղում իրենց ազատագրման համար: Անդրկովկասի աշխատավորները դիմեցին կարմիր բանակին՝ խնդրելով իրենց օգնությունը ցույց տալ մենշևիկների, դաշնակցականների ու մուսավաթականների իշխանությունը տապալելու գործում»:- էջ 77-78</p>	<p>«Հաջողության գրավական կարող էր լինել միայն դրսի միջամտությունը: Այդ կարող էին կատարել բոլշևիկյան Ռուսաստանի 11-րդ բանակի զորամասերը, որոնք տվյալ պահին նման առաջադրանք չունեին, ավելին, մեկնել էին Անդրկովկասից: Հայաստանի բոլշևիկները, իրենց հերթին, համապատասխան պայմանավորվածություն ձեռք չէին բերել»:- էջ 248</p>
<p>«Ալեքսանդրապոլի ամբողջ կայագորը՝ իր սպայական կազմով, ենթարկվեց նոր իշխանությանը: Դա պետք է բացատրել այն բարձր հեղափոխական տրամադրությամբ, որով համակվել էր գործը»:- էջ 79-80</p>	<p>«Նշանակված օրը՝ մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում Հայաստանի ՌՀԿ-ն հայտարարեց, որ իշխանությունը վերցրել է իր ձեռքը: Այդ տեղի ունեցավ առանց արյուն թափելու, քանի որ կառավարական զորքերը չդիմադրեցին»: էջ 247</p>
<p>«Հայաստանի աշխատավորության հեղափոխական պոռթկումներից սարսափած՝ դաշնակցականները հարձակման անցան կոմունիստների դեմ: Սակայն նրանք անգոր էին կանգնեցնելու երկրում ծավալված հեղափոխական շարժման նոր, հզոր թափը»:- էջ 78</p> <p>«Ապստամբությունը ճնշելու գործում դաշնակցական կառավարությունը հենվեց երկրի բոլոր հակահեղափոխական կազմակերպությունների, մաուզերիստների, խմբապետների, կուլակների և հոգևորականության վրա: Նա օգնության խնդրանքով դիմեց ինպերիալիստական պետություններին»:- էջ 82</p> <p>«Մայիսյան ապստամբությունը արյան մեջ խեղդելու համար դաշնակցականների կառավարությանը օգնեցին նաև անգլո-ամերիկյան ինպերիալիստները»:- էջ 84</p>	<p>«Կառավարությունն Ալեքսանդրապոլի դեմ Սեպուհի հրամանատարությամբ ուղարկեց զինվորական ուժեր, որոնց մեջ կային մեջ թվով արևմտահայեր: Նա վերջնագիր ներկայացրեց ապստամբության ղեկավարությանը՝ չդիմադրել և անձնատուր լինել: Վերջնագիրը քննարկվեց մայիսի 13-ի երեկոյան: Ի վերջո, ապստամբության ղեկավարները որոշեցին չդիմադրել: Հաջորդ օրվա առավոտյան Ալեքսանդրապոլում վերականգնված էր օրինական իշխանությունը, իսկ ապստամբների ղեկավարները դիմեցին փախուստի, ոմանք ձերբակալվեցին»:- էջ 247-248</p>

<p>«Հարձակողական գործողություններ ծավալելու փոխարեն ապստամբները մեծ մասամբ դիմում էին պաշտպանության, իսկ պաշտպանվելը, ինչպես սովորեցնում է մարքսիզմ-լենինիզմը, գինված ապստամբության մահն է»: - էջ 83</p>	<p>«Ապստամբները քայլերի չդիմեցին՝ հաջողություններն ամրապնդելու համար: Ապստամբության հենց սկզբում դրսևորվեց նրա անկազմակերպվածությունը, թույլ դեկավարությունը, որը և անդրադառնալու էր նրա ելքի վրա»: - էջ 247</p> <p>«Ապստամբությունը դատապարտված էր անհաջողության, որովհետև այն թույլ էր, անկազմակերպ, ցրված: Հայաստանում ապստամբության հաղթանակի համար նախադրյալներ չկային»: - էջ 248</p>
<p>«Աշխատավորները մեկ անգամ ևս համոզվեցին, որ դաշնակցականների և նրանց օտարերկրյա տերերի ծանր լծից իրենց ազատությունն անխզելիորեն կապված է ռուս ժողովրդի, նրա բանվոր դասակարգի եղբայրական օգնության հետ, Անդրկովկասի ժողովուրդների համատեղ պայքարի հետ»: - էջ 84</p>	<p>«Բոլշևիկների նախաձեռնությամբ սկսված Մայիսյան ապստամբությունը չկարողացավ հասնել հաղթանակի: Այն միայն թուլացրեց երկրի ներքին դրությունը՝ վնաս հասցնելով Հայաստանի Հանրապետության շահերին»: - էջ 248</p>

<b>Աղյուսակ 6.</b>	
<b>Հայաստանի Հանրապետության անկումը</b>	
<b>Հայ ժողովրդի պատմություն (9-10), 1989</b>	<b>Հայոց պատմություն (7-8), 1994</b>
<b>Շ. Ռ. Հարությունյան (պատմ. գիտ. դոկտոր)</b>	<b>Վլ. Ն. Ղազարեցյան (պատմ. գիտ. դոկտոր)</b>
<p>«Սովետական Ռուսաստանի կառավարությունը, նպատակ ունենալով Հայաստանը դուրս բերել Աստանտի ձիրաններից և ժողովրդին փրկել թուրքական հոշոտումից, 1920 թ. մայիսին դաշնակցական կառավարությանն առաջարկեց դիվանագիտական բանակցություններ վարել: Բանակցություններում, որոնք տեղի ունեցան Մոսկվայում, հիմնականում շոշափում էին Սովետական Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախության ճանաչման, հայթորքական հարաբերությունների և հայկական հողերի վերամիավորման, Ռուսաստանում բնակվող հայ գաղթականությանը Արևելյան Հայաստան տեղափոխելու և այլ հարցեր: Սակայն դաշնակցական կառավարության մեղքով շուրջ երկու ամիս տևած Մոսկվայի բանակցություններն արդյունք չտվեցին»: - էջ 86</p>	<p>«1920 թ. մայիսին Մոսկվա մեկնեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը խորհրդարանի անդամ, գրող Լևոն Շանթի նախագահությամբ: Հայաստանի կառավարությունը նախապես Մոսկվային տեղեկացրեց նրա կողմից Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչելու անհրաժեշտության մասին: Միաժամանակ հայտնեց, որ ցանկանում է բարեկամական ամուր հարաբերություններ հաստատել հայ և ռուս ժողովուրդների միջև և կնքել համապատասխան պայմանագիր: Բանակցությունները շոշափում էին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բնագավառները: Տնտեսական հարցերը լուծվում էին համեմատաբար հեշտությամբ, իսկ քաղաքականը՝ ոչ»: - էջ 265</p>

<p>«Հունիսին ռազմական միջադեպ տեղի ունեցավ Հայաստանի և Թուրքիայի միջև: Սովետական Ռուսաստանի կառավարությունը իր պատրաստակամությունը հայտնեց օգնել երկու երկրների միջև ծագած միջադեպը վերացնելու և պատերազմը կանխելու գործում: Մակայն դաշնակցականները մերժեցին սովետական կառավարության այդ խաղաղասիրական առաջարկը: Դաշնակցական կառավարությունը չգնահատեց սովետական կառավարության այն միջոցառումների բացառիկ կարևոր նշանակությունը, որոնք ուղղված էին սանձահարելու թուրքական ագրեսորներին»: – էջ 86</p>	<p>«Քենալական Թուրքիայի զորքերը հարձակվել էին Հայաստանի վրա, ռուս-թուրքական մերձեցումն ավելի էր սերտացել»: – էջ 267</p> <p>«Հոկտեմբերի 20-ին Մոսկվայի հայկական ներկայացուցիչն իր կառավարությանը գրում էր, թե «մեր ընդհանուր սպավորությունն այնպիսին է, որ Հայաստանի խորհրդայնացումը դառնալու է մոտակա ապագայի գործ»: Դրան նախորդել էր ՌԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հոկտեմբերի 14-ի որոշումը Հայաստանին ցույց տրվող օգնության մասին՝ երկրում խորհրդային իշխանություն հաստատվելու դեպքում: Մյուս կողմից, շարունակվում էր թուրքական արշավանքը Հայաստանի դեմ, որը կրում էր պարտություն պարտության հետևից, իսկ Ռուսաստանը օգտվելու էր Հայաստանի համար ստեղծված անտանելի վիճակից՝ նրա խորհրդայնացման ծրագիրն իրականացնելու համար»: – էջ 268</p>
<p>«Դաշնակցականների կառավարությունը, անկարող լինելով սեփական ուժերով կռվել թշնամու դեմ, դիմեց Անտանտի տերությունների օգնությանը, սակայն վերջիններս, դրժելով իրենց տված խոստումները, հրաժարվեցին որևէ օգնություն ցույց տալուց: Լինելով անհեռատես քաղաքագետներ, դաշնակցականները չէին կարողանում ըմբռնել, որ իմպերիալիստական տերությունները շահագրգռված էին թուրքական ինտերվենցիայով Անդրկովկասում և որ հայ ժողովրդի ողբերգական ծանր վիճակի համար այդ «քաղաքակիրթ» դաշնակիցները պակաս մեղավոր չէին»: – էջ 87</p>	<p>«1920 թ. օգոստոսի 10-ին, ելնելով Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումից, Թիֆլիսում համաձայնություն կնքվեց Հայաստանի և Ռուսաստանի միջև: [...] Այս համաձայնության ստորագրումը կարևոր, չնայած ոչ վճռական քայլ էր Հայաստանի Հանրապետության ռուսական կողմնորոշման առումով, որն, իհարկե, բացասաբար ընդունվեց դաշնակից երկրների կողմից: Չնայած այդ փաստին, Հայաստանի կառավարությունը շարունակում էր հետևել արևմտյան կողմնորոշմանը: Դա շուտով նոր հիասթափություններ առաջ բերեց հայ ժողովրդի մեջ, նրան վերջնականապես միայնակ թողնելով Թուրքիայի դեմ մղվող պայքարում»: – էջ 266</p> <p>«Նորաստեղծ հայկական պետությունը, չունենալով դիվանագիտական փորձ և համապատասխան կադրեր, չկարողացավ ձկուն լինել միջազգային բարդ իրադրության պայմաններում: Մինչև վերջին պահը (պարտությունը թուրք-հայկական պատերազմում) կառավարությունը հետևում էր արևմտյան կողմնորոշմանը, շարունակում էր սպասել «լիակատար հիասթափությանը» (Ալ. Խատիսյանի արտահայտությունը) եվրոպական դաշնակից տերություններից և ԱՄՆ-ից, չնայած ակնհայտ էր, որ նրանք ցանկություն չունեին օգնության գալու Հայաստանին, իրականացնելու Սևրի պայմանագրով նախատեսված որոշումները»: – էջ 275</p>

<p>«Անտանտի իմպերիալիստներն իրենց հակասովետական պլաներն իրականացնելու նպատակով օգնում են քեմալականներին և որ այդ քաղաքականության գոհերից մեկն էլ Հայաստանն է դառնալու»: - էջ 87</p> <p>«Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու միակ ելքը Հայաստանում սովետական իշխանության հաստատումն էր: Այդ նպատակին էին ուղղված Հայաստանի կոմունիստական կուսակցության բոլոր ջանքերը»: - էջ 89</p>	<p>«Հարց է ծագում՝ կամ, արդյոք, այլընտրանք, ելք պետությունը փրկելու համար: Պատասխանը կարող էր լինել միանշանակ՝ ձևավորված բոլշևիկյան-քեմալական մերձեցման և հարաբերությունների պայմաններում բացառվում էր Հայաստանի Հանրապետության հետագա գոյատևումը, երկրի խորհրդայնացումն անխուսափելի էր»: - էջ 275</p>
---	--

Աղյուսակ 7	
Փետրվարյան ապստամբությունը	
Հայ ժողովրդի պատմություն (9-10), 1989	Հայոց պատմություն (7-8), 1994
Շ. Ռ. Հարությունյան (պատմ. գիտ. դոկտոր)	Վլ. Ն. Ղազարյան (պատմ. գիտ. դոկտոր)
<p>Դաշնակցականների <b>փետրվարյան հակահեղափոխությունը</b> - էջ 96</p>	<p><b>Քաղաքացիական կռիվները</b> - էջ 280</p>
<p>«Դաշնակցականները չէին հաշտվել իրենց <b>անփառունակ վարչակարգի</b> տապալման փաստի հետ: Նրանք գործադրում էին բոլոր միջոցները հին կարգերը վերականգնելու համար: Հույս ունենալով անհրաժեշտ օգնություն ստանալ <b>օտարերկրյա իմպերիալիստներից</b>, վրացական մենշևիկներից և <b>նույնիսկ Թուրքիայից, դաշնակցականները</b>, հենվելով երկրի <b>հակահեղափոխական</b> ուժերի վրա, 1921 թ. փետրվարի խռովություն բարձրացրին սովետական իշխանության դեմ»: - էջ 96</p>	<p>«Հայաստանում <b>քաղաքացիական կռիվները սկսվեցին տարերայնորեն</b> և ընդգրկեցին մի շարք շրջաններ [...]: <b>Ժողովրդական զինված պայքարի գլուխ էին կանգնել</b> նախկին խմբապետներ Սարտիրոսը, Կարո Սասունին, Խնկոն և ուրիշները: Փետրվարի 16-18-ը ապստամբները հիշյալ շրջաններում իշխանությունը վերցրին իրենց ձեռքը և շրջապատեցին մայրաքաղաք Երևանը: Միայն այդ պահից Դաշնակցություն կուսակցությունը ստանձնեց ապստամբության ընդհանուր ղեկավարությունը»: - էջ 280-281</p> <p>«Բացառվեց Վրաստանի հնարավոր օգնությունը, նրա խորհրդայնացումով: Օգնություն չստացվեց նաև Թուրքիայի կողմից, որը չէր վստահում դաշնակցականներին:</p> <p>Քաղաքացիական պատերազմը դարձել էր անխուսափելի»: - էջ 281</p>
<p>«Գրաված շրջաններում նրանք բռնի ուժով վերականգնում էին կողոպուտի, կամայականությունների ու տեռորի դաժան ռեժիմը»: - էջ 97</p>	<p>«Ապստամբությունը հենվում էր ժողովրդական լայն զանգվածների աջակցության վրա»: - էջ 281</p>

<b>Աղյուսակ 8</b>	
<b>Խորհրդային դասագիրք</b>	<b>Հետխորհրդային դասագիրք</b>
<b>«Փրկչի» կերպարը</b>	
<p>«Թե ինչպիսի խանդավառ հավատով էին լցված ապստամբները ռուս ժողովրդի ու կարմիր բանակի նկատմամբ» (էջ 81):</p> <p>«Աշխատավորները մեկ անգամ ևս համոզվեցին, որ դաշնակցականների և նրանց օտարերկրյա տերերի ծանր լծից իրենց ազատությունն անխզելիորեն կապված է ռուս ժողովրդի հետ, նրա բանվոր դասակարգի եղբայրական օգնության հետ, Անդրկովկասի ժողովուրդների համատեղ պայքարի հետ» (էջ 84):</p> <p>«Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու միակ ելքը Հայաստանում սովետական իշխանության հաստատումն էր» (էջ 89):</p> <p>«Եղբայրական ռուս ժողովուրդը օգնության ձեռք մեկնեց մահվան ճիրաններում գտնվող Հայաստանի աշխատավորությանը» (էջ 90):</p> <p>«Սովետական կարգերի հաստատումը բուժն խանդավառություն և ցնծություն առաջացրեց Հայաստանի աշխատավոր զանգվածների մեջ» (էջ 94):</p> <p>«[Հ]այաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ տապալեցին դաշնակցականների իշխանությունը և հաստատեցին սովետական կարգեր» (էջ 94):</p> <p>«Հարյուրավոր ռուս զինվորներ ու սպաներ հերոսաբար զոհվեցին Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվներում, հայ ժողովրդի ազատության համար» (էջ 99):</p>	<p>«Անգլիան, Ֆրանսիան և մյուս պետություններն աստիճանաբար հրաժարվեցին Հայաստանին վերաբերող իրենց ստորագրություններից: Նոր՝ քենալական Թուրքիան չճանաչեց օսմանյան Թուրքիայի ստորագրած Սևրի պայմանագիրը, և Անգլիայի ու Ֆրանսիայի հետ հարաբերություններ հաստատեց նոր հիմունքներով» (էջ 262):</p> <p>«Դաշնակիցները փաստորեն խաբեցին հայ ժողովրդին: Նրանց հայասիրական կեցվածքը միայն ձևականություն էր: Իզուր ու անհիմն էին այն հույսերը, որ հայ ժողովուրդը և հատկապես կառավարությունը կապուրմ էին արևմուտքի հետ» (էջ 263):</p> <p>«Պատերազմը մոտենում էր ավարտին, հայկական զորքի վերջնական պարտությամբ: Անընդհատ դիմում էր արվում դաշնակից երկրների ներկայացուցիչներին՝ Հայաստանին օգնություն ցույց տալու համար: Սակայն դաշնակիցները լռում էին և օգնություն ցույց տալու տրամադրություն չէին դրսևորում, կամ ուղղակի հրաժարվում էին օգնել» (էջ 270):</p> <p>«Անգլիան, Ֆրանսիան, մյուս դաշնակից երկրները և ԱՄՆ-ը վերջնականապես լքեցին Հայաստանին, թողնելով նրան միայնակ և անօգնական» (էջ 270):</p> <p>«Մանավանդ, որ Հայաստանի դաշնակիցները բնավ մտադրություն չունեին օգնության ձեռք մեկնելու: Դա պատրաստ էր անել միայն Խորհրդային Ռուսաստանը» (էջ 272):</p> <p>«Մինչև վերջին պահը (պարտությունը թուրք-հայկական պատերազմում) կառավարությունը հետևում էր արևմտյան կողմնորոշմանը, շարունակում էր սպասել «լիակատար հիասթափությանը» (Ալ. Խատիսյանի արտահայտությունը) եվրոպական դաշնակից տերություններից և ԱՄՆ-ից, չնայած ակնհայտ էր, որ նրանք ցանկություն չունեին օգնության գալու Հայաստանին, իրականացնելու Սևրի պայմանագրով նախատեսված որոշումները» (էջ 275):</p>

Փ (ԺԶ) քաարի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

<b>Աղյուսակ 9</b>	
Խորհրդային դասագիրք	Հետխորհրդային դասագիրք
<b>Հարցեր և առաջադրանքներ</b>	
<b>Գերմանաթուրքական ինտերվենցիան Անդրկովկասում: Հայ ժողովրդի պայքարը թուրքական զավթիչների դեմ – էջ 64-68:</b>	<b>Հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտը – էջ 228-233:</b>
<p>1 (3). Ինչպիսի նշանակություն ունեցավ Սարդարապատի հերոսամարտը հայ ժողովրդի համար:</p> <p>2 (4). Ինչ է պատկերում Սարդարապատի հերոսամարտին նվիրված հուշակառույցի մուտքի ձևավորումը:</p> <p>3 (5). Որո՞նք են Անդրկովկասում սովետական կարգերը ու իստատավելու պատճառները:</p> <p>4 (6). Տեսրում գրեք և բացատրեք հետևյալ բառերի իմաստը՝ կայագոր, սեյմ, կոմունա:</p>	<p>1 (2). Ինչ հանգամանքներ նպաստեցին թուրքերի 1918 թ. առաջխաղացմանը:</p> <p>2 (3). Ո՞րն է Մայիսյան հերոսամարտի պատմական նշանակությունը:</p> <p>3 (4). Երբ հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Ինչ նշանակություն ունեցավ պետականության վերականգնումը:</p> <p>4 (5). Ներկայացրեք Բաթումի հաշտության պայմանագիրը:</p> <p>5 (6). Ինչո՞ւ Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը չընդունեց Բաթումի հաշտության պայմանագիրը:</p>
<b>Աղյուսակ 10</b>	
Խորհրդային դասագիրք	Հետխորհրդային դասագիրք
<b>Հարցեր և առաջադրանքներ</b>	
<b>Մայիսյան ապստամբությունը Հայաստանում – էջ 74-85:</b>	<b>1920 թ. մայիսյան ապստամբությունը – էջ 246-248:</b>
<p>1. Ովքեր էին Արմենկոմի անդամները:</p> <p>2. Ովքեր հիմնադրեցին «Սպարտակ» միությունը:</p> <p>3. Ինչ լոզունգներով անցան մայիսյան ցույցերը Հայաստանում:</p> <p>4. Ինչպե՞ս պահեցին իրենց Մայիսյան ապստամբության ղեկավարները մահից առաջ:</p> <p>5. Ինչո՞ւ պարտվեց Մայիսյան ապստամբությունը:</p> <p>6. Քարտեզի վրա ցույց տվեք ապստամբության վայրերը:</p> <p>7. Ինչ է նշանակում Արմենկոմ:</p>	<p>1. Ինչ կուսակցություններ էին գործում Հայաստանի Հանրապետությունում 1918/1920 թթ.: Ինչ տարբերություններ և նմանություններ կային նրանց միջև: Ո՞րն էր նրանցից առավել հեղինակավորը և ազդեցիկը հասարակության մեջ և ինչո՞ւ:</p> <p>2. Ինչո՞ւ իշխանության հասնելու համար հայ բոլշևիկները դիմեցին զինված պայքարի: Հնարավոր էր հասնել իշխանության խաղաղ ճանապարհով (ընտրությունների միջոցով):</p> <p>3. Ինչպիսի միջոցների դիմեց կառավարությունը ապստամբությունը ճնշելու համար:</p> <p>4. Ապստամբության պարտության պատճառներից մեկն էլ այն էր, որ ժողովուրդը չաջակցեց: Ինչո՞ւ: Արդյո՞ք արդարացված էր կառավարության խստությունը ապստամբության ղեկավարների նկատմամբ:</p>

<b>Աղյուսակ 11</b>			
<b>Խորհրդային դասագիրք</b>		<b>Հետխորհրդային դասագիրք</b>	
<b>Հարցերը</b>	<b>Քանակը</b>	<b>Հարցերը</b>	<b>Քանակը</b>
<i>Ինչպե՞ս</i>	6	Ինչպե՞ս	1
<i>Ինչպիսի՞նք</i>	11	Ինչպիսի՞նք	3
Ինչպիսի՞նք էր	1	Ինչպիսի՞նք էր	1
Ինչո՞ւ	2	<i>Ինչո՞ւ</i>	11
Ի՞նչ է	2	Ի՞նչ է	1
<i>Ի՞նչ</i>	3	<i>Ի՞նչ</i>	18
Որո՞նք են	2	<i>Որո՞նք էին</i>	8
Ովքե՞ր	2	-	-
Ե՞րբ	1	Ե՞րբ	1
		Ո՞րն է/էր	4
		Ինչո՞վ	6
		Ո՞ր	3
		Հնարավո՞ր էր	1
		Արդյո՞ք	1

Ժ (ԺԶ) փաթի, թիվ 4 (64), Խոկարներ-դեկտեմբեր, 2018

ՎԼՎ համահայկական հանդես



Ժենյա Ա.Քալանթարյան  
*Բանաս. գիյր. դոկտր.*

## 1918–1921 ԹԹ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Ականատես գրողների ստեղծագործություններում

Մուտք

**Բանալի բառեր** – Հայաստանի Հանրապետություն, դաշնակցականներ, բոլշևիկներ, պատերազմ, անկախություն, թուրքեր, թշնամի, ժողովուրդ, նացիոնալ ռոմանտիզմ, հեղափոխություն:

Հայոց պատմության 1918–1921 թվականների ժամանակահատվածի վերաբերյալ պատմագրությունը հաճախ հակասական ու իրարամերժ մեկնաբանություններ է տալիս: Ուստի պատմությանը մոտենալու համար մենք կարող ենք դիմել լրացուցիչ, ոչ պակաս կարևոր մի աղբյուրի: Դա գրականությունն է: Գրողն իր ժամանակի տարեգիրն է, եթե անգամ գրում է ուրիշ ժամանակների մասին: Եվ հաճախ նա իր ժամանակի մասին ասում է շատ ավելին, քան պատմիչն ու պատմաբանը:

1918–1921 թթ. լայն արձագանքը կա գրականության մեջ, բայց նույնիսկ մեկ ծավալուն հոդվածի շրջանակներում հնարավոր չէ ընդգրկել խնդրին վերաբերող ամբողջ գրականությունը, նրա բոլոր ենթաշերտերն ու նրբերանգները: Այդ իսկ պատճառով նշված ժամանակահատվածի վերաբերյալ **ընդհանրական** գաղափար կազմելու նպատակով նպատակահարմար ենք համարում **ընտրել** այն հեղինակների կարևոր երկերը, որոնք 1918–1921 թթ. պատմական իրադարձությունների **ականատեսը, մասնակիցն ու ժամանակակիցն են:**

**Եղիշե Չարենցը, Ստեփան Զորյանը, Կոստան Զարյանը, Նաիրի Զարյանը, Վահան Թոթովենցը, Գուրգեն Մահարին, Լեո Կամսարը** ու թերևս նաև շատ ուրիշներ տարեգրել են իրենց ապրած ժամանակը, գրել վավերական պատմության մասին: Համադրելով նույն երևույթի մասին տարբեր գրողների պատկերները՝ մենք կարող ենք ընդհուպ մոտենալ ձմարտույթ-



յանը: Պատմության դեպքերի գնահատման առումով շատ կարևոր է իրադարձությունները դիտարկել զարգացման շղթայի և պատճառահետևանքային կապերի մեջ: Փորձենք բացել պատմական զարգացման շղթայի մի քանի կարևոր հանգույցներ, որոնք լայնորեն տեղ են գտել գրականության էջերում:

## Ա. Մինչանկախության շրջան

Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասը դուրս մնաց Ռուսաստանի ուղղակի ազդեցությունից: Անդրկովկասյան սեյմը, որը փոխարինեց Անդրկովկասյան կոմիսարիատին, բազմազգ ու բազմակուսակցական մի կառույց էր, որի մեջ մտնում էին վրացիներ, հայեր, կովկասյան թաթարներ (ադրբեջանցիներ), լեզգիներ, կովկասյան այլ ազգերի, ինչպես նաև տարբեր կուսակցությունների՝ մենշևիկների, մուսավաթականների, դաշնակցականների, կադետների, էսեռների ներկայացուցիչներ: Այս հանգամանքը ենթադրում էր շահերի լուրջ բախում թե՛ ազգային, թե՛ կուսակցական առումով: Քանի որ հայերի թիվը վրացիների և թաթարների համեմատ փոքր էր, ուստի վերջիններս փորձում էին իրենց հարցերը լուծել հայերի հաշվին: Կար նաև արտաքին ուժեր ճնշում: Թուրքիան, Անգլիան, Գերմանիան փորձում էին իրենց ազդեցության տակ առնել Անդրկովկասը: Թուրքիան առանձին-առանձին բանակցություններ վարելով վրացիների, մուսավաթական թուրքերի ու հայերի հետ՝ միաժամանակ ռազմական արշավանք սկսեց նրանց դեմ: Այս խառնակ իրավիճակում ամենամեծ կորուստն ունեցան հայերը՝ զրկվելով նաև Անդրկովկասի այն գավառներից, ուր հայեր էին ապրում (Կարս, Արդահան...):

Այս իրադրության առաջին գեղարվեստական արձագանքը կարելի է համարել Ե. Չարենցի «Կապկազ թամաշան», որը լույս է տեսել 1923-ին և կովկասյան համապատկերի ընդգրկման առումով ավելի է համապատասխանում 1918-ի իրադարձություններին: Հակառակ արտաքին պարզունակ, երբեմն նույնիսկ բարբառաժարգոնային լեզվական արտահայտչաձևերին՝ Չարենցը միանգամայն հավաստի է ներկայացնում քաղաքական իրավիճակը և ազգերի, կուսակցությունների ու հասարակության սոցիալական տարբեր շերտերի «խառնուրդը»: Դա երևում է գործող անձերի և թամաշայի մասնակիցների ու հանդիսատեսների թվարկումից. «...մտնում են աղմուկով- հայ, թուրք, ռուս, վրացի, կնյազ, աղամելիք, չարչի, մոլլա, գյուղացի, աղվակատ, կոշկակար, վարժապետ, մուսավաթ, դաշնակ, մենշևիկ, կադետ - ամեն տեսակ մարդիկ»<sup>1</sup>: Նախ հստակեցվում է ժամանակը. Ղարան կանգնում է տակառի վրա և հայտարարում. «Ընկերներ, // Երեկ// Մեր թագավոր Կոլին թոցրել են թախտից//...Ընտրված է ժամանակավոր կառավարություն»: Ընտրած ժանրի պահանջով սեղմելով ասելիքը և չմտնելով մանրամասների մեջ՝ այնուամենայնիվ, Չարենցը պահպանում է դեպքերի հերթականությունը: Թագավորին գահընկեց անելուց հետո Սեյմի նախագահ դառնալու պայքար է սկսվում, և ահա մենշևիկը հայտարարում է՝ «Ես-նախա-

ժ (ՃԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

<sup>1</sup> Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 66-67: Չարենցից հետագա հղումները կատարվում են նույն ակադ. վեցիատորյակից (1962-1967 թթ.), հատորները և էջերը կնշվեն տեղում:

գահ», մուսավաթը հաջորդում է մենշևիկին և հորդորում՝ չհավատալ «իթին» և ձայն տալ մուսավաթին, իսկ դաշնակն առաջարկում է.

**Թուրքին քշենք հալա... ... Առաջ հալա տանք ռեյսին դրսի, Հետո ներսի...**

Յուրաքանչյուր ազգ ունի իր գերխնդիրը: Այդ է պատճառը, որ երբ վրացիներն ու թաթար-ադրբեջանցիները փորձում են Կովկասում իշխանության տեր դառնալ, հայերին առաջին հերթին մտահոգում է թուրքական վտանգը: Հայերը դեռ հոգեբանորեն պատրաստ չեն իշխանությունը վերցնելու, մի երևույթ, որ շարունակվում է նաև Սեյմի քայքայման պահին: Պակաս հետաքրքրական չէ և այն, որ թեև թուրքերը արշավում էին նաև դեպի Բաքու և Թիֆլիս, բայց վրացիներն ու ադրբեջանցիները ձգտում էին նախ՝ ներսում ամրապնդել իրենց դիրքերը: Բոլշևիկներին թամաշայում ներկայացնում են բանվորները, որոնք արտահայտում են ոչ թե ազգային, այլ դասակարգային շահեր և առաջարկում են թագավորից հետո հիմա էլ վռնդել նրա կողմնակիցներին՝ «քեռու տղին, թոռին, ծոռին...»:

Այս իրավիճակում վրացիների մեծ ակտիվության, ադրբեջանցիների նույնքան արագ կողմնորոշվելու պարագայում շատ որոշակիորեն նկատելի էին հայերի վարանումն ու անվճռականությունը: Չարենցը մանրամասների մեջ չի մտնում, բայց կարծես հարևանցի թվարկում է պատճառները: Կարձիկյանը խնդիրներ ունի՝ Էրզրումը, Կարսը, Բաթումը, թուրքը, նեմեցը... Իսկ երբ Գեգեչկորին իրեն հայտարարում է Սաքարթվելոյի կառավարություն, Թոփչիբաշևը՝ Ազրբեյջանի, Կարձիկյանը շվարած հարց է տալիս՝ Իսկ էս... Գեգեչկորին խորհուրդ է տալիս. «Ձեզ մնում է հայտարարել ծովից ծով Հայաստան», ինչը և անում է Կարձիկյանը: Իհարկե, պատմական փաստ է, որ հայերը պատրաստ չէին իրադարձությունների զարգացման նման ընթացքին. Մեծ եղեռնից հետո ստեղծված իրավիճակը, մկրատված հայկական տարածքները, կուսակցական տարածայնությունները և այլ հանգամանքներ թույլ չէին տալիս մտածել անկախության մասին: Ահա թե ինչու ծովից ծով Հայաստանի հիշեցումով Չարենցի սատիրան դառնում է առավել քան ակնհայտ: Չարենցը թվարկում է. «Չեխենկելին Պոլիս գնաց՝ ծախեց Բաթումը, Կարձիկյանը Կարսը տվեց՝ ձեռքին մնաց լիսկած դդումը»: Չարենցի ակնարկը վերաբերում է թուրքերի հետ անջատ-անջատ բանակցությունների ողբալի արդյունքներին: Այսքանից հետո «ծովից-ծով Հայաստան» երազանքը վերածվում է իր հակադրությանը, հնչում է իբրև երգիծանք:

Խիստ սեղմ, հակիրճ, գրեթե հեռագրական ոճով Չարենցը տարեգրում է ժամանակը դառը երգիծանքով: Խաղաղության կոչը ուրախություն չի բերում բանաստեղծին. «Հիմի եկել են, թե՛ պեր-րե-միր-յե»: Ինչու՞: Չորս տարի ժողովուրդը կռվել է ապարդյուն, ոչնչի չի հասել, բացի բազմահազար մարդկանց թափված արյունից, հիմա ասում են՝ «պերյեմիրյե»: Բայց խաղաղության այս կոչից հետո, երկու տողով, առանց նկատելի անցումի, թուուցիկ ակնարկ է արվում հանրապետության ստեղծման մասին. «-Ահարոնյանը գնում է Վերսալ... - Քաջազունին պրեմյեր...»: Չարենցը բավարարվում է այս ակնարկով և շարունակում խաղաղության թեման: Ինչո՞վ է պայմանավորված խաղաղության այս ցանկությունը: Չարենցն ունի իր պատասխանը. մեծ տերություններին հաջողվել է փոքրերի հաշվին վերածնել

աշխարհը, նոր շուկաներ ձեռք բերել, և այժմ հարկ էր ամրապնդել ձեռքբերումը. «Չունքի որ առուտուր չունի Բեռլինի, Փարիզի, Լոնդոնի, Նյու-Յորքի դուքընչին»: Սակայն հայտարարված խաղաղությունը Կովկասում չի իրականանում, որովհետև «... հայ, վրացի, թուրք,- հռչառում են իրար: Ամեն ազգի զինվորի ետևից գողեգող դրանց մեծերը՝ քշում են դրանց առաջ, քշում են իրար վրա...»:

Գործողությունների ընթացքը համապատասխանում է պատմությանը: Արժեքավորն այն է, որ «Կապկազի» ամեն մի անունն ու դեպքերի հիշատակումն ունի իր պատմական հիմքը և թույլ է տալիս վերականգնել իրադարձությունների շղթան: «Երկիր Նայիրի» վեպը Չարենցն սկսել է գրել ավելի վաղ (1921), բայց ավարտել է «Կապկազից» հետո (1924): Ըստ ամենայնի ամենաքաղաքական վեպը մեր նորագույն գրականության մեջ, նույն շրջանին վերաբերող մյուս գրողների գործերի համեմատ ամենահրապարակախոսականն է և գեղարվեստական առումով առավել յուրահատուկը: Ժամանակի իրողությունները գրողը ներկայացնում է կամ քաղաքացիների ասեկոսենների ու բամբասանքի, կամ քաղքենիների կենցաղի ու բարոյականության դիտանկյունով, որը նրան հնարավորություն է տալիս խուսափել հրապարակախոսական ուղղակի գնահատականներից: Վեպի հերոսներն են իրար «մատնում» ու բնութագրում՝ հեղինակի հուշում-միջամտություններով: Ահա այդպիսի միջամտություններից մեկի ժամանակ Չարենցն ասում է. «... որպես Մազուրի Համոյի ուղեղից ելած առտնին գառանցանք՝ գլորվեցին օրերը, տխուր ու աղետաբեր, գլորվեցին և իրականացան 1914,15, 16 թվականները...» (5, 195): Եվ այդ ընթացքում Վանում, Բիթլիսում, Մուշում, Դիարբեքիում, Էրզրումում, Սվազում, Երզնկայում, Գարահիսարում և այլուր, «անապատում ելած միրաժի նման՝ ելավ, գետնահարվեց վերջին պատրանքով շնչավորված հնամյա երազը»: Այսինքն՝ անէացավ երկիր Նայիրին մարմնավորելու դարավոր երազը, և մինչ ազգային ռոմանտիզմի ասպետները երազում էին արյան հատուցում, եկավ «Ռուսական հեղափոխությունը, հազար ինը հարյուր տասնյոթ թվականի փետրվարին» (5, 198): Եվ ապա վիպական գործողությունները հետագա ընթացքի մեջ են մտնում, գրողի հավաստմամբ, 1917 թվականի մարտի 2-ին: Ռուսական ցարի անկումից մինչև Հայաստանի անկախության հռչակումն էլ մինչանկախության այն շրջանն է, որ վիպական հյուսվածքի մեջ մարմին է առնում Նայիրի երկրի ներքին տարածքում, տեղական կոմիտեի ձևավորմամբ և նրա առաջին դեմքերի գործունեությամբ: Պատմականորեն սա համապատասխանում է Անդրկովկասյան սեյմի գոյության ժամանակաշրջանին: Վեպի այս հատվածում Չարենցը օգտագործում է ժողովրդական ասեկոսենների ոճական միջոցը՝ ցույց տալու համար, թե ինչ ներքին պայքար էր գնում հասարակության, գուցե կարելի է ասել՝ ընտրյալ գաղափարախոսների միջև միմյանց վարկաբեկելու ուղղությամբ: Մի կողմում հայտնվում են ազգային գաղափարախոսները՝ այսինքն՝ դաշնակցականները, մյուս կողմում՝ առաջիններին վարկաբեկող և բանակում դասալքություն քարոզող բոլշևիկները և, սրանց արանքում, երկուսին էլ մերկացնող՝ քաղաքի բնակիչները և «տեսքից անմեղ, ներսից սատանա» օրիորդ Սաթոն: Վարկաբեկումն ընթանում է երկու՝ քաղաքական և բարոյական ուղղություններով: Հեղափոխությունից հետո բանտարկված գա-

Ժ (ԺԶ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

վառապետի, այսպես կոչված, միֆական նամակից պարզ է դառնում ազգային գործիչների բարոյական նկարագիրը. «Միթե դուք չէիք, հարգելի Ամն Ամբարձումովիչ, որ լիզում էիք իմ պնակները և բռնում իմ շուբան ամեն անգամ, երբ իմ բնակարանն էիք գալիս...», կամ՝ «...դուք չէիք միթե...որ իմ ստորադաս պաշտոնյա, շրջանի նաչալնիկ Շմերլինգի միջոցով ձեր «Լույսի» պահեստներից արոգներով նավթ էիք ուղարկում մեր և մանավանդ ձեր դարավոր ոսոխին, անօրեններին, և ոսկիներ դիզում մեր ու ձեր եղբայրների թափած ծով արյան գնով...» (5,225): Նույն տրամաբանությամբ կոմիտեի անդամ բժիշկ Սերգե Կասպարիչը նաիրյան գեղեցկուհիներ էր մատակարարում գաղտնի բաժանմունքի վարիչ Անգելենին և «հնարամտությամբ» խեղդում իր խելագարված կնոջը... Այս ամենը Չարենցը մատուցում է ժողովրդի մեջ տարածված բամբասանքի ձևով:

Սակայն չի կարելի մտածել, թե գրողը անողոր է միայն դաշնակցականների նկատմամբ, և բոլշևիկները հեշտ են ազատվում Չարենցի սպանիչ երգիծանքից: Նույն այդ ժողովուրդը և մանավանդ նոր ձևավորված կոմիտեի անդամները Կարո Դարայանին, Մարութե Դրաստամատյանին ու նրանց համակիրներին, որոնք հղացված են իբրև, կարելի է ասել, չքացահայտված բոլշևիկներ, և որոնք անվանվում են ոչ այլ կերպ, քան «անվարտիք շներ», «լրճուկ սինլըքորներ», «վակզալի բաշիբոզուկներ», մեղադրվում էին ստոր, անպատկառ նաիրադավաճանության մեջ, որովհետև նրանք դասավրություն էին քարոզում նաիրյան ռազմիկների շարքերում: Այստեղ մենք գործ ունենք ոչ միանշանակ մեկնաբանվող մի հետաքրքրական երևույթի հետ: Դարձյալ ժողովրդի տարբեր շերտերում, ասեկոսենների ձևով տարածված էր այդ բաշիբոզուկների «վերին գլխի»՝ այսինքն Լենինի մասին միանգամայն անբարենպաստ կարծիք: Լենինին համարում էին «արյունարբու մի սկյութ, ռսացած մի մոնղոլ, մի գերմանական լրտես, որ պլոմբած վագոնով հայրենիք վերադարձած՝ չին գորքերու և անվարտիք ավարաներու օգնությամբ ներսերում խլել էր արդեն իշխանությունն ու հանձնել այն գերմանացիներին՝ այդպիսով գլուխ բերելով այն խոստումը, որ տվել էր արյունարբու Վիլիելմ կայսեր...» (5, 234): Անկախ նրանից, թե երգիծական, քննադատական, թե հավաստի ձևով, Չարենցը դեռևս 20-րդ դարի 20-ական թթ. շրջանառության մեջ է դնում մի վարկած, որն իր արդիականությունը չի կորցրել այսօր՝ գրեթե հարյուր տարի անց:

Աշխարհի քաղաքական քարտեզի վրա բացակայող Երկիր Նաիրին հատկապես մտավորականության պատկերացումներում ասոցացվում էր Արևմտյան Հայաստանի գավառների ու նաև Արևելյան Հայաստանի ամբողջության հետ, որն ստանում էր նաև ծովից ծով Հայաստանի տեսիլային պատկերը: Քաղաքական ժամանակագրի այս յուրօրինակ դրսևորումը Չարենցը ներկայացնում է իբրև Մագուրի Համոյի ուղեղային մորմոք ու սրտի հիվանդություն: Այդ «հիվանդությունից» զերծ չի եղել նաև Չարենցը, որի խոստուն ապացույցը վեպի երկրորդ մասի սկիզբն է, որտեղ նա ինքն իր համար թաղում է նաիրյան երկրի երազը. «Եվ միթե այնտեղ, տքնությանս վերջում, որպես նվիրական սիրելի մի մեռել – չպիտի պատկերանա ինձ Երկիրը Նայիրի, որին դամբանելու համար տանում եմ ես խոհերիս տողաշար դագաղը–տանում եմ կամքիս հակառակ, որովհետև, այո, հարկավոր է տանել: Չէ՛ որ այո՛, – թա-

դել է հարկավոր բոլոր մեռելներին, որքան էլ նրանք սիրելի ու հարազատ լինեն» (5,79): Պետք է նկատել նաև, որ «Երկիր Նայիրի» վեպում 1917 թ. փետրվարից մինչև եռագույն դրոշով «նայիրապետության» հաստատումը մինչևանկախական շրջանն է, իսկ բուն անկախությունն արդեն սկիզբ է առնում և, դժբախտաբար, ավարտվում վերջին՝ «Երկիրը Նայիրի» գլխում:

Նախաանկախության շրջանի հայաստանյան իրավիճակն է ներկայացնում Նաիրի Զարյանը իր «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» վեպում, որը գրվել է այդ օրերի պատմությանն անդրադարձած մյուս գրողների երկերից տասնամյակներ անց: Սա նշանակում է, որ Ն. Զարյանը հնարավորություն ուներ խուսափելու նախորդների բացթողումներից, ինչպես նաև գնալու արդեն ինչ-որ տեղ բացված ձանապարհով: Պարոն Պետրոսը ղեկավարում էր այն որբանոցը, որի սանն էր հեղինակը՝ Արամ Անանիկյան անունով, և որը, իբրև մեծահասակ որբ, որոշակիորեն իրազեկ էր շուրջը կատարվող իրադարձություններին:

Հետաքրքրականն այն է, որ «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» վեպում Զարյանը նկարագրում է մի իրավիճակ, որը հակասում է այն մտայնությանը, թե հայ կուսակցություններն անպատրաստ էին անկախությանը: Նախքան Հայաստանի անկախացումը պարոն Պետրոսը որբանոցում ստեղծում է մի «կառավարություն» իր նախարարներով (կարգապահության, լուսավորության, մաքրապահության նն) և վարչապետով՝ իրեն վերապահելով, իր բառերով ասած, թագավորի դեր, որ կարող էր հաստատել կամ մերժել «կառավարության» որոշումները: Դժվար է ասել, թե այդ փորձն այն ժամանակ կամ արդյոք որբանոցային միջավայրում, թե դա գրողի գեղարվեստական երևակայության արդյունքն է, որ նա հետին թվով ներմուծում է տեքստ: Այսուհանդերձ, վեպն այս կերպ հերքում է այն մտայնությունը, թե կուսակցությունները, ավելի որոշակի՝ ՀՅ Դաշնակցությունը պատրաստ չէր անկախությանը, մինչդեռ Ն. Զարյանի վեպում արդեն որբանոցում պատրաստվում էին երկրի ապագա ղեկավարները: Ահա թե ինչ է ասում պ. Պետրոսը. «Սիրելի սանիկներ, դուք վերջին խլակներն եք բարբարոսի յաթաղանով հոշոտված մի ազգի, որ այսօր ինձ է հանձնել ձեր խնամքն ու դաստիարակությունը: Դուք պարտավոր եք մեծանալ ու դառնալ գալիք անկախ Հայաստանի կարգապահ քաղաքացիները: Ձեզնից ոմանց գուցե վիճակված է ապագայում ղեկավար դեր խաղալ մեր նոր պետականության մեջ: Ես պիտի նախապատրաստեմ ձեզ այդ նվիրական դերի համար: Այդ նպատակով ես կազմում եմ որբանոցային ինքնավարության կառավարություն, որի նախարարները պետք է լինեք դուք: Կառավարեցեք որբանոցը և սովորեք ապագայում կառավարել երկիրը»<sup>2</sup>: Ամեն դեպքում նկատելի է, որ Զարյանը նշված ժամանակաշրջանին անդրադառնում է պատմական հեռավորությունից: Գուրգեն Մահարին, որ Զարյանի որբանոցային ընկերն էր, մեկ այլ, լրացուցիչ երանգ է բերում իր «Երիտասարդության սեմին» վիպակում: Մահարու երկերում կարևոր տեղ են գրավում արևմտահայ գաղթականների վիճակը և հետագա կյանքի հանգրվանների որոնումները՝ Դիլիջան, Երևան, Թիֆլիս, Վլադիկավկազ... ուղեծրով, Արևմտահայ բյուրոյի գործունեությունը, որբա-

<sup>2</sup> Նաիրի Զարյան, Պարոն Պետրոսն ու իր նախարարները, Եր., 1958, էջ 25: Վեպից մյուս հղումների էջերը կնշվեն տեղում:

նոցային կյանքի անուրախ դրվագները:

## Բ. Անկախություն

Կիլիկյան պետության անկումից հետո, կյանքի ծանրագույն պայմաններում, հարձակումների, կողոպուտների, հրոսակների արշավանքների, կոտորածների ընթացքում, երբ, ըստ Խ. Աբովյանի՝ «Աշխարհումն ով ոտը բարձրացրեց, Հայաստանու վրովը պետք է լոք տար, հայոց ազգին պետք է ոտնատակ տար, ձեռք քցեր, որ իր թշնամու հախիցը կարենար գալ»<sup>3</sup>, ժողովուրդը և նրա մտավորական գործիչները, յուրաքանչյուրը յուրովի, անթեղած էր պահում անկախության երազանքը: Այդ են վկայում 17-րդ դարի երկրորդ կեսից սկսած տարբեր ապստամբությունները, 18-րդ դարում Դավիթ-Բեկի ապստամբությունը, Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի գործունեությունը, հնդկահայ գաղութի քաղաքական գործիչների՝ Մովսես Բաղրամյանի և Շահամիր Շահամիրյանի առաջ քաշած ծրագրերը:

Այսուհանդերձ, գործնականում կարծես հայերը պատրաստ չէին, ավելի հստակ՝ հնարավորություն չունեին իրենց երազանքի իրականացման ամենահարմար պահն ընտրելու: Պատմությունը անկախության հնարավորությունը հրանցրեց ամենաանբարենպաստ պայմաններում: Պատերազմից ավերված, ցեղասպանությունից ու գաղթականների հոսքից ուշքի չեկած, տնտեսապես լիովին քայքայված երկիրը օրհասական վիճակում ստիպված էր հարյուրամյակներից հետո նոր պետության հիմքը դնել: Բոլոր գրողների միահանուռ պնդմամբ՝ անկախությունը կարծես ստացվեց անսպասելի: Չարենցը գրում է. «Շատ ջրեր էին հոսել նայիրյան այդ քաղաքի և ընդհանրապես Նայիրիի ու աշխարհի վրայով այդ մի տարվա ընթացքում, երբ ես բացակայում էի քաղաքից ու Նայիրիից և ամենանշանավորն ու կարևորն այն էր, որ այդ ջրերի հետ մեկտեղ **հոսել էին նաև բանակները Նայիրիից** ու այդ **քաղաքից** և Նայիրին ու քաղաքը մնացել էին Սագուրի Համոյին ու նայիրցիներին. **երազյալը կարծես երկրային էր դարձել** (վերջին ընդգծ.– Ժ.Բ.)» (5, 231): Բայց թուրքական արշավանքները շարունակվում ու կասկածի տակ էին դնում անկախությունը, որովհետև «**նայիրադավաճան** մարդիկ», այսինքն՝ ըստ էության բոլշևիկները, խաղաղության կոչ էին անում և դեմ էին «**գրավված վայրերի**» պաշտպանությանը: «Հասկանում եք՝ **դուշը**, ինչպես ասում էր Հաջի Օնիկ էֆենդին, **երկնային թռչունը** եկել, իր ոտքով մեր ձեռն էր ընկել, իսկ այդ ստոր պարոնները պահանջում էին, որ մենք մեր ձեռքով վերցնենք ու բաց թողնենք այդ դուշը...» (5, էջ 233): Այսինքն՝ դուշը մենք չէինք բռնել, ինքն իր ոտով էր մեր ձեռքն ընկել. «Հասկանում էր Համո Համբարձումովիչը, զգում էր.– այն, որ կատարվում էր դուրսը –կատարվում էր **իրենից դուրս**. կատարվում էր– **իրենից անկախ**» (5, 206): Կարևորն այն է, որ բերդի ամենաբարձր աշտարակի վրա եռագույն էր պարզվել, «վերստին նայիրյան դարձած» Առաքելոց եկեղեցում նայիրյան բարբառով պատարագ էր մատուցվում...:

Հայաստանի անկախության անսպասելիության մասին է գրում նաև Կոստան Զարյանը. «Կովկասը վայր ընկած հախճապակիի նման բաժանվել

3 **Խաչատուր Աբովյան**, Վերք Հայաստանի, Եր., ԵՊՀ հրատ, 1981, էջ 284:

էր տասը մասերի: Թիֆլիսի, Բաքվի և Երևանի քաղաքապետության համեստ շենքերի կատարին չտեսնված ու չերևակայված անկախության դրոշակներ էին ծածանվում»<sup>4</sup>: Գրողների այս վերաբերմունքն ուներ իր պատմական հիմքերը: 1918 թ. մայիսին Անդրկովկասյան սեյմի լուծարումից հետո Հայոց Ազգային խորհուրդը իրեն հռչակում է հայկական գավառների «գերագույն և միակ իշխանություն»՝ «որոշ ծանրակշիռ պատճառներով» մոտիկ ապագային թողնելով Ազգային կառավարության կազմավորումը: Արտաքին սահմանների վտանգված վիճակը և ներքին անլուծելի խնդիրները Հայոց Ազգային խորհրդին ստիպում են զգույշ լինել և տատանվել անկախ հանրապետության հռչակման հարցում, որը մի քիչ ավելի ուշ է տեղի ունենում: Ահա այս իրադրությունը թույլ է տալիս գրողներին անկախ հանրապետության հռչակումը համարել անսպասելի, հեքիաթ և այլն:

Վերադառնանք Չարենցին: Որքան էլ նա երգիծում է, անողոր քննադատում, ինչպես ինքն է գրում՝ ՀՅԴ-ի գործունեությունը, չի նշանակում, թե նա ուրախ չէր անկախության համար: 1922-ին «Չարենց-Նամե»-ում նա հիշում է. «...Տասնըութ://ԹՎական հրի://Ողջակեզ-կարմրակեզ բոցում:// Արթնացավ արև՝ Նայիրին//Իմ հոգու նոր գնգոցում:...// Ու կարոտդ հանկարծ ավլըլան-// Ողջակեզ-հոգիս արևեց» (2..166): Չարենցը, քննադատելով հանդերձ, չէր կարող չնկատել այն ծայրահեղ ծանր վիճակը, որ բաժին էր ընկել նորանկախ հանրապետության ղեկավարությանը: Երբ «Մազուրի Համոն մնաց, ոչ միայն մնաց, այլև իր վրա վերցրեց բովանդակ իշխանությունը... ուշ էր, բավականին ուշ էր արդեն» (5, 254) : Ընդգծված արտահայտությունը հուշում է, որ խոսքը անկախ երկրի ղեկավարությանն է վերաբերում: Ուշ էր, որովհետև խախտվել էին բնական կյանքի բոլոր պայմանները, ինչպես կարող են քանդվել մարդու հագուստի բոլոր կարերը. գաղթականներ, դասալիքներ, քառս, իրարանցում. «Ո՞նց, ո՞նց փրկեր դրությունը Մազուրի Համոն, երբ, ինչպես ասացինք, քանդվել էին արդեն քաղաքի բոլոր կարերը և ոչ մի, թեկուզև հանձարեղագույն դերձակ չէր կարող այլևս իրար միացնել թափով իրարից խույս տալ սկսող մասերը: Համո Համբարձումովիչի բացակայության ընթացքում մի չտեսնված զարգացման էին հասել քաղաքի, ինչպես ասում են՝ կենտրոնախույս ուժերը, որ այլևս անհնարին էր դրանք ոչ միայն ոչնչացնել, այլև չեզոքացնել» (5, 255): Մազուրի Համոն մատնանիշ էր անում «նախրադավաճան սրիկաներին» և առաջին հերթին՝ Կարո Դարայանին: «Դրանք լցվել են հիմա ռազմաձակատը և դեզերտիրություն են քարոզում մեր արի զինվորներին, դրանք խոստանում են զինվորներին հող, խաղաղություն ու հանգստություն և նման լկտի միջոցներով քայքայում են մեր բանակը», - գրում էր Համոն ռազմաձակատից և հրահանգում, որ անհրաժեշտության դեպքում պետք է զնդակահարել նրանց (5. 251): Չարենցը թերևս ավելի ծանր մեղքի համար է քննադատում բոլշևիկներին, որովհետև վերջիններս, կազմալուծելով հայկական բանակը, կանխորոշեցին նրա պարտությունը: Չպետք է մոռանալ, սակայն, որ խորհրդային տարիներին ստեղծված գրականության զգալի

4 Կոստան Զարենան, Նալը լերան վերայ, «Սարգիս Խաչենց. Փրինթ-Ինֆո», Եր., 2015, աշխատասիրությանը եր. Տեր Խաչատրյանի, էջ 101: Սա վեպի առաջին՝ 1943 թ. տարբերակի վերահրատարակությունն է, որից էլ կատարվում են հղումները: Էջերը կնշվեն տեղում:

մասը տոգորված էր խորհրդային, այսինքն՝ կոմունիստական գաղափարախոսությամբ և երևույթները գնահատում էր հակադիր դիրքերից: Նույն Չարենցի բազմաթիվ գործերում, ինչպես հայ ժողովրդի անցյալը, այնպես էլ, ինչպես ինքն է անվանում, Արարատյան Հանրապետությունը գնահատվում է իբրև սուտ ու անկար մի իրականություն: «Պատմության քառուղիներով» պոեմում անվանելով մեր անցյալը անանցյալ, գայլը՝ ոչ պղնձյա՝ նա հասնում է մինչև իր ապած ժամանակը, բացում է «էջը նախավերջին», այսինքն՝ Առաջին Հանրապետության օրերը և մեղադրում «Երեկվա մեր տերերը չնչին», որոնք «Մեր անունից մրրիկ սերմանեցիք/ս/ //Վերջին խարիսխը մեր//Վաճառքի հանեցիք/ս/» (4, 209): Գուցե կարելի է վիճել Չարենցի հետ պարսավանքի այս խոսքերի համար, բայց նախ՝ սա բխում է պոեմի ընդհանուր տրամաբանությունից, ըստ որի մեր նախնիները, ի դժբախտություն մեզ, մեզ չեն ավանդել հզոր ու ապահով հայրենիք: Սա Չարենցի մոտ դառնում է համոզմունք կամ դառը գիտակցություն, որն իր արտահայտությունն է գտնում նաև «Մահվան տեսիլ», «Նորք», «Ջրահապատ Վարդան Ջորավար» պոեմներում: Չարենցի սրտնեղությունը բխում էր թույլ ու խեղճ հայրենիքի ժառանգորդը լինելու գիտակցությունից, և այդ լույսի տակ նա միակողմանիորեն էր գնահատում անցյալը, իսկ ներկայի գնահատականը առավել քան դաժան էր: Արդեն «Մահվան տեսիլ» պոեմում նա ստեղծում է դաշնակցականներ Քրիստափոր Միքայելյանի, Ավետիս Ահարոնյանի և այլոց գրոտեսկային կերպարները: Ասել, թե սա զուտ բուլշևիկյան տեսակետ է, որ որդեգրել էր հեղափոխական բանաստեղծ Չարենցը, թերևս ձիշտ չի լինի, քանի որ այս գնահատականները քիչ են տարբերվում «Ազգային երազ» պոեմի երգիծական կերպարներից, որ նա ստեղծել է դեռևս 1917-1918 թվականներին: Այո, Չարենցն ուներ իր սուրյեկտիվ ընկալումները, որոնք ոչ միայն ներքին հակասական ապրումների, այլև իրական տպավորությունների արդյունք էին:

Կոստան Ջարյանի համար անկախությունը թեև «չլաված ու չտեսնված» բան էր, բայց նա ուրախությամբ է արձանագրում այդ փաստը: Վեպում Ջարյանն ընդհանուր առմամբ անդրադառնում է նաև Կովկասում տիրող իրավիճակին, ներկայացնում դեռևս պատերազմի մեջ գտնվող նորանկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքի թշվառ վիճակը, որի փողոցները լի էին ցեղասպանությունից փրկված գաղթականների մեռնող զանգվածներով, որբերով, մուրացկաններով: Ջարյանը իրատես է, փորձում է տեսնել այն անհաղթահարելի դժվարությունները, որոնց առջև կանգնած էր երիտասարդ հանրապետությունը. «Այո, բուռն կերպով արտահայտած յոյսերի ետև՝ արիւնսած դրօշակներ էին կախուած: Ամենքը գիտէին. թշնամին վիզը երկարած, հսկում էր սահմանների շուրջը: Հայաստանը դաժանօրէն մենակ էր: Լեցւած մի քանի հարիւր հազար տաճկահայ փախստականներով և անհամար որբերով, տարիներով մղած պատերազմից յետոյ և միլիոնաւոր զոհերից յետոյ, չնայած յաղթութիւններին, նա դեռ ստիպւած էր իր գոյութիւնը պաշտպանել: //Ձենք չկար: Հաց չկար» (էջ 99): Գնացքները գրեթե չէին աշխատում, դեղորայք ու հագուստ չկար, փող տպելու համար անգամ թուղթ չկար, և այդ թուղթն ավելի թանկ արժէր, քան նրա վրա տպված փողը: Այսուհանդերձ, Ջարյանը լավատես է, և նրա լավատեսությամբ



յունը հենվում է ոչ այնքան օբյեկտիվ իրողությունների, որքան, ինչքան էլ վերացական հնչի, հայկական ոգու վերածննդի, հայրենի հողի տված էներգիայի, հայ մարդու կամքի ուժի և նպատակալացության վրա: Այդ կամային հայը հեռավոր նավարկությունների կապիտան Արա Հեռյանն է, որն անասելի դժվարությունների գնով Բայթումից «Ալբատրոս» նավը հասցնում է Քանաքեռի բարձունքը, որտեղից պետք է տաներ Սևան և նավարկելի դարձներ լիճը: Նավի տեղ հասցնելու դժվարությունը Զարյանը համեմատելի է դարձնում նշված պայմաններում պետականություն կառուցելու դժվարության հետ:

Հայրենիքի սերը և նրա անկախության իրողությունը Հայաստան էր բերել բազմաթիվ հայերի: «Շուրջը կանգնել էին Ֆրանսիայից, Ամերիկայից, Ռուսաստանի խորքերից և ուրիշ երկիրներից եկած հայեր: Ահա, սրանք ևս, մտածեց Հեռյանը, վազել եկել են իրենց տանջող երազի ետևից. վերագտել են իրենց մենակութեան հետ խօսող աշխարհը...» (էջ 104): Այդ երազի հետևից էին եկել Հեռյանը, ծովային տորմիդի սպա Միքայել Թումանյանը, հարյուրապետ Բաբկեն Միրանյանը, հայեցող փիլիսոփա Մարկ Պետրոսը...

Զարյանի հույսի մյուս հենարանը բուն ժողովուրդն է: Սևան այցելության ժամանակ, դիտելով երիտասարդների ոգեշունչ պարը, Հեռյանը ընդհանրացնում է երևույթը. «Ճկուն, կայտառ, ազատ հայություն էր այդ, որի գեղեցիկ շարժումների մեջ թաքնված էր եւ վեհութիւն, եւ խորհուրդ» (էջ 157):

Այս ամենն ամենն էլ չի նշանակում, թե Զարյանը հիացած է ամեն ինչով և չի տեսնում երկրում առկա բազմաթիվ թերությունները: Նա դժգոհ էր պետական պաշտոնյաների քաշքշուկից, կառավարման անճարակությունից, մարդկանց՝ իրենց տեղում չլինելուց...: Նախկին դերասանը կառավարության անդամ է դարձել և բնութագրում է երկրի իրական կացությունը. «Ողբերգությունները բեմի վրայից իջել են և բռնել կեանքի ասպարեզը... Համեստ մեր թատերական դահլիճը վեր է ածել Պարլամենտի, ուր գաւառներից եկած անյայտ մարդիկ, Շէքսպիրեան ճառեր են արտասանում, մինչ ես, ամեն ինչ մի կողմ եմ դրել և ծառայում եմ նորակազմ Հանրապետութեան...» (էջ 180): Երկրի թշվառությունն արտահայտվում էր նաև ավերված տնտեսության (հացի մի ֆունտը մեկ միլիոնից ավելի արժեք...), կառավարման անճարակության, արտաքին քաղաքականության մեջ, որովհետև երկիրը ոչ միայն հաց չունեւր, այլև համապատասխան կադրեր: «Եւրոպական դիւանագիտական գայլերի դէմ հանեցինք ծխական դպրոցի նախկին վարժապետներ», - դառնությամբ նկատում է վեպի հերոսներից մեկը (էջ 578): Եզրակացությունն այն է, որ մեծ դեպքեր են, բայց փոքր մարդիկ են ղեկավարում, մինչդեռ մեզ Գարիբալդիներ են անհրաժեշտ: Այս ամենի հետևանքն այն եղավ, որ «Արարատի գլխին եռագոյն դրօշակ պիտի ցցւէր, իսկ դուրս եկաւ, որ Արարատը, փափուչները ձեռքը առած ոտաբոպիկ փախչում է...» (էջ 547): Վերջապես, վեպի թե՛ առաջին, թե՛ երկրորդ տարբերակում կա մի էական բան, որ բխում է Զարյանի աշխարհայեցողությունից: Վեպի գլխավոր հերոս Արա Հեռյանը կուսակցական չէ, ուստի երբ դաշնակցականները և մեծամասնականները հաջորդում են իրար, նա չի խառնվում ոչ մեկի գործերին, մնում է երկրում՝ իր ժողովրդին ծառայելու գործին հավատարիմ և ձգտում իր նպատակին:

Վեպի հերոսուհիներից Զվարթն ասում է. «Ես սիրում եմ մեր երկիրը: Աղքատ, թշառ, ողբերգական, բայց և այնպես, չպիտի ուզէի փոխել ոչ մի ուրիշ երկրի հետ...» (185): Մա վեպի կարևոր ուղերձներից մեկն է՝ պետք է **երկիր սիրել**: Բոլոր գրողները, թեև երբեմն չափավոր զգուշությամբ, բայց ընդհանրապես, նկատելով հանդերձ թերություններն ու դժվարությունները, դրական են գնահատել անկախ Հայաստանի գոյությունը: Այս առումով զգալիորեն տարբերվում է Գուրգեն Մահարու պատանի հերոսը «Երիտասարդության սեմին» վիպակում, որը ոչ միայն անտարբերությամբ, այլև նույնիսկ բացասական երանգավորումով է ընդունում անկախության լուրը: Մորը գտնելու պատճառով Երևանից Թիֆլիս մեկնած Մահարին երբ վերադառնում է որբանոց, նրա ընկերը՝ հետագայում Նաիրի Զարյանը (որը վերջինիս գրական անունն է), հայտնում է լուրը. «Նա ասաց, որ մենք հիմա Հայաստան ունենք, այո՛, թեպետ ոչ մեծ, բայց մի տեսակ իսկական Հայաստան: Ցավալի սակայն, որ այդ Հայաստանի կառավարության մեջ նստած են դաշնակցականները, դաշնակցական խմբապետները հանգիստ չեն տալիս ժողովրդին...»<sup>5</sup>: Այս միտքը վերագրված է ընկերոջը, որի հետ, ըստ երևույթին, համաձայն է պատմողը: Նկատելի է, որ խոսակցությունը շարունակվում է բոլշևիկյան հեղաշրջման հեռանկարով, և վեպի հետագա իրադարձությունները պետք է ընթանան այդ ճանապարհով: Իհարկե, այստեղ համատեղվում են երկու հանգամանք՝ խորհրդային իշխանությունների հակադաշնակցական, մերժողական քաղաքականությունը և աքսորից նոր վերադարձած Մահարու վերապահ ու զգուշավոր վերաբերմունքը:

Հանրապետության առօրյա կյանքի, քաղցի, հիվանդությունների, աղմուկի, բարձիթողի և անկառավարելի դրության, գնացքների անմխիթար վիճակի, քանդված ռելսերի, մաուզերիստների կամայականությունների և հազար ու մի դժվարությունների մասին բազմաթիվ նկարագրություններ կարելի է գտնել այդ օրերի մասին գրող գրեթե բոլոր հեղինակների երկերում: Դրանք պատճենման աստիճանի սման են իրար, ուստի Մահարու ստեղծած պատկերը կարող է լինել ընդհանրացնող. «Ճանապարհորդների ճնշող մեծամասնությունը գյուղացի կանայք են, ապա երեխաներ, ծերունիներ, մի երկու տասնյակ միջին տարիքի տղամարդիկ... Երեխաները գունատ են ու նիհար, վավերացված ու հաստատված քաղցի կնիքով: Ճանապարհորդները չար են, անզիջում, բծախնդիր ու կովարար: Այդ նշանակում է, որ նրանք քաղցած են: Կայարաններից մեկում գնացքը կանգնեց ու երկար ժամանակ կանգնած մնաց: Պարզվեց, որ շոգեքարշի հնոցում ածուխի տեղ փայտ է վառվում և որ փայտը վերջացավ: Հետո նորից գնացքը շարժվեց, հարբած մարդու անհաստատ ընթացքով» (էջ 315):

Բավարարվենք ևս մի պատկերով. Կ. Զարյանը «Նավը...» վեպում ընդհանրացնում է պատկերը. «Կարծես սև թշառութեան մի անկլինից վայր թափած այդ մարդկութեան վրայից ծանր ոտքերով մի հսկայ էր անցել և ամեն ինչ ձգմել» ( էջ 96): Նկատենք, որ պատկերների իմաստային նմանությունը ցույց է տալիս ճշմարիտ իրականությունը:

Նաիրի Զարյանն իր հերթին, իբրև տասնութամյա պատանի ու որբանոցի սան, պետք է բավականաչափ իրազեկ լիներ այդ ժամանակի իրադար-

<sup>5</sup> Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, Եր., 1956, էջ 320:

ծություններին, բայց հեռանկարում դեպի բոլշևիկյան գաղափարախոսության հաղթանակը տանող «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» վեպում չափավոր ոգևորությամբ է արտահայտվում Առաջին Հանրապետության ստեղծման վերաբերյալ: Երբ ազգային խորհրդարանն իր անդրանիկ նիստում Հայաստանը հռչակում է անկախ հանրապետություն, ուրախության ալիքը հասնում է նաև որբանոցները: Մեծահասակ որբերը գիտեին, որ իրենց ազգը «հինգ հարյուրամյակ ի վեր գրկված էր պետական անկախությունից ու բաժանված օտար տերությունների միջև: Այժմ նա ձեռք էր բերել **անկախություն հիշեցնող մի բան** (ընդգծումը մերն է- ժ.Բ): Մեր տղաները դրանով, այնուամենայնիվ, պարծենում էին»<sup>6</sup>: Հաջորդ էջերը ցույց են տալիս, որ ուրախությունը եղել է համազգային: Պարոն Պետրոսը որբերին թույլ է տալիս անցնել «հայոց պառլամենտի մոտով» և տեսնել հայոց պետական դրոշմը: Իսկ տղաները ոգևորությունից փոխադարձաբար ներում են վիրավորանքները: «Համազգային ուրախության ջերմությունից հալվեցին բոլոր անձնական վեճերն ու թշնամանքները», - գրում է Ն. Զարյանը: Ն. Զարյանը ևս չի կարող շրջանցել իրականությունը. «Պետություն և հեղափոխություն» կարդացող նրա հերոսները սրտի խորքերում փայփայում են կորցրած հայրենիք վերադառնալու հույսերը և, արգելքին հակառակ, ոգևորվում գորավար Անդրանիկի կերպարով: Այսուհանդերձ, Զարյանը վեպում շեշտը դնում է կառավարությանը վարկաբեկող երևույթների վրա: Բժիշկ Ողջակիզյանը, օրիորդ Կոթողյանը, պարոն Պետրոսն ինքը, Նորբի Վարդազարը և ընդհանրապես մաուզերիստները նոր կառավարության անձարակության արտահայտությունն են վեպում: Որքան էլ իրականության մեջ հիմք ունենար գրողը, վեպում եզրակացություններն արվում են շատ արագ: «Ուրախություններն ու հույսերը տևեցին միայն մի շաբաթ: Հայաստանի նորակազմ կառավարությունը ոչնչով չլավացրեց երկրի վիճակը» (էջ 259), - գրում է Ն. Զարյանը՝ չմտաժողովելով իր տված մի շաբաթ ժամկետի մասին:

Առաջին Հանրապետության ստեղծմանը մեծ ոգևորությամբ է արձագանքում Վահան Թոթովենցը, որը թեև ընդգծված քննադատական վերաբերմունք ուներ ՀՅ Դաշնակցության նկատմամբ, բայց պատմական կարևոր իրադարձությունը գնահատում է համահայկական նշանակության տեսանկյունից. «Ձեռքս կառնեմ Պոլսո հայ թերթերը՝ **Ժողովրդի ձայնը, Երկիրը, Ճակատամարտը**, որոնց մեջ կարմիր ոգի մը կը ծածանի: Անոնք մայիսի 28-ը կտոնեն Պոլսո մեջ... Մեր անկախության տոնը Վոսփորի ափերուն վրա, մեր մանուկ հանրապետության տոնը օսմանյան մայրաքաղաքին մեջ: Ահա հսկայական երազ մը և տակավին ինչ երազներ...»<sup>7</sup>:

### Գ. Ներքին և արտաքին թշնամիներ ու խոչընդոտներ

Պատմագիտության և հասարակագիտության մեջ հաճախ է շրջանառվում այն միտքը, որ կայսրությունները փլուզվում են ոչ այնքան արտաքին հարվածներից, որքան ներքին հակասություններից: Կարծում ենք, որ դա վերաբերում է ոչ միայն կայսրություններին, այլ ընդհանրապես պետություն-

<sup>6</sup> Նաիրի Զարյան, Պարոն Պետրոսն ու իր նախարարները, Եր., 1958, էջ 257:  
<sup>7</sup> Վահան Թոթովենց, Երկեր երեք գրքով, գիրք 3, Եր., «Նաիրի», 1991, էջ 382:

ներին: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը, մեղմ ասած, դիրքերը զիջեց և՛ արտաքին, և՛ ներքին ճնշումների պատճառով: Ներքին, եթե ոչ թշնամիների, ապա հակադիր ուժերի, իշխանության ձգտողների և իշխանություն ունեցողների միջև գաղտնի և բացահայտ պայքարը, բոլշիկների ընդհատակյա գործունեությունը, դասալիքների փախուստը ճակատից, ժողովրդի ոչ միանշանակ վերաբերմունքը իշխանությունների կամայականությունների նկատմամբ, որոնք բավականաչափ արտացոլված են նշված հեղինակների գործերում, պետության կործանման որոշակի նախադրյալներ էին ստեղծում:

Գրողներից յուրաքանչյուրը տարբեր չափով անդրադարձել է թուրքերի արշավանքներին, որոնք Քյազիմ Կարաբեքիր փաշայի ղեկավարությամբ անցել ու անցնում էին Հայաստանի սահմանները՝ նպատակ ունենալով արևելահայերին ևս իսպառ ոչնչացնել հենց իրենց հայրենիքում: Բայց քչերն են անդրադարձել ներքին թուրքին: Այս մասին ավելի հաճախ խոսում է Կոստան Զարյանը վեպի առաջին տարբերակում: 1963-ին Հայաստանում լույս տեսած վեպի վերամշակված տարբերակում մկրատվել, հանվել են թուրքերին, ռուսներին և բոլշևիկներին վերաբերող էջեր, հատվածներ, տողեր, անգամ բառեր, որոնք արտահայտում են Զարյանի վերաբերմունքը: «Բաբուն տեղի ունեցած մեծամասնականների և տաճիկների միացեալ ժողովը, որին մասնակցել էին հայասպան Նուրի և Խալիլ փաշաները, որոշել էր ամեն գնով նստել Հայաստանը, կոմունիստ հասարակարգ հաստատել այնտեղ և, ազգային կառավարութիւնը տապալելով՝ ազատ ճանապարհ բաց անել ջարդարար տաճիկների ներխուժման համար»<sup>8</sup>, - գրում է Զարյանը: Այս մասին Զարյանը կարող էր խոսել դրսում, որտեղ լույս տեսավ նրա վեպը, իսկ քեմալականների հետ բարեկամություն անող, հետագայում էլ սեփական սխալները ծածկող խորհրդային իշխանությունները, բնականաբար, չէին կարող հանդուրժել նման դատողություններ: Հատկապես չէին կարող հանդուրժել թուրքերի և մեծամասնականների նմանությունը կամ նույնականությունը, որը պնդում է Զարյանը վեպի տարբեր էջերում: Դրսի ուժերին օգնում էին ներքին թուրքերը, իսկ բոլշևիկների գալու ժամանակ՝ նաև մալականները:

Նախ՝ ներքին թուրքերի և ադրբեջանցիների մասին: Զարյանը, մյուս գրողների համեմատ, ավելի բազմակողմանիորեն է մոտենում խնդրին, բացատրում թուրքերի մարտավարությունը, որն արտահայտվում էր երկրի ներսում գտնվող իր բարեկամ տարրերին կազմակերպելու, անսպասելի հարվածներ հասցնելու, հայերին տարբեր կողմերից օղակելու միջոցով: Նա միաժամանակ հետևում է դեպքերի ժամանակագրությանը՝ ընդհուպ Ալեքսանդրապոլի ստորացուցիչ պայմանագիրը:

Մյուս կողմից՝ Զարյանը ներկայացնում է Ռուսաստանի ախորժակը՝ զուգահեռ անցկացնելով թուրքերի և մեծամասնականների միջև. «Դու մոռանում ես, որ մենք ստիպված ենք ընտրել երկու թշնամիների մեջ՝ տաճիկները կամ մեծամասնականները...», - ասում է հերոսներից մեկը, բայց անմիջապես խսակիցը շեշտում է տարբերությունը. «Տաճիկը սպանում է մարմինը, իսկ բոլշևիկը՝ ոգին...» (էջ 583): Մեծամասնականների նկատմամբ ընդգծված

<sup>8</sup> Կոստան Զարյան, Նաը լերան վրայ, էջ 376:

բացասական վերաբերմունքը արտահայտվում է ամենից առաջ թուրքի և բոլշևիկի զուգահեռով: Բոլշևիկները բնութագրվում են իրենց արարքներով: Իշխանությունը նվաճելուց հետո նրանք կողոպտում են ժողովրդին, ձերբակալում, գնդակահարում: «Տանում են, եղածը, չեղածը տանում են... Էլ այլիս ասես, լաւաշ ասես, մեղր, միս, հաւ, չորթան, լուբիա... Իսկ շատերին տանում են բանտ...» (էջ 614),- գրուցակցին է վկայակոչում գրողը: Նման օրինակները կրկնվում են, կողոպուտը հաճախակի է դառնում: Սակայն բոլշևիկների բռնությունները չեն սահմանափակվում մթերքի բռնագրավումով: Նրանք սկսում են ձերբակալությունները, հիմնականում ձերբակալում են նախկին իշխանության գործիչներին ու նրանց համակիրներին. «Այդ վայրկեանին, փողոցի կողմի անկիւնից մի խումբ մարդիկ դուրս եկան: Այդ մարդկանց առջևից, ետևից, երկու կողմերից՝ երկու ձեռքով, կրակելու պատրաստ հրացաններ բռնած՝ զինուորներ էին գնում: Մարդկանց դեմքերը դեղնած էին և մոխրագոյն: Յիշեց. նրանց տեսել էր Խորհրդարանում: Գնում էին յամբ քայլերով, առանց աջ ու ձախ նայելու» (էջ 618):

Այսքանով հանդերձ, չի կարելի ասել, թե Զարյանը մերժում է թե՛ Ռուսաստանի, թե՛ բոլշևիկների դերը, և ըստ այդմ խիստ էին Զարյանին քննադատողները, որոնք նրան մեղադրում էին հավատափոխ լինելու մեջ: Ըստ էության վեպի խմբագրված տարբերակում կրճատվել են վերջիններիս նկատմամբ ատելություն առաջացնող, նրանց որոշ գործողությունները դավաճանություն որակող խիստ քննադատական հատվածները, որոնք բացահայտում էին ռուսների և բոլշևիկների հեռահար նպատակները, բայց ըստ էության դրանով չէր փոխվել գրողի առանցքային վերաբերմունքը ստեղծված կացության նկատմամբ: Ի վերջո, Զարյանը չէր կարող չիմանալ, թե դեպի ուր է տանում իր վեպը: Վեպի թե՛ հասարակ հերոսները, թե՛ մտավորականները և թե՛ նույնիսկ կառավարության ներկայացուցիչները գալիս են այն եզրակացության, որ պետք է ընտրություն կատարեն թուրքերի և բոլշևիկների միջև, թեև դրանք հավասարագոր հասկացություններ չեն: Նկատելի է նաև, որ անգամ կառավարության անդամների մեջ (Պերոնյան) աստիճանաբար ձևավորվում է Ռուսաստանի օգնությանը դիմելու գաղափարը: Պերոնյանը Կարսի և Ալեքսանդրապոլի անկումից հետո վերջնականապես հանգում է Ռուսաստանին դիմելու խնդրին. «Ասում եմ, ուրիշ փրկութիւն չկայ: Ի՛նչ է, ուզում ես թուրքերը գան մեր գլխին տեր դառնան, ուզում ես տաճկահայերի հալին հասնենք... Մեծամասնականները, վերջապէս, ռուս են, իսկ ռուսների հետ այդքան տարի եօլա ենք գնացել և նորից կը գնանք... Ախր, ես անում էի... Չէ՛, ամերիկացիները պիտի գան... Եկան, տեսանք... Կարսը ընկաւ, Ալեքսանդրապոլը ընկաւ...» (էջ 549 ):

Ռուսաստանն այս անգամ վերադառնում էր բոլշևիկների դեմքով, և հայերը դրան էլ էին համաձայն: Դա արտահայտվում է Պերոնյանի ուղղակի խոսքի մեջ. «Ասում են կոմունիստական կարգեր են՝ և թող լինեն կոմունիստական կարգեր... Մենք աղքատ, աշխատաւոր ժողովուրդ ենք, հարուստներ չունենք, արդիւնաբերութիւն չունենք, պրոլետարիատ չունենք... Եթէ գալիս են հողերը բաժանելու՝ թող բաժանեն... Ի՛նչ ունենք, որ ինչ կորցնենք... Այնպէս չէ՛... Թող տաճիկներին հեռացնեն և մեզ հանգիստ տան, յետոյ կը տեսնենք... Մեր ուժերը ժողովենք, մեր աղտը ու փոշին մաքրենք, մեր վերքերը

բուժենք՝ մեր զէնքերը կարգի բերենք, որպեսզի նորից կարողանանք սկսել...» (էջ 550): Այս խոսքերը վեպում իր վարքագծով հաստատում է վեպի գլխավոր հերոս Հեռյանը, որն ականա խառնվել էր երկրից փախչողներին, բայց կես ճանապարհից վերադառնում է մայրաքաղաք՝ մնալով հայրենի երկրում: Զարյանի վեպում կա մի փոքրիկ՝ երկտողանոց ակնարկ Աբովյանի մասին. «Եթէ կա մի հոգի, որ վշտահար ման է գալիս Հայաստանի վրայից, նա էլ մեր հարևան Աբովեանն է... Ման է գալիս և պատրաստում «Վէրք Հայաստանի»ի երկրորդ հատորը...» (էջ 587): Այս ակնարկը հուշում է, որ ստեղծված իրավիճակում, ինչպես Աբովյանի ժամանակ, այնպես էլ հիմա Ռուսաստանը ներկայանում է իբրև այլընտրանք, Աբովյանի ժամանակ՝ պարսիկների, 1920-ին՝ թուրքերի համեմատ...

Մեծամասնականների, ոչ միայն իբրև գաղափարական հակառակորդների, որոնց ակունքները դրսում էին, այլև իբրև երկրի ներքին կյանքը կազմալուծողների հարցին ավելի հանգամանորեն անդրադառնում է Զարենցը՝ «Երկիր Նայիրի» վեպում:

Այս առումով դասալքությունը թերևս հարցի մեկ, բայց շատ կարևոր կողմն է: Կան ուրիշ հանգամանքներ ևս: Առաջին հերթին դա ժողովրդի վերաբերմունքն է դասալքության նկատմամբ: Ծայրահեղ թշվառության մեջ գտնվող ժողովուրդը, դժբախտաբար, այլևս ուժ և ցանկություն չունեի կռվելու: «Երկիր Նայիրի» վեպին բնորոշ ոճով է այդ մասին գրում Ե. Զարենցը. «Բայց ընկեր Վառոդյանին ջղայնացնողը գերազանցապես այն էր, որ **դեզերտիքների** կատարյալ բույներ էին դարձել փողոցներում, բակերում ու այգիներում թափված մարդկային այդ գարշահոտ կույտերը (փախստականները – Ժ.Բ). ռազմաճակատից փախչում էին ռազմիկները և պահվում դրանց մեջ, դրանց սայլերի արանքում, վերմակների տակերը և նույնիսկ իրենց կանանց ու մայրերի փեշերում» (5, 248 ): Երկրի վիճակը բարդացնում էին նաև ռազմաճակատը լքող ռուս կամ ռուսական բանակի զինվորները: Վկայությունը Թոթովենցինն է. «Վրացիք կը ջանային ռուս զինվորին թույլ չտալ Թիֆլիս մտնել, թաթարները կը ջանային ռուս զինվորը կողոպտել դեպի Բաքու անցած ատեն, իսկ Հայաստանով այդ բոլորը կանցնեի անարգել և անսասան»<sup>9</sup>: Դժբախտաբար, հայ ժողովուրդը միասնական չէր նաև օբյեկտիվ պատճառներով: Արևմտյան Հայաստանից գաղթած փախստական հայերի և տեղի արևելահայերի միջև գոյություն ունեի բարքերի, սովորությունների և հոգեբանական անջրպետ: Արևմտահայերն սպասում էին գրկաբաց ընդունելության արևելահայերի կողմից, բայց արևելահայերը, նրանց օգնելով հանդերձ, նույնպես հոգնել էին պատերազմից, աղքատացել, իրենք էլ էին կարիքի մեջ, տվել էին բազմաթիվ զոհեր: «Խմբապետ Շավարշը» պոեմում ակնարկ կա այս մասին.

«Ռուսահայ եղբայրները»...հաի-հաի...

Ընդունեցին – թուրքից էլ վատ, այո՛. «Ռուսահայ եղբայրները»...» «Հայրենիք», «Հայ»:

Կուշտ, ականջները դիհնջ, ապահով (2, 291 ):

Թերևս կար նաև իշխանությանը մասնակից դառնալու ձգտում ու ներքին խանդ, թե ինչու «ռուսացած սպաները» ուզում են տիրանալ երկրին ու

<sup>9</sup> Վահան Թոթովենց, Զորավար Անդրանիկ և իր պատերազմները, Երկեր 3 գրքով, գիրք 3, Եր., 1991, էջ 18:

բանակին, իսկ «Դրոն, իզդիրցի այդ խմբապետը...ուզում է դառնա մինիստր», խմբապետներին էլ դարձնել ձեռքի խաղալիք: Տարբերություններ կային անգամ արևմտահայ տարբեր գավառներից եկած գաղթականների միջև: Ինչպես իրական-պատմական փորձը, այնպես էլ նրա գեղարվեստական արձագանքը ցույց է տալիս, որ ժողովուրդը որպես կանոն համախմբվում է արտաքին վտանգի պարագայում: Իսկ քաղաքացիական պատերազմների և հեղափոխությունների դեպքում հասարակությունը պառակտվում է, մի մասը եղբայրասպան պատերազմի է դուրս գալիս մյուսի դեմ: Այդ խնդրին հանգամանորեն անդրադարձել է Ստ. Զորյանը «Ամիրյանի ընտանիքը» վեպում: Շատերի համար անընդունելի է քաղաքացիական պատերազմի երևույթը: Անընդունելի է հայր Ամիրյանի համար, որն ասում է. «Հային մինչև հիմա սպանել է պարսիկը, հռոմեացին, արաբը, թուրքը, այդ էր պակաս, որ հայն էլ սպանի հային»<sup>10</sup>: Շատերն էին մտածում Ամիրյանի պես: Արամը բացատրում է հորը, որ միշտ էլ եղել են դավաճան հայեր, որոնց սպանել են հենց հայերը, բայց հայրը համաձայն չէ այդ բացատրության հետ, քանի որ նրա կարծիքով այդ դավաճանները եղել են անհատ մարդիկ, իսկ քաղաքացիական պատերազմի ժամանակ ոչ թե անհատներին են պատժում, այլ հասարակությանը:

Սակայն բոլշևիկներից բացի՝ Հայաստանում կան նաև այլ ռուս սպասողներ: Դրանք մալականներն էին, որոնց շահերը համընկնում էին բոլշևիկների շահերին, և որոնց իր վեպում կարևոր տեղ է հատկացրել Կ. Զորյանը. «Լուսաբացի մօտ, մալականները մտել էին վանք և ազատել բանտարկյած մեծամասնականներին: Նրանցից ոմանք մեկնել էին դիմաորելու համար եկող կարմիրներին, իսկ միւսները ազգաբնակչութիւնը ժողովել էին և միտինգ կազմակերպել»<sup>11</sup> («Նաւը...», էջ 561): Հարց է առաջանում. ինչն էր մալականներին ստիպում բոլշևիկներին պաշտպանել: Զորյանն ունի դրա պատասխանը. «Ռուս մուժիկների համար յարձակողները նախ և առաջ ռուս պետականությունը վերահաստատողներն էին, որոնք պիտի գային իրենց տւած առանձնաշնորհումները պաշտպանելու համար»:

Խոչընդոտը միայն արտաքին թշնամական ուժերի հետ ներքին թշնամական տարրերի կապը չէր: Երկրի ներսում կային նաև այլ անկառավարելի ուժեր, որոնք համեմատելի չէին, իհարկե, թշնամու հետ, բայց չէին ենթարկվում իշխանություններին, ինքնագլուխ էին և իրենց կամայականություններով սարսափի էին մատնում ժողովրդին: Ժողովուրդը նրանց մասին ասում էր, որ դահիճների ձեռքից ազատվել, ավազակների ձեռքն էին ընկել: Դրանք մաուգերիստներն էին՝ հիմնականում նախկին կամավորներ, որոնց միացել էին նաև ավազակներ և մույթ անցյալ ունեցող այլ մարդիկ: Գրականության մեջ նրանց նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէ, և տարբեր կողմերից նրանց խնդրին մոտենալու սկիզբը դրեց Ե. Չարենցը «Խմբապետ Շավարշը» պոեմով: Գրականագիտության մեջ, սկսած Հրանտ Թամրազյանից, այդ մասին շատ է գրվել: Եթե ընդհանրացնելու լինենք Շավարշի և այլ խմբապետների վարքագծի պատճառները, պիտի

<sup>10</sup> Ստեփան Զորյան, Ամիրյանի ընտանիքը, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 4, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 255: Այս գրքից հետագա հղումների էջերը կնշվեն տեղում:  
<sup>11</sup> Կոստան Զորյան, Նավը..., էջ 532:

հիշենք նրանց վիրավորված ինքնասիրության, անտեսված լինելու, սպասածի համեմատ չգնահատվելու, իրենց ու կադրային՝ «ոսացած» սպաների միջև առկա խտրականության, իշխանությունից անմասն մնալու մասին: Այդ հանգամանքները ոչ միայն Շավարշին, այլև ընդհանրապես խմբապետներին գազազեցրել ու վտանգավոր էին դարձրել:

**Այդ նա էր, որ տարավ ձեռքը մաուզերին  
Հանեց, քաշեց.- և վաղ առավոտվա մեջ  
Չարագուշակ, դաժան երգեց մաուզերը  
Արյան, մուժի, մահի, ասպատակի երգ...  
Հետո ձայնակցեցին նրան մյուսները՝  
Եգորը, Թաթիկը, Ղաչաղ Սաքոն,-  
Իսկ քաղաքը, սմբած, դեռ քնել էր  
Ու զառանցում էր մաուզերի կրակոց... (2, 297)**

Փաստորեն, ըստ Չարենցի, մաուզերը նախկին խմբապետների ձեռքին դառնում է իրենց կատաղությունը և իշխանություններին չենթարկվելու, իրենց անկախությունը արտահայտելու միջոց, իսկ դա անիշխանություն էր ստեղծում առանց այն էլ հոգսաշատ երկրում:

**Ուզում են, որպեսզի խմբապետները  
Իրենց ձեռքին դառնան կույր խաղալիք:  
Ուզում են տիրանան երկրին, բանակին,  
Հաստատեն ոսացած մի իշխանություն (2, 288):**

Մաուզերիստների խնդիրը էական տեղ է գրավում նաև Ն. Զարյանի «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» վեպում: Սակայն տպավորությունն այնպիսին է, որ Զարյանն ինչ-որ տեղ կրկնում է Չարենցին: Վեպի «Մաուզերիստները» գլխում Զարյանը նկարագրում է, թե ինչպես Ռզմա Քերովի խմբապետը և ընկերները կանգնեցնում են Նորքից իջնող ֆայտոնը և այնտեղից ուժով իջեցնում մինիստրին: Սա հիշեցնում է Չարենցի պոեմի դրվագներից մեկը: Վեպի հերոսներից Արամը «Գիտեր, որ նրանք երկրում տիրապետող կուսակցության անդամներն են և կազմում են նրա «զինված բռունցքը»: Նրանք բոլորն էլ կրում են տասը կրականոց «մաուզեր» սիստեմի ատրձանակ: ...Բայց այդ «բռունցքը» հիմա գործում էր տիրոջ կամքին հակառակ և հարվածում էր հաճախ տիրոջ քիթ ու մոռոթին»<sup>12</sup>: Զարյանն այն թյուր տպավորությունն է ստեղծում, որ անիրավությունները գործվում էին կառավարության գիտությամբ և թողտվությամբ: Այսպես թե այնպես, նրանք ժողովրդի մեջ մեծացնում էին հիպոթափությունը կառավարությունից:

## Դ. Դաշնակիցների խնդիրը

Տարածաշրջանում Թուրքիայի և Ռուսաստանի շահերը բախվում էին միմյանց և դաշնակից պետությունների շահերին՝ Կովկասում ազդեցությո-

<sup>12</sup> Նաիրի Զարյան, Պարոն Պետրոսն ու իր նախարարները, էջ 361:



յունը պահելու կամ այն ձեռք բերելու համար: Այս պարագայում Հայաստանը, լինելով շահերի բախման կիզակետում, պետք է կարողանար իր շահը համադրել որևէ մեկի հետ, որը նրան մասնակիորեն հաջողվեց: Բոլոր հեղինակները չէ, որ խոսում են, այսպես կոչված, դաշնակից պետությունների դիրքորոշման մասին: Չարենցը «Երկիր Նայիրի» վեպում հուզող խնդիրները քննում է ներսից՝ ուշադրությունը սևեռելով բուն հայկական ուժերի, նրանց վարած քաղաքականության ու վարքագծի վրա: Վեպում Չարենցի գերագույն նպատակը մեղքի մեր բաժնի, մեր դյուրահավատության, մեծախոսության, ցանկալին իրականության տեղ ընդունելու թերության բացահայտումն է, իսկ «Կապկազ» թամաշայում Չարենցը, թեև ժողովրդական ընկալման տեսանկյունով ու նրան մատչելի լեզվով, երևան է հանում քաղաքական իրավիճակի խայտաբղետ պատկերը: Նա թափանցում է նաև արտաքին ուժերի՝ լկտիության հասնող ագրեսիվ ձգտումների, ազդեցության գոտիներ ձեռք բերելու ցանկությունների մեջ: Այն, որ Թուրքիան ու Գերմանիան ցանկանում են Ռուսաստանին դուրս մղել Կովկասից, ակներև է Չարենցի համար: «Կապկազ» թամաշայում թուրքն ու գերմանացին նույն քաղաքականությունն են վարում: Գերմանական սպան ասում է. «Ո՛չ սեյմ, // Ո՛չ Կապկազ, // Ո՛չ էլ խորդա-մուրդա...», և թուրք փաշան ձայնակցում է նրան. «Ճիշտ է...Մեզ համար թե սեյմ, թե բարդակ»: Չարենցը ցույց է տալիս, որ Թուրքիայի նպատակը միայն Հայաստանին կամ Վրաստանին տիրելը չէր, նա ձգտում էր Ռուսաստանին դուրս մղել Կովկասից: Գերմանական սպան ընդհանրացնում է գերմանաթուրքական դաշինքի հեռահար նպատակը.

**Հիմի լսեք – ասեմ, Դուք էգուց սեյմը կցրեք, Կդառնաք տերություն երեք, Կամ, կուզեք-չորս, հինգ, վեց, յոթ, ութ –Մենակ թե Ռուսը – կափու՛տ (3, 84):**

Չարենցի մեկնաբանությամբ դաշնակիցների շահադիտական նկատառումները պայմանավորված են ոչ միայն այդ երկրների շահերով, այլև տեղական իշխանությունների վարքագծով: Սպանիչ կերպով ծաղրելով ամեն գնով իշխանությունը պահել ցանկացող նորանկախ պետությունների իշխանություններին՝ միևնույն ժամանակ Չարենցը բացահայտում է եվրոպական պետությունների դեմքը, որոնք մարդասիրական կարգախոսներով իրագործում էին «բաժանիր, որ տիրես» սկզբունքը:

Սյուս հեղինակները ևս փորձում են Հայաստանն ու հայերին տեսնել աշխարհաքաղաքական իրադարձությունների և գերտերությունների շահերի խաչաձևման համատեքստում: Այս մասին հատկապես շատ է խոսվում «Նավը...» վեպում, ուր պարբերաբար քննվում ու վերլուծվում է մեծ տերություններից օգնություն ստանալու կարելիությունը: Այստեղ բախվում են միամիտ հուսացողների և սթափ վերլուծաբանների մտքերը: Բնավ զարմանալի չէ, որ Եվրոպայի կամ մեծ տերությունների հարցը քննարկելիս միշտ ներկա է Ռուսաստանի հարցը կամ իբրև թշնամական նպատակներ հետապնդող ուժ, կամ իբրև այլընտրանք: Անվստահությունն ընդհանրական է. «Պետություններ ասվածները պարզապես անօթի գայլեր են, որ զո-

հի մտերը չեն իմանում ինչպէս բաժանեն և, հիմա էլ, մէկ մէկի դեմ են դաւում...Տաճիկներին և թրքերին մեզ դէմ զինողները հէնց դրանք են, և մենք այդ մասին շատ որոշ տեղեկութիւններ ունենք... Նայեցէք անգլիացիները ինչէր են անում Կովկասում...Չէ՛, մեզ կարող է հասկանալ միայն Ռուսաստանը...

-Այս ռը Ռուսաստանը... Հարցը հէնց դրանումն է...» (15442-443):

Դաշնակիցների մասին երգիծական, բայց ավելի կենդանի պատկերներ է ստեղծել Գուրգեն Մահարին «Երիտասարդության սեմին» վիպակում: Նա, կարելի է ասել, պարոնյանական ծաղրով է ներկայացնում դաշնակիցներից մեկի տեսակետը. «Եվրոպական ազդեցիկ գործիչներից մեկը, կարծես Սան-Ռեմոնում հայտարարեց, որ իզուր հայերը կախվում են այս ու այն մեծ պետության փեշից- «վերցրեք մեր մանդատը»: Թող հայերը ինքնուրույն կերպով իրենց գլխի ձարը տեսնեն, ծլեն, ծաղկեն, բարգավաճեն և ապացուցեն, որ արժանի են մեծ պետությունների ուշադրությանը»<sup>13</sup>: Այս դառը երգիծանքի մեջ կա նույնքան դառը ճշմարտություն, այն է՝ յուրաքանչյուրը փնտրում է իր քաղաքական շահը, իսկ ինչ կարող էր առաջարկել Հայաստանը ակնկալվող օգնության դիմաց: Սա մեկ անգամ ևս սովորեցնում է սեփական ուժերի վրա հենվելու առաջնայնությունը: Գուրգեն իզուր է Մահարին գրում. «Դավաճանեց հայ բազմաչարչար ժողովրդին և Սան-Ռեմոյի վեհաժողովը, և ամերիկյան սենատը, և Ազգերի լիգան» (էջ 390): Օտարի ինչ պետքն էր, որ թուրքերը հայերին կոտորել են, ինչու են հայերը «առանց ծանր ու բարակ կշռադատելու կոտորվել» կամ թե քաշվել են Տեր-Ջորի անապատները, կամ փախել են Կովկաս: Օտար պետությունները ինչու՞ պիտի միջամտեն. «Ջանք, մենք ինչու՞ պիտի միջամտենք Թուրքիո ներքին գործերին: Այսօր եթե անգլիական կառավարությունը որոշե իր հպատակներին թնդանոթի քաշել, Թուրքիան իրավունք ունի՞ միջամտելու...» (էջ 391): Հիրավի ինչու՞...

Մահարին, վերջնականապես ձշտելու համար դաշնակիցների նկատմամբ իր վերաբերմունքը, վիպակի «Արարատյան միջ կամ ապագա պատմաբանի համար հում նյութեր» գլխում անդրադառնում է, այսպես կոչված, դաշնակիցների մեծամիտ ու պահանջկոտ վարքագծին, այն է՝ «Դուք դեռ նոր եք անկախություն, ուստի առանց մեր ձեռքի գործ ընելու չէք, վասնզի Հիսուսը կրնա բարկանալ... բոլշևիկ չտեսնեմ, չէ նե խիստ պիտի բարկանամ»<sup>14</sup> և, վերջապես, «Ամբողջ Թուրքիան ձեզի կուտանք... Գացեք և առեք» (էջ 386): Պարոնյանական այս ծաղրն էլ ուղղված է հզոր պետություններից մեկի սպայակույտի ներկայացուցիչ միատր Փիչին: Կարծես ամեն ինչ ասված է: Մնում է ավելացնել, որ ափսոս, որ ծաղրի մի մասն էլ «Արարատյան միջ» ձևակերպման տեսքով վերաբերում է Առաջին Հարապետությանը, որն իր բոլոր թերություններով ու վախճանով հանդերձ, հայ ժողովրդի դարավոր երազանքի իրականացման դժվար մի փորձ էր, առանց որի անհնար կլիներ պատկերացնել այսօրվա մեր հանրապետության գոյությունը: Հաշվի առնելով նկարագրվող ժամանակաշրջանի առանձնահատկությունը, եվրոպական պետություններից օգնություն ակնկալող ժողովրդի անտեղի հույսերը՝

<sup>13</sup> Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, էջ 389:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 385:

գրեթե բոլոր գրողները ավելի կամ պակաս չափով անդրադարձել են դաշնակից պետությունների վարքագծին: Եթե Կ. Ջարյանի մոտ այդ թեման հիմնականում քննարկվում է մտավորականների վերլուծություններում ու գնահատականներում, ապա Ստ. Ջոռյանի մոտ թեմային անդրադարձ կա զուտ ժողովրդական սպասելիքների տեսանկյունից, ինչպես՝ «-Նոր բան լսել եք: Ասում են՝ անգլիացիները կարգադրել են բայլշևիկներին, որ Հայաստանից հեռանան», - ասում է վեպի հերոսներից մեկը: Եվ խոսակցությունները շարունակվում են այս ոգով:

## Ե. Ապստամբություն

1921 թ. Փետրվարյան ապստամբությանը գրողներից քչերն են անդրադարձել և այն էլ ոչ բավարար խորությամբ: Դա հասկանալի է, քանի որ խորհրդային տարիներին այդ մասին գրեթե չէր խոսվում: Ստ. Ջոռյանը երբեք չի շրջանցել թեման, և անկախ հարցադրման խորությունից, նրա գրվածքները հիշյալ թեմատիկ շրջանակներում ունենին մի էական տարբերություն: Ջոռյանի երկերում գաղափարական-քաղաքական եզրակացությունները տրամաբանորեն բխում են կենդանի կյանքի պատկերներից, իսկ գրողն արտաքուստ մնում է չեզոք դիրքերում՝ ակներև չցուցադրելով իր համակրանքներն ու հակակրանքները: Գեղարվեստի առումով սա առավելություն է:

Խնդրո առարկա պատմական շրջանին Ստ. Ջոռյանի ծավալուն գործերից վերաբերում են երեքը՝ «Գրադարանի աղջիկը», «Հեղկոմի նախագահը» պատմվածքները և «Ամիրյանի ընտանիքը» վեպը, որոնք, սակայն, տարընթերցումների տեղիք են տալիս: Ապստամբության խնդիրն ավելի լայնորեն է լուսաբանված «Ամիրյանի ընտանիքը» վեպում, որը թեև Ջոռյանը գրել է 1921-ին, բայց առաջին անգամ հրատարակվել է 1963-ին, կարելի է ասել՝ խրուշչովյան «ձնհալի» տարիներին: Ջոռյանը Ամիրյանի ընտանիքը ներկայացնում է իբրև հասարակության մի մանրակերտ, ուր բախվում են աշխարհընկալման ու սերունդների հակադրության, քաղաքացիական կողմնորոշման, հոգեբանական, հարազատական զգացմունքները: Ամիրյանի ավագ որդին հայրենիքը պաշտպանելու համար մեկնել է ռազմաձակատ և ինքնասպան եղել Կարսի անկման պատճառով, փոքր որդին՝ Արամը, ուսումը Մոսկվայում կիսատ է թողել, դարձել է բոլշևիկ և եկել, Հայաստանում բարձր պաշտոն է ստանձնել, աղջիկը՝ Ջարոն, պատանեկան խանդավառությամբ ոգևորվում է բոլշևիկների գործերով և այդ ամենին նայում իբրև հանդիսանքի: Ամիրյանը հպարտանում է ավագ զավակով և իրեն վարկաբեկված զգում փոքր որդու քաղաքական կողմնորոշման համար: Արամը նախկինում սիրել է կապիտալիստ, գինիների և բամբակի արդյունաբերությամբ զբաղվող Ջայյանի աղջկան՝ Նվարդին, բայց հիմա սառն է վերաբերվում նրան՝ վախենալով, որ իրեն կմեղադրեն «բուրժուի» աղջկան սիրելու համար: Նախկին մտերիմներն ու բարեկամները խուսափում են Ամիրյանից՝ իբրև բոլշևիկի հորից:

Ջոռյանի վեպում առավել հավաստի են արտահայտվել Փետրվարյան ապստամբության պատճառները: Գրողը համոզում է, որ բոլշևիկներն իրենց

Փ- (ՃՁ) փաթիլ, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
վլ-մ համահայկական հանդես

գործունեությամբ լցրին ժողովրդի համբերության բաժակը, ուստի դաշնակցականներին հաջողվեց ոտքի հանել ժողովրդին: Ամիրյանը ծանր էր տանում, երբ «տեսնում էր երկար տարիների դպրոցը դառնում է գորանոց, և գորանոցը, ընդհակառակը, դպրոց, հյուրանոցները՝ գորամասերի շտաբ, իսկ մարդիկ հեռացվում էին իրենց պապական ու հայրական հարմար տներից՝ Ամիրյանին այնպես էր թվում, թե հին կյանքը հին շապկի նման պատռվում է հազար տեղից, այնպես, որ էլ կտրել-միացնել անկարելի կլինի...» (էջ 199): Բայց սա ամենն էլ հնի կարոտախտ չէ, այլ նորերի սխալներից ստացած տպավորություն: Զայյանի ձեռքից առնում են նրա ունեցվածքը, տները, խանգարում են հանգիստը, ոտնահարում իրավունքները սուկ նրա համար, որ հարուստ է: Եվ ոչ միայն նրա նկատմամբ են այդպես վարվում: Իսկ բոլշևիկ Արամը արդարացնում է այդ. «... ում տունը կամ ավելորդ ապրանքը գրավում են՝ նա ուրիշ բան չի կարող լինել, եթե ոչ թշնամի» (էջ 221): Հայրն զգուշացնում է, որ նման վարվելակերպը ի վերջո կպատի ժողովրդի համբերությունը: Զորյանը տպավորիչ օրինակներով ցույց է տալիս, որ նորերը կողոպտում են ոչ միայն իրենց հայտարարած դասակարգային թշնամուն, այլև բոլորին անխտիր. «Աղքատ գյուղացու երինջը վերցրել են ունևորների կովերի հետ, աղքատ գյուղացիներից նույնքան այլուր են վերցրել՝ որքան ունևորներից» (էջ 325): Սրան ավելանում էր նաև կրոնի և եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը, սեփականության իրավունքի արհամարհումը և այլն: Սրանք հարցի իրավական ու սոցիալական կողմերն են: Կար հիմնականը՝ գաղափարականը: Ամիրյանը և նրա գաղափարակիցները հայրենիքի նվիրյալներ են, իսկ բոլշևիկները, մեղմ ասած, այլ կերպ են նայում խնդրին: Արամը հայտարարում է, որ բոլշևիկները դեմ չեն հայրենիքին, դեմ են ոչ թե հայրենասիրությանը, այլ ազգամոլությանը: «-Ազգամոլություն՝... Հայաստանում ազգամոլություն չկա..., - դժգոհեց Ամիրյանը: -Ազգամոլ են մեծ, աշխարհակալ ազգերը: Մեզանում կա միայն ազգասիրություն» (էջ 174): Իսկ Արամը և նրա գաղափարակիցները համոզված են, որ իրենք իրենց գործունեությամբ Հայաստանը հանում են մեկուսացումից և միացնում են միջազգային հանրությանը՝ այդ կերպ ապահովելով նրա անվտանգությունն ու զարգացումը:

Զորյանն իր ժամանակների (անգամ 60-ականների համար) շատ խիզախ քայլ է անում՝ ցույց տալով, որ բոլշևիկներն իրենց կոպիտ՝ սոցիալական և իրավական, իրավիճակին ոչ համապատասխան քաղաքականությամբ ժողովրդին (որքան էլ նրանց կազմակերպեին դաշնակցականները) մղեցին ապստամբության: Վեպում, ընդհանուր առմամբ, ժողովուրդը դժգոհ է բոլշևիկներից: Առօրյա ասեկոսներում ժողովուրդը պատճառաբանում է ապստամբության պատճառները. «Ոմանք դրա պատճառը համարում էին այն, որ բայլշևիկները չհարգեցին մասնավոր սեփականությունը, կատարեցին բռնագրավումներ, և ահա հետևանքը եղավ գյուղացիների և քաղաքացիների դժգոհությունը, և սրանից օգտվեց ազգային կուսակցությունը... Իսկ մյուսները, դրանց հետ և շատ բայլշևիկներ, պնդում էին, թե եթե ազգային կուսակցությունը Անգլիայի գործակալը չլիներ և իշխելու փառասիրություն չունենար՝ ոչինչ էլ չէր պատահի» (էջ 287): Ինչպես համոզվեցինք վերևում, Կ. Զարյանի «Նավը լերան վրայ» վեպում ևս գրեթե համատարած

էր բոլշևիկներից ունեցած ժողովրդի դժգոհությունը, բայց այնտեղ դա չի ընդգծվում իբրև ապստամբության ուղղակի պատճառ: Տրամաբանորեն դա կարելի է եզրակացնել: Ապստամբության հարցը քննարկելիս չի կարելի հաշվի չառնել հակառակ երևույթը ևս: Նաիրի Զարյանը «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» վեպում տրամագծորեն հակառակ տեսակետն է զարգացնում՝ ցույց տալով, որ դաշնակցական մաուզերիստների անիշխանական վարքագիծը և Նորքի Վարդագարի նմանների բռնություններն ու կոդոպուտը ժողովրդին հոգնեցրին, և նա հավատաց բոլշևիկների խոստումներին: Եզրակացությունը նույնն է. երկու դեպքում էլ և ընդհանրապես, ամեն մի իշխանություն ինքն է նախապատրաստում իր վախճանը, եթե վարում է հակաժողովրդական քաղաքականություն:

Վերադառնանք Զորյանի վեպին: Գրողն այստեղ, կարելի է ասել, գյուտ է արել՝ ստեղծելով ժողովրդի կողմից «փիլիսոփայության դոկտոր» անվանված Ռուբենի՝ պատմության ուսուցչի կերպարը: Նա դեմ է ամեն կարգի բռնության, հեղափոխության ու քաղաքացիական պատերազմի: Նրա իդեալը մարդու կատարելագործումն է, հասարակության զարգացման այնպիսի մակարդակի ստեղծումը, որը կբացառի ամեն կարգի բռնություն ու հեղափոխություն, այլ կերպ՝ կբացի էվոլյուցիոն զարգացման ճանապարհը: Վիպական գործողությունների ընթացքում Զորյանը համոզում է, որ կուսակցությունների բաժանված զարգացած հասարակության մեջ մարդը չի կարող բացարձակ չեզոքություն պահպանել: Այդպես է լինում «փիլիսոփայության դոկտոր» Ռուբենի հետ, ով հերթով գերի է ընկնում նախ՝ բոլշևիկներին, հետո՝ դաշնակցականներին՝ չկարողանալով ապահով մնալ իր չեզոք դիրքերում:

Ապստամբությանը համեմատաբար ծավալուն անդրադարձ կա նաև Կ. Զարյանի «Նաւը լերան վրայ» վեպում: Սակայն ընթերցողը այն տպավորությունն է ստանում, թե գրողը փոքր-ինչ հեռվից է նկարագրում դեպքերը: Թեև վիպական գործողությունների ընթացքի մեջ ժողովրդի ապստամբների, ազգային իշխանությունների վերադարձի ուրախության մթնոլորտը որոշակիորեն կա վեպում, բայց գլխավոր հերոսն ընդհանուր առմամբ դուրս է մնում այդ մթնոլորտից: Ապստամբության գաղափարը տրամաբանորեն բխում է բոլշևիկների գործողություններից, բայց Զարյանն այստեղ այլևս քաղաքական ու փիլիսոփայական վերլուծություններ չի անում, ինչպես վեպի նախորդ էջերում:

\* \* \*

Ընդհանուր առմամբ՝ 1918-1921 թթ. իրադարձությունները պատկերող հայ գրողների երկերը, չափածո, թե արձակ, որոշակիորեն քաղաքականացված են, գրված երբեմն գաղափարախոսական հակադիր դիրքերից: Գրական ստեղծագործությունների վրա զգալի է նաև այն ժամանակի կնիքը, երբ գրվել են դրանք: Այդուհանդերձ, վերը հիշատակված գրական երկերը տարբեր կողմերից լրացնում են պատմությունը, կենդանացնում են չոր փաստերը և այսօրվա ընթերցողին օգնում կողմնորոշվելու պատմական անցուդարձի բարդ խաչմերուկներում:

**Ժ.Ա. Քալանթարյան** – հեղինակ է բուհական ձեռնարկների, համահեղինակ հանրակրթական դպրոցի 11-12-րդ դասարանների հայ գրականության դասագրքերի (որոնք գործում են 1993-ից առ այսօր), ունի մենագրություններ («Եղիշե Չարենց», «Վահագն Դավթյան»), հոդվածների ժողովածուներ:

Summary

## LITERARY REFLECTIONS OF ARMENIAN HISTORY OF 1918–1921

In the works of eyewitness writers

Zhenia A. Kalantaryan  
*Doctor of Philological Sciences*

**Key words** – Republic of Armenia, Bolsheviks, war, independence, Turkish, enemy, people, national romanticism, revolution.

The article is based on the principle that especially from the perspective of historical events literature on the foundation of vital material supplements historical data with the lively images of life and makes it alive. For being more credible to the discussed events the works of actual, witness and participant writers (Y. Charents, St. Zoryan, K. Zaryan, N. Zaryan, G. Mahari, V. Totovents) were chosen who altogether restore the perceptions and reflections of the events of 1918–1921. Consequently the conditions referring to the time preceding the formation of the First Armenian Republic, the declaration of independence, inner and outer enemies, the behaviour of ally countries and the February revolution are discussed by the principal of sequence and comparison. The often coincident standpoints of the authors can help the reader to come closer to the truth.

Резюме

## ХУДОЖЕСТВЕННЫЙ ОТКЛИК НА ИСТОРИЮ АРМЕНИИ 1918–1921 ГГ.

В произведениях писателей–очевидцев

Женя А. Калантарян  
*Доктор филологических наук*

**Ключевые слова** – Республика Армения, дашнакцаканы, большевики, война, независимость, турки, враг, народ, национальный романтизм, революция.

В основе статьи лежит принцип, согласно которому, литература

дополняет данные истории и картинами живой жизни оживляет историю. С целью большей достоверности были выбраны произведения писателей – современников, очевидцев и участников обсуждаемых событий (Е. Чаренц, С. Зорян, К. Зарян, Н. Зарян, Г. Маари, В. Тотовенц). Произведения этих авторов, взятые все вместе, восстанавливают литературное восприятие и отклики на события 1918–1921 гг. В соответствии с этим, поочередно и по принципу сравнения раскрыты важные обстоятельства периода, предшествующего созданию первой Республики Армения, провозглашение независимости, борьба против внутренних и внешних врагов, поведение государств-союзников и перипетии Февральского восстания 1921 г. Часто совпадающие позиции авторов могут помочь читателю подойти ближе к истине.

## REFERENCES

1. **Abovyan Khachatur**, Verq Hayastani, Yerevan, ‘ԵՓՄ’, 1981 **(in Armenian)**
2. **Zaryan Kostan**, Navy leran vra, Yerevan, ‘Sargis Khachents, Print-info’, 2015 **(in Armenian)**
3. **Zaryan Nairi**, Paron Petrosn u ir nakharanerə, Yer., ‘Haypethrat’, 1958 **(in Armenian)**
4. **Zoryan Stepan**, Amirjani əntaniqə, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, h.4, Yerevan, ‘Sovetakan grogh’, 1980 **(in Armenian)**
5. **Totovents Vahan**, Yerker yereq grqov, girq 3, Yer. ‘Nairi’, 1991 **(in Armenian)**
6. **Mahari Gurgen**, Yeritasardutyanyan semin, Yer., ‘Haypethrat’, 1956 **(in Armenian)**
7. **Charents Yeghishé**, Yerkeri zhoghovatsu 6 hatorov, hat.3, ‘HSSR GA’, 1964 **(in Armenian)**
8. **Charents Yeghishé**, Yerkeri zhoghovatsu, h. 5, 1966 **(in Armenian)**



Կարէն Հ. Խանլարեան  
Պատմ. գիտ. թեկնածու (Թեհրան)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ ԽՈՐ-ՔԱՅԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մուտք

**Բանալի բառեր** – Հայաստանի Հանրապետութիւն, Հայկական հարց, Վուդրօ Վիլսոն, Մուհամմեդ Ալի Ֆորուդի, Փարիզի խաղաղութեան վեհաժողով, Մուստաֆա Քեմալ, Կարմիր բանակ, Իրաւարար վճիռ:

1917 թ. Փետրուարեան դեմոկրատական յեղափոխութիւնից ու դրան յաջորդած բոլշևիկեան յեղաշրջումից յետոյ, Հայոց քաղաքական ղեկավարութիւնը, ՀՅ Դաշնակցութեան գլխաւորութեամբ, 1918 թ. մայիսի 28-ին վերականգնեց Հայաստանի անկախութիւնը: Հայաստանի Հանրապետութիւնը մտաւ համաշխարհային քաղաքականութեան ասպարէզ որպէս անկախ, դեմոկրատական հանրապետութիւն և ունեցաւ ընդամենը երկուս ու կէս տարւայ կեանք:

Նորանկախ հանրապետութեան անկումը կարելի է քննարկել տարբեր տեսանկիւններից, սակայն սոյն տողերի հեղինակը փորձում է քննարկուող թեմայի առանցքում վեր հանել **արտաքին քաղաքական իրավիճակը**, որպէս կարևորագոյն գործօն և այս տեսանկիւնից ընթերցողների դատողութեանը յանձնել համապատասխան հիմնաւորումները:

### 1. Հայկական հարցը Փարիզի խաղաղութեան վեհաժողովում

Առաջին աշխարհամարտի աւարտից և Գերմանիայի, Ավստրիա-Հունգարիայի ու Օսմանեան կայսրութեան պարտութիւնից յետոյ Փարիզի խաղաղութեան վեհաժողովն իր աշխատանքներն սկսեց 1919 թ. յունւարին: Յաղթանակած ուժերը Բրիտանիայի և Ֆրանսիայի առանցքայնութեամբ ձգտում էին աշխարհի ու մասնաւորապէս Եւրոպայի համար նոր կարգեր սահմանելուն: Խորհրդային Ռուսաստանը ներկա չէր Փարիզի խաղաղութեան վեհաժողովում (հարկ է նշել, որ այդ պետութիւնը դեռևս չէր ճանաչված որպէս իրաւական սուբյեկտ): Փարիզի խաղաղութեան վեհաժողովում ներկայ էին նաև այլ պետութիւններ, ինչպէս Իտալիան, Բուլղարիան, Յունաստանը ու



Հայաստանի Հանրապետությունը՝ որպես «փոքր դաշնակից»:

Հայաստանի անկախության հռչակումից մեկ տարի յետոյ միայն Հայաստանի քաղաքական ղեկավարները արտաքին քաղաքականության օրակարգ մտցրին երկրի տարածքային ամբողջականության և նրա նկատմամբ սեփական իրատունքների խնդիրը: Նրանք այդ մասին իրենց սկզբունքային դիրքորոշումները փոխանցեցին Փարիզի վեհաժողովին ներկա Աետիս Ահարոնյանի գլխավորությամբ՝ ՀՀ պատուիրակությանը և, Պօղոս Նուբար Փաշայի ղեկավարությամբ՝ Արևմտահայ ներկայացուցչությանը, որպեսզի վերջիններս կարողանան արծարծել Արևմտեան Հայաստանի տարածքները Հայաստանին վերամիաորելու հարցը և պաշտպանել այդ դիրքորոշումը:

Այսպիսով, խաղաղության վեհաժողովի քննարկումների օրակարգում ընդգրկուեց Հայաստանի ու Օսմանեան կայսրության տարածքային սահմանազատման խնդիրը և 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրուած Սևրի պայմանագրով բոլոր կողմերը, ներառեալ Օսմանեան կայսրութիւնը, «դէ յուրե» ճանաչեցին Հայաստանի անկախ Հանրապետութիւնը (88-րդ յօդուածը) ու նաև ՀՀ իրաւական գերիշխանութիւնը Վանի, Էրզրումի (Կարին), Բիթլիսի (Բաղէշ) և Տրապիզոնի վիլայեթների վրայ (89-րդ յօդուած):

Միջազգային օրէնքի հիմնարար հասկացութիւնների հիման վրայ, Սևրի պայմանագիրը պէտք է վերջնականապէս վաւերացւէր ստորագրող կողմերի, այդ թւում ՀՀ ու Օսմանեան կայսրութեան խորհրդարանների միջոցով, ապա և դրա դրոյթները գործադրման յանձնւէին: Սակայն, Թուրքիայի «Ազգային խորհրդարանը» բացայայտօրէն մերժեց վաւերացնել պայմանագիրը, իսկ Հայաստանի խորհրդարանը, Հանրապետութեան կործանման բերումով, ընդհանրապէս առիթը չունեցաւ քննարկել ու վաւերացնել այն: Ահա այս պարագան, այսինքն՝ **Սևրի պայմանագրի վաւերացման ընթացակարգի խափանման հարցը, մեր կարծիքով, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի անկախութեան կործանման գլխաւոր պատճառներից է:**

Միւս կարևոր խնդիրը Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանային վէճի հետ կապուած մանրամասների ճշտումն էր, որի մասնագիտական բնույթի բերումով, նախատեսուել էր հանգուցալուծել իրաւարարութեան (արբիտրաժ) ճանապարհով՝ երրորդ կողմի, այսինքն Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի Իրաւարար վճռի հիման վրայ: Հայաստանի Հանրապետութիւնը և Օսմանեան կայսրութիւնը երկու անգամ՝ առաջին անգամ 1920 թ. մայիսին՝ Սան-Ռեմոյի ժողովում, որպէս բանակցող կողմեր, և երկրորդ անգամ՝ նոյն տարւայ օգոստոսին՝ Սևրի գագաթնաժողովում, Սևրի պայմանագրի 89-րդ յօդուածի ձևաչափով, միջնորդութեան համար պաշտօնական յայտ են ներկայացրել ԱՄՆ օրւայ նախագահ Վուդրօ Վիլսոնին:

Վուդրօ Վիլսոնը 1920 թ. նոյեմբերին կայացրեց և հրապարակեց իր Իրաւարար վճիռը, որը կազմուած էր շուրջ 300 էջից, 19 քարտէզներից և մեկ ընդհանուր քարտէզից: Վիլսոնի Իրաւարար վճռի մէջ կարևոր կէտն այն է, որ նա ոչ միայն ստորագրել է այդ վճիռը, այլ նաև այն կնքել «ԱՄՆ մեծ կնիքով», և փաստօրէն այդպիսով, նրան օժտել է ԱՄՆ գործող օրէնքի իրաւական ուժով:

ՎԷՎ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) քառի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018



Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանագիծը  
Վիլսոնի Իրաւարար վճռի հիման վրայ

Հարկ է նշել, որ Վիլսոնի կողմից արձակուած Իրաւարար վճիռը ժնկի 1907 թ. կոնվենցիայի դրույթների համաձայն՝ համապարփակ ու ամբողջական է և ունի իրաւագիտական երեք յատկանիշներ, ըստ հետևեալի. ա. Անվիճելի է ու ենթակայ չէ յետագայ քննարկման կամ վերանայման, բ. Վերջնական է ու գործադրելի իրաւարար վճռի դիմողների, տուեալ դէպքում՝ Հայաստանի ու Թուրքիայի համար, և վերջապէս՝ գ. Անժամանցելի է կամ չունի վաղեմութեան ժամկէտ:

Օսմանեան կայսրութիւնը և նրա իրաւայաջորդ՝ Թուրքիայի Հանրապետութիւնը, հակառակ ժնկի 1907 թ. կոնվենցիայի հարկադրանքին, մինչ օրս խուսափել են գործադրել Վուդրօ Վիլսոնի Իրաւարար վճիռը, հետևաբար, նրանք խոշոր խախտում են կատարել միջազգային իրաւունքի ոլորտում:

Արտաքին քաղաքականութեան տեսանկիւնից այս հանգամանքը 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետութեան կործանման կարևոր պատճառներից մէկն է:

## 2. Փարիզի խաղաղութեան վեհաժողովում ներկայ դերակատարները

Պատմաբան Դէյուիդ Ֆրոմկինը հետաքրքրական մանրամասնութիւններ է ներկայացնում Փարիզի խաղաղութեան վեհաժողովում հայերի մասնակ-

ցութեան մասին: Նա գրում է. «Հայաստանի երկու հիմնական պատուիրակություններից բացի, շուրջ 40 այլ հայ ներկայացուցիչներ էլ ներկայ էին խաղաղութեան վեհաժողովում»<sup>1</sup>: Փարիզի Խաղաղութեան բանակցություններում հայկական դիւանագիտական պատուիրակությունները ակտիւօրէն ջանքեր էին գործադրում հայ ժողովրդի պատմական իրաւունքները վերականգնելու և պապենական հայրենիքի հողատարածքներն ազատագրելու համար, ու իհարկէ նրանց ջանքերն ակնառու արդիւնքներ էին տալիս:

Հայոց Մեծ Եղեռնի խնդիրը, չնայած մարդկութեան դէմ յանցագործութիւնները դատապարտող իրաւական դաշտի բացակայութեան, այդ ժամանակ, այնուամենայնիւ բարոյական մեծ ազդեցութիւններ էր գործում: Միւս կողմից, սպանդից փրկուած հայերին պաշտպանելու նպատակով ձևաւորուած հայ կամաւորական շարժման շնորհիւ, Հայաստանի անկախ Հանրապետութիւնը յայտնուել էր յաղթող պետութիւնների շարքում և այդ բերումով, խաղաղութեան վեհաժողովի ընթացքում Հայաստանը յիշատակում էր որպէս փոքր դաշնակից:

Քանի որ Միացյալ Նահանգներն առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում անկողմնակալ էր եղել, Վուդրօ Վիլսոնն իր իւրայատուկ դիւանագիտական հնարքներով, փորձում էր միջնորդի որոշիչ դերակատարութիւն ունենալ բանակցութիւնների գործընթացքի վրայ և որոշ պարագաներում, այդ թում՝ Հայկական հարցում, իր արդարատենչական հանդուժմաները յաճախ գերադասում էին իր պետութեան կայսերապաշտական քաղաքականութեանը: Բնականաբար Վիլսոնի այս դերը ցանկալի չէր ֆրանսիացի ու անգլիացի դիւանագէտների համար:

Փարիզի խաղաղութեան վեհաժողովին նաև մասնակցում էին Իրանի նման անկողմնակալ այլ պետութիւններ, որոնք տրամաբանօրէն ընդհանրապէս յարում էին Վիլսոնի դիրքերին:

Պարտուած պետութիւնները փորձում էին հնարաւորութիւններ որսալ յաղթանակած պետութիւնների միջև առկայ տարակարծութիւններից ու ձեղքուածքներից: Իրանի քաղաքական ոլորտի յայտնի դէմքերից և Փարիզի խաղաղութեան վեհաժողովի մասնակից պատուիրակութեան անդամ Մուհամմեդ Ալի Ֆորուդին Վիլսոնի դերակատարութեան մասին իր 1919 թ. փետրւարի 26-ի օրագրում այսպէս է գրել. «Այսօր վեհաժողովի ընթացքում լսեցինք հայերի խնդիրները: Երէկ պրն. Վիլսոնը Բոստոնում լաւ ելոյթ է ունեցել և ասել է, որ ներկայումս ԱՄՆ-ն դարձել է ողջ աշխարհի յոյսի ապաւէնը, ուստի ստիպուած է ի կատար ածել ժողովուրդների յոյսերը»<sup>2</sup>:

Հանրապետական ու դեմոկրատական կուսակցութիւնների աւանդական մրցակցութեան պատճառով ԱՄՆ-ի սենատի պահպանողականներին չափազանց մտահոգում էր Վուդրօ Վիլսոնի անձնական հեղինակութիւնը, որով Փարիզի խաղաղութեան վեհաժողովում հանդէս էր եկել, որպէս «ժողովուրդների փրկիչ» և «Համաշխարհային խաղաղութեան պատգամաբեր» և բնականաբար, դրանով դեմոկրատները քաղաքական նոր առաւելութիւններ էին ձեռք բերելու գալիք նախագահական ընտրութիւններում:

1 **Ֆրոմկին Դեյվիդ**, Խաղաղութիւն, որ յօդս ցնդեցրեց միւս բոլոր խաղաղութիւնները, պարսկերէն թարգմանութիւն, Թեհրան, 2009, էջ 387:

2 **Ֆորուդի, Մուհամմեդ Ալի**, Փարիզի խաղաղութեան վեհաժողովի օրագրութիւնները, պարսկերէն, Թեհրան, 2015, էջ 61:

Ֆորուլին իր 1919 թ. ապրիլի 15-ի օրագրում այսպես է անդրադառնում Վիլսոնին ընդդիմադիր ամերիկացի դիւանագետների խարդաւանքներին. «Առաւօտեան պայմանաւորութեան համաձայն իմ բնական եկաւ Արֆահ Ալ-Դոլեն: Նա ասաց, որ հանդիպել է ամերիկացի պարոն Փրաթի հետ, որ ասել է թէ Վիլսոնը հեղինակագրուել է, որովհետև ԱՄՆ ժողովուրդը դէմ է Ազգերի Լիգային և այս հարցն առաջադիմութիւն կունենա թէ ոչ յայտնի չէ... Դա է պատճառը, որ դուք պետք է բրիտանացիների հետ քայլ պահէք»<sup>3</sup>:

Արֆահ Ալ-Դոլեն Թուրքիայում Իրանի նախկին դեսպանն էր, իսկ Էդուարդ Սփենսեր Փրաթը Ալաբամայի աւանդական, պահպանողական շրջանակներից յայտնի դիւանագետ էր արևելքում ու Իրանում: Թւում է, թէ ԱՄՆ-ի այս շրջանակների լոբբինգը և նրանց կողմից Իրանի դիւանագիտական պատուիրակութեանն ուղղուած՝ Վիլսոնին չաջակցելու բացայայտ առաջարկները ջանքեր էին ընդդէմ Հայաստանի ու Թուրքիայի սահմանագծի վերաբերեալ Վիլսոնի իրաւարարութեան:

Օսմանեան կայսրութեան մասին որոշում կայացնելու ընթացքը դադարեցուել էր 1919 թ. յուլիսից մինչև նոյեմբեր և բանակցութիւնների շարունակութիւնը պայմանաւորուել էր Ազգերի Լիգայի կողմից Հայաստանի խնամակալութիւնը ընդունելու որոշմամբ: 1920 թ. մայիսի 4-ին Վուդրո Վիլսոնը ԱՄՆ-ի սենատում ներկայացրել էր Ազգերի Լիգայի Հայաստանի խնամակալութեան մասին օրինագիծը, որը շուրջ մէկ շաբաթ յետոյ մերժուեց ԱՄՆ սենատի կողմից<sup>4</sup>:

Բրիտանիան էլ իր հերթին ջանքեր էր գործադրում խանգարելու Վիլսոնի դերակատարութեանը: Վիլսոնի առաջադրանքներից մէկն էլ Հայաստանի ու Օսմանեան կայսրութեան միջև սահմանագծի ձշտորոշումն էր և դրա մասին Իրաւարար վճռի կայացումը: Արդիւնքում բրիտանացի դիւանագետները ուղղակի կամ անուղղակի հակադրում էին Հայաստանի շահերին ու նոյնիսկ անկողմնակալ պետութիւններին, այդ թւում Իրանին պատգամներ էին հաղորդում տուեալ հարցով չուղեկցել Վիլսոնին: Մոհամմեդ Ալի Ֆորուլին անդրադարձել է Բրիտանիայի վերոյիշեալ քաղաքականութեանը: Նա իր 1919 թ. մայիսի 8-ի օրագրում այսպէս է գրում. «Պարզուեց, որ Շահը (Ահմեդ շահ Ղաջարը) Ջոքա Ալ-Դովլէի միջոցով Մոշաւերին պատգամ է ուղարկել, որ իր ցանկութիւնն է՝ համահունչ լինել ամերիկացիների հետ: Այս խնդիրներն իրար են հիւսուել, սակայն պարզ է, որ բրիտանացիները որքան մտահոգ են այս խնդրից և զգում են, որ ֆրանսացիներն էլ մրցակցութիւն ունեն: Բրիտանացիների ու ֆրանսացիների միջև էլ մրցակցութիւն կայ: Պարոն Փրենին ասում է, քանի որ նախատեսուել է ամերիկացիները հայերի խնամակալը լինեն, ԱՄՆ-ի հետ զիջումների գնալը նպատակաւարմար չէ Իրանի համար»<sup>5</sup>: Մոշաւեր Ալ-Մամալեքը (Մոշաւեր) կամ յայտնի Ալիդուլի Մասուդ Անսարին Փարիզի խաղաղութեան վեհաժողովում իրանական պատուիրակութեան ղեկավարն էր, ով Վոսուդ Ալ-Դովլէի (Իրան)

3 Նոյն տեղում, էջ 98:

4 Տե՛ս **Ֆրոմկին, Դեյվիդ**, Խաղաղութիւն, որ յօդս ցնդեցրեց միւս բոլոր խաղաղութիւնները, պարսկերէն թարգմանութիւն, Թեհրան, 2009, էջ 384:

5 **Ֆորուլի, Մոհամմեդ Ալի**, Փարիզի խաղաղութեան վեհաժողովի օրագրութիւնները, պարսկերէն, Թեհրան, 2015, էջ 69:

ու Քոքսի (Բրիտանիա) միջև նողկալի պայմանագրի ստորագրումից յետոյ, պաշտօնագրկուեց և 1919 թ. օգոստոսի 9-ին գործուղուեց Թուրքիա, որպէս Իրանի դեսպան<sup>6</sup>: Իսկ ֆրանսիացի Ադոլֆ Փրենին Ֆրանսիայի հնուտ դիւանագէտներից էր, որ Փարիզի խաղաղութեան վեհաժողովին մասնակցում էր, որպէս Իրանի իրաւական խորհրդատու<sup>7</sup>:

Փրենինի շանտաժները և Իրանի վարչապետ Վոսուդ Ալ-Դովլէի դաւաճանական պահածքը լաւապէս պարզում էին Բրիտանիայի ու Ֆրանսիայի կամքը՝ Վիլսոնի իրաւարար դերակատարութիւնը խափանելու ուղղութեամբ:

Ֆրոմկինն այս առնչութեամբ գրում է. «Լլոյդ Ջորջը (Բրիտանիայի վարչապետ- Կ. Խ.) 1919 թ. սկզբին կողմնակից էր այն նախագծին, որով Կոստանդնուպոլիսն ու Հայաստանը տրւում էր ԱՄՆ-ին, Իզմիրի կենտրոնով մի տարածք բաժին էր հասնում Յունաստանին և երկրի մնացած բաժինը բաժանում էր Ֆրանսիայի ու Իտալիայի միջև: Քանի ամիս յետոյ Լլոյդ Ջորջը լիովին փոխեց իր կարծիքը, յարեց Բրիտանիայի կառավարութեան դիրքորոշմանը ու յայտարարեց, որ նախկինում եթէ Գերմանիան արտոնուած է եղել մասնատել Լեհաստանը, այսօր դաշնակիցները նոյնպէս կարող են մասնատել Թուրքիան»<sup>8</sup>: «Դաշնակից» ասելով՝ Լլոյդ Ջորջը բնաւ նկատի չունէր ԱՄՆ-ին, Յունաստանին կամ նոյնիսկ Իտալիային, այլ նա բացարձակապէս նկատի ունէր հէնց Բրիտանիային: Փաստօրէն նա Օսմանեան կայսրութեան մասնատման հարցում, իր պետութեան համար նախագծողի ու գործադրողի անվիճելի իրաւունքն էր վերապահում: Այսպիսով Բրիտանիան Սիրիայից, Արաբիայից, Պաղեստինից ու Իրաքից բացի, ցանկանում էր Փոքր Ասիայի տարածքներից էլ խոշոր բաժին ստանալ: Բրիտանիայի քաղաքական այս դիրքորոշումն արժանացաւ ԱՄՆ սենատի պահպանողական, հակավիլսոնեան թևի բուռն համակրանքին:

Այս գործօնների, դրդապատճառների ու դիւանագիտական տարատեսակ անկիւնների ամբողջութիւնը փոթորկալից և ալեկոծուած թնջուկի էին վերածել խաղաղութեան վեհաժողովը: Կարծես համաշխարհային պատերազմը ոչ թէ աւարտուել, այլ ռազմական խրամատներից տեղափոխուել էր Փարիզի խաղաղութեան վեհաժողովի դիւանագիտական կանաչ սեղանների հետև: Սոյն բարդ դիրքայարդարմանը զուգընթաց, օսմանցի դիւանագէտներն էլ անհամաչափ և ապակողմնորոշիչ քայլեր էին ձեռնարկում, օրինակ՝ 1920 թ. փետրարի վերջերին վեհաժողովում շրջանառութեան մէջ էին դրել Օսմանեան խորհրդարանի «Անկախութեան հռչակագիրը», ինչը բառացիօրէն համարւում էր Մուստաֆա Քեմալի և նրա ազգայնական շարժման ռազմատենչ մանիֆեստը:

Ֆրանսիան ու Իտալիան նոյնպէս, շրջանցելով բացայայտ ու պաշտօնական ձանապարհները, գաղտնի կապեր էին փորձում հաստատել Մուստաֆա Քեմալի հետ և այդ նպատակով իրենց դիրքորոշումները ցուցադրաբար յայտարարում էին, որպէս Վիլսոնի հայեցակէտին լիովին հակառակ և Լլոյդ Ջորջի հայեացքներից ինչ-որ չափով տարբեր: Այս կապակ-

6 Տե՛ս <https://fa.wikipedia.org/wiki>

7 Տե՛ս նոյն տեղում:

8 **Ֆրոմկին, Դեյվիդ**, Խաղաղութիւն, որ յօդս ցնդեցրեց միւս բոլոր խաղաղութիւնները, պարսկերէն թարգմանութիւն, Թեհրան, 2009, էջ 413:

ցույթամբ, Ֆորուդին 1919 թ. փետրուարի 1-ի իր օրագրում գրում է. «Մինչ օրս ֆրանսիացիների վարքագծի մէջ նկատել եմ այն, որ հայերի հարցով բնաւ շահագրգռուած չեն»<sup>9</sup>: Իրականութիւնը հէնց այն է, որ ֆրանսիացի դիւանագէտները Օսմանեան կայսրութեան մէջ իրենց շահերը ապահովելու և Քեմալի նոր շարժման հետ յարաբերութիւնները պահպանելու ու ընդլայնելու համար, չէին խուսափում յատկապէս Հայաստան-Թուրքիա սահմանների հարցում Վիլսոնի դերակատարութիւնը նւաստացնելու գործում:

### 3. Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովի աներևոյթ դերակատարները

Խորհրդային Ռուսաստանը Փարիզի խաղաղութեան վեհաժողովի ընթացքից մեկուսացուած էր և դիւանագիտական անհրաժեշտ միջոցներ չունէր այդ բանակցութիւնների վրայ ուղղակի ազդեցութիւններ բանեցնելու: Լենինը և Ստալինը «Արևելքի քաղաքականութիւնը» առաջ տանելու համար հակուած էին ռազմական միջոցների գործարկմանը: Մուստաֆա Քեմալը, որ նոյնպէս դժգոհ էր Փարիզում օսմանեան պատուիրակութեան գործունէութիւնից և բոլորովին չէր հանդուրժում Արևմտեան Հայաստանը վերատիրանալու ուղղութեամբ հայերի ձեռքբերումները, ոսկեայ առիթ էր որոնում դրանք տապալելու համար: Ահա այս հանգամանքների բերումով Ռուսաստանի բոլշևիկեան իշխանութիւնը և Թուրքիայի ազգայնական շարժումը բնական դաշնակիցներ դարձան:

Լենինի «Արևելքի քաղաքականութիւնը»՝ իսլամական երկրներում «Դեմոկրատական յեղափոխութիւններ» ծաւալելու հարցը, այդ ոսկեայ առիթն էր աւետում Մուստաֆա Քեմալին, որ Ռուսաստանի օգնութեամբ վերջակէտ դնի անկախ Հայաստանի գոյութեանը և չեզոքացնի Փարիզի խաղաղութեան վեհաժողովում Հայաստանի դիւանագիտական պատուիրակութիւնների ու լոբբիստական խմբերի գործունէութիւնը:

Ադրբեջանում 11-րդ Կարմիր բանակի առաջնաւարը և Բաքուի գրաւումը, առերևոյթ «ռազմական կոմունիզմի» ուղղուածութիւն ունէր և փորձում էր պաշտպանել «Ադրբեջանի բանուորների ու հողագործների յեղափոխութիւնը»: Սակայն խորքում Խորհրդային Ռուսաստանն այլ նպատակներ էր հետապնդում, ի թիւս այլոց՝ Բաքուի նաւթի ուղղակի տնօրինումը և ցարական Ռուսաստանի հարաւային սահմաններին վերադառնալը:

Ադրբեջանում բոլշևիկեան յեղաշրջումն ընթացաւ խաղաղ և բռնութիւնից միանգամայն հեռու: Թուրքիայի կողմնակից Մուսաւաթ կուսակցութիւնից Ադրբեջանի բոլշևիկեան կուսակցութեան ուժի անցումը տեղի ունեցաւ առանց արիւնայեղութեան: Ֆորուդին, 1920 թ. մայիսի 6-ի իր օրագրում, Բաքում տեղի ունեցած փոփոխութիւնների ձևական լինելու մասին այսպէս է գրում. «Քլարիչ հիւրանոց գնացիւք ու այնտեղ հանդիպեցիւք Թուփչի Բաշովի հետ ու միասին գրուցեցիւք Կովկասի իրավիճակի մասին: Նա լիովին հերքում էր, որ բոլշևիկները Կովկաս են ժամանել կամ Կովկասը բոլշևիկ է դարձել: Նա ասում էր, որ վերջին իրադարձութիւնը միայն ներ-

<sup>9</sup> Ֆորուդի, Մուհամմեդ Ալի, Փարիզի խաղաղութեան վեհաժողովի օրագրութիւնները, պարսկերէն, Թեհրան, 2015, էջ 41:

քին փոփոխություն է և միայն իշխանությունն է վերափոխուել և որ դրա պատճառն այն է, որ Մուհամմեդ Հասան բեյգ Քաջինսկին, ով նախկինում ներքին գործոց նախարար էր, այժմ նախարարապետ է դարձել: Ադրբեջանի ներկայիս կառավարությունն անշուշտ հակուած է բոլշևիկներին և նախի հարցով նրանց հետ համաձայնութեան է եկել: Մենք այս մասին տեղեկացրել ենք դաշնակից երկրներին ու նրանք էլ դէմ չեն»<sup>10</sup>:

Որոշ փաստեր ու ապացոյցեր հիմք են տալիս եզրակացնելու, որ քեմալականների ու բոլշևիկների գաղտնի համաձայնութեան արդիւնքում Ադրբեջանում 1920 թ. ապրիլի 28-ին տեղի ունեցած փոփոխութիւնները հետապնդում էին յստակ ռազմավարական նպատակ, որն էր՝ Հայաստանի Հանրապետութեան բռնգրաւումը և այդ երկրի անկախութեան կործանումը, արևելքի, այսինքն՝ «Խորհրդային Ադրբեջանի» և արևմուտքի, այսինքն՝ Թուրքիայի բռնի միջամտութեամբ:

Այս ռազմավարական նպատակին տանող ճանապարհները ճշտուել էին 1920 թ. ապրիլի 26-ին բոլշևիկեան կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նիստում: Նիստում ընդունուած վերլուծութեան մասին Անաստաս Միկոյեանը իր յուշերում այսպէս է գրում. ««Մեծ Հայքի» մասին երազող հայ ազգութիւնը Եւրոպայում ընթացող Խաղաղութեան վեհաժողովին ուղարկել է պատուիրակութիւն՝ պահանջելով թուրքական վեց վիլայեթները (Էրզրում, Վան, Տրապիզոն, Դիարբեքի, Խարբեքը և Սվազի մի մասը) և նախկին Ռուսաստանի չորս մարզերը (Երևան, Կարս, Նախիջևան, Բաթում ու Արդահան): Խաղաղութեան վեհաժողովը որոշել է ընդառաջել նրանց, մտադրուած լինելով Հայաստանն օգտագործել Խորհրդային Ռուսաստանից տարածուող բոլշևիզմի և Թուրքիայում ծնունդ բոլշևիզմի դէմ... Հայաստանին դաժան պարտութիւն է սպասում, քանի որ այն երեք կողմից շրջապատուած է Խորհրդային Ռուսաստանով, Ադրբեջանով և ըմբոստացած ու ոտքից գլուխ զինուած Անատոլիայով»<sup>11</sup>: Հարկ է նշել, որ կուսակցութեան կենտրոնական կոմիտէի սոյն վերլուծութիւնը կատարուել էր տուեալ նիստին յատուկ հրաւերով Ստամբուլից Մոսկու եկած թուրք բոլշևիկների զեկուցագրի հիման վրայ:

#### 4. Ռազմական լուծումներ խաղաղ համաձայնութեան փոխարէն

Տարածքային վէճերի կարգաւորման համար իրաւարարութեան խնդրանքով Հայաստանի ու Օսմանեան Թուրքիայի կողմից երկրորդ պաշտօնական յայտը (պայմանագրի 89-րդ յօդուած) Վուդրօ Վիլսոնին ներկայացուելուց յետոյ, Մուստաֆա Քեմալը նպատակ էր դրել խափանել դիւանագիտական այս համաձայնութիւնը: Իր նպատակին հասնելու համար Քեմալը երկու ռազմավարական քայլ նախաձեռնեց. նախ Սևրի պայմանագրի ստորագրումից երկու շաբաթ յետոյ, 1920 թ. օգոստոսի 24-ին, Ռուսաստանի բոլշևիկեան կառավարութեան հետ եօթ կէտերից բաղկացած մի պայմանագրի նախնական բնագիրը ստորագրեց, ինչը մեծ նշանակութիւն ունեցաւ

10 Նոյն տեղում, էջ 376:  
11 <https://www.Iragir.am/2014/10/13/105262/>

Հայաստանի, Թուրքիայի և տարածաշրջանի յետագայ քաղաքական ճակատագրում: Ստորագրուած գաղտնի պայմանագրի ամբողջական բովանդակութիւնը բերուած է Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադի յուշագրութիւններում: Պայմանագրի առաջին յօդուածում նշուած է. «Յօդուած 1- Ստորագրող կողմերը սկզբունքօրէն ընդունում են չճանաչել խաղաղութեան որևէ պայմանագիր կամ միջպետական համաձայնագիր, որ բռնի կերպով պարտադրուել է կողմերին: Ռուսաստանի Հանրապետութիւնը ընդունում է, որ բացարձակապէս չճանաչել Թուրքիային վերաբերող որևէ համաձայնագիր, որ չի վաւերացուել Թուրքիայի ազգային իշխանութեան ներկայացուցիչը համարուող ազգային մեծ ժողովի կողմից»<sup>12</sup>: Նկատի ունենալով, որ Սևրի պայմանագիրը Թուրքիայի «Միլլի Մեջլիսի» կողմից երբէք չվաւերացուեց, Ռուսաստանն ու Թուրքիան վերոնշեալ գաղտնի պայմանագրի ստորագրմամբ, փաստօրէն անվաւեր էին ճանաչում Սևրի պայմանագիրը և դրանով իսկ, խախտում Հայաստանի Հանրապետութեան անկախութեան սկզբունքը և Արևմտեան Հայաստանի տարածքների վրայ Հայաստանի իշխանութեան իրաւունքը:

Մուստաֆա Քեմալի երկրորդ քայլը եղաւ ռազմական ծաւալուն յարձակումը Հայաստանի դէմ 1920 թ. սեպտեմբերին, այսինքն գաղտնի պայմանագրի ստորագրումից շուրջ մէկ ամիս յետոյ:

«Կոմունիստական ինտերնացիոնալը», 1920 թ. Սեպտ. 1-ից-7-ը, արևելեան ու եվրոպական ժողովուրդների, այդ թում՝ Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի 2000 ներկայացուցիչների մասնակցութեամբ Բաքում անցկացրեց «Արևելեան ժողովուրդների առաջին համաժողով»-ը: Քեմալականներն այս համաժողովում ծաւալուն քարոզարշաւ սկսեցին Հայաստանի ու նրա այսպէս կոչուած «իմպերիալիստական» նկրտումների դէմ, որը հոգեբանական, քաղաքական նախերգանքն էր Հայաստանի Հանրապետութեան դէմ պատրաստուող պատերազմի:

Քեմալը ձգտում էր Հայաստանին պատերազմի մէջ ներքաշելով, այդ երկրից խլել Սևրի պայմանագրի քննարկման ու վերջնական վաւերացման հնարաւորութիւնը, որպէսզի նախապայմաններ ստեղծէին բոլշևիկների գործակցութեամբ յարմար պահին Հայաստանի անկախութիւնն իսպառ տապալելու համար: Հետաքրքրականն այն է, որ Քեմալն իր զօրքերը դէպի կենտրոն ուղղելու և երկրի իշխանութիւնը գրաւելու փոխարէն, նախընտրեց նախ արշաւել դէպի արևելք և պատերազմի դուրս գալ Հայաստանի նորանկախ Հանրապետութեան դէմ: Քանզի Քեմալի համար Արևմտեան Հայաստանի տարածքի պահպանումը, Կարսի մարզի գրաւումը և ՀՀ անկախութեան խորտակումն առաւել մեծ նոտիւացիա էր, քան իշխանութեան տիրանալը:

Քեմալը հաւանաբար գիտակցում էր, որ Վիլսոնի Իրաւարար վճիռն անվիճելի է և պարտադիր ու վաղեմութեան ժամկէտ չունի: Գիտակցում էր հաւանաբար նաև այն, որ Իրաւարար վճիռն անորոշ ժամկէտով կարող էր յետաձուգել միայն այն դէպքում, երբ դադարեցւէր կողմերից մէկի՝ այսինքն Հայաստանի Հանրապետութեան կամ Օսմանեան կայսրութեան իրաւական սուբյեկտայնութիւնը: Նա բնականաբար չէր ցանկանում Թուրքիայի գալիք հանրապետութեանը զրկել Օսմանեան կայսրութեան իրաւայաջոր-

<sup>12</sup> Լազեան, Գաբրիէլ, Հայաստան և Հայ Դատը, Գահիրէ, 1957, էջ 255:



դուրսինից, քանի որ զգում էր այն վտանգը, որ հնարաւոր է ապագայում արծարծեն տարածքային նորանոր վէճեր՝ օսմանեան սուլթանների կողմից բռնագրաւուած երոպական ու ասիական երկրների հետ կապուած: Հետևաբար Քեմալի տեսանկիւնից, ՀՀ իրաւական սուբյեկտայնութեան ջնջումն ու այդ երկրի անկախութեան տապալումը ձեռքբերուած համաձայնութիւնները ոչնչացնելու ամենատրամաբանական տարբերակն էր:

Հայաստանի զինուած ուժերն արևմտեան ճակատում անցան պաշտպանութեան: Զինեալ առձակատման կենտրոնը Կարս-Ալեքսանդրապոլ առանցքն էր: Բոլշևիկները, ովքեր հարուստ փորձ ունէին Առաջին աշխարհամարտում ցարական բանակը տարրալուծելու և նրա զինուորներին դասալիք անելու գործում, այս միջոցին էլ Հայաստանի բանակի շարքերում մեկնարկեցին սաբոտաժի ծաւալուն քարոզչութիւն:

«Կոմունիստական կուսակցութիւն – Ալեքսանդրապոլի կոմիտէ» ստորագրութեամբ, Հայաստանի բոլշևիկների թռուցիկներից մէկում Հայաստանի բանակի զինուորներին ուղղուած կոչում ասուած է. «Դաշնակցական խայտառակ կառավարութեան խմբապետներից կազմուած զօրքը նահանջում է Քեմալի զօրքերի ահաւոր յարձակումներից: Բաւական չէ՞, որ նրանք (ինա՛՛ ՀՅ Դաշնակցութիւնը – Կ. Խ.) թալանեցին և կողոպուտի մատնեցին ժողովրդի հարստութիւնները, բաւական չէ՞, որ նրանք հայ աշխատաւոր ժողովրդի գլխին չարիք դարձան, այժմ էլ խաբում են ձեզ գիւղացիներ և զինուորներ, ասելով, որ գալիս են թուրքերը հայ աշխատաւորութեանը թալանելու և կոտորելու: Մենք կոչ ենք անում ձեզ չհաւատալ դաշնակցականների հազարաւոր ստերին, որովհետև եկողները ոչ թէ թալանի աւազակներ են, այլ հայ գիւղացիների, զինուորի ու բանուորի ընկերներ՝ թուրք աշխատաւորներ են: Հաւատացէք, որ Կարսում, Ալեքսանդրապոլում և գրաւուած միւս տեղերում նրանք ոչ թալանել են ժողովրդին և ոչ էլ կոտորել, այլ հաստատել են բանաւորագիւղացիական կարգ ու կանոն: Եկողները ոչ թէ թշնամիներ են ձեզ, այլ դաշնակների կառավարութեան: Ուստի նորից կոչ ենք անում ձեզ տեղերից չջարժուել, մնալ հանգիստ, չգաղթել... Այժմ դուք բոլորովին երես դարձրէք դաշնակցականներից»<sup>13</sup>:

Հաշուի առնելով Քեմալի ազգայնական շարժման շովինիստական էութիւնը և սօտեցումները, միգուցէ Քեմալին որպէս «Հայաստանի ու հայ աշխատաւորութեան փրկիչ» տեսնելու հայ բոլշևիկների համոզումը սոսկ քաղաքական մանկամտութիւն թուայ, սակայն յստակ կարելի է ամրագրել, որ այդ յայտարարութիւնների բովանդակութիւնն ամենախօսուն դրսևորումներն են Հայաստանի ազգային ինքնիշխանութեան խափանմանը միտուած, քեմալականների ու բոլշևիկների համագործակցութեան ու միատեղ մեղսունակութեան:


Այս առումով, այստեղ արժե յիշատակել Հայաստանի արդիական պատմութեան ամենատխտիւր էջերից հետևեալը. Հայաստանի ուժերի դէմ Քեմալի բանակի յաղթանակից ու Արևելեան Հայաստանի որոշ շրջանների բռնագրաւումից յետոյ, Կարսի ու Ալեքսանդրապոլի հայութիւնը սիստեմատիկ բռնութեան, ջարդի, թալանի ու տեղահանութեան ենթարկուեց: Հետաքրքիրն այն է, որ քեմալական ուժերի ներխուժումից ամիսներ յետոյ, 1921 թ. յունա-

Ժ (ԺԶ) փաթիլ, թիւ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018  
ՎԿՎ համահայկական հանդէս

13 Նոյն տեղում, էջ 261-262:

րին, Կարսի և Ալեքսանդրապոլի հայ ապաստանեալները Ռուսաստանի Վլադիկավկազ քաղաքում հանրահաւաք կազմակերպելով, հեռագիր են յղել Լենինին ու դրա մի պատճէնը՝ նաև Ստալինին: Հեռագրի մի բաժնում ասուած է. «Մենք հաւատում էինք Քեմալի յայտարարութիւններին և թերթերի հաւաստիացումներին, թէ Քեմալը կուում է դաշնակցական կառավարութեան և ոչ թէ հայ աշխարհւոր ժողովրդի դէմ: Սակայն յետագայում ստացուած հաղորդագրութիւնները խորտակեցին մեր հաւատը Քեմալի խաղաղասիրութեան նկատմամբ, կործանուում են մեր յոյսերը Սովետական Հայաստանի լաւագոյն ապագայի նկատմամբ, որովհետև Քեմալը ուժեղ տենպերով աւերում է այժմ արդէն Սովետական Հայաստանը, թալանում է աղքատացած գիւղացիների վերջին ունեցուածքը, վիթխարի հարկեր է դնում, ամբողջ աշխատունակ բնակչութեանը բռնութեամբ հաւաքում և քշում է Էրզրում տաժանակիր աշխատանքի, իսկ Հայաստանի սովետական հիմնարկներին բոլորովին հաշուի չի առնում և արհամարհում է նրանց»<sup>14</sup>:

Հետաքրքիր է նշել նաև այն, որ Խորհրդային Հայաստանի ԱԳ նախարար Բէգզադեանն այս կապակցութեամբ խստաճ բողոքի նոտա է յղել Անկարայում իր պաշտօնակցին և այս խնդիրների արագ կարգաւորման համար նրան կոչ է արել անյապաղ քայլեր ձեռնարկել<sup>15</sup>, ինչն իհարկէ և ոչ մի դրական արդիւնք չունեցաւ:



Կարսի և Գիւմրու ապաստանեալների կողմից Լենինին յղուած հեռագրի մի բաժինը

Քեմալի յարձակումներին յաջորդող ամիսների ընթացքում 11-րդ Կարմիր Բանակը վերջնագրեր ներկայացրեց Հայաստանին և ի վերջոյ 1920 թ.

14 Մեջբերումը ըստ՝ Մնացականեան, Ա., 11-րդ Կարմիր բանակի փառագանձ ուղին Կովկասում 1918-21 թթ., «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի, Եր., 1948, N 2, էջ 4-24:  
15 Տե՛ս Լազեան, Գարբիէլ, Հայաստան և Հայ Դատը, Գահիրէ, 1957, էջ 266-269:

դեկտեմբերի 2-ին մտաւ Երևան: Նոյն օրը Հայաստանի նորաստեղծ կոմունիստական կուսակցութիւնը մի հաղորդագրութեամբ յայտարարեց. «Խորհրդային Ռուսաստանը այժմ ապստամբ ժողովրդի հրաւերով, հնարաւորութիւն ունի եղբայրական օգնութիւն ցոյց տալու նրանց, ու Հայաստանը Անտանտայի գործակալներից և դաշնակցական կառավարութիւնից փրկելու»<sup>16</sup>:

Այսպիսով և Թուրքիայի ուժերը, և Խորհրդային Ռուսաստանի Կարմիր Բանակը համախմբուեցին «հայերին դաշնակցականներից փրկելու համար»: Երկկողմ յարձակումները տեղի էին ունենում «յաղթանակած դաշնակիցների» և «Ազգերի լիգայի» աչքերի առջև և նրանք ոչ մի հակաքայլի չէին դիմում:

Լենինը 1920 թ. դեկտեմբերի 4-ին Հայաստանի կոմունիստական կուսակցութեանը յղուած հեռագրում գրում է. «Յանձին Ձեզ՝ ողջունում եմ իմպերիալիստական լծից ազատուած աշխատաւորական Սովետական Հայաստանին: Ձեմ կասկածում, որ Դուք գործ կը դնէք ամեն ջանք՝ եղբայրական համերաշխութիւն հաստատելու Հայաստանի, Թուրքիայի և Անդրկովկասի աշխատաւորութեան միջև»<sup>17</sup>:

Այստեղ նկատելի է, որ «Անդրկովկասի աշխատաւորներ»՝ քաղաքական իմաստ չպարունակող կատեգորիայի հետ մէկտեղ, Լենինը նշել է «Թուրքիայի աշխատաւորութիւն» բառակապակցութիւնը և Հայաստանի կոմունիստական կուսակցութեանը յանձնարարել է «եղբայրական համերաշխութիւն» հաստատել նրա հետ: Փաստօրէն հէնց՝ այն Թուրքիայի հետ, որ ոչ միայն դրանից ընդամենը հինգ տարի առաջ կատարեալ ցեղասպանութեան էր ենթարկել հայերին ու երբէք էլ չէր գղջացել այդ յանցագործութեան համար, այլև 1920 թ. նոյն Հայաստանի ու ձողոպրած հայերի դէմ լիարժեք պատերազմ էր յայտարարել:

Ստալինն էլ 1920 թ. դեկտ. 4-ին Կոմունիստական կուսակցութեան պաշտօնաթերթ «Պրաւդայում» գրեց. «Ոչ Անգլիայի՝ հայկական շահերի այդ «դարաւոր պաշտպանի» կեղծ հաւաստիացումները, ոչ Վիլսոնի տխրահռչակ 14 կէտերը, ոչ էլ Ազգերի Լիգայի մեծադողորդ խոստումները Հայաստանի կառավարման «մանդատով» հանդերձ՝ չկարողացան և չէին կարող Հայաստանը փրկել կոտորածներից ու ֆիզիկական բնաջնջումից: Միայն Սովետական իշխանութեան գաղափարը Հայաստանին բերեց խաղաղութիւն և ազգային վերածննդի հնարաւորութիւն»<sup>18</sup>:

Ահաւասիկ Թուրքիայի ու Հայաստանի միջև «համերաշխութիւն» հաստատելու Լենինի կողմից տրուած յանձնարարականը և Վիլսոնի հռչակագրի հանդէպ Ստալինի ժխտական կեցուածքը վկայում են այն պարզ իրականութեան մասին, որ Ռուսաստանի ու Թուրքիայի ռազմական համագործակցութիւնը, իմպերիալիստական պետութիւնների անտարբերութեան և լռութեան պայմաններում, գերազանցապէս ուղղուած էր Փարիզի խաղաղութեան վեհաժողովում հայերի ձեռքբերումները և հայկական հարցի արդարացի լուծման համար Վիլսոնի իրաւարարութիւնը ի դերն անելուն:

Այս ուղղութեամբ նշանակալից կէտն այն է, որ Հայաստանի Հանրապետութեան կործանումից յետոյ կոմունիստները 1920 թ. դեկտ. 6-ին իրենց

16 Մեջբերումը ըստ՝ Թումանեան Հ., Սովետական իշխանութեան հաստատումը Հայաստանում, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի, Եր., 1946, N 11-12, էջ 74-83:

17 Նոյն տեղում:

18 Նոյն տեղում:

կառավարական հէնց առաջին շրջաբերականում լուծարեցին Հայաստանի դիւանագիտական բոլոր պատուիրակութիւնները և նրանց առաքելութիւնը յայտարարեցին աւարտուած: Հայաստանի կոմունիստերի դէկտ. 6-ի շրջաբերականը հրապարակում էր այն պայմաններում, երբ Հայաստանի նոր կառավարութեան անձնակազմը դեռևս պաշտօնապէս չէր ձևաւորուել և միայն ութ օր անց, դէկտ. 14-ին, յաջորդ շրջաբերականով յայտարարուեց Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կազմութեան մասին<sup>19</sup>:

Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական պատուիրակութեան լուծարման հարցում այս զարմանալի շտապողականութիւնը նոյնպէս միտուած էր Հայաստանի բռնագրաւուած տարածքները վերամիաւորելու դիւանագիտական ջանքերը տապալելուն:

Հաւանաբար Վուդրո Վիլսոնը կռահել էր բոլշևիկա-քեմալական այս խարդաւանքը և հաշուի չառնելով հայկական հարցի վերաբերեալ ԱՄՆ սենատի բացասական դիրքորոշումը, հնարքներ գործադրեց խաղաղութեան վեհաժողովի հայանպաստ ձեռքբերումները պահպանելու համար: Սերի պայմանագրի 91-րդ յօդուածը եռամսեայ ժամկէտ էր սահմանել սահմանագծի ճշտման հարցում մասնագիտական աշխատանքային խումբ ձևաւորելու համար: Վուդրո Վիլսոնի առաջին քայլն այն էր, որ անմիջապէս կարգադրեց, պրոֆ. Վեստերմանի գլխաւորութեամբ, փորձագիտական աշխարանքային խմբի ձևաւորումը, որպէսզի հնարաւորինս արագ պատրաստեն համապատասխան քարտէզներն ու զեկոյցները: Այդ փաստաթղթերը նոյեմբեր ամսին արդէն պատրաստ էին և յանձնուեցին ստորագրման:



Վիլսոնի ստորագրութեամբ ու «ԱՄՆ մեծ կնիքով» հրաւարար վճիռը

<sup>19</sup> Տե՛ս նոյն տեղում:

Վիլսոնի միւս քայլն այն էր, որ նա ԱՄՆ մեծ կնիքով կնքեց իր Իրաւարար վճիռը, որով դրան տուեց իրաւական ուժ, որպէսզի վճռի վաւերականութիւնը և օրինականութիւնը սակարկութիւնների առարկայ չդառնան բոլշևիկների ու քեմալականների կողմից: Ճիշտ հէնց այդ պատճառով էլ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռը ցայժմ պահպանում է ԱՄՆ գործող օրէնքի իրաւականութիւնը:

## Եզրակացութիւն

Փարիզի խաղաղութեան վեհաժողովը ու նրա իրաւական ձեռքբերումները իրագործման դէպքում կարող էին արմատապէս լուծել Հայաստանի տարածքային խնդիրները, երաշխաւորել նրա յետագայ զարգացման և հզօրացման նախապայմանները և հաւանաբար՝ ձեւաորել առաւել կայուն Միջին Արևելք:

Սակայն ԱՄՆ-ի երկակի դիւանագիտութիւնը, այսինքն մի կողմից՝ Փարիզի խաղաղութեան վեհաժողովի շրջանակներում Վիլսոնի արդարատենչական մօտեցումները, իսկ միւս կողմից՝ ԱՄՆ-ի սենատի ու կառավարութեան ծաւալապաշտական ու ինպերիալիստական նկրտումները, Բրիտանիայի ու Ֆրանսիայի գաղութատիրական ցանկութիւններն ու նպատակները, Օսմանեան կայսրութեան հակասական քաղաքականութիւնները, միւս կողմից՝ Միւստաֆա Քեմալի ռազմական շարժումները, Խոհրդային Ռուսաստանի «Արևելքի քաղաքականութիւնը» և ցարական Ռուսաստանի կորցրած տարածքներին վերատիրանալու ձգտումները, մի տարասեռ համադրութեամբ, գումարուեցին իրար՝ ոչնչացնելու համար Հայաստանի նորանկախ Հանրապետութիւնը:

**Կարեն Հ. Խանլարյան (Խանլարի)** – ունի ավելի քան 20 գիտական հոդվածներ՝ տպագրված միջազգային գիտական հանդեսներում: Մասնակցել է գիտաժողովների՝ ՀՀ, ԼՂՀ, ԱՄՆ, ՌԴ, Իտալիա, Ֆրանսիա, Աւստրիա: Հեղինակ է մի քանի գրքերի՝ Թուրքիայի Հանրապետությունում հայ բնակչության էթնոկրօնական վերակերպումների վերաբերյալ

## Summary

## DEEP REASONS OF THE DOWNFALL OF THE REPUBLIC OF ARMENIA

Karen H. Khanlaryan  
*Candidate of Historical Sciences*

**Key words** – Republic of Armenia, Armenian Question, Woodrow Wilson, Muhammad Ali Foroughi, Paris Peace Assembly, Mustafa Kemal, Red Army, arbitrary verdict.

After three decades of interval of the liberation struggle on May 28, 1918 the independence of Armenia was restored. Armenian Republic entered the world

policy as an independent democratic republic and had only two and a half years life.

The author tries to reveal the political layers and deep reasons and from this perspective to present to the readers' judgment the corresponding justifications referring to the downfall of the First Armenian Republic in the core context of the discussed theme based on some Iranian, Turkish, Russian and European diplomatic written sources.

In this context it is concluded that due to changing differences between core powers and their imperialistic aspirations, heterogeneous combination of Soviet Russia's expansionism and anti-Armenian strategy of Kamalist movement the independence of Armenia was eliminated in peace assembly in Paris. Therefore the attempts and struggles of Armenian Republic to create an accomplished homeland met rigid obstacles, and the path leading to national goals for Armenian people had become harder to pass.

Резюме

## ГЛУБИННЫЕ ПРИЧИНЫ ПАДЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Карен Г. Ханларян (Тегеран)  
*Кандидат исторических наук*

**Ключевые слова** – Республика Армения, Армянский вопрос, Вудро Вильсон, Мохаммед Али Форуги, Парижская мирная конференция, Мустафа Кемаль, Красная армия, арбитражное решение.

После трех десятилетий национально-освободительной борьбы, 28-го мая 1918 г., была восстановлена независимость Армении. Республика Армения вышла на мировую политическую арену как независимая, демократическая республика и просуществовала всего два с половиной года.

Автор пытается на основе корреспонденции, представленной в некоторых иранских, турецких, армянских, русских и европейских дипломатических источниках, выявить изгибы внешней политики РА и вынести на суд читателей соответствующие заключения по вопросу о причинах падения первой Республики Армения.

В этом контексте делается заключение, что в результате разногласий и империалистических стремлений ключевых держав Парижской мирной конференции, экспансионизма Советской России и антиармянской стратегии кемалистского националистического движения была уничтожена независимость Армении.

Тем самым борьба Республики Армения за создание единой родины натолкнулась на жесткие препятствия, и путь, ведущий к общенациональным целям армян, стал более труднопроходимым.

## REFERENCES

1. **Fromkin Deyvid**, Khaghaghutyun, vor yods cndecrec mius khaghaghutiunnerə, parskeren targmanutiun, Tehran, 2009. **(In Armenian)**
2. Forudi, Muhammed Ali, Parizi khaghaghutean vehazhoghovi oragrutiunnerə, parskeren, Tehran, 2015. **(In Armenian)**
3. **Lazean Gabriel**, Hayastan yev Hay Datə, Gahire, 1957. **(In Armenian)**
4. **Mnacakanean A.**, 11-rd Karmir banaki parapanč ughin Kovkasum 1918-21 tt., «Teghekagir» Haykakan SSR Gitutiunneri Akademiayi, Yer., 1948. **(In Armenian)**
5. **Tumanean H.**, Sovetakan ishkanutean hastumə Hayastanum, «Teghekagir» Haykakan SSR Gitutyunneri Akademiayi, Yer., 1946. **(In Armenian)**

# CONTENT

<b>PAPER OF BLESSING – <i>Garegin II</i></b> <i>Supreme Patriarch and Catholicos</i> <i>Of All Armenians</i>	2	<i>Aleksandr S. Manasyan</i> ARTSAKH'S LEGAL STATUS IN 1918–1920	148
<b>THE WORD OF BUREAU OF AR FEDERATION –</b> <b><i>Kiro A. Manoian</i></b>	3	<b>INTERNAL STATE</b> <i>Karen P. Hayrapetyan</i> THE ISSUE OF OVERCOMING THE FRAGMENTATION IN THE REPUBLIC OF ARMENIA	164
<b>OUR WORD – <i>Editorial</i></b>	5	<i>Suren T. Sargsyan</i> THE POLITICAL OPPOSITION IN REPUBLIC OF ARMENIA 1918–1920	210
<b>CORNERSTONES</b> <i>Gevorg S. Khoudinyan</i> THE IDEA OF REPUBLIC AND REPUBLICANISM IN THE NEW AND NEWEST HISTORY OF ARMENIA	12	<i>Narek A. Mkrtychyan</i> YEREVAN AS THE CAPITAL REPUBLIC OF ARMENIA IN 1918–1920 The meaning of forming national spatial identity	226
<i>Rubina B. Peroomian (Los Angeles)</i> TWO CRITICAL PERIODS OF ARMENIAN HISTORY LEADING TO INDEPENDENCE IN 1918 AND 1991 A Comparative view	24	<i>Davit S. Gyurjinyan</i> THE EXPRESSION OF STATE ATTITUDE TOWARDS THE ARMENIAN LANGUAGE IN REPUBLIC OF ARMENIA 1918–1920	247
<i>Armen S. Asryan</i> ARAM MANUKYAN AS AN EMBODIMENT OF ARMENIAN NATIONAL STATESMAN	47	<i>Haykazun S. Alvrtsyan</i> THE STATE SYMBOLS OF THE REPUBLIC OF ARMENIA	265
<b>AT THE DAWN OF INDEPENDENCE</b> <i>Hamo K. Sukiasyan</i> THE INDEPENDENCE OF ARMENIA AND THE FOR- MATION PROCESS OF OFFICAL GOVERNMENT BODIES (May–August, 1918)	58	<b>THE HISTORICAL LESSONS OF RA</b> <i>Vladimir A. Harutyunyan</i> THE SURRENDER OF KARS A hypothesis of a military conspiracy	278
<i>Ashot N. Hayruni</i> FOREIGN POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF GERMAN–TURKISH RELATIONS (June–November, 1918)	72	<i>Hripsime V. Pikchyan</i> THE LEGEND OF MAZMANOV In Armenian musical folklore	331
<i>Ararat M. Hakobyan</i> THE GOVERNMENT OF RA IN 1918–1920 AND THE PECULIARITIES OF ITS ACTIVITY	98	<i>Smbat Kh. Hovhannisyan</i> ARMENIAN HISTORY TEXTBOOK AS AREA OF “COMPETING MEMOIRS” Based on the example of historical materials of the Republic of Armenia 1918–1920	347
<i>Anna E. Asatryan</i> THE ESSENCE OF LOCAL SELF–GOVERNMENT SYSTEM OF REPUBLIC OF ARMENIA IN 1918–1920 On the example of election and activity of Vagharshapat's municipal authorities	111	<i>Zhenia A. Kalantaryan</i> LITERARY REFLECTIONS OF ARMENIAN HISTORY OF 1918–1921 In the works of eyewitness writers	392
<b>EXTERNAL STATE</b> <i>Edita G. Gzoyan</i> INTERNATIONAL–LEGAL STATUS OF THE REPUBLIC OF ARMENIA IN 1918–1920 According to the League of Nations' newly discovered documents from Geneva archive	122	<i>Karen H. Khanlaryan</i> DEEP REASONS OF THE DOWNFALL OF THE RE- PUBLIC OF ARMENIA	416
<i>Ashot A. Melqonyan</i> THE ISSUE OF JAVAKHK IN THE CONTEXT OF ARMENIAN–GEORGIAN RELATIONSHIP (May, 1918– January, 1919)	133		



<b>ПИСЬМО БЛАГОСЛОВЕНИЯ – Гарегин Второй</b> <i>Верховный Патриарх и Католикос всех армян</i>	2	Александр С. Манасян ПРАВОВОЙ СТАТУС АРЦАХА В 1918–1920 ГГ.	148
<b>СЛОВО БЮРО АРФ ДАШНАКЦУТЮН –</b> <b>Киро А. Маноян</b>	3	<b>ВНУТРЕННЕЕ СОСТОЯНИЕ РА</b> <i>Карен П. Айрапетян</i> ПРОБЛЕМА ПРЕОДОЛЕНИЯ ФРАГМЕНТАРНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ	164
<b>НАШЕ СЛОВО – Редакторская статья</b>	5	<i>Сурен Т. Саргсян</i> ПОЛИТИЧЕСКАЯ ОППОЗИЦИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В 1918–1920 ГГ.	210
<b>ОСНОВЫ</b> <i>Геворг С. Худинян</i> ИДЕЯ РЕСПУБЛИКИ И РЕСПУБЛИКАНИЗМ В НОВОЙ И НОВЕЙШЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ	12	<i>Нарек А. Мкртчян</i> ЕРЕВАН – СТОЛИЦА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 1918–1920 ГГ. Семантика пространственной организации национальной идентичности	226
<i>Рубина Б. Пирумян</i> ДВЕ СУДЬБОНОСНЫЕ ЭПОХИ, ПОРОДИВШИЕ НЕЗАВИСИМОСТЬ 1918 И 1991 ГОДОВ: Сравнительный анализ	24	<i>Давит С. Гюрджинян</i> ПРОЯВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОГО ПОДХОДА К АРМЯНСКОМУ ЯЗЫКУ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В 1918–1920 ГГ.	247
<i>Армен С. Асрян</i> АРАМ МАНУКЯН КАК ОЛИЦЕТВОРЕНИЕ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНО– ГОСУДАРСТВЕННОГО ДЕЯТЕЛЯ	47	<i>Айказун С. Алевциян</i> ГОСУДАРСТВЕННЫЕ СИМВОЛЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ	265
<b>НА ЗАРЕ НЕЗАВИСИМОСТИ</b> <i>Амо К. Сукиасян</i> СТАНОВЛЕНИЕ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ И ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ОРГАНОВ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ (май–август 1918 г.)	58	<b>УРОКИ ИСТОРИИ РА</b> <i>Владимир А. Арутюнян</i> СДАЧА КАРСА Гипотеза военного заговора	278
<i>Ашот Н. Айруни</i> ВНЕШНЯЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ ГЕРМАНО–ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ (июнь–ноябрь 1918 г.)	72	<i>Рипсиме В. Пикичян</i> ЛЕГЕНДА МАЗМАНОВА В армянском музыкальном фольклоре	331
<i>Арарат М. Акопян</i> ПРАВИТЕЛЬСТВО РА В 1918–1920 ГГ. И ОСОБЕННОСТИ ЕГО ДЕЯТЕЛЬНОСТИ	98	<i>Смбат Х. Оганнисян</i> УЧЕБНИК ИСТОРИИ АРМЕНИИ КАК ОБЛАСТЬ «КОНКУРИРУЮЩИХ ВОСПОМИНАНИЙ» На примере изложения истории Республики Армения 1918–1920 гг.	347
<i>Анна Э. Асатрян</i> ОСОБЕННОСТИ СИСТЕМЫ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ РА В 1918–1920 ГГ. На примере выборов и деятельности городских властей Вагаршапата	111	<i>Женя А. Калантарян</i> ХУДОЖЕСТВЕННЫЙ ОТКЛИК НА ИСТОРИЮ АРМЕНИИ 1918–1921 ГГ. В произведениях писателей–очевидцев	392
<b>ВНЕШНЕЕ ПОЛОЖЕНИЕ</b> <i>Эдита Г. Гзоян</i> МЕЖДУНАРОДНО–ПРАВОВОЙ СТАТУС РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 1918–1920 ГГ. Согласно новонайденным документам женеvского архива Лиги Наций	122	<i>Карен Г. Ханларян (Тегеран)</i> ГЛУБИННЫЕ ПРИЧИНЫ ПАДЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ	416
<i>Ашот А. Мелконян</i> ДЖАВАХКСКАЯ ПРОБЛЕМА В КОНТЕКСТЕ АРМЯНО–ГРУЗИНСКИХ ОТНОШЕНИЙ (май 1918 г. – январь 1919 г.)	133		

**Ազիզբեկյան Ռ. Լ.**, Գազաուզյան հարցը (պատմություն և արդիականություն), Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2018, 115 էջ:

Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում (1919 Ապրիլ-1920 Հոկտեմբեր): Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը, աշխատասիրութեամբ՝ **Վլադիմիր Յարութինեանի**, Եր., Հեղինակային հրատ., 2018, 644 էջ:

Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թ. մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու), հատոր առաջին, Եր., «Դարույթ» երիտասարդական հասարակական կազմակերպություն 2018, 626 էջ:

**Թորոսյան Վ. Հ.**, Հայոց կաթողիկոսական իշխանությունը (ԺՄ դարի կեսեր-ԺԲ դարի սկիզբ), Եր., «Նաիրի» հրատ., 2018, 272 էջ:

**Հովանյան Ռոմիկ**, Անտիպ հողվածներ, Եր., Հեղինակային հրատ., 2018, 116 էջ:

**Մարտիկյան Գոհար**, Ապրելու բանաձև: Վիպերգ, Եր., «Տիգրան Մեծ», 2017, Գիրք տասնմեկերորդ, 332 էջ:

**Մելիքյան Վ. Հ.**, Պայքար Բաքվի համար (1917 թ. նոյեմբեր-1918 թ. ապրիլ), Եր., ԵՊՀ հրատ., 2018, 223 էջ:

**Սուքիասյան Հ., Երանոսյան Ն.**, Խորհրդային Հայաստանի երգիծական մամուլը 1920-ական թվականներին («Շեշտ», «Զուռնա», «Կարմիր մոծակ»), Եր., «Էդիթ Պրինտ», 2018, 136 էջ:

**Քոչարյան Ռ.**, Կրթությունը և հերմենևտիկական. կրթություն՝ առ իմաստություն (կրթության իսկության բացորոշումը հերմենևտիկական մեթոդաբանությամբ), Եր., «Եվրոպրինտ», 2018, 256 էջ:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Հանդեսը գիտական պարբերականների տպագրության միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով այսուհետ փոխվում են «ՎԷՄ»-ում հրատարակվող հոդվածների ձևավորման պահանջները:

**Ստորև ներկայացվող պահանջներից թեկուզև աննշան շեղումով հոդվածները չեն դիտարկվի խմբագրության կողմից:**

«ՎԷՄ» հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածը կարող է լինել հայերեն (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ, նաև օտար լեզուներով:

### ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալը՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Arial Unicode» տառատեսակով, իսկ լատինատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով:
3. Սկզբում՝ առաջին էջի սկզբնամասում գրել հոդվածի հեղինակի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը (բոլորը թավատառ), գիտական աստիճանը (հասարակ տառատեսակով): Նշվածը հավասարեցնել աջ անկյունում:
4. Վերնագիր. գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր» արտահայտությունը և կցել նվազագույնը 10 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ հավասարեցնելով աջ անկյունում:
6. Ներածական հատված (Մուտք), համարակալված ենթավերնագրերով ամբողջացած բուն տեքստ (օր.՝ 1. Հասարակություն և անհատ փոխհարաբերությունը ..... 2. Հասարակության անդամների փոխհարաբերությունը.....), ամփոփիչ հատված (Եզրակացություններ):
7. Բուն տեքստից անմիջապես հետո գրել հեղինակի անունը, հայրանվան առաջին տառը, ազգանունը (բոլորը թավատառ), ապա՝ գիտական համառոտ կենսագրությունը (շուրջ 5 տող): Օրինակ.
8. Անուն Հ. Ազգանուն – պատմաբան, ունի շուրջ N տպագրված գիտական հոդվածներ, զբաղվում է N, N, N հարցերով, հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է N, N, N, N բնագավառները...

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 4 (64), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2018

ՎԷՄ համահայկական հանդես

9. Ամփոփում (բուն տեքստից հետո գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը. անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերենը, ապա՝ ռուսերենը): Յուրաքանչյուր ամփոփման բուն տեքստից առաջ կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բոլոր լեզուներով տրվող բանալի բառերը պետք է լինեն նույնական):
10. Ամփոփումներից հետո «**REFERENCES**» արտահայտության ներքո պարտադիր կարգով կցել օգտագործված ոչ լատինատառ գրականության լատինական տառադարձումով տարբերակը՝ դասավորելով այբբենական կարգով և փակագծում նշելով բնագրի լեզուն, օրինակ.

### **REFERENCES**

**Gaydenko P. P.**, Vremya, dlitel'nost', vechnost'. Problema vremeni v yevropeyskoy filosofii i nauke. M., «Progress-Tradiciya», 2006. **(In Russian)**

**At'ayan E. R.**, Ankakhut'yan imasty. hodvatsner yev t'argmanut'yunner, Ye., «Sargis Khachents, Printinfo», 2010. **(In Armenian)**

11. Հղումներում տրվող գրքերի տվյալները կազմել հետևյալ սկզբունքով: Մեկ հեղինակով գրքի դեպքում գրել նախ հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը (թավ տառատեսակով), այնուհետև՝ վերնագիրը, հրատարակության վայրը, հրատարակչության անվանումը՝ չակերտներում (օր.՝ «Прореес»), թիվը, էջը:
12. Մեկից ավելի հեղինակների դեպքում գրել առաջին երկու հեղինակների ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, ապա՝ «և ուրիշներ» արտահայտությունից հետո շարունակել վերը նշված սկզբունքով:
13. Ժողովածուների դեպքում նախ նշել օգտագործված հոդվածի կամ հատվածի վերնագիրը, դնել «//» նշանը, ապա՝ ժողովածուի վերնագիրը, խմբագրի կամ կազմողի տվյալները, շարունակությունը՝ նշված կարգով:
14. Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերը նշված կարգով, իսկ վերջում՝ փակագծի մեջ, գրել «ebook» բառը:
15. Կայքերին տրվող հղումների դեպքում գրել օգտագործված հոդվածի կամ հատվածի հեղինակն ու վերնագիրը, ապա «/» նշանը դնելով՝ կայքի հասցեն: Կայքի հասցեից հետո փակագծում նշել տվյալ կայքից օգտվելու ամիս-ամսաթիվը (օր.՝ [http://vemjournal.org/?page\\_id=573](http://vemjournal.org/?page_id=573) / (մուտք՝ 16.12.2017) ):

16.Տեսագրային նյութերին տրվող հղումները կազմվում են հետևյալ կերպ: Նախ գրել տեսագրության նյութի հեղինակը և վերնագիրը, ապա «/» նշանից հետո՝ կայքը, թույն, որտեղ հնարավոր է լսել կամ տեսնել համապատասխան տեղեկատվությունը, այնուհետև փակագծում՝ մուտքի ամիս-ամսաթիվը, օրինակ՝ **Umberto Eco**, Interview: I Was Always Narrating / <https://www.youtube.com/watch?v=M8IWTOFNlOc> , 3:55 (մուտք՝ 25.09.2017):

**ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐԻ ԼԱՏԻՆԱՏԱՌ ԳՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ  
ՀԱՅԵՐԵՆ ՌՈՒՍԵՐԵՆ**

Ա ա	A a
Բ բ	B b
Գ գ	G g
Դ դ	D d
Ե ե	Ye' ye' (բառամիջում «ե»-ն գրել e ձևով)
Զ զ	Z z
Է է	E e
Ը ը	Ə ə
Թ թ	T' t'
Ժ ժ	Zh' zh'
Ի ի	I i
Լ լ	L l
Խ խ	X x
Ծ ծ	C' c'
Կ կ	K k
Հ հ	H h
Ձ ձ	Dz' dz'
Ղ ղ	Gh' gh'
Ճ ճ	C'' c''
Մ մ	M m
Յ յ	Y y
Ն ն	N n
Շ շ	Sh' sh'
Ո ո	Vo' vo' (բառամիջում «ո»-ն գրել o ձևով)
Չ չ	Ch' ch'
Պ պ	P p
Ջ ճ	J j
Ռ ռ	R' r'
Ս ս	S s
Վ վ	V v
Տ տ	T t
Ր ր	R r
Ց զ	C c
ՈՒ ու	U u
Փ փ	P' p'
Ք ք	Q q
ԵՎ վ	Yev' yev' (բառամիջում «և»-ը գրել ev' ձևով)
Օ օ	O o
Ֆ ֆ	F f

A a	A a
Б б	B b
В в	V v
Г г	G g
Д д	D d
Е е	Je je
Ё ё	Jo jo
Ж ж	Zh zh
З з	Z z
И и	I i
Й й	J j
К к	K k
Л л	L l
М м	M m
Н н	N n
О о	O o
П п	P p
Р р	R r
С с	S s
Т т	T t
У у	U u
Ф ф	F f
Х х	X x
Ц ц	C c
Ч ч	Ch ch
Ш ш	Sh sh
Щ щ	Sh' sh'
Ъ ъ	“
Ы ы	Y y
Ь ь	‘
Э э	E e
Ю ю	Ju ju
Я я	Ja ja



---

«ՎԷՄ» հանդէս ՍՊԸ  
Վկայական՝ 03Ա075879  
Տրված՝ 04.04.2007  
Տնօրեն՝ Հայկազուն Ավրցյան

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության և Գրականության  
ինստիտուտների գիտական խորհուրդների երաշխավորությամբ:

«ՎԷՄ» հանդեսում հրատարակվող հոդվածները պարտադիր կերպով  
գրախոսվում են:

Տպաքանակ՝ 500 օրինակ  
Երևան 2018

Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչության տպարանում: